Բ. ԻՇԽԱՆԵԱՆ

# ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ.

## ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՏԵՐՐԻՏՈՐԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԱՃՈՒՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԲԱԳՈՒԻ
ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՖՈՆԴԻ.

ԲԱԳՈՒ
Տպարան „Ուրարդիա"
1919

Բ. ԻՇԽԱՆԵԱՆ

# ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ.

## ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՏԵՐՐԻՏՈՐԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԱՃՈՒՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԲԱԳՈՒԻ
ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՖՈՆԴԻ.

ԲԱԳՈՒ
Տպարան „Ուրարգիա"
1919

# ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

*Այս աշխատութիւնը ձեռնարկւած է 1917 թ. ամառը և աւարտւած 1918 թ. սկզբներին։ Նրա հրատարակութիւնը վաղօրօք պայմանաւորւած էր Բագուի Հայոց Ազգային ֆօնդի կողմից։ Նա պիտի մաս-մաս լոյս տեսնէր «Գործ» ամսաթերթում և 500 օրինակ արտատպւէր առանձին գրքով։ Բայց «Գործ»-ում լոյս է տեսնում աշխատութեանս միայն առաջին գլուխը (51 երեսը); որովհետև ամսաթերթը դադարում է 1917 թ. դեկտեմբերին։ Բագուի մթնոլորտում տիրող մի շարք աննպաստ պայմանների և անյարմարութիւնների պատճառով այսքան ձգձգւում է գրքիս հրատարակութիւնը և նա լոյս է տեսնում միայն այժմ։*

*Սկզբում մտադիր էի, ինչպէս կտեսնէ ընթերցողը առաջաբանից, ամբողջ աշխատութիւնը՝ իր երեք տարբեր մասերով, ամփոփել մի մեծ հատորի մէջ, որի ծաւալը կըհասնէր 600—700 երեսի։ Յետոյ փոխեցի մտադրութիւնս նախ այն պատճառով, որ Բագուի հուրհրատող, հայերի համար առանձնապէս ողբերգական մթնոլորտում անկարելի եղաւ ինձ համար կաբինետային հանգիստ կեանքի նւիրւել՝ չորս թւերի ուսումնասիրութեամբ զբաղւել և աւարտել միւս մասերը. երկրորդ՝ աշխատութեանս առաջին մասը շօշափում և պարզաբանում է ժողովրդների թւական յարաբերութիւնների վերաբերեալ մի շարք ժամանակակից հարցեր, որոնց համար կարևոր գտայ առաջին հերթին լոյս ընծայել այս մասը առանձին գրքով, որը ինքնին վերցրած մի ամբողջութիւն է ներկայացնում և ներքին կապ չունի միւս մասերի հետ։*

*Ուսումնասիրութեանս երկրորդ մասը կունենայ՝ «Ժողովուրդների սօցիալական-դասային կազմը Անդրկովկասում» վերնագիրը, իսկ երրորդը — «Ժողովրդների պրօֆեսիօնալ զբաղմունքային կազմը Անդրկովկասում» — վերնագիրը։*

*Բ. Ի.*

*Յ. Գ.—Հարկ ենք համարում այստեղ ընթերցողների ուշադրութիւնը դարձնել մի կարևոր հանգամանքի վրայ։ Չկայ մի աւելի վատ սխալ, քան ԹՒԱԿԱՆ, մանաւանդ ՏՈԿՈՍԱԿԱՆ ՎՐԻՊԱԿԸ աղիւսակների մէջ։ Գրքիս մէջ նկատւած թւական-տոկոսական վրիպակները զետեղւած են վերջին երեսում, այնպէս որ կարդալու ժամանակ թող ընթերցողը ի նկատի ունենայ այդ հանգամանքը։*

*Բ. Ի.*

# ԱՌԱՋԱԲԱՆ

*Մեր հայրենիքը կազմում է մեկը այն յետամնաց երկրներից, որոնց առաջադիմութեան իւրաքանչիւր քայլը կատարւում է երկար տարիների ընթացքում միայն, մեծ ուժերի և լարուած աշխատանքի զոհաբերութեան գնով։ Այն արդիւնքները, որ քաղաքակիրթ Արևմուտքը ստեղծում է շաբաթների, ամիսների ընթացքում, մեզ մօտ պահանջում են տարիների և տասնամեակների աշխատանք։ Առաջադէմ երկրների կատարելագործուած տեխնիկան՝ միացած դրամական խոշոր գումարների, հասարակական ազատ նախաձեռնութեան, ճարպիկ ու խիզախ ձեռնարկումների, պատրաստուած ու փորձառու վարիչների և գործունեայ ու արդիւնաբեր ուժերի հետ, իր բազմակողմանի կիրառումով կերտում, արտադրում է կենսական ու կուլտուրական բարիքներ, վատնելով ժամանակի և եռանդի ըստ կարելւոյն նուազագոյն չափեր։ Մեր հասարակական իրականութեան բոլոր ասպարէզներում, ընդհակառակը, գոյութիւն չունի տակաւին ժա*մանակի և վատնուող հասարակական ուժերի տնտեսական սկզբունքը։ *Տիրապետող ախտաժը արդիւնագործութեան շատ ճիւղերում—դեռ դանդաղաշարժ ձեռնարհեստն է. իսկ երկրագործութեան մէջ՝ մշակման նախնական ձևերն են իշխում մինչ օրս։*

*Սակայն ցաւը, տիրապետող գիծը մեր երկրի կուլտուրական զարգացման դանդաղ ընթացքը չէ միայն։ Ամենախոշոր թերութիւններից մէկն է նաև այն, որ մենք զրկուած ենք փաստական հնարաւորութիւնից աչքի առնելու մեզ նոյն իսկ մեր առաջընթացութեան դանդաղաշարժ քայլերի մասին։ Մենք չունենք մեր անցեալ կեանքի, բովանդակ իրականութեան բազմածալ էջերի, մեր հասարակական բարդ մարմնի շերտաւորումների և նրանց սոցիալական փոփոխութիւնների ստատիստիկական կըշռաչափը, հաշուեցոյցը։ Այդ պատճառով մենք չգիտենք մեր երկրի ու կեանքի պատմական «երէկը», չենք ճանաչում «այսօրը», որպէսզի մի կողմից՝ կարողանայինք փաստական հաշիւ տալ մեր երկրի ուժերի և հասարակական կեանքի գործած առաջադիմական քայլերի իրական մեծութեան մասին, իսկ միւս կողմից՝ հնարաւոր լինէր մեզ շօշափելի փաստերով բնորոշել մեր իրականութեան զարգացման ընդհանուր տենդենցները։*

*Ո՞րն է այդչափ զգալի պակասը։*

Տնտեսական ընդհանուր, կանոնաւոր և պարբերական վիճակագրութեան (ստատիստիկայի) բացակայութիւնը Ռուսաստանում

Կարիք չկայ, անշուշտ, խօսել այստեղ վիճակագրութեան՝ որպէս գիտական մի ճիւղի ընդհանուր նշանակութեան մասին հասարակական գիտութիւնների համակարգութեան մէջ։ Բաւական է միայն շեշտել, որ առանց վիճակագրական մեթոդի կիրառման անհնար է ներկայումս հետեւել, ճանաչել և հասկանալ հասարակական բազմադէմ օրգանիզմի ներքին փոխակերպումների պրոցեսը, երեւոյթների և յարաբերութիւնների փոփոխական ընթացքը—նրանց կայուն վիճակը, առաջադիմութիւնը կամ յետադիմութիւնը, աճումը կամ նուազումը։ Վիճակագրութիւնը՝ որպէս մեթոդ՝ մասսայական խմբաւորուած երեւոյթների փոփոխումների կանոնաւոր սիստեմատիկ աստիճանացոյցն է։

Առաջադիմել գանգատ ու մեծ ջանքերի դժուարութեան գնով և չունենալ այդ անհրաժեշտ ձեռնարկացոյցը մեր մշակութային կեանքի չափը որոշելու համար,—սա, իհարկէ, հայաստանական իրականութեան ցաւերից, խոշոր բացերից մէկն է, որի վրայից անկարող է բնական անցնել հետազօտող միտքը։ Անշուշտ, գոյութիւն ունեն վիճակագրական հաստատութիւններ պաշտօնական-կառավարական և մասնաւոր բնոյթով։ Դրեթէ ամեն մի մինիստրութիւն ունի իր յատուկ հաստատութիւնը։ Այդտեղ կան տարեկան վիճակագրական հաւաքումներ (ежегодники) կենտրոնական բազմատեսակ կոմիտէի կողմից. դրանց կողքին [illegible] բռնում զեմստվոների վիճակագրական ժողովածուները յաճախ գիտական [illegible] վերաբերմամբ։ Այդ բոլորը ունեն իրանց տեղը և նշանակութիւն են տալիս կարեւոր պահանջներ։ Անկասկած դրանք, որպէս այդպիսիք, կզգիացած սենատաճենէն՝ [illegible] [illegible] և չեն կարող փոխարինել այն համապարփակ վիճակագրական [illegible] [illegible], որ յայտնի են բոլոր երկրներում ընդհանուր պետական [illegible] կամ ժողովրդագրութիւն անուան տակ իր բոլոր ճիւղաւորումներով։

Համառուսական առաջին ընդհանուր ժողովրդագրութիւնը տեղի է ունեցել 1897 թ., որի աշխատանքները հրատարակուել են միայն 1905 թ.։ Դա միակ—առաջին և վերջին—ընդհանուր ժողովրդագրութիւնն է բոլոր տարուայ ընթացքում։ Այդ երկար ժամանակամիջոցում չդիտէ ոչ[illegible] տեսակէտը, [illegible], հասարակական [illegible] նաև այլ ընթերցող, ինտելիգենտ հասարակութիւնը, թէ ինչ հիմնական փոփոխութիւններ են ենթարկուել բազմացեղ Ռուսաստանի ազգաբնակչութեան այնքան բարդ մարմնի առանձին-առանձին մասնիկները իրանց հիմնական գրաւմունքների (պրոֆեսիաների) նկատմամբ։

Սա Եւրոպական հասարակակարգի կուլտուրական վիճակ չէ, այլ հարազատ ասիական կեանքի թիւրքական և չինական կարգեր, որոնց անփոփոխելի կացութեան գերագոյն խնամակալը եղել է մեր երկրի նախկին բիւրոկրատիկ կառավարութիւնը։

Այդ տեսակէտից Ռուսաստանը յետ է մնում ոչ միայն առաջաւոր Եւրոպայի մեծ ու փոքր երկրներից, այլ և Բալկանեան թերակղզու մի քանի պետութիւններից, ուր վաղուց մտցրուած է կանոնաւոր ժողովրդագրութեան սիստեմը։ Դեռ 1910 թ. Պետական Դումայի յանձնաժողովը պետական ընդհանուր, կանոնաւոր և պարբերական վիճակագրութեան համար

ուրիշ մի օրինակից, որը, սակայն, կարմիր կոմունայի մեկ ժողովից՝ Պոտեմկին Գեորգի կողմից, համարուելով ոչ «կարևորագոյն» և «մեծ ծախսերի հետ կապուած» մի գործ։ Ի հարկէ, ցարական բիւրոկրատիայի համար անհեթեթ ցանկալի չէր, որ հնատիպերը ու ձեռագրերը մեծ մասը յաճախ և թուական նորանոր ավելացնելով օբյեկտ։ Ռուսաստանի ազգաբնակչական, մանկավարժական և սոցիալական կեանքի բազմաթիւ էջերը, լոյս տեսնէ հասարակական անտարբերութիւնից անցյալս ու անծանօթ մնացած վիրաւոր կողմերի վրայ և հասարակի վրայ դեռ բարեխառնաբար այնքան կարօտ խոսակցութեան յատուկ պաշտպան։

Այսպիսով պարզ է, որ մի քանի միլլիարդ կլանող պետական բիւջէի համար աւանդին նշանակութիւն չպիտի ունենար մի քանի միլիոնների վատնումը պետական սատարման կայի — թուական դէպքերի կիրառման այդ ամենաանհրաժեշտ միջոցառումի համար։ Թւում է, որ բիւջէական կարգից դուրս «սև ֆոնդը» պահպանող, գաղտնի ոստիկանութեան և լրտեսութեան վրայ և հազար ու մի անարդիւնաբեր նպատակների համար առաջին միլիոններ վատնող կառավարութիւնը չպիտի յանդգնէր կուլտուրական մեծ նպատակների համար պահանջուած համեստ միջոցների մերժման հրապարակական արդարացումը որոնել ֆինանսների սղութեան մէջ։ Սակայն հին ռեժիմի ներկայացուցիչները ոչ միայն մերժել են միշտ հարկաւոր միջոցները՝ պետական կանոնաւոր և պարբերական վճարագրութիւն մուծելու համար, այլև խնայել են նոյնիսկ այն ծախսերը, որ անհրաժեշտ են եղել պետական առաջին — միայն մի հատիկ անգամ կատարուած — ժողովրդագրութեան արդիւնքները աւելի բաւարար և ընդարձակ չափերով մշակելու համար։ Անշուշտ էք ուղղակի, երբ կարդում էք ժողովրդագրութեան գործի ընդհանուր ղեկավարի՝ սենատոր Ն. Տրոյնիցկիի վկայութիւնը այդ մասին հրատարակուած հատորների առաջաբանի մէջ։

Կենտրոնական ստատիստիկական կոմիտէն մշակել է բազմաթիւ աղիւսակներ, որոնք մասնագէտների տեսակէտով «անհրաժեշտ են համարւել գիտական և գործնական նպատակների համար»։ Բայց բարձրագոյն հրամանով կազմուած այն Առանձին խորհրդակցութիւնը՝ Դուրնովոյի նախագահութեամբ, որ պիտի հսկէր գործի ընթացքի վրայ, մերժում է նրան. Սա սա. Կոմիտէի սկզբնական ծրագիրը, գտնելով այն «չափազանց ընդարձակ», և անհրաժեշտ է գտնում սահմանափակել նրա զբաղմունքները՝ ծախսերը կրճատելու նպատակով։ Աւելին այն, ինչ այսօր գոյութիւն ունի հրապարակի վրայ, որպէս արդիւնք համառուսական առաջին ժողովրդագրութեան, վերջինիս լրիւ ու ամբողջական պատկերը չէ, կիսատ ու թերի է. և մինչև օրս էլ փոշաթաթախ թաղուած են պահարաններում թուական նիւթեր՝ այնքան անհրաժեշտ գիտական և գործնական նպատակների համար։

Ահա ինչ վայրենի կացութեան մէջ է պահուել հասարակական ինքնաճանաչութեան գործը հին բարբարոս ռեժիմի կողմից։

Սակայն առաջին ժողովրդագրութեան թերութիւնը չի կայանում միայն նիւթերի մշակման հարկադրական սահմանափակումների մէջ, այլև նիւթերի մշակման սիստեմի մէջ։ Այդ տեսակէտից դժուար բացերից ազատ չեն հրապարակի վրայ արդէն գոյութիւն ունեցող պաշտօնական հրատա-

բակութիւնները։ Դրանք կէս ճանապարհի վրայ կանգնած մակերեւոյթա-յին աշխատանքներ են։ Ռուսական ստատիստիկայի խոշոր թերութիւնը շօշափելիօրէն պատկերացնելու համար բաւական է համեմատել այն՝ գերմանականի հետ։ Օրինակ, գերմանական պրոֆեսիոնալ ստատիստիկան զբաղմունքների վիճակագրութիւնը—ամենակարեւոր եւ ամենաբարդ մասը ամէն մի ժողովրդագրութեան մէջ) ողջ ազգաբնակութեան բոլոր զբաղմունքները կամ պրոֆեսիաները ամփոփում է 10397 զբաղմունքային անուանումների մէջ (Berufsbenenungen), վերջինս վեր է ածում 207 զբաղմունքների տեսակների (Berufsarten), սա ամփոփում է 25 զբաղմունքների խմբերի կամ գրուպպաների (Berufsgruppen) մէջ եւ վերջապէս դա էլ իր հերթին վեր է ածում 7 գլխաւոր դասակարգերի (Klassen)։ Մինչդեռ ռուսական ստատիստիկան գոյութիւն ունեցող բոլոր զբաղմունքները կամ կոչումները ամփոփում է միայն 390 զբաղմունքների տեսակների եւ վերջինս էլ 65 զբաղմունքների խմբերի (գրուպպաների) մէջ եւ ուրիշ ոչինչ։ Այդպիսով աշխատանքները դուրս են եկել կոպիտ, մակերեսային ու կիսատ։ Ռուսական ժողովրդագրութեան ղեկավարները մի կողմից գլացել կամ խուսափել են պրոֆեսիաների բաժանման եւ անդամահատման աշխատանքը հասցնելու մինչեւ ամենավերջին մանրազննին ստորաբաժանումները, մասնագիտականացած նուրբ ճիւղը, իսկ միւս կողմից նրանք չեն տուել զբաղմունքների խոշոր ու լրիւ համամփոփումներ կամ կլասիֆիկացիան հիմնական կատեգորիաների մէջ։ Այդ տեսակէտից ռուսական ժողովրդագրութեան արդիւնքները օգտագործելու եւ ուսումնասիրելու նպատակ ունեցող մասնագէտը շատ աւելի մեծ դժուարութիւններ ունի հաղթելու, քան գերմանականը։ Եւ այն, ինչ որ թերացել է անել Կենտր. Ստատ. Կոմիտէն, ծանրանում է մասնաւոր ուսումնասիրողի վրայ։

Իր բոլոր թերութիւններով հանդերձ 1897 թ. պետական առաջին ընդհանուր ժողովրդագրութիւնը այնուամենայնիւ դրել է հրապարակի վրայ թանկագին նիւթերի մի անսպառ պաշար, որ առաջին անգամ լոյս է սփռել նահապետական միջավայրի մշուշապատ էջերի վրայ։ Մինչեւ 1897 թ. առհասարակ մի խորթ ու օտար երեւոյթ էր, թէ անտեսա-արդիւնաբերական ձեւերը հասարակական շերտաւորումների ինչ ակօսներ են փորել համառուս ազգաբնակութեան կեանքում, ինչ բացարձակ բաժանումներ եւ յարաբերական դասաւորումներ ունէին պրոֆեսիոնալ գրուպպաները աշխատանքի եւ գործունէութեան բոլոր ճիւղերում։ Տնտեսական փաստերն ու հասարակական երեւոյթները հետազօտել տենչացող միտքը կանգ էր առնում ծանրակշիռ պրոբլեմների առաջ եւ փաստական ապացոյցների փոխարէն՝ բաւականանում էր անհիմն ենթադրութիւններով ու երեւակայական գնահատումներով։ Օրինակ՝ ռուս ժողովրդի որ տոկոսն էր զբաղւում գիւղատնտեսութեամբ եւ որ տոկոսը ապրում նրա հաշուին։ Սլաւեանոֆիլները, այնուհետեւ նարոդնիկները հասցնում էին այդ տոկոսական մասնակցութիւնը մինչեւ 80—90 տոկոսի, իսկ մարքսիստները պնդում էին հակառակ ծայրայեղութիւն։ 1897 թուականի ժողովրդագրութեան հետեւանքները ցոյց տուին ակնյայտօրէն, որ փաստօրէն սխալւում է մէկ թէ միւս բանակը։

Նոյն անգիտութիւնը, դեռ աւելի խոշոր չափերով, եղել է մեզանում

համակողմանեան և ժամանակակից հայկական իրականութեան մէջ, ոչ միայն ժողովրդագրութիւնից առաջ, այլև նոյնիսկ մինչև օրս, չնայելով որ առանձնակայ պատմութիւն ունենք մեր յետև առաջին ժողովրդագրութիւնից իվեր։ Մի տեղ պնդում են, օրինակ, որ հայ ժողովրդի 90 տոկոսը երկրագործ է՝ զբաղւում և ապրում է երկրագործութեամբ, ուրեմն հայը երկրագործ ժողովուրդ է առաջին կարգի։ Միւս տեղ պնդում են, որ հայերը գլխով տեղով առևտրականներ են, «չարչիների ժողովուրդ» է և այլն։

Եւ այդպիսի առասպելներ՝ շատ յաճախ այլանդակ մոտիւներով համեմած, ցաւալի կերպով կրկնւում են շարունակ, օրն ի բուն, հանդիսաւոր կերպով, «գիտունների» և ինտելիգենտների բերնով անգամ՝ հռչակւում թէ մամուլի էջերում, չնայելով որ վիճակագրական փաստերը գրուած էին հրապարակի վրայ դեռ 1905 թուականից իվեր։

Քանի որ 1897 թուականի պետական ընդհանուր ժողովրդագրութիւնը շարունակում է մնալ առաջինն ու վերջինը մինչև օրս, նա կազմում է միակ ու եզակի աղբիւրը համառուս ազգաբնակութեան պրոֆեսիոնալ կազմը և հասարակական շերտաւորումը ուսումնասիրելու համար։ Եւ այն չափով, որով մի կողմից առաջին ժողովրդագրութեան չի յաջորդել տակաւին երկրորդը նոր տուեալներով, իսկ միւս կողմից նոյնիսկ առաջին ժողովրդագրութեան տուեալները չեն ուսումնասիրուած և մատչելի դարձրուած հասարակական մտքին,—ահա այդ չափով 1905 թուականին հրատարակուած ժողովրդագրութեան արդիւնքները պահպանել են մինչ օրս էլ իրանց ոչ միայն պատմական, այլև այժմէական նշանակութիւնն ու հետաքրքրութիւնը։ Այդ տուեալները հին են, բայց հնացած չեն իրենց նշանակութեամբ, հնացած չեն, որովհետև չկան դեռ նրանց փոխարինող նոր տուեալներ. հնացած չեն, որովհետև մինչ օրս փոշու մէջ թաղուած այդ թանկագին նիւթերը չեն ուսումնասիրուած ու արժէքաւորուած, հանրութեան բարիք չեն դարձրուած տակաւին։

Ի նկատի ունենալով այդ խոշոր բացը լրացնելու մեծ կարիքը, տողերիս գրողը տարիներ առաջ ձեռնարկեց վիճակագրական մի փոքրիկ աշխատութեան կովկասեան ժողովուրդների մասին։ Մեր այդ աշխատութիւնը, որի բնագիրը հրատարակուած է գերմաներէն լեզուով Բերլինում 1914 թ. սկզբում («Nationaler Bestand, berufsmässige Gruppierung und soziale Gliederung der kaukasischen Völker») և որի հայերէն և ռուսերէն թարգմանութիւնները լոյս են տեսել 1914 և 1917 թուականներին, գտել է իր արժանի գնահատութիւնը գերմանական և ռուսական յայտնի մասնագէտների կողմից, իբրև առաջին փորձը կովկասեան ժողովրդների վիճակագրական ուսումնասիրութեան սահմանում։ Այդ աշխատութեան մէջ քննութեան են առնուած կովկասեան ազգաբնակութեան կազմը, տարածումը, տերիտորիական դասաւորումները՝ գլխաւոր ժողովուրդների պրոֆեսիոնալ կամ արհեստակցական-զբաղմունքային խմբաւորումը և հասարակական շերտաւորումը։ Բնական սահմանափակ նպատակ է ունեցել մեր այդ առաջին ուսումնասիրութիւնը, ի նկատի ունենալով մանաւանդ ընթերցողների այն օտար հասարակութիւնը, որի համար նախորոշուած է եղել մեր գիրքը։ Այդ գրքի մէջ քննութեան էին առնուած կովկասեան ժողովուրդ-

ները ոչ միայն այն թուական մեծութեամբ և գոյ ու այն բնակավայրի սահմաններում, ինչպէս որ կան նրանք Կովկասում, այլև վերջինիս հետ միասին նաև շատ պետութեան սահմաններում ցրուած նրանց փոքրիկ մասնիկներով։ Ամէն մի ժողովրդի թուական և պրոֆեսիոնալ պատկերը ամփոփում է իր մէջ ոչ միայն իր հայրենի-բնական (Կովկասեան) սահմաններում ապրող խմբացած մասսաները, այլև այդ սահմաններից դուրս գտնուող մանր գաղութները։ Այդ ընդհանուր շրջանակների մէջ կազմուած աշխատութիւնը ունի մի մեծ թերութիւն անգամ՝ ընթերցող հասարակութեան համար, որ մենք դեռ սկզբից զգացել ու նկատել ենք։ Նա ոչինչ չի տալիս բուն Կովկասի և մանաւանդ Անդրկովկասի ներքին առանձին-առանձին մասերի ազգաբնակչական հարաբերութիւնների, և, որ գլխաւորն է, պրոֆեսիոնալ խմբաւորումների և սոցիալական շերտաւորումների մասին։

Ի նկատի ունենալով այդ հանգամանքը և գիտակցելով այդ կարևոր բացը երբ և իցէ լրացնելու անհրաժեշտութիւնը, մեր գրքի առաջին հրատարակութեան մէջ աւելացրել էինք հետևեալ նկատողութիւնը. «Մենք մտադիր ենք ապագայում հրատարակել առանձին աշխատութիւն, որ յոյս ունենք ներկայացնել կովկասեան ժողովուրդների պրոֆեսիոնալ խմբաւորումների պատկերը առանձին-առանձին նահանգներում»։ («Народности Кавказа», եր. 40, ծանօթ.)։

Կարող էինք այն թուականին, սկզբում այդ տողերը գրելու ժամանակ երևակայել, որ այդ ցանկալի ապագան այնքան շուտ պիտի վրայ հասնէր։ Եւ կարող էինք կարծել, որ հէնց յեղափոխութեան վերիվայրումների շրջանում, երբ մարդ ամենից քիչ տրամադրուած ու հակուած է լինում կաբինետային չոր ու ցամաք աշխատանքով զբաղուելու, պիտի վիճակուէր մեզ վերոյիշեալ կարևոր բացը լրացնելու գործին ձեռնարկել։ Միւս կողմից, սակայն, անուրանալի է, որ մեր օրեայ յեղափոխութեան բազմածալ փէշերը քրքրելու, ուսումնասիրելու և շօշափելի փաստերով ճանաչելու հրամայական կարիքը ծնեցրել է հէնց ինքը յեղափոխութիւնը իր ներքին դասակարգային ոյժերով, իր ազգային-քաղաքացիական վերածնութեան առողջ սկզբունքներով և շինարար բարենորոգչական անյետաձգելի պահանջներով։

Այն սկզբնական ծրագիրը, որ հիմք պիտի ծառայէր մեր ապագայ աշխատութեան, շատ աւելի համեստ ու սահմանափակ էր, քան մեր այս ներկայ աշխատութիւնն ունի։ Օգտուելով բարեյաջող առիթից, մենք ցանկացանք տալ մեր հարազատ ծայրերկրի—Անդրկովկասի— ազգաբնակութեան վիճակագրական ուսումնասիրութեան աւելի մանրամասն ու ամբողջական պատկերը։ Աւելորդ ենք համարում, ի հարկէ, այս կապակցութեան մէջ իրազեկ ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրելու այն հանգամանքի վրայ, թէ որ աստիճան անհնարելի դժուարութիւնների դէմ պիտի մաքառէ մէկը, եթէ նա ցանկանում է կանոնաւոր ստատիստիկայից ինչպէս զուրկ իրականութեան որևէ խորքն էջը թուական տուեալներով մշակել ու լուսաբանել։

Մեր այս ուսումնասիրութիւնը բաղկացած է երեք հիմնական մասերից։

Առաջին մասի մէջ տալիս ենք Անդրկովկասի ընդհանուր ազգաբնա-

կութեան և նրա գլխաւոր ժողովուրդների աշխարհագրական տարածումը, տերիտորիական տեղաւորումները ու ամփոփումները ոչ միայն ծայրերկրի ամբողջութեան մէջ, այլև նրա նահանգներում ու շրջաններում, գաւառներում ու քաղաքներում և անգամ գաւառակներում ու գիւղաքաղաքներում, պարզելով ժողովուրդների թւական-բաղդատական և համեմատական-տոկոսական յարաբերութիւնները առանձին-առանձին. Սակայն որպէսզի հասկանալի լինի ընթերցողի համար ժողովուրդների ֆիզիքական յարաբերութեան ամենագլխաւոր մանրամասներից մէկը—ամման տեմպը, մենք չենք բաւականանում միայն մի պատմաշրջանով, այլ կատարում ենք ստատիստիկական անհրաժեշտ էքսկուրսիա երեք տասնամեակ ընդգրկող մի տարածութեան վրայ։

Կան պաշտօնական տւեալներ երեք շրջանների՝ 1886, 1897 և 1914 թւականների վերաբերեալ. դրանք են աւելի կամ նուազ չափով վստահելի միակ աղբիւրները, որ ստեղծում գոյութիւն ունեն յիշած հարցի նկատմամբ. Առաջին աղբիւրն է՝ «Сводъ статистическихъ данныхъ о населеніи Закавказскаго края, извлеченныхъ изъ посемейныхъ списковъ 1886 г.» յայտնի խոշորահատոր հրատարակութիւնը (1893 թ.)՝ Անդրկովկասի ստատիստիկական կոմիտէի նախաձեռնութեամբ և Կովկասի գլխաւոր էշխանութեան կարգադրութեամբ. Երկրորդ աղբիւրը՝ «Первая всеобщая перепись населенія Россійской Имперіи 1897 г.» Ներքին գործերի մինիստրութեան Կենտրոնական Ստատիստիկական Կոմիտէի պաշտօնական հրատարակութիւնն է (1905 թ.)՝ որս առանձին-առանձին հատորները Կովկասի նահանգների և շրջանների վերաբերեալ. Վերջապէս, երրորդ շրջանի տւեալների (մինչև 1914 թ. յունուար ամիսը) աղբիւրը կազմում է «Кавказскій календарь»-ը (հրատ. 1915 թ.)։

Պատահմամբ չի եղել մեր այս վերջին ընտրութիւնը երրորդ շրջանի վերաբերեալ. Դա արւած է յատուկ դիտաւորութեամբ. Ցանկալի էր նախկին շրջանների հետ համեմատել այն տարուայ տւեալները, երբ ազգաբնակութիւնը խաղաղ, նորմալ պայմանների մէջ էր գտնւում և արհեստական տեղահանութեամբ կամ հարկադրւած գաղթով չէր դատարկւում մի բնակավայրը՝ միւս բնակավայրում առաւրականից աւելի խտութեամբ կենտրոնանալու համար. Պատերազմի տարիներին նման տեղահանութիւնները եղած են մասսայական. մի կողմից՝ քրիստոնեայ ազգաբնակութեան արամարդ սեռը դէպի զօրք պատերազմի դաշտն էր հանւած, միւս կողմից՝ գաւառներից դէպի կենտրոնները անսովոր չափերով ուժեղացել էր մասսայական գաղթը։ Դեռ չենք խօսում փախստականների մեծ հոսանքի մասին. 1914 թւականը (տարուայ սկիզբը) խաղաղութեան վերջին և պատերազմի նախընթաց շրջանն է—համեմատութեան համար միակ յարմար շրջանը. Վերջապէս «Кавк. кал.»-ի վերջին տարիների հրատարակութիւնների մէջ թւական համեմատաբար ամենից լրիւ տւեալներ գտնում ենք միայն վերոյիշեալ տարուայ հրատարակութեան մէջ։

Բացի վերև թւած աղբիւրներից ստուգումների և լրացումների համար ունեցել ենք ձեռքի տակ նաև օժանդակ տւեալներ՝ պաշտօնական հրատարակութեամբ. Ինչպէս մենք չենք կարող վկայել այդ բոլոր

աղբիւրների անկայուն վստահարժանութեան մասին, մանաւանդ «Кавк. кал.»-ի նկատմամբ։ Եւրոպական կատարելութեամբ, ճշտութեամբ ու բարեխղճութեամբ կիրառուող ստատիստիկական մեթոդ գոյութիւն չունի տակաւին Թուրքաստանում։ Ինչ արած, պիտի ընդունենք այն, ինչ գոյութիւն ունի։ Ասածներիցս չի հետևում, անշուշտ, որ մենք առանց այլև-այլի կասկածի տակ ենք առնում վիճակագրական բոլոր պաշտօնական տուեալները։ Ամենևին։ Մենք ուզում էինք միայն ի զգուշութիւն ընթերցողի շեշտել, որ մեր երկրի ստատիստիկան դեռ զուրկ է իրականութեան մաթեմատիկօրէն-ճշգրիտ պատկեր հաղորդելու կատարելագործուած եղանակներից և որ գոյութիւն ունեցող տուեալները պարզում են իրականութեան միայն մօտաւոր պատկեր։

*Մեր աշխատութեան* երկրորդ մասը *կազմում է այսպէս կոչուած* դասային կազմը (СОСЛОВНЫЙ СОСТАВЪ)։ *Մինչև այժմ, ինչպէս յայտնի է, ռուս հասարակական կառուցուածքը (ստրուկտուրան) կրթնում էր դասային սիստեմի վրայ։ Այդ դասերն են՝ ա). Տոհմային ազնուականութիւն, բ). Անձնական ազնուականութիւն և չինովնիկութիւն քաղաքացիներից գ). Հոգևորականութիւն, դ). Պատուաւոր տոհմային քաղաքացիութիւն, ե). Վաճառականութիւն. զ). Մեշչաններ կամ քաղքենիութիւն և է). Գիւղացիութիւն։ Մեր նպատակն է տալ այդ դասերի կազմի մանրամասն պատկերը՝ իր թուական մեծութիւններով և տոկոսական յարաբերութիւններով։*

*Ոչ միայն Անդրկովկասի ընդհանուր ազգաբնակութեան, այլև բոլոր գլխաւոր ժողովուրդների նկատմամբ և իրենց նահանգներում, շրջաններում, գաւառներում և քաղաքներում առանձին-առանձին։ Դրանով միայն կարելի է լրիւ գաղափար կազմել ամէն մի ժողովրդի հասարակական կառուցուածքի բաղկացուցիչ էլեմենտների մասին։*

*Աշխատութեան* երրորդ՝ վերջին մասը *կազմում է Անդրկովկասի բովանդակ ազգաբնակութեան և նրա ժողովրդական կարևոր ու գլխաւոր հատուածների* պրոֆեսիոնալ խմբաւորումները և համապատասխան շերտաւորումները՝ *դարձեալ տերիտորիական բոլոր բաժանումների մէջ առանձին-առանձին։ Ինչ բացարձակ և յարաբերական մասնակցութիւն ունեն անդրկովկասեան ժողովուրդները տնտեսա-արդիւնաբերական բոլոր ճիւղերում և սոցիալական հիմնական շերտերի մէջ։ Այդ հիմնական ու բարդ երևոյթի լուսաբանութեամբ հնարաւոր կը լինի մեզ որոշ գաղափար կազմել առհասարակ մեր ծայրերկրի և մասնաւորապէս նրա գլխաւոր ժողովուրդների տնտեսա-կուլտուրական զարգացման և հասարակական օրգանիզմի շերտաւորման պրոցեսի առաջադիմութեան մասին։*

*Ինչ ժողովուրդներ են յատուկ ուշադրութեան առնուել մեր աշխատութեան մէջ։ Ի հարկէ նրանք ամենից առաջ, որոնք իրենց կամ թուական մեծութեամբ և կամ կուլտուրական արժէքով ու քաղաքական նշանակութեամբ պատկառելի տեղ են բռնում մեր ծայրերկրի հասարակական իրականութեան մէջ։*

*Այդ ժողովուրդներն են՝ ռուսները, հայերը, վրացիները և մահմեդականները առհասարակ։ Առաջին երեք ժողովուրդների նկատմամբ մենք պահպանել ենք ընդհանուր ազգայնութեան սկզբունքը. ռուսներին միա-*

ցրել ենք բոլոր ռուս աղանդաւորներին, հիմք ընդունելով ռուսական լեզուն։ Հայկական տարրերի մէջ միացրուած են բոլոր դաւանութիւններին պատկանող համայնքները (լուսաւորչական, կաթոլիկ և բողոքական)։ Ազգային աւելի բարդ զանգուած է կազմում վրացիութիւնը։ Քարթվելցիներ ընդհանուր անուան տակ խմբաւորել է ստատիստիկան ոչ միայն ուղղափառ և մահմեդական (աջարական) վրացիներին, այլև բազմաթիւ էտնիկական մանր հատուածներ. գրուզիններ (կամ վրացիներ՝ նեղ իմաստով) ամենախոշոր վրացական հատուածի հետ խմբուած են՝ իմերեթցիներ, մինգրելցիներ, սվանեթներ, խեվսուրներ, լազեր, պշաւներ, ինգիլոյցիներ, տուշիներ։ Այդպէս է վարուել 1897 թուականի համառուսական ժողովրդագրութիւնը։ Ամբողջութիւնը պահպանելու համար մենք նոյն կերպ վարուել ենք նաև միւս շրջանների նկատմամբ։ Բոլորովին այլ կշռաչափ ենք ընդունել մահմեդականների վերաբերմամբ. այստեղ պահպանուած են ընդհանուր կրօնական պատկանելիութեան (շիա և սիւնի միասին վերցրած) սկզբունքը և այդ համապարփակ օղակով խմբուած են Անդրկովկասում գտնուող մահմեդական կրօնին պատկանող բոլոր ցեղային-ժողովրդական այլազան միաւորները (բացի մահմեդական վրացիներից) մի ամբողջութեան մէջ։ Այդպէս վարուելու համար ունեցել ենք յարգելի շարժառիթներ։ Մեր ծայրերկրի բոլոր մահմեդականների մէջ թուով ու ազդեցութեամբ տիրապետող տարրը կազմում են թաթարները։ Սրանց ղեկավարութեամբ ողջ մուսուլմանութիւնը պարզել է կուլտուրական-ազգային վերածնութեան և մանաւանդ քաղաքական ձգտումների մի համազօր դրօշակ, որի տակ անխտիր խմբուել են մահմեդական դաւանանքին պատկանող բոլոր տարբեր գրուպպաները։ Պետական կեանքում հանդէս են գալիս նրանք իրանց միօրոյն ներկայացուցչութեամբ և քաղաքացիական ու քաղաքական խնդիրների միևնոյն ծրագրով։ Ազգային-կուլտուրական փոխյարաբերութիւնների հարցում ողջ մուսուլմանութիւնը հանդէս է գալիս իր կարծիքը յայտնելու և իր դիրքը որոշելու իր հարևան ոչ-մահմեդականների վերաբերմամբ։ Ահա ի նկատի ունենալով ռէալ իրականութեան այդ ակնյայտնի փաստերը մենք համախմբուած թուերով ներկայացրինք բոլոր մահմեդականները, որպէսզի գործնական նշանակութիւնից հեռու չլինէին մեր բերած տուեալները և արած դիտողութիւնները։

Չենք ուզում այստեղ առանձնապէս շեշտել, թէ որքան ծանր աշխատանք է պահանջել մեր այս գործը։ Նա, ով երբ և իցէ մուտք է գործել թուերի լաբիրինթոսի մէջ, կարող է մօտաւորապէս պատկերացնել մեր դրութիւնը։ Բանը նրանումն է, որ ոչ ժողովրդագրութիւնը և ոչ վիճակագրական միւս ժողովածուները չունեն յատուկ, ամբողջական տուեալներ Անդրկովկասի ընդհանուր ազգաբնակութեան և զատ-զատ ժողովուրդների տերիտորիական ամբողջութեան մասին—նրանց տարածման ու տեղաւորումների, և մանաւանդ դասային ու արհեստակցական կազմի մասին։ Տուեալները ցրուած են և վերաբերում են միայն առանձին-առանձին մասերին ու հատուածներին։ Այդ բոլորը խմբել, համամփոփել և աղիւսակներ կազմելը ըստ ինքեան անհաճելի մի աշխատանք է։ Իսկ զբաղմունքների կլասիֆիկացիան և տոկոսների օպերացիաները (հաշիւը), որոնցից այնպիսի «ծուլութեամբ» խուսափել է ռուսական ժողովրդագրութիւնը, թողնելով ամեն բան մասնաւոր ուսումնասիրողի վրայ։

Չնայելով այդ բոլոր դժուարութիւններին մենք առանձնիրաւնկանու-թեամբ ենք յանձն առել այս աշխատանքը, խորապէս գիտակցելով մեր հայրենիքի վիճակագրական ուսումնասիրութեան անյետաձգելի կարիքը և այն խոշոր ծառայութիւնը, որ մի այսպիսի ուսումնասիրութիւն կարող է մատուցանել մեր երկրին բարենորոգումների ներկայ մոմենտում:

1917 թ. Հոկտեմբեր.

# ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

## ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՏԵՐԻՏՈՐԻԱԼ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

## I ԳԼՈՒԽ

### Անդրկովկասի ազգաբնակությունը երեք տարեշրջաններում

*Ազգաբնակության ընդհանուր թիվը և նրա երեսնամյա աճման ընթացքը Անդրկովկասում.—Ազգաբնակության խտությունը և սեռերի թվական հարաբերությունը.—Քաղաքային և գյուղական բնակչությունը՝ ընդհանուր թվերով և աճման տոկոսներով.—Նահանգներ և շրջաններ* (областъ). *տարածությունը, ազգաբնակությունը, խտության ու աճման տոկոսները, սեռերի թվական հարաբերությունները նահանգներում և շրջաններում.—Աճման ընթացքի նմանություններ և տարբերություններ.—Արտագաղթ և ներգաղթ. կենտրոնացման անկյուններ.—Գավառներ և շրջանակներ* (округи). *տարածությունը, ազգաբնակությունը, խտության և աճման տոկոսները, սեռերի թվական հարաբերությունները ամեն մի նահանգի և շրջանի գավառներում և շրջանակներում առանձին-առանձին.—Նմանություններ և տարբերություններ.—Նվազման երևույթը գավառներում.—Քաղաքներ և գյուղաքաղաքներ. ազգաբնակությունը, աճման ընթացքը և սեռերի թվական հարաբերությունների դասավորությունը Անդրկովկասի բոլոր քաղաքներում և գյուղաքաղաքներում առանձին-առանձին.—Ազգաբնակչական պրոբլեմի հիմնական մոմենտները Անդրկովկասում. տարբեր կատեգորիաներ ըստ նահանգական ազգաբնակության աճման անկյունների.—Մեծ քաղաքների բնակչության արագընթաց աճման պատճառները.—Եզրակացություններ.*

### 1. Ազգաբնակությունը ընդհանրապես Անդրկովկասում

*Ըստ պետական առաջին ժողովրդագրության տվյալների Անդրկովկասի տարածությունը հավասար է 216056,4 քառակուսի վերստի, որի վրա ապրող ազգաբնակության ընդհանուր թիվը հասնում էր 5563246 հոգու (որոնցից 2983543 հ. արական և 2579703 հ. իգական սեռի)։ Եթե այս թվերը համեմատենք ավելի հին և ավելի նոր շրջանների տվյալների հետ, կը տեսնենք հետևյալը։ Անդրկովկասի ազգաբնակությունը եղել է՝*

| 1886 թվականին[1] | | | 1897 թվականին[2] | | | 1914 թվականին[3] | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| արակ. | իգակ. | միասին | արակ. | իգակ. | միասին | արակ. | իգակ. | միասին |
| 2549969 | 2152929 | 4702898 | 2983543 | 2579703 | 5563246 | 4100829 | 3492616 | 7593445 |

---

1) *1886 թվականի վերաբերյալ բացարձակ տվյալները տես* «Сводъ статистич. данныхъ о населении Закавказскаго края, извлеченныхъ изъ посемейныхъ списковъ 1886 г.» изд. закавказск. стат. ком. *Թիֆլիս, 1893 թ. (այդ խոշոր հատորի մեջ տարօրինակ կերպով չկան երեսների թվահամարներ)։*

2) *1897 թ. վերաբերյալ տվյալները տես* «Первая всеобщая перепись насел. Росс.

Եթէ մենք Անդրկովկասի ազգաբնակութեան աճման ընթացքը վերոյիշեալ երեք շրջաններում պատկերացնենք տոկոսներով, կըստանանք հետեւեալը.

| 1886—1897 թ. | | | 1897—1914 թ. | | | 1886—1914 թ. | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| արակ. | իգակ. | միասին | արակ. | իգակ. | միասին | արակ. | իգակ. | միասին |
| 17,00% | 19,80% | 18,29% | 37,45% | 35,39% | 36,50% | 60,82% | 62,22% | 61,46% |

Ինչպէս տեսնում ենք, առաջին շրջանում (1886—1897 թ.) կանանց սեռի աճման տեմպը աւելի արագ է եղել (2,80%-ով), քան տղամարդկանց սեռինը. մինչդեռ երկրորդ շրջանում ստանում ենք հակառակ յարաբերութիւնը. այստեղ արական սեռը իգականից աւելի արագ է աճում (2,06%-ով)։ Իսկ ընդհանուր առմամբ, համարեա երեք տասնամեակ ընդգրկող շրջանի (1886—1914 թ.) ամբողջ ընթացքում իգական սեռի աճումը գերազանցում է (1,40%-ով) արականից։ Այնուհետեւ աչքի է զարնում այն հանգամանքը, որ երկրորդ շրջանում ընդհանրապէս ազգաբնակութեան աճումը եղել է աւելի արագ, քան առաջին շրջանում։ Դա աւելի պարզ երեւում է տարեկան աճման տոկոսներից։ Տարեկան աճումը եղել է.

| 1886—1897 թ. | | | 1897—1914 թ. | | | 1886—1914 թ. | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| արակ. | իգակ. | միասին | արակ. | իգակ. | միասին | արակ. | իգակ. | միասին |
| 1,54% | 1,80% | 1,66% | 2,20% | 2,08% | 2,14% | 2,17% | 2,22% | 2,20% |

Ազգաբնակութեան խտութիւնը յիշեալ տարեթուերին եղել է այսպէս. իւրաքանչիւր քառակուսի վերստի վրայ բնակւում էին՝

| | | | Աճումը տոկոսներով | |
|---|---|---|---|---|
| 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | 1886—1897 թ. | 1897—1914 թ. |
| 21,2 հոգի | 25,1 հ. | 35,6 հոգի | 18,40% | 41,83 % |

Ազգաբնակութեան աճման արագ տեմպը երկրորդ շրջանում, ինչպէս տեսնում ենք, երեւան է գալիս նաեւ իւրաքանչիւր քառակուսի վերստի վրայ գտնուող բնակիչների աճման չափերից։

Տեսնենք այժմ, թէ ինչպէս են դասաւորուած երկու սեռի թուական յարաբերութիւնները Անդրկովկասում։ 100 տղամարդուն գալիս էր՝

| 1886 թուակ. | 1897 թուակ. | 1914 թուակ. |
|---|---|---|
| 84,4 կին | 85,1 կին | 86,1 կին |

Անդրկովկասը, ինչպէս տեսնում ենք, պատկանում է այն երկրների շարքին, ուր արական սեռը զգալի չափերով գերազանցում է իգականից, բայց ակնյայտնի է բերած թուերից, որ քանի գնում, այնքան թուական յարաբերութիւնները հետզհետէ փոխւում են ի նպաստ իգական սեռի։ Փոփոխութիւնների այդ պրոցեսը յանկարծակի արագանում է այնպիսի մասսայական արհաւիրքների ժամանակ, ինչպէս պատերազմն է, կասկածից դուրս է, որ մեր օրերի անասելի արիւնհեղութեան հետեւանքով տղամարդ սեռի թուական գերազանցումը՝ կին սեռի հանդէպ, զգալիօրէն նուազելու է նաեւ մեր ծայրերկրում, գոնէ քրիստոնեայ ազգաբնակութեան մէջ։

---

Имперіи, 1897 г.»—Անդրկովկասին վերաբերող ութ առանձին-առանձին հատորները, հրատ. 1904—1906 թ. Պետերբուրգ։

2) 1914 թ. տուեալները տես «Кавказскій календарь», 1915 թ. հրատ. ստատիստիկական բաժինը, եր. 218 և յաջ.

Անցնենք այժմ ազգաբնակչական յարաբերութիւնների մի հետաքրքրական կողմին. ինչպէս է դասաւորուած քաղաքային և գաւառական ազգաբնակութիւնը Անդրկովկասում։

Քաղաքային ազգաբնակութիւնը եղել է մեզ յայտնի տարեթուերին այսպէս.

| 1886 թուականին | | | 1897 թուականին | | | 1914 թուականին | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| արակ. | իգակ. | միասին | արակ. | իգակ. | միասին | արակ. | իգակ. | միասին |
| 268281 | 195261 | 463542[1] | 411617 | 282881 | 694498 | 761723 | 582420 | 1344143 |

Անդրկովկասը, նման տնտեսական-կուլտուրական զարգացումով յետամնաց երկիրների, շատ չնչին բնակչութիւն է կենտրոնացրել իր քաղաքներում։ Քաղաքային ազգաբնակութիւնը կազմում է մեր ծայրերկրի ընդհանուր ազգաբնակութեան շատ համեստ տոկոսը, ինչպէս երևում է հետևեալ թուերից.

| 1886 թուականին | | | 1897 թուականին | | | 1914 թուականին | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| արակ. | իգակ. | միասին | արակ. | իգակ. | միասին | արակ. | իգակ. | միասին |
| 10,52% | 8,10% | 9,08% | 13,80% | 10,96% | 12,48% | 18,59% | 16,70% | 17,70% |

Քաղաքային ազգաբնակութիւնը չի կազմում անգամ քսան տոկոսը ամբողջութեան։ Նրա մինիմում բաժինը կազմում է 8,10% (1886 թ.), իսկ մաքսիմումը հասնում է 18,59%-ի (1914 թ.)։ Ակնյայտնի է, սակայն, այն բնական տենդենցը, որ զգալի արագութեամբ աճում է քաղաքային բնակչութեան տոկոսային մասնակցութիւնը. 1886—1897 թ. այդ աճումը հաւասար էր 37,44%-ի, իսկ 1897—1944 թուականին 41,80 տոկոսի։ Բնորոշ է այն հանգամանքը, որ բոլոր երեք շրջաններում էլ իգական սեռի տոկոսական մասնակցութիւնը անհամեմատ աւելի նուազ է արականից։ Այդ փաստը պիտի բացատրել գլխաւորապէս նրանով, որ գաւառներից քաղաքներ արտագաղթող տղամարդիկ սովորաբար թողնում են գիւղերում իրանց ընտանիքները, այնպէս որ քաղաքները ընդունում են դրսից բնակիչներ մեծ մասամբ արական սեռից։ Բայց հետզհետէ փոխւում է այդ դրութիւնը. քաղաքներ ներգաղթող տարրերից որոշ մասը, տարիներից յետոյ, նոր պաշտօնավայրում ամրացնելով իրանց դիրքը՝ բերում են գաւառներից իրանց ընտանիքները կամ ընտանիքաւորւում են քաղաքներում։ Դրանով որոշ չափով բարձրանում է իգական սեռի թուական մասնակցութիւնը։ Այսպէս օրինակ 28 տարի առաջ (1886 թ.) իգական սեռի տոկոսական տարբերութիւնը արականից եղել է քաղաքներում 2,44 տոկոս, իսկ 28 տարի յետոյ (1914 թ.) այդ տարբերութիւնը իջել է մինչև 1,89 տոկոսի։

Բոլորովին ուրիշ յարաբերութիւններ ենք գտնում գաւառական ազգաբնակութեան մէջ։ Մեզ յայտնի տարեթուերին գաւառական ազգաբնակութիւնը եղել է Անդրկովկասում

| 1886 թուականին | | | 1897 թուականին | | | 1914 թուականին | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| արական | իգակ. | միասին | արական | իգակ. | միասին | արակ. | իգակ. | միասին |
| 281688 | 1957668 | 4239356 | 2571926 | 2296822 | 4868748 | 3339106 | 2910196 | 6249302 |

1) 1886 և 1897 թուականների քաղաքային բնակիչների թւի մէջ մտնում են նաև մի քանի գիւղաքաղաքների բնակիչների թիւերը

*Գաւառական ազգաբնակութեան տոկոսը ամբողջից.*

| 1886 թուականին | | | 1897 թուականին | | | 1914 թուականին | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| արական | իգակ. | միասին | արական | իգակ. | միասին | արակ. | իգակ. | միասին |
| 89,48% | 91,90% | 90,92% | 86,20% | 89,04% | 87,52% | 81,41% | 83,30% | 82,30% |

*Այստեղ արդէն տեսնում ենք հակառակ ծայրայեղութիւնը. գաւառական ազգաբնակութիւնը ընականօրէն կազմում է հողագործական Անդրկովկասում անհամեմատ մեծամասնութիւնը, որի տոկոսական մասնակցութեան մինիմումը կազմում է 81,41% (1914թ.), իսկ մաքսիմումը՝ 91,90% (1886թ.)։ Ճիշտ այնպէս, ինչպէս քաղաքային ազգաբնակութեան տոկոսը հետզհետէ բարձրանում է, հակառակ յարաբերութեամբ նուազում է գաւառական ազգաբնակութեան տոկոսը ամբողջութեան մէջ։ Եւ ճիշտ այնպէս, ինչպէս իգական սեռի տոկ-ական բաժինը նուազ է արականից քաղաքներում բոլոր տարեթուերին, գաւառական ազգաբնակութեան մէջ ընդհակառակը նա գերազանցում է ամենուրէք արականից։ Դա ազգաբնակչական յարաբերութիւնների յայտնի օրէնքներն են, որոնք հակառակ ուղղութեամբ առաջ են ընթանում* մեր գաւառներում և քաղաքներում. *Այդ օրէնքները մեր երկրում գտնւում են տակաւին իրանց զարգացման սկզբնական շրջանում։ Բայց որ նոյնիսկ մեր երկրում ազգաբնակութեան կենտրոն-նացումը տեղի է ունենում աննահանջ կերպով և յայտնի արագութեամբ, այդ ցոյց են տալիս քաղաքա-յին և գաւառական ազգաբնակութեան աճման ընթացքի խոշոր տարբերութիւնները։ Քաղաքային ազգաբնակութեան աճումը եղել է այսպէս.*

| 1886—1897 թ. | | | 1897—1914 թ. | | | 1886—1914 թ. | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| արական | իգակ. | միասին | արական | իգակ. | միասին | արակ. | իգակ. | միասին |
| 53,42% | 45,00% | 49,82% | 85,05% | 105,88% | 93,54% | 183,93% | 198,27% | 189,97% |

*Իսկ գաւառական ազգաբնակութեան աճումը եղել է այսպէս.*

| 1886—1897 թուակ. | | | 1897—1914 թուակ. | | | 1886—1914 թուակ. | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| արակ. | իգակ. | միասին. | արակ. | իգակ. | միասին. | արակ. | իգակ. | միասին |
| 12,72% | 17,34% | 14,84% | 29,82% | 27,00% | 28,35% | 46,34% | 48,66% | 47,49% |

*Քաղաքային և գաւառական ընակչութիւնների աճման տեմպի, արագութեան տարբերութիւնները չափազանց պարզ են, որպէսզի կարիք լինի առանձին բացատրութիւնների։ Քաղաքային ազգաբնակութիւնը աճում է 4—5 անգամ աւելի արագ, քան գաւառականը։ Ինարկէ առաջնի արագ աճումը, քաղաքային ընակիչների մեծաչափ կենտրոնացումն ու խըտացումը, կատարւում է միայն գաւառական ազգաբնակութեան դանդաղ աճման—առել է նրա շարունակական արտագաղթի դնով։ Տարեկան աճումը եղել է՝ քաղաքներում—4,52% (1886—1897թ.), 5,50% (1897—1914թ.) և 7,08 (1886—1914 թ.), (իսկ գաւառներում—1,35% (1886—1897թ.), 1,66% (1897—1914թ.) և 1,70 1886—1914թ.)։ Ահագին տարբերութիւնը աչքի է զարնում և այս տուեալներից։*

*Տեսնենք այժմ, թէ ինչպէս են դասաւորուած երկու սեռերի թուական յարաբերութիւնները քաղաքային և գաւառական ազգաբնակութեան մէջ։ 100 տղամարդու գալիս էր՝*

| Քաղաքներում | | | Գաւառներում | | |
|---|---|---|---|---|---|
| 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. |
| 72,8 կին | 68,7 կին | 76,5 կին | 85,8 կին | 87,7 կին | 87,5 կին |

*Վերջիշեալ մեր բացատրութիւնները գալիս են հաստատելու նոր փաստերով մի կողմից իգական սեռի համեմատական գերակշռութեան մասին գաւառներում՝ քաղաքայինի հանդէպ, իսկ միւս կողմից հաւասարակշռութեան հետզհետէ զարգացող տենդենցի նկատմամբ՝ կին սեռի արտիճանական յաւելման շնորհիւ քաղաքներում։*

## 2. Ազգաբնակութիւնը նահանգներում և շրջաններում

Դիտենք այժմ Անդրկովկասի նահանգներին ու շրջաններին և տեսնենք, թէ ինչ թւական յարաբերութիւններ են եղել և ինչ տոկոսական փոփոխութիւններ են կրել Անդրկովկասի ազգաբնակութեան առանձին մասերը մեր արդէն յայտնի տարեթւերին։ Ազգաբնակութիւնը նահանգներում և շրջաններում։

| Նահանգներ | 1886 թւականին | | | 1897 թւականին | | | 1914 թւական | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | արական | իգակ. | միասին | արական | իգակ. | միասին | արական | իգակ. | միասին |
| 1. Թիֆլիսի նահ. [1]) | 480683 | 401909 | 882592 | 575447 | 475585 | 1051032 | 811762 | 682951 | 1494713 |
| 2. Քութայիսի „ [2]) | 490654 | 432652 | 923306 | 549504 | 508738 | 1058242 | 771682 | 647297 | 1418979 |
| 3. Երևանի „ | 361627 | 308778 | 670405 | 441889 | 487667 | 829556 | 555863 | 488234 | 1044097 |
| 4. Գանձակի „ | 410460 | 318483 | 728943 | 480012 | 398403 | 878415 | 624461 | 541375 | 1165836 |
| 5. Բագուի „ | 401257 | 311446 | 712703 | 458065 | 368651 | 826716 | 654700 | 527207 | 1181907[3]) |
| 6. Սև ծով. „ | 9923 | 8202 | 18125 | 34776 | 22702 | 57478 | 118075 | 76385 | 194463 |
| 7. Դաղստանի շրջան | 304978 | 287802 | 592780 | 283279 | 287875 | 571154 | 362897 | 339340 | 702237 |
| 8. Կարսի շրջան | 90387 | 83657 | 174044[4]) | 160571 | 130083 | 299654[5]) | 201386 | 189827 | 391213[6]) |

[1]) Թիւրիմացութիւնից խուսափելու համար անհրաժեշտ ենք համարում նկատել, որ Թիֆլիսի նահանգի մէջ մտնում է նաև Զաքաթալայի շրջանը։ Ընդհանուր ժողովրդագրութեան ժամանակ նա միացրած է եղել նահանգին։ Որպէսզի համեմատութեան մէջ պահպանուած լինի ամբողջութիւնը, մենք վերջին թւականի տւեալները ևս ներկայացնում ենք միացած։

[2]) Նոյն կերպ վարուել ենք նաև Բաթումի և Սուխումի շրջանների նկատմամբ, որոնք 1886 և 1897 թւականներին միացրած են եղել Քութայիսի նահանգին, իսկ 1914 թ. բաժանուած էին։ Այդ շրջանների տւեալները ևս միացրած են Քութայիսի նահանգի տւեալների վերջին թւականին։

[3]) Բագուի նահանգի տւեալների մէջ մտնում են նաև Բագուի քաղաքապետութեան տւեալները։

[4]) 1886 թ. վերաբերեալ տւեալները առնւած են մեր արդէն յայտնի աղբիւրի («Сводъ стат. дан. о насел. Закав. края») մէջ առանձին-առանձին նահանգների ու շրջանների։

[5]) 1897 թ. տւեալները առնւած ժողովրդագրութեան ութ հատորները Անդրկովկասի [illegible] թւերը։

[6]) 1914 թւի թւերը առնւած «Кавказскій кал.» 1915 թ. հրատ., ստատիստիկական բաժնից։

Առաջ իր բազմամարդութեամբ ամենամեծ նահանգը ողջ Անդրկովկասում, ինչպէս երեւում է այս աղիւսակից, եղել է Քութայիսի նահանգը. մինչև 1897 թ. նա պահպանել է իր առաջնութիւնը։ Երկրորդ տեղը բռնել է Թիֆլիսի նահանգը։ Բայց շնորհիւ վերջինիս կենտրոնավայր վիճակին, անհամեմատ աւելի արագ է բազմանում Թիֆլիսի նահանգի ազգաբնակութիւնը՝ ներգաղթի հետևանքով, քան Քութայիսի նահանգինը։ 1914 թ. արդէն Թիֆլիսի նահանգը իր բնակչութեան թւով բռնում է անպայման առաջին տեղը մեր ծայրերկրում։ 1886 թ. Քութայիսի նահանգի բնակչութիւնը գերազանցել է Թիֆլիսի նահանգի բնակչութիւնից 40714 հոգով. 1897 թ. այդ գերազանցումը իջնում է մինչև 7029-ի, իսկ 1914 թ. Թիֆլիսի նահանգը անցնում է Քութայիսի նահանգից և գերազանցում նրանից արդէն 75734 հոգով։ Խոշոր քաղաքի բնակչութեան՝ ի հաշիւ գաւառների, աճման աւելորդ փաստերից մէկն է դա։ Ամենափոքր նահանգը եղել է և մինչև այժմ էլ մնացել է Սև-ծովեան նահանգը։ Մնացած նահանգներից նախկին տարեթուերին երրորդ տեղը բռնել է իր բնակչութեան թւով Գանձակի նահանգը։ Այնուհետև չորրորդ տեղը բռնել է՝ սկզբում (1886 թ.) Բագուի նահանգը և յետոյ (1897 թ.) Երևանի նահանգը։ Իսկ 1914 թուականին Բագուի նահանգը, շնորհիւ բացառապէս Բագու քաղաքին, իր բնակչութեան թւով արդէն գերազանցում է թէ Երևանի և թէ Գանձակի նահանգներից, բռնելով երրորդ տեղը՝ Թիֆլիսի և Քութայիսի [1]) նահանգներից յետոյ։ Այնուհետև գալիս են Դաղստանի և Ղարսի շրջանները, որոնք թէ առաջ և թէ ներկայումս իրանց բնակչութեան թւով գերազանցել են միայն Սև-ծովեան նահանգից։

Տեսնենք այժմ, թէ ըստ տարածութեան և ազգաբնակչական խտութեան ինչ պատկեր են ներկայացնում վերոյիշեալ նահանգներն ու շրջանները։

| Նահանգներ և շրջաններ | Ընդհանուր տարածութիւնը (քառ. վերստ) | Իւրաքանչիւր քառակուսի վերստի վրայ բնակւում էին | | |
|---|---|---|---|---|
| | | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. |
| 1. Թիֆ. նահ. | 39122,0 | 22,5 | 26,8 | 38,2 |
| 2. Քութ. » | 32051,0 | 28,8 | 33,0 | 44,2 |
| 3. Երևանի » | 23226,4 | 28,8 | 35,7 | 44,9 |
| 4. Գանձակի նահ. | 38782,5 | 18,8 | 22,6 | 30,0 |
| 5. Բագուի նահ. | 34410,2 | 20,7 | 24,0 | 34,3 |
| 6. Սև ծով. նահ. | 5865,8 | 2,8 | 8,9 | 30,1 |
| 7. Դաղստ. շրջան | 26182,4 | 22,7 | 21,8 | 26,5 |
| 8. Ղարսի շրջան | 16466,1 [2]) | 10,4 | 17,4 | 23,5 |

---

[1]) Եթէ մենք դուրս հանենք Քութայիսի նահանգի բնակչութեան թւից (1914 թ. վերաբերեալ) Բաթումի և Սուխումի շրջանների բնակչութեան թուերը կը ստանանք 1037924 մի թիւ, որից գերազանցում են ոչ միայն Բագուի, այլև Գանձակի և Երևանի բնակիչները առանձին-առանձին վերցրած։ Այդ հաշւով Քութայիսի նահանգը այժմ կը բռնէր հինգերորդ տեղը։

[2]) Ըստ 1897 թուականի տւեալների։

Միևնոյն ծայրերկրի զանազան մասերը մեծ չափ-երով տարբերւում են իրարից թէ տարածութեամբ և թէ ազգաբնակչական խտութեամբ։ Իր տարածութեան մեծութեամբ առաջին տեղը պատկանում է Թիֆլիսի նահանգին, որին, փոքրիկ տարբերութեամբ միայն (339,5 քառ. վերստով) հետևում է Գանձակի նահանգը, այնուհետև Բագուի նահանգը։ Իր տարածութեամբ ևս վերջին տեղը բռնում է Սև-ծովեան նահանգը։ Տարօրինակ կերպով անհամապատասխան փոքրիկ տարածութիւն ունի Երևանի նահանգը, ընդամենը՝ 23226,4 քառ. վերստ. Երևանի նահանգից գերազանցում են իրանց տարածութեամբ՝ Թիֆլիսի նահանգը՝ 15895,6 քառ. վերստով, Գանձակի նահանգը՝ 15556,1 քառ. վերստով, Բագուի նահանգը՝ 11183,8 քառ. վերստով, Քութայիսի նահանգը՝ 8824,6 քառ. վերստով և նոյն իսկ Դաղստանի շրջանը՝ 2906,0 քառ. վերստով։ Շնորհիւ իր փոքրածաւալ տարածութեան Երևանի նահանգը իր բնակչութեան խտութեամբ բռնում է բոլորի մէջ առաջին տեղը։ Նրան հետևում են Քութայիսի, ապա Թիֆլիսի և Բագուի նահանգները։ Ամենանոսր բնակչութիւն ունեցել է առաջին տարեթուերին Սև-ծովեան նահանգը, իսկ այժմ Ղարսի շրջանը։ Համաձայն երկրի զանազան մասերի ընդհանուր բնակչութեան աճման տոկոսների՝ աճել է նաև խտութեան տոկոսները։ Ամենաարագ խտացումը եղել է Սև-ծովեան նահանգում՝ 2,3 բնակչից (իւրաք. քառ. վերստի վրայ) հասնելով 30,1 բնակչի կամ աճելով ուղիղ 975 տոկոսով. դրան հետևում է Ղարսի շրջանը՝ 126 տոկոսով՝ Թիֆլիսի նահանգը՝ 69,73 տոկոսով, Բագուի նահանգը՝ 65,70 տոկոսով, Երևանինը՝ 56,00 տոկոսով. ամենից նուազ աճեցում ունեցել է Դաղստանի շրջանի բնակչութեան խտութիւնը։

Աւելի լրիւ պատկեր կը ստանանք, եթէ ցոյց տանք նահանգների ազգաբնակչութեան աճման տոկոսները յայտնի տարեթուերին առանձին-առանձին։ Ահա այդ տոկոսները.

| Նահանգներ և շրջաններ | 1886—1897 թուակ. | | | 1897—1914 թուակ. | | | 1914—1914 թուակ. | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | արական | իգակ. | միասին | արական | իգակ. | միասին | արական | իգակ. | միասին |
| 1. Թիֆլիսի նահ. | 19,71% | 18,33% | 19,08% | 41,07% | 43,60% | 42,11% | 68,87 % | 70,00% | 69,35% |
| 2. Քութայիսի նահ. | 12,00 » | 17,60 » | 14,61 » | 40,43 » | 27,23 » | 34,09 » | 57,30 » | 50,00 » | 54,00 » |
| 3. Երևանի նահ. | 22,19 » | 25,55 » | 23,74 » | 25,84 » | 26,00 » | 25,86 » | 53,70 » | 58,12 » | 55,74 » |
| 4. Գանձակի նահ. | 17,00 » | 25,09 » | 20,50 » | 30,09 » | 35,88 » | 32,72 » | 52,13 » | 69,98 » | 59,93 » |
| 5. Բագուի նահ. | 14,40 » | 18,37 » | 16,00 » | 43,00 » | 43,01 » | 43,00 » | 63,16 » | 69,27 » | 65,86 » |
| 6. Սև ծով. նահ. | 250,00 » | 176,80 » | 217,12 » | 240,00 » | 236,50 » | 220,93 » | 1090,00 » | 831,00 » | 973,00 » |
| 7. Դաղստ. շրջան | —7,70 » | 9,3 » | —3,61 » | 28,10 » | 17,88 » | 22,95 » | 19,00 » | 18,00 » | 18,47 » |
| 8. Ղարսի շրջան | 77,64 » | 55,49 » | 67,00 » | 25,42 » | 45,94 » | 34,25 » | 123,00 » | 128,12 » | 124,78 » |

[library stamps]

Աճման տարբեր աստիճաններ են ունեցել նահանգների և շրջանների բնակիչները։ Ամենաանսովոր, կարելի է ասել՝ թռիչքոտ աճում ունեցել է Սև-ծովեան նահանգի բնակչութիւնը. երեսուն տարուայ ընթացքում մի քանի հազար բնակիչների թիւը անցել է հարիւր հազարից, աճելով մօտ հազար տոկոսով (973 տոկոս)։ Անշուշտ դրսի տարրերի մասսայական մուտքով կարելի է միայն բացատրել այդ անօրինակ աճումը, որոնք տեղ են բռնել ծովափնեայ վայրերում՝ գրաւուած տեղական առևտրի և արդիւնաբերութեան բարգաւաճ ընթացքից։

Աճման տեմպի արագութեան տեսակէտից երկրորդ տեղը բռնում է Ղարսի շրջանը, որի բնակչութիւնը նոյն ժամանակամիջոցում աճել է 124,78%-ով (երկու սեռերը միասին վերցրած)։ Ղարսի շրջանի բնակիչների այդ արագ բազմացումը պիտի վերագրել գլխաւորապէս այն մասսայական գաղթին, որ տեղի է ունեցել Թիւրքիայից դէպի Կովկասի սահմանները. գաղթողները եղել են Թիւրքահայերը Թիւրքահայ վիլայէթներից, որոնք բնակութեան վայրեր առաջին հերթին ընտրել են Ղարսի շրջանում[1])։ Դա պարզ երևում է աճման այն անհամապատասխան ընթացքից, որ ունեցել է Ղարսի շրջանի բնակչութիւնը երկու տարբեր տարեշրջաններում։ Առաջին տարեշրջանում (1886—1897 թ.) նա աճել է 67,00%-ով, իսկ երկրորդում (1897—1914)՝ 34,25%-ով, ասել է 11 տարուայ ընթացքում Ղարսի շրջանի բնակչութիւնը աճել է համարեա երկու անգամ աւելի, քան 17 տարուայ ընթացքում։ Պարզ է, որ առաջին տարեշրջանի արագ աճումը պիտի վերագրել հէնց նոյն ժամանակներում եղած մասսայական գաղթին։

Մնացած նահանգներում աճումը եղել է նորմալ։ Իսկ նորմալ պայմաններում աւելի արագ աճում կարող է ունենալ բնակչութիւնը երկրի այն մասերում, որոնք բացի իրենց բնական աճումից, ունեն նաև գաւառներից քաշող-բերող արդիւնաբերական և կուլտուրական կենտրոններ։

Այդ տեսակէտից առաջին տեղը ի հարկէ պիտի բռնէին Թիֆլիսի և Բագուի նահանգները՝ իրենց կենտրոնական քաղաքներով։ Առաջինի բնակչութեան աճումը (1886—1914 թ.) եղել է 69,35%, երկրորդինը՝ 65,86%, այսինքն երկուսն էլ գերազանցել են ծայրերկրի ազգաբնակութեան միջին աճումից (ինչպէս մենք գիտենք՝ 61,46%), առաջինը՝ 7,89 տոկոսով, երկրորդը՝ 4,40%-ով։ Տարեկան աճումը եղել է՝ Թիֆլիսի նահանգում 2,47%-ով, իսկ Բագուի նահանգում՝ 2,35%-ով։

Մնացած նահանգների բնակչութիւնը, ինչպէս երևում է վերևի աղիւսակից, յետ է մնացել միջին աճման մակարդակից։ Համեմատաբար նուազ աճեցում ունեցել է Քութայիսի նահանգի բնակչութիւնը՝ 54,00%, ասել է՝ 7,46%-ով նուազ միջին աճումից։ Իսկ Երևանի և մանաւանդ Գանձակի նահանգները այդ տեսակէտից գերազանցում են Քութայիսի նահանգից։ Աչքի է ընկնում այն փաստը, որ առաջին տարեշրջանում (1886—1897 թ.) Երևանի նահանգի բնակչութիւնը աւելի արագ է աճել, քան որևէ տեղ (չհաշուած ի հարկէ Սև-ծովեան նահանգի և Ղարսի շրջանը, որոնց բը-

---

[1]) Տարաբաղդաբար չկան յատուկ տուեալներ, թէ որ թուականին. որքան օտարահպատակներ են եկել և որտեղ են ընտրել իրենց բնակութեան տեղերը։

նակչութեան աճման բացառիկ բնոյթը բացատրեցինք մենք վերև), քան նոյնիսկ Թիֆլիսի և Բագուի նահանգներում։ Այդ փաստը պէտք է բացատրել, մեր կարծիքով, նոյն թիւրքահայ տարրի ներգաղթով, որի հոսանքը Ղարսի շրջանից անցել էր նաև Երևանի նահանգը։

Ինչ վերաբերում է Գանձակի նահանգին, պիտի նկատել, որ այնտեղ երկու սեռերի աճման չափերը խոշոր տարբերութեամբ հեռանում են իրարից. արական սեռը աճել է 52,13%-ով, իսկ իգականը 69,98%-ով (1886—1914 թ.), այսինքն իգական սեռի աճումը գերազանցել է արականից ոչ պակաս քան 17,85%-ով։ Այսպիսի խոշոր տարբերութիւն չկայ բերած աղիւսակի ոչ մի մասում։

Ինչով բացատրել այդ բացառիկ երևոյթը։ Գուցէ կան բնական՝ երկրային-ազգագրական հիմքերից բղխած մեզ անյայտ պատճառներ։ Բայց մեզ յայտնի է մի խոշոր պատճառ, որ հասարակական բնոյթ ունի։ Այդ պատճառը կայանում է, մեր կարծիքով, նրանում, որ Գանձակի նահանգը և յատկապէս նրա երկու մեծ գաւառները՝ Ղարաբաղն ու Զանգեզուրը, մատակարարում են առևտրա-արդիւնաբերական և կուլտուրական կենտրոններին շատ աւելի մեծ քանակով արտագաղթող տարրեր արական սեռից, քան որևէ նահանգ կամ գաւառ։ Տղամարդկանց շարունակական արտագաղթը խախտում է սեռերի աճման հաւասարակշռութիւնը ի վնաս արականի, ինչպէս տեսնում ենք այդ Գանձակի նահանգում։ Ի լրումն այս բացատրութիւնների կարող է փաստ ծառայել մեզ Սև-Ծովեան նահանգի երկու սեռերի աճման փոխ-յարաբերութիւնները, միայն հակառակ բնաւորութեամբ։ Այդ նահանգը, ինչպէս տեսանք, առատօրէն ընդունել է եկուոր տարրեր, ի հարկէ մեծագոյն մասով արական սեռից։ Հետևանքը եղել է այն, որ արական սեռը աճել է 1090%-ով, իսկ իգականը, 831%-ով, այսինքն 259%-ով նուազ արականից։ Սա մի օրինակ է հակառակ ուղղութեամբ, որ գալիս է հաստատելու այն երևոյթը, որ ներգաղթի վայրում արական սեռի արագ աճումը կատարւում է ի հաշիւ արտագաղթի վայրի արական սեռի դանդաղ աճման և ընդհակառակը։ Վերը յիշուած նահանգների և շրջանների շարքում ամենադանդաղ աճեցում ունեցել է Դաղստանի շրջանի բնակչութիւնը՝ ընդամենը 18,47%-ով, աճել է տարեկան մի տոկոսից աւելի պակաս։

Այժմ տեսնենք, թէ ինչպէս են դասաւորուած սեռերի թուական յարաբերութիւնները առանձին-առանձին նահանգներում և շրջաններում։ 100 տղամարդուն գալիս էր՝

| Նահանգներ և շրջաններ | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | Միջին թւով |
|---|---|---|---|---|
| 1. Թիֆլիսի նահ. | 83, 6 կին | 82,7 կին | 84,1 կին | 83,4 կին |
| 2. Քութայ. նահ. | 88,0 » | 92,5 » | 84,0 » | 88,1 » |
| 3. Երևանի նահ. | 85,0 » | 88,0 » | 87,8 » | 86,9 » |
| 4. Գանձակի նահ. | 78,0 » | 83,0 » | 86,7 » | 82,6 » |
| 5. Բագուի նահ. | 78,0 » | 80,5 » | 80,5 » | 79,6 » |
| 6. Սև-ծով. նահ. | 83,0 » | 65,3 » | 64,7 » | 71,0 » |
| 7. Դաղստ. շրջան | 94,0 » | 101,7 » | 93,5 » | 96,4 » |
| 8. Ղարսի շրջան | 92,0 » | 80,0 » | 94,0 » | 88,1 » |

*Իգական սեռի ամենաբարձր թիւը գտնում ենք Դաղստանի շրջանում, ուր միջին թուով հարիւր տղամարդուն գալիս է 96,4 կին, իսկ 1897 թուին իգական սեռը նոյնիսկ գերազանցել է արականից, հասնելով 101,7-ի։ Այնուհետեւ գալիս են Քութայիսի նահանգը եւ Ղարսի շրջանը, ուր իգական սեռի մասնակցութիւնը միեւնոյն չափերի է հասնում (88,1 կին՝ 100 տղամարդուն, այսինքն միջին մասնակցութիւնից աւելի բարձր)։ Ամենացածր աստիճանի վրայ է կանգնած իգական սեռի թուական մասնակցութիւնը Սեւ-ծովեան նահանգում, ուր 100 տղամարդուն գալիս է ընդամենը 71,0 կին։ Մնացած տեղերում իգական սեռի թուական մեծութիւնը՝ աւելի կամ պակաս տարբերութեամբ բռնում է միջին տեղը։*

## 3. Ազգաբնակութիւնը գաւառներում եւ շրջանամասերում

*Անցնենք առաջ եւ թուական ու տոկոսական նոյն յարաբերութիւնները որոնենք ամեն մի նահանգի եւ շրջանի եւ շրջանամասերում նրանց գաւառներում առանձին-առանձին, պահպանելով տերիտորիական մասերի նոյն յաջորդականութիւնը։*

*Գաւառական եւ քաղաքային ազգաբնակութիւնը նահանգներում եւ շրջաններում։*

### ա. Թիֆլիսի նահանգ

| Գաւառներ (քաղաքներով հանդերձ) | 1886 թ. (երկսեռ) | 1897 թ. (երկսեռ) | 1914 թ.[1] (երկսեռ) | Տոկոսական աճումը (կամ նուազումը) 1886—1897 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Թիֆ. գ. | 144822 | 234632 | 456386 | 62,01% | 94,52% | 215,14% |
| 2. Ախալք. գ. | 63799 | 72709 | 104946 | 14,00 » | 44,00 » | 64,50 » |
| 3. Ախալց. գ. | 58791 | 68837 | 95975 | 17,10 » | 40,00 » | 63,25 » |
| 4. Բորչ. գ. | 101847 | 128587 | 174388 | 26,25 » | 35,62 » | 71,22 » |
| 5. Գորու գ. | 180194 | 191091 | 235614 | 6,05 » | 23,35 » | 30,75 » |
| 6. Դուշ. գ. | 70017 | 67719 | 81742 | —3,40 » | 20,75 » | 16,74 » |
| 7. Սիղն. գ. | 88830 | 102313 | 141356 | 15,20 » | 38,16 » | 60,00 » |
| 8. Թելաւի գ. | 65119 | 66767 | 74829 | 2,53 » | 12,10 » | 14,91 » |
| 9. Թիոնթ. գ. | 34724 | 34153 | 44820 | —1,61 » | 31,23 » | 29,07 » |
| 10. Զաք. շ.[2] | 74449 | 84224 | 84657[3] | 13,13 » | 0,51 » | 13,71 » |
| Ամբողջ նահ. | 882592 | 1051032 | 1494713 | 19,08 » | 42,21 » | 69,35 » |

*Այս Թիֆլիսի նահանգի ազգաբնակութիւնը իր առանձին-առանձին գաւառներում։ Բազմամարդութեան տեսակէտից առաջին տեղը բռնում է Գորու գաւառը (1886թ.), իսկ երկրորդը՝ Թիֆլիսի գաւառը։ Վերջին տարեթուերին արդէն (1897 եւ 1914թ.) Թիֆլիսի գաւառը խոշոր չափերով*

---

[1]) *Դիւրութեան համար գաւառական ազգաբնակութեան երկու սեռերի թուերը միասին ենք ներկայացնում։*

[2]) *Յիշեցնում ենք, որ Զաքաթալայի շրջանամասի տուեալները տալիս ենք բոլոր տարեթուերին Թիֆլիսի նահանգի գաւառների տուեալների հետ միասին՝ համեմատութիւնների մէջ ներդաշնակութիւն պահպանելու համար.*

[3]) *Երեք տարեթուերի արդիւնք թուերը տես մեզ արդէն յայտնի աղբիւրների յիշեալ մասերում։*

գերազանցել է բոլորին իր բնակիչների թւով։ Իրապէս այդ գերազանցումը պէտք վերագրել Թիֆլիս քաղաքի բնակիչների արագընթաց կենտրոնացման, ապա թէ ոչ Թիֆլիսի գաւառը՝ առանց իր կենտրոնի, որպէս սոսկ գաւառ, իր բնակիչների թւով յետ է մնում ոչ միայն Գորու, այլև Բորչալուի, Դուշեթի և Սղնախի գաւառներից։

Աճման տոկոսների աղիւսակը ցոյց է տալիս, թէ որ գաւառի շնորհիւ է, որ Թիֆլիսի նահանգի բնակչութիւնը իր աճման արագութեամբ առաջին տեղն է բռնում բոլոր մեծ նահանգների մէջ։ Դա բացառապէս Թիֆլիսի գաւառն է՝ Թիֆլիս քաղաքի շնորհիւ։ Միայն նա է, որի բնակչութիւնը հարիւրաւոր տոկոսներով (215,14 տոկոս.-ով) աճել է երեք տասնամեակի ընթացքում։ Թիֆլիսի նահանգի միւս գաւառների մէջ միայն Բորչալուն է, որի բնակչութեան աճումը (71,22 տոկ.-ով) չնչին տարբերութեամբ (ընդամենը 1,87 տոկ.-ով) գերազանցում է նահանգի ընդհանուր բնակչութեան միջին աճումից։ Մնացածները յետ են մնում միջին աճումից։ Ախալքալաքի (աճումը 64,50 տոկ.-ով), Ախալցխայի (63,25 տոկ.) և Սղնախի (60,00 տոկ.-ով) գաւառների բնակչութեան աճումը քիչ տարբերութեամբ յետ է մնում միջին աճումից, իսկ մնացած գաւառները աճման շատ թոյլ տոկոսներ են ցոյց տալիս, իջնելով մինչև 14,91 տոկ. (Թելաւի գաւառում) և անգամ 13,71 տոկ. (Զաքաթալայի շրջանում)։ Իսկ կան գաւառներ, որոնց բնակչութիւնը նոյնիսկ նւազման[1]) տոկոսներ է տալիս նախկին տարեթւերի (1886—1897թ.) նկատմամբ. այդպէս են, օրինակ, Դուշեթի (—3,40 տոկ.) և Թիօնեթի (—1,61 տոկ.) գաւառները։

Այժմ տեսնենք, թէ Թիֆլիսի նահանգի առանձին մասերը ինչ տարածական մեծութիւն և ազգաբնակչական խտութեան աստիճան են ներկայացնում։

| Գաւառներ (քաղաքներով հանդերձ) | Ընդհանուր տարածութիւնը (քառ. վերստ) | Մի քառակուսի վերստի վրայ բնակւում էին | | |
|---|---|---|---|---|
| | | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. |
| 1. Թիֆլիսի գաւ. | 3688,4 | 39,2 | 63,7 | 114,0 |
| 2. Ախալքալաքի գ. | 2368,6 | 26,9 | 30,7 | 43.1 |
| 3. Ախալցխայի գ. | 2259,6 | 26,0 | 30,4 | 41,1 |
| 4. Բորչալուի գ. | 5938,5 | 17,1 | 21,6 | 28,9 |
| 5. Գորու գաւառ | 6033,9 | 29,8 | 31,6 | 39,2 |
| 6. Դուշեթի գաւառ | 3437,9 | 20,3 | 19,7 | 24,0 |
| 7. Սղնախի գաւ. | 4620,0 | 19,3 | 22,1 | 26,7 |
| 8. Թելաւի գաւ. | 2974,5 | 21,9 | 22,4 | 34,6 |
| 9. Թիօնեթի գաւ. | 4256,3 | 8,1 | 8,0 | 10,5 |
| 10. Զաքաթ. շրջանամաս | 3544,3 | 21,0 | 23,7 | 24,2 |

[1]) Ինչպէս այստեղ, այնպէս էլ յետոյ, ազգաբնակչական հատուածների թւական նւազման դէպքեր՝ զանազան տարեթւերին, յաճախ են լինելու։ Այդ նւազումները կարող են, անշուշտ, հազար ու մի պատճառներից առաջացած լինել. օրինակ՝ արտագաղթից ներքին կօլոնիզացիայից, բնական աղէտներից եւայլն։ Բայց մենք հեռու չենք այն մտքից, ընդունելու, որ այդպիսի պատճառ կարող է լինել նաև վիճակագրական սխալ հաշւումներից և հետևապէս սխալ տւեալներից։ Դա հասկանալի պատճառներից մէկն է կանոնաւոր և վստահարժան ստատիստիկայից զուրկ երկրում։ Հնարաւորութիւն չկայ, իհարկէ, առանձին-առանձին դէպքերում մատնանշելու նւազման կոնկրետ պատճառների վրայ

Թիֆլիսի գաւառը, լինելով իր բնակչութեան քանակով ամենից բազմամարդը, յետ է մնում շատ գաւառներից իր տարածութեան ծաւալով. նոյնիսկ այնքան անյայտ և բնակչութեամբ ամենից փոքր գաւառը, ինչպէս Թիօնետն է, գերազանցում է Թիֆլիսի գաւառից իր տարածութեան մեծութեամբ։ Տարածութեամբ ամենամեծ գաւառները համարւում են Գորին ու Բորչալուն, իսկ ամենից փոքրները՝ Ախալցխայի և Ախալքալաքի գաւառները։ Թիֆլիսի գաւառը բռնում է իր տարածութեամբ հինգերորդ տեղը բոլորի մէջ. իսկ ազգաբնակչական խտութեամբ, իբրև ամենից բազմամարդը, նա, բնականաբար անցնում է բոլոր գաւառներից, մի քանի անգամ գերազանցելով նահանգի ընդհանուր-ազգաբնակչական միջին խտութիւնից։ 1914 թ. Թիֆլիսի գաւառում իւրաքանչիւր քառ. վերստի վրայ բնակւում էին 114 հոգի, իսկ նահանգում միջին խտութիւնը հաւասար էր 38,2-ի, ասել է ուղիղ երեք անգամ պակաս։ Ամենանոսր բնակութիւն ունի Թիօնէտի գաւառը։ Մնացած գաւառների մէջ Ախալքալաքը, Ախալցխան և մասամբ Գորին փոքր տարբերութեամբ գերազանցում են միջին խտութիւնից։

Իսկ ինչպէս են դասաւորուած երկու սեռերի թուական յարաբերութիւնները Թիֆլիսի նահանգի զանազան մասերում։ 100 տղամարդուն գալիս էին կանայք՝

| Գաւառներ (քաղաքներով հանդերձ) | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | Միջին թուով |
|---|---|---|---|---|
| 1. Թիֆլիսի գաւառ | 79,1 | 70,2 | 78,2 | 75,8 |
| 2. Ախալքալաքի գաւ. | 90,4 | 91,8 | 91,2 | 91,1 |
| 3. Ախալցխայի գաւ. | 89,3 | 87,0 | 79,8 | 85,3 |
| 4. Բորչալուի գաւառ | 81,3 | 82,7 | 80,9 | 81,6 |
| 5. Գորու գաւառ | 81,2 | 85,8 | 85,4 | 84,1 |
| 6. Դուշեթի գաւ. | 81,4 | 88,8 | 100,5 | 90,2 |
| 7. Սղնախի գաւ. | 83,7 | 82,8 | 88,7 | 85,1 |
| 8. Թելաւի գաւառ | 87,5 | 86,0 | 89,1 | 87,5 |
| 9. Թիօնեթի գաւ. | 92,6 | 107,9 | 95,1 | 98,5 |
| 10. Զաքաթալայի շրջանամաս | 86,4 | 85,4 | 85,5 | 85,7 |

Կին սեռի ամենանուազ մասնակցութիւն գտնում ենք այստեղ միայն Թիֆլիսի գաւառում, ուր 100 տղամարդուն գալիս են ընդամենը 75,8 կանայք, իսկ 1897 թ. աւելի նուազ՝ 70,2 կանայք։ Ամենաուժեղ մասնակցութիւն ունի իգական սեռը Թիօնետի գաւառում. 100 տղամարդուն գալիս են այնտեղ 98,5 կանայք, իսկ 1897 թ. այդ մասնակցութիւնը հաւասար էր 107,9-ի։ Այդ երկու բևեռների—Թիֆլիսի և Թիօնէթի—միջին տարածութեան վրայ տեղ են բռնում միւս գաւառները, որոնք իրանց տարբերութիւններով աւելի մօտ են Թիօնետին, քան Թիֆլիսին։ Վերջինիս իգական սեռի նուազ քանակը դարձեալ բացատրւում է Թիֆլիս քաղաքի ազգաբնակչական խոշոր կուտակումներով ի հաշիւ եկւոր գաւառական էլեմենտների, որոնց մէջ տղամարդ սեռը, անպայման, գերակշռում է ճնշող մեծամասնութեամբ։

Շարունակենք մեր ստատիստիկական դիտողութիւնները Անդրկովկասի միւս նահանգների և շրջանների նկատմամբ։

### ե. Քութայիսի նահանգ

| Գաւառներ (քաղաքներով անդերձ) | 1886 թ. (երկսեռ) | 1897 թ. (երկսեռ) | 1914 թ. (երկսեռ) | Տոկոսական աճումը (կամ նուազումը) 1886—1897 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Քութ. գ. | 193426 | 221665 | 284511 | 14,60 % | 28,35 % | 47,90 % |
| 2. Արդ. շր. | 52434 | 56140 | 70190 | 6,70 » | 25,03 » | 34,00 » |
| 3. Բաթ. շր. | 61367 | 88444 | 120948 | 44,12 » | 38,00 » | 93,84 » |
| 4. Զուգդ. գ. | 105355 | 114869 | 131887 | 9,03 » | 14,81 » | 25,18 » |
| 5. Լեչխ. գ. | 46300 | 47779 | 60787 | 3,20 » | 27,23 » | 31,30 » |
| 6. Օզուր. գ. | 75846 | 90326 | 111436 | 20,41 » | 23,37 » | 46,63 » |
| 7. Ռաչ. գ. | 64255 | 60421 | 80763 | —6,34 » | 33,66 » | 25,70 » |
| 8. Սենկ. գ. | 103576 | 115785 | 154558 | 11,80 » | 33,48 » | 50,00 » |
| 9. Սուխ. գ. | 68772 | 106179 | 189907 | 56,50 » | 78,85 » | 180,00 » |
| 10. Շոր. գ. | 147265 | 156633 | 205992 [1] | 6,38 » | 33,00 » | 40,00 » |
| Ընդամենը | 923306 | 1058241 | 1418979 | 14,61 » | 34,09 » | 54,00 » |

Իր բազմաբնակչութեամբ բոլոր գաւառների մէջ առաջին տեղը բռնում է Քութայիսի գաւառը. և այդ առաջնութեան դիրքը նա պահպանել է բոլոր տարեթուերին։ Բայց Քութայիսի գաւառի բնակչութիւնը թէպէտ չի գերազանցում միւսներից այնպիսի խոշոր չափերով, ինչպէս Թիֆլիսի գաւառն էր, որովհետև Քութայիսը, իբրև իր նահանգի կենտրոնական քաղաք, շատ է հեռու և յետ մնացած Թիֆլիսից։ Երկրորդ խոշոր գաւառը կազմում է Շորապանը, մի գաւառ, որ քաղաք չունի, չհաշուելով ի հարկէ աննշան Կվիրիլլին։ Ամենափոքր գաւառը համարւում է Լեչխումը, ապա Արդուինի շրջանը։

Ինչ վերաբերում է գաւառների բնակչութեան աճման ընթացքին, պէտք է նկատել, որ այն եղել է համեստ ու միջակ, մանաւանդ առաջին տարեշրջանում, ուր կայ նոյնիսկ բնակչութեան նուազման դէպք (Ռաչինսկի գաւառում)։ Այն մեծ տարբերութիւնը, որ Թիֆլիսի նահանգի բոլոր գաւառների մէջ ունի Թիֆլիսի գաւառի բնակչութիւնը իր աճման արագութեամբ, ունեն նաև մասամբ Բաթումի և մանաւանդ Սուխումի շրջանները[2] Քութայիսի նահանգի գաւառների շարքում. առաջինի բնակչութիւնը աճել է 93,84%-ով, երկրորդինը՝ 180,00%-ով։ Դրանից շատ յետ է մնում Քութայիսի գաւառը իր 47,90%-ով, որին գերազանցում է նոյնիսկ Սենակի գաւառը իր 50,00% աճումով։ Այստեղ նորից հաստատւում է մեր բացատրութիւնների հիմնական կէտը. ինչպէս Թիֆլիսի գաւառի բնակչութիւնն է՝ իր կուլտուրական կենտրոնի շնորհիւ, արտասովոր աճում ունեցել, այնպէս էլ Բաթումի և Սուխումի շրջանները, իրանց ծովափնեայ և վաճառաշահ քաղաքների շնորհիւ, ունեցել են բնակչութեան արագընթաց աճում։

Տեսնենք այժմ, թէ ինչ պատկեր են ներկայացնում Քութայիսի գաւառները տարածութեան մեծութեամբ և բնակչութեան խտութեամբ։

---

1) Թուական բացարձակ տուեալները տես մեր մատնանշած աղբիւրների մէջ Քութայիսի գաւառներին վերաբերող մասերը։

2) Յիշեցնում ենք այն բացատրութիւնները, որ տուել ենք Բաթումի և Սուխումի շրջանների վերաբերեալ տուեալները Քութայիսի նահանգի տուեալների հետ միացնելու մասին։

| Գաւառներ (քաղաքներով միասին) | Ընդհանուր տարածութ. (քառ. վ.) | Մի քառակուսի վերստի վրայ բնակւում էին 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. |
|---|---|---|---|---|
| 1. Քութայիսի գաւառ | 2985,9 | 64,7 | 74,2 | 93,5 |
| 2. Արդուինի շրջան | 3433,5 | 15,2 | 16,3 | 24,4 |
| 3. Բաթումի շրջան | 2675,7 | 22,9 | 33,0 | 37,2 |
| 4. Զուգդիդի գաւառ | 2614,9 | 40,3 | 43,9 | 56,2 |
| 5. Լեչխումի գաւառ | 4078,3 | 11,3 | 11,7 | 14,2 |
| 6. Օզուրգեթի գաւ. | 1985,0 | 38,2 | 45,5 | 58,9 |
| 7. Ռաչինսկի գաւ. | 2494,9 | 25,7 | 24,2 | 35,8 |
| 8. Սենակի գաւառ | 1520,0 | 68,1 | 74,1 | 82,7 |
| 9. Սուխումի շրջան | 7575,4 | 8,9 | 14,0 | 32,8 |
| 10. Շորապանի գաւ. | 2687,4 | 54,8 | 58,2 | 78,7 |

Ամենամեծ տարածութիւնը ունի Սուխումի շրջանը, որ գրեթէ երեք անգամ աւելի մեծ է, քան Քութայիսի գաւառը։ Հէնց այդ պատճառով էլ Սուխումի շրջանը եղել է առաջին տարիներին ամենից նօսրաբնակը, բայց շնորհիւ իր բնակչութեան շատ արագ աճման, յաջորդ տարիներին խտութեամբ նա գերազանցել է մի քանի գաւառներից։ Ամենախիտ բնակչութիւն ունի Քութայիսի գաւառը, որի ծաւալի մեծութիւնը, սակայն, չորրորդ տեղն է բռնում բոլոր գաւառների և շրջանների մէջ։ Ամենափոքրածաւալ գաւառը կազմում է Սենակը, որը հէնց այդ պատճառով իր խտութեամբ երկրորդ տեղն է բռնում Քութայիսի գաւառից յետոյ։

Իսկ ինչպէս են դասաւորուած երկու սեռերի թուական յարաբերութիւնները Քութայիսի նահանգի զանազան մասերում։ Այդ ցոյց են տալիս հետեւեալ թուերը։ 100 տղամարդուն գալիս էին կանայք՝

| Գաւառներ (քաղաքներով միասին) | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | Միջին թուով |
|---|---|---|---|---|
| 1. Քութայիսի գաւառ | 90,6 | 94,7 | 85,5 | 90,2 |
| 2. Արդուինի շրջան | 95,2 | 93,1 | 83,0 | 90,4 |
| 3. Բաթումի շրջան | 73,6 | 68,3 | 80,0 | 73,9 |
| 4. Զուգդիդի գաւառ | 90,5 | 97,7 | 93,8 | 94,0 |
| 5. Լեչխումի գաւառ | 90,9 | 103,1 | 91,6 | 95,2 |
| 6. Օզուրգեթի գաւ. | 90,0 | 99,0 | 92,4 | 93,8 |
| 7. Ռաչինսկի գաւ. | 88,5 | 134,5 | 93,0 | 105,4 |
| 8. Սենակի գաւառ | 87,1 | 97,6 | 90,3 | 91,6 |
| 9. Սուխումի շրջան | 86,7 | 77,4 | 79,8 | 81,3 |
| 10. Շորապանի գաւ. | 88,5 | 90,4 | 76,6 | 85,1 |

Ինչպէս Թիֆլիսի նահանգի գաւառներում, այնպէս էլ այստեղ գտնում ենք սեռերի թուական յարաբերութիւնների միանգամայն տարբեր դասաւորումներ՝ զանազան գաւառներում և զանազան տարիներին։ Կին սեռի ամենանուազ մասնակցութիւնը բնականաբար գտնում ենք նահանգի այն մասերում, ուր բնակչութիւնը բացի իր բնական աճումից ընդունում է դրսից եկուոր տարրեր՝ առաւելապէս տղամարդ սեռից. այդպէս են Բաթումի և Սուխումի շրջանները, ուր մօտաւորապէս նոյն թուական յարաբերութիւններն ենք գտնում երկու սեռերի, ինչ Թիֆլիսի գաւառումըն է։ Միանգամայն անսովոր են այդ յարաբերութիւնները Ռաչինսկի

գաւառում, ուր 1897 թ. 100 տղամարդուն գալիս էր 134 կին։

Սա առաջին դէպքն է իր տեսակում մեզ յայտնի նահանգների և գաւառների շարքում, ուր կին սեռը թւապէս այդ աստիճան գերազանցելիս լինէր արական սեռից։ 1897 թ. Ռաչինսկի գաւառում եղել են 25764 հոգի արական և 34657 հոգի իգական սեռից։ Արդեօք փաստը ճիշտ է հաղորդուած, թէ սխալ են տուեալները, դժուար է ասել։ Նոյն թւերը կրկնւում են մի քանի անգամ և ծագում են մի այնպիսի աղբիւրից (1897 թ. ժողովրդագրութիւնից), որ համեմատաբար ամենից վստահելին է համարւում։

## Գ. Երեւանի նահանգ

Երեւանի նահանգի գաւառները ունեցել են թւական հետեւեալ բացարձակ տուեալները ու տոկոսական աճումը մեզ յայտնի տարեշրջաններում.

| Գաւառներ (քաղաքներով միասին) | 1886 թ. (երկսեռ) | 1897 թ. (երկսեռ) | 1914 թ. (երկսեռ) | Տոկոսական աճումը (կամ նուազումը) 1886—1897 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Երև. գ. | 113614 | 150879 | 176592 | 32,80% | 17,04% | 55,43% |
| 2. Ալէքս.գ. | 135731 | 165503 | 223344 | 21,20 » | 34,34 » | 64,54 » |
| 3. Նախջ. գ. | 84020 | 100771 | 136174 | 19,93 » | 35,13 » | 62,07 » |
| 4. Նոր-Բ.գ. | 103611 | 122573 | 174823 | 18,01 » | 42,62 » | 68,73 » |
| 5. Սուրմ. գ. | 71066 | 89055 | 99017 | 25,31 » | 11,20 » | 40,00 » |
| 6. Շար.-Դ. | 61772 | 76538 | 85080 | 23,90 » | 11,16 » | 37,73 » |
| 7. Էջմ.գաւ. | 100591 | 124237 | 149067[1]) | 23,50 » | 20,00 » | 48,19 » |
| Ամբողջ նահ. | 670405 | 829556 | 1044097 | 23,74 » | 25,86 » | 55,74 » |

Բնակչութեան թւով ամենամեծ գաւառը եղել է բոլոր տարեշրջաններում Ալէքսանդրապոլ գաւառը։ Երկրորդ տեղը բռնում է Երեւանի գաւառը, երրորդը՝ Նոր-Բայազէտի գաւառը, չորրորդը (1897 թ. երրորդը)՝ Էջմիածնի գաւառը։ Ամենափոքր գաւառը կազմում է Շարուր-Դարալագեազը։

Ինչ վերաբերում է գաւառների բնակչութեան աճման ընթացքին, ապա պէտք է նկատել, որ Երեւանի նահանգը այդ տեսակէտից մի քանի կէտերով տարբերւում է Թիֆլիսի և Քութայիսի նահանգներից։ Ամենից առաջ աչքի է ընկնում այն զարմանալի համաչափութիւնը, որ ունեն Երեւանի նահանգի բոլոր գաւառները՝ իրենց բնակչութեան աճման տեմպով։ Բարձր ու ստորին բևեռներ, իրարից խուսափող ծայրայեղութիւններ, ինչպէս վերոյիշեալ երկու նահանգներում տեսանք, չենք գտնում Երեւանի նահանգի գաւառների բնակչութեան աճման տոկոսների շարքում։ Թիֆլիսի նահանգի գաւառներում աճման տոկոսների մի ծայրը հասնում է 215,14%-ի, իսկ միւս ծայրը 13,71%-ի. Քութայիսի նահանգի գաւառնե-

[1]) Բացարձակ տուեալները տես յիշած աղբիւրները Երեւանի նահանգի մասին.

րում՝ մի ծայրը հասնում է 180,00%-ի, իսկ միւսը՝ 25,18%։ Մինչդեռ Երևանի նահանգի գաւառներում աճման այդպիսի ծայրայեղութիւններ չկան. այնտեղ աճման ամենաբարձր տոկոսը հասնում է 68,73%-ի (Նոր-Բայազէտի գաւառում), իսկ ամենանուազ աճումը հասնում է 37,73%-ի (Շարուր-Դարալագեազի գաւառում). Մնացած գաւառների բնակչութեան աճման տոկոսները բռնում են այդ երկու ծայրերի միջին տարածութիւնը։ Այդ համաչափ աճման պատճառը պիտի որոնել այն հանգամանքի մէջ, որ Երևանեան նահանգը զուրկ է թէ կուլտուրական և թէ առևտրաարդիւնաբերական որևէ կենտրոնից, որի բնակչութիւնը, շարունակաբար ընդունելով եկւոր տարրեր շրջակայ գաւառներից, արտակարգ աճման ընթացք ունենար։ Երևանի նահանգի առանձնայատկութիւններից մէկն էլ այն է՝ աճման տեմպի տեսակէտից, որ այնտեղ ոչ մի գաւառի բնակչութիւն յիշեալ տարեթուերին ցոյց չի տալիս նուազման որևէ դէպք։

Գաւառների տարածական մեծութեան և ազգաբնակչական խտութեան տեսակէտից Երևանի նահանգն ունի հետևեալ պատկերը.

| Գաւառներ (քաղաքներով միասին) | Ընդհանուր տարածութիւնը (քառ. վերստ) | Մի քառակուսի վերստի վրայ բնակւում էին 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. |
|---|---|---|---|---|
| 1. Երևանի գաւառ | 2664,2 | 42,6 | 56,6 | 64,8 |
| 2. Ալէքսանդրոպ գաւ. | 3303,7 | 41,8 | 50,1 | 65,9 |
| 3. Նախիջևանի գաւ. | 3858,8 | 21,8 | 26,1 | 34,6 |
| 4. Նոր-Բայազետի գ. | 4156,8 | 24,9 | 29,4 | 42,0 |
| 5. Սուրմալուի գաւ. | 3241,0 | 21,9 | 27,4 | 31,5 |
| 6. Շարուր-Դարալ. գ. | 2611,8 | 23,6 | 29,3 | 32,6 |
| 7. Էջմիածնի գաւ. | 3390,1 | 30,0 | 36,6 | 46,1 |

Ինչպէս գիտենք, բոլոր մեծ նահանգների մէջ ամենահամեստ տեղը իր տարածութեամբ, բռնում է Երևանի նահանգը, ուստի նա համեմատաբար ամենից խիտ բնակութիւն ունի։ Նահանգի այդօրինակ դրութիւնը նոյնութեամբ անդրադառնում է գաւառների վրայ։ Այնպիսի բազմամարդ գաւառներ, ինչպէս Երևանի և Ալէքսանդրոպոլի գաւառներն են, ունեն համեմատաբար փոքր տարածութիւն (առաջինը՝ 2664,2, երկրորդը՝ 3303,7 քառ. վերստ)։ Միայն Նոր-Բայազէտի գաւառն է, որ ունի բաւարար տարածութիւն (4156,8 քառ. վերստ)։ Շնորհիւ գաւառների բնակչութեան աճման համաչափ ընթացքին, ինչպէս տեսանք, բնակիչների խտութեան աստիճանը ևս համաչափ է։ Ամենախիտ բնակութիւն ունի Ալէքսանդրոպոլի գաւառը (65,9 հոգի իւրաք. քառ. վերստի վրայ), իսկ ամենանօսր բընակութիւնը՝ Սուրմալուի գաւառը (31,5 հոգի)։

Անցնելով երկու սեռերի թուական յարաբերութիւններին, գտնում ենք Երևանեան նահանգի գաւառներում հետևեալ պատկերը։ 100 տղամարդուն գալիս են կանայք՝

| Գաւառներ (քաղաքներով միասին) | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | Միջին թւով |
|---|---|---|---|---|
| 1. Երևանի գաւառ | 82,0 | 82,0 | 88,6 | 83,2 |
| 2. Ալէքսանդրոպոլի գաւ. | 90,7 | 85,0 | 88,1 | 87,9 |
| 3. Նախիջևանի գաւ. | 77,4 | 90,2 | 84,6 | 84,1 |
| 4. Նոր-Բայազէտի գաւ. | 90,0 | 94,1 | 90,7 | 91,6 |
| 5. Սուրմալուի գաւ. | 85,3 | 88,4 | 90,7 | 81,1 |
| 6. Շարուր-Դարալգ. գաւ. | 82,5 | 86,4 | 83,3 | 84,1 |
| 7. Էջմիածնի գաւառ | 87,0 | 90,9 | 88,7 | 88,8 |

*Այստեղ մի այլ կապակցութեամբ մենք հանում ենք դարձեալ մի եզրակացութեան, որ գալիս է աւելի խտացնելու և հաստատելու մեր դիտողութիւնների հիմնական կէտը։ Սեռերի թւական յարաբերութիւնների մէջ ևս գտնում ենք նոյն համաչափութեան սահմանը, ինչ տեսանք մենք բնակչութեան աճման տեմպի և խտութեան նկատմամբ։ Այնպիսի սուր տարբերութիւն, ինչպիսին ունէր իգական սեռը իր նուազ մասնակցութեամբ Թիֆլիսի նահանգում (Թիֆլիսի գաւառը) և Քութայիսի նահանգում (Բաթումի և Սուխումի շրջաններում) չենք գտնում Երևանի նահանգի գաւառներում։*

### դ. Գանձակի նահանգ

*Հետևեալ աղիւսակը տալիս է մեզ Գանձակի նահանգի գաւառների բնակչութեան դասաւորման ու աճման պատկերը մեզ յայտնի տարեշրջաններում.*

| Գաւառներ (քաղաքներով միասին) | 1886 թ. (երկսեռ) | 1897 թ. (երկսեռ) | 1914 թ. (երկսեռ) | Տոկոսական աճումը (կամ նուազումը) 1886—1897 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Գանձ. գ. | 122903 | 162788 | 248015 | 32,45% | 52,35% | 101,80% |
| 2. Արէշի գ. | 51845 | 67277 | 85864 | 10,48 » | 27,62 » | 65,60 » |
| 3. Ջիբր. գ.[1] | 46911 | 66360 | 91845 | 41,50 » | 38,40 » | 96,00 » |
| 4. Ջևանշ. գ. | 54954 | 72719 | 75730[2] | 32,32 » | 4,14 » | 36,00 » |
| 5. Զանգ. գ. | 123997 | 137871 | 209951 | 11,19 » | 52,30 » | 69,32 » |
| 6. Ղազ. գ. | 85050 | 112074 | 134546 | 30,59 » | 20,05 » | 58,20 » |
| 7. Նուխ. գ. | 117014 | 120555 | 167358 | 3,02 » | 38,80 » | 43,02 » |
| 8. Շուշ. գ. | 126269 | 138771 | 178081[3] | 9,90 » | 28,32 » | 41,03 » |
| Ընդամենը | 728943 | 878415 | 1191390 | 20,50 » | 32,72 » | 59,93 » |

*Մօտ 30 տարի առաջ Գանձակի նահանգում ամենամեծ գաւառը՝ իր բնակչութեան թւով, եղել է Շուշուայ գաւառը կամ Ղարաբաղը։ Հետզ-*

---

[1] *Ջիբրայիլի գաւառը այժմ պաշտօնական անունով կոչւում է* «Карягинскій уѣздъ.

[2] *Ջևանշիրի գաւառի տւեալները՝ վերջին տարեշրջանում՝ վերաբերում է 1916 թ.* («Кавк. кал.» *1917* г.)։

[3] *Թւական [illegible] տւեալները մեր յիշած աղբիւրների մէջ Գանձակի նահանգին վերաբերող մասերում։*

հետէ նա տեղի է տալիս իր դիրքը ուրիշներին։ Եւ արդէն երկրորդ տարեշրջանում (1897 թ.), ինչպէս երեւում է վերոյիշեալ աղիւսակից, Գանձակի գաւառը գալիս անցնում է Ղարաբաղից։ Երրորդ տարեշրջանում Շուշուայ գաւառից գերազանցում է նաև Զանգեզուրի գաւառը։ Այսպիսով Ղարաբաղը իր բնակչութեամբ բռնում է ներկայումս երրորդ տեղը՝ Գանձակի և Զանգեզուրի գաւառներից յետոյ։ Շուշուայ գաւառի բնակչութեան այդ դանդաղ աճումը պիտի վերագրել այն անօրինակ և շարունակական արտագաղթին, որ կատարւում է այնտեղից դէպի Կովկասի կենտրոնները և նոյնիսկ դէպի աւելի հեռուն։ Մենք յետոյ կը տեսնենք, թէ որ ժողովրդի ծոցից են պոկւում այդ արտագաղթող տարրերը։ Չորրորդ տեղը՝ իր բընակչութեան թւով, բռնում է Նուխու գաւառը։ Աննշան տեղ են գրաւում Արէշի, Ջեբրայելի և Ջիվանշիրի գաւառները, որոնց բնակչութիւնը թւով միայն փոքր տարբերութեամբ են խուսափում իրարից։

Ինչ վերաբերում է աճման տոկոսներին, պիտի ասել, որ Գանձակի նահանգի բնակչութեան աճման ընթացքը եւ, ընդհանուր առմամբ, պահպանել է համաչափութիւն և ազատ է աճման տոկոսների հակադիր ծայրերից։ Այդ տեսակէտից Գանձակի նահանգը՝ իր բնակչութեան աճման տենդենցներով, նման է Երեւանի նահանգին և ոչ Թիֆլիսի կամ Քութայիսի նահանգներին։ Նա եւ նոյնքան զուրկ է մասսաների համար ձգողական կուլտուրավայրից կամ արդիւնաբերավայրից, որքան Երեւանի նահանգն էր։

Իսկ ինչ պատկեր է ներկայացնում Գանձակի նահանգը իր տարածութեամբ և ազգաբնակչական խտութեամբ, այդ տեսնում ենք հետեւեալ թուերից։

| Գաւառներ (քաղաքներով միասին) | Ընդհանուր տարածութիւնը (քառ. վերստ) | Մի քառակուսի վերստի վրայ բնակւում էին | | |
|---|---|---|---|---|
| | | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. |
| 1. Գանձակի գաւառ | 7695,7 | 16,0 | 21,1 | 32,2 |
| 2. Արէշի գաւառ | 2829,6 | 18,3 | 23,7 | 30,3 |
| 3. Ջեբրայելի գաւ. | 2922,6 | 16,0 | 22,7 | 31,4 |
| 4. Ջիվանշիրի գաւ. | 4818,4 | 11,4 | 15,0 | 15,7 |
| 5. Զանգեզուրի գաւ. | 6829,7 | 18,1 | 20,1 | 30,7 |
| 6. Ղազախի գաւառ | 6024,2 | 14,1 | 18,6 | 22,3 |
| 7. Նուխուայ գաւառ | 3346,7 | 34,9 | 36,0 | 50,3 |
| 8. Շուշուայ գաւառ | 4315,6 | 29,2 | 32,1 | 41,2 |

Իր տարածութեամբ Գանձակի նահանգը, ինչպէս գիտենք, կազմում է ամենամեծ նահանգներից մէկը Անդրկովկասում։ Նա երկրորդ տեղն է բռնում Թիֆլիսի նահանգից յետոյ։ Սակայն Գանձակի նահանգը եւ զերծ չէ այն մեծ վարչական-տերիտորիական թերութիւնից, որ յատուկ է գրեթէ բոլոր նահանգներին։ Դա գաւառների տարածական անհամաչափ բաժանումներն են։ Երեւակայեցէք, Ջիվանշիրի գաւառը՝ իր 75730 բնակիչներով (ըստ վերջին տուեալների) ունի 4818,4 քառ. վերստ տարածութիւն, իսկ Շուշուայ գաւառը՝ իր 178081 բնակիչներով ունի աւելի պակաս տարածութիւն, ընդամենը 4315,6 քառ. վերստ. կամ Նուխուայ գաւառը՝ իր 167358 բնակիչներով, ունի միայն 3346,7 քառ. վերստ։ Հէնց այդ պատճառով էլ Նուխուայ և Շուշուայ գաւառները ներկայացնում են ամբողջ նահանգում ամենախիտ բնակչութիւնը։

Անշուշտ, գաւառների տարածական անհամաչափ բաժանումները ունենում են իրանց անխուսափելի անդրադարձումը գաւառական ազգաբնակութեան, յատկապէս գիւղացիութեան անհամապատասխան հողաբաժանութեան վրայ։ Մի գաւառի բնակիչների հողազրկութեան կամ սակաւահողութեան գնով վայելում են միւս գաւառի բնակիչները ընդարձակ հողատիրութեան առատ բարիքները։ Տերիտորիալ այն անհամաչափութիւնը, որ նկատւում է մի նահանգի գաւառական բաժանումների մէջ, աւելի լայն մասշտաբով գոյութիւն ունի, ինչպէս մենք շեշտել ենք իր տեղում, Անդրկովկասի նահանգական բաժանումների մէջ։ Օրինակ Գանձակի գաւառը իր 248015 բնակիչներով (1914 թ. տուեալներով) երեք անգամ աւելի մեծ տարածութիւն ունի—ոչ պակաս քան 7695,7 քառ. վերստ,—քան Երեւանի գաւառը իր 176592 բնակիչներով, որ ունի ընդամենը 2664,2 քառ. վերստ. այնուհետեւ Գանձակի գաւառը ունի երկու անգամ աւելի մեծ տարածութիւն, քան Թիֆլիսի գաւառը իր ահագին բնակչութեամբ —456386 հոգի—, ունենալով սակայն միայն 3688,4 քառ. վերստ տարածութիւն, այսինքն աւելի փոքր, քան նոյնիսկ մի Ջիվանշիրի գաւառ[1])

Երկու սեռերի թուական յարաբերութիւնները Գանձակի նահանգի գաւառներում դասաւորուած են այսպէս. 100 տղամարդուն գալիս էին կանայք՝

| Գաւառներ (քաղաքներով միասին) | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | Միջին թուով |
|---|---|---|---|---|
| 1. Գանձակի գաւ. | 79,0 | 79,7 | 96,7 | 85,1 |
| 2. Արէշի գաւ. | 83,3 | 83,7 | 81,3 | 82,8 |
| 3. Ջեբրայիլի գաւ. | 76,6 | 82,4 | 85,0 | 81,1 |
| 4. Ջիվանշիրի գաւ. | 72,0 | 77,2 | 82,5 | 77,2 |
| 5. Զանգեզուրի գ. | 80,8 | 89,9 | 93,0 | 87,9 |
| 6. Ղազախի գաւառ | 74,1 | 76,8 | 74,6 | 75,2 |
| 7. Նուխուայ գաւառ | 80,6 | 84,7 | 76,6 | 80,6 |
| 8. Շուշուայ գաւ. | 73,4 | 87,0 | 83,0 | 81,1 |

Ինչպէս գիտենք, Գանձակի նահանգում աւելի, քան մինչ այժմ քըննութեան առնուած որեւէ ուրիշ նահանգում, իգական սեռը նուազ տեղ է բռնում ընդհանուր ազգաբնակութեան մէջ։ Ահա այդ դրութիւնը անդրադառնում է մասնաւորապէս գաւառների վրայ, ուր իգական սեռի ամենաուժեղ մասնակցութիւնը միջին թուով հաւասար է 85,1-ի, մինչդեռ միւս նահանգների որոշ գաւառներում իգական սեռի տոկոսը անցնում է իննսուն տոկոսից։

### ե. Բագուի նահանգ

Դառնանք այժմ Բագուի նահանգին եւ որոնենք այնտեղ նոյն յարաբերութիւնները։

---

1) Անդրկովկասի նահանգների վարչական բաժանումները նոր տերիտորիական փոփոխութիւնների ենթարկելու պահանջը առանձնապէս առաջադրւում էր վերջերս հասարակական որոշ հոսանքների եւ կազմակերպութիւնների կողմից։ Յեղափոխութեան հետեւանքով այդ հարցը հրատապ բնոյթ է ունեցել։ Նոր բաժանումների դէպքում պէտք է, մեր կարծիքով, առաջնորդուել ոչ միայն ցեղագրական սկզբունքով, այլեւ նահանգների ու գաւառների տերիտորիական-ազգաբնակչական համաչափութեան տեսակէտով։

| Գաւառներ (քաղաքներով միասին) | 1886 թ. (երկսեռ) | 1897 թ. (երկսեռ) | 1914 թ. (երկսեռ) | Տոկոսական աճումը (կամ նուազումը) 1886—1897 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Բաք. գ. | 141412 | 182897 | 407745[1]) | 29,34% | 123,00% | 188,34% |
| 2. Գէօկչ. գ. | 76644 | 117705 | 132224 | 53,52 » | 12,33 » | 73,82 » |
| 3. Ջաւ. գ. | 94687 | 90043 | 132008 | —5,15 » | 46,60 » | 39,41 » |
| 4. Ղուբ. գ. | 174101 | 183242 | 184164 | 5,25 » | 0,50 » | 5,80 » |
| 5. Լենք. գ. | 109340 | 130987 | 167144 | 19,80 » | 26,40 » | 52,85 » |
| 6. Շամ. գ. | 116519 | 121842 | 158622[2]) | 4,37 » | 30,10 » | 36,13 » |
| Ամբողջ նահ. | 712703 | 826716 | 1181907 | 16,00 » | 43,00 » | 65,86 » |

*Ինչպէս Թիֆլիսի գաւառը Թիֆլիսի նահանգում, այնպէս էլ Բաքուի գաւառը Բաքուի նահանգում նախկին տարիթուերին իրանց առաջնութիւնը՝ բնակչութեան թուի տեսակէտից, զիջել են ուրիշ գաւառների։ Յետոյ միայն, երբ առեւտրա-արդիւնաբերական և ընդհանուր կուլտուրական կեանքը արագ թափով սկսել է զարգանալ կենտրոնական քաղաքներում, յիշեալ գաւառները իրանց բնակչութեան թուով մի քանի անգամ սկսել են գերազանցել միւս գաւառներից։ Մինչև 90-ական թուականների կէսերը Բաքուի նահանգի ամենաբազմամարդ գաւառը եղել է Ղուբայի գաւառը. Բաքուի գաւառը բռնել է միայն երկրորդ տեղը։ Իսկ ներկայումս Բաքուի գաւառը իր բնակչութեամբ աւելի քան երկու անգամ գերազանցում է Ղուբայի գաւառի բնակչութիւնից։ Եւ ճիշտ այնպէս, ինչպէս Թիֆլիսի գաւառի բնակչութիւնը իր արտակարգ արագ աճումով (այդ խօսքերի տակ միշտ հասկացէք արտակարգ աճում կենտրոնի բնակչութեան) մի եզակի տեղ է բռնում, խոշոր տարբերութիւններով հեռանալով միւս գաւառների բնակչութեան աճման ընթացքից, ճիշտ նոյնպիսի տեղ էլ բռնում է Բաքուի գաւառը Բաքուի նահանգում։*

*Ընդհանուր առմամբ Բաքուի նահանգի գաւառների բնակչութեան աճումը նոյն պատկերն ունի, ինչ Թիֆլիսի նահանգի գաւառներինը. նոյն նուազման դէպքը (Ջաւադի գաւառում 1886—1897 թ.), նոյն ընդհանուր անհամաչափութիւնը, աճման նոյն հակադիր ծայրերը (մի տեղ 5,80%, միւս տեղ 188,34%), ինչ տեսանք մենք Թիֆլիսի նահանգի գաւառների նկատմամբ։ Հէնց այդ պատճառով Բաքուի նահանգի ազգաբնակութեան աճման տենդենցները կարող ենք մենք դասել այն ուղղութեան շարքը, ինչ վերագրեցինք Թիֆլիսի և մասամբ Քութայիսի (վերջինիս՝ շնորհիւ Բաթումի և Սուխումի շրջանների) նահանգներին, բայց ոչ Երևանի կամ Գանձակի նահանգների ուղղութեան շարքը։ Վերցնելով Քութայիսի նահանգը՝ առանց Բաթումի և Սուխումի շրջանների, կըստանանք այնտեղ նոյն աճման ընթացքն ու ուղղութիւնը, ինչ որ Երևանի և Գանձակի նահանգներում գտանք։*

*Այժմ տեսնենք, թէ ինչ պատկեր են ներկայացնում Բաքուի նահան-*

---

*[1]) Բաքուի գաւառի մէջ, անտարակոյս, մտնում են նաև Բաքուի քաղաքապետութեան բոլոր մասերը։*

*[2]) Թուական բացարձակ տուեալները տես յիշած աղբիւրների մէջ Բաքուի նահանգին վերաբերող մասերում։*

գի գաւառները իրանց տէրրիտորիայի տարածութեամբ և ազգաբնակութեան խտութեամբ։

| Գաւառներ (քաղաքներով միասին) | Ընդհանուր տարածութիւնը (քառ. վերստ) | Մի քառակուսի վերստի վրայ բնակւում էին | | |
|---|---|---|---|---|
| | | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. |
| 1. Բագուի գաւառ | 3647,2 | 39,3 | 50,1 | 111,8 |
| 2. Գեօկչայի գաւ. | 3755,7 | 20,4 | 31,3 | 35,5 |
| 3. Ջաւադի գաւ. | 10116,9 | 9,3 | 8,9 | 13,0 |
| 4. Ղուբայի գաւ. | 6284,4 | 27,7 | 29,1 | 29,3 |
| 5. Լենքորանի գաւ. | 4760,0 | 23,4 | 27,5 | 35,0 |
| 6. Շամախու գաւառ | 5846,0 | 20,0 | 20,8 | 27,1 |

Գաւառների տէրրիտորիայի անհամաչափ բաժանման սովորական երևոյթը Բագուի նահանգում հրապարակ է գալիս աւելի խոշոր չափերով։ Ամենից առաջ աչքի է զարնում այն տարօրինակ փաստը, որ բոլոր գաւառների մէջ բնակչութեամբ ամենից փոքր և միայն տատանումներով անման ընթացք ունեցող գաւառը, ինչպէս Ջաւադի գաւառն է, ունի ամենամեծ տարածութիւնը՝ 10116,9 քառ. վերստ. շատ աւելի մեծ, քան առհասարակ որևէ գաւառ մեզ յայտնի նահանգներից որևէ մէկի մէջ։ Ջաւադի գաւառը, ունենալով երեք անգամ աւելի նուազթիւ բնակչութիւն, քան Բագուի գաւառը, ունի երեք անգամ աւելի մեծ տարածութիւն, քան Բագուի գաւառը. ըստ այնմ էլ խոշոր չափերով տարբերւում է նրանց խտութիւնը։ Թող այդ սուր հակասութիւնը մեղմանայ որոշ չափով այն հանգամանքով, որ Բագուի գաւառի ազգաբնակութեան մեծագոյն մասը խմբուած է քաղաքում և նաւթային շրջաններում, որը կարիք չունի հողաբաժինների։ Բայց չէ՞ որ Ղուբայի, Լենքորանի և Շամախու գաւառները զուտ գաւառներ են առանց քաղաքային մեծ կենտրոնների, և այնուամենայնիւ նրանցից ամեն մէկը, ունենալով անհամեմատ աւելի մեծաթիւ բնակչութիւն, տարածութեամբ մէկուկէս, երկու անգամ աւելի են փոքր քան Ջաւադի գաւառը։

Սեռերի թուական յարաբերութիւնները Բագուի նահանգի գաւառներում դասաւորուած են հետևեալ կերպով. 100 տղամարդուն գալիս են կանայք.

| Գաւառներ (քաղաքներով միասին) | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | Միջին թուով |
|---|---|---|---|---|
| 1. Բագուի գաւառ | 66,8 | 68,6 | 71,4 | 68,9 |
| 2. Գեօկչայի գաւառ | 84,7 | 83,5 | 81,4 | 83,2 |
| 3. Ջաւադի գաւառ | 81,7 | 74,8 | 86,9 | 81,1 |
| 4. Ղուբայի գաւառ | 84,2 | 89,3 | 90,8 | 88,1 |
| 5. Լենքորանի գաւ. | 72.7 | 80,7 | 84,1 | 79,2 |
| 6. Շամախու գաւ. | 79,0 | 88,2 | 86,4 | 84,5 |

Մինչև այժմ մեզ ծանօթ բոլոր նահանգների մէջ միայն Բագուի նահանգի գաւառներն են, ուր իգական սեռը անհամեմատ թոյլ թուական մասնակցութիւն ունի։ Միջին թուով վերցրած ոչ մի տեղ չի հասնում այդ մասնակցութիւնը 90-ի։ Բնականաբար ամենաթոյլ մասնակցութիւն ունի կին սեռը Բագուի գաւառում, շնորհիւ բացառապէս Բագու քաղաքի,

*ուր անգամ թւով գաւառական եկւոր տարրեր են կենտրոնանում գըլխաւորապէս արական սեռից։*

## Ա. Սեւ-ծովեան նահանգ

*Դառնանք վերջապէս ամենափոքր նահանգին և տեսնենք, թէ ինչպէս են դասաւորուած այնտեղ նոյն յարաբերութիւնները։*

| Շրջաններ (քաղաքներով միասին) | 1886 թ. (երկսեռ) | 1897 թ. (երկսեռ) | 1914 թ. (երկսեռ) | Տոկոսական աճումը (կամ նուազումը) 1886—1897 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Նովոռոսիյսկ շ. | 9794 | 34908 | 92413 | 256,40 % | 164,73 % | 843,57 % |
| 2. Տուապսէի շրջան | 5010 | 9051 | 38496 | 80,66 » | 325,32 » | 670,00 » |
| 3. Սոչիի շրջ. | 3321 | 13519 | 63554[1] | 307,07 » | 370,10 » | 1813,70 » |
| Ամբողջնահ. | 18125 | 57478 | 193463 | 217,12 » | 220,93 » | 973,00 » |

*Սև-ծովեան նահանգը իր երեք շրջաններով մի առանձնայատուկ տեղ է բռնում, որին՝ իր բնակչութեան թւով և աճման ընթացքով՝ չի կարելի դասել մինչ այժմ մեզ յայտնի նահանգների շարքը։ Երեսուն տարի առաջ այդ շրջաններից ամեն մէկը հազիւ մի-մի գիւղաքաղաքի բընակչութիւն է ունեցել, իսկ բոլորը միասին՝ 18125 բնակիչ, մի Ախալցխայից կամ Գորուց (իբրև քաղաքներից) անգամ յետ էին մնում։ Բայց երեսուն տարուայ ընթացքում այնպիսի տենդային արագութեամբ է աճել այդ շրջանների բնակչութիւնը, որի նման դէթ մօտաւոր օրինակ անկարելի է գտնել որև է տեղ։ Լինելով դիրքով ծովափնեայ վայրեր, արագ զարգացնելով իրանց մէջ առևտրի և արդիւնաբերութեան ճիւղերը, նրանք գրաւել են զանազան կողմերից անհագին քանակով օտար տարրեր և աճեցրել իրենց ազգաբնակութիւնը հարիւրաւոր ու հազարաւոր տոկոսներով։*

*Իր տարածութեամբ Սև-ծովեան նահանգը բռնում է շատ համեստ տեղ, ինչպէս ցոյց են տալիս նրա շրջանների հետևեալ տերրիտորիական բաժինները.*

| Շրջաններ (քաղաքներով միասին) | Ընդհանուր տարած. (քառ. վերստ) | Մի քառակուսի վերստի վրայ բնակւում էին 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. |
|---|---|---|---|---|
| 1. Նովոռոսիյսկ շրջ. | 999,1 | 9,8 | 35,0 | 92,5 |
| 2. Տուապսէի շրջան | 1561,8 | 3,2 | 5,8 | 24,6 |
| 3. Սոչիի շրջան | 3308,8 | 1,0 | 4,0 | 19,2 |

*Ի հարկէ անհամաչափ բաժանումների սովորական պակասութիւնը գտնում ենք նաև այստեղ։ Նովոռոսիյսկի ամենաբազմամարդ շրջանը ունի միաժամանակ ամենափոքր տերրիտորիան, հետևապէս և ամենախիտ*

---

[1]) *Թւական բացարձակ տուեալները տես յիշած աղբիւրների մէջ՝ Սև-ծովեան նահանգի մասին։*

*բնակութիւնը։ Սոչիի շրջանը աւելի քան երեք անգամ գերազանցում է Նովոռոսիյսկիից և ունի, մանաւանդ առաջ ունեցել է, այնպիսի նոսր բընակութիւն, որի նման օրինակներ միայն Սիբիրում կարող են լինել։*

*Նոյնքան առանձնայատուկ տեղ են գրաւում Սև-ծովեան նահանգի շրջանները երկու սեռերի թուական յարաբերութիւնների դասաւորութեամբ, ինչպէս ցոյց են տալիս հետևեալ թուերը։ 100 տղամարդուն գալիս են կանայք՝*

| *Շրջաններ (քաղաքներով միասին* | 1886 *թ.* | 1897 *թ.* | 1914 *թ.* | *Միջին թւով* |
|---|---|---|---|---|
| 1. *Նովոռոսիյսկի շրջան* | 80,8 | 63,3 | 69,7 | 71,2 |
| 2. *Տուապսէի շրջան* | 89,2 | 72,4 | 68,5 | 76,7 |
| 3. *Սոչիի շրջան* | 78,6 | 66,0 | 48,5 | 64,3 |

*Եթէ Բագուի նահանգի գաւառներում կին սեռի թուական մասնակցութիւնը միջին հաշուով չէր հասնում 90-ի, ապա Սև-ծովեան նահանգի շրջաններում այդ մասնակցութիւնը չի հասնում նոյնիսկ 80-ի։ Երեք տարեթուերի տուեալները ցոյց են տալիս, որ 1886 թուականից սկսած իգական սեռի մասնակցութիւնը հետզհետէ աւելի ու աւելի է նուազել և իջել մինչև 48,5-ի (Սոչիի շրջանում, 1914 թ.)։ Դա մի աւելորդ ապացոյց է այն փաստի համար, որ որքան արագ է աճում մի որոշ տերրիտորիայի բընակչութիւն ի հաշիւ մասսայական ներգաղթի (գլխաւորապէս արական սեռից բաղկացած), այնքան աւելի իջնում է կին սեռի տոկոսական բաժինը ազգաբնակութեան թուի մէջ։*

### գ. Դաղստանի շրջան [1])

*Շատ կողմերից Սև-ծովեան նահանգի հակապատկերն է կազմում Դաղստանի շրջանը, ինչպէս ցոյց է տալիս մեզ ամենից առաջ հետևեալ աղիւսակը.*

| *Շրջաններ (քաղաքներով միասին)* | 1886 *թ.* *(երկսեռ)* | 1897 *թ.* *(երկսեռ)* | 1914 *թ.* *(երկսեռ)* | *Տոկոսական աճումը (կամ նուազումը)* 1886—1897 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. *Թ.-Խ.-Շ. շ.* | 81804 | 97348 | 132664 | 19,00% | 36,28% | 62,30 % |
| 2. *Ավարի շր.* | 34151 | 37639 | 34895 | 10,21 » | —8,00 » | 2,18 » |
| 3. *Անդիի շրջ.* | 47198 | 49628 | 56832 | 5,11 » | 14,51 » | 20,52 » |
| 4. *Գունիբի շ.* | 58900 | 55899 | 75589 | —5,37 » | 35,22 » | 28,34 » |
| 5. *Դարգինի շ.* | 80279 | 80943 | 82163 | 0,83 » | 1,50 » | 2,34 » |
| 6. *Կազի-Կում. շ.* | 51453 | 45363 | 50831 | —13,63 » | 12,05 » | —1,22 » |
| 7. *Կայտագո-Տաբասար. շ.* | 91922 | 91021 | 113918 | — 0,99 » | 25,15 » | 24,00 » |
| 8. *Կիւրինի շ.* | 79796 | 77680 | 84751 | — 2,72 » | 9,10 » | 6,21 » |
| 9. *Սամուրի շ.* | 67277 | 35633 | 70594[2]) | —88,80 » | 98,11 » | 5,00 » |
| *Ամբողջ շրջ.* | 592780 | 571154 | 702237 | — 3,61 » | 22,95 » | 18,47 » |

[1]) *«Շրջան» խօսքը ներկայ դէպքում ռուսական* «область» *բառի իմաստն է արտայայտում։ Բայց ամէն մի* «область» *(օր. Դաղստանի, Կարսի) բաժանւում է մի շարք* «округъ»*-ների, ճիշտ այնպէս, ինչպէս նահանգը ստորաբաժանւում է գաւառների* («уѣздъ»)*։ Հայերէնի մէջ* «округъ» *հասկացողութիւնը ուրիշ ոչ մի աւելի համապատասխան արտայայտութիւն չունի, բայց եթէ, բաց ի, «շրջանամաս» խօսքը։ Յիշեցնում ենք ընթերցողին, որ գրուածքիս մէջ* «округъ» *բառը պիտի արտայայտենք միշտ «շրջանամաս» խօսքով.* Темиръ-Хан-Шуринскій округъ *կամ* Ардаганскій округъ—*Թեմիր-Խան-Շուրայի շրջանամաս կամ Արդահանի շրջանամաս։*

[2]) *Թուական բացարձակ տուեալները տես յիշուած աղբիւրների մէջ Դաղստանի շրջանի մասին։*

Տարօրինակ պատկեր է ներկայացնում Դաղստանի շրջանը իր ներքին մասերի բնակչութեան աճման տեսակէտից։ Ինչով բացատրել ազգաբնակութեան նուազման այդ բազմաթիւ դէպքերը բոլոր տարեթուերին. արտագաղթով, մահացման անսովոր չափերով, բնական աճման դադարով, թէ՞ գուցէ սխալ են թուական տուեալները։ Չկայ փաստական հնարաւորութիւն երեւոյթի պատճառական հիմքերը շօշափելիօրէն պարզաբանելու համար։ Յամենայն դէպս թուած պատճառներից մէկը կամ մի քանիսը ունեցել են իրանց վճռական նշանակութիւնը, երբ մի ամբողջ տերրիտորիայի ազգաբնակութիւն տասնամեակների ընթացքում կամ նուազել և կամ շատ դանդաղ աճեցում է ունեցել։ Միակ քիչ-շատ կանոնաւոր աճեցում ունեցել են Թեմիր-Խան-Շուրայի և Անդիի շրջանամասերը։ Դաղստանի ամենամեծ շրջանամասերը՝ իրանց բնակչութեամբ, համարւում են Թեմ.-Խան-Շուրայի և Կայտագօ-Տաբասարանի շրջանամասերը, ուր և գտնւում են Դաղստանի երեք քաղաքները։

Ինչպէս ազգաբնակութեան աճումով, այնպէս էլ տերրիտորիայի տարածութեամբ և խտութեան աստիճանով Դաղստանի շրջանը բռնում է Անդրկովկասում իր առանձին տեղը. դա ցոյց են տալիս հետեւեալ թուերը։

| Շրջանամասեր (քաղաքներով միասին) | Ընդհանուր տարած. (քառ. վերստ) | Մի քառակուսի վերստի վրայ բնակւում էին 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. |
|---|---|---|---|---|
| 1. Թեմ.-Խ.-Շ. շրջանամաս | 5550,7 | 14,3 | 17,5 | 23,9 |
| 2. Աւարի շրջանամաս | 1323,9 | 25,8 | 28,4 | 29,3 |
| 3. Անդիի շրջանամ. | 3152,6 | 14,9 | 15,7 | 18,0 |
| 4. Գունիբի շրջարամ. | 3873,1 | 15,2 | 14,4 | 19,5 |
| 5. Դարգինի շրջ. | 1451,7 | 55,1 | 55,7 | 56,6 |
| 6. Կազի-Կումուխի շ. | 1977,6 | 26,0 | 22,9 | 25,7 |
| 7. Կայտագօ-Տաբ. շ. | 2924,8 | 22,4 | 31,1 | 38,9 |
| 8. Կիւրինի շրջանամ. | 2603,9 | 30,7 | 29,8 | 32,6 |
| 9. Սամուրի շրջանամ. | 3274,1 | 20,5 | 10,8 | 21,6 |

Թեմիր-Խան-Շուրայի շրջանամասը իր տարածութեամբ բռնում է առաջին տեղը՝ համապատասխան իր բազմամարդութեան. նրան հետեւում են Գունիբի և Սամուրի շրջանամասերը։ Առհասարակ պիտի նկատել, որ Անդրկովկասի նահանգների ներքին տերրիտորիական բաժանումների յատուկ անհամաչափութիւններ չկան Դաղստանի շրջանում։

Ինչ վերաբերում է սեքսերի թուական յարաբերութիւններին, Դաղըստանը, ըստ երեւոյթին, Անդրկովկասի ամենակնոտատ մասն է ներկայացնում։ Այսպէս օրինակ 100 տղամարդուն գալիս են կանայք՝

| Շրջանամասեր (քաղաքներով միասին) | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | Միջին թուով |
|---|---|---|---|---|
| 1. Թեմ.-Խ.-Շ. շրջանամաս | 88,6 | 80,1 | 90,7 | 86,5 |
| 2. Աւարի շրջանամ. | 100,9 | 99,3 | 101,7 | 100,8 |
| 3. Անդիի շրջանամ. | 98,6 | 102,2 | 95,3 | 98,7 |
| 4. Գունիբի շրջանամ. | 101,1 | 109,9 | 96,3 | 102,1 |
| 5. Դարգինի շրջանամ. | 100,4 | 110,7 | 103,4 | 104,8 |
| 6. Կազի-Կումուխի շրջ. | 103,3 | 150,3 | 102,0 | 118,5 |
| 7. Կայտագօ-Տաբասար. շ. | 92,3 | 88,5 | 81,4 | 87,4 |
| 8. Կիւրինի շրջանամ. | 88,2 | 99,5 | 90,0 | 92,5 |
| 9. Սամուրի շրջանամ. | 90,0 | 133,0 | 90,2 | 104,4 |

*Անդրկովկասի ոչ մի մասում իգական սեռը չունի թուական այնպիսի ուժեղ մասնակցութիւն, ինչպէս գտնում ենք Դաղստանի շրջանում։ Այդ տեսակէտից եւ Դաղստանը մի բացառիկ տեղ է բռնում, միայն հակառակ յարաբերութեամբ։*

*Շատ տեղեր կին սեռի թուական գերազանցումը անցնում է հարիւրից, հասնելով մինչև 150-ի։ Որքան անօրինակ է Դաղստանը իր ազգաբնակչութեան վերին սահմանի թոյլ, նահանջներով առաջնորդուող աճումով, նոյնքան անսովոր է նրա բռնած տեղը՝ իր իգական սեռի թուական ուժեղութեամբ։ Հարց է ծագում. չլինի՞, թէ այդ երկու երևոյթների մէջ կայ որոշ պայմանական կապ։ Դաղստանի հէնց այն շրջաններում և հէնց այն տարեթուերին, ուր նկատւում է ազգաբնակութեան նուազում զգալի չափերով, իգական սեռը ցոյց է տալիս թուական ուժեղութեան ամենաբարձր սահմանը, հասնելով 109-ի, 133-ի և անգամ 150-ի։ Բնական չէ՞ արդեօք հետևցնել դրանից, որ յիշեալ շրջաններում բնակչութիւնը նուազել է տղամարդկանց արտագաղթի շնորհիւ, որի հետևանքը եղել է նաև սեռերի թուական հաւասարութեան խախտումը և իգական սեռի գերազանցումը։*

## ի. Ղարսի շրջան

*Մեզ մնում է, վերջապէս, քննութեան առնել նոյն յարաբերութիւնները Ղարսի շրջանում։ Ի՞նչ պատկեր է ներկայացնում Ղարսի շրջանը իր բնակչութեամբ յիշեալ տարեթուերին, դա տեսնում ենք հետևեալ աղիւսակից.*

| *Շրջանամասեր (քաղաքներով միասին)* | 1886 *թ.* *(երկսեռ)* | 1897 *թ.* *(երկսեռ)* | 1914 *թ.* *(երկսեռ)* | *Տոկոսական աճումը (կամ նուազումը)* 1886—1887 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. *Ղարսի շ.* | 76917 | 134142 | 176288 | 74,40 % | 24,00 % | 129,20 % |
| 2. *Արդահ. շ.* | 43643 | 65763 | 94016 | 50,68 » | 43,00 » | 115,42 » |
| 3. *Կաղզ. շ.* | 34158 | 59230 | 80818 | 73,40 » | 36,45 » | 136,60 » |
| 4. *Օլթի շրջ.* | 19326 | 31519 | 40091[1] | 62,09 » | 27,20 » | 107,40 » |
| *Ընդամենը՝* | 174044 | 290654 | 391213 | 67,00 » | 34,25 » | 124,78 » |

*Իր տեղին ընդհանրապէս խօսելով նահանգների մասին, Ղարսի շրջանի նկատմամբ ասացինք, թէ ինչ պայմանների ուժով պիտի բացատրել նրա բնակչութեան առանձնապէս արագ աճումը առաջին տարեշրջանում (1886—1897 թ.)։ Այդ արագ աճումը հետևանք էր օտարահպատակ տարրերի (թիւրքահայերի) մասսայական ներգաղթի դէպի Կովկասի սահմանները, որ այնքան ուժեղ հոսանքով տեղի էր ունենում հայկական կոտորածների տարիներին։ Վերևի աղիւսակի մէջ աւելի յստակօրէն է երևում այդ փաստի ազդեցութիւնը, մանաւանդ Ղարսի և Կաղզուանի շրջանամասերում։ Առաջինի մէջ 11 տարուայ ընթացքում (1886—1897 թ). բնակչութիւնը աճել է 74,40%-ով, իսկ 17 տարուայ ընթացքում (1897—*

---

[1]) *Թուական բացարձակ տուեալները տես յիշած աղբիւրների մէջ՝ Ղարսի շրջանին վերաբերող մասը։*

1914 թ.) աւելի քան երեք անգամ պակաս՝ 24,00$^0/_0$։ Երկրորդում աճել է բնակչութիւնը՝ առաջին տարեշրջանում 73,40$^0/_0$, իսկ երկրորդ տարեշրջանում՝ երկու անգամ պակաս՝ 36,45$^0/_0$։ Շնորհիւ այն հանգամանքի, որ ընդհանրապէս Ղարսի շրջանի բոլոր մասերը այս կամ այն չափով շօշափուել են ներգաղթի հոսանքից, նկատւում է բնակչութեան աճման ընդհանուր համաչափութիւն՝ առանց տատանումների և հակադիր ծայրերի։ Բոլոր մասերի մէջ աճման տոկոսը անցնում է հարիւրից։ Այդպիսով տեսնում ենք, որ Ղարսի շրջանը ևս իր բնակչութեան աճման բարձր ու համաչափ աստիճանով բռնում է մի առանձնայատուկ տեղ, բայց բոլորովին այլ իմաստով, քան Սև-ծովեան նահանգն ունի։ Ղարսի շրջանը, լինելով մի հասարակ և յետ ընկած գաւառավայր, չունենալով ոչ տնտեսա-արդիւնաբերական և ոչ ընդհանուր կուլտուրական որևէ կենտրոն, բնակչութեան աճման արագ տեմպ ունեցել է պատահական և իրանից անկախ պայմանների ուժով։

Ղարսի շրջանի տերիտորիական բաժանումների և խտութեան պատկերը ցոյց է տալիս մեզ հետևեալ աղիւսակը.

| Շրջանամ. (քաղաքներով միասին) | Ընդհանուր տարած. (քառ. վերստ) | Մի քառակուսի վերստի վրայ բնակւում էին 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. |
|---|---|---|---|---|
| 1. Ղարսի շրջանամաս | 5083,8 | 15,1 | 26,3 | 34,6 |
| 2. Արդահանի շրջ. | 4917,9 | 8,8 | 13,4 | 19,1 |
| 3. Կաղզուանի շրջ. | 3843,1 | 9,0 | 15,4 | 21,0 |
| 4. Օլթիի շրջանամ. | 2621,2 | 7,3 | 12,0 | 15,3 |

Տերիտորիական բաժանումների տեսակէտից ևս Ղարսի շրջանը համաչափութեան պատկեր է ներկայացնում։ Բնակչութեան թւով ամենամեծ շրջանամասերը՝ Ղարսինն ու Արդահանինը՝ ունին նաև ամենամեծ հողաբաժինները։ Եւ ընդհակառակը բնակչութեամբ ամենափոքր շրջանամասը, ինչպէս Օլթինն է, ամենից փոքրն է նաև իր տարածութեամբ։ Շնորհիւ այդ հանգամանքի զանազան մասերի խտութեան աստիճանը ևս համաչափ է։ Ղարսի շրջանը համարւում է Անդրկովկասում ամենանոսրաբնակ վայրը։ Անշուշտ, նա դեռ աւելի նոսրաբնակ կը լինէր, եթէ չլինէր դրսի մասսայական ներգաղթը։

Ի՞նչպէս են դասաւորուած Ղարսի շրջանում սեռերի թւական յարաբերութիւնները։ 100 տղամարդուն գալիս էին կանայք.

| Շրջանամասեր (քաղաքներով միասին) | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | Միջին թւով |
|---|---|---|---|---|
| 1. Ղարսի շրջանամ. | 92,5 | 79,1 | 95,0 | 88,8 |
| 2. Արդահանի շրջանամ. | 94,0 | 91,1 | 96,1 | 93,7 |
| 3. Կաղզուանի շրջանամ. | 90,2 | 77,6 | 90,5 | 81,1 |
| 4. Օլթիի շրջանամ. | 93,6 | 87,1 | 95,0 | 91,9 |

Մինչև այժմ մենք սովոր էինք տեսնելու, որ եկուոր տարրերի մեծ հոսանք ընդունող բնակավայրերում սեռերի թւական հաւասարակշռութիւնը փոխւում է ի վնաս իգական սեռի մասնակցութեան, որովհետև եկւոր

տարրը գլխաւորապէս արական սեռից է լինում։ Այդ փաստը չենք գտնում Ղարսի շրջանում այն հասարակ պատճառով, որ այնտեղ կատարուած ներգաղթը տեղ ու գործ որոնողների բնական հոսանք չի եղել, այլ մասսայական կոտորածից փախած խառը բազմութիւն, որի մէջ եղել են ամեն հասակի ու սեռի ներկայացուցիչներ։ Ահա այդ է պատճառը, որ միջին թուով վերցրած սեռերի թուական յարաբերութիւնները ես համաչափ դասաւորութիւն ունեն։ Ահա այդ կէտում ես նորից շեշտւում է այն առանձնայատուկ տեղը, որ բռնում է Ղարսի շրջանը միւս նահանգների շարքում։

Մինչև այստեղ տուինք մենք վիճակագրական մի համառօտ տեսութիւն Անդրկովկասի նահանգների, շրջանների և գաւառների մասին։ Տեսութիւնը վերաբերում էր ընդհանրապէս մեր ծայրերկրի ազգաբնակութեան. նրա տերիտորիական բաժանումներին ու ամփոփումներին, աճման և խտութեան աստիճանին, սեռերի թուական յարաբերութիւնների դասաւորութեան և այլն։

Մենք տեսանք, որ միևնոյն ծայրերկրի ազգաբնակութիւնը մի քանի տարեթուերի շարժման պրոցեսում ունի իրարից թոյլ կամ ուժեղ խոտորումներով տարբերուող հատուածներ, նայեած բնակավայրի աշխարհագրական դիրքին, տնտեսական զարգացման աստիճանին, ընդհանուր-կուլտուրական մակարդակին և այնտեղ ապրող ազգագրական տարրերի (այս կամ այն ժողովուրդների) առանձնայատուկ կողմերին։

Մենք տեսանք, որ քննութեան առնուած երևոյթների տեսակէտից Անդրկովկասի նահանգներն ու շրջանները՝ իրանց ներքին ստորաբաժանումներով, դասաւորուեցին մի քանի կաթեգորիաների մէջ. առաջին կաթեգորիային պատկանում են Թիֆլիսի, Բագուի և մասամբ Քութայիսի (կրկնում ենք՝ շնորհիւ բացառապէս Բաթումի և Սուխումի շրջանների) նահանգները, որոնք, կուլտուրական և առևտրա-արդիւնաբերական կենտրոններում մասսայական ներգաղթի խոշոր կուտակումներ կլանելով, ունեցել են բնակչութեան աճման արտակարգ արագութիւն և ստեղծել են դրանով ազգաբնակչական յարաբերութիւնների անհամաչափ դրութիւն միւս երկրորդական գաւառների համար։ Երկրորդ կաթեգորիային պատկանում են Երևանի և Գանձակի նահանգները, որոնք զուրկ լինելով յիշածս յատկութիւններով օժտուած կենտրոններից, ունեն բնակչութեան աճման, խտութեան և սեռերի թուական յարաբերութիւնների համաչափ աստիճան իրանց ներքին գաւառներում։ Ուրոյն տեղեր են բռնում Անդրկովկասի միացած մասերը Սև-ծովեան նահանգը, ինչպէս մենք տեսանք, իր բնակչութեան աճման արագընթաց տենդենցներով նման է առաջին կաթեգորիային, բայց ոչ թէ ամբողջ նահանգներին, այլ կենտրոններ ամփոփող գաւառներին (Թիֆլիսի և Բագուի գաւառներին, Բաթումի և Սուխումի շրջաններին)։ Իսկ իր ներքին բոլոր մասերի բնակչութեան համաչափ աճման աստիճանով Սև-ծովեան նահանգը աւելի նման է երկրորդ կաթեգորիային, անշուշտ միայն այն մեծ տարբերութեամբ, որ երկրորդ կաթեգորիայի (Երևանի և Գանձակի) նահանգները շարունակական արտագաղթով նուազեցնում են իրանց բնակչութեան թիւը և ունեն աճման համաչափ տոկոսների աւելի ցածր աստիճան. մինչդեռ Սև-ծովեան նահանգը

չարունակական ներգաղթով բազմացնում է իր բնակչութիւնը և ունի, հետեւապէս, աճման համաչափ տոկոսների անհամեմատելի բարձր աստիճան։ Սև-ծովեան նահանգին որոշ չափով նման է Ղարսի շրջանը իր անխտիր բոլոր մասերի բնակչութեան աճման համաչափ տոկոսների բարձր աստիճանով։ Սակայն այստեղ էլ կայ այն էական տարբերութիւնը, որ, ինչպէս նկատեցինք իր տեղում, Ղարսի շրջանի բնակչութեան արագ աճումը եղել է պատահական պայմանների արդիւնք և ոչ օրգանական և տնտեսա-կուլտուրական մշտարժէք գործօնների ազդեցութեան հետեւանք։ Ուրոյն տեղ է բռնում նաև Դաղստանի շրջանը՝ իր ազգաբնակչական յարաբերութիւնների մի շարք առանձնայատկութիւններով, որոնց մասին խօսեցինք մենք իր տեղում։

## 4. Քաղաքային ազգաբնակութիւնը նահանգներում եւ շրջաններում

*Մինչև այստեղ շօշափուած գաւառների և շրջանամասերի ազգաբնակութեան մէջ մտնում էր նաև, ինչպէս գիտենք, զուտ քաղաքային բնակչութիւնը։ Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում իրանից այն հարցը, թէ մեր յետամնաց ծայրերկրում առանձին-առանձին նահանգներում ինչ թուական մեծութիւն են ներկայացնում իրանցից քաղաքային տարրերը և ինչ առաջխաղացման պրոցեսի են ենթակայ նրանք զանազան տարբեշրջաններում։ Սկսենք Թիֆլիսի նահանգից։*

### a. Քաղաքային ազգաբնակութիւնը Թիֆլիսի նահանգում

| Քաղաքներ | 1886 թ. (երկսեռ) | 1897 թ. (երկսեռ) | 1914 թ. (երկսեռ) | Տոկոսական աճումը (կամ նուազումը) 1886—1897 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Թիֆլիս | 78445 | 159590 | 344629 | 103,44 % | 116,00 % | 339,32 % |
| 2. Ախալք. | 4303 | 5440 | 7484 | 26,42 » | 37,57 » | 73,92 » |
| 3. Ախալց. | 16116 | 15357 | 23924 | —5,00 » | 55,80 » | 50,84 » |
| 4. Գորի | 7243 | 10269 | 25655 | 29,47 » | 149,83 » | 254,20 » |
| 5. Դուշէթ | 2027 | 2566 | 2213 | 26,58 » | --16,00 » | 9,17 » |
| 6. Սղնախ | 10604 | 8994 | 17690 | —29,00 » | 96,68 » | 66,80 » |
| 7. Թելաւ | 11214 | 13929 | 15231[1] | 24,21 » | 9,35 » | 35,82 » |
| 8. Զաքաթ. | 1231[2] | 3009[3] | 4000[4] | 144,43 » | 32,93 » | 224,13 » |
| Ընդամենը՝ | 131183 | 219154 | 440826 | 67,07 » | 101,18 » | 236,04 » |

*Այս աղիւսակի մէջ դեռ աւելի սուր չափերով են աչքի ընկնում բնակչութեան անհամաչափ աճման հակադիր ծայրերը, քան տեսանք մենք*

---

[1]) *Թելաւ քաղաքի բնակիչների թիւը՝ վերջին տարեթուի վերաբերեալ, տես 1916 թ. տուեալները* («Кавк. кал.» 1917 *թ.*)։

[2]) *1888 թ. տուեալները տես մեզ յայտնի* «Сводъ статист. данныхъ о насел Закк.» *Թիֆլիսի նահանգի բաժինը*։

[3]) *1897 թուի տուեալները տես* «Первая всеобщаа перепись»-*ի* «Тифлисская губернія» *հատորը, առաջին երեսները*։

[4]) 1914 *թուի տուեալները տես* «Кавказскій календарь» 1915 г. *ստատիստիկական բաժինը*։

Թիֆլիսի նահանգի գաւառների բնակչութեան աճման տոկոսների մէջ, կենտրոն Թիֆլիսի աճման թռիչքները միջամտում և չափաւորում էին Թիֆլիսի գաւառի ընդհանուր բնակչութեան դանդաղ-բնական աճումով։

Այստեղ, երբ մենք միայն քաղաքների հետ գործ ունենք, Թիֆլիսը վեր է ցցւում իր բացառիկ դիրքով, որի հսկայական ազգաբնակութեան առաջ չքանում են գաւառական բոլոր քաղաքները իրենց չնչին բնակիչներով։ Դրանց մէջ կան նոյն իսկ այնպիսինները, որոնց բնակչութեան թիւը նուազել է. օրինակ Ախալցխայում նուազել է բնակիչների թիւը 5 տոկոսով (1886—1897 թ.), Դուշեթում 16 տոկ.-ով —1897—1914 թ.— և Սղնախում 29 տոկ.-ով —1886—1897թ.—։ Համեմատաբար արագ աճել են Գորու —254,20 տոկ.-ով— և Զաքաթալայի —224,13 տոկ.-ով— բնակիչները։ Թիֆլիսի ազգաբնակութիւնը կազմել է միշտ նահանգի բոլոր քաղաքների ընդհանուր ազգաբնակութեան գերազոյն մասը, և իրաւ, քանի գնացել, այնքան աւելի ու աւելի է աճել նրա տոկոսական բաժինը։ Այսպէս օրինակ 1886 թ. Թիֆլիսի քաղաքի բնակչութիւնը կազմել է նահանգի բոլոր քաղաքների —անշուշտ նաև Թիֆլիսի— բնակիչների ընդհանուր թուի 59,80 տոկ., 1897 թ. այդ տոկոսական մասնակցութիւնը հասել է 72,82 տոկ.-ի, իսկ 1914 թ.՝ 78,20 տոկ.-ի։ Կենտրոնը կլանում է շարունակ գաւառների թարմ ույժերը, և ապագայում, քանի զարգանան արդիւնաբերական ճիւղերը, առևտուրը և մտաւոր-կրթական ընդհանուր կուլտուրան, այնքան աւելի ու աւելի պիտի կենտրոնը ծծէ գաւառների հիւթը։ Մեր երկիրը գտնւում է տակաւին կապիտալիստական կուլտուրայի զարգացման սկզբնական փուլի մէջ և ազգաբնակչական տեղահանութիւնների շարունակական պրոցեսը՝ գաւառներից դէպի կենտրոնները, ոչ թէ դանդաղելու է, այլ աւելի ու աւելի պիտի ուժեղանայ և արագանայ ապագայում։

Տեսնենք այժմ, թէ ինչպէս են դասաւորուած սեռերի թուական յարաբերութիւնները Թիֆլիսի նահանգի քաղաքներում։ 100 տղամարդուն գալիս էին կանայք.

| Քաղաքներ | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | Միջին թւով |
|---|---|---|---|---|
| 1. Թիֆլիս | 78,3 | 67,5 | 81,9 | 75,9 |
| 2. Ախալքալաք | 88,5 | 68,3 | 81,3 | 79,3 |
| 3. Ախալցխա | 90,0 | 79,0 | 89,9 | 86,3 |
| 4. Գորի | 65,5 | 60,3 | 52,8 | 59,5 |
| 5. Դուշեթ | 65,3 | 46,0 | 88,6 | 66,6 |
| 6. Սղնախ | 82,4 | 100,2 | 73,6 | 85,4 |
| 7. Թելաւ | 99,8 | 88,7 | 84,9 | 91,1 |
| 8. Զաքաթալա | 75,1 | 48,8 | 70,7 | 64,9 |

Այս աղիւսակը պարզում է մեր առաջ մի անսովոր պատկեր. իգական սեռի քանակական անհամեմատ թոյլ մասնակցութիւնը քաղաքային բնակչութեան մէջ, քան մենք տեսանք նոյն Թիֆլիսի նահանգի առհասարակ գաւառական բնակչութեան մէջ։ Կայ քաղաք, որտեղ 100 տղամարդուն գալիս էր 52,8 (Գորի), 48,8 (Զաքաթալա) և անգամ 46,0 (Դուշէթ)

կին։ Մինչդեռ այն գաւառներում, որոնց պատկանում են յիշեալ քաղաքները, նոյն տարեթուերին իգական սեռի մասնակցութիւնը հասել էր՝ 85,4-ի (Գորու գաւառ), 85,4-ի (Զաքաթալայի շրջան) և 88,8-ի (Դուշեթի գաւառ)։ Որոնել արդեօք այստեղ միայն մեզ յայտնի հասարակական պատճառները, որ գիւղերից քաղաքները արտագաղթելով՝ գլխաւորապէս տղամարդիկ, փոխում են այնտեղ սեռերի թուական հաւասարակշռութիւնը ի վնաս իգական սեռի. թէ՞ կայ նաև օրգանական պատճառներ, այն, որ, օրինակ, քաղաքներում իգական սեռի բնական աճումը աւելի դանդաղ է լինում, քան զուտ գաւառներում։

Ե. Քաղաքային ազգաբնակութիւնը Քութայիսի նահանգում

Ի՞նչպէս են դասաւորուած յարաբերութիւնները Քութայիսի նահանգում։

| Քաղաքներ | 1886 թ. (երկսեռ) | 1897 թ. (երկսեռ) | 1914 թ. (երկսեռ) | Տոկոսական աճումը (կամ նուազումը) 1886—1897 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Քութայիս | 22643 | 32476 | 57917 | 43,42 % | 78,34 % | 156,00 % |
| 2. Բաթում | 14803 | 28508 | 38615 | 90,55 » | 35,44 » | 160,86 » |
| 3. Օզուրգեթ | 1472 | 4710 | 8580 | 220,00 » | 82,18 » | 482,88 » |
| 4. Փոթի | 4709 | 7346 | 19667 | 56,00 » | 167,72 » | 317,64 » |
| 5. Սուխում | 412 | 7998 | 46530 | 1841,26 » | 481,77 » | 11193,68 » |
| 6. Ռեդ.-Կալէ | 382 | 780 | 802[1]) | 104,19 » | 2,90 » | 109,98 » |
| Ընդամենը՝ | 44421 | 81818 | 172111 | 84,18 » | 110,35 » | 287,70 » |

Ամենից առաջ աչքի է ընկնում այս աղիւսակից քաղաքային կեանքի թոյլ զարգացումը Քութայիսի նահանգում։ Միայն Թիֆլիս քաղաքի ազգաբնակութիւնը իր թուով երկու անգամ գերազանցում է Քութայիսի նահանգի բոլոր քաղաքների բնակիչների ընդհանուր թուից։ Շատ աւելի համեստ տեղ կը բռնէր Քութայիսի նահանգի քաղաքային ազգաբնակութիւնը իր քանակով, եթէ չհաշուէինք Բաթումի և Սուխումի բնակիչները, որոնք միասին վերցրած (85145 հոգի, 1914 թ.) համարեա կէսն են կազմում նահանգի ընդհանուր քաղաքային ազգաբնակութեան։ Բնակչութեան աճման նկատմամբ առասպելական թռիչքներ է գործել Սուխում քաղաքը, որի բնակիչների թիւը երեսուն տարի առաջ եղել է միայն 412 հոգի, այսինքն մի փոքրիկ գիւղի չափ, իսկ այսօր հասել է 46530 հոգու, դառնալով երկրորդ խոշոր բազմամարդ քաղաքը ողջ նահանգում, Քութայիսից յետոյ։ Վերջինս, ընդհակառակը, ունեցել է բնակչութեան համեմատաբար ամենաթոյլ աճումը (եթէ չհաշուենք չնչին Ռեդուտ-Կալէն)։

Սեռերի թուական յարաբերութիւնները Քութայիսի նահանգի քաղաքներում եղել են այսպէս. 100 տղամարդուն գալիս էին կանայք՝

[1]) Թուական բացարձակ տուեալները տես յիշած աղբիւրները՝ Քութայիսի նահանգի վերաբերեալ։

| Քաղաքներ | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | Միջին թուով |
|---|---|---|---|---|
| 1. Քութայիս | 67,1 | 67,1 | 69,2 | 67,8 |
| 2. Բաթում | 36,6 | 39,4 | 67,1 | 47,7 |
| 3. Օզուրգեթ | 81,7 | 56,8 | 73,9 | 70,7 |
| 4. Փոթի | 54,2 | 50,8 | 57,9 | 54,3 |
| 5. Սուխում | 81,0 | 43,3 | 40,3 | 54,8 |
| 6. Ռեդուտ-Կալէ | 88,1 | 85,0 | 93,0 | 88,7 |

Այստեղ իգական սեռի քանակական դիրքը շատ աւելի է թուլանում, քան մենք տեսնում ենք Թիֆլիսի նահանգի քաղաքների նկատմամբ։ Նրա թուական մասնակցութիւնը իջնում է երեսունի (Բաթում) և քառասունի (Սուխումում), այսինքն ամենից առաջ այն քաղաքներում, ուր այնքան շատ են եկուոր տարրերը։ Այստեղ էլ պատճառները,—հասարակական և զուտ օրգանական բնաւորութեամբ,—անշուշտ նոյնն են, ինչ Թիֆլիսի նահանգի քաղաքների վերաբերմամբ նկատեցինք։

c. Քաղաքային ազգաբնակութիւնը Երեւանի նահանգում

| Քաղաքներ | 1886 թ. երկսեռ | 1897 թ. երկսեռ | 1914 թ. երկսեռ | Տոկոսական աճումը (կամ նուազումը) 1886—1897 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Երեւան | 14738 | 29006 | 51286[1]) | 96,81 % | 76,81 % | 248,00 % |
| 2. Ալէքսանդ. | 24230 | 30616 | 51316 | 26,36 » | 67,60 » | 116,80 » |
| 3. Նախիջեւան | 6939 | 8790 | 8945 | 26,67 » | 1,76 » | 29,00 » |
| 4. Օրդուբաթ | 4199 | 4611 | 5655 | 9,81 » | 22,64 » | 34,67 » |
| 5. Նոր-Բայազ. | 7488 | 8486 | 13290[2]) | 13,32 » | 56,61 » | 77,50 » |
| Ընդամենը՝ | 47594 | 81509 | 130492 | 71,26 » | 60,08 » | 174,15 » |

Երեւանի նահանգը յետ է մնում Քութայիսի նահանգից թէ քաղաքների թւով և թէ քաղաքային ազգաբնակութեան ընդհանուր գումարով (առանց Բաթում և Սուխում քաղաքների՝ Քութայիսի նահանգի քաղ. բնակչութիւնը աւելի նուազ կը լինէր Երեւանի նահանգի քաղ. բնակչութիւնից)։ Աճման տեմպով էլ Երեւանի նահանգը նահանջում է Քութայիսի նահանգի առաջ։ Վերջինում բոլոր քաղաքների բնակչութեան աճման ընթացքը անցնում է հարիւրից՝ երեք տասնամեակի ընթացքում, մինչդեռ Երեւանի նահանգում Նախիջեւանի և Օրդուբաթի բնակիչները շատ թոյլ աճում են ունեցել (առաջինը 29,00%, իսկ երկրորդը՝ 34.67%)։ Միայն Երեւան քաղաքն է, որ աճման մեծ տոկոս է տալիս՝ 248%, աւելի մեծ, քան Քութայիս քաղաքը։

Սեռերի թուական յարաբերութիւնները Երեւանի նահանգի քաղաքներում. 100 տղամարդուն գալիս էին կանայք՝

| Քաղաքներ | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | Միջին թուով |
|---|---|---|---|---|
| 1. Երեւան | 88,3 | 67,4 | 100,7[3]) | 85,4 |
| 2. Ալէքսանդրոպոլ | 95,9 | 60,7 | 80,2 | 78,9 |
| 3. Նախիջեւան | 85,0 | 88,6 | 96,3 | 89,9 |
| 4. Օրդուբաթ | 80,1 | 88,0 | 70,0 | 79,4 |
| 5. Նոր-Բայազեթ | 71,6 | 94,2 | 89,5 | 85,1 |

[1]) Երեւան քաղաքի բնակիչների թիւը՝ 1914 թ. տակ, վերաբերում է 1916 թ. տուեալներին («Кавк. кал.» 1917 թ.)։ Կասկած չկայ, որ այդ թուի մէջ մտնում են նաև պատկառելի քանակով թիւրքահայ փախստականները։

[2]) Թուական բացարձակ տուեալները տես յիշած աղբիւրները՝ Երեւանի նահանգի մասին։

[3]) Իգական սեռի թուական այդ մեծ թռիչքը՝ 67,4—100,7 հոգի (1897—1914 թ.) պէտք է բացատրել, կարծում ենք, նրանով, որ Երեւանում տեղաւորուած թիւրքահայ փախստականների մէջ իգական սեռը թուապէս գերազանց է եղել արական սեռից։

*Այստեղ արդէն պատկերը հիմնապէս տարբեր է, քան մենք տեսանք Թիֆլիսի և Քութայիսի նահանգների նկատմամբ։ Իգական սեռի թուական մասնակցութիւնը Երևանի քաղաքային ազգաբնակութեան մէջ մնացել է համարեա նոյնը, ինչ գաւառներումն էր. տարբերութիւնը շատ չընչին է։ Հաւանականութիւնից հեռու չէ թերևս այն ենթադրութիւնը, որ գերազանցապէս վրացական ազգաբնակութիւն ունեցող քաղաքներում (Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում) իգական սեռը աւելի թոյլ մասնակցութիւն ունի, քան գերազանցապէս հայ և մահմեդական ազգաբնակութիւն ունեցող քաղաքներում։ Մենք կը տեսնենք այդ տարբերութիւնները աւելի մանրամասն գնա յետոյ, երբ կը խօսենք ժողովուրդների մասին առանձին-առանձին։*

## դ. Քաղաքային ազգաբնակութիւնը Գանձակի նահանգում

| Քաղաքներ | 1886 թ. (երկսեռ) | 1897 թ. (երկսեռ) | 1914 թ. (երկսեռ) | Տոկոսական աճումը (կամ նուազումը) 1886—1897 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Գանձակ | 20294 | 33625 | 56305 | 65,19 % | 67,19 % | 177,44 % |
| 1. Նուխի | 25894 | 24734 | 54678 | —4,80 » | 121,06 » | 111,12 » |
| 3. Շուշի | 26806 | 25881 | 42568[1]) | —3,57 » | 64,50 » | 60,00 » |
| Ընդամենը՝ | 72994 | 84240 | 153551 | 15,40 » | 82.34 » | 112,00 » |

*Գանձակի մեծ նահանգը շատ քիչ քաղաքներ ունի[2])։ Բայց աւելի բազմամարդ են նրա գաւառական քաղաքները՝ Նուխին ու Շուշին, քան որևէ նահանգի գաւառական քաղաքները, բացի Ալէքսանդրոպոլից։ Դեռ երեսուն տարի առաջ Նուխին ու Շուշին ունեցել են տասնեակ հազարաւոր ժողովուրդ և ամէն մէկը ունեցել է բնակիչների աւելի մեծ թիւ, քան ինքը՝ նահանգի կենտրոն Գանձակը։ Առաջին տարեշրջանին՝ ուրեմն մօտ երեսուն տարի առաջ, Շուշին եղել է իր բնակչութեան թւով ամենամեծ քաղաքը ողջ Անդրկովկասում, չհաշուած ի հարկէ Թիֆլիսն ու Բագուն. ուրեմն այս երկու քաղաքներից յետոյ Շուշին բռնել է անմիջապէս երրորդ տեղը։ Նա աւելի շատ բնակիչներ է ունեցել, քան Նախիջևանը, Օրդուբադը և Նոր-Բայազետը միասին վերցրած (Երևանի նահանգից) և կամ Բաթումը, Օզուրգեթը, Փոթին, Սուխումը Ռեդուտ-Կալէն միասին վերցրած (Քութայիսի նահանգից)։ Դա շատ բնորոշ է։ Բայց յետոյ ուրիշ քաղաքները աճում են արագօրէն, իսկ Շուշուայ բնակչութիւնը նուազում է հետզհետէ։ 1897 թ., 11 տարուայ ընթացքում, Շուշուայ բնակչութիւնը նուազում է 3,57%-ով. նրա հետ միասին նուազում է նաև Նուխուայ բն-*

---

[1]) *Թուական բացարձակ տուեալները տես յիշեալ աղբիւրները՝ Գանձակի նահանգի քաղաքների մասին։*

2) *Ըստ նորագոյն աղբիւրների Գանձակի նահանգի քաղաքների շարքում դասւում են նաև Ղազախը և Գորիսը։ Որովհետև նախկին տարեշրջաններում նրանք միայն գիւղաքաղաքներ էին համարւում, ուստի մենք տարեշրջանների համեմատութեան ամբողջութիւնը չխախտելու համար նրանց չենք յիշում քաղաքների շարքում, այլ կը յիշենք գիւղաքաղաքների թւում։*

նակչութիւնը 4,80⁰/₀-ով։ Նա ևս եղել է մեծ քաղաքներից մէկը. Շուշուց յետոյ անմիջապէս յաջորդել է Նուխին։

Հաղորդակցական միջոցների բացակայութիւնը, արդիւնաբերութեան և առևտրի յետամնացութիւնը հնարաւորութիւն չեն տուել Ղարաբաղին և նրա կենտրոնին առաջադիմելու։ Ղարաբաղը աւելի, քան որևէ գաւառ, զրկել է իր ծոցից և հեռուն նետել ահագին թւով բանակներ իր զաւակներից, որոնք Կովկասի կենտրոններում առաջին տեղն են բռնում առևտրա-արդիւնաբերական և հասարակական կեանքում։

Ինչ վերաբերում է Գանձակի նահանգի քաղաքային ազգաբնակութեան առհասարակ, պէտք է ասել, որ նա ևս իր թւով երրորդ տեղն է բռնել առաջին տարեշրջանում, տեղի տալով միայն Թիֆլիսի և Բագուի նահանգների քաղաքային ազգաբնակութեան, բայց գերազանցելով ոչ միայն Երևանի, այլև Քութայիսի նահանգների քաղ. ազգաբնակութեան թւից։ Ներկայումս նա, ընդհակառակը, բռնում է չորրորդ տեղը, զիջելով իր դիրքը Քութայիսի նահանգին։ Գալով Գանձակ քաղաքին, նրա բնակչութեան քանակական մեծութիւնը փոփոխական է եղել. առաջին տարեշրջանում նա ամենափոքր քաղաքն է եղել իր նահանգում. այժմ ի հարկէ առաջին տեղն է բռնում, փոքր միայն գերազանցելով Նուխուց։ Իսկ Շուշին, շնորհիւ իր քաղաքացիների մեծաթիւ արտագաղթին և հետևապէս բնակչութեան դանդաղ աճման, իր վաղեմի առաջնակարգ տեղը զիջելով Գանձակին, բռնում է այժմ երրորդ տեղը նահանգի քաղաքների մէջ։

Ինչպէս էին դասաւորուած սեռերի թւական յարաբերութիւնները Գանձակի նահանգի քաղաքներում. 100 տղամարդուն գալիս էին այնտեղ կանայք՝

| Քաղաքներ | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | Միջին թւով |
|---|---|---|---|---|
| 1. Գանձակ | 75,8 | 79,5 | 100,4 | 85,2 |
| 2. Նուխի | 79,0 | 86,6 | 80,0 | 81,9 |
| 3. Շուշի | 70,0 | 94,3 | 74,0 | 79,4 |

Ընդհանուր առմամբ վերցրած իգական սեռի թւական մեծութիւնը Գանձակի նահանգի քաղաքային ազգաբնակութեան մէջ աւելի մօտ է կանգնած նոյն յարաբերութիւններին Երևանի նահանգում, քան Թիֆլիսի կամ Քութայիսի նահանգներում։ Միջին թւով վերցրած իրարից շատ չեն տարբերւում Գանձակի նահանգի երեք քաղաքները՝ իրանց իգական սեռի թւական մասնակցութեան չափերով։

## ե. Քաղաքային ազգաբնակութիւնը Բագուի նահանգում

| Քաղաքներ | 1886 թ. երկսեռ | 1897 թ. երկսեռ | 1914 թ. երկսեռ | Տոկոսական աճումը (կամ նւազումը) 1886—1897 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Բագու | 86611 | 111904 | 248812[1] | 29,20 ⁰/₀ | 122,34 ⁰/₀ | 187,27 ⁰/₀ |
| 2. Ղուբա | 13917 | 15363 | 13459 | 10,40 » | —14,14 » | —3,40 » |
| 3. Լենքորան | 4222 | 8733 | 13967 | 106,84 » | 60,00 » | 223,70 » |
| 4. Շամախի | 22139 | 20007 | 27527[2] | —10,65 » | 37,58 » | 24,07 » |
| Ընդամենը՝ | 126889 | 156007 | 303765 | 23,00 » | 94,71 » | 147,28 » |

1) Վերցրւած է միայն Բագու քաղաքի բնակչութեան թիւը, առանց քաղաքապետութեան միւս մասերի։

2) Թւական բացարձակ տւեալները տես յիշած աղբիւրները՝ Բագուի նահանգի քաղաքների մասին։

*Առաջին հայեացքից, կարծես, շատ տարօրինակ տպաւորութիւն է թողնում Բագու քաղաքի բնակչութեան աճման բաւական համեստ տեմպը, մանաւանդ առաջին տարեշրջանում (1886—1897 թ.)։ Չէ՞ որ Բագուն եկուոր տարրերի մասսայակուտ մի վայր է, որի բնակիչների աճման տոկոսները հազարների պիտի հասնէր Սուխումի նման,—կարող է հարցնել անիրազեկ ընթերցողը առաջին հայեացքից։*

*Նախ չպէտք է մոռանալ այն հանգամանքը, որ Բագուն դեռ 1886 թ., այսինքն իր արդիւնաբերական կեանքի զարգացման դեռ սկզբնական շրջանում, եղել է Անդրկովկասում ամենամեծ քաղաքը, աւելի մեծ նոյնիսկ Թիֆլիսից (վերջինս ունեցել է 78445 բնակ., իսկ Բագուն՝ 86611 բնակ.)։ Երկրորդ՝ որ գլխաւորն է, Բագու ներգաղթող եկուորների մեծ մասը, յատկապէս բանուորութիւնը և ձեռնարկութիւնների վարչական ծառայողների որոշ մասը իրանց ընտանիքներով տեղաւորւում են քաղաքի սահմաններից դուրս՝ զուտ նաւթային ռայոններում։ Այդ է պատճառը, որ զուտ Բագու քաղաքի բնակչութիւնը աճման տեմպի առանձնապէս խոշոր թռիչքներ չէր կարող գործել։ Բագուն իր բնակիչների թուով կազմել է ողջ նահանգի քաղաքային ազգաբնակութեան շատ աւելի խոշոր տոկոսը, քան Թիֆլիսը իր նահանգում։ Այսպէս օրինակ 1886 թ. Բագու քաղաքի բնակչութիւնը կազմում էր նահանգի քաղաքային ազգաբնակութեան 69,04%, 1897 թ. 71,72%, իսկ 1914 թ. արդէն՝ 81,91%։ Միւս քաղաքներից բաւական արագ աճել է Լենքորանի բնակչութիւնը, որ առաջ հասարակ գիւղաքաղաքի մեծութիւն է ունեցել։ Ընդհակառակը ըզգալիօրէն դանդաղ են աճել՝ նուազման դէպքերով հանդերձ, Շամախին և մանաւանդ Ղուբան։ Երկուսն էլ ենթակայ են եղել արտագաղթի մեծ հոսանքների։ Երկրաշարժի հայրենիք Շամախին իր արտագաղթը ուղղել է համարեա բացառապէս դէպի Բագուն։*

*Սեռերի թուական յարաբերութիւնները Բագուի նահանգի քաղաքներում դասաւորուած են հետևեալ կերպով. 100 տղամարդուն գալիս են՝*

| *Քաղաքներ* | 1886. *թ.* | 1897 *թ.* | 1914 *թ.* | *Միջին թուով* |
|---|---|---|---|---|
| 1. *Բագու* | 58,0 | 67,3 | 74,1 | 66,5 |
| 2. *Ղուբա* | 78,7 | 88,1 | 77,1 | 81,3 |
| 3. *Լենքորան* | 86,7 | 87,3 | 66,7 | 80,2 |
| 4. *Շամախի* | 66,6 | 91,2 | 88,0 | 81,9 |

*Եթէ չհաշուենք այստեղ Բագուի օրինակը, ուր իգական սեռի թուական յարաբերութիւնը իջնում է մինչև յիսունի (1886 թ.), իսկ միջին թուով հասնում է 66,5%-ի, ընդհանուր առմամբ վերցրած Բագուի նահանգի քաղաքներում իգական սեռի թուական մեծութիւնը շատ չի խուսափում Երևանի և Գանձակի քաղաքների օրինակից։*

### է. Քաղաքային ազգաբնակութիւնը Սև-ծովեան նահանգում

*Անդրկովկասի ամենակրտսեր նահանգը ունի ընդամէնը մի քաղաք, որի ազգաբնակութեան թիւը ենթարկուել է մեզ յայտնի տարեթուերին հետևեալ փոփոխութիւններին.*

| Քաղաքներ | 1886 թ. երկսեռ | 1897 թ. երկսեռ | 1914 թ. երկսեռ | Տոկոսական աճումը (կամ նուազումը) 1886—1897 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Նովորոսիյսկ | 6393 | 16897 | 66130[1]) | 166,00% | 291,38% | 934,41% |

Մենք գիտենք արդէն, թէ աճման ինչպիսի հսկայական թռիչքներ է գործել առհասարակ Սև-ծովեան նահանգը իր բոլոր մասերով։ Բնական է, որ Նովորոսիյսկ քաղաքը, որպէս նահանգի կենտրոնը, պէտք է նոյն կարգի աճում ունենար։

Սեռերի թուական յարաբերութիւնները Նովորոսիյսկում եղել են այսպէս. 100 տղամարդուն գալիս էին կանայք՝

| Քաղաքներ | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | Միջին թւով |
|---|---|---|---|---|
| 1. Նովորոսիյսկ | 77,0 | 65,8 | 70,9 | 70,9 |

Իգական սեռի թուական յարաբերութիւնը Նովորոսիյսկի շրջանում միջին թւով հաւասար էր 72,1-ի, իսկ քաղաքում՝ 70,9-ի. տարբերութիւնը շատ չնչին է։

## Գ. Քաղաքային ազգաբնակութիւնը Դաղստանի շրջանում

Դաղստանը ունի ընդամենը երեք քաղաք, որոնց բնակչութեան թուի փոփոխութիւնները ունեցել են հետեւեալ պատկերը.

| Քաղաքներ | 1886 թ. երկսեռ | 1897 թ. երկսեռ | 1914 թ. երկսեռ | Տոկոսական աճումը (կամ նուազումը) 1886—1897 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Թ.-Խ.-Շ. | 2579 | 9214 | 16922 | 257,66% | 88,66% | 551,50% |
| 2. Դերբենդ | 15265 | 14649 | 33536 | —4,20 » | 129,00 » | 119,69 » |
| 3. Պետրովսկ | 2285 | 9753 | 22564[2]) | 326,82 » | 131,35 » | 887,48 » |
| Ընդամենը՝ | 20149 | 33616 | 73022 | 67,33 » | 117,22 » | 262,41 » |

Դաղստանի ամենամեծ քաղաքը եղել է և մինչև այժմ էլ մնացել է Դերբենդը։ Շրջանի գլխաւոր քաղաքը՝ Թեմիր-Խան-Շուրան, որ առաջ (1886 թ.) իր բնակչութեան թւով երկրորդ տեղն էր բռնում, հետզհետէ զիջում է իր դիրքը առեւտրաշահ և ծովափնեայ Պետրովսկին։ Բնակչութեան աճման տեսակէտից սուր հակասութիւն է նկատւում Դաղստանի քաղաքային և շրջանային ազգաբնակութեան միջև. որքան առաջինը արագ էր աճում, մանաւանդ Պետրովսկ և Թեմիր-Խան-Շուրա քաղաքները, այնքան երկրորդը աճում էր դանդաղ ու տատանումներով։

Սեռերի թուական յարաբերութիւնները Դաղստանում ցոյց են տալիս հետեւեալ թուերը. 100 տղամարդուն գալիս էին կանայք՝

1) Թուական բացարձակ տուեալները տես յիշեալ աղբիւրների մէջ՝ Սև-ծովեան նահանգի մասին,

2) Թուական բացարձակ տուեալները տես յիշեալ աղբիւրները՝ Դաղստանի շրջանի մասին։

| Քաղաքներ | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | Միջին թւով |
|---|---|---|---|---|
| 1. Թեմ.-Խ.-Շուրա | 76,7 | 56,5 | 101,3 | 74,8 |
| 2. Դերբենդ | 73,9 | 80,0 | 51,7 | 68,5 |
| 3. Պետրովսկ | 90,0 | 49,2 | 66,3 | 68,5 |

Մեզ յայտնի է, որ Դաղստանի շրջանում աւելի, քան այլուր, իգական սեռը թւապէս շատ ուժեղ է, շատ տեղերում զգալի չափերով գերազանցելով արական սեռից։ Քաղաքներում գտնում ենք հակառակ պատկերը։ Թեմիր-Խան-Շուրայի շրջանամասում կին սեռի թւական յարաբերութիւնը հաւասար է 86,5-ի, մինչդեռ քաղաքում՝ 74,8-ի, իսկ նոյն շրջանի միւս քաղաքում (Պետրովսկում)՝ 68,5-ի։ Այդ տեսակէտից Դաղստանի շրջանը աւելի շատ մօտենում է Թիֆլիսի և Քութայիսի նահանգներին, քան Երեւանի և Գանձակի, ինչպէս և մասամբ Բագուի նահանգներին։

### ի. Քաղաքային ազգաբնակութիւնը Ղարսի շրջանում

Ղարսի շրջանը ևս՝ Սև-ծովեան նահանգի նման, ունի մի հատիկ քաղաք, ուր ազգաբնակութեան թիւը հետևեալ փոփոխութիւններն է կրել յայտնի տարեթուերին։

| Քաղաքներ | 1886 թ. երկսեռ | 1897 թ. երկսեռ | 1914 թ. երկսեռ | Տոկոսական աճումը կամ նուազումը 1886—1897 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|---|
| Ղարս | 3939 | 20805 | 30086[1] | 427,92 % | 44,69 % | 661,26% |

Աճման շատ աւելի խոշոր տոկոս ենք գտնում Ղարս քաղաքում, քան տեսանք մենք Ղարսի շրջանի բոլոր տերրիտորիական մասերում. և իրաւ, այդ արտակարգ արագ աճման ամենաուժեղ ժամանակամիջոցը կազմում է 1886—1897 թ.։ Մինչդեռ Ղարսի շրջանամասում (округъ) նոյն տարեթուերին ազգաբնակութիւնը աճել է 74,40%-ով, Ղարս քաղաքում, ընդհակառակը, աճման տոկոսը հասել է 427-ի։ Դա նշանակում է, որ ներգաղթող թիւրքահայ տարրերը, որոնց մասին խօսեցինք իր տեղում, մեծ մասով տեղաւորուել են Ղարս քաղաքում։

Սեռերի թւական յարաբերութիւնները Ղարսում եղել են այսպէս. 100 տղամարդուն գալիս են կանայք՝

| Քաղաքներ | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | Միջին թւով |
|---|---|---|---|---|
| Ղարս | 90,0 | 44,7 | 89,1 | 74,6 |

Իգական սեռի թւական թոյլ մասնակցութեան նոյն սովորական երեւոյթը քաղաքներում՝ գտնում ենք նաև Ղարս քաղաքում, մինչդեռ Ղարսի շրջանամասում (округъ) այդ մասնակցութիւնը, ինչպէս տեսանք, հաւասար էր միջին թւով 88,8-ի, ասել է 12,2-ով աւելի, քան քաղաքում։

Այսպէս ուրեմն, քաղաքների ազգաբնակութեան վերաբերեալ այս համառօտ տեսութիւնից երևաց, ամենից առաջ, բոլորի համար համարժէք մի ընդհանուր ու բնական տենդենց. դա քաղաքների խտացման, քաղաքային ազգաբնակութեան արագ աճման և կենտրոնացման ընդհանուր տենդենցն է առհասարակ բոլոր քաղաքների մէջ։ Անշուշտ այդ տենդենցը շատ

[1] Թւական բացարձակ տուեալները տես յիշեալ աղբիւրները՝ Ղարսի շրջանին վերաբերող մասը։

աւելի ցայտուն և ուժեղ թափով է արտայայտուել նահանգական-շրջանային գլխաւոր քաղաքներում։ Գլխաւոր քաղաքները, դրանց մէջ մանաւանդ կուլտուրական և առևտրա-արդիւնաբերական առանձին նշանակութիւն ստացածները, ծծում են շարունակ հիւթը և կլանում թարմ էլեմենտներ ոչ միայն գաւառական խուլ անկիւններից՝ գիւղական մթնոլորտից, այլև գաւառական մեծ ու փոքր կենտրոններից—քաղաքներից, գիւղաքաղաքներից և աւաններից։ Միայն այն գաւառական քաղաքները կամ թէկուզ հէնց աւելի աննշան անկիւնները կարող են դառնալ ծաղկած օազիսների խոշոր կենտրոններ, եթէ նրանց շուրջը կամ նրանց մօտ տարածութեան վրայ ընկած բնական հարստութիւնները շահագործուեն, եթէ խոշոր կապիտալն ու տեխնիկան և արտադրական-ինտենսիւ աշխատանքը հաստատեն այնտեղ իրանց թագաւորութիւնը՝ հաղորդակցութեան կատարելագործուած միջոցներով միացնելով այդ ծայրերը երկրի կուլտուրական և առևտրա-արդիւնաբերական մեծ կենտրոնների հետ։

Որպէսզի կարողանանք աւելի շօշափելիօրէն պատկերացնել միայն գլխաւոր քաղաքների ազգաբնակութեան բացարձակ և յարաբերական փոփոխութիւնները մեր յայտնի տարեշրջաններում, բերենք ստորև նրանց շարքը առանձնապէս։

Նահանգական և շրջանային գլխաւոր քաղաքները։

| Քաղաքներ | 1886 թ. (երկսեռ) | 1897 թ. (երկսեռ) | 1914 թ. (երկսեռ) | Տոկոսական աճումը (կամ նուազումը) 1886—1897 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Թիֆլիս | 78445 | 159590 | 344629 | 103,44 % | 116,00 % | 339,32 % |
| 2. Բաքու | 86611 | 111904 | 248812 | 29,20 » | 122,34 » | 187,27 » |
| 3. Նովորոս. | 6393 | 16897 | 66130 | 166,00 » | 291,38 » | 934,41 » |
| 4. Քութայիս | 22643 | 32476 | 57917 | 43,42 » | 78,34 » | 156,00 » |
| 5. Գանձակ | 20294 | 33625 | 56305 | 65,19 » | 67,45 » | 177,44 » |
| 6. Երևան | 14738 | 29006 | 51286 | 96,81 » | 76,81 » | 248,00 » |
| 7. Բաթում | 14803 | 28508 | 38615 | 90,55 » | 35,44 » | 160,86 » |
| 8. Ղարս | 3939 | 20805 | 30086 | 427,92 » | 44,69 » | 661,26 » |
| 9. Թեմ.-Խ.-Շ. | 2579 | 9214 | 16922 | 257,66 » | 83,66 » | 551,50 » |
| Ընդամենը՝ | 250445 | 442025 | 910702 | 72,50 » | 106,03 » | 262,36 » |

Իսկ նահանգների և շրջանների առհասարակ բոլոր—թւով 31—քաղաքների ընդհանուր ազգաբնակութիւնը նոյն տարեթուերին եղել է.

| 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | Տոկոսական աճումը (կամ նուազումը) 1886—1897 | 1897—1914 | 1886—1914 |
|---|---|---|---|---|---|
| 423562 | 694046 | 1369983[1]) | 61 50 % | 97,40 % | 223.44 % |

Տոկոսական որ մասն է կազմում գլխաւոր քաղաքների ազգաբնակութիւնը բոլոր քաղաքների ազգաբնակութեան մէջ, դա տեսնում ենք հետևեալ տոկոսական թւերից.

| 1886 թուականին | 1897 թուականին | 1914 թուականին |
|---|---|---|
| 59,13 % | 63,69 % | 66,50 % |

[1]) Յիշեցնում ենք, որ վերջին տարեթուի տուեալների մէջ Երևան և Թելաւ քաղաքների բնակիչների թիւը բերուած է ըստ 1916 թ. տուեալների։

*Ինչպէս տեսնում ենք, նահանգական և շրջանային 9 գլխաւոր քաղաքների բնակչութիւնը կազմում է Անդրկովկասի քաղաքային ընդհանուր ազգաբնակութեան կէսից աւելին. և իրաւ, տոկոսային այդ գերազանցող բաժինը քանի գնում, այնքան աւելի ու աւելի է աճում ու մեծանում։ Ի հարկէ, կենտրոնական մեծ քաղաքների տոկոսական բաժինը՝ տուեալ նահանգի քաղաքային ազգաբնակութեան մէջ, շատ աւելի խոշոր է, քան վերոյիշեալ տոկոսներն են։ Այսպէս օրինակ Թիֆլիսի բնակչութեան տոկոսը ողջ նահանգի քաղաքային ազգաբնակութեան մէջ, եղել է այսպէս.* 1886 *թ.* 59,80%, 1897 *թ.* 72,82%, *իսկ* 1914 *թ.* 78,20%։ *Էլ աւելի խոշոր է եղել Բագուի բնակչութեան տոկոսը իր նահանգի քաղ. ազգաբնակութեան մէջ,* 1886 *թ.* 69 04 %, 1897 *թ.* 71,72 %, *իսկ* 1914 *թ.* 81,91 *տոկոս։*

*Ինը գլխաւոր քաղաքների շարքում, ինչպէս երեւում է վերոյիշեալ աղիւսակից, Թիֆլիսից և Բագուից յետոյ երրորդ տեղը բռնում է Նովոբասիյսկ. մի քաղաք, որ երեք տասնամեակ առաջ եղել է իր բնակչութեան թուով միայն եօթներորդը, գերազանցելով միայն Ղարսից և Թեմիր-Խան-Շուրայից։ Վերջինս մինչև այժմ էլ մնացել է ամենափոքրը բոլոր գլխաւոր քաղաքների մէջ։ Չորրորդ գլխաւոր քաղաքը իր բնակչութեան թուով կազմում է Քութայիսը, այնուհետև միայն հետևում են Գանձակը, Երեւանը և այլն։*

*Սակայն մենք չենք ուզում բաւականանալ միայն քաղաքների ազգաբնակութեան տեսութեամբ։ Մի փոքրիկ գաղափար կազմելու համար մեր ծայրերկրի խուլ անկիւնների ազգաբնակչական վիճակի մասին, հարկ ենք համարում թուել ստորև մի շարք գիւղաքաղաքներ ու աւաններ իրանց բնակիչների թուով և կրած փոփոխութիւններով յայտնի տարեթուերին։*

*Գիւղաքաղաքների և աւանների ազգաբնակութիւնը.* [1])

| | 1886 | 1897 | 1910/14 *թ.* [2]) | *Տոկոսական աճումը (կամ նուազումը)* 1886—1897 | 1897—1910/14 | 1886—1910/14 |
|---|---|---|---|---|---|---|
| | *երկ.* | *երկ.* | *երկ.* | | | |
| 1. *Շուլավ.* | 3297 | 4553 | 7683 | 38,09 % | 68,74 % | 133,00 % |
| 2. *Թիօն.* a) | 1331 | 1089 | 1255*) | —22,22 » | 15,24 » | —6,05 » |
| 3. *Արդուին* | 6442 | 7091 | 8419 | 10,07 » | 18,71 » | 30,53 » |
| 4. *Զուգդիդ* | 1078 | 3407 | 4500*) | 216,04 » | 32,08 » | 317,53 » |
| 4. *Ցագերի* | 659 | 687 | 849 | 4,00 » | 23,60 » | 29.00 » |
| 6. *Օնի* | 860 | 1255 | 1645*) | 41,00 » | 31,07 » | 91,30 » |
| 7. *Նոր-Սեն.* | 101 | 1248 | 4491*) | 1135.64 » | 260,00 » | 4344,55 » |
| 8. *Կվիրիլի* b) | 139 | 2010 | 3380*) | 1146,00 » | 68,15 » | 2331,64 » |
| 9. *Իգդիր* | 2912 | 4680 | 4315*) | 60,71 » | —8,45 » | 48,52 » |
| 10. *Բաշ-Նոր.* | 386 | 867 | 784*) | 124,61 » | —10,60 » | 103.11 » |
| 11. *Վաղր.* c) | 3422 | 5267 | 6972*) | 54,00 » | 32,37 » | 103,03 » |

[1]) *Այստեղ բերուած են այն գիւղաքաղաքները, աւանները, ինչպէս և գիւղերը, որոնք համարւում են կառավարութեան գաւառական ներկայացուցիչների (ադմինիստրացիայի) կենտրոններ։*

[2]) *Այն թուերը, որոնց վրայ աստղանիշ* (*) *է դրուած, վերաբերում են 1910 թ. տուեալներին (տես* «Города Россіи въ 1910 году» *հրատ. 1914 թ. Կենտ. Ստատ. Կոմ., եր. 889 և յաջ.)։*

a) № *1—2 Թիֆլիսի նահանգում.* b) № 3—*8 Քութայիսի նահանգում.* c) № *9—11*

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 12. Աղդաշ | — | 528 | 5127*) | — | 871,00 » | — |
| 13. Ջեբրայիլ | — | 550 | — | — | — | — |
| 14. Տէրտէր | — | 752 | 468 | — | —60,70 » | — |
| 15. Գօրիս | 3146 | 1450 | 2311*) | —117,00 » | 60,00 » | —36,13 » |
| 16. Ղազախd) | — | 1769 | 1192*) | — | —48,40 » | — |
| 17. Գեօքչայ | 642 | 2201 | 4034 | 244,00 » | 83,00 » | 528,30 » |
| 18. Սալ.e) | 12121 | 11787 | 17465 | —2,83 » | 49,00 » | 45,68 » |
| 19. Խունզ. | 1741 | 1587 | 1616 | —9,70 » | 1,83 » | —7,70 » |
| 20. Բոտլիխ | 1105 | 1225 | 1172*) | 10,86 » | —4,52 » | 6,06 » |
| 21. Գունիբ | — | 685 | 163*) | — | —320,24 » | — |
| 22, Լեվաշի | 1188 | 1343 | 2558*) | 13,00 » | 90,00 » | 116,00 » |
| 23. Կումուխ | 2900 | 621 | 2558*) | —367,00 » | 312,00 » | —13,40 » |
| 24. Մաջալիս | 1481 | 1327 | 1126*) | —11,77 » | —17,85 » | —31,52 » |
| 25. Կաս.-Բ. | 580 | 1013 | 741*) | 73,00 » | —34,81 » | 28,00 » |
| 26. Ախտաf) | 5935 | 3190 | 6567*) | —86,05 » | 105,86 » | 10,50 » |
| 27. Տուապսէ | — | 1392 | 16158 | — | 1060,77 » | — |
| 28. Սօչիg) | — | 1352 | 17611 | — | 1202,60 » | — |
| 29. Արդահան | 778 | 4142 | 4113 | 432,40 » | —0,67 » | 426,69 » |
| 30. Կաղզվ. | 3435 | 10518 | 11145 | 206,20 » | 15,27 » | 224,45 » |
| 31. Օլթիh) | 673 | 2573 | 3258¹) | 252,60 » | 37,30 » | 384,10 » |
| Ընդամենը՝ | 56352 | 81929 | 143676 | 45,39 » | 75,36 » | 155,00 » |

Կարծես 31 քաղաքների ազգաբնակութեան առաջխաղացման մի փոքրիկ, մինիատիւր պատկերն է 31 գիւղաքաղաքներից և աւաններից բաղկացած այս աղիւսակը, թէև, անտարակոյս, նւազման դէպքերի մեծ թւով ու չափերով յիշեալ աղիւսակը աւելի շուտ ճշգրիտ արտայայտութիւնն է գաւառների ազգաբնակութեան շարժման, նրա տատանումներով աճման ընթացքին։ Աճման նոյն արտակարգ արագութիւնը, ինչ տեսանք Սև-ծովեան նահանգի և Ղարսի շրջանի ներքին գաւառական-շրջանային մասերում, նոյնը գտնում ենք այստեղ նրանց պատկանող գիւղաքաղաքներում։ Կամ նւազման այն մեծաչափ և յաճախակի դէպքերը, ինչ տեսանք Դաղստանի շրջանում, նոյնը անդրադառնում է այստեղ նրա գիւղաքաղաքների և աւանների վրայ։

Իր բնակչութեան թւով ամենամեծ գիւղաքաղաքը Անդրկովկասում եղել է մօտ 30 տարի առաջ Սալիանը (Բագւի նահանգում)։ Առաջնութեան՝ այդ դիրքը պահպանել է նա մինչև երկրորդ տարեթիւը 1897 թ., 1914 թ. արդէն նա զիջում է իր տեղը Սօչի գիւղաքաղաքին (Սև-ծովեան նահանգում) և ինքը բռնում է միայն երկրորդ տեղը։ Եթէ ըստ մեծութեան իրար յետևից դասաւորենք այն գիւղաքաղաքներն աւանները, որոնցից իւրաքանչիւրը ունեցել է մօտ 3000 և աւելի բնակիչներ, կը գտնենք հետևեալ փոփոխութիւնները տարեշրջանների.

Երևանի նահանգում։ d) № 12—16 Գանձակի նահանգում։ e) 17—18 Բագւի նահանգում։ f) № 19—26 Դաղստանի շրջանում։ g) № 27—28 Սև-ծովեան նահանգում։ h) № 29—31 Ղարսի շրջանում։

¹) Թւական բացարձակ տւեալները տես յիշած աղբիւրների մէջ նահանգների և շրջանների համապատասխան մասերը։

**1886 Թուականին**

1. Սալիան
2. Արդուին
3. Ախտա
4. Կաղզուան
5. Վաղարշապատ
6. Շուլավեր
7. Գորիս
8. Իգդիր

**1897 Թուականին**

1. Սալիան
2. Կաղզուան
3. Արդուին
4. Վաղարշապատ
5. Իգդիր
6. Շուլավեր
7. Արդահան
8. Զուգդիդ
9. Ախտա

**1914 Թուականին**

1. Սօչի
2. Սալիան
3. Տուապսէ
4. Կաղզուան
5. Արդուին
6. Շուլավեր
7. Վաղարշապ.
8. Ախտա
9. Աղդաշ
10. Նոր-Սեն.
11. Զուգդիդ
12. Իգդիր
13. Արդահան
14. Գեօկչայ
15. Կվիրիլ
16. Օլթի

Սրանք 31 գիւղաքաղաքների մէջ ամենից մեծերն են. ըստ իրանց բնակիչների թուի և ըստ մեծութեան դասաւորուած են նրանք այս երեք շարքերում։ Ամեն մի գիւղաքաղաքի բռնած տեղի փոփոխութիւնը պարզ նկատւում է ընդհանուր համակարգութեան մէջ։ Երկու շարքերում առաջին տեղը գրաւող Սալիանը, երրորդ շարքում բռնել է երկրորդ տեղը։ Արդուինը առաջին շարքում կամ առաջին տարեթուին բռնում էր երկրորդ տեղը, մինչդեռ երկրորդ շարքում անցել է նա երրորդ համարը, իսկ երրորդ շարքում 5 րդ համարը։ Առաջին շարքում Ախտան կազմում է № 3-ը, երկրորդ շարքում № 9-րդը, իսկ երկրորդ շարքում № 8-րդը։ Կաղզուանը առաջին շարքում բռնում էր № 4 րդ, երկրորդ շարքում № 2-րդ, երրորդ շարքում կրկին № 4-րդը։ Վաղարշապատը առաջին շարքում կազմում է № 5-րդ, երկրորդ շարքում № 4 րդը, իսկ երրորդ շարքում № 7-րդը։ Շուլավերը անփոփոխ պահպանել է իր № 6-րդը բոլոր շարքերում։ Գորիսը առաջին շարքում բռնում է 7-րդ տեղը, իսկ միւս շարքերում անյայտանում է, որովհետև նրա բնակչութեան թիւը իջնում է հետզհետէ 3000-ից։ Իգդիրը առաջին շարքում բռնում 8-րդ կամ վերջին տեղը, երկրորդ շարքում գրաւում է 5 րդ համարը, իսկ երրորդ շարքում նորից հեռանում է և բռնում միայն 12 րդ տեղը։ Եւ այդպէս շարունակ։ Վեր ու վար ալիքներ են դրանք, որոնց ուղղութեամբ առաջադիմում և նահանջում, աճում ու նուաղում են գիւղաքաղաքները իրանց բնակիչների թուով։

Եթէ մենք համեմատենք իրար հետ նահանգական և շրջանային գլխաւոր քաղաքների, առհասարակ բոլոր քաղաքների և այս գիւղաքաղաքների ու աւանների ազգաբնակութեան աճման տոկոսները, կը գտնենք հետևեալ ուշադրաւ տարբերութիւնները։

| | 1886—1887 թ. | 1897—1914—թ. | 1886—1914 թ. |
| --- | --- | --- | --- |
| Գլխաւոր քաղաքներում | 72,50 տոկոս | 106,03 տոկոս | 262,36 տոկոս |
| Բոլոր քաղաքներում | 61,50 » | 97,40 » | 223,44 » |
| Գիւղաքաղաք. և աւաններում | 45,39 » | 75,36 » | 155,00 » |

Ստատիստիկան գալիս է մաթեմատիկական ճշտութեամբ ապացուցելու և հիմնաւորելու այն երևոյթները, որ տնտեսական կեանքի բնականոն զարգացման տենդենցներն են արտայայտում. Ըստ այդ տենդենցների, Նորագոյն քաղաքը՝ իր տնտեսական կեանքի բարգաւաճման թափով. իր հաղորդակցութեան կենդանի յարաբերութիւններով. իր լուսաւորութեան առաջադիմութեամբ և կուլտուրական բազմազան ֆունկցիաների կենտրոնացումով պէտք է անհրաժեշտօրէն արտակարգ արագութեամբ աճէ ու մեծանայ իր բնակիչների թուով, ի հաշիւ գաւառական քաղաքների, գիւղաքաղաքների և գիւղերի բնակչութեան. Նրան աւելի նուազ չափերով հետևում է գաւառական քաղաքը և էլ աւելի նուազ չափերով գիւղաքաղաքը՝ վարչական մանր կենտրոնը. Վերոյիշեալ տոկոսները պարզ ապացոյցներ են ասածներիս. Վերջին հաշուով գիւղն է շարունակական արտագաղթի ենթական. Նա է, որ անընդհատ մարդկային հում պաշար է մատակարարում գլխաւոր և երկրորդական քաղաքներին ի հաշիւ իր ազգաբնակչական բնական աճման.

Մենք վերջացրինք աշխատութեանս առաջին մասի առաջին գլուխը. Ըստ կարելոյն լրիւ չափերով և հաւասար ուշադրութեամբ պարզեցինք ընթերցողի առաջ Անդրկովկասի ազգաբնակութեան թուական մեծութիւնը՝ իր ազգաբնակչական կաթեգորիաներով և տերիտորիական բոլոր հնարաւոր բաժանումներով--ըստ քաղաքային և գաւառային կաթեգորիաների, ըստ նահանգների, գաւառների, քաղաքների և գիւղաքաղաքների. Թուական բացարձակ տուեալներով և, որ գլխաւորն է, տոկոսական աստիճանացոյցերով ցոյց տուինք ազգաբնակութեան շարժման պրոցեսը, ինչպէս և սեռերի թուական յարաբերութիւնների դասաւորութիւնը երեք տասնամեակի ընթացքում, մատնանշելով ազգաբնակչական ամբողջութեան և նրա ստորաբաժան հատուածների առաջխաղացման տենդենցները.

## II. ԳԼՈՒԽ

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԳԼԽԱՒՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԵՐԵՔ ՏԱՐԵՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

*Անդրկովկասի գլխաւոր ժողովուրդները՝ ռուսներ, հայեր, վրացիներ և մուսուլմաններ։—Նրանց թիւը, տոկոսական յարաբերութիւնները և աճումը առհասարակ Անդրկովկասում։—Հայերի և վրացիների թւական մրցակցութիւնը։—Աճման տեմպի տարբերութիւնները։—Ռուսների գերազանց արագ աճումը։—Սեռերի թւական յարաբերութիւնները չորս ժողովուրդների մօտ։—Ժողովուրդների քաղաքային և գաւառական ազգաբնակութիւնը։—Հայերի քաղաքային ազգաբնակութեան գերազանցումը։—Քաղաքային և գաւառական ազգաբնակութեան տոկոսական բաժինը և աճումը։—Սեռերի թւական յարաբերութիւնները քաղաքային և գաւառական ազգաբնակութեան մէջ։—Գլխաւոր ժողովուրդները նահանգներում և շրջաններում։—Նրանց թւական խտացումների կենտրոնները։—Համեմատութիւններ աւելի վաղ տարեթւերի տւեալների հետ։—Ժողովուրդների տոկոսական մասնակցութիւնը նահանգական-շրջանային ընդհանուր ազգաբնակութեան մէջ։—Նրանց տոկոսական աճումը բոլոր տարեշրջաններում։—Տարեկան աճումը երեսնամեայ շրջանում։—Սեռերի թւական յարաբերութիւնները նահանգներում և շրջաններում։—Ժողովուրդները գաւառներում և շրջաններում առանձին-առանձին։—Թիֆլիսի նահանգի գաւառներում։—Թիւը, տոկոսական մասնակցութիւնը և աճումը։—Վիճակագրութեան սխալ տւեալները հայերի վերաբերեալ Թիֆլիսի նահանգի գաւառներում։—Բացատրութիւններ և ուղղագրումներ։—Քութայիսի նահանգի գաւառներում. թւական մեծութիւնը տոկոսական մասնակցութիւնը և աճումը։—Երևանի նահանգի գաւառներում. թւական մեծութիւնը, տոկոսական մասնակցութիւնը և աճումը։—Գանձակի նահանգի գաւառներում. թիւը, տոկոսական մասնակցութիւնը և աճումը։ Բագւի նահանգի գաւառներում. թիւը, տոկոսական մասնակցութիւնը և աճումը։—Սև-ծովեան նահանգի շրջանամասերում (*округи*). թիւը, տոկոսական մասնակցութիւնը և աճումը։—Դաղստանի շրջանի շրջանամասերում. թիւը, տոկոսական մասնակցութիւնը և աճումը։—Ղարսի շրջանի շրջանամասերում. թւական մեծութիւնը, տոկոսական մասնակցութիւնը և աճումը։—Ժողովուրդները Անդրկովկասի քաղաքներում։—Թիֆլիսի նահանգի քաղաքներում. թիւը, տոկոսական մասնակցութիւնը աճումը և սեռերի թւական յարաբերութիւնները։—Հայերի և վրացիների թւական յարաբերութիւնները Թիֆլիսում ամենավաղ ժամանակներից—Քութայիսի նահանգի քաղաքներում. թիւը, տոկոսական մասնակցութիւնը, աճումը և սեռերի թւական յարաբերութիւնը։—Երևանի նահանգի քաղաքներում. թիւը, տոկոսական մասնակցութիւնը, աճումը և սեռերի թւական յարաբերութիւնները։—Գանձակին ահանգի քաղաքներում. թիւը, տոկոսական մասնակցութիւնը, սեռերի թւական յարաբերութիւնները։—Բագւի նահանգի քաղաքներում, թիւը, տոկոսական մասնակցութիւնը, աճումը և սեռերի թւական յարաբերութիւնները։—Սև-ծովեան նահանգի*

քաղաքներում. Թիւը, տոկոսական մասնակցութիւնը սեռերի թւական յարաբերութիւնը.—Դաղստանի շրջանի քաղաքներում, Թիւը, տոկոսական մասնակցութիւնը, աճումը և սեռերի թւական յարաբերութիւնները.—Ղարսի շրջանի քաղաքներում. Թիւը, տոկոսական մասնակցութիւնը, աճումը և սեռերի թւական յարաբերութիւնները.—Ժողովուրդների աճման տոկոսները նահանգական և շրջանային գլխաւոր քաղաքներում.—Ժողովուրդների աճման տոկոսները գիւղաքաղաքներում, աւաններում և գիւղերում.—Տոկոսական համամփոփումների ընդհանուր աղիւսակներ.

1.

## ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Թւական այն տւեալներն ու գործողութիւնները, որ մենք ցոյց տըւինք I գլխում Անդրկովկասի ընդհանուր ազգաբնակութեան վերաբերմամբ, նոյնը պիտի ցոյց տանք II գլխում Անդրկովկասի գլխաւոր ժողովուրդների նկատմամբ՝ դարձեալ նոյն տարեշրջանների ընթացքում. Գլխաւոր ժողովուրդներ համարում ենք Անդրկովկասում, տեղացիներից՝ վրացիներ, հայեր, եւ մուսուլմաններ առհասարակ (որոնց մէջ հիմնական և գերիշխող էլեմենտը կազմում են Թուրք-Թաթարներ), իսկ ոչ տեղացիներից՝ ռուսներ, ի հարկէ, ռուսութիւնը իր քանակով պատկառելի տեղ չի գրաւում Անդրկովկասում, թէև թւած երեք ժողովրդական հատւածներից (վրացիներ, հայեր և մուսուլմաններ) յետոյ ռուսները ամենից բազմաթիւ են ցրւած մանր ժողովուրդների մէջ. Բայց անկախ դրանից, միայն քանակով չէ մի ժողովրդի տեղն ու նշանակութիւնը որոշւում. Ռուս տարրը իր քաղաքական իշխանութեամբ, իբրև տիրապետող ազգատոհմ, և իր կուլտուրական ազդեցութեամբ առաջին տեղն է բռնում մեր ծայր երկրում. Իբրև այդպիսին առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում այդ եկւոր տարրի թւական յարաբերութիւնները և նրա ամփոփումներն ու բաժանումները տեղացիների կողքին.

Ռուսների, հայերի և վրացիների վերաբերմամբ, ինչպէս նկատել ենք առաջաբանում, պահպանել ենք ազգային պատկանելութեան ընդհանուր սկզբունքը, կրիտերիում ընդունելով ազգային ընդհանուր լեզուն (ոչ ժողովրդական բարբառը), առանց դաւանական և ազգագրական խտրութեան. Մինչդեռ մուսուլմանների նկատմամբ, ինչպէս անունն էլ ցոյց է տալիս, կրիտերիում ընդունել ենք կրօնական ընդհանուր պատկանելութիւնը համախմբելով ժողովուրդների մի ամբողջ կօնգլօմերատ մուսուլմանական ընդհանուր անւան շուրջը. դա գործնական նշանակութեան տեսակէտից միակ հեշտ եղանակն է, որի մասին հարկաւոր բացատրութիւնները տւինք մենք յառաջաբանի մէջ.

Տեսնենք այժմ, թէ ինչ թիւ են ներկայացնում յիշած ժողովուրդները Անդրկովկասում.

| | ՌՈՒՍՆԵՐ | | | ՀԱՅԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| տարեթիւեր | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886 թ.[1] | 65934 | 56323 | 122457 | 510546 | 428585 | 939131 |
| 1897 թ.[2] | 183793 | 113961 | 297754 | 573228 | 513752 | 1086980 |
| 1914 թ.[3] | 334328 | 254269 | 588597 | 908660 | 777276 | 1685936 |
| | ՎՐԱՑԻՆԵՐ | | | ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ[4] | | |
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886 թ. | 641330 | 559936 | 1201266 | 1197369 | 1001926 | 2199295 |
| 1897 թ. | 696661 | 645788 | 1342449 | 1340022 | 1171226 | 2511248 |
| 1914 թ. | 925235 | 813482 | 1741717 | 1655093 | 1433144 | 3089237 |

Առաջին իսկ հայեացքից պարզ երեւում է, թէ որ ժողովրդական տարրն է քանակական խոշոր տեղ գրաւում մեր ծայրերկրում. դա մահմեդականութեան յարած ժողովուրդներն են, որոնք միասին վերցրած թէև բացարձակ մեծամասնութիւն չեն կազմում միւս ժողովրդների ամբողջութեան հանդէպ, բայց և այնպէս յարաբերական մեծամասնութիւն են կազմում ոչ միայն միացած ժողովուրդներից ամեն մէկի հանդէպ առանձին, այլև նրանցից երկուսի դէմ միասին վերցրած, օրինակ՝ ռուսների և հայերի կամ ռուսների և վրացիների հանդէպ։ Միւս կողմից թւով ամենահամեստ

---

[1]) Տես „Сводъ стат. данныхъ о насел. Закавк. края" բոլոր նահանգների և շրջանների տուեալները ռուսների, հայերի, վրացիների և մուսուլմանների մասին.

[2]) Տես „Первая всеоб. переп. насел. Рос. имп. 1897 г." Անդրկովկ. նահ. և շրջ. մասին բոլոր ութ հատորների XII և XIII աղիւսակները յիշեալ ժողովուրդների մասին.

[3]) Տես «Кавк. Кал.» հրատ. 1915 թ., ստատիստ. բաժինը վերոյիշեալ ժողովուրդների մասին. Յիշեցնում ենք, որ մահմեդական վրացիները չեն մտնում մահմեդականութեան ընդհանուր խմբի մէջ, այլ միացրուած են վրացիների (քարթվելցիների) հետ.

[4]) Անդրկովկասի մահմեդականների մեծ մասը կազմում է թաթարական (Ադրբէյջանի) տարրը. Հետաքրքրական է իմանալ, թէ ինչ թւական մեծութիւն է կազմում թաթարականութիւնը անդրկովկասեան մահմեդականութեան մէջ. 1886 թ. թաթարների թիւը եղել է 1139659 հոգուց բաղկացած, որ կազմել է բոլոր մահմեդականների ընդհանուր թւի մօտ 52 տոկոսը. 1897 թ. թաթարների թիւը հաւասար է եղել 1472234 հոգու կամ կազմել է ողջ մուսուլմանութեան 58,63 տոկոսը. Նշանակում է քանի գնում, այնքան մուսուլման բազմազան էլեմենտների (որոնցից յիշելու են, բացի թաթարներից, թուրքեր, քրդեր, պարսիկներ, թաթեր, թալըշինցիներ, թիւրքմեններ, կարափափախցիներ, չէրքեզներ, չեչեններ և ուրիշները) ընդհանուր թւի մէջ աւելի ու աւելի է ուժեղանում թաթարական տարրի թւական մասնակցութիւնը. Դժբախտաբար 1914թ. աղիւսակը չի հաղորդում մեզ յատուկ տուեալներ ըստ էթնիկական տարրերի կամ ըստ մայրենի բարբառի, այնպէս որ այդ թւականի վերաբերեալ բաւականանում ենք միայն մուսուլմանների ընդհանուր թւով.

տեղը Անդրկովկասում բռնում են ռուսները, որոնք, սակայն, ինչպէս ստորև կտեսնենք, շատ աւելի արագ են աճում, քան միւս ժողովուրդները։

Ինչ վերաբերում է հայերին և վրացիներին, ապա վերջինները, անշուշտ, թւով գերակշռել են միշտ առաջիններին և բռնել երկրորդ տեղը մուսուլմաններից յետոյ։ Սակայն պէտք է նկատել, որ այդ գերակշռութիւնը եղել է աննշան տարբերութեամբ և քանի գնացել, այնքան աւելի ու աւելի փոքրացել է այդ տարբերութիւնը։ Հայերն ու վրացիները գտնուել են, մի տեսակ, թւական մրցակցութեան մէջ։ Ամբողջ Կովկասում վերցրած հայերի և վրացիների թւական տարբերութիւնները աւելի են փոքրանում[1])։ Իսկ Անդրկովկասում, եթէ մի կողմից այլադաւան հայերը չհաշւենք հայ լուսաւորչականների հետ, իսկ միւս կողմից մահմեդական աջարացիները չհաշւենք ուղղափառ վրացիութեան հետ, կստանանք մի այնպիսի յարաբերութիւն, ուր հայերի և վրացիների թւական տարբերութիւնները դարձեալ իջնում են մինչև մինիմում նաև Անդրկովկասում։[2]) Վրացիների և հայերու թւական յարաբերութիւնները՝ սկսած աւելի վաղ տարեթւերից, ենթարկուել են զանազանակերպ փոփոխութիւնների[3])։

---

[1]) Ըստ 1914 թ. տւեալների ամբողջ Կովկասում եղել են՝ հայեր 1732719 հոգի (932933 արակ. ս., 799786 իգակ. ս.), իսկ վրացիներ 1744403 հոգի (926657 ար., 817746 իգ. ս.)։ Վրացիները գերազանցում են հայերից ընդամէնը 11684 հոգով։

[2]) Նոյն թւականի տւեալներով հայ լուսաւորչականների թիւը Անդրկովկասում եղել է 1619620 հոգի (դրանցից 872470 հոգի ար. ս., 747150 հ. իգ. ս.)։ Իսկ ուղղափառ կամ աւելի ճիշտ առհասարակ քրիստոնեայ վրացիների թիւը եղել է 1633947 հոգի (որանցից 868317 հ. ար. ս., 765630 հ. իգ. ս.)։ Ուրեմն վրացիները գերազանցում են հայերից ընդամէնը 14327 հոգով։ Բնորոշ է այն հանգամանքը, որ հայերի մէջ արական սեռը աւելի է վրաց. արակ. սեռից 4153 հոգով, իսկ վրաց. իգակ. սեռը, ընդհակառակը, գերազանցում է հայ իգ. ս. 18480 հոգով։

[3]) Մեր ձեռքի տակ կան պաշտօնական աղբիւրներից տւեալներ, որոնք վերաբերում են 1834 թ. «по камеральному описанію». Անդրկովկասի այն բոլոր գաւառներում, որոնք ենթարկուել են այն ժամանակ ռուսական տիրապետութեան, պաշտօնական աղբիւրը հաշւում է 189743 վրացիներ արական սեռից (ժամանակաւոր բերուած են տւեալներ միայն արական սեռից), իսկ հայեր 134867 հոգի արակ. սեռից։ Աւելացնենք, որ այստեղ էլ ի մի ենք խմբել քարթվելցիների բոլոր մեծ ու մանր գաւառները։ Ուրեմն 1834 թւականի տւեալներով վրացիները գերազանցել են հայերից 54876 հոգով կամ հայերը կազմել են ամբողջութեան 41,30 տոկոս (Տւեալները տես. «Обозрѣніе Россійскихъ владѣній за Кавказомъ», Պետերբուրգ, 1836 թ. հատոր.—IV-րդ հատորի վերջում, «Общая таблица».)։—Երկրորդ տւեալները դարձեալ պաշտօնական աղբիւրներից (VII т. Сборн. свѣд. о Кавказѣ на основаніи камеральнаго описанія 1871—1874 г.) վերաբերում են 1874 թ., այսինքն 40 տարի յետոյ առաջին տւեալներից։ Ըստ դրանց վրացիների (երկսեռ) թիւը Անդրկովկասում հաւասար է եղել 878673 հոգու, իսկ հայերինը՝ 711960 հ. (երկսեռ). (տես տւեալները "Кав. Кал. на 1886 г." Տփխ. 1885 թ., 214). Նշանակում է վրացիները գերազանցել են հայերից 166713 հոգով, կամ հայերը կազմել են հայ-վրացական թւական ամբողջութեան 44,76 տոկոսը (իսկ վրացիները՝ 55,24 տոկ.)։ 1886 մեզ արդէն յայտնի տարեթւերին վրացիները գերազանցում են հայերից 262135 հոգով, կամ հայերը կազմում են ամբողջութեան 43,87 տոկոս։ Նախընթաց

Մեզ հետաքրքրում է այժմ ամենից առաջ այն հարցը, թէ վերոյիշեալ չորս գլխաւոր ժողովրդները ինչ տոկոսական բաժինն են կազմել Անդրկովկասի ընդհանուր ազգաբնակութեան։ Հետեւեալ տոկոսները պարզում են մեզ այդ յարաբերութիւնները։

| | ՌՈՒՍՆԵՐ | | | ՀԱՅԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886 թ. | 2,58°/° | 2,56% | 2,57% | 20,02% | 19,90% | 20,00% |
| 1897 թ. | 6,17 ,, | 4,42 ,, | 5,00 ,, | 19,21 ,, | 19,90 ,, | 19,54 ,, |
| 1914 թ. | 8,16 ,, | 7,56 ,, | 7,75 ,, | 22‚15 ,, | 22,25 ,, | 22,20 ,, |

| | ՎՐԱՑԻՆԵՐ | | | ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886 թ. | 25,15% | 26,00% | 25,54°/° | 47,00% | 46,53% | 4[illegible],78% |
| 1897 թ. | 23,35 ,, | 25,03 ,, | 24,13 ,, | 44,91 ,, | 45,01 ,, | 45,14 ,, |
| 1914 թ. | 22,56 ,, | 23,38 ,, | 22,81 ,, | 40,36 ,, | 41,03 ,, | 40,78 ,, |

Բոլորի տոկոսական մասնակցութիւնը միասին վերցրած ստանում ենք.

| | արական | իգական | միասին |
|---|---|---|---|
| 1886 թ. | 94,75% | 94,99% | 94,92% |
| 1897 թ. | 93,64 ,, | 94,36 ,, | 93,81 ,, |
| 1914 թ. | 93,23 ,, | 94,22 ,, | 93,54 ,, |

Հետաքրքրական պատկեր են պարզում այս աղիւսակները մեր առաջ։ Ամենից առաջ աչքի է զարնում ռուս տարրի տոկոսական բաժնի արագափոյլ աճումը. 1886 թ., ասել է մօտ երեսուն տարի առաջ, ողջ ռուսութիւնը[1]) կազմում էր Անդրկովկասի ընդհանուր ազգաբնակութեան միայն 2,57 տոկոս, իսկ 1914 թ. այդ տոկոսը հասել է արդէն 7,75 տոկոսի (արական սեռը նոյն իսկ 8,16 տոկոսի)։ Հայ ժողովուրդը կազմել է առաջին տարեշրջանում ողջ ազգաբնակութեան ուղիղ 1/5 մասը (20 տոկոս). 1897 թ. նրա տոկոսական բաժինը չնչին նուազումով (0,46 տոկոսով) իջնում է մինչեւ 19,54 տոկոսի, թէեւ իգական սեռի տոկոսը մնում է միեւնոյն բարձրութեան վրայ։ 1914 թ. արդէն հայերի տոկոսական մասնակցութիւնը նորից բարձրանում է, և իրաւ աւելի մեծ չափով (գրեթէ 3 տոկոսով) և հասնում է 22,20 տոկոսի, նշանակում է աւելի, քան 1/5 մասը Անդրկով-

տարեթուին՝ 1874 թ., աջարացի ժամանակ. վրացիները չէին մտնում դեռ վրացիների թուի մէջ. իսկ 1886 թ. մտնում էին, դրա համար նրանց գերազանցումը ուժեղանում է։ Յաջորդ տարեթուերին արդէն նորից թուլանում է այդ գերազանցումը. այսպէս 1897 թ. վրացիները գերազանցում էին հայերից 255469 հոգով, կամ հայերը կազմում էին ամբողջութեան 44,91 տոկոս (վրացիները՝ 55,09 տոկոս)։ 1914 թ. վրացիները գերազանցում էին միայն 56781 հոգով, կամ հայերը կազմում էին 49,18 տոկոս (վրացիները՝ 50,82 տոկոս)։ Այսպէս ուրեմն, հայերի և վրացիների տոկոսական փոխյարաբերութիւնները եղել են յիշեալ հինգ տարեթուերին հետեւեալ կերպով. 1834 թ. 41,30 տոկոս : 58,70 տ., 1874 թ. 44,76 տ. : 55,24 տ., 1886 թ. 43,87 տ. : 56,13 տ., 1897 թ. 44,91 տ. : 55 09 տ. և վերջապէս 1914 թ. 49,18 տ. : 50,82 տ.։ Ինչպէս տեսնում ենք, հայերը արագ աճումով մօտեցել են վրացիների թուական բարձրութեան։ Անման այդ տենդենցները կտեսնենք մենք ուրիշ կապակցութեան մէջ։

[1]) Ողջ ռուսութեան տակ մտնում են ոչ միայն ռուսութեան երեք հատուածները՝ վելիկօռուսներ, մալօռուսներ և բելօռուսներ, այլև ռուս աղանդաւորները։

կասի ողջ ազգաբնակութեան։ Այլ փոփոխութիւնների են ենթարկւել վրացիների տոկոսական յարաբերութիւնները. Նրանց տոկոսակ. բաժինը շարունակ իջել է առաջին տարեթուից մինչև վերջինը. առաջ վրացիները կազմում էին աւելի քան 1/4 մասը (25,54 տոկոսը) Անդրկովկասի ազգաբնակութեան։ 1897 թ. իջնում է այդ տոկոսական բաժինը մինչև 24,13 տոկոսը, իսկ 1914 թ. հասնում է միանգամից մինչև 22,81 տոկոս, աննշան տարբերութեամբ հաւասարւելով համարեա հայերի տոկոսական մասնակցութեան՝ 22,20 տոկոս։ Վրացիների տոկոսը շարունակ իջել է, հայերինը բարձրացել է, մինչև նրանք եկել ու չափազանց մօտեցել են իրար թւական յարաբերութեամբ։ Այսպիսով, մենք հասանք միևնոյն եզրակացութեան տարբեր կապակցութեան մէջ։ Ինչ վերաբերում է մուսուլմաններին, նրանց տոկոսական բաժինը եւ իջել է շարունակ, և իրաւ աւելի մեծ չափերով։ 1886 թ. ողջ մահմեդականութիւնը[1]) կազմել է Անդրկովկասի համայն ազգաբնակութեան ոչ պակաս քան 46,78 տոկոսը (արական սեռը նոյն իսկ 47,00). դա ամենամեծ տոկոսական բաժինն է. աւելի մեծ, քան հայերի և վրացիների տոկ. բաժինները միասին վերցրած (20,00 տոկոս և 25,54 տոկոս)։ Տասն և մէկ տարի յետոյ (1897 թ.) մահմեդականների այդ յարաբերական խոշոր մասնակցութիւնը իջնում է իր բարձրութիւնից աւելի քան մէկ ու կէս տոկոսով և հասնում է 45,14 տոկոսի. դարձեալ աւելի մեծ, քան հայերի և վրացիների տոկոսները միասին վերցրած (19,54 տոկոս. և 24,13 տոկոս.)։ Իսկ 17 տարուց յետոյ յարաբերութիւնները փոխւում են զգալապէս. մահմեդականների տոկոսն էլ աւելի է իջնում, մինչև 40,78 տոկ. և այս անգամ արդէն նահանջում է հայերի և վրացիների տոկոսական բաժինների առաջ (22,20 տոկոս և 22,81 տոկ.) աւելի քան 4 տոկոսով։

Ընդհանուր առմամբ դուրս է գալիս, որ աճել է միայն ռուսների և հայերի յարաբերական մասնակցութիւնը կամ տոկոսական բաժինը ծայրերկրի ընդհանուր ազգաբնակութեան մէջ, մինչդեռ վրացիներինը և աւելի մեծ չափերով մահմեդականներինը նւազել է։ Իսկ թւած չորս ժողովուրդները միասին վերցրած կազմում են արդէն բացարձակ գերիշխող մեծամասնութիւնը Անդրկովկասի ողջ ազգաբնակութեան։ Այդ մեծամասնութիւնը եղել է՝ 1886 թ. 94,92 տոկոս, 1897 թ. 93,81 տոկոս, իսկ 1914 թւին 93,54 տոկոս։ Մօտ երեսուն տարւայ ընթացքում գերիշխող մեծամասնութիւնը նւազել է ընդամենը 1,38 տոկոսով։ Ժողովրդական մնացած տարրերը ներկայացնում են բազմաթիւ մանր գրուպպաներ [2]), որոնց տոկոսա-

1) Ողջ մահմեդականութեան տակ հասկանում ենք՝ բացի մահմեդ. վրացիներից, մնացած բոլոր մահմեդական ժողովուրդները անխտիր, հաշւած նաև լեռնականները, 'ի հարկէ այնքան, որքան ապրում են Անդրկովկասում,

2) Բացի մեզ յայտնի չորս գլխաւոր ժողովուրդներից, Անդրկովկասում կան օսետիններ, եզիդներ, ցիգաններ, յոյներ, հրէաներ և այլ սլաւոնական ու եւրոպական բազմատարր գրուպպաներ, որոնց թիւը զգալի արագութեամբ աճում է, իբրև շարունակ ներգաղթող էլեմենտ։ Հետաքրքրական է իմանալ, թէ ինչ արագութեամբ են աճել այդ եկւոր տարրերը Անդրկովկասում մօտ երեսուն տարւայ ընթացքում (1886—1914 թ.)։ Այսպէս օրինակ ռուսութիւնից դուրս մնացած սլաւոնների (բոլգարներ, լեհեր, չեխեր և այլն) և բոլոր եւրոպական էլեմենտների ընդհանուր թիւը Ան-

կան ընդհանուր բաժինը—ընդամէնը 6,46 տոկոս—շատ աննշան տեղ է բռնում։

Այժմ մի կարևոր հարց. աճման ինչ ընթացք են ունեցել Անդրկովկասի գլխաւոր ժողովուրդները մեզ յայտնի տարեշրջաններում. դա տեսնում ենք հետևեալ աղիւսակից։

Ռուսների, հայերի, վրացիների և մուսուլմանների աճման տոկոսները.

| Տարեշրջաններ | ՌՈՒՍՆԵՐ | | | ՀԱՅԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886—1897 թ. | 178,75% | 102,23% | 143,15% | 12,27% | 20,00% | 15,74% |
| 1897—1914 թ. | 82 00 ,, | 123,12 ,, | 97,70,, | 58,52 ,, | 51,30 ,, | 55,10 ,, |
| 1886—1914 թ. | 407,07 ,, | 351,24 ,, | 380,380,, | 78,00 ,, | 81,36 ,, | 79,52 ,, |
| | ՎՐԱՑԻՆԵՐ | | | ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ | | |
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886—1897 թ. | 8,64% | 15,35% | 11,75% | 11,91% | 16,89% | 14,19% |
| 1897—1914 թ. | 32,81 ,, | 26,43 ,, | 29,74,, | 23,51,, | 22,36,, | 23,00,, |
| 1886—1914 թ. | 44,25 ,, | 45,81,, | 45,00,, | 38,22,, | 43.03,, | 40,42,, |

Աչքի ընկնող փաստը, որ պէտք է վերյիշել առաջին հերթին, դա այն է, որ գլխաւոր ժողովուրդներից երկուսի—ռուսների և հայերի—երեսնամեայ աճման աստիճանը կանգնած է բարձր՝ ծայրերկրի ընդհանուր ազգաբնակութեան աճման միջին մակարդակից. մինչդեռ վրացիների և մահմեդականների աճման աստիճանը կանգնած է այդ մակարդակից ցածր։ Միջին մակարդակը, ինչպէս գիտենք, կազմում է (1886—1914 թ.)՝ 60,82 տոկոս (արակ.), 62,22 տոկոս (իգագ.) և 61,46 տոկոս (միասին). այդ մակարդակը միջին գծի նման բաժանում է իրարից յայտնի տարբերութիւններով ռուսների և հայերի աճման տեմպը—վրացիների և մահմեդականների աճման տեմպից։

Ի հարկէ բոլորի մէջ ռուսական տարրը՝ իր թռիչքային աճման ընթացքով, միանգամայն բացառիկ տեղ է գրաւում։ Առաջին տարեշրջանում (1886—1914 թ.) ռուսների աճումը եղել է աւելի արագ (143,15 տոկոս, իսկ միայն արակ. սեռը՝ 178,75 տոկոս), քան երկրորդ (1897—1914 թ.) տարեշրջանում (97,70 տոկոս, իսկ միայն իգակ. սեռը՝ 123,12 տոկոս)։ Ռուսների այդ արտակարգ արագ աճումը, որ երեսնամեայ շրջանում

---

դրկովկասում եղել է 1886 թ. 14898, իսկ այժմ (1914 թ.) հաւասար է 85593 հոգու, դա նշանակում է մի աճեցում 70695 հոգով կամ 474,50 տոկոսով. նման աճեցում չի ունեցել ոչ մի ժողովուրդ տեղացիներից։ Այնուհետև, հրէաների թիւը եղել է 1886 թ. 34386 հոգի, իսկ 1914 թ. 86902 հոգի. նրանք աճել են, նշանակում է, 52516 հոգով կամ 152,72 տոկոսով։ Դարձեալ բացառիկ աճման մի դէպք է սա։ 1886 թ. Թւածս սլաւոնները և եւրոպացիք կազմել են Անդրկովկասի ազգաբնակութեան միայն 0,32 տոկոս, իսկ 1914 թ. արդէն 1,12 տոկոս։ Հրէաների տոկոսական բաժինը եղել է առաջ 0,73 տոկոս, յետոյ 1,14 տոկոս։ Ահա եկւոր էլեմենտների այդ արագ աճումով է բացատրւում գլխաւոր ժողովուրդների տոկոսական մասնակցութեան յարաբերական նւազումը ընդհանուր ազգաբնակութեան մէջ։

*(1886—1914) հասնում է 380,66 տոկոսի (իսկ միայն արակ. սեռը 407,06 տոկոս), մեծագույն մասով պարտական է, անշուշտ, այն անընդհատ ու խմբական ներգաղթին, որ տեղի է ունենում պետութեան հիւսիսից ու կենտրոնից դէպի մեր ծայրերկրի զանազան մասերը։ Այդ ներգաղթող տարրերի մէջ ռուս պաշտօնեաները (չինովնիկութիւնը) և մանաւանդ զօրքը, ինչպէս մենք կը տեսնենք իր տեղում, կազմում են պատկառելի տոկոս։*

*Միւս ժողովուրդները՝ հայեր, վրացիներ և մուսուլմաններ, ունեցել են բնական աճման ընթացք։ Ի հարկէ, շնորհիւ Թիւրքահայ տարրերի երբեմնակի ներգաղթի* [1]) *հայերի համեմատական արագ աճումը* որոշ չափով *պայմանաւորուած է այդ ներգաղթով։ Ասում ենք* որոշ չափով, *որովհետև հայերի աճման տարբերութիւնը, մանաւանդ երկրորդ տարեշրջանում (1897—1914 թ.), այնքան մեծ է վրացիների և մահմեդականների աճման աստիճանից, որ անկարելի է այդ տարբերութիւնը բացատրել միայն ներգաղթի փաստով. այդ տարբերութեան մէջ իր* որոշ մասն *ունի նաև ռուսահայ ժողովրդի* բնական աճման արագութիւնը։ *Ուշադրութիւն դարձրէք նախ առաջին շարքի վրայ (1886—1897 թ.). հայերը աճել են 15,74 տոկոսով, վրացիները՝ 11,75 տոկոսով, իսկ մահմեդականները 14,19 տոկոսով։ Աճման այդ փոքր տարբերութիւնը՝ հայերի և իրենց երկու հարևան ժողովուրդների միջև, անհամեմատ մեծանում է յաջորդ շրջանում (1897—1914 թ.)։ Մինչդեռ հայերի աճման տոկոսը հասնում է 55,10 տոկոսի, (իսկ արակ. 58,52 տոկոս), ընդհակառակը վրացիներինը հասնում է 29,74 տոկոսի (արակ. 32,81 տոկոս), այսինքն 25,36 տոկոսով պակաս (արակ. 25,71 տոկոսով) հայերի տոկոսից. իսկ մուսուլմանների տոկոսը էլ աւելի նուազ է՝ ընդամենը 23,00 տոկոս, ասել է վերջինս պակաս է հայերի տոկոսից 32,10 տոկոսով, իսկ վրացիներից՝ 6, 74 տոկոսով։ Այդ նոյն յարաբերութիւնները բնականօրէն աւելի մեծ տոկոսներով են արտայայտւում երեսնամեայ շրջանում։*

*Վերոյիշեալ աղիւսակի մէջ աչքի է ընկնում մի բնորոշ գիծ ևս, որով տարբերւում է ռուսների աճման ընթացքը տեղացի երեք ժողովուրդների աճումից։ Ռուսները առաջին փոքր տարեշրջանում* (1886—1897 *թ.) կամ 11 տարուայ ընթացքում աճել են հարիւրաւոր տոկոսներով, աւելի խոշոր չափերով, քան յաջորդ մեծ շրջանում (1897—1914 թ.) կամ 17 տարուայ ընթացքում, մինչդեռ հայերի, վրացիների և մուսուլմանների մօտ, ինչպէս և պէտք է լինէր, գտնում ենք տրամագծօրէն հակառակ յարաբերութիւնը։ Դա բացատրւում է այն հասարակ փաստով, որ ռուսների հոսանքը՝ հիւսիսից ու կենտրոնից դէպի Անդրկովկաս, աւելի ուժեղ է եղել առաջին, քան երկրորդ տարեշրջանում։*

*Որպէսզի աւելի շօշափելի լինեն մեզ յայտնի ժողովուրդների աճման տեմպի տարբերութիւնները, բերենք այստեղ նրանց տարեկան աճման տոկոսները։*

---

*1) Թիւրիմացութիւնից խուսափելու համար յիշեցնում ենք, որ վերջին տարեթւի տւեալների մէջ չեն մտնում Թիւրքահայ փախստականները, որոնք միայն պատերազմի ընթացքում (1915 թւականից սկսած) են ապաստանել մեր երկիրը։*

*Ռուսների, հայերի, վրացիների և մուսուլմանների տարեկան աճումը տոկոսներով.*

| Տարեշրջաններ | ՌՈՒՍՆԵՐ | | | ՀԱՅԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | արական | իգակ. | միասին | արական | իգակ. | միասին |
| 1886—1897 թ. | 16,25% | 9,32% | 13,01% | 1,11% | 1,81% | 1,43% |
| 1897—1914 թ. | 4,82 „ | 7,24 „ | 5,70 „ | 3,44 „ | 3,02 „ | 3,24 „ |
| 1886—1914 թ. | 14,54 „ | 12,54 „ | 13,59 „ | 2,80 „ | 2,90 „ | 2,84 „ |
| | ՎՐԱՑԻՆԵՐ | | | ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ | | |
| | արական | իգակ. | միասին | արական | իգակ. | միասին |
| 1886—1897 թ. | 0,78% | 1,39% | 1,06% | 1,08% | 1,53% | 1,29% |
| 1897—1914 թ. | 1,93 „ | 1,58 „ | 1,75 „ | 1,38 „ | 1,31 „ | 1,35 „ |
| 1886—1914 թ. | 1,54 „ | 1,63 „ | 1,60 „ | 1,36 „ | 1,53 „ | 1,44 „ |

*Աճման տոկոսների նոյն յարաբերութիւնները անդրադառնում են այստեղ տարեկան աճման տոկոսների մէջ։ Առաջին տեղը, անշուշտ, բռնում են դարձեալ ռուսները, ապա հետեւում են հայերը, յետոյ վրացիներն ու մուսուլմանները, ինչպէս կարգով դասաւորուած են աղիւսակի մէջ։ Համեմատելով նրանց տարեկան աճումը մօտ երեսնամեայ շրջանի (1886—1914 թ.) ընթացքում անդրկովկասեան ազգաբնակութեան տարեկան միջին աճման հետ, կստանանք հետեւեալը.*

Տարեկան աճումը տոկոսներով (1886—1914 թ.)

| | արական | իգական | միասին |
|---|---|---|---|
| Անդրկ. ազգաբն. (միջին աճում) | 2,17% | 2,22% | 2,20% |
| Ռուսներ . . . . . . . . | 14,54 » | 12,54 » | 13,59 » |
| Հայեր . . . . . . . . | 2,80 » | 2,90 » | 2,84 » |
| Վրացիներ . . . . . . . | 1,54 » | 1,63 » | 1,60 » |
| Մուսուլմաններ . . . . . . | 1,36 » | 1,53 » | 1,44 » |

*Տեսնում ենք նոյն յարաբերութիւնները. տարեկան միջին աճումից գերազանցում են ռուսները և հայերը՝ իրանց տարեկան աճման տոկոսներով։ Մինչդեռ վրացիների և մանաւանդ մուսուլմանների տարեկան աճման տոկոսները կանգնած են միջին աճումից ցածր։*

*Այժմ տեսնենք, թէ ինչպէս են դասաւորուած սեռերի թուական յարաբերութիւնները չորս ժողովրդների մէջ։ 100 տղամարդուն գալիս են կանայք՝*

| | Ռուսներ | Հայեր | Վրացիներ | Մուսուլմաններ | Անդրկովկասի ընդհ. ազգաբն. (միջին թիւը) |
|---|---|---|---|---|---|
| 1886 թ. | 85,4 | 83,9 | 87,3 | 83,3 | 84,4 |
| 1897 թ. | 62,0 | 89,6 | 92,7 | 86,9 | 85,1 |
| 1914 թ. | 76,0 | 85,6 | 88,2 | 86,6 | 86,1 |
| Միջին թւով | 74,0 | 86,3 | 89,4 | 85,6 | 85,2 |

*Թուական ամենաուժեղ մասնակցութիւն ունի իգական սեռը վրացիների մէջ. ամենից թոյլը՝ ռուսների մէջ, հայերի և մանաւանդ մուսուլմանների*

մէջ իգական սեռը շատ ժոտ է կանգնած միջին մակարդակին։ Ամենացածր թիւը տալիս են ռուսները (100 տղամարդուն 62 կին) 90-ական թուականներին, հէնց այն շրջանում, երբ ռուսական էլեմենտը ամենաուժեղ հոսանքով չուում էր հիւսիսից ու կենտրոնից դէպի Կովկասի խորքերը։ Իսկ եկւոր էլեմենտը մեծագոյն մասով, գոնէ սկզբնական շրջանում, սովորաբար բաղկացած է լինում արական սեռից։

## 2.

## ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՒ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ.

Դառնանք այժմ հարցի կարեւոր կողմերից մէկին. ինչ պատկեր են ներկայացնում ազգաբնակչութեան երկու մեծ կաթեգորեանները—քաղաքային և գաւառական ազգաբնակութիւնը—յիշեալ ժողովուրդների մէջ։ Դա տեսնում ենք հետեւեալ աղիւսակներից։

Քաղաքային ազգաբնակութիւնը չորս ժողովուրդների մէջ [1].

| Տարեշրջաններ | ՌՈՒՍՆԵՐ | | | ՀԱՅԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886 թ. | 30563 | 23401 | 53864 | 102682 | 77639 | 180321 |
| 1897 թ. | 102200 | 58402 | 160602 | 106828 | 83691 | 190519 |
| 1914 թ. | 176754 | 131540 | 308294 | 229706 | 181812 | 411518 |
| | ՎՐԱՑԻՆԵՐ | | | ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ | | |
| | արական | իգակ. | միասին | արական | իգական | միասին |
| 1886 թ. | 34484 | 23734 | 58218 | 84065 | 59261 | 143326 |
| 1887 թ. | 67879 | 45171 | 113080 | 105736 | 74648 | 180384 |
| 1914 թ. | 110992 | 75832 | 186824 | 180681 | 141848 | 322529 |

Գաւառական ազգաբնակութիւնը

| Տարեշրջաններ | ՌՈՒՍՆԵՐ | | | ՀԱՅԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886 թ. | 35371 | 32922 | 68593 | 407864 | 350946 | 758810 |
| 1897 թ. | 83593 | 55559 | 137152 | 466400 | 430061 | 896461 |
| 1914 թ. | 157574 | 122729 | 280303 | 678954 | 595464 | 1274418 |
| | ՎՐԱՑԻՆԵՐ | | | ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ | | |
| | արական | իգակ. | միասին | արական | իգական | միասին |
| 1886 թ. | 606846 | 536202 | 1143048 | 1113294 | 942675 | 2055969 |
| 1897 թ. | 628782 | 600617 | 1229369 | 1134286 | 1096578 | 2230864 |
| 1914 թ. | 814243 | 740650 | 1554893 | 1464412 | 1291296 | 2765708 |

[1]) Ժողովուրդների քաղաքային և գաւառական ազգաբնակութեան բացարձակ թուերը տես յիշած աղբիւրների մէջ համապատասխան բաժինները ամեն մի ժողովրդի մասին։

Ուշագրաւ են այս աղիւսակները մի քանի կողմերից։ Նախ և առաջ աչքի է ընկնում դարձեալ ռուսների գրաւած բացառիկ դիրքը. միայն 1886 թ. է, որ անդրկովկասեան ռուսութեան մէջ գաւառական ազգաբնակութիւնը գերազանցում է քաղաքայինին 14—15 հազար հոգով։ Այնուհետեւ փոխւում են ազգաբնակչական կաթեգօրեաների յարաբերութիւնները յօգուտ քաղաքային տարրի. վերջինս արագութեամբ և խոշոր չափերով գերակշռում է գաւառական տարրին յաջորդ տարեթուերի ընթացքում։ Ինչպէս միւս կէտերում, նոյնը և այստեղ ռուսների նկատմամբ պահպանում է իր նշանակութիւնը այն հասկանալի բացատրութիւնը, որ ռուսները, իբրև ոչ բնիկներ, իբրև եկւոր տարրեր գերապատւելապէս տեղաւորւում ու հաստատւում են քաղաքներում։

Միանգամայն այլ է, երբ հարցը վերաբերում է տեղացիներին՝ հայերին, վրացիներին և մուսուլմաններին. սրանք բնիկներ են՝ Անդրկովկասի հարազատ զաւակները, պինդ փարած իրանց հայրենի բնակավայրերին։ Ինչ ասել կուզի, որ տակաւին ագրիկուլտուրային եւ նահապետական Անդրկովկասում տեղացի գլխաւոր ժողովուրդների մէջ գաւառական տարրը պէտք է անհրաժեշտօրէն կազմէր ազգաբնակութեան գերիշխող մեծամասնութիւնը։ Այդ տեսակէտից տեղացի ժողովուրդները ունեն նման դրութեան ընդհանուր գծեր։ Այլ յարաբերութիւններ ենք գտնում արդէն, երբ խօսքը վերաբերում է քաղաքային ազգաբնակութեան։ Այդտեղ գտնում ենք խոշոր տարբերութիւններ մի կողմից հայերի, միւս կողմից վրացիների և մահմեդականների միջև։ Այդ տարբերութիւնները չունեն ոչ պատահական բնաւորութիւն և ոչ էլ՝ ռուսների նման, կարելի է մասսայական ներգաղթի օրինակով բացատրել։ Այդ տարբերութիւնները ունեն տիպիքական էական նշանակութիւն։

Ուշադրութիւն դարձրէք երեք ժողովուրդների քաղաքային ազգաբնակութեան քանակական յարաբերութիւններին։ Չնայելով որ հայերից թուապէս գերազանցում են ոչ միայն մահմեդականները՝ ընդհանուր թւով վերցրած, այլև վրացիները, այնուամենայնիւ հայ քաղաքային ազգաբնակութիւնը խոշոր չափերով գերազանցում է ոչ միայն վրացականից, այլև մուսուլմանականից։ 1886 թ. հայ քաղաքային տարրը եղել է 180321 հոգի (երկսեռ), վրացիներինը 58218 հ., մահմեդականներինը՝ 143326 հոգի։ Հայ քաղ. տարրը թւով գերազանցում է վրացիներից 3—4 անգամ, իսկ մահմեդականներից՝ մօտ քառասուն հազար հոգով։ 1914 թ. հայ քաղաքային ազգաբնակ. կազմում է 411518 հոգի, վրացականը՝ 186824 հոգի, ասել է՝ 2—3 անգամ նուազ հայկականից, իսկ մահմեդականներինը՝ 322529 հոգի, ասել է՝ մօտ 90 հազար հոգով պակաս հայկականից։

Ի՞նչ է հետևում այդ համադրութիւններից ու բացատրութիւններից։ Այն, որ Անդրկովկասում տեղական ժողովուրդների մէջ հայերը միակն են, որոնք մատակարարում են քաղաքային էլեմենտ ամենամեծ քանակով ոչ միայն յարաբերաբար, այլեւ բացարձակ։ Ուրիշ կապակցութիւնների մէջ այս եզրացութիւնը աւելի շօշափելիօրէն պիտի հաստատենք ու ամրապնդենք։ Տեղական ժողովուրդների հասարակական կազմի հիմնական լուսաբանութիւնը, որ պիտի տանք մենք աշխատութեանս երկրորդ և երրորդ մասերում, պարզելու է մեր առաջ առանձնայատկութիւնների մի խտացած պատկեր դարաւոր հարևանների րէալ իրականութեան նկատմամբ։

*Տեսնենք այժմ, թէ քաղաքային և գաւառական տարրերը ինչ տոկոսական բաժինն են կազմում ժողովուրդների ազգաբնակչական ամբողջութեան մէջ.*

## Քաղաքային ազգաբնակութեան տոկոսը ամբողջից

| տարեթւեր | ՌՈՒՍՆԵՐ | | | ՀԱՅԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886 թ. | 46,35% | 41,55% | 43,00% | 20,11% | 18,11% | 19,20% |
| 1897 թ. | 55,60 ,, | 51,54 ,, | 53,93 ,, | 18,64 ,, | 16,29 ,, | 17,52 ,, |
| 1914 թ. | 52,87 ,, | 51,77 ,, | 52,40 ,, | 25,28 ,, | 23,40 ,, | 24,41 ,, |
| | ՎՐԱՑԻՆԵՐ | | | ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ | | |
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886 թ. | 5,37% | 4,24% | 4,81% | 7,02% | 5,91% | 6,51% |
| 1897 թ. | 9,74 ,, | 7,00 ,, | 8,42 ,, | 7,90 ,, | 6,37 ,, | 7,20 ,, |
| 1914 թ. | 11,98 ,, | 9,28 ,, | 10,72 ,, | 10,91 ,, | 9,90 ,, | 10,00 ,, |

## Գաւառական ազգաբնակութեան տոկոսը ամբողջից

| տարեթւեր | ՌՈՒՍՆԵՐ | | | ՀԱՅԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886 թ. | 53,65% | 58,45% | 56,00% | 79,89% | 81,89% | 80,80% |
| 1897 թ. | 44,40 ,, | 48,46 ,, | 46,07 ,, | 81,36 ,, | 83,71 ,, | 82,48 ,, |
| 1914 թ. | 47,13 ,, | 48,23 ,, | 47,60 ,, | 74,72 ,, | 76,60 ,, | 75,59 ,, |
| | ՎՐԱՑԻՆԵՐ | | | ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ *) | | |
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886 թ. | 94,63% | 95,76% | 95,19% | 92,98% | 94,09% | 93,49% |
| 1897 թ. | 90,26 ,, | 93,00 ,, | 91,58 ,, | 92,10 ,, | 93,63 ,, | 92,80 ,, |
| 1914 թ. | 88,02 ,, | 90,72 ,, | 89,28 ,, | 89,09 ,, | 90,10 ,, | 90,00 ,, |

*Տոկոսների այս աղիւսակը գալիս է աւելի ռելիէֆ դարձնելու այն յարաբերութիւնների պատկերը, ինչ տեսանք մենք բացարձակ թւերի աղիւսակից. Սկսած 1897 թ. Անդրկովկասեան ռուսութեան կէսից աւելին կազմում էր քաղաքային տարրը, որի ամենամեծ տոկոսը հասնում է 55,60 տոկոսի (արակ. ս.). Հայերի մօտ ողջ ազգաբնակութեան մօտ 1/5 մասը բաղկացած է (1886 թ.) քաղաքային տարրից. Իննսունական թւականներին 2 տոկոսով իջնում է այդ տարրը իր յարաբերական բարձրութիւնից, որպէսզի յաջորդ տարեթւին (1914 թ.) մի ցատկումով՝ մօտ 7 տոկոսով նորից բարձրանայ մինչև 24,41 տոկոս (արակ. սեռը նոյն իսկ 25,28 տոկոս) և կազմէ 1/4 մասը ողջ հայ ազգաբնակութեան. Ընդհակառակը շատ համեստ տեղ է բռնում՝ համաձայն թւական բացարձակ տւեալների, քաղաքային տարրը վրացի և մահմեդական ժողովուրդների մէջ. Վրաց քաղաքային բնակչութիւնը սկզբում կազմում էր ամբողջ ազգաբնակութեան հազիւ 1/20-րդ մասը (4,81 տոկոս, իսկ արակ. սեռը 5,38 տոկոս), յետոյ*

առանց նուազելու և արագ աճելով հասնում է այդ տոկոսական բաժինը 10,72 տոկոսի. (իսկ արակ. ս. 11,98 տոկոս) կամ աւելի քան 1/10 մասի. Ցարաբերաբար վերցրած, քաղաքային էլեմենտի ամենաարագ աճում՝ առանց նուազման դէպքի, ունեցել են վրացիները՝ 1886—1914 թ. տարեշրջանում. Իսկ 1897—1914 թ. տարեշրջանում ամենամեծ չափով աճել է հայ քաղաքային ազգաբնակութիւնը. Իսկ մուսուլմանների մօտ, թէև նուազման դէպք չկայ, բայց համեմատաբար դանդաղ է աճել քաղաքային տարրը. Վրացիների մօտ աւելի արագ, քան մահմեդականների, առաջ է ընթացել գաւառական տարրի պրոլետարիզացիայի պրոցեսը. Իսկ պրոլետարականացող գաւառացին շտապում է սովորաբար քաղաքային միջավայրում գտնել իր ապրուստի և աշխատանքի ապաստարանը. Ինչ վերաբերում է յիշեալ ժողովուրդների գաւառական ազգաբնակութեան թուական յարաբերութիւններին, ապա նրանք դասաւորւել են ճիշտ հակառակ ուղղութեամբ. Ամենամեծ քանակով և ամենամեծ տոկոսով քաղաքային ազգաբնակութիւն ունեցող ժողովուրդը, ունի, բնականաբար, նաև ամենանուազ գաւառական ազգաբնակութիւնը. Այդ է պատճառը, որ առաջին դիրքեր գրաւած ռուսներն ու հայերը՝ գաւառական տարրի նկատմամբ տեղի են տալիս վրացիների և մահմեդականների առաջ.

Շարունակենք մեր ստատիստիկական օպերասիօնները և բաւարարութիւն տանք մի այլ հարցի. ո՞ր տոկոսական բաժինն է կազմում գլխաւոր ժողովուրդների քաղաքային և գաւառական տարրը Անդրկովկասի համայն ազգաբնակութեան քաղաքային և գաւառական տարրերի ընդհանուր քանակի մէջ. Դա պարզ երևում է հետևեալ աղիւսակներից.

Գլխաւոր ժողովուրդների քաղաքային տարրի տոկոսը Անդրկովկասի ողջ քաղաքային ազգաբնակութեան մէջ.

| տարեշրջաններ | ՌՈՒՍՆԵՐ | | | ՀԱՅԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886 թ. | 11,38% | 12,08% | 11,42% | 38,27% | 39,76% | 38,93% |
| 1897 թ. | 24,82,, | 20,64,, | 23,12,, | 26,00,, | 29,57,, | 27,42,, |
| 1914 թ. | 23,20,, | 22,60,, | 22,93,, | 31,46,, | 31,22,, | 31,37,, |
| | ՎՐԱՑԻՆԵՐ | | | ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ | | |
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886 թ. | 12,85% | 12,15% | 12,56% | 31,33% | 30,35% | 30,92% |
| 1897 թ. | 16,49,, | 16,01,, | 16,42,, | 25,68,, | 26,39,, | 25,97,, |
| 1914 թ. | 14,58,, | 13,02,, | 13,90,, | 23,72,, | 24,35,, | 24,00,, |

Գլխաւոր ժողովուրդների գաւառային տարրի տոկոսը Անդրկովկասի ողջ քաղաքային ազգաբնակութեան մէջ.

| տարեշրջաններ | ՌՈՒՍՆԵՐ | | | ՀԱՅԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886 թ. | 1,55% | 1,70% | 1,61% | 17,87% | 18,00% | 17,90% |
| 1897 թ. | 3,25,, | 2,42,, | 2,82,, | 18,13,, | 19,16,, | 18,41,, |
| 1914 թ. | 4,72,, | 4,22,, | 4,48,, | 20,33,, | 20,42,, | 20,39,, |
| | ՎՐԱՑԻՆԵՐ | | | ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ | | |
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886 թ. | 26,59% | 27,39% | 26,96% | 48,80% | 48,15% | 48,50% |
| 1897 թ. | 24,45,, | 26,15,, | 25,25,, | 44,10,, | 47,74,, | 45,82,, |
| 1914 թ. | 24,43,, | 25,45,, | 24,88,, | 43,85,, | 44,37,, | 44,25,, |

Իր տոկոսական մասնակցութեամբ անպայման առաջին տեղը, ինչպէս դա պարզ պիտի լինէր ուշադիր ընթերցողին բացարձակ տւեալներից, բռնում է հայ քաղաքային տարրը։ Ամենաբարձր տոկոսը ունեցել է նա 1886 թ., երբ Անդրկովկասի ողջ քաղաքային ազգաբնակութեան շատ աւելի քան $^1/_3$ մասը (ուղիղ 38,90 տոկոս) եղել են հայեր, շատ աւելի, տեսում ենք, քան ռուս և վրաց քաղաքային էլեմէնտները (11,62%+12,56%) միասին վերցրած։ Մահմեդական քաղաքային տարրի տոկոսը ևս (30,92 տոկոս) նուազ էր հայկականից 8 տոկոսով։ Յաջորդ տարեթւին (1897 թ.) փոխւում են զգալապէս յարաբերութիւնները։ Իջնում է հայ քաղաքային տարրի տոկոսական բաժինը իր բարձրութիւնից 11,47 տոկոսով և դառնում 27,43 տոկոս։ Իջնում է նաև մուսուլմաններինը մօտ 5 տոկոսով։ Ընդհակառակը բարձրանում են վրացիների և ռուսների տոկոսները (առաջինը 3,86 տոկոսով, երկրորդը՝ 11,50 տոկոսով)։ [1]) Բայց և այնպէս յարաբերաբար հայ քաղաքային տարրի տոկոսական բաժինը մնում է դարձեալ ամենից բարձրը, գերազանցելով մուսուլմանների տոկոսից 1,46 տոկոսով, ռուսականից 4,31 տոկոսով և վրացականից 11,01 տոկոսով։ Երրորդ տարեթւին (1914 թ.) նորից փոխւում են յարաբերութիւնները, բայց այս անգամ արդէն յօգուտ հայ քաղաքային տարրի. այս տոկոսը նորից բարձրանում է, և իրաւ 4,00 տոկոսով, ու հասնում 31,37 տոկոսի, ասել է շատ քիչ միայն պակաս $^1/_3$-րդ մասից։ Ընդհակառակը, միւս բոլորի տոկոսները իջնում են իրանց բարձրութիւնից, և իրաւ՝ ռուսներինը 0,19 տոկոսով, մահմեդականներինը 1,97 տոկոսով, իսկ վրացիներինը՝ 2,52 տոկոսով։ Ինչպէս տեսնում ենք, տոկոսական մասնակցութեան վեր

---

[1]) Միայն աշխատութեանս երկրորդ մասում, ուր խօսք կը լինի դասային կազմի մասին, մենք քննութեան կառնենք այն հարցը, թէ ինչ հասարակական կատեգորիաներից է բաղկացած քաղաքային ազգաբնակութիւնը ամեն մի ժողովրդի մէջ և ինչքա հայ ժողովուրդը այդ կողմից գերիշխող տեղ է բռնում։

ու վար տատանումներ ունեցել են բոլոր տարեթւերին ռուսները, հայերը և վրացիները, մինչդեռ մուսուլմանների տոկոսը շարունակ իջել է։

Ինչ վերաբերում է այդ ժողովուրդների գաւառական տարրի տոկոսական մասնակցութեան Անդրկովկասի ողջ գաւառական ազգաբնակութեան մէջ, ապա ինչ կասկած, որ մի քանի միլիոնի հասնող մուսուլմանութիւնը պիտի բռնէր այդտեղ առաջին ապահով տեղը։ Առաջին տարեթւին մուսուլմանների տոկոսը հասել է ոչ պակաս, քան 48,50 տոկոսի (իսկ միայն արակ. ս. 48,80 տոկոս) կամ միայն 1,50 տոկոսով պակաս ողջ գաւառական ազգաբնակութեան կէսից։ Մուսուլմանների տոկոսական բաժինը աւելի է, քան վրացիներինը, հայերինը և ռուսներինը միասին վերցրած (26,96 տոկոս + 17,90 տոկոս + 1,61 տոկոս = 46,97 տոկոս)։ Վրացիների տոկոսը բռնում է միջին տեղը՝ 26,96 տոկոսով, այսինքն աւելի քան երկու անգամ մեծ նրանց քաղաքային տարրի տոկոսական բաժնից (12,56 տոկոս)։ Այնուհետեւ հետեւում են հայերը, որոնց տոկոսը՝ 17,90 տոկոս, ընդհակառակը, աւելի քան փոքր է նրանց քաղաքային տարրի տոկոսական բաժնից (38,90 տոկոս)։ Փոքրաթիւ և եկւոր ռուսների գաւառական տարրը, ինչ ասել կուզի, ունի ամենահամեստ տոկոսական բաժինը՝ ընդամէնը 1,61 տոկոս։

Յաջորդ տարեթւերին (1897 և 1914 թ.) տոկոսական վերոյիշեալ յարաբերութիւնները ենթարկւում են որոշ փոփոխութիւնների։ Նախ աչքի է ընկնում այն տենդենցը, որ ամենամեծ քանակով գաւառական տարրեր ունեցող ժողովուրդների—մուսուլմանների և վրացիների—տոկոսները շարունակ նւազում են՝ առաջինի մօտ աւելի քան երկրորդի, և իջնում նախկին բարձրութիւնից (մուսուլմաններինը 4,25 տոկոսով, իսկ վրացիներինը 2,08 տոկոսով)։ Միւս կողմից հայերի և ռուսների տոկոսները, ընդհակառակը, աճում են առանց տատանումների (առաջինը՝ 2,49 տոկոսով, երկրորդը՝ 2,87 տոկոսով)։ Մինչդեռ առաջին տարեթւին (1886 թ.) մուսուլմանների տոկոսը, ինչպէս մենք տեսանք, գերազանցում էր միւս երեք ժողովուրդների գաւառական տարրի տոկոսների ընդհանուր գումարից, վերջին տարեթւին (1914 թ.), ընդհակառակը, մուսուլմանների տոկոսը (44,25 տոկոս) նոյնիսկ աւելի պակաս է միայն վրացիների և հայերի տոկոսներից (24,88 տոկոս + 20,39 տոկոս)։

Մենք անցնում ենք այժմ այն հարցին, թէ ինչ չափերով և արագութեամբ են աճել գլխաւոր ժողովուրդների ազգաբնակչական երկու հիմնական կաթեգորիաները—քաղաքային և գաւառական էլեմենտները—մեզ յայտնի տարեշրջաններում։

Չորս ժողովուրդների քաղաքային ազգաբնակութեան աճումը տոկոսներով.

| տարեշրջաններ | ՌՈՒՍՆԵՐ | | | ՀԱՅԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886--97թ. | 234,39% | 149,60% | 200,00% | 4,03% | 7,80% | 5,65% |
| 1897--14թ. | 72,95,, | 125,23,, | 91,96,, | 115,02,, | 117,24,, | 116,00,, |
| 1886--14թ. | 478,33,, | 463,00,, | 472,36,, | 123,70,, | 134,20,, | 128,21,, |
| | **ՎՐԱՑԻՆԵՐ** | | | **ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ** | | |
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886--97թ. | 96,84% | 90,70% | 94,23% | 25,77% | 25,96% | 25,85% |
| 1897--14թ. | 63,51,, | 67,90,, | 65,20,, | 70,88,, | 90,15,, | 78,82,, |
| 1886--14թ. | 221,86,, | 219,50,, | 220,90,, | 114,93,, | 139,19,, | 125,03,, |

Չորս ժողովուրդների գաւառական ազգաբնակութեան աճումը տոկոսներով.

| տարեշրջ. | ՌՈՒՍՆԵՐ | | | ՀԱՅԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886—97թ. | 136,33% | 68,76% | 99,95% | 16,31% | 22,52% | 18,14% |
| 1897—14թ. | 88,50,, | 120,90,, | 104,37,, | 45,57,, | 40,00,, | 42,17,, |
| 1886—14թ. | 345,00,, | 273,90,, | 308,64,, | 66,46,, | 69,67,, | 67,95,, |
| | **ՎՐԱՑԻՆԵՐ** | | | **ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ** | | |
| | արական | իգական | միասին | արական | իգական | միասին |
| 1886—97թ. | 3,61% | 12,01% | 7,63% | 10,66% | 16,06% | 13,10% |
| 1897—14թ. | 29,49,, | 23,31,, | 26,57,, | 15 53,, | 15,37,, | 15,48,, |
| 1886—14թ. | 34,17,, | 38,13,, | 36,03,, | 28,00,, | 33,94,, | 31,06,, |

*Ինչպէս տեսնում ենք այս աղիւսակներից, երկու դէպքում էլ աճման ամենամեծ տոկոսը բնականաբար ցոյց են տալիս ռուսները, իբրև ներգաղթի շնորհիւ ամենաարագ աճող ժողովուրդը Անդրկովկասում. Աճման տոկոսները ևս, ինչպէս թւական բացարձակ տւեալներից տեսանք, ցոյց են տալիս, որ ռուս ժողովրդի և քաղաքային և գաւառական տարրերը անհամեմատ արագ են աճել առաջին շրջանում՝ 11 տարուայ ընթացքում (1886—1897 թ.), քան երկորդ շրջանում կամ 17 տարուայ մէջ (1897—1914 թ.). Ընդհանուր առմամբ, ողջ երեսնամեայ պերիօդում, ռուս քաղաքային էլէմենտը աւելի արագ է աճել, քան գաւառական էլէմենտը. առաջինը աճել է 472,36 տոկոս (իսկ միայն արակ. սեռը 478,33 տոկ.), իսկ երկրորդ աճել է 308,64 տոկոս (իսկ միայն արակ. ս. 345,00 տոկոս).*

*Այլպէս են դասաւորուած աճման յարաբերութիւնները միւս ժողովուրդների մօտ. Նրանց թէ քաղաքային և թէ գաւառական տարրերը աւելի արագ աճել են երկրորդ տարեշրջանում, բացառութիւն կազմում է վրաց քաղաքային բնակչութիւնը, որ ռուսականի նման արագ աճել է ա-*

ռաջին տարէշրջանում։ Շատ համեստ է եղել հայ քաղաքային ազգաբնակ. աճումը առաջին տարեշրջանում՝ ընդամենը 5,65 տոկոս (իսկ միայն արակ. ս. 4 03 տոկ.), մինչդեռ վրացիներինը հաւասար է 94,23 տոկոսի. իսկ մուսուլմաններինը՝ 25,86 տոկոսի։ Ընդհակառակը, երկրորդ տարեշրջանում հայ քաղաքային ազգաբն. աճել է 116,00 տոկոսով, իսկ վրացականը գրեթէ երկու անգամ պակաս 65,20 տոկոսով և մուսուլմաններինը՝ 78,82 տոկոսով [1]։ Ընդհանուր առմամբ, ամբողջ երեսնամեայ շրջանում, տեղական ժողովուրդների մէջ ամենաարագ աճեցում ունեցել է վրաց քաղաքային ազգաբնակութիւնը՝ ընդամէնը 220,90 տոկոսով։ Երկրորդ տեղը բռնում են հայերը և ապա մահմեդականները։ Ընդհակառակը, գաւառական ազգաբնակութեան աճման նկատմամբ հայերը բռնում են տեղացիների մէջ առաջին տեղը բոլոր տարեշրջաններում։ Շատ համեստ է եղել վրացիների (գաւառական տարրի) աճումը մանաւանդ առաջին շրջանում. հայերը աճել են՝ 18,14 տոկոսով, վրացիները 7,63 տոկոսով (միայն արակ. սեռը նոյն իսկ 3,61 տոկոսով), իսկ մուսուլմանները՝ 13,10 տոկոսով։ Երկրորդ շրջանում վրացիների աճումը գերազանցում է մուսուլմանների աճումից, բայց դարձեալ յետ է մնում հայերի աճումից. վերջինս եղել է 42,17 տոկոս վրացիներինը 26,57 տոկոս, իսկ մուսուլմաններինը՝ 15,48 տոկոս։ Երեսնամեայ շրջանում գաւառական տարրը երեք ժողովուրդների մէջ աճել է այսպէս հայերը 67,95 տոկոսով, վրացիները 36,03 տոկոսով, իսկ մահմեդականները՝ 31,06 տոկոսով, ասել է աւելի քան երկու անգամ նուազ հայերի աճումից։

Տեսնենք այժմ, թէ ինչպէս են դասաւորուած երկու սեռերի թուական յարաբերութիւնները քաղաքային և գաւառական ազգաբնակութեան մէջ։

Քաղաքներում 100 տղամարդուն գալիս էին կանայք

| Տարեթիւեր | Ռուսներ | Հայեր | Վրացիներ | Մուսուլմ. | Անդրկովկ. քաղ. ազգաբն. մէջ առհասարակ |
|---|---|---|---|---|---|
| 1886 թ. | 76,5 | 75,6 | 70,0 | 70,5 | 72,8 |
| 1897 թ. | 57,1 | 78,3 | 66,5 | 70,6 | 68,7 |
| 1914 թ. | 74,4 | 79,1 | 68,3 | 78,5 | 76,5 |
| Միջին թւով | 69,3 | 77,6 | 68,2 | 73,2 | 72,6 |

[1]) Հայ քաղաքային ազգաբնակութեան մէջ քանակով գերակշռող տարրերը՝ դեռ վաղ տարիներից սկսած, եղել են քաղքենիները (մեշչանները) և մասամբ քաղաքացիական ու առեւտրակ. դասերը, որոնց թւական մեծութեամբ հայերը անպայման գերազանցել են իրենց հարեւաններին։ Առաջին տարեշրջանում հայ քաղաք. ազգաբն. եկւոր տարրեր սակաւ է ընդունել և ունեցել է միայն տեղացիների բնական աճման թոյլ տեմպ։ Մինչդեռ հարեւանները, մանաւանդ վրացիները, մեծ չափերով ընդունել են եկւոր տարրեր գաւառներից և ունեցել են աւելի արագ աճման ընթացք։ Երկրորդ տարեշրջանում յարաբերութիւնները փոխւում են ի նպաստ հայերի։

Գաւառներում 100 տղամարդուն գալիս էին կանայք՝

| Տարեթւեր | Ռուսներ | Հայեր | Վրացիներ | Մուսուլմ. | Անդրկովկ. գաւառակ. ազգ. մէջ առհասարակ |
|---|---|---|---|---|---|
| 1886 թ. | 93,0 | 86,0 | 88,3 | 84,2 | 85,8 |
| 1897 թ. | 66,4 | 92,2 | 95,6 | 88,3 | 87,7 |
| 1914 թ. | 77.8 | 87,7 | 90,9 | 88,1 | 87,5 |
| Միջին թւով՝ | 79,1 | 88,6 | 91,7 | 86,8 | 87,0 |

Այս աղիւսակները տալիս են բաւական յստակ արտայայտութիւնը գլխաւոր ժողովուրդների երկու սեռերի թւական յարաբերութիւնների զանազանութեան համար քաղաքներում և գաւառներում։ Նախ աչքի է ընկնում այն ընդհանուր տարբերութիւնը, որ ունի իգական սեռի քանակական ներկայացուցչութիւնը քաղաքներում և գաւառներում։ Ինչպէս ընդհանուր առմամբ, այնպէս էլ ամէն մի ժողովրդի մօտ առանձին-առանձին, կին սեռը թուապէս աւելի ուժեղ է գաւառական, քան քաղաքային ազգաբնակութեան մէջ։ Մենք առիթ ենք ունեցել մատնանշելու մի քանի անգամ այդ տարբերութիւնների հասարակական պատճառների վրայ։ Տարբեր են նաև իգական սեռի թւական ներկայացուցչութեան աստիճանները ժողովրդների մօտ։ Քաղաքներում ամենաուժեղ չափով ներկայանում է հայ իգական սեռը, 77,6 կին 100 տղամարդուն, իսկ ամենաթոյլ չափով վրաց իգակ. սեռը՝ 68,2 կին 100 տղամարդուն։ Գաւառներում, ընդհակառակը, ամենից ուժեղ թւական մասնակցութիւն ունի վրաց իգ. սեռը (91,6 կին 100 տղամարդուն), իսկ հայերի իգ. սեռը բռնում է արդէն երկրորդ տեղը (88,6 կին 100 տղամարդուն)։ Սեռերի թւական այս կարգի յարաբերութիւնները երկու ժողովուրդների կեանքում գալիս են կրկին հաստատելու մեր այն դիտողութիւնը (տես վերջին ծանօթ.), որ քաղաքներում հայ բնակչութեան մեծագոյն մասը վաղեմի քաղաքաբնակ քաղքենիներ են՝ իրենց կանանցով, ընտանիքներով հաստատուած, հետևապէս սեռերի թւական այնպիսի սուր տարբերութիւն չի կարող լինել, ինչպէս օրինակ վրացիների մօտ, որոնց քաղաքային բնակիչների զգալի տոկոսը գաւառական եկւորներ են վերջին տասնամեակների ընթացքում, ի հարկէ մեծագոյն մասով արական սեռից։ Մուսուլմանների մօտ իգական սեռը բռնում է երկու ծայրերի միջին տեղը. քաղաքներում քիչ բարձր են (0,6 տոկոսով) միջին թւից (Անդրկով. քաղ. ազգաբն. միջին թւից), իսկ գաւառներում մի փոքր (0,2 տոկոսով) ցածր են միջին թւից։ Ռուսների մօտ արդէն, իբրև եկւոր տարրեր, իգական սեռը երկու դէպքում էլ ցածր է կանգնած միջին մակարդակից։

3.

## ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ ԵՒ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Մինչև այստեղ մենք որոշ գաղափար կազմեցինք Անդրկովկասի գլխաւոր ժողովուրդների թւի, ամփոփումների, աճման և սեռերի թւական յարաբերութիւնների մասին թէ ծայրերում ընդհանրապէս և թէ քաղաք-

յին ու գաւառական երկու խոշոր բաժանումների նկատմամբ մասնաւորապէս։ Այժմ պիտի փորձենք պատկերացնել նոյն յարաբերութիւնները, բայց աւելի փոքր միաւորների մէջ,—ամենից առաջ նահանգներում և շրջաններում առանձին առանձին։

## Գլխաւոր ժողովուրդները նահանգներում եւ շրջաններում առանձին-առանձին.

| | 1886 Թուականին [1]) | | | | 1897 Թուականին [2]) | | | | 1914 Թուականին [3]) | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուսներ (երկսեռ) | Հայեր (երկսեռ) | Վրաց. (երկսեռ) | Մուսուլ. (երկսեռ) | Ռուսներ | Հայեր (երկսեռ) | Վրացիներ | Մուսուլմ. | Ռուսներ | Հայեր (երկսեռ) | Վրացիներ | Մուսուլմ. |
| 1. Թիֆլիսի նահանգ | 35907[4]) | 194131 | 409233 | 157556 | 85772 | 196189 | 465537 | 189028 | 123935 | 397117 | 585749 | 231325 |
| 2. Քութայիսի » | 4907[5]) | 16399 | 791383 | 44103 | 23443 | 24024 | 868766 | 61811 | 51518 | 45672 | 1117449 | 69101 |
| 3. Երևանի » | 4152 | 366700 | 38 | 276190 | 15937 | 441000 | 588 | 350099 | 16408 | 597279 | 424 | 406607 |
| 4. Գանձակի » | 8089 | 258324 | 196 | 448183 | 17875 | 292188 | 1393 | 552822 | 36647 | 396815 | 1957 | 716439 |
| 5. Բագուի » | 42432 | 55459 | 11 | 603344 | 77681 | 52233 | 1616 | 676243 | 171449 | 113526 | 4239 | 849371 |
| 6. Սև-ծովեան » | 10654 | 970 | 372 | 1384 | 34546 | 6285 | 904 | 3103 | 132397 | 16758 | 6875 | 8468 |
| 7. Դաղստանի շրջան | 5421 | 1054 | 94 | 577370 | 16044 | 1636 | 405 | 540290 | 36480 | 4838 | 872 | 639147 |
| 8. Ղարսի » | 10695 | 37094 | 9 | 91165 | 27856 | 73406 | 543 | 145852 | 19770 | 114938 | 4153 | 166079 |
| Ընդամենը՝ | 122457 | 939131 | 1201266 | 2199295[6]) | 297754 | 1086980 | 1342449 | 2511248[7]) | 588597 | 1685936 | 1741717 | 3088237 |

[1]) 1886 Թ. վերաբերեալ տուեալները տես «Сводъ статист. данныхъ о насел. закавк. края», գրքի վերջում՝ «Общій сводъ насел. по закавк.краю» վերնագրով բաժինը։

(Մնացած ծանօթութիւնները տես երես 71—72)

Նախ քան աճման ընթացքը տոկոսական աստիճանացոյցներով ներկայացնելու, տեսնենք ամենից առաջ, թէ ինչ թւական այժմ են ներկայացնում գլխաւոր ժողովուրդները նահանգներում և շրջաններում և ինչ փոփոխութիւնների են ենթարկւել նրանց թւական յարաբերութիւնները երեք տասնամեակի ընթացքում.

Անդրկովկասեան ռուսութեան ամենաուժեղ ներկայացուցչութիւնը, դեռ առաջին տարիներից սկսած, եղել է միշտ երկու նահանգներում՝ Թիֆլիսի և Բաքւի նահանգներում, երկուսն էլ, անշուշտ, շնորհիւ իրենց կենտրոնական քաղաքների. 1886 թ. ռուսների թիւը Թիֆլիսի նահանգում եղել է

---

[1]) 1897 թ. վերաբերեալ տուեալները տես «Первая всеобщ. перепись» ուր առանձին հատորները Անդրկովկ. նահանգների և շըրջանների մասին XII և XIII-րդ պրակները.

[3]) 1914 թ. վերաբերեալ տուեալները տես «Кавказск. кал.», հրատ. 1915 թ. ստատիստիկական բաժինը.

[4]) Ինչպէս այս մասի առաջին գլխում, նոյնը և այստեղ, Թիֆլիսի նահանգին միացրած ենք ներկայացնում Զաքաթալայի շրջանը. այդպէս վարւելու պատճառութիւնները տւել ենք մենք իր տեղում.

[5]) Նոյնը վերաբերում է Քութայիսի նահանգին, որի հետ, ըստ հին բաժանումների, միացրած ենք ներկայացնում Բաթումի և Սուխումի շրջանները. Կրկնում ենք, դա սոսկ ձևական նշանակութիւն ունի և արւած է միայն թւական անալոգիաների նպատակայարմարութեան համար.

[6]) Ինչպէս ողջ Անդրկովկասում, այնպէս էլ առանձին նահանգներում և շրջաններում հետաքրքրական էր իմանալ, թէ ինչ թւական մեծութիւն է կազմում մուսուլմանների մէջ թաթարականութիւնը, իբրև ամենից ուժեղ տարրը. 1886 թ. թաթարների թիւը Թիֆլիսի նահանգում եղել է 89235 հոգի կամ մահմեդականների ընդհանուր թւի 56,64 տոկոսը. Քութայիսի նահանգում թաթարներ չեն եղել. Երևանի նահանգում նրանց թիւը հասել է 251057 հոգու կամ կազմել է ամբողջի 90,90 տոկոսը. Գանձակի նահանգում թաթարների թիւը եղել է 407949 հոգի կամ 91,23 տոկոս, Բաքւի նահանգում 377521 հոգի կամ 62,55 տոկոս. Սև-Ծովեան նահանգում թաթարներ չեն եղել. նոյնը և Ղարսի շրջանում. իսկ Դաղստանի շրջանում նրանց թիւը եղել է միայն 13697 հոգի կամ մօտ 2,40 տոկոս. Նշանակում է ամենամեծ քանակով թաթարները կենտրոնացած են երեք նահանգում՝ Գանձակի, Երևանի և Բաքւի նահանգներում. Թէև վերջինում թաթարների աբսոլիւտ թիւը աւելի է, քան Երևանի նահանգում, բայց այստեղ նրանց յարաբերական տոկոսը (90,90 տոկոս) ողջ մահմեդականութեան մէջ շատ աւելի ուժեղ է, քան Բաքւի նահանգում (62,55 տոկոս). Այն նահանգներում, ուր հայ ու մահմեդական տարրերը ամենամօտ հարևանութեամբ և ամենախիտ քանակով ապրում են, այնտեղ թաթարականութիւնը բացարձակ տիրապետող տարրն է հանդիսանում մահմեդականների մէջ. Ղարսի շրջանում մահմեդականների մէջ աչքի են ընկնում իրանց քանակով թիւրքեր (41823 հոգի կամ ամբողջի 45,87 տոկոս), քրդեր (26434 հոգի կամ 29,00 տոկոս), գարափափախներ (24134 հոգի կամ 26,50 տոկոս). Քրդերի թիւը աւելի շատ է Երևանի նահանգում՝ 36478 հոգի, որոնցից մի մասը միայն մահմեդականներ են, միւս մասը՝ եզիդներ.

[7]) 1897 թ. Թաթարների թւական մասնակցութիւնը մահմեդականների ընդհանուր թւի մէջ եղել է. Թիֆլիսի նահանգում 107383 հոգի կամ 56,81 տոկոս, Երևանի նահանգում 313176 հոգի կամ 90,06

35907 հոգի, իսկ Բագւի նահանգում՝ 42432 հոգի. այսինքն 6525 հոգով աւելի Թիֆլիսի նահանգի ռուսների թւից [1]). Երկու նահանգների ռուսների թիւը կազմել է բացարձակ մեծամասնութիւնը՝ 78339 հոգի կամ 63,98 տոկոս ընդհանուր այդ ռուսութեան. Մնացած վայրերից միայն Սև-ծովեան նահանգումն է, որ ռուսները պատկառելի թիւ են կազմել՝ 10654 հոգի, բացարձակ մեծամասնութիւնը տեղական բնակչութեան. Իսկ միւս նահանգներում և շրջաններում (բացառութեամբ Ղարսի շրջանի, որ 10695 ռուսներից մեծ մասը բաղկացած է ռուս զօրքից) ռուսների թիւը շատ համեստ է. 11 տարուց յետոյ, 1897 թ., ռուսների թւական յարաբերութիւնները փոխւում են այսպէս. Նախ արտակարգ արագութեամբ աճում է նրանց թիւը բոլոր նահանգներում ու շրջաններում. Առաջին տարեթւին նրանց ամենանւազ թիւը եղել է 4152 հոգի (Երևանի նահանգում). երրորդ տարեթւին ամենանւազ թիւը եղել է 15937 հոգի (դարձեալ Երևանի նահանգում). Այնուհետև երկրորդ տարեթւին Թիֆլիսի նահանգը առանձնում է թւական ամենաուժեղ ներկայացուցչութեան առաջնութիւնը(իսկ առաջին տարեթւին այդ առաջնութիւնը ունեցել է Բագւի նահանգը). Ռուսների թիւը հասնում է այնտեղ 85772 հոգու, իսկ Բագւի նահանգում՝ 77681 հոգու, ասել է 8091 հոգով պակաս Թիֆլիսի նահանգի ռուսներից. 17 տարի անցնելուց յետոյ, 1914 թ., դարձեալ փոխւում են յարաբերութիւնները. երեք նահանգներում (Թիֆլիսի, Բագւի և Սև-ծովեան) առանձին-առանձին ռուսների թիւը անցնում է հարիւր հազարից. Այդ տարեթւին արդիւնաբերական Բագւի նահանգը նորից խլում է Թիֆլիսի նահանգից առաջնութիւնը՝ ռուսների թւական ուժեղութեան նկատմամբ. ռուսների թիւը հասնում է այնտեղ 171449 հոգու, իսկ Թիֆլիսի նահանգում՝ 123935 հոգու, ասել է 47514 հոգով պակաս Բագւի նահանգի ռուս-

---

տոկոս, Գանձակի նահանգում՝ 534086 հոգի կամ 96,91 տոկոս, Բագւի նահանգում 485146 հոգի կամ 71,74 տոկոս, Դաղստանի շրջանում 32143 հոգի կամ 5,95 տոկոս. Բացի Երևանի նահանգից, ուր թաթարների տոկոսական բաժինը՝ համեմատած 1886 թ. հետ, շատ չնչին չափով (0,90տ.) նւազել է, մնացած վայրերում, ընդհակառակը, աւելի մեծ չափերով աճել է նրանց տոկոսական բաժինը. Գանձակի նահանգում 5,68 տոկոսով, Բագւի նահանգում 9,19 տոկոսով, Դաղստանի շրջանում 3,55 տոկոսով. Ղարսի շրջանում թիւրքերի թիւը հասել է 1897 թ. 63547 հոգու կամ կազմել է բոլոր մուսուլմանների 43,60 տոկոսը (պակասելով 2,27 տոկոսով նախկին տարեթւի տոկոսից). քրդերի թիւը՝ 42968 հոգի կամ 29,46 տոկոս (աւելանալով նախկինի համեմատութեամբ 0,46 տոկոսով).

[1]) 12—15 տարի առաջ, ըստ 1871—1874 թ. տւեալների («VII т. Сборн. свѣд. о Кавказѣ, составл. на основ. камеральн. описанія 1871—1874 г.») ռուսների թիւը Թիֆլիսի նահանգում եղել է 36390 հոգի, իսկ Բագւի նահանգում՝ 18201 հոգի. Ուրեմն 1871—1874 թ. տւեալներով ռուսների թիւը Թիֆլիսի նահանգում ոչ միայն գերազանցել է Բագւի նահանգի ռուսներից՝ 18189 հոգով, այլև 1886 թ.՝ Թիֆլիսի նահանգի ռուսների թւից 483 հոգով. Դուրս է գալիս, որ 1871/74—1886 թ., այսինքն 12—15 տարւայ ընթացքում ռուսների թիւը Թիֆլիսի նահանգում ոչ միայն չի աճել, այլև նւազել է 483 հոգով. Եթէ ճիշտ են հաղորդւած այդ թւերը, մնում է ընդունել, որ կամ ռուսների արտագաղթ է եղել Թիֆլիսի նահանգից յիշեալ տարեշրջանում և կամ, որ աւելի հաւանական է, ռուս զօրքի տեղափոխութիւն է կատարւել.

յետոյ, հայերի թիւը հասնում է Գանձակի նահանգում 292188 հոգու (աւելանալով 33864 հոգով). դա կազմում է 33,26 տոկոս կամ ուղիղ 1/3 մասը տեղական ազգաբնակութեան և 26,89 տոկոս Անդրկովկասեան հայութեան։ Երկու դէպքումն էլ իջել է Գանձակի հայերի տոկոսական մասնակցութեան առաջին տարեթւի համեմատութեամբ։ Դա ցոյց է տալիս, որ 1886—1897 թ. տարեշրջանում Գանձակի հայերի թիւը աւելի դանդաղ է աճել, քան ընդհանրապէս տեղական ազգաբնակութիւնը և ծայրերկրի միւս մասերի հայերի թիւը։ Վերջապէս 1914 թ. հայերի թիւը նոյն Գանձակի նահանգում եղել է 396815 հոգի (17 տարուայ ընթացքում աւելանալով 104627 հոգով), որ կազմում է 34,04 տոկոս ողջ տեղական ազգաբնակութեան և 23,50 տոկոս Անդրկովկասեան ողջ հայութեան։

Երրորդ նահանգը, ուր հայ ժողովուրդը միշտ էլ ունեցել է պատկառելի ներկայացուցչութիւն և թւապէս բռնել է երկրորդ տեղը, դա Թիֆլիսի նահանգն է և մանաւանդ նրա կենտրոնը՝ Թիֆլիս քաղաքը։ Առաջին տարեթւին (1886 թ.) հայերի թիւը Թիֆլիսի նահանգում հաւասար է եղել 194131 հոգու, որ կազմել է նահանգի ողջ ազգաբնակութեան ուղիղ 22,00. ասել է 1/5 մասից աւելին, և Անդրկովկասի ողջ հայութեան՝ 20,45 տոկոս կամ 1/5 մասը [1]։ Յաջորդ տարեթւին, 1897 թ., հայերի թիւը Թիֆլիսի նահանգում հասնում է միայն 196189 հոգու (11 տարուայ ընթացքում աւելանալով ընդամէնը 4058 հոգով [2]), որի տոկոսական մասնակցութիւնը նահանգի ազգաբնակութեան մէջ, 'ի հարկէ, զգալապէս իջնում է, հասնելով 18,66 տոկոսի, նոյնպէս իջնում է նրա տոկոսը Անդրկովկասեան հայերի ընդհանուր թւի մէջ, հասնելով 18,05 տոկոսի։ Յաջորդ տարեշրջանում արդէն՝ 1897—1914 թ., արտակարգ արագութեամբ աճում է հայերի թիւը Թիֆլիսի նահանգում և հասնում է 397117 հոգու (17 տարուայ ընթացքում աւելանալով 200928 հոգով կամ աւելի քան երկու անգամ)։ 1914 թ. Թիֆլիսի նահանգի հայութիւնը գերազանցում է արդէն, թէև փոքր տարբերութեամբ, Գանձակի նահանգի հայութիւնից. դա առաջին դէպքն է, որովհետև անցեալում Գանձակի նահանգի հայերի թիւը միշտ խոշոր տարբերութեամբ գերազանցել է Թիֆլիսի նահանգի հայութիւնից։ Դա ցոյց է տալիս, թէ վերջին 15—20 տարուայ ընթացքում հայ գաւառական բնակիչների որպիսի ուժեղ հոսանք է եղել դէպի Կովկասի կենտրոնը։ Այդ երևոյթի մանրամասների հետ կը ծանօթանանք մենք յետոյ, իր տեղում։ 1914 թ. Թիֆլիսի նահանգի հայերը կազմել են

[1]) 1871—74 թ. տւեալներով հայերի թիւը Թիֆլիսի նահանգում եղել է 158323 հոգի, նշանակում է մինչև 1886 թ. աւելացել է հայերի թիւը 35808 հոգով կամ աճել է 22,68 տոկոսով։ 1871—74 թ. Թիֆլիսի նահանգի հայերի թիւը կազմել է նահանգի ողջ ազգաբնակութեան 24,09 տոկոս, գրեթէ մօտ 1/4 մասը, իսկ Անդրկովկասեան ողջ հայ ազգաբնակութեան 22,23 տոկոս։ Երկու դէպքումն էլ հայերի տոկոսական բաժինը եղել է յիշեալ թւականին աւելի մեծ, քան 1886 թ., ինչպէս մենք տեսանք վերև։

[2]) Տարօրինակ է թւում այն հանգամանքը, որ այդքան դանդաղ աճեցում են ունեցել Թիֆլիսի նահանգի հայերը 1886—1897 թ.թ. շրջանում։ Մենք յետոյ կը տեսնենք՝ գաւառների մասին առանձին խօսելու ժամանակ, որ նահանգի հայ բնակչութեան այդ սակաւ աճումը հետևանք է մի քանի գաւառներում եղած հայերի թւական նւազման։

տոկոս, ասել է 5,50 տոկոսով աւելի նախկին տարիթւի տոկոսից։

Վերջապէս չորրորդ նահանգը, ուր այժմ հայ ժողովուրդը հարիւր հազարից աւելի բնակիչներ ունի, դա Բագուի նահանգն է, որի կենտրոնը աւելի ու աւելի է մագնիսական ոյժով ձգում և ներգաղթող հայերի մասսաներ տեղաւորում իր նաւթային աշխարհում։ Նախկին տարիթւերին տատանումներով է անցել հայերի թիւը Բագուի նահանգում։ Այսպէս օրինակ 1886 թ. այնտեղ եղել են, ըստ մեզ յայտնի աղբիւրի տւեալների, 55459 հայեր, իսկ 1897 թ. հայերի թիւը հասնում է միայն 52233 հոգու, նւազելով 3226 հոգով։[1] 1914 թ. արդէն Բագուի նահանգի հայերի թիւը հասնում է պատկառելի մեծութեան, այն է 113526 հոգու (17 տարւայ ընթացքում աւելանալով 61293 հոգով)։ 1886 թ. Բագուի նահանգի հայերի թիւը կազմում էր նահանգի ողջ ազգաբնակութեան 7,78 տոկոս, 1897 թ. տոկոսական այդ բաժինը՝ հայերի թւի նւազման պատճառով, իջնում է նահանգի ողջ ազգաբնակութեան 26,57 տոկոս, ասել է նախկին տարիթւի (1897 թ.) նկատմամբ հայերի տոկոսական բաժինը աւելացել է մօտ 8 տոկոսով։ Իսկ Անդրկովկասի ողջ հայութեան մէջ նրանք կազմել են 23,55

[1]) Շատ աւելի տարօրինակ է այն հանգամանքը, որ պաշտօնական տւեալները նւազեցրած են հաղորդում հայերի թիւը 1886—1897 թւականներին Բագուի նահանգում. 11 տարւայ ընթացքում հայերի թիւը ոչ միայն չի աճել այնտեղ, այլև նւազել է 3226 հոգով։ Թիւրիմացութիւն է սա, թէ կայ մի անբացատրելի գաղտնիք, իբրև պատճառ այդ փաստի։ Հասկանում ենք, եթէ նահանգի որոշ մասում, օրինակ Շամախու գաւառում, շարունակական արտագաղթի պատճառով նւազում էր տեղական հայերի թիւը։ Բայց, նախ այդ գաւառի արտագաղթը ուղղւած է եղել գլխաւորապէս դէպի Բագու, նշանակում է նահանգի կենտրոնը, և երկրորդ՝ պաշտօնական աղբիւրը նւազ թիւ ցոյց է տալիս, ինչպէս մենք յետոյ իր տեղում կը տեսնենք, նաև Բագուի գաւառի և յատկապէս Բագու քաղաքի բնակիչների նկատմամբ։ Կայ արդեօք սխալ և մի աղբիւրն է սխալւում. արդեօք 1886 թ. աղբիւրն է սխալւում, հաղորդելով աւելի մեծ թիւ հայերի, քան եղել են իրապէս այդ թւականին, թէ՞ սխալւում է 1897 թ. աղբիւրը, հաղորդելով աւելի նւազ թիւ հայերի, քան եղել են իրապէս նոյն թւականին։ Ժամանակակից ոչ մի ուրիշ աղբիւր չկայ՝ պաշտօնական բնաւորութեամբ, որպէսզի հնարաւոր լինէր ստուգել մէկ թէ միւս աղբիւրը։ Յամենայն դէպս մեզ անկարելի է թւում, որ Բագուի նըման կենտրոնում 11 տարւայ ընթացքում հայերի թիւը ոչ միայն աճած չլինի, այլև նոյնիսկ նւազած լինի։ Եւ մեզ թւում է, որ աւելի շուտ սխալ թիւ է հաղորդում 1886 թ. աղբիւրը։ Դրա համար մենք ունենք որոշ փաստական ենթադրութիւն։ Այսպէս օրինակ 1871—74 թ. տւեալներով Բագուի նահանգում եղել են 24698 հայեր (ըստ VII հատ. «Сборн. свѣд. о Кавк. на основ. камеральн. опис.»), որոնց աճումը մինչև 1886 թ. հասել է ոչ պակաս, քան 55459 հոգու, աւելանալով 30761 հոգով, կամ աճելով 124,54 տոկոսով։ Այդպիսով բանից դուրս է գալիս, որ 1874—1886 թ. շրջանում, երբ Բագուի նահանգը՝ իր կենտրոնով, տակաւին արդիւնաբերական կեանքի թոյլ զարգացում ունէր և հետևապէս նւազաթիւ բանւորներ էր ընդունում, հայերի թիւը աճել է այնտեղ 124,54 տոկոսով, իսկ 1886—1897 թ. շրջանում, երբ, իսկապէս արագաքայլ զարգանում էր արդիւնաբերութիւնը և ներգաղթողների զանգւածներ ընդունում իր մէջ, յանկարծ նւազում է հայերի թիւը 6,17 տոկոսով։ Կրկնում ենք սա անկարելի բան է և մնում է ընդունել, որ 1886 թ. աղբիւրը սխալ թիւ է հաղորդել։

մինչև 6,31 տոկոսի, իսկ 1914 թ. նորից բարձրանում է այդ տոկոսը և հասնում 9,60 տոկոսի։ Անդրկովկասի Միացած մասերից յիշատակութեան արժանի է՝ հայերի թւի նկատմամբ, Ղարսի շրջանը, ուր հարիւր հազարից աւելի հայեր են բնակւում այժմ։ Առաջին տարեթւին (1886 թ.) հայերի թիւը Ղարսի շրջանում եղել է աւելի պակաս, քան Բաքուի նահանգում, այն է 37094 հոգի [1]), որ կազմել է շրջանի ողջ ազգաբնակութեան 21,31 տոկոս, իսկ 1897 թ. այդ թիւը համարեա կրկնապատկւում է, հասնելով 73406 հոգու և կազմելով տեղական ընդհանուր ազգաբնակութեան 25,26 տոկոս։ Յաջորդ տարեթւին արդէն հայերի թիւը Ղարսի շրջանում հասնում է 114938 հոգու, կազմելով շրջանի ողջ ազգաբնակութեան արդէն 29,40 տոկոս։ Առանց տատանումների արագ աճել է այնտեղ թէ հայերի թիւը և թէ հայերի տոկոսական բաժինը ամբողջի մէջ։ Այսպէս ուրեմն, ըստ հայ ազգաբնակութեան ներկայ թւական մեծութեան, յիշածս նահանգները կարելի է դասաւորել այսպէս. Երևանի նահանգ, Թիֆլիսի նահանգ, Գանձակի նահանգ, Ղարսի շրջան և Բաքուի նահանգ. այդ հինգ վայրերում հայ ազգաբնակութեան ամենամեծ թիւը հասնում է մօտ վեց հարիւր հազարի (Երևանի նահանգում), իսկ ամենանւազ թիւը կազմում է հարիւր հազարից աւելի (Ղարսի շրջանում և Բաքուի նահանգում), Անդրկովկասի Միացած մասերում՝ Քութայիսի, Սև-ծովեան նահանգներում և Դաղստանի շրջանում, [2]) հայերը համեմատաբար շատ համեստ թիւ են կազմում, ինչպէս տեսնում ենք վերև բերւած աղիւսակից։

Ինչպէս են դասաւորւած վրացիները։ Այն, ինչ նկատեցինք հայերի մասին, կարող ենք տրամագծօրէն հակառակը ասել վրացիների վերաբերմամբ։ Որքան հայերը ցրւած ու ապակենտրոնացած են, այնքան վրացիները խտացած ու կենտրոնացած են իրանց հարազատ բնակավայրերի ծոցում։ Բաւական է մի թռուցիկ հայեացք ձգել աղիւսակի վրայ՝ ասածներիս մէջ փաստական հիմքերով համոզւելու համար։ Միայն Քութայիսի և Թիֆլիսի նահանգներումն է—իրանց բուն հայրենիքում,—ուր, գրեթէ, ամբողջ վրացիութիւնն է կենտրոնացած։ Անդրկովկասի միւս մասերում անյայտանալու չափ փոքր թիւ են ներկայացնում նրանք, մանաւանդ աւելի վաղ տարեթւերին, երբ վրացիների թիւը կամ միայն տասնեակների էր հասնում այդ մասերում և կամ գոյութիւն չունէին նրանք այնտեղ ամենևին. [3]) Վրացիները ճնշող մեծամասնութեամբ կենտրոնացած են միայն Քութայիսի նահանգում, ուր նրանց թիւը դեռ առաջին տարեթւին հասել է 791383 հոգու, իսկ դա կազմում էր նահանգի ողջ ազգաբնակութեան

[1]) 1883 թ. տւեալներով Ղարսի շրջանի հայերի թիւը եղել է 33829 հոգի. ուրեմն երեք տարւայ ընթացքում հայերի թիւը աճել է այնտեղ 3265 հոգով։

[2]) 1871—74 թ. տւեալներով Դաղստանի շրջանում եղել են 2400 հայեր, Սև-ծովեան նահանգում (այն ժամանակ շրջան) չի եղել ոչ մի հայ, իսկ Քութայիսի նահանգում եղել են 4537 հայեր։

[3]) 70-ական թւականների սկզբին (1871—74 թ. վիճակագրութեան ժամանակ) Անդրկովկասի մի շարք վայրերում վրացիներ բոլորովին չէին եղել, այսպէս օրինակ Բաքուի, Գանձակի, Սև-ծովեան նահանգներում և Ղարսի շրջանում չի եղել ոչ մի վրացի, իսկ Երևանի նահանգում եղել են ընդամէնը երկու վրացի։

85,71 տոկոս կամ ծայրերկրի ընդհանուր վրացիութեան ոչ պակաս, քան 65,90 տոկոս [1]). դա միապաղաղ ազգաբնակութեան խիտ կենտրոնացման և ճնշող մեծամասնութեան առաջին օրինակն է Անդրկովկասում, որին նախանձով կարող են նայել միւս ժողովուրդները։ Յաջորդ տարեթւերին, անշուշտ, որոշ տատանումների է ենթարկւում այդ տոկոսական բաժինը. 1897 թ. վրացիների թիւը Քութայիսի նահանգում հասնում էր արդէն 868766 հոգու, որ կազմում էր նահանգի ողջ ազգաբնակութեան 82,10 տոկոս և վրաց ժողովրդի ընդհանուր թւի 64,72 տոկոս. երկու դէպքում էլ Քութայիսի նահանգի վրացիութեան տոկոսական բաժինը նուազել է փոքր չափերով։ 1914 թ. էլ աւելի է նուազում այդ տոկոսական բաժինը. վրացիների թիւը Քութայիսի նահանգում հասնում է 1117449 հոգու, իսկ դա կազմում է տեղական ընդհանուր ազգաբնակութեան 78,75 տոկոս և անդրկովկասեան ողջ վրացիութեան 64.16 տոկոս։ Բնորոշ է այն հանգամանքը, որ առաջին տոկոսը աւելի մեծ չափերով է նուազել (85,71 տոկոսից իջել է 78.75 տոկոսի 1886—1914 թ. տարեշրջանում), քան երկրորդ տոկոսը (65,90 տոկոսից իջել է 64,16 տոկոսի նոյն ժամանակաշրջանում)։ Դա ցոյց է տալիս, որ Քութայիսի նահանգում գտնւող ոչ վրացի կամ այլատարր ազգաբնակութիւնը աւելի արագ է աճում, քան վրացիութիւնը առհասարակ։ Երկրորդ վայրը, ուր վրացիութիւնը թւական մեծութեան ամուր յենարաններ ունի, դա Թիֆլիսի նահանգն է։ Անշուշտ թւական նշանակութեան տեսակէտից մեծ է այդ երկու նահանգների տարբերութիւնը վրացիների աչքում։ Թիֆլիսի նահանգում նրանք երբեք մեծամասնութիւն չեն կազմել, ազգաբնակութեան կէսն անգամ չեն կազմել, գոնէ մեզ յայտնի տարեթւերին, և քանի գնացել, այնքան իջել է նրանց թւական մեծութեան յարաբերական աստիճանը. իսկ նահանգի գլխաւոր մասում՝ Թիֆլիսի գաւառում և յատկապէս մայրաքաղաք կենտրոնում, վրացիները փոքրամասնութեան մէջ են։ Այո, այդ այդպէս է։ Սակայն վրացիութեան պատմական տրադիցիաները հէնց այդ նահանգումն են ամփոփուած և թուական փոքրամասնութիւնը չի խանգարում վրաց ազգայնականներին՝ վրացիութեան քաղաքական բարձր իդէալի իրականացումը հէնց այդ նահանգի կենտրոնում տեսնել։ 1886 թ. վրացիների թիւը Թիֆլիսի նահանգում եղել է 409233 հոգի [2]), որ կազմել է նահանգի ողջ ազգաբնակութեան 46,36 տոկոս, իսկ ողջ վրաց ժողովրդի 34,07 տոկոս։ 1897 թ. վըրացիների թիւը նոյն նահանգում հասնում է 465537 հոգու, որով նուազում է նրանց տոկոսական բաժինը տեղական ազգաբնակութեան մէջ և իջնում մինչև 44,29 տոկոսի, իսկ վրաց ժողովրդի ամբողջութեան նկատ-

[1]) 1871—74 թ. տուեալներով Քութայիսի նահանգում եղել են 558376 վրացիներ, որոնք կազմել են նահանգի ողջ ազգաբնակութեան 86,77 տոկոս և ամբողջ վրաց ժողովրդի (Անդրկովկասում) 64,02 տոկոս (մինչև 1886 թ. Քութ. նահանգի վրացիները աճել են 233002 հոգով կամ 42,00 տոկոսով)։

[2]) Նոյն 1871—74 թ. տուեալներով Թիֆլիսի նահանգում վրացիները եղել են 312953 հոգի, որոնք կազմել են նահանգի ողջ ազգաբնակութեան 47,64 տոկոս և ողջ վրաց ժողովրդի մօտ 36 տոկոս (մինչև 1886 թ., 12—15 տարուայ ընթացքում. Թիֆլիսի նահանգի վրացիները աճել են 96280 հոգով կամ 30, 77 տոկոսով)։

ժամը շատ չնչին տարբերութեամբ բարձրանում է նրանց տոկոսը մինչև 34,68 տոկոսի։ Վերջին տարեթւին արդէն՝ 1914 թ., Թիֆլիսի նահ. վրացիների թիւը թէև հասնում է արդէն 585749 հոգու, այնուամենայնիւ նրանց տոկոսական բաժինը նահանգի ընդհանուր ազգաբնակութեան մէջ աւելի է նւազում, իջնելով մինչև 39,12 տոկոս (նւազելով 5,17 տոկոսով) և իրաւ նւազում է աւելի մեծ չափով, քան առաջին տարեշրջանում։ Այս անգամ իջնում է նաև Թիֆլիսի նահանգի վրացիների տոկոսական բաժինը վրաց ժողովրդի ընդհանուր թւի մէջ և հասնում 33,63 տոկոսի (նւազելով 1,05 տոկոսով)

Ինչ վերաբերում է մուսուլմաններին, ապա նրանց ազգագրական ամփոփումները և տերրիտորիական բաժանումները աւելի նման են վրացիների - գրութեան, քան հայերի: Ի հարկէ մուսուլմանները եւ ցրւած են ամենուրեք՝ Անդրկովկասի բոլոր մասերում։ Բայց նախ նրանք մի քանի տերրիտոռիական մեծ ու կարևոր մասերում նոյնքան ճնշող ու պայծառ մեծամասնութիւն են կազմում, ինչպէս վրացիութիւնը Քութայիսի նահանգում, և երկրորդ, եթէ մուսուլմանների խառնաբղէտ բանակից վերցնենք թւով ու որակով ամենից բազմաքանակ և ուժեղ տարրը՝ թուրքթաթարականութիւնը, կտեսնենք, որ սա ևս հոծ բազմություններով խտացած, խմբակցված ու կենտրոնացած է:

Ամենաառաջին վայրը, ուր մուսուլման տարրերը միշտ էլ ջախջախիչ մեծամասնութիւն են կազմել, դա Բագուի նահանգն է իր ամբողջութեամբ վերցրած։ Առաջին տարեթւին (1886 թ.) մուսուլմանների թիւը եղել է այդ նահանգում 603344 հոգի կամ ոչ պակաս քան 84,55 տոկոս նահանգի ընդհանուր ազգաբնակութեան[1])։ Իր ազգաբնակչական խիտ միապաղաղութեամբ, թւով ու տոկոսական բաժնով Բագուի նահանգի մուսուլմանութիւնը կարող է որոշ տարբերութեամբ (նախկին շրջաններում շատ փոքր) խուսափել միայն Քութայիսի նահանգի վրացիութիւնից։ Ի հարկէ, շնորհիւ այն հանգամանքի, որ մուսուլմանների թիւը շատ մեծ է Անդրկովկասում, ուստի նրայց նահանգական բնակչութեան ամենամեծ թիւն անգամ միայն համեստ տոկոսական բաժինը կարող է կազմել մուսուլմանութեան ընդհանուր քանակի մէջ ողջ Անդրկովկասում. այդ է պատճառը, որ Բագուի նահանգի մուսուլմանների թիւը կազմում է ոչ աւելի քան 27,43 տոկոսը, այսինքն 1/4-ից աւելին անդրկովկասեան ընդհանուր մուսուլմանութեան։ Յաջորդ տարեթւին (1897 թ.) Բագուի նահանգի մուսուլմանների թիւը հասնում է 676243 հոգու (աւելանալով 72899 հոգով) և կազմում է նահանգի ընդհանուր ազգաբնակութեան 81,89 տոկոս, նւազելով մօտ երեք տոկոսով. այսինքն կատարւում է քանակով աչքառու տարրի տոկոսական մասնակցութեան մի այնպիսի փոփոխութիւն, ինչ տեսանք Քութայիսի նահանգում վրացիների նկատմամբ։ Մէկ թէ միւս փաստը ունեն նոյն կարգի բացատրութիւնը ինչպէս մենք տեսանք իր տեղում։ Իսկ 17 տարի անցնելուց յետոյ, 1914 թ., չնայելով որ մուսուլմանների թիւը

[1]) Առաջին տարեթւից 12—15 տարի առաջ, ըստ 1871—74 թւի տւեալների, մուսուլմանների թիւը Բագուի նահանգում աւելի մեծ տոկոս էր ներկայացնում։ Այսպէս, նրանց թիւը հաւասար էր 476908 հոգու և կազմում էին նահանգի ընդհանուր ազգաբնակութեան 91,74 տոկոսը։

Բագուի նահանգում հասնում է խիստ պատկառելի մեծութեան՝ 849371 հոգու (աւելանալով 173128 հոգով), այնուամենայնիւ. նրանց տոկոսական բաժինը նահանգի ընդհանուր ազգաբնակութեան մէջ նորից նւազում է և իջնում 71,86 տոկոսի. սակայն է նւազում է շատ աւելի մեծ չափով (մօտ տասը տոկոսով), քան Քութայիսի նահանգի վրացիութեան տոկոսն էր նւազում [1]). Եւ դա միանգամայն հասկանալի է. Բագուի նահանգը Քութայիսի նահանգը չէ. առաջինը իր արդիւնաբերական կենտրոնով եկւոր տարրերի ահագին մասսաներ է ընդունում, որոնք ունեն բոլոր տենդենցները իրենց ընդհանուր թւով աւելի ու աւելի իջեցնելու քանակով գերակշռող տարրի թւի յարաբերական բաժինը.

Երկրորդ նահանգը, ուր մուսուլմանները դարձեալ տպաւորիչ մեծամասնութեան մէջ են գտնւում, համարւում է Գանձակի նահանգը, ուր նրանց թիւը 1886 թ. հաւասար էր 448183 հոգու կամ կազմում էր ոչ պակաս քան 61,48 տոկոս նահանգի ընդհանուր ազգաբնակութեան [2]). Յաջորդ տարեթւին հասնում է նրանց թիւը 552822 հոգու (11 տարւայ ընթացքում աւելանալով 104639 հոգով) և կազմում 62,93 տոկոս նահանգի ողջ ազգաբնակութեան. Իսկ 1914 թ. մուսուլմանների թիւը Գանձակի նահանգում հասնելով 716439 հոգու (աւելանալով 163617 հոգով), դարձեալ իջնում է նրանց տոկոսական մասնակցութիւնը տեղական ընդհանուր ազգաբնակութեան մէջ, կազմելով 61,45 տոկոս, մօտաւորապէս այնքան, որքան առաջին տարեթւին էր. Երրորդ տերրիտորիական մասը, ուր մուսուլմանները շատ աւելի խտացած բացարձակ մեծամասնութիւն է կազմում, դա Դաղստանի շրջանն է, ուր մուսուլմանների թւական մեծութիւնը ընդհանուր ազգաբնակութեան մէջ, արտայայտւել են հետեւեալ տոկոսներով՝ 97,40 տոկոս (1886 թ.), 94,60 տոկոս (1897 թ.), 91,00 տոկոս (1914 թ.). Այստեղ եւ, ինչպէս Գանձակի և Բագուի նահանգումն էր, հետզհետէ իջել է մուսուլմանների տոկոսական բաժինը իր սկզբնական բարձրութիւնից, և իրաւ 6,40 տոկոսով. Ինչպէս յայտնի է, Դաղստանի մուսուլմանութեան մեծագոյն մասը լեռնականներ են (ըստ 1914 թ. տւեալների մօտ 77,00

[1]) Ինչպէս Քութայիսի նահանգը վրացիութեան համար, այնպէս էլ Բագուի նահանգը մուսուլմանութեան համար ներկայացնում են ամենամեծ կենտրոնները. 40 տարւայ ընթացքում (1874—1914 թ.) այդ կենտրոններում տիրող տարրերի տոկոսական յարաբերութիւնները կրել են հետեւեալ փոփոխութիւնները. վրացիները Քութայիսի նահանգում կազմել են՝ 86,77 տոկոս (1874 թ.), 85,71 տոկոս (1886 թ.), 82,10 տոկոս (1897 թ.) և 78,75 տոկոս (1914 թ.). Իսկ մուսուլմանները Բագուի նահանգում կազմել են՝ 91,74 տոկոս (1874 թ.), 84,65 տոկոս (1886 թ.), 81,80 տոկոս (1894 թ.) և 71,86 տոկոս (1914 թ.). Վրացիների տոկոսը նւազել է 40 տարւայ ընթացքում 8,02 տոկոսով, իսկ մուսուլմանների տոկոսը նւազել է 19,88 տոկոսով.

[2]) 1871—74 թ. մուսուլմանների տոկոսը Գանձակի նահանգում աւելի մեծ է եղել, մօտ 64,65 տոկոս. իսկ նրանց ընդհանուր թիւը հաւասար էր այն ժամանակ 387856 հոգու.

տոկոսը), որոնք գրեթէ ամբողջապէս լեզգիներ են.[1]) Չորրորդ վայրը, ուր մուսուլմանները նախկին տարիներին մեծամասնութիւն են կազմել, համարւում է Ղարսի շրջանը. Բայց այնտեղ ևս հետզհետէ նուազել է նրանց տոկոսական մասնակցութիւնը, ինչպէս ցոյց են տալիս հետևեալ թւերը. Ղարսի մուսուլմանների տոկոսը եղել է 1886 թ.՝ 52,38 տոկոս, 1897 թ. 50,18 տոկոս, և 1914 թ.՝ 42,45 տոկոս. Ինչ վերաբերում է Երևանի նահանգին, այնտեղ մուսուլմանները, ինչպէս գիտենք, իրանց առաջնութեան դիրքը զիջել են հայերին և կազմում են կէսից աւելի պակաս տոկոս. Այսպէս օրինակ 1886 թ. Երևանի նահանգի մուսուլմանները կազմել են տեղական ամբողջ ազգաբնակութեան 41,20 տոկոս[2]), յաջորդ տարեթւին փոքր բարձրանում է այդ տոկոսը մինչև 42,20 տ. , որպէսզի 1914 թ. նա նորից իջնէ մինչև 38,94 տոկոս.

Ահա այն նահանգներն ու շրջանները, ուր մուսուլմանները կամ բացարձակ մեծամասնութիւն են կազմում և կամ գտնւում են պատկառելի փոքրամասնութեան մէջ (ինչպէս Երևանի նահանգում և Ղարսի շրջանում է). Մնացած նահանգներում մուսուլմանները ճնշւած փոքրամասնութեան մէջ են [illegible]. Կան, անշուշտ, այնպիսի գաւառներ հէնց այդ նահանգներում, ուր մուսուլմանները թւական ուժեղ ներկայացուցչութիւն ունեն. դրանց մասին կը խօսենք յետոյ.

Որպէսզի մեր վերոյիշեալ բոլոր դիտողութիւնները կարելի լինի աւելի ռելիեֆ պատկերացնել, բերենք ստորև աղիւսակը այն տոկոսների, որոնք ցոյց են տալիս ժողովուրդների տոկոսական յարաբերութիւնները առանձին-առանձին նահանգներում.

---

[1]) Լեռնական մուսուլմանները որոշ չափով մեկուսացած են պահում իրանց այն համամուսուլմանական ձգտումների նկատմամբ, որոնց առաջ տանողը Անդրկովկասում հանդիսանում են թաթարները. Վերջերս լեռնականների մերձեցումը կազակների հետ քաղաքական հողի վրայ յարուցել է համամուսուլմանական խմբակցութեան գլխավոր կենտրոնի դժգոհութիւնը. Այդ է պատճառը, որ թաթարների գլխաւորութեամբ առաջ ընթացող մուսուլմանական ձգտումների կենտրոնավայրը պիտի որոնել Բագուի և Գանձակի նահանգներում.

[2]) 1874 թ. մուսուլմանների տոկոսը Երևանի նահանգում աւելի բարձր էր. նրանց թիւը հասնում էր 239042 հոգու, իսկ տոկոսը 45,00-ի.

Ժողովուրդների տոկոսական մասնակցութիւնը նահանգական եւ շրջանային ընդհանուր ազգաբնակութեան մէջ։

| Նահանգներ և շըր-ջաններ | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Թիֆլիսի նահանգ | 4,07% | 22,00% | 46,36% | 17,85% | 8,16% | 18,66% | 44,29% | 17,98% | 8,29% | 26,57% | 39,12% | 15,48% |
| 2. Քութայիսի » | 0,54„ | 1,77„ | 85,71„ | 10,64„ | 2,22„ | 2,28„ | 82,10„ | 11,11 | 3,63„ | 3,22„ | 78,75„ | 11,38„ |
| 3. Երևանի » | 0,62„ | 54,70„ | — | 41,20„ | 1,92„ | 53,16„ | 0,07„ | 42,20„ | 1,57„ | 57,30„ | 0,04„ | 38,94„ |
| 4. Գանձակի » | 1,11„ | 35,44„ | — | 61,48„ | 2,03„ | 33,26„ | 0,16„ | 62,93„ | 3,14„ | 34,04„ | 0,17„ | 61,45„ |
| 5. Բագուի » | 5,95„ | 7,78„ | — | 84,65„ | 9,39„ | 6,31„ | 0,19„ | 81,80„ | 14,50 | 9,60„ | 0,36„ | 71,86„ |
| 6. Սև-ծովեան » | 58,80 | 5,35„ | 2,05„ | 7,63„ | 60,10„ | 10,93„ | 1,59„ | 4,40„ | 68,10„ | 8,62 | 3,53„ | 4,35„ |
| 7. Դաղստանի շրջան | 0,90„ | 0,18„ | — | 97,40„ | 2,81„ | 0,28„ | 0,07„ | 94,60„ | 5,19„ | 0,69„ | 0,12„ | 91,00„ |
| 8. Ղարսի » | 6,14„ | 21,31„ | — | 52,38„ | 9,58„ | 25,26„ | 0,18„ | 50,18„ | 5,05„ | 29,40„ | 1,07„ | 42,45„ |

*Այս աղիւսակը բացարձակ թւերի տոկոսական արտայայտութիւնն է. իսկ բացարձակ թւերի հետ մենք ըստ մեծի մասին ծանօթացանք և տւինք հարկաւոր բացատրութիւններ։ Այժմ ամփոփենք մեր դիտողութիւնները և մատնանշենք թւական յարաբերութիւնների դասաւորութեան այն տենդենցները, որ նըկատւում են գլխաւոր ժողովուրդների երեսնամեայ շարժման պրոցեսում։*

Անդրկովկասում ռուսները միայն մի նահանգում են գտնւում ապահով մեծամասնութեան մէջ. դա Սև-ծովեան փոքր նահանգն է, ուր նրանց տոկոսական յարաբերութիւնը՝ տեղական ընդհանուր ազգաբնակութեան նկատմամբ, ունի բացայայտ տենդենցներ աւելի ու աւելի աճելու (58,80 տոկոսից հասել է 68,10 տոկոսի 1886—1914 թ. տարեշրջանում, աւելանալով 9,30 տոկոսով)։

Հայերը եւ միայն մի նահանգում են կէսից աւելի և կազմում են մեծամասնութիւն, թէև փոքր տարբերութեամբ միայն. դա Երևանի նահանգն է, ուր հայերի տոկոսական յարաբերութիւնը եւ ունի ակնյայտ տենդենցներ աւելի աճելու, թէև, 'ի հարկէ, ոչ այն արագութեամբ, ինչ ռուսներն են Սև-ծովեան նահանգում. 40 տարուայ ընթացքում, 1874—1914 թ. շրջանում, Երևանի նահանգի հայերի տոկոսական բաժինը 53,97 տոկոսից բարձրացել է մինչև 57,30 տոկոս, աւելանալով 3,33 տոկոսով։

Վրացիները եւ միայն մի նահանգում են մեծամասնութիւն կազմում, բայց չափազանց ապահով ու ճնշող մեծամասնութիւն։ Դա Քութայիսի նահանգն է, ուր, սակայն, վրացիների տոկոսական յարաբերութիւնը քանի գնում այնքան աւելի ու աւելի նւազում է. 1874—1914 թ. շրջանում վրացիների տոկոսը 86,77 տոկոսից նւազել և իջել է մինչև 78,75 տ., 40 տարուայ ընթացքում պակասելով 8,37 տոկոս։

Մուսուլմանները, ընդհակառակը, ապահով մեծամասնութիւն կազմում են Անդրկովկասի երեք տերրիտորիական մասերում՝ երկու նահանգում (Բագուի և Գանձակի) և մի շրջանում (Դաղստանի)։ Նրանց տոկոսական բաժինները եւ, վրացիների նման, ցոյց են տալիս շարունակական նւազման ակնյայտ տենդենցներ. մուսուլմանների տոկոսը Բագուի նահանգում նւազել է 91,74 տոկոսից մինչև 71,86 տոկոսը 1874—1914 թ., 40 տարուայ ընթացքում պակասելով մօտ 20 տոկոսով։ Գանձակի նահանգում նրանց տոկոսը իջել է 64,65 տոկոսից մինչև 61,45 տ. նոյն ժամանակամիջոցում, նւազելով 3,20 տոկոսով։ Վերջապէս Դաղստանի շրջանում մուսուլմանների տոկոսը նւազել է 97.40 տոկոսից մինչև 91,00 տոկոս (1886—1914 թ. շրջանում), պակասելով 6,40 տոկոսով։

Այսպիսով տեսնում ենք ազգաբնակչական յարաբերութիւնների մէջ հակադիր տենդենցներ ունեցող երկու դրութիւններ։ Առաջին դրութեան տենդենցները արտայայտում են մեր ծայրերկրում ռուսներն ու հայերը. քանի գնում, այնքան աւելի ու աւելի է ուժեղանում նրանց տոկոսական յարաբերութիւնները այն մատնանշած վայրերում, ուր նրանք թւական մեծամասնութիւն են կազմում։ Երկրորդ դրութեան տենդենցները արտայայտում են վրացիներն ու մուսուլմանները, որոնց տոկոսական յարաբերութիւնը, ընդհակառակը, քանի գնում, այնքան աւելի ու աւելի նւազում է այն նահանգներում, ուր նրանք թւական և աբսոլիւտ մեծամասնութիւն են կազմում։ Առաջին դէպքում նկատում ենք աճման, առաջխաղացման տենդենցներ, երկրորդ դէպքում—նւազման և նահանջի տենդենցներ։ Այս եզրակացութիւնն տալիս մեզ, գոնէ, 30—40 տարուայ անցեալը գլխաւոր

ժողովուրդների ազգաբնակչական յարաբերութիւնների. [1])

Մինչև այստեղ գործ ունեցանք մենք գլխաւորապէս այն նահանգների և շրջանների հետ, ուր այս կամ այն ժողովուրդը կազմում է թւական մեծամասնութիւն. Այդ մեծամասնութիւնը անւանեցինք բացարձակ կամ յարաբերական մեծամասնութիւն այն իմաստով, որ տեղւոյ ժողովուրդը իր թւական մեծութեամբ կազմում է նահանգի կամ շրջանի ընդհանուր ազգաբնակութեան կէսից աւելին. Այժմ տեսնենք, թէ ինչպէս են դասաւորւած յարաբերութիւնները այն նահանգական և շրջանային վայրերում, ուր տեղւոյ ժողովուրդը կազմում է յարաբերական մեծամասնութիւն. այսինքն թէև նա աւելի չէ ընդհանուր ազգաբնակութեան կէսից, բայց թւով ու տոկոսով գերազանցում է տեղւոյ վայրի ուրիշ ժողովուրդներին առանձին-առանձին վերցրած, ունի աւելի մեծ տոկոս, քան որևէ այլ ժողովուրդ նոյն վայրում. Այդ կէտում ևս գլխաւոր ժողովուրդները բաժանւում են երկու մասի, ոչ ռուսները և ոչ հայերը չեն կազմում որևէ նահանգում կամ շրջանում յարաբերական մեծամասնութիւն, ինչպէս այդ պարզ երևում է մեր վերջին աղիւսակից. Մինչդեռ վրացիներն ու մուսուլմանները ունեն այդպիսի յարաբերական մեծամասնութիւն. առաջինը Թիֆլիսի նահանգում, երկրորդը Ղարսի շրջանում. Յարաբերաբար վերցրած ոչ մի ուրիշ ժողովուրդ չունի Թիֆլիսի նահանգում աւելի մեծ թիւ, հետևապէս նաև աւելի մեծ տոկոս, քան վրացիներն ունեն. Նոյնը վերաբերում է մուսուլմաններին Ղարսի շրջանում. Սակայն այդ վերջին վայրերում ևս գտնում ենք նւազման ճիշտ նոյն տենդենցները, ինչ ունէին վրացիներն ու մուսուլմանները այն տերրիտորիաներում, ուր նրանք բացարձակ մեծամասնութիւն էին կազմում. Այսպէս օրինակ վրացիների տոկոսը Թիֆլիսի նահանգում եղել է 47,64 տոկոս 1874 թ., բայց հետզհետէ նւազելով այդ տոկոսը իջել է մինչև 39,12 տոկոսի 1914 թ., ուրեմն 40 տարւայ ընթացքում նւազելով 8 52 տոկոսով. Իսկ մուսուլմանների տոկոսը Ղարսի շրջանում մօտ 30 տարւայ ընթացքում (1886—1914 թ.) նւազել է 9,33 տոկոսով, 52,38 տոկոսից իջնելով մինչև 42,45 տոկոսը. Երկրորդ կարգի ուժեղ ներկայացուցչութիւնը, որ անմիջապէս յաջորդում է վրացիներին ու մուսուլմաններին յիշեալ վայրերում, կազմում են հայերը. Այդ վայրերում ևս հայերի տոկոսը ունի աճման դրական տենդենցներ՝ Թիֆլիսի նահան-

[1]) Կարիք չկայ և փաստական հնարաւորութիւն՝ էլ չունենք, մարգարէանալու, թէ ինչ բնաւորութիւն կունենան և ինչ ուղիով կընթանան տեղւոյ ժողովուրդների ազգաբնակչական յարաբերութիւնների զարգացման տենդենցները յետագայում՝ մերձաւոր կամ հեռաւոր ապագայում. Մի բան միայն պարզ է. մեր ծայրերկրի այն մասերը, ուր արագութեամբ և ուժգնօրէն կը ծաւալեն խոշոր կապիտալի ու տեխնիկայի տնտեսական յեղաշրջումները, կը զարգանան արդիւնաբերական ոյժերը և տեղւոյ վայրերը հաղորդակցութեան կենդանի յարաբերութիւններ կստեղծեն աւելի բարգաւաճ կենտրոնների հետ, անհա այդ վայրերում թւապէս գերակշռող ժողովրդի ազգային յարաբերութիւնը աւելի ու աւելի է նւազելու՝ շնորհիւ շարունակ ներգաղթող եկւորների հսկայական բազմութեան. Ամենէրևս տիպիքական օրինակը Բագուի նահանգն է իր արդիւնաբերական կենտրոնով, որի (վերջինիս) մասին մենք դեռ աւելի պիտի չոշափելի փաստերով խօսենք.

գում տատանումներով, իսկ Ղարսի շրջանում շարունակաբար։ Այսպէս օ-րինակ 30 տարուայ ընթացքում (1886—1914 թ.) հայերի տոկոսական յարաբերութիւնը Թիֆլիսի նահանգում բարձրացել է 22,00 տոկոսից և հասել է 26,57 տոկոսի, աճելով 4,57 տոկոսով, իսկ Ղարսի շրջանում նոյն ժամանակամիջոցում հայերի տոկոսը բարձրանում է 21,31 տոկոսից մինչև 29,40 տոկոսի աճելով 8,09 տոկոսով։ Հայերի տոկոսը աճում է այնտեղ գրեթէ այնքան՝ որքան նւազում է մուսուլմանների տոկոսը։

Այժմ տեսնենք, թէ ժողովուրդների գլխաւոր ամփոփման տերրիտորիաններում ինչպէս և ինչ յարաբերութեամբ են խմբաւորուած միւս՝ համեմատաբար նւազ ներկայացուցչութիւն ունեցող ժողովրդական տարրերը, օրինակ վերցնելով երեսնամեայ շրջանի (1886—1914 թ.) սկզբի և վերջին տարեթւերը։

1886 թ. ռուսների աբսոլիւտ մեծամասնութիւնը Սև Ծովեան նահանգում հասնում էր 58,80 տոկոս-ի, որի հանդէպ հայերն ունէին 5,35 տոկոս, վրացիները 2,05 տոկոս, իսկ մուսուլմանները՝ 7,63 տոկոս։ Գլխաւոր ժողովուրդների տոկոսների ընդհանուր թիւը հասնում էր 73,83 տոկոս ի։ Իսկ 1914 թ. ռուս տարրի բացարձակ մեծամասնութեան— 68,10 տոկոսի, հանդէպ ունէին՝ հայերը 8,62 տոկոս, վրացիները 3,53 տոկոս և մուսուլմանները 4,35 տոկոս։ Բոլորի ընդհանուր գումարը հասնում էր այդ թւականին 84,60 տոկոսի։ (Առաջին տարեթւի գումարից աւելացել է 10,77 տոկոսով)։

Հայերի բացարձակ մեծամասնութիւնը Երևանի նահանգում հասնում էր 1886 թ. 54,70 տոկոսի, որի հանդէպ կանգնած էին մուսուլմանները 41,20 տոկոսով, իսկ ռուսները 0,62 տոկոսով։ Գլխաւոր ժողովրդների տոկոսների գումարը հասնում էր 96,52 տոկոսի։ 1914 թ. հայերի տոկոսական մեծամասնութիւնը հասնում էր 57,30 տոկոսի, որի հանդէպ ունէին՝ մուսուլմանները 38,94 տ., ռուսները 1,57 տոկոս և վրացիները 0,04 տոկ.։ Բոլոր տոկոսների ընդհանուր թիւը հաւասար էր 97,85 տոկոսի։ (Առաջին տարեթւի տոկոսների թւից աւելացել է 1,33 տոկոսով)։

1886 թ. Քութայիսի նահանգում վրացիների բացարձակ մեծամասնութեան —85,71 տոկոս-ի հանդէպ կանգնած էին հայերը 1,77 տոկոսով, ռուսները 0,54 տոկոսով և մուսուլմանները, 10,64 տոկոսով։ Բոլոր տոկոսների ընդհանուր գումարը հաւասար էր 98,67 տոկոսի։ 1914 թ. վրացիների 82,10 տոկոսի հանդէպ ունէին հայերը 2,28 տոկոս, ռուսները 2,22 տոկոս, իսկ մուսուլմանները 11,11 տոկոս։ Բոլորը միասին՝ 97,71 տոկ. Նշանակում է նախկին տարեթւի համեմատութեամբ նւազում է ընդհանուրի գումարը 0,96 տոկոսով։ Իսկ Թիֆլիսի նահանգում վրացիների յարաբերական մեծամասնութեան (46,36) տոկոսի հանդէպ կանգնած էին 1886 թ. հայերը 22 տոկոսով, մահմեդականները 17,85 տոկոս և ռուսները 4,07 տոկոսով։ Բոլորը միասին կազմում էին 90,28 տոկոս։ Յաջորդ տարեթւին (1914 թ.) վրացիների 39,12 տոկոսի հանդէպ կանգնած էին հայերը 26,57 տոկոսով, մուսուլմանները 15,48 տոկոսով և ռուսները 8,29 տոկոսով։ Բոլորի տոկոսները միասին հաւասար են 89,46 տոկոսի, որով նւազում է նախկին տարեթւի գումարից 0,82 տոկոսով։

Վերջապէս մուսուլմանների բացարձակ մեծամասնութեան—84,65 տոկոսի հանդէպ (Բաքւի նահանգում, 1886 թ.) խմբաւորուած էին, հայերը

7,78 տոկոսով, ռուսները 5,95 տոկոսով։ Բոլոր տոկոսների թիւը հաւասար էր 98,38 տոկոսի (գրեթէ այնքան, որքան Քութայիսի նահանգում էր նոյն թուականին)։ 1914 թ. մուսուլմանների 71,86 տոկոսի հանդէպ ունէին՝ ռուսները 14,50 տոկոս, հայերը 9,60 տոկոս, վրացիները 0,36 տոկոս։ Բոլորը միասին՝ 96,32 տոկոս, որը նախկին տարեթւի տոկոսների նկատմամբ նուազել է 2,06 տոկոսով։ Գանձակի նահանգում մուսուլմանների բացարձակ մեծամասնութեան՝ 61,48 տոկոսի հանդէպ խմբաւորուած էին 1886 թ. հայերը 35,44 տոկոսով, ռուսները 1,11 տոկոսով։ Բոլորի գումարը հաւասար էր 99,03 տոկոսի։ Իսկ 1914 թ. մուսուլմանների 61,45 տոկոսի հանդէպ կանգնած էին հայերը 34,04 տոկոսով, ռուսները 3,14 տոկոսով, վրացիները 0,17 տոկոսով։ Բոլորի տոկոսները միասին կազմում էին 98 80 տոկոս, որը նախկին տարեթւի համեմատութեամբ նուազել է 0,23 տոկոսով։ Դաղստանի շրջանում, ինչպէս գիտենք, մուսուլմանների բացարձակ մեծամասնութեան տոկոսը 1886 թ. հաւասար էր 97,40 տոկոսի, որի հանդէպ արդէն միւս ժողովուրդների տոկոսները չափազանց չնչին էին՝ ռուսներինը 0,90 տոկոս, իսկ հայերինը՝ 0,18 տ. բոլորը միասին կազմում էին 98,48 տոկոս։ Իսկ 1914 թ. մուսուլմանների 91,00 տոկոսի հանդէպ ունէին՝ ռուսները 5,19 տ., հայերը 0,69 տ., վրացիները 0,12 տ. բոլորը միասին վերցրած կազմում էին 97,00 տ., որը նուազել էր նախկին տոկոսների թւից 1,48 տոկոսով։ Վերջապէս Ղարսի շրջանում մուսուլմանների 52,38 տոկոսի հանդէպ 1886 թ. ունէին միւս ժողովուրդներից՝ հայերը 21,31 տ., ռուսները 6,14 տ., իսկ բոլորը միասին՝ 79,83 տ.։ 1914 թ. մուսուլմանների մեծամասնութիւնը արդէն յարաբերական էր, հաւասար 42,45 տոկոսի, որի հանդէպ կանգնած էին հայերը 29,40 տ., ռուսները 5,05, վրացիները 1,07 տոկոս, իսկ բոլորը միասին՝ 77,97 տ., որը նուազել է նախկին տարեթւի տոկոսների համեմատութեամբ 1 86 տոկոսով։

Այս բոլոր բացատրութիւններից և համեմատութիւններից տեսանք, որ մենք միևնոյն եզրակացութեանն ենք յանգում տիրապետող տենդենցների նկատմամբ։ Այն նահանգներում, ուր բացարձակ մեծամասնութիւն կազմող ժողովրդի տոկոսը ցոյց է տալիս աճման դրական տենդենց, այնտեղ բոլոր ժողովուրդների տոկոսների ընդհանուր գումարը ևս աճել է մի տարեթւից միւսը (1886—1914 թ.)։ Այդպէս են եզրակացութիւնները Սևծովեան նահանգում և Երևանի նահանգում, ուր առաջնում ռուսները, իսկ երկրորդում հայերը կազմում են բացարձակ մեծամասնութիւն։ Ընդհակառակը, միանգամայն հակառակ եզրակացութիւնն ենք ստանում, ինչպէս տեսանք վերև, մնացած բոլոր նահանգներում ու շրջաններում, ուր վրացիները կամ մուսուլմանները կազմում են բացարձակ կամ յարաբերական մեծամասնութիւն։ Այդ տերիտորիաներում նրանց աճման բացասական տենդենցները արտայայտւել են նաև բոլոր տոկոսների ընդհանուր թւի վրայ։

Մինչև այստեղ մենք չպարզեցինք դեռ այն կարևոր հարցը, թէ մեր երկրի գլխաւոր ժողովուրդները աճման ինչ ընթացք են ունեցել առանձին առանձին նահանգներում մեզ յայտնի տարեշրջաններում։ Տոկոսների հետևեալ աղիւսակը տալիս է մի շօշափելի պատկեր աճման աստիճանների վերաբերեալ։

### Ժողովուրդների աճումը տոկոսներով.

| Նահանգներ և շրջ-ջաններ | 1886—1897 թւականին | | | | 1897—1914 թւականին | | | | 1886—1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլմ | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Թիֆլիսի նահանգ | 137,87 | 1,05 | 13,75 | 20,00 | 44,50 | 102,42 | 26,00 | 22,38 | 245,15 | 104,56 | 43,13 | 46,41 |
| 2. Քութայիսի » | 377,54 | 46 61 | 9,77 | 19,72 | 120,00 | 90,00 | 28,62 | 37,30 | 950,00 | 178,50 | 41,20 | 64,40 |
| 3. Երևանի » | 283,86 | 20,26 | +[2]) | 26,76 | 3,00 | 37,70 | —[2]) | 15,85 | 295,00 | 62,90 | +[2]) | 47,22 |
| 4. Գանձակի » | 120,97 | 13,11 | + | 23,34 | 105,02 | 35,84 | + | 29,63 | 353,00 | 53,61 | + | 60,00 |
| 5. Բաքուի » | 83 07 | —6,17[1]) | + | 12,08 | 120,70 | 117,34 | + | 25,60 | 304,03 | 104,70 | + | 40,77 |
| 6. Սև-ծովեան » | 224,25 | 568,00 | + | 124 23 | 283,27 | 166,63 | + | 172,89 | 1142,73 | 1627,63 | + | 512,00 |
| 7. Դաղստանի շրջան | 195,95 | 55,21 | + | —7,00 | 127,37 | 200,00 | + | 18,29 | 572,93 | 359,00 | + | 10,70 |
| 8. Կարսի » | 160,46 | 98,00 | + | 59,98 | 40,90 | 56,60 | + | 13,87 | 84,85 | 209,83 | + | 82,17 |

*Աճման աստիճանների զանազանակերպ պատկերներ են պարզւում մեր առաջ։ Այն, ինչ տեսանք մենք բացարձակ թւերի քննութեան ժամանակ, այստեղ աւելի շօշափելիօրէն է ներկայանում մեզ։ Աճման տեմպի արագութեամբ առաջին տեղը՝ ընդհանուր առմամբ և բոլոր տարեշրջաններում, բռնում է, անկասկած, ռուսական տարրը Անդրկովկասում։ Այդ երևոյթի պատճառների մասին տուել ենք մենք իր տեղում հարկաւոր բացատրութիւնները։ Վերյիշել ենք նաև այն փաստը, թէ ինչպէս 11տարի*

*[1]) Հայերի թւական նւազման մասին Բաքուի նահանգում տես մեր ընդարձակ բացատրութիւնները եր. 75 ծանօթ.։*
*(Մնացած ծանօթ. տես երես 87)*

ընդգրկող առաջին տարեշրջանում ռուսները շատ աւելի արագ են աճել առհասարակ Անդրկովկասում (ի բաց առեալ մի քանի վայրերի), քան 17 ամի ընդգրկող տարեշրջանում։ Այդ փաստը անդրադառնում է այժմ առանձին առանձին նահանգների վրայ. բացառութեամբ Բաքուի և Սև-ծովեան նահանգների, ուր ռուսները երկրորդ պերիոդում աւելի արագ են աճել, քան առաջինում։ Միայն մի նւազման դէպք են ունեցել ռուսները, Ղարսի շրջանում 1897—1914 թ. ժամանակամիջոցում ռուսների թիւը նւազել է 40,90 տոկոսով. մի փաստ, որ, ամենայն հաւանականութեամբ, ռուս զօրքի տեղահանութեամբ կարելի է բացատրել։

Հայերի մօտ գտնում ենք հակառակ երևոյթը. ընդհանուր առմամբ հայերը շատ թոյլ աճեցում են ունենում առաջին տարեշրջանում (բացառութեամբ Սև-ծովեան նահանգի և Ղարսի շրջանի)։ Երկու կարևոր կենտրոններում—Թիֆլիսի և Բաքւի նահանգներում—հայերի աճումը հասնում է կամ մինիմումի (առաջինում) և կամ մնում է ցածր (երկրորդում)։ Մենք այդ փաստի հետ ծանօթացանք և տուինք նրա բացատրութիւնը բացարձակ թւերի պարզաբանութեան ժամանակ։ Նրա հետ աւելի մօտ կծանօթանանք, երբ գաւառների և քաղաքների մասին խօսք լինի։ Ինչ վերաբերում է երկրորդ տարեշրջանին (1897—1914 թ.), ապա հայերը ունեցել են տեղական ժողովուրդների համեմատութեամբ ամենանպաստաւոր աճման ընթացքը։ Վրացիութեան կենտրոններում գերազանցել են նրանք իրանց աճման տոկոսներով վրացիներին. մուսուլմանութեան կենտրոններում—մուսուլմաններին։ Օրինակ՝ Թիֆլիսի նահանգում հայերը աճել են 102,42 տոկոսով, վրացիները՝ 26,00 տոկ., ռուսները՝ 44,50 տոկ., Քութայիսի նահանգում՝ հայերը աճել են 90,00 տոկ., վրացիները՝ 28,62 տոկ.։ Այնուհետև Բաքւի նահանգում հայերը աճել են նոյն 1897—1914 թ. տարեշրջանում 117,34 տոկ., մուսուլմանները 25,60 տոկ., ռուսները՝ 120,70 տոկ.։ Գանձակի նահանգում հայերը աճել են 35,84 տոկ., իսկ մուսուլմանները 29,63 տոկոսով. Դաղստանի շրջանում հայերը աճել են 200,00 տոկ., մուսուլմանները՝ 18,29 տոկ.։ Վերջապէս Ղարսի շրջանում հայերը աճել են 56,00 տոկ., մուսուլմանները 13,87 տոկոսով։ Ինչ վերաբերում է հայութեան կենտրոնին՝ Երևանի նահանգին, ապա այնտեղ էլ հայերը նոյն տարեշրջանում աւելի քան երկու անգամ գերազանցում են մուսուլմաններին իրանց աճման տոկոսով. այսպէս հայերը աճել են 37,70 տոկ., իսկ մուսուլմանները՝ 15,85 տոկոսով։

Երրորդ համապարփակ տարեշրջանում (1886—1914 թ.) աճման յա-

[1]) Թւական այն չնչին միաւորները, ինչպիսին ներկայացնում են վրացիները իրանց հայրենիքի սահմաններից դուրս, չենք վերածել այստեղ տոկոսներով, այլ պլիւս (+) և մինուս (—) նշաններով միայն ծանօթ. մէջ կյայտնենք բացարձակ տուեալներով նրանց յաւելումները տարեշրջանից տարեշրջան։ Այսպէս օր. 1886-1897 նրանք աւելացել են. Երևանի նահ. 550 հոգով, Գանձակի նահ. 1200 հ., Բաքւի նահ. 1605 հոգ., Սև-ծովեան նահ. 891 հ., Դաղստանի շրջ. 311 հ., Ղարսի շրջանում 534 հոգով։

[2]) Վրացիները պակասել են Երևանի նահ. 164 հոգով, իսկ միւս նահ. և շրջաններում աւելացել են այսպէս (յաջորդակ. կարգով)՝ 561 հ., 2623 հոգով, 5971 հ., 467 հ., 3610 հոգով։

[3]) Բոլոր նահանգներում և շրջաններում վրացիները աւելացել են այսպէս. 386 հ., 1761 հ., 4228 հ., 6862 հ., 778 հ., 4144 հոգով։

բարերութիւնները դասաւորւում են այսպէս. աճման տեմպի արագութեան տեսակէտից առաջին տեղը անպայմանօրէն բռնում են ռուսները. Ծայրերկրի բոլոր մասերում նրանց աճման տոկոսները անցնում են հարիւրից (բացի Ղարսի շրանից) շատ աւելի, որոշ տեղերում հասնում են հազարի և դեռ աւելին (Սև-ծովեան նահանգում). Միայն մի տեղ են նրանք իրանց առաջնութիւնը զիճում հայերին՝ Ղարսի շրջանում. Աճման տեմպի արագութեամբ երկրորդ տեղը բռնում են հայերը, որոնք բոլոր երկրամասերում գերազանցում են վրացիներին և մուսուլմաններին, բացի Գանձակի նահանգից, ուր հայերը տեղի են տալիս մուսուլմաններին. Երրորդ տեղը բռնում են մուսուլմանները, իսկ չորրորդ կամ վերջին տեղը վրացիները (վերջինները վերցնելով, ի հարկէ, իրանց հայրենիքի երկու նահանգներում).

Աւելի պարզ ու շօշափելիօրէն պատկերացնելու համար ժողովուրդների երեսնամեայ (1886—1914 թ., հաշւելով 28 տարի) աճման ընթացքը, բերենք նրանց տարեկան աճման տոկոսները.

### Տարեկան աճումը տոկոսներով.

| | Ռուսներ | Հայեր | Վրացիներ | Մուսուլմաններ |
|---|---|---|---|---|
| 1. Թիֆլիսի նահանգ | 8,75% | 3,73% | 1,54% | 1,66% |
| 2. Քութայիսի » | 34,00 » | 6,37 » | 1,47 » | 2,30 » |
| 3. Երևանի » | 10,53 » | 2,25 » | + | 1,70 » |
| 4. Գանձակի » | 12,60 » | 1,91 » | + | 2,14 » |
| 5. Բագուի » | 10,56 » | 3,74 » | + | 1,45 » |
| 6. Սև-ծովեան » | 40,81 » | 58,13 » | + | 18,30 » |
| 7. Դաղստանի շրջ. | 20,46 » | 12,82 » | + | 0,38 » |
| 8. Ղարսի » | 3,03 » | 7,49 » | + | 2,93 » |

Նոյն աճման տեմպը արտայայտում են տարեկան տոկոսները աւելի կոնկրետ կերպով. Ռուսները դարձեալ գրաւում են իրանց սովորական առաջին տեղը. միայն երկու տեղ նրանց տոկոսները տեղի են տալիս հայերի աճման տոկոսներին՝ Սև-ծովեան նահանգում և Ղարսի շրջանում. Հայերը, իրանց հերթին, բռնելով երկրորդ տեղը, միայն Գանձակի նահանգում են զիջում իրենց դիրքը մուսուլմաններին. Վրացիների տարեկան աճման տոկոսները Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում տեղի են տալիս ոչ միայն հայերի, այլև մուսուլմանների տոկոսներին.

Նւազ հետաքրքրական չէ ժողովուրդների աճման ընթացքի հետ միաժամանակ ծանօթանալ նաև նրանց սեռերի քանակական յարաբերութիւնների դասաւորութեան հետ զանազան երկրամասերում.

100 տղամարդուն զայիս էին նահանգներում և շրջաններում.

| Նահանգներ և շըր-ջաններ | 1886—1897 թւականին | | | | 1897—1914 թւականին | | | | 1886—1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլմ | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Թիֆլիսի նահանգ | 91,7 | 85,2 | 84,0 | 81,2 | 69,0 | 86,7 | 86,4 | 80,8 | 87,3 | 84,2 | 84,5 | 75,0 |
| 2. Քութայիսի » | 76,4 | 72.5 | 89,9 | 89,3 | 42,5 | 71,6 | 93,7 | 83,6 | 61,7 | 64,8 | 88,1 | 70,0 |
| 3. Երևանի » | 96,8 | 83,8 | — | 81,1 | 34,9 | 93,2 | 41,0 | 85,3 | 78,5 | 89,5 | 55,8 | 85,6 |
| 4. Գանձակի » | 90,9 | 82,7 | 42,0 | 72,8 | 68,3 | 92,7 | 44,7 | 78,9 | 73,1 | 84,9 | 61,2 | 88,0 |
| 5. Բաթումի » | 81,1 | 59,1 | — | 77,3 | 82,4 | 67,3 | 38,8 | 81,4 | 76,3 | 73,8 | 59,0 | 87,6 |
| 6. Սև-ծովեան » | 82,5 | 88,7 | — | 94,1 | 64,3 | 74,3 | 44,4 | 49,7 | 70,0 | 70,0 | 66,4 | 21,50 |
| 7. Դաղստանի շրջան | 65,5 | 76,1 | 49,2 | 95,1 | 50,0 | 70,0 | 65,2 | 105,0 | 70,6 | 70,0 | 34,8 | 83,0 |
| 8. Ղարսի » | 94,7 | 91,1 | — | 93,1 | 40,0 | 88,1 | 50,8 | 90,6 | 94,8 | 91,6 | 96,5 | 96,7 |

*Սեռերի թւական յարաբերութիւնները դասաւորուած են այստեղ միանգամայն զանազանակերպ ոչ միայն տարբեր ժողովուրդների մօտ, այլ և միևնոյն ժողովրդի մօտ տարբեր տարեթւերին։ Ուշագրաւ է ռուս իգական սեռի թւական ուժեղ ներկայացուցչութիւնը ծայրերկրի համար և բոլոր մասերում 1886 թւակ.։ Նոյնքան ուշագրաւ է այդ ուժեղ ներկայացուցչութեան խիստ զգալի չափերով թուլացումը 1897 թ.։ Մինչև 80 ական թւականները անտեսապէս տակաւին յետամնաց Անդրկովկասը չէր, գրաւում իր սահմաններից դուրս՝ կենտրոնից կամ հիւսիսից առևտրական ու տնտեսական ծառայող պերսոնալ և բանւորական ուժեր, որոնք տեղափոխւում են սովորաբար, գոնէ սկզբում, առանց ընտանիքների, առանց կանանց։ Անդրկովկասի ռուսութիւնը բաղկացած էր այն ժամանակ գերառաւելապէս պաշտօնեաներից՝ հազարումի կարգի չինովնիկներից ու ռազմական*

ների գաւից, որոնք իբրև պետական ծառայութեամբ որոշ ու հաստատուն տեղեր գրաւած պերսոնալ, սովորաբար բերում էին իրանց հետ նաև իրանց ընտանիքներին, հետևապէս կանանց սեռի ներկայացուցիչներին. Մասամբ դրանով կարելի է բացատրել ռուս իգական սեռի թւական ուժեղ ներկայացուցչութիւնը 1886 թ. և մասամբ էլ նրանով, որ բացի ընտանիքի կին անդամներից, Ռուսաստանից գալիս էին նաև մեծ քանակով վարձու կանայք, իբրև աղախիններ ու դաստիարակչուհիներ ընտանիքներում և հաստատութիւններում ծառայելու համար. Յայտնի է, որ մեր երկրի տեղացիները գերադասում են սովորաբար ռուսուհիներ պահելու զանազան ծառայութեան ու աղախնութեան համար. 90-ական թւականների վերջերին արդէն փոխւում են սեռերի այդ թւական յարաբերութիւնները յօգուտ արականի շնորհիւ այն ուժեղ ներգաղթի, որ ունենում է այդ սեռը յանձին զանազան կարգի ծառայող ու բանւոր պերսոնալի և թւով բազմացող ռուս զօրքի. Վերջին տարեթւին արդէն (1914 թ.) սեռերի թւական յարաբերութիւնները միջին տեղն են բռնում. 1886 թ. ռուս կնոջ ամենանուազ ներկայացուցչութիւնը եղել է 65,5 և 76,4 (իւրաքանչիւր 100 տղամարդուն), իսկ ամենամեծ թիւը եղել է 94,7 և 96,8. Ընդհակառակը 1897 թ. ամենանուազ թիւը եղել է 34,9 և 40,0, իսկ ամենամեծը՝ 69,0 և 82,4. 1914 թ. արդէն նուազագոյն թիւը դառնում է 61,7 և 70,0, իսկ ամենամեծը՝ 87,3 և 94,8.

Հայերի մօտ նկատւում են սեռերի համաչափ յարաբերութիւններ, մանաւանդ իրանց բնիկ և կամ վաղուց հաստատւած երկրամասերում. Հայ իգական սեռը թւապէս համեմատաբար նուազ է Բաքուի, Քութայիսի, Սև-ծովեան նահանգներում և Դաղստանի շրջանում. Համաչափ ու բնական են սեռերի յարաբերութիւնները նաև վրացիների մօտ, ի հարկէ միայն իրանց հայրենի նահանգներում. Իսկ Վրաստանից դուրս, Անդրկովկասի միւս վայրերում, ուր փոքրաթիւ վրացիները միայն վերջին տասնամեակների ընթացքում են հաստատւել զանազան ծառայութիւններով, բնականօրէն շատ թոյլ է նրանց իգական սեռի թւական ներկայացուցչութիւնը. Ընդհանուր առմամբ համաչափ են, առանց սուր ծայրերի, սեռերի թւական յարաբերութիւնները նաև մուսուլմանների մօտ՝ նրանց իգական կենտրոններում. Բացառութիւն կազմում է Սև-ծովեան նահանգը, ուր մուսուլմանական սեռը տալիս է 21,50 հոգի 100 տղամարդուն. Մուսուլմանական իգական սեռի թւական մեծութեան ընդհանուր մակարդակը, ինչպէս գիտենք, աւելի ցածր է կանգնած, քան վրացիների և հայերի մօտ.

## 4.

## ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԵՒ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

Մինչև այստեղ մենք պատկերացրինք մեզ յայտնի ժողովուրդների թւական բացարձակ և տոկոսական յարաբերութիւնները նահանգներում և շրջաններում առանձին-առանձին. Այժմ աւելի մանրամասնօրէն մեր վիճակագրական գործողութիւններն ու դիտողութիւնները և տեսնենք, թէ ինչ

պատկեր են ներկայացնում ժողովրդների նոյն յարաբերութիւնները նահանգների և շրջանների գաւառներում և շրջանամասերում առանձին-առանձին։

### Ա. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

| Գաւառներ (քաղաքներով միասին) | 1886 թուականին | | | | 1897 թուականին | | | | 1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Թիֆլիսի գաւառ | 19806 | 49364 | 58349 | 8357 | 55373 | 57933 | 80293 | 16161 | 92467 | 151142 | 130270 | 28519 |
| 2. Ախալքալ. » | 6674 | 46384 | 3741 | 6823 | 5453 | 52539 | 6448 | 7648 | 7185 | 81004 | 6895 | 9557 |
| 3. Ախալցխայի » | 181 | 15042 | 23188 | 16125 | 2238 | 15144 | 12211 | 37958 | 800 | 27149 | 7893 | 52878 |
| 4. Բորչալուի » | 6024 | 37832 | 4163 | 33038 | 9349 | 47423 | 7840 | 37537 | 10962 | 75041 | 3043 | 52368 |
| 5. Գորու » | 976 | 18041 | 102024 | 27 | 5623 | 7686 | 124180 | 585 | 2903 | 24922 | 153655 | 135 |
| 6. Դուշեթի » | 125 | 4032 | 48809 | 352 | 1035 | 1680 | 49690 | 476 | 681 | 9652 | 66037 | 410 |
| 7. Սիղնախի » | 1883 | 10067 | 73315 | 3523 | 4910 | 6392 | 84827 | 5599 | 8074 | 14526 | 109403 | 7224 |
| 8. Թելաւի » | 86 | 12611 | 50537 | 1847 | 719 | 4754 | 57357 | 3746 | 366 | 9407 | 62852 | 1896 |
| 9. Թիոնէթի » | — | 237 | 32337 | 1697 | 638 | 538 | 30302 | 1997 | 101 | 1242 | 40446 | 2445 |
| 10. Զաքաթալ. շրջ. | 167 | 521 | 12730 | 61315 | 434 | 2100 | 12389 | 68190 | 396 | 3002 | 5240 | 75891[1]) |

Այս աղիւսակը կարօտ է բացատրութիւնների։ Եւ ամենամեծ կարիքը այդ բացատրութիւնների ունեն ամենից առաջ հայերի թուական յարաբերութիւնները։

Նահանգական ազգաբնակութեան մասին խօսելու ժամանակ տեսանք, որ հայերը շատ դանդաղ աճում են ունեցել Թիֆլիսի նահանգում 1886—1897թ. շրջանում, աճելով ընդամէնը 4058 հոգով կամ 1,05 տոկ.։ Դանդաղ աճման այդ փաստը պէտք խիստ տարօրինակ երևայ ամեն մէկին, ով գիտէ, թէ որքան մեծ թուով՝ եկւորներ է կլանում այդ նահանգի կենտրոնը հայկական գաւառական ազգաբնակութիւնից (Թիֆլիսի նահանգի

[1]) Տես երեք տարեշրջանների տւեալների համար մեզ յայտնի աղբիւր. ամեն մի ժողովրդի մասին առանձ.-առանձին։

սահմաններից դուրս եղած գաւառներից)։ Այդ փաստը գտնում է իր բացատրութիւնը վերոյիշեալ ցուցակի մէջ։ Բանից երեւում է, որ հայ ազգաբնակութիւնը 1886—1897 թ. ժամանակաշրջանում աճել է Թիֆլիսի նահանգի միայն վեց գաւառներում՝ Թիֆլիսի, Ախալքալաքի, Ախալցխայի (վերջինում շատ չնչին չափերով), Բորչալուի, Թիօնեթի գաւառներում և Զաքաթալայի շրջանամասում. մինչդեռ հայերը խոշոր չափերով (2—3 անգամ), ինչպէս վերևի ցուցակից երեւում է, նուազել են մնացած չորս գաւառներում՝ Գորու, Դուշեթի, Սիղնախի և Թելաւի։ Ինչպէս բացատրել արդեօք այդ արտասովոր նուազման գաղտնիքը. Հետաքրքիր բան է, որ 11 տարուայ ընթացքում (1886—1897 թ.) Գորու գաւառում 18041 հոգի հայ բնակչութիւնը ոչ միայն չ'աճէ, այլև նուազելով նրա թիւը 2½ անգամ իջնէ մինչև 7686 հոգու։ Նոյն յարաբերական չափերով՝ աւելի կամ պակաս տարբերութիւններով, նուազել էին և միւս երեք գաւառների հայերի թիւը։ Կրկնում ենք, ինչպէս բացատրել այդ արտասովոր նուազման գաղտնիքը։ Այդպիսի խոշոր արտագաղթ նախկին ժամանակներում չի կարող եղած լինել։ Համաճարակ ժանտախտ յիշեալ գաւառներում՝ յատկապէս հայերի դէմ, անհնարին է ենթադրել։ Գաղտնիքը պիտի որոնել 1897 թ. ընդհանուր ժողովրդագրութեան սխալ թւերի մէջ։ Եւ բարեբաղդաբար կայ փաստական հնարաւորութիւն՝ շօշափելիօրէն մատնացուցելու գործած սխալի վրայ։ [1])

Սակայն սխալ գործել է ոչ միայն ծանօթութեան մէջ յիշատակուած գաւառների հայ բնակչութեան թւի նկատմամբ, որ 11 տարուայ ընթացքում ահագին նուազում է ցոյց տալիս, այլև նոյն Թիֆլիսի նահանգի մնացած բոլոր գաւառներում, երեւակայեցէք որ նոյն իսկ Թիֆլիսի, Ախալքալաքի, Ախալցխայի, Բորչալուի և անգամ Թիօնեթի գաւառներում հայերի թիւը 1897 թ. ժողովրդագրութեան ժամանակ աւելի քիչ է ցուցակագրը-

[1]) Բանը նրանումն է, որ 1897 թ. ստատիստիկան ամեն մի ժողովրդի թւական հաւաքումների համար հիմք է ընդունել երկու յատկանիշներ. մէկը մայրենի լեզուն, միւսը՝ կրօնադաւանական պատկանելիութիւնը։ Անկասկած առաջին յատկանիշը աւելի ընդհանուր և համամփոփ է, քան երկրորդը. զանազան դաւանութիւնների և կրօնների պատկանող ժողովրդական հատուածները ունեն միևնոյն մայրենի լեզուն, պատկանում են միևնոյն ազգին։ Ընթերցողին յայտնի է, որ մենք ուտիների, հայերի և վրացիների նկատմամբ հիմք ենք ընդունել այդ ընդհանուր յատկանիշը՝ լեզուական կամ ազգային պատկանելիութիւնը։ Չնայելով այդ բանին, Թիֆլիսի նահանգի յիշեալ գաւառներում ըստ մայրենի լեզւի ցուցակագրուած հայերի թիւը անհամեմատ աւելի փոքր է, քան ըստ դաւանութեան (քան նոյնիսկ միայն ըստ հայ լուսաւորչականների թւի)։ Եւ որպէսզի ցոյց տանք այն մեծ և ցաւալի սխալը, որ գործել է ժողովրդագրութիւնը հայերի թւահամարի նկատմամբ, հակադնենք ստորև երկու յատկանիշներով ցուցակագրուած հայերի թւերը 1897 թ. տուեալներով.

ւած, քան պէտք էր փաստորէն, ինչպէս երեւում է հետեւեալ թւերից․

| | Հայերի թիւը ըստ դաւանութեան | Հայերի թիւը ըստ մայրենի լեզւի | Տարբերութիւնը |
|---|---|---|---|
| Թիֆլիսի գաւառ | 64008 | 57933 | 6065 |
| Ախալքալաքի » | 54294 | 52539 | 1655 |
| Ախալցխայի » | 18741 | 15144 | 3597 |
| Բորչալուի » | 48609 | 47423 | 1186 |
| Թիոնեթի » | 806 | 438 | 268 |
| Ընդամէնը՝ | 186458 | 173577 | 12871 |

Ի հարկէ այս հինգ գաւառներում տարբերութիւնը այնքան մեծ չէ, ինչպէս վերոյիշեալ չորս գաւառներում էր։ Այնուամենայնիւ 12871 հոգի հայեր չեն ցուցակագրւել հայերի վրայ այդ գաւառներում։ Ուղղելով այդ սխալը մենք ստանում ենք Թիֆլիսի նահանգի հայ ազգաբնակութեան վերաբերեալ բոլորովին այլ թիւ, քան տեսանք մենք իր տեղում։ Ժողովրդագրութեան հաշուած թւին (196189 հոգի՝ ըստ մայրենի լեզւի) աւելացնելով 34145 (21274+12871, չ'ցուցակագրւած հայերը) ստանում ենք 230334 հոգի, որի տարբերութիւնը՝ 1886 թ. տւեալի նկատմամբ (194131 հոգի), ոչ թէ հաւասար էր 4058 հոգու, ինչպէս մենք տեսանք, այլ 36203 հոգու և հետեւապէս Թիֆլիսի նահանգի հայերի աճումը 11 տարւայ ընթացքում (1886—1897 թ.) կազմում էր ոչ թէ 1,05 տոկոս, այլ 18,65 տոկոս։ Ցաւում ենք, որ միայն այժմ, ուղիղ 20 տարի անցնելուց յետոյ է հրապարակով ուղղագրւում այդ կոպիտ սխալը։

Ինչ վերաբերում է ուծացած ժողովուրդներին, ապա նրանք աճել են

---

| | Հայեր ըստ դաւանութ. | Հայեր ըստ մայր. լեզւի | Տարբերութիւնը |
|---|---|---|---|
| Դարու գաւառ | 19703 | 7686 | 12017 |
| Դուշեթի » | 3177 | 1680 | 1487 |
| Սիգնախի » | 9346 | 6392 | 2954 |
| Թելաւի » | 9560 | 4754 | 4806 |
| Ընդամէնը՝ | 41786 | 20512 | 21274 |

Ինչպէս երեւում է այդ պերճախօս թւերից, հայ բնակչութեան քանակը յիշեալ չորս գաւառներում աւելի քան երկու անգամ նւազ է ցոյց տւած ըստ մայրենի լեզւի պատկանելիութեան. փոխանակ 41786 հայերի, ցուցակագրւած է միայն 20512 հայեր։ Հարց է ծագում. ում վրայ են հաշւած այդ ուծացեալ հայերը (21274 հոգին)։ Ուրիշ ոչ մի հաւանութիւն չկայ, բայց եթէ ընդունել այն, որ թւահաւաք անձը վրացախօս հայերին առանց այլեւայլի հաշւել է վրացիների վրայ։ Եւ այդպիսի մի կոպիտ սխալի առաջին պատասխանատուն հէնց այդ անձն է, որ հարկաւոր պատասխանատուութեամբ չէ վերաբերւել դէպի իր ստանձնած գործը. ազգային-մայրենի լեզւի փոխարէն՝ գործածական լեզուն է հիմք ընդունել իր ցուցակագրութեան։ Երկրորդ պատասխանատուն կենտ. Ստատ. Կոմիտէի այն ստատիստիկներն են, որոնք վարել են Կովկասի բաժինը ժողովրդագրութեան մէջ և չեն նկատել միեւնոյն ժողովրդի թւի վերաբերեալ տւեալների խոշոր հակասութիւնները։

նոյն տասնամեակում (1886—1897 թ.) համարեա բոլոր գաւառներում. ամենից արագ աճել են ռուսները։ Բացառութիւն կազմում է միայն Ախալքալաքի գաւառը, ուր նւազել են ռուսները 1221 հոգով և Ախալցխայի գաւառը, ուր մօտ կիսով չափ նւազել են (10977 հոգով) վրացիները։ Մուսուլմանները աճել են առանց բացառութեան բոլոր գաւառներում. ամենամեծ չափով աճել են նրանք Թիֆլիսի և Ախալցխայի գաւառներում։ Ինչպէս Թիֆլիսի նահանգում ընդհանրապէս, այնպէս էլ նահանգի գաւառներում առանձնապէս, մուսուլմանների մէջ տիրապետող տարրը կազմում են թաթարները։ [1])

Յաջորդ տարեշրջանում (1897—1914 թ.) ժողովուրդների աճման յարաբերութիւնները դասաւորւում են բոլորովին այլ կերպ։ Ամենից առաջ նւազման ոչ մի դէպք և ոչ մի գաւառում ցոյց չեն տալիս հայերը. Նրանք աճել են ամենուրեք և բաւ խոշոր չափերով, մանաւանդ մի քանի գաւառներում։ Ընդհակառակը միւս ժողովուրդները, մանաւանդ ռուսները դրանց մէջ, նւազել են զգալի չափերով մի շարք գաւառներում, ինչպէս տեսնում ենք դա վերջին աղիւսակից։ Ռուսները նւազել են՝ Ախալցխայի (1438 հոգով), Գորու (2720 հոգով), Դուշեթի (354 հոգով), Թելաւի (353 հոգով), Թիոնեթի (537 հոգով) գաւառներում և Զաքաթալայի շրջանամասում (38 հոգով)։ Վրացիները նւազել են երեք տեղերում. Ախալցխայի (4318 հոգով), Բորչալուի (3797 հոգով) գաւառներում և Զաքաթալայի (7149 հոգով) շրջանամասում։ Մուսուլմանները ևս նւազել են միայն 3 գաւառներում՝ Գորու (450 հոգով, Դուշեթի (271 հոգով) և Թելաւի (1850 հոգով), այսինքն նահանգի այն գաւառներում, ուր մուսուլմանները համեմատաբար ամենաթոյլ ազգաբնակչական մասնակցութիւնն ունեն։ Թւապէս ամենամեծ չափով նւազել են վրացիները յիշեալ գաւառներում, մանաւանդ Զաքաթալայի շրջանամասում։ Եւ դժբաղդաբար չունենք այդ նւազման փաստերի պատճառները մատնացուցող օժանդակ աղբիւրներ, որպէսզի նրանց ստուգելու և բացատրելու հնարաւորութիւն ունենանք։

Աւելի շօշափելիօրէն ցոյց տալու համար ժողովուրդների աճման տեմ-

---

[1]) Այսպէս օրինակ 1886 թ. Թիֆլիսի գաւառի 8357 մուսուլմաններից 7724 հոգին եղել են թաթարներ, Ախալքալաքի գաւառում՝ 6823 մուսուլմաններից 6091 հոգին թաթարներ, Ախալցխայի գաւառում բերւած թիւը՝ 16125 հոգի, ամբողջապէս թաթարներ են, նոյնը և Բորչալուի գաւառում՝ 33037 հոգի, Սիղնախի գաւառում՝ 3523 հոգի. Թելաւի գաւառ 1847 մուսուլմաններից 1839 կազմում են թաթարներ։ Իսկ Զաքաթալայի շրջանամասում մուսուլմանների մօտ 1/3 մասն է բաղկացած թաթարներից՝ 61315 հոգուց միայն 21090 հոգին։ Իսկ 1897 թ. տւեալներով նոյն գաւառներում թաթարների թւական յարաբերութիւնները եղել են այսպէս. Թիֆլիսի գաւառում 16161 մուսուլմաններից եղել են 13764 հոգին թաթարներ, Ախալքալաքի գաւառում՝ 7648 մուսուլմ. 6572 հոգ. թաթար., Ախալցխայի գաւառի մուսուլմ. ընդհանուր թւից՝ 37958 հոգուց, միայն 1/3 մասն է՝ 12370 հոգին, բաղկացած թաթարներից։ Բորչալուի գաւ. 37537 մուսուլմ. ամբողջապէս թաթարներ են. Սիղնախի գաւ. 5599 մուսուլմ. 5272 թաթարներ են, Թելաւի գաւ. 3746 մուսուլմ. 1873 թաթարներ են, ընդհակառակը Թիոնեթի գաւ. 1997 մուսուլմ. միայն 3 հոգի են թաթարներ. վերջապէս Զաքաթալայի շրջանամասում 68190 մուսուլմ. 28950 հոգի թաթարներ են։

պը և նւազման դէպքերը Թիֆլիսի նահանգի բոլոր գաւառներում, պատկերացնենք այն տոկոսներով.

## Ժողովուրդների տոկոսական աճումը Թիֆլիսի նահանգի գաւառներում.

| | 1886—1897 թւականին | | | | 1897—1914 թւականին | | | | 1886—1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուսն. | Հայեր. | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Թիֆլիսի գաւ. | 180,00⁰/₀ | 17,36⁰/₀ | 37,60⁰/₀ | 93,38⁰/₀ | 67,00⁰/₀ | 160,90⁰/₀ | 62,14⁰/₀ | 76,46⁰/₀ | 367,00⁰/₀ | 206,18⁰/₀ | 125,30⁰/₀ | 241,50⁰/₀ |
| 2. Ախալքալ. » | —22,40„ | 13,30„ | 72,40„ | 12,10„ | 31,76„ | 35,14„ | 6,93„ | 25,00„ | 7,65„ | 74,63„ | 84,33„ | 40,00„ |
| 3. Ախալցխ. » | +[1]) | 0,67„ | —89,15„ | 19,32„ | —180,00„ | 80,00„ | —54,70„ | 40,00„ | +[4]) | 80,50„ | —200,00„ | 66,00„ |
| 4. Բորչալուի » | 55,20„ | 25,35„ | 88,30„ | 126,80„ | 17,25„ | 60,00„ | —157,60„ | 40,00„ | 82,20„ | 98,80„ | —36,80„ | 216,32„ |
| 5. Գորու » | 476,00„ | —133,30„ | 21,31„ | +[1]) | —93,70„ | 224,25„ | 23,89„ | —[1]) | 200,00„ | 38,14„ | 50,66„ | +[1]) |
| 6. Դուշեթի » | +[1]) | —[2]) | 1,80„ | 35,23„ | —58,00„ | 117,38„ | 33,12„ | —18,53„ | +[6]) | 139,38„ | 35,30„ | 19,31„ |
| 7. Սիգնախի » | 160,80„ | —57,50„ | 15,70„ | 58,92„ | 64,44„ | 127,25„ | 29,00„ | 30,00„ | 329,00„ | 44,29„ | 49,22„ | 105,05„ |
| 8. Թելաւի » | +[1]) | —165,27„ | 13,50„ | 103,00„ | —[4]) | 98,00„ | 9,60„ | —97,57„ | +[6]) | —34,06„ | 20,41„ | 2,69„ |
| 9. Թիոնեթի » | — | +[2]) | —6,70„ | 17,00„ | —[4]) | 130,90„ | 33,47„ | 22,43„ | — | 424,00„ | 55,07„ | 44,00„ |
| 10. Զաքաթալ. շրջ. | +[1]) | +[1]) | —8,40 | 10,60„ | —[4]) | 43,00„ | —136,41„ | —2,00„ | +[6]) | 476,20„ | —156,30„ | 8,53„ |

[1]) Ռուսների թիւը աւելացել է (1886—1897 թ.) Ախալցխայի գաւ. 2057 հոգով, Դուշեթի գ. 910 հոգ., Թելաւի գաւ. 633 հոգ. և Զաքաթալայի շրջ. 267 հոգով.

(Մնացած ծանօթ. տես երես 96)

*Բացարձակ թվերի աղյուսակը՝ իր աճման ու նվազման պատկերով, անդրադառնում է տոկոսների այս աղյուսակի մէջ։ Առաջին տարեշրջանում (1886—1897 թ., նւազման ամենախոշոր չափեր և յաճախակի դէպքեր ունեցել է հայ բնակչութիւնը։ Բայց մենք ունինք հարկաւոր բացատրութիւնները իր տեղում, ցոյց տալով, որ ժողովրդագրութեան գործած կոպիտ սխալի պատճառով իրականութեան անհամապատասխան թւեր են բերւած հայերի համար Թիֆլիսի նահանգի բոլոր գաւառներում։ Այսպէս օրինակ ըստ ժողովրդագրութեան տւեալների դուրս է գալիս, որ յիշեալ տարեշրջանում հայերի թիւը Գորու գաւառում նւազել է 133,30 տոկոսով, իսկ մեր ստուգութեամբ դուրս է գալիս, որ հայերի թիւը ոչ միայն չի նւազել այդ գաւառում, այլև նոյնիսկ աճել է 9,21 տոկ.։ Այնուհետև Սիգնախի գաւառում հայերի թիւը նւազել է ոչ թէ 57,50 տոկ., այլ 7,70 տոկոսով. Թելաւի գաւառում հայերի թիւը նւազել է ոչ թէ 165,27 տոկ., այլ 32,12 տոկ. Թիֆլիսի գաւառում հայերի թիւը աճել է ոչ թէ 17,36 տոկ., այլ մօտ 30,00 տոկ. այսպէս և միւս գաւառները։ Հէնց շնորհիւ նախորդ տարեշրջանի թւական այդ նւազ տւեալների, յաջորդ տարեշրջանում (1897—1914 թ.) հայ բնակչութեան աճումը պատկերանում է թռիչքներով, այսինքն անհամապատասխան չափերով։ Մինչդեռ ժողովրդագրութեան տւեալներով հայերի թիւը Գորու գաւառում նւազել է (1886—1897 թ.) 133,30 տ., իսկ յաջորդ տարեշրջանում (1897—1814 թ.) աճել է նոյն գաւառում 224,25 տոկ.,—երկու դէպքում էլ անկարելի և անսովոր տոկոսներ,—մեր ստուգած տւեալներով, ընդհակառակը, Գորու գաւառի հայերը առաջին տարեշրջանում աճել են 9,21 տոկ. իսկ երկրորդ տարեշրջանում աճել են 26,50 տոկոսով։ Նոյն կերպ փոխւում են տոկոսական յարաբերութիւնները նաև միւս գաւառներում՝ համաձայն մեր ստուգած տւեալների։ Բնորոշ է այն հանգամանքը, որ նւազման ոչ մի դէպք չունեն հայերը երկրորդ տարեշրջանում, այնպէս ինչպէս մուսուլմաններն են առաջին տարեշրջանում. մինչդեռ ռուսներն ու վրացիները ցոյց են տալիս մի շարք նւազման դէպքեր թէ առաջին և թէ երկրորդ տարեշրջաններում։*

*Միակ գաւառը, ուր բոլոր ժողովրդական տարրերը առանց բացառութեան աճել են մեզ յայտնի տարեթւերին, դա Թիֆլիսի գաւառն է, որը, շնորհիւ իր կենտրոնի, բացի բնական աճումից, շարունակ ընդունել է դրսից եկւոր տարրեր։ Հայերը ունեցել են այնտեղ առաջին շրջանում ամենաթոյլ աճումը, իսկ երկրորդում՝ ամենաուժեղ աճումը։ Վրացիները և*

---

*[2]) Դուշեթի գաւառում հայերի թիւը պակասել է 2352 հոգ., Թիանեթի գաւ. աճել է 301 հոգի իսկ Զաքաթ. շրջ. աճել է 1579 հոգի։*

*[3]) Գորու գաւառում մահմեդականները աճել են նոյն տարեշրջանում 558 հոգով։*

*[4]) Թելաւի, Թիոնեթի գաւառ. և Զաքաթալայի շրջ. ռուսները (1897—1914 թ. նւազել են՝ 353 հ., 537 հ., և 38 հոգով։*

*[5]) Գորու գաւառում մուսուլմանները նւազել են նոյն տարեշրջանում 450 հոգով։*

*[6]) Ախալցխայի, Դուշեթի, Թելաւի գաւ. և Զաքաթ. շրջ. ռուսները (1886—1914 թ.) աճել են 619 հ., 556 հ., 280 հ. և 229 հոգով։*

*[7]) Գորու գաւառում մուսուլմանները աճել են նոյն տարեշրջանում 108 հոգով։*

հայերը եղել են Թիֆլիսի գաւառում մի տեսակ բացական մրցակցութեան մէջ. 1886 և 1897 թուականների վրացիները անպայման թւապէս գերազանցում էին հայերին (առաջինում՝ 8985 հոգով, երկրորդում 22360 հոգով), իսկ 1914 թ. հայերը գերազանցում են վրացիներին նոյն գաւառում 20872 հոգով: Հայ տարրի այդ մեծաքանակ ներկայացուցչութիւնը պէտք է վերագրել գլխաւորապէս Թիֆլիս քաղաքին, ուր նրանք շատ վաղուց համեմատական մեծամասնութեան մէջ են եղել, ինչպէս մենք կտեսնենք յետոյ մանրամասն:

Այժմ տեսնենք, թէ մեզ յայտնի ժողովուրդներից ամեն մէկը ինչ տոկոսական մասն է կազմել Թիֆլիսի նահանգի գաւառների ընդհանուր ազգաբնակութեան մէջ. դա երեւում է հետեւեալ աղիւսակից.

| | 1886—1897 թուականին | | | | 1897—1914 թուականին | | | | 1886—1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուսն. | Հայեր. | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Թիֆլիսի գաւ. | 13,68% | 34,08% | 40,08% | 5,78% | 23,60% | 25,00% | 34,22% | 6,88% | 20,26% | 33,12% | 28,54% | 6,25% |
| 2. Ախալքալ. » | 10,46,, | 72,70,, | 5,86,, | 10,70,, | 7,50,, | 72,26,, | 8,86,, | 10,52,, | 6,84,, | 77,18,, | 6,57,, | 9,17,, |
| 3. Ախալցխ. » | 0,31,, | 25,58,, | 39,44,, | 27,42,, | 3,25,, | 22,00,, | 17,74,, | 55,14,, | 0,83,, | 28,29,, | 8,22,, | 55,00,, |
| 4. Բորչալուի » | 5,91,, | 37,14,, | 4,08,, | 32,43,, | 7,27,, | 36,56,, | 6,09,, | 29,20,, | 6,28,, | 43,03,, | 1,74,, | 30,03,, |
| 5. Գորու » | 0,54,, | 10,12,, | 56,62,, | — | 2,94,, | 4,02,, | 65,00,, | 0,31,, | 1,23,, | 10,58,, | 65,21,, | — |
| 6. Դուշեթի » | — | 5,76,, | 69,71,, | 0,50,, | 1,53,, | 2,48,, | 73,37,, | 0,70,, | 0,83,, | 11,81,, | 80,73,, | 0,50,, |
| 7. Սիղնախի » | 2,12,, | 11,33,, | §2,54,, | 4,00,, | 4,80,, | 6,24,, | 82,91,, | 5,46,, | 5,71,, | 10,27,, | 77,40,, | 5,11,, |
| 8. Թելաւի » | — | 19,21,, | 77,67,, | 2,83,, | 1,07 | 7,12,, | 86,00,, | 5,61,, | 0,41,, | 12,57,, | 84,00,, | 2,58,, |
| 9. Թիոնեթի » | — | 0,70,, | 92,90,, | 4,89,, | 1,87,, | 1,57,, | 90,00,, | 5,84,, | 0,22,, | 2,77,, | 90,24,, | 5,45,, |
| 10. Զաքաթալ. շրջ. | — | 0,70 | 14,23,, | 82,35,, | 0,51,, | 2,50,, | 14,71,, | 80,96,, | 0,46,, | 3,54,, | 6,20,, | 89,64,, |

Ժողովուրդների թւական մասնակցութեան տոկոսական ստորճանացոյցերն է տալիս մեզ այս աղիւսակը՝ Թիֆլիսի նահանգի գաւառներում. Մի նահանգ, ուր վրացիները ընդհանուր առմամբ մեծամասնութիւն են (յարաբերական) կազմում, կասկած չկայ, որ նրանք պատկառելի թիւ պիտի կազմեն նահանգի առանձին գաւառներում, շատերի մէջ ունենալով ազգաբնակութեան բացարձակ մեծամասնութիւնը. Հինգ գաւառների (Գորու, Դուշեթի, Սիգնախի, Թելաւի և Թիանեթի) մէջ վրացիները կազմել են այդպիսի մեծամասնութիւն և այդ ապահով դիրքը պահպանել են նրանք առաւել կամ պակաս տատանումներով, երեք տարեթւերին. Երկու գաւառներում (Թիֆլիսի և Ախալցխայի) նրանց մեծամասնութիւնը եղել է յարաբերական, բայց միայն 1886 թւականին. 1897 թ. վրացիները Ախալցխայի գաւառում զիջում են իրանց դիրքը մուսուլմաններին, իսկ 1914 թ. Թիֆլիսի գաւառում նրանք զիջում են իրանց յարաբերական տեղը հայերին. Վերջիններս միայն մի տեղ են բացարձակ մեծամասնութիւն կազմում՝ Ախալքալաքի գաւառում, ուր հայերի տոկոսը 1886 թ. 72,70 տոկոս է եղել, իսկ 1914 թ. հասել է 77,18 տոկոսի. Այնուհետև Բորչալուի գաւառում հայերը կազմում են յարաբերական մեծամասնութիւն և այդ դիրքը պահպանում են նրանք բոլոր տարեթւերին, նոյն իսկ հետզհետէ աւելի ուժեղացնելով իրանց տոկոսական բաժինը (1886 թ. 37,14 տ., իսկ 1914 թ. 43,03 տ.). Ժողովրդագրութեան գործած սխալը՝ հայերի թւահամարի նկատմամբ, արտայայտւում է, անշուշտ, նաև վերոյիշեալ աղիւսակում. Օրինակ 1897 թ. հայերի տոկոսը եղել է Թիֆլիսի գաւառում ոչ թէ 25,00 տ., այլ 27,28 տ., Գորու գաւառում եղել է ոչ թէ 4 02 տ., այլ 10,31 տոկոս, աւելի քան երկու անգամ աւելի. Սիգնախի գաւառում եղել է ոչ թէ 6,24 տոկոս, այլ 9,03 տոկ., այնուհետև Թելաւի գաւառում եղել է ոչ թէ 7,12 տոկոս, այլ աւելի քան երկու անգամ՝ 14,32 տոկ.: Ի հարկէ համապատասխան չափերով պէտք է նւազեցնւեն նոյն գաւառներում վրացիների տոկոսները, որոնց վրայ հաշւած են վրացախօս հայերը.

Ինչ վերաբերում է Յիշած ժողովուրդներին, ապա պէտք է ասել, որ մուսուլմանները միայն երկու տեղ են կազմում բացարձակ մեծամասնութիւն (1897 թւականից սկսած), այն է Ախալցխայի գաւառում և Ջաքաթալայի շրջանակում բոլոր տարեթւերին: Մնացած գաւառներում նա ճնշւած փոքրամասնութեան մէջ է գտնւում, չհաշւելով Բորչալուի գաւառը, ուր մուսուլմանները հայերից յետոյ երկրորդ տեղն են բռնում. Ինչ վերաբերում է ռուսներին, ապա նրանք ամենուրէք ճնշւած փոքրամասնութիւն են կազմում, ոչ մի տեղ չունենալով ազգաբնակութեան թէկուզ համեստ մեծամասնութիւնը. Համեմատաբար ուժեղ է ռուսների թւական մեծութիւնը Թիֆլիսի գաւառում,—անշուշտ շնորհիւ նրա կենտրոնի — ուր ռուսները կազմում են ազգաբնակութեան 1/5 մասը (1914 թ.).

## Ե. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ՔՈՒԹԱՅԻՍԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

Այժմ տեսնենք, թէ թուական ու տոկոսական նոյն յարաբերութիւնների տեսակէտից ինչ պատկեր են ներկայացնում Քութայիսի նահանգի գաւառները.

| Գաւառներ (քաղաքներով միասին) | 1886 թուականին | | | | 1897 թուականին | | | | 1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Քութայիսի գաւ. | 1578 | 2376 | 184877 | 205 | 4736 | 1331 | 210064 | 368 | 11719 | 1847 | 255792 | 410 |
| 2. Շորապանի » | — | 538 | 132910 | — | 420 | 470 | 153665 | 86 | 809 | 3499 | 198935 | 885 |
| 3. Ռաչինսկու » | — | 116 | 60189 | — | 64 | 173 | 56010 | 4 | 40 | 249 | 87407 | 9 |
| 4. Լեչխումսկի » | — | 140 | 45673 | — | 28 | 91 | 47102 | 9 | 14 | 355 | 59396 | 25 |
| 5. Սենակսկի » | 9 | — | 103098 | — | 1520 | 448 | 112147 | 270 | 3260 | 1981 | 145153 | 100 |
| 6. Զուգդիդի » | 35 | — | 105242 | — | 139 | 10 | 114416 | 179 | 106 | 6 | 131531 | 150 |
| 7. Օզուրգեթի » | 83 | — | 74171 | 182 | 569 | 29 | 86414 | 435 | 780 | 25 | 110624 | — |
| 8. Բաթումի շրջ. | 1767 | 3862 | 44996 | 2981 | 8930 | 7120 | 57491 | 6478 | 12163 | 9025 | 83718 | 7341 |
| 9. Արդուինի » | — | 7775 | 17802 | 26395 | 1026 | 7819 | 5521 | 41633 | 863 | 11099 | 17798 | 40211 |
| 10. Սուխումի » | 971 | 1037 | 4166 | 4177 | 6011 | 6552 | 25873 | 11062 | 21764 | 17886 | 27095 | 19843 |

Միապաղաղ ազգաբնակութեան խտացած ամփոփ։ Թերը խոշոր չափերով աչքի են ընկնում Քութայիսի նահանգի բոլոր եօթ գաւառներում. Այստեղ վրացական էլեմենտի բացարձակ մեծամասնութիւնը հասնում է

*ամենաբարձր սահմանի։ Վերջին երեք շրջանամասերում՝ Բաթումի, Արդվինի և Սուխումի, վրացիները յարաբերական մեծամասնութիւն են կազմում միայն երկուսի մէջ՝ Բաթումի և Սուխումի շրջանամասերում, իսկ Արդվինի շրջ. նրանք երկրորդ տեղն են բռնում մուսուլմաններից յետոյ։ (Յիշեցնում ենք, որ Բաթումի շրջանի (область) մուսուլման վրացիները հաշուած են վրացիների վրայ)։ Մուսուլմանները, որոնք այդ շրջանում դրեթէ բացառապէս թիւրքերից են բաղկացած, յարաբերական մեծամասնութիւն են կազմում միայն Արդվինի շրջանամասում։ Ինչ վերաբերում է հայերին, նրանք շատ թոյլ են ներկայացրուած նահանգի բոլոր գաւառներում, իսկ երեք շրջանամասերում, մանաւանդ Սուխումի շրջ. (1914 թ.) նրանք համեմատաբար ուժեղ թւական մասնակցութիւն ունեն։ Էլ աւելի թոյլ է ռուսների թըւական քանակը գաւառներում, բացի Քութայիսի գաւառից, ուր վերջին տարեթւին ռուսների քանակը անցնում է տասը հազարից, որի պատկառելի տոկոսը, սակայն բաղկացած է ռուս զօրքից։ Ռուսները և յիշեալ շրջանամասերում (յատկապէս Բաթումի և Սուխումի, 1914 թ.) թւական ուժեղ են ներկայացրուած, աւելի մեծ թւով, քան հայերը։ Տեսնենք այժմ, թէ ինչ տեմպով են աճել ժողովուրդները նահանգի զանազան մասերում։*

## Ժողովուրդների տոկոսական աճումը կամ նւազումը Քութայիսի նահանգի գաւառներում կամ շրջանամասերում

*(Տես աղիւսակ երես 101)*

| Գաւառներ (քաղաք-ներով միասին) | 1886—1897 թ ւ ա կ ա ն ի ն | | | | 1897—1914 թ ւ ա կ ա ն ի ն | | | | 1886—1914 թ ւ ա կ ա ն ի ն | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Քութայիսի գաւ. | 200,00% | -78,43% | 13,60% | 80,00% | 147,50% | 38,80% | 21,80% | 11,44% | 643,00% | -28,62% | 38,35% | — |
| 2. Շորապանի » | — | -15,00,, | 15,61,, | — | 92,62,, | 644,47,, | 26,24,, | +[4]) | — | 550,37,, | 50,00,, | — |
| 3. Ռաչինսկու » | — | 49,13,, | -7,46,, | — | —[3]) | 44,00,, | 56,16,, | +[4]) | — | 114,65,, | 45,22,, | — |
| 4. Լեչխումսկի » | — | —[2]) | 3,15,, | — | —[3]) | 290,00,, | 26,09,, | +[4]) | — | 153,57,, | 30,00,, | — |
| 5. Սենակսկի » | +[1]) | — | 9,00,, | — | 114,50,, | 275,00,, | 30,00,, | —[4]) | +[5]) | — | 40,78,, | — |
| 6. Զուգդիդի » | +[1]) | — | 8,71,, | — | —[2]) | —[4]) | 15,00,, | —[4]) | +[6]) | — | 25,00,, | — |
| 7. Օզուրգեթի » | +[1]) | — | 16,50,, | +[2]) | 39,40,, | —[4]) | 28,01,, | — | +[6]) | — | 49,14,, | — |
| 8. Բաթումի շրջան | 405,38,, | 84,36,, | 27,77,, | 53,52,, | 36,20, | 27,00,, | 45,60,, | 1,45,, | 538,34,, | 134,00,, | 86,05,, | -51,32,, |
| 9. Արդուինը » | -- | 0,56,, | -222,44,, | 31,55,, | -20,00,, | 42,00,, | 222,35,, | -4,85,, | — | 42,76,, | —[7]) | 25,50,, |
| 10. Սուխումի » | 520,00,, | 531,82,, | 519,41,, | 165,00,, | 262,06,, | 173,00,, | 4,72,, | 79,38,, | 2141,40,, | 1623,72,, | 550,40,, | 375,00 |

[1]) Ռուսները աճել են Սենակսկի գաւառում 1511 հոգով.

[2]) Հայերը նուազել են Լեչխումսկի գաւառում 49 հոգով.

[3]) Ռուսները նուազել են՝ Ռաչինսկու գաւ. 24 հոգ. իսկ Լեչխումսկի գաւ. 14 հոգով.

[4]) Մուսուլմանները աճել են՝ Շորապ. գաւ. 799 հոգով. Ռաչինսկու գաւ. 5 հոգ., Լեչխումսկի գաւ. 16 հոգի, իսկ Սենակսկի գաւ. նուազել են 170 հոգով.

[5]) Ռուսները աճել են Սենակսկի գաւառում 3251 հոգով.

[6]) Ռուսները աճել են՝ Զուգդիդի գաւառում 134 հոգով. Օզուրգեթի գաւառում 482 հոգով.

(Մնացած ծանօթութիւնները նայել երես 102)

*Բոլոր տարրերի մէջ աճման ամենից համաչափ ընթացք՝ առանց հակադիր ծայրերի և խոշոր նուազումների, ունեցել են վրացիները յատկապէս Քութայիսի նահանգի գաւառներում. Միայն մի գաւառում են վրացիները նուազման դէպք ցոյց տալիս (Ռաչինսկու գաւ. 1886 թ. 7,46 տոկ.). Բոլոր գաւառներում աճել են նրանք առանց բացառութեան. Իսկ շրջանամասերի նկատմամբ նրանք նուազել են միայն Արդուինում (1886 և 1914 թ. թ.). Երկրորդ տարեշրջանում (1897—1914 թ.) նրանք ոչ մի տեղ չեն նուազել. Մնացած ժողովուրդները, մանաւանդ հայերը և մասամբ ռուսները ունեցել են նուազման շատ դէպքեր. Աճման ամենայաջող ընթացք ունեցել են հայերը նոյն երկրորդ տարեշրջանում, ուր նրանք միայն Զուգդիտի և Օզուրգեթի գաւառներում են շատ չնչին թւով (4-ական հոգով) նուազել, իսկ միւս տեղերում ունեցել են խոշորատոկոս աճման ընթացք, որի վերին ծայրը հասնում է մինչև 1623,72 տոկոսի (Սուխումի շրջ.). Աճման թուով ռուսները անցնում են հայերից հէնց նոյն Սուխումի շրջ. (2141,40 տ.). Դա առևտրաարդյունաբերական նոր վայրի առանձնայատկութիւնը և եկւոր տարրի արագ կենտրոնացման տենդենցների մի աւելորդ ապացոյցն է. Մահմեդականները և վրացիները ևս աճման ամենաարագ տեմպ ունեցել են նոյն Սուխումի շրջանակում (առաջինները 375,00 տոկ., երկրորդները՝ 550,40 տոկոսով).*

*Թէ տեղական ամբողջ ազգաբնակութեան ինչ տոկոսական բաժինն է կազմում ամեն մի ժողովուրդ, դա ցոյց է տալիս հետևեալ աղիւսակը.*

### Ժողովուրդների տոկոսը Քութայիսի նահանգի գաւառների ազգաբնակութեան ամբողջից.

*(Տես աղիւսակ երես 103)*

[2]) *Մուսուլմանները աճել են Օզուրգեթի գաւառում 253 հոգով.*

[3]) *Ռուսները նուազել են Զուգդիտի գաւառում 33 հոգով.*

[4]) *Հայերը նուազել են Զուգդիտի և Օզուրգեթի գաւառներում 4-ական հոգով.*

[5]) *Մուսուլմանները նուազել են Զուգդիտի գաւառում 29 հոգով.*

[6]) *Ռուսները աճել են Զուգդիտի գաւ. 61 հոգով, իսկ Օզուրգեթի գաւ. 697 հոգով.*

[7]) *Վրացիները նուազել են Արդուինի շրջ. 5 հոգով.*

| Գաւառներ (քաղաքներով միասին) | 1886 Թ ւ ա կ ա ն ի ն | | | | 1897 Թ ւ ա կ ա ն ի ն | | | | 1914 Թ ւ ա կ ա ն ի ն | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Քութայիսի գաւ. | 0,82% | 1,23% | 95,60% | — | 2,13% | 0,60% | 94,76% | — | 4,12% | 0,64% | 89,89% | — |
| 2. Շորապանի » | — | 0,36,, | 90,26,, | — | — | 0,30,, | 98,10,, | — | 0,39,, | 1,70,, | 96,57,, | 0,43,, |
| 3. Ռաչինսկու » | — | — | 93,67,, | — | — | — | 92,70,, | — | — | 0,30,, | 98,47,, | — |
| 4. Լեչխումսկի » | — | — | 98,64,, | — | — | — | 98,60,, | — | — | 0,58,, | 97,71,, | — |
| 5. Սենակսկի » | — | — | 99,53 | — | 1,31,, | 0,31,, | 96,85,, | — | 3,10 | 1,09,, | 94,00,, | — |
| 6. Զուգդիդի » | — | — | 99,90 | — | — | — | 99,60,, | — | — | — | 99,50,, | — |
| 7. Օզուրգեթի » | — | — | 98,00 | — | 0,63,, | — | 95,67,, | 0,48,, | 0,70,, | — | 99,27,, | — |
| 8. Բաթումի շրջան | 2,87,, | 6,30,, | 73,32,, | 4,86,, | 10,09,, | 8,05,, | 65,00,, | 7,32,, | 10,56,, | 7,46,, | 69,22,, | 6,07,, |
| 9. Արդուինի » | — | 14,83,, | 33,95,, | 50,34,, | 1,83,, | 14,00,, | 9,83,, | 74,16,, | 1,23,, | 15,80, | 25,35,, | 57,30,, |
| 10. Սուխումի » | 1,43, | 1,53,, | 6,14,, | 6,14,, | 5,66,, | 6,17,, | 24,37,, | 10,41,, | 11,41,, | 9,42,, | 14,30,, | 10,45,, |

Վրաց ազգաբնակչութեան միապաղաղ կենտրոնացման այն նախանձելի պատկերը, որ տեսանք մենք բացարձակ թւերի աղիւսակում, այստեղ արտայայտւած է աւելի յստակ ու շօշափելիօրէն։ Նահանգի բոլոր գաւառներում իննսուն տոկոսից ցած չի իջնում խտացած միապաղաղութեան աստիճանը. իսկ նրա մաքսիմումը հասնում է 99,90 տոկոսի (Զուգդիդի գաւառում)։ Ամբողջ եօթ գաւառներից բաղկացած տերիտորիայում վրացական տարրը կազմում է ողջ տեղական ազգաբնակչութեան ոչ պակաս քան 96,20 տոկոսը։ Եւ եթէ Քութայիսի նահանգը վերցնենք իր նորագոյն վարչական տերիտորիական սահմաններով, չհաշւելով վերջին երեք շրջանամասերը (Բաթումի, Արդւինի և Սուխումի), ապա կստանանք Անդրկովկասում մի նահանգ, ուր ազգային միատարրը կստանայ աննման միապաղաղութիւն ու կենտրոնացում։ Ի հարկէ որոշ գաւառներում տարեթւից տարեթիւ նւազել է վրացական էլեմենտի տոկոսական բաժինը։ Ամենից զգալի չափերով արտայայտւել է այդ տենդենցը, բնականօրէն, Քութայիսի գաւառում, ուր վրացիների տոկոսը 95,60 տոկոսից (1886 թ.) իջել է մինչև 89,89 տոկոսի։ Նահանգի կենտրոնը, անշուշտ, աւելի մեծ չափերով, քան որև է յետընկած գաւառ, ընդունում է դրսից եկւոր տարրեր, որոնք ունեն սովորաբար՝ տեղական տնտեսա-կուլտուրական կեանքի զարգացման հետ զուգընթաց, աւելի արագ աճելու տենդենցներ, քան բնիկ տարրը։ Վրացական խոշոր մասսաների հանդէպ, միւս ժողովուրդները, անկասկած, չքանում են նահանգի գաւառներում իրանց չնչին տոկոսներով։ Միայն Բաթումի, Արդւինի Սոխումի և շրջանամասերումն է որոշ չափով ուժեղանում նրանց տոկոսական մասնակցութիւնը, մանաւանդ Սուխումի շրջանամասում, ուր ռուսների և հայերի տոկոսական բաժինները շատ խոշոր չափերով են աճել. առաջինների տոկոսը 1,43 տոկոսից (1886 թ.) բարձրացել է մինչև 11,41 տոկոսի (1914 թ.), իսկ երկրորդներինը 1,53 տոկոսից հասել է 9,42 տոկոսի։ Բաթումի շրջանամասում ևս վրացիութիւնը, գլխաւորապէս մահմեդակ. վրացիութիւնը կազմում է տեղական ազգաբնակչութեան բացարձակ մեծամասնութիւնը. 1886 թ. նրանց տոկոսը կազմել է այնտեղ 73,32 տ., իսկ 1914 թ. 69,22 տոկոս։ Այդ շրջանամասում ևս ռուսները աճել են մեծ արագութեամբ. 1886 թ. նրանց տոկոսը եղել է 2,87 տ., իսկ 1914 թ. հասել է այդ տոկոսը 10,56 տոկոսի։ Մուսուլմանները միայն Արդւինի շրջանամասումն են կազմում մեծամասնութիւն. 1886 թ. նրանց տոկոսը կազմել է 50,34 տ., որը հասել է 57,30 տոկոսի 1914 թուականին։

### Ը. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ.

*Անցնենք այժմ Երեւանի նահանգին և ցոյց տանք ժողովուրդների նոյն թւական ու տոկոսական յարաբերութիւնները նրա գաւառներում.*

| Գաւառներ (քաղաքներով միասին) | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Երեւանի գաւառ | 373 | 43568 | 18 | 68228 | 3713 | 58148 | 154 | 85549 | 2379 | 73731 | 219 | 96671 |
| 2. Ալէքսանդր. » | 1022 | 124555 | 16 | 5461 | 6836 | 141522 | 272 | 8496 | 7442 | 200240 | — | 8983 |
| 3. Նախիջեւանի » | 190 | 35470 | 4 | 48356 | 1014 | 34672 | 42 | 64825 | 842 | 53684 | 205 | 81305 |
| 4. Նոր-Բայազէտի » | 2567 | 68793 | — | 31696 | 2716 | 81285 | 37 | 38122 | 4957 | 116075 | — | 52820 |
| 5. Սուրմալուի » | — | 22096 | — | 42210 | 1861 | 27075 | 23 | 52640 | 350 | 31236 | — | 57256 |
| 6. Շար.-Դարալ. » | — | 17094 | — | 44446 | 122 | 20726 | 7 | 55328 | 119 | 25923 | — | 58540 |
| 7. Էջմիածնի » | — | 64124 | — | 35763[1]) | 175 | 77572 | 53 | 45139[2]) | 319 | 96390 | — | 51002[3]) |

[1]) Ինչպէս Երեւանի նահանգի մուսուլման ընդհանուր ազգաբնակութեան մէջ, այնպէս էլ իւրաքանչիւր գաւառի մէջ թաթարները կազմում են տիրապետող տարրը։ Այսպէս օրինակ 1886 թ. Երեւանի գաւառում թաթարները եղել են 60108 հոգի կամ կազմել են տեղական մուսուլման ազգաբնակութեան 88,10 տոկոսը։ Քրդեր եղել են 8129 հոգի կամ 11,90 տոկոս։ Ալեքսանդրապոլի գաւառի մուսուլմանները եղել են բացառապէս թաթարներ, բացի դրանից այնտեղ եղել են 3739 քրդեր, բայց բոլորը եզիդ-

(Մնացած ծանօթութիւնները տես երես 106)

Մենք գիտենք, որ նահանգական ամբողջ ազգաբնակութեան մէջ հայերը կազմում են բացարձակ մեծամասնութիւն. և այդ փաստը անդրադառնում է գաւառների թւական տւեալների մէջ. Ի հարկէ. հայկական մեծամասնութիւնը չունի այն մեծաքանակ գերազանցումը՝ միւս ժողովրդական տարրերի հանդէպ, ինչ ունի վրացական մեծամասնութիւնը Քութայիսի նահանգում և մուսուլմ. մեծամասնութիւնը՝ Բագուի, Գանձ. նահանգներում և Դաղստանի շրջանում. Աւելին կասենք. գաւառների թւական տւեալների տեսակէտից էլ հայերը չունեն այն նպաստաւոր ազգաբնակչական ամփոփումները, ինչ ունեն վրացիներն ու մուսուլմանները իրանց ապահով մեծամասնութեան տերրիտորիաներում, ինչ ունեն վրացիներն թէ՛ գամ Թիֆլիսի նահանգի մի շարք գաւառներում (ինչպէս են՝ Գորու, Դուշեթի, Սիգնախի, Թելաւի և Թիոնեթի). Երևանի նահանգի եօթ գաւառներից միայն երեքի մէջ (Ալէքսանդրոպոլի, Նոր-Բայազէտի և Էջմիածնի) են հայերը ապահով մեծամասնութիւն կազմում. իսկ մնացած չորսի մէջ մուսուլմանները գերազանցում են հայերից, թէև ոչ այնքան մեծ թւական տարբերութիւններով. Իսկապէս միակ գաւառը, որի շնորհիւ հայկական տարրը ապահով ու բացարձակ մեծամասնութիւն է կազմում ամբողջ նահանգում առհասարակ, դա Ալէքսանդրոպոլի գաւառն է՝ ամենամեծ և ամենաբազմամարդ գաւառը Երևանի նահանգում. Ալէքսանդրոպոլը՝ իր գաւառով, կազմում է ազգաբնակչական տեսակէտից հայկական Hochburg-ը, հայկական ամուր ամրոցը. սա նոյնն է հայերի համար, ինչ Քութայիսի նահանգն է՝ իր միայն եօթ գաւառներով (չհաշուելով սուխումի վերջին երեք շրջանները) վրացիների համար. Եթէ մենք հակադնենք իրար հայերի և մուսուլմանների թւական տւեալները յիշեալ տարեթւերին, կստանանք հետևեալը.

(Տես աղիւսակ երես 107)

ներ. Նախիջևանի գաւ. թաթարները կազմել են բոլոր մուսուլմանների 99,00 տոկոս (կամ 47845 հոգի). Նոր-Բայազէտի գաւառում թաթարները կազմել են 93,14 տոկոս (կամ 29523 հոգի), մնացածները՝ 2443 հ. եղել են քրդեր, որոնցից 270 եզիդներ. Սուրմալուի գաւ.՝ թաթարներ 34341 հոգի կամ 81,12 տոկոս, մուսուլման քրդեր 6730 հ. կամ 18,70 տ. և բացի դրանից 7889 հ. քիւրդ եզիդներ. Շարուր-Դարալագեազի գաւ.՝ թաթարներ 43566 հ. կամ 98,00 տոկոս. Վերջապէս Էջմիածնի գաւ.՝ թաթարներ 30203 հ. կամ մօտ 85,00 տոկոս, իսկ քրդեր 5559 հ. (15,00 տ.), բացի դրանից 636 քիւրդ եզիդներ.

²) 1897 թ. թաթարները կազմել են մուսուլմանների մէջ՝ Երևանի գաւառում 77497 հ. կամ 90,58 տոկոս (քրդեր 8052 կամ 9,41 տոկոս). Ալէքսանդրոպոլի գաւառում 7832 հ. կամ 92,06 տոկոս (իսկ մահմ. և եզիդ քրդերը եղել են՝ 4976 հոգի), Նախիջևանի գաւ. թաթարները եղել են 64151 հ. կամ 98,96 տոկոս, Նոր-Բայազէտի գաւ. 34726 հ. կամ 91,09 տ. (քրդերը 2995 հ. կամ մօտ 8.00 տոկոս), Սուրմալուի գաւ. 41417 հ. կամ 78,70 տոկոս, (մուսուլմ. և եզիդ քրդեր՝ 19099 հ.), Շարուր-Դարալագեազի գաւ. 51560 հ. կամ 93,19 տոկոս (քրդերը՝ 3761 հոգի), Վերջապէս Էջմիածնի գաւ. թաթարներ եղել են 35999 հ. կամ 79,75 տոկոս (քրդերը 9140 հ. կամ 20,24 տոկոս).

³) Երեք տարեթւերի տւեալները տես մեզ յայտնի աղբիւրների մատնացուցած տեղերը.

| | 1886 թուականին | | | 1897 թուականին | | | 1914 թուականին | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հայեր | Մուսուլ. | Տարբերութ. | Հայեր | Մուսուլ. | Տարբերութ. | Հայեր | Մուսուլ. | Տարբերութ. |
| 1. Երեւանի գաւառ. | 43568 | 68228 | 24660 | 58148 | 85549 | 27391 | 73731 | 96671 | 22940 |
| 2. Ալէքսանդրոպ. » | 124555 | 5461 | 119094 | 141522 | 8496 | 133026 | 200240 | 8983 | 191257 |
| 3. Նախիջեւանի » | 35470 | 48356 | 12886 | 34672 | 64825 | 30153 | 53684 | 81305 | 27621 |
| 4. Նոր-Բայազէտի » | 68793 | 31696 | 37097 | 81285 | 38122 | 43163 | 116075 | 52820 | 63255 |
| 5. Սուրմալուի » | 22096 | 42210 | 20114 | 27075 | 52640 | 25565 | 31236 | 57256 | 26020 |
| 6. Շարուր-Դարալագեազի | 17094 | 44446 | 27352 | 20726 | 55328 | 34602 | 25923 | 58540 | 32617 |
| 7. Էջմիածնի | 64124 | 35763 | 28361 | 77572 | 45139 | 32433 | 96390 | 51002 | 45388 |

Այս աղիւսակից աւելի պարզ երեւում է, թէ որ գաւառներում և ինչ թւական տարբերութիւններով հայերը գերազանցում են մուսուլմաններին և մուսուլմանները գերազանցում են հայերին։ Եթէ առանձին դասաւորենք այդ տարբերութիւնները, կստանանք հետեւալը.

### Հայերի թւական գերազանցումը.

| | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. |
|---|---|---|---|
| 1. Ալէքսանդրապոլ. գաւ. | 119094 | 133026 | 191257 |
| 2. Նոր-Բայազէտի » | 37097 | 43163 | 63255 |
| 3. Էջմիածնի » | 28361 | 32433 | 45388 |
| Ընդամէնը՝ | 186552 | 208622 | 299900 |

### Մուսուլմանների թւական գերազանցումը

| | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. |
|---|---|---|---|
| 1. Երևանի գաւառ | 24660 | 27391 | 22940 |
| 2. Նախիջևանի » | 12886 | 30153 | 27621 |
| 3. Սուրմալուի » | 20114 | 25565 | 26020 |
| 4. Շարուր Դարալ. » | 27352 | 34602 | 32617 |
| Ընդամէնը՝ | 85012 | 117711 | 109198 |

*Հայերի թուական գերազանցումը՝ ամեն մի գաւառում առանձին վերցրած, անհամեմատ խոշոր է մուսուլմանների գերազանցումից։ Այնուհետև հայերի թուական գերազանցման աճումը՝ տարեթուից տարեթիւ, կատարւում է անընդհատ, մինչդեռ մուսուլմանների մօտ այդ աճումը կատարւում է տատանումներով։ Հայերի թուական գերազանցման աճումը՝ երեք գաւառներում միասին վերցրած, եղել է 11,83 տոկոս (1886—1897 թ.) և 43,76 տ. (1897—1914 թ.), իսկ ամբողջ երեսնամեայ շրջանում 60,76 տոկոսով (1886—1914 թ.)։ Իսկ մուսուլմանները աճել են՝ 38,46 տոկոս (1886—1897 թ.) և նուազել է մօտ 8,00 տոկոս (1897—1914 թ.), իսկ ամբողջ տարեշրջանում (1886—1914 թ.) աճել են նրանք 28,45 տոկոսով։ Այսպէս ուրեմն հայերի թուական գերազանցման աճումը երեսնամեայ շրջանում եղել է 60,76 տոկոս կամ տարեկան 2,45 տոկոս, իսկ մուսուլմաններինը 28,45 տ. կամ տարեկան 1,02 տոկոս, ասել է աւելի քան երկու անգամ նուազ հայերի աճումից։*

*Ընդհանուր գաղափար կազմելու համար ժողովուրդների աճման ընթացքի մասին առհասարակ Երևանի նահանգի գաւառներում, բերենք ստորև նրանց աճման տոկոսների աղիւսակը։*

### Ժողովուրդների տոկոսական աճումը Երեւանի նահանգի գաւառներում.

*(Տես աղիւսակ երես 109)*

| Գաւառներ (քաղաքներով միասին) | 1886—1897 թուականին | | | | 1897—1914 թուականին | | | | 1886—1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Երեւանի գաւառ | 895,44% | 33,46% | +[2]) | 25,40% | -56,07% | 26,80% | +[4]) | 13,00% | 538,00% | 69,24% | +[6]) | 41,68% |
| 2. Ալէքսանդր. » | 568,88,, | 12,62,, | +[2]) | 55,57,, | 8,86,, | 41,49,, | — | 5,77,, | 628,18,, | 60,79,, | — | 64,49,, |
| 3. Նախիջևանի » | +[1]) | —2,30,, | +[2]) | 34,06,, | —[3]) | 60,60,, | +[4]) | 25,26,, | +[5]) | 51,35,, | +[6]) | 68,13,, |
| 4. Նոր-Բայազէտի » | 5,00,, | 18,30,, | — | 20,27,, | 82,47,, | 42,81,, | — | 38,55,, | 93,10,, | 70,00,, | — | 66,64,, |
| 5. Սուրմալուի » | — | 22,53,, | — | 24,71,, | —[3]) | 15,37,, | — | 8,77,, | — | 41,36,, | — | 35,64,, |
| 6. Շար.-Դարալագեազի | — | 21,24,, | — | 24,48,, | —[3]) | 25,07,, | — | 5,80,, | — | 51,65,, | — | 31,71,, |
| 7. Էջմիածնի » | — | 20,97,, | — | 26,21,, | +[3]) | 24,26,, | — | 12,98, | — | 50,30,, | — | 42,61,, |

[1]) Նախիջևանի գաւառում աճել են ռուսները (1886—1897 թ.) 824 հոգով։

[2]) Վրացիները աճել են՝ Երեւանի գաւառում 136 հոգ. Ալէքսանդրապոլի գաւ. 256 հոգ., Նախիջևանի գաւ. 38 հոգով։

[3]) Ռուսները նուազել են (1897—1914 թ.) Նախիջ. գաւ. 172 հոգ., Սուրմալուի գաւ. 1011 հոգ., Շարուր-Դար. գ. 3 հ., իսկ Էջմիածնի գաւ. աճել են 144 հոգով։

[4]) Վրացիները աճել են Երեւանի գաւառում 65 հոգով, Նախիջևանի գաւ. 163 հոգով։

[5]) Ռուսները աճել են (1886—1914 թ.) Նախիջևանի գաւառում 652 հոգ.։

[6]) Վրացիները աճել են Երեւանի գաւ. 201 հոգ., Նախիջևանի գաւ. դարձեալ 201 հոգով։

Թուրքերի և մահմեդական վրացիների թվական չնչին մեծութիւնները Երևանի նահանգի գաւառներում և նրանց աճման կամ նւազման ընթացքը առանձին ուշադրութեան առնելու պէտք չկայ այստեղ։ Երկուսն էլ եկւոր տարրեր են հայ-թրքական բնակավայրերում և երկուսն էլ առանձին հոսանք չեն ունեցել դէպի այնտեղ. միայն արդիւնաբերական ոյժերի զարգացումը, տնտեսական կեանքի բարդացումը կարող է գրաւել եկւորների մեծ հոսանք. իսկ Երևանի նահանգը՝ իր գաւառներով, դեռ շատ հեռու է այդ տեսակէտից ձգողական կենտրոն դառնալուց։

Վերև բերւած աղիւսակը ընդհանուր գաղափար է տալիս հայերի և մուսուլմանների աճման ընթացքի մասին բոլոր գաւառներում։ Նւազման դէպք եղել է միայն մի անգամ՝ 1886—1897 թ. Նախիջևանի գաւառում հայ ազգաբնակչութեան հաշւին։ Առաջին տարեշրջանում (1886—1897 թ.) մուսուլմանների աճման տեմպը իր արագութեամբ գերազանցել է հայկականին բոլոր գաւառներում, բացի Երևանի գաւառներից։ Ամենաթոյլ աճում (12,62 տ.) հայերը ունեցել են Ալէքսանդրոպոլի գաւառում, ուր մուսուլմանները, ընդհակառակը ունեցել են ամենաուժեղ աճումը (55,57 տ.)։ Երկրորդ տարեշրջանում (1886—1897 թ.) արդէն գտնում ենք միանգամայն հակառակ յարաբերութիւնը. բոլոր գաւառներում անխտիր հայերի աճման տեմպը գերազանցում է մուսուլմանների աճման տեմպին. և հայկականի աճման գերազանցումը այդ տարեշրջանում աւելի մեծ է, քան մուսուլմաններինը առաջին տարեշրջանում։ Ամենաարագ աճեցում ունեցել են հայերը Նախիջևանի (60,60 տ.), Նոր-Բայազէտի (42,81 տ.) և Ալէքսանդրոպոլի (41,49 տ.) գաւառներում. հայերի աճման մինիմումը հասնում է 15,37 տոկոսի (Սուրմալուի գաւ.)։ Ամենադանդաղ աճեցում ունեցել են մուսուլմանները Ալէքսանդրոպոլի (5,77 տ.), Շարուր-Դարալագեազի (5,80 տ.) և Սուրմալուի (8,77 տ.) գաւառներում. մուսուլմանների աճման մաքսիմումը հասնում է 38,55 տոկոսի (Նոր-Բայազէտի գաւառում)։ Մօտ երեսնամեայ շրջանի (1886—1914 թ.) աճման ընդհանուր պատկերը երևում է աղիւսակի վերջին կոլոնից։ Միայն երկու գաւառներում (Ալէքսանդրոպոլի և Նախիջևանի) մահմեդականների աճման տեմպը գերազանցում է հայկականից. Մնացած բոլոր գաւառներում գտնում ենք հակառակ յարաբերութիւնը։ Հայերի աճման մաքսիմումը հասնում է 70,00 տոկոսի (Նոր-Բայազէտի գաւ.) և 69,24 տոկոսի (Երևանի գաւառում). մուսուլմաններինը հասնում է 68,13 տոկոսի (Նախիջևանի գաւ.) և 66,64 տոկոսի (Նոր-Բայազէտի գաւ.)։ Հայերի աճման մինիմումը իջնում է 41,36 տոկոսի (Սուրմալուի գաւ.), իսկ մուսուլմաններինը իջնում է 31,71 տոկոսի (Շարուր-Դարալագեազի գաւառում [1])։

[1]) Հետաքրքրական է իմանալ, թէ թաթարները, իբրև տիրապետող տարրը մուսուլմանների մէջ, առանձին վերցրած ինչ տոկոսական մասն են կազմել ամբողջ ազգաբնակութեան. 1886 թ. թաթարները կազմել են՝ Երևանի գաւառում 52,90 տոկոս (բոլոր մուսուլմանները՝ 60,5 տ.), Ալէքսանդրոպ. գաւ. 4,04 (բոլոր մուսուլմ. 4,04 տ.), Նախիջևանի գ. 56,94 տ. (մուսուլմ. 57,67 տ.), Նոր Բայազէտի գ. 28,50 տոկոս (մուսուլմ. 30,60 տ.), Սուրմալուի գ. 48,34 տոկոս (մուսուլմ. 59,40 տ.), Շարուր-Դարալագեազի գ. 70,54 տոկոս (մուսուլմ. 72,00 տ), Էջմիածնի գ. 30,02 տոկոս (մուսուլմ. 35,55 տոկոս)։ 1897 թ. թաթարները կազմել են՝ Երևանի

Մեր պատկերացումը հարեան ժողովուրդների թուական փոխ-յարաբերութիւնների մասին աւելի լրիւ կլինի, եթէ բերենք այստեղ նրանց տոկոսական բաժինները տեղական ընդհանուր ազգաբնակութեան ամբողջից․

### Ժողովուրդների տոկոսը գաւառների ազգաբնակութեան ամբողջից.

| Գաւառներ (քաղաքներով միասին) | 1886—1897 թուականին | | | | 1897—1914 թուականին | | | | 1886—1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուսն. | Հայեր. | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Երևանի գաւառ | 0,33°/₀ | 38,35°/₀ | — | 60,05°/₀ | 2,46°/₀ | 38,54°/₀ | 0,16°/₀ | 56,70°/₀ | 1,34°/₀ | 41,72°/₀ | 0,24°/₀ | 54,73°/₀ |
| 2. Ալեքսանդ. » | 0,75,, | 91,76,, | — | 4,04,, | 4,13,, | 85,51,, | 0,17,, | 5,13,, | 3,33,, | 90,00,, | — | 4,02,, |
| 3. Նախիջևանի » | 0,22,, | 42,10,, | — | 57,67,, | 1,06,, | 34,41,, | — | 64,30,, | 0,62,, | 39,35,, | — | 59,70, |
| 4. Նոր-Բայազէտի | 2,47,, | 66,40,, | — | 30,60,, | 2,23,, | 66,31,, | — | 31,10,, | 2,83,, | 66,33,, | — | 30,21,, |
| 5. Սուրմալուի » | — | 31,09,, | — | 59,40,, | 1,53,, | 30,41,, | — | 59,11,, | 0,40,, | 31,54,, | — | 57,82,, |
| 6. Շարուր-Դարալ. | — | 27,70,, | — | 72,00,, | 0,16,, | 27,08,, | — | 72,30,, | 0,14,, | 30,47,, | — | 68,80,, |
| 7. Էջմիածնի » | — | 63,74,, | — | 35,55,, | 0,15,, | 63,00,, | — | 36,33,, | 0,21,, | 64,70,, | — | 34,88,, |

գ. 51,36 տոկոս (մուսուլմ. 56,70 տ.), Նախիջևանի գ. 63,66 տոկոս (մուսուլմ. 64,30 տ.), Նոր Բայազէտի գ. 28,52 տոկոս (մուսուլմ. 31,10 տ.). Սուրմալուի գ. 46,51 տոկոս (մուսուլմ. 59,11 տ.), Շարուր-Դարալագեազից. 67,38 տոկոս (մուսուլմ. 72.30 տ.), Էջմիածնի գ. 29,00 տոկոս (մուսուլմ. 36,35 տ.)։ Ինչպէս տեսնում ենք, այն գաւառներում, ուր մուսուլմանները մեծամասնութիւն են կազմում տեղական ընդհանուր ազգաբնակութեան մէջ, միայն թաթարները վերցրած պահպանում են այդ մեծամասնութիւնը, անշուշտ փոքր ինչ նւազեցրած չափերով. բացառութիւն կազմում է միայն Սուրմալուի գաւառը, ուր թաթարները կազմում են ոչ թէ բացարձակ, այլ յարաբերական մեծամասնութիւն (48,34 տ. և 46,51տոկոս)։ Վերջին գաւառում քրդերը (մուսուլմ. և եզիդ) կազմում են աւելի մեծ թիւ, քան այլուր. 1886 թ. նրանք կազմել են տեղական ազգաբնակութեան 20,57 տոկոս, 1897 թ. 21,45 տ., իսկ 1914 թ. արդէն 23,40 տ.։

Թւական բացարձակ տւեալների պատկերը անդրադառնում է այստեղ տոկոսների միջոցով աւելի շօշափելիօրէն։ Հայերի մեծամասնութիւնը մեզ արդէն յայտնի երեք գաւառներում, մանաւանդ Ալէքսանդրոպոլի գաւառում, աւելի մեծ չափերով են գերազանցում Մնացած ազգաբնակութեան, մանաւորապէս մուսուլմաններին, քան մուսուլմանների մեծամասնութիւնը չորս գաւառներում։ Երեւանեան շրջանում (1886—1914 թ.) երկու ժողովուրդների մեծամասնութիւն կազմող տոկոսները ենթարկւել են որոշ փոփոխութիւնների՝ աճելով կամ նւազելով։ Այդ փոփոխութիւնների պատկերն է տալիս մեզ հետեւեալ աղիւսակը։

Հայերի և մուսուլմանների տոկոսական բաժինների փոփոխութիւնները մեծամասնութիւն կազմող գաւառներում 1886—1914 թ.։

Հայերի տոկոսական փոփոխութիւնները.

| | 1886 թ. | 1914 թ. | +կամ− |
|---|---|---|---|
| 1. Ալէքսանդրոպ. գաւ. | 91,76% | 90,00% | −1,76% |
| 2. Նոր-Բայազէտի » | 66,40 » | 66,33 » | −0,07 » |
| 3. Էջմիածնի » | 63,74 » | 64,70 » | +0,96 » |

Մուսուլմանների տոկոսական փոփոխութիւնները.

| | 1886 թ. | 1914 թ. | +կամ− |
|---|---|---|---|
| 1. Երեւանի գաւ. | 60,05% | 54,73% | −5,32% |
| 2. Նախիջեւանի » | 57,67 » | 59,70 » | +2,03 » |
| 3. Սուրմալուի » | 59,40 » | 57,82 » | −1,58 » |
| 4. Շարուր-Դար.» | 72,00 » | 68,80 » | −3,20 » |

Երկու ժողովուրդների տոկոսները աճել են միայն մի-մի տեղ (Էջմիածնի և Նախիջեւանի գաւառներում). միւս գաւառներում նւազել են նրանց տոկոսները և իրաւ, մուսուլմանների մօտ աւելի, քան հայերի։ Ինչ վերաբերում է երկու ժողովուրդների այն տոկոսներին, որոնցով նրանք փոքրամասնութիւն են կազմում տւեալ գաւառներում, ապա այդ տոկոսները կրել են հետեւեալ փոփոխութիւնները։

Հայերի և մուսուլմանների տոկոսական բաժինների փոփոխութիւնները փոքրամասնութիւն կազմող գաւառներում 1886—1914 թ.։

Հայերի տոկոսական փոփոխութիւնները.

| | 1886 թ. | 1914 թ. | +կամ− |
|---|---|---|---|
| 1. Երեւանի գաւ. | 38,35% | 41,72% | +3,37% |
| 2. Նախիջեւանի » | 42,10 » | 39,35 » | −2,75 » |
| 3. Սուրմալուի » | 31,09 » | 31,54 » | +0,45 » |
| 4. Շարուր-Դար.» | 27,70 » | 30,47 » | +2,77 » |

Մուսուլմանների տոկոսական փոփոխութիւնները.

| | | 1886 թ. | 1914 թ. | +կամ− |
|---|---|---|---|---|
| 1. | Ալեքսանդրոպ գաւ. | 4,04% | 4,02% | −0,02% |
| 2. | Նոր-Բայազէտի » | 30,60 » | 30,21 » | −0,39 » |
| 3. | Էջմիածնի » | 35,55 » | 34,88 » | −0,67 » |

Այստեղ յարաբերութիւնները փոքր ինչ այլ կերպ են դասաւորւած։ Հայերի տոկոսական բաժինը նւազել է միայն Նախիջևանի գաւառում, միւս երեքի մէջ աճել է այդ բաժինը, ամենամեծ չափով Երևանի գաւառում, ապա Շարուր-Դարալագեազում։ Ընդհակառակը մուսուլմանների տոկոսը նւազել է բոլոր երեք գաւառներում, թէև ի հարկէ, աննշան չափերով։ Ինչպէս երկու ժողովուրդների մեծամասնութիւն կազմող տոկոսները, այնպէս էլ նրանց փոքրամասնութիւն կազմող տոկոսները ունեն տարբերիչ յարաբերութիւնները. մէկ թէ միւս դէպքում հայերի տոկոսները ընդհանուր առմամբ գերազանցում են մուսուլմանների տոկոսներից։ Հայերի փոքրամասնութիւն կազմող տոկոսների մաքսիմումը հասնում է 42,10 տոկոսի (1886 թ.) և 41,72 տոկոսի (1914 թ.), իսկ մինիմումը իջնում է 27.70 տոկոսի և 30,47 տոկոսի։ Մուսուլմանների մօտ մաքսիմումը հասնում է 35,55 տոկոսի և 34,88 տոկոսի, իսկ մինիմումը 4.04 տոկոսի և 4,02 տոկոսի։ Նոյնը և մեծամասնութիւն կազմող տոկոսները նախընթաց աղիւսակում. այնտեղ հայերի տոկոսական մաքսիմումը հասնում է 91,76 տոկոսի (1816 թ.) և 90,00 տոկոսի (1914 թ.), իսկ մինիմումը իջնում է 63,74 տոկոսի և 64,70 տոկոսի։ Մուսուլմանների մօտ մաքսիմումը հասնում է 72,00 տոկ. և 68,80 տոկ., իսկ մինիմումը՝ 57,67 տոկ. և 59,70 տոկոսի։

Մնացած ժողովուրդների՝ ռուսների և մանաւանդ վրացիների, տոկոսական բաժինները այնքան չնչին են, որ նրանք ոչ մի կերպ չեն կարող փոխել հայ-թրքական (աւելի ճիշտ՝ հայերի և մուսուլմանների) թւական-տոկոսական յարաբերութիւնները՝ մեծամասնութիւն և փոքրամասնութիւն կազմող վայրերում։ Քիչ թէ շատ չափերով աչքի է ընկնում ռուսների թւական մասնակցութիւնը և տոկոսական բաժինը Երևանի, Նոր-Բայազէտի և մանաւանդ Ալէքսանդրոպոլի գաւառում (այստեղ կենտրոնացած ռուսների բաւական զգալի տոկոսը բաղկացած է ռուս զորքից)։ Վրացիների թիւը համեմատաբար արագ աճում է Երևանի գաւառում, ուր նրանք վերջին տարեթւին կազմել են 1,24 տ. տեղական ողջ ազգաբնակութեան։

## D. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԳԱՆՁԱԿԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ.

Անցնենք այժմ Գանձակի նահանգի գաւառներին և տեսնենք, թէ ինչպէս են զատաւորւած այնտեղ ժողովուրդների թւական և տոկոսական յարաբերութիւնները։

Ժողովուրդների բացարձակ-թւական տւեալներ Գանձակի նահ. գաւառներում

| Գաւառներ (քաղաքներով միասին) | | 1886 թուականին | | | | 1897 թուականին | | | | 1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Թուռ. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Թուռ. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Թուռ. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Գանձակի | գաւ. | 5392 | 35717 | 110 | 79783 | 10428 | 43040 | 759 | 104487 | 18740 | 58980 | 888 | 140126 |
| 2. Արեշի. | » | 3 | 12278 | 18 | 39546 | 162 | 13822 | 12 | 53290 | 1045 | 16800 | 58 | 67820 |
| 3. Ջեբրայելի. | » | 213 | 11669 | — | 32214 | 893 | 15746 | 11 | 49599 | 1707 | 24599 | — | 65439 |
| 4. Ջեվանշիրի. | » | — | 16073 | — | 38881 | 208 | 19551 | 47 | 52853 | 723 | 20074 | 201 | 39146 |
| 5. Զանգեզուրի | » | 469 | 57425 | — | 65820 | 1006 | 63622 | 2 | 73047 | 1676 | 89906 | 60 | 118216 |
| 6. Ղազախի | » | 1687 | 33118 | 16 | 49952 | 3444 | 43555 | 434 | 64325 | 6119 | 60120 | 644 | 66830 |
| 7. Նուխուայ | » | 26 | 18963 | 52 | 89580 | 230 | 18899[1] | 74 | 92220 | 1453 | 31079 | — | 129295 |
| 8. Շուշուայ | » | 299 | 73081 | — | 52887[2] | 1504 | 73953 | 58 | 63001[3] | 5184 | 95257 | 86 | 77361[4] |

[1]) Ցաւալի է հաստատել, որ ինչպէս Թիֆլիսի նահանգի մի շարք գաւառներում 1897թ. ժողովրդագրութիւնը մի քանի տասնեակ հազարաւոր վրացախօս հայեր ցուցակագրել է վրացիների վրայ, այնպէս էլ Նուխուայ գաւառում մի քանի հազար հայեր (Թրքախօս) հաշւել է թուրքերի վրայ։ Այսպէս օր. հայերի թիւը Նուխուայ գաւառում եղել է ոչ թէ 18899 հոգի, այլ 25367 հոգի, մօտ եօթ հազարով աւելի։ (Համ. Գանձակի նահ. վիճակ. հատորը, XII և XIII աղ. 60 և 63 երեսները)։

(Մնացած ծանօթութիւնները տես երես 115)

*Այստեղ ևս երկու բնիկ ժողովրդական մասսաները—հայերն ու մուսուլմանները—խառնված ամփոփումներով զատաւորւած են իրար կողքի, ինչպէս Երևանի նահանգի գաւառներում էր։ Սակայն թւական տարբերութիւնները միանգամայն այլ պատկեր են ներկայացնում Գանձակի նահանգում։ Այստեղ ոչ միայն նահանգում առհասարակ, այլև բոլոր գաւառներում, բացի մէկից, մուսուլմանները բացարձակ մեծամասնութեան մէջ են գտնւում և նրանց մեծամասնութիւնը, ընդհանուր առմամբ, շատ աւելի խոշոր չափերով է գերազանցում հայկական փոքրամասնութեան, քան հայկական մեծամասնութիւնն էր գերազանցում թուրք-թաթարականին Երևանի նահանգի գաւառներում։ Ըստ բացարձակ աւելների մուսուլմանների ամենամեծ թիւը կենտրոնացած է Գանձակի գաւառում, այնուհետև Նուխւայ և Զանգեզուրի գաւառներում։ Հայերինը, ընդհակառակը, կենտրոնացած է Շուշւայ գաւառում, ապա Զանգեզուրի և Ղազախի գաւառներում, ինչ վերաբերում է մնացած ժողովուրդներին՝ ռուսներին և վրացիներին, ապա նրանք, մանաւանդ ռուսները, թէպէտ աւելի ուժեղ են ներկայացնում Գանձակի նահանգի, քան Երևանի նահանգի գաւառներում։ Անդրկովկասի կենտրոնին աւելի մօտ լինելը, երկաթուղային գծի աւել վաղ կառուցումը, ռուս բնակչութեան ներքին կոլոնիզացիան և այլն,—մի շարք հանգամանքներ են սրանք, որոնցով բացատրւում է համեմատաբար մեծաթիւ ռուս եկւորն. մուտքը Գանձակի նահանգի զանազան մասերը։ Տեսնենք այժմ, թէ ինչ աճման տեմպ են ունեցել ժողովուրդները այդ նահանգի գաւառներում։*

*(Տես աղիւսակ երես 116)*

---

*²) Գանձակի նահանգի գաւառներում ևս, դեռ աւելի մեծ չափերով, թաթարները հանդիսանում են բոլոր մուսուլմանների մէջ բացարձակ տիրապետող տարրը։ Այսպէս օրինակ 1886 թ. Գանձակի նահանգի գաւառներում թաթարների թիւը եղել է՝ Գանձակի գաւ. 79789 (բոլոր մահմեդ. 79783 հոգ., նշանակում է ոչ միայն բոլոր մուսուլմանները եղել են թաթարներ, այլև հաշւած են վեց հոգի ոչ մահմեդ. թաթարներ), Արեշի գաւ. 37577 հոգի թաթ. (բոլ. մուսուլման. 39546 հ.), Ջեբրայիլի գ. 33577 հոգ. (բոլոր մուս. 32214 հ., թաթարների մէջ կան ոչ մուս. թաթարներ, այսպէս կոչւած ալի-ալլահ դաւանութեան պատկանողներ), Ջևանշիրի գաւ. 33374 հ. (բոլ. մուս. 38881 հ.), Զանգեզուրի գաւ. 37653 հ. (65820 հ. բոլոր մուսուլմաններ, որոնցից 26824 քրդեր են), Ղազախի գաւ. 48633 հոգի թաթ. (բոլ. մուս. 49952 հոգ.), Նուխւայ գ. 84579 հ. թաթ. (բոլ. մուս. 89580 հ.), Շուշւայ գ. 52887 հ. թաթ. (բոլ. մուս. նոյնքան)։*

*³) 1897 թ. Գանձակի նահանգի գաւառներում թաթարները ունեցել հետևեալ թւերը. Գանձակի գաւ. 103970 հ. (իսկ բոլ. մուս. 104487 հոգի), Արեշի գաւ. 47133 հ. (բոլ. մուս. 53290 հ.), Ջեբրայիլի գաւ. 49189 հոգ. (բոլ. մահ. 49599 հ.) Ջևանշիրի գ. 52041 հ. (բոլ. մուս 52853 հոգի). Զանգեզուրի գաւ. 71206 հ. (բոլ. մուս. 73047 հ.), Ղազախի գ. 64101 հ. (բոլ. մուս. 64325 հ.), Նուխւայ գաւ. 83578 հոգ. (բոլ. մուս. 92220 հոգ.), Շուշւայ գաւ. 62868 հ. (բոլ. մուս. 63001 հոգ.)։*

*⁴) Երեք տարիթւերի վերաբերեալ բացարձակ աւելները տես մեզ յայտնի աղբիւրների մէջ մատնացուցած մասերը։*

| Գաւառներ (քաղաքներով միասին) | 1886—1897 թ ւ ա կ ա ն ի ն | | | | 1897—1914 թ ւ ա կ ա ն ի ն | | | | 1886—1914 թ ւ ա կ ա ն ի ն | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Գանձակի գաւառ | 93,40% | 20,50% | +[3]) | 30,96% | 79,70% | 37,04% | +[5]) | 34,10% | 247,74% | 65,13% | +[7]) | 75,76% |
| 2. Արեշի » | +[1]) | 12,57,, | —[3]) | 34,75,, | +[4]) | 21,54,, | +[5]) | 27,26,, | +[6]) | 36,83,, | +[7]) | 71,50,, |
| 3. Ջեբրայիլի » | +[1]) | 34,94,, | — | 53,96,, | 91,15,, | 56,22,, | — | 32,00,, | +[6]) | 110,80,, | — | 103,13,, |
| 4. Ջեվանշիրի » | — | 21,70,, | — | 36,22,, | 247,60,, | 2,67,, | +[5]) | −35,01,, | — | 24,90,, | — | 0,68,, |
| 5. Զանգեզուրի » | 114,50,, | 10,80,, | — | 10,90,, | 66,60,, | 41,31,, | +[5]) | 61,83,, | 257,85,, | 56,56,, | — | 79,45,, |
| 6. Ղազախի » | 104,15,, | 31,51,, | +[3]) | 28,80,, | 77,67,, | 38,03,, | +[5]) | 4,00,, | 262,71,, | 81,68,, | +[7]) | 33,80,, |
| 7. Նուխւայ » | +[1]) | -0,39,,[2]) | +[3]) | 2,97,, | +[4]) | 64,45,, | -- | 40,20,, | +[6]) | 63,90,,[8]) | — | 44,33,, |
| 8. Շուշւայ » | 400,00,, | 1,18,, | — | 19,12,, | 244,68,, | 29,00,, | +[5]) | 22,80,, | 1640,00,, | 30,34,, | — | 46,28,, |

[1]) Ռուսները աւելացել են 1886—1897 թ.՝ Արեշի գաւ. 159 հոգի, Ջեբրայիլի գ. 680 հոգի և Նուխւա

[2]) Ըստ մեր ստուգած թւերի Նուխւայ գաւառում հայերի թիւը ոչ միայն չի նւազել, այլև աճել է մօտ 37,00 տոկոսով։

[3]) Վրացիները աճել են՝ Գանձակի գաւ. 649 հոգի, Ղազախի գաւ. 418 հ., Նուխւայ գաւ. 22 հոգի, իսկ Արեշի գաւ. նւազել են 6 հոգի։

[4]) Ռուսները աճել են՝ Արեշի գաւ. 883 հոգի, Նուխւայ գաւ. 1223 հոգով։

[5]) Վրացիները աճել են՝ Գանձակի գաւ. 129 հոգի, Արեշի գաւ. 46 հոգի, Ջեվանշիրի գաւ. 153 հոգի, Զանգեզուրի գաւ. 58 հոգի, Ղազախի գաւ. 210 հոգի, Շուշւայ գաւ. 28 հոգով։

[6]) Արեշի գ. 1042 հ., Ջեբրայիլի գ. 1494 հ., Նուխւայ գ. 1427 հոգով։

[7]) Վրացիները աճել են՝ Գանձակի գաւ. 778 հոգի, Արեշի գաւ. 40 հոգ., Ղազախի գաւ. 628 հոգով։

[8]) Մեր ստուգած թւերով հայերի աճման տոկոսը պիտի լինի 22,52 տ.։

Ինչպէս ամէն տեղ, այնպէս էլ ներկայ դէպքում, աճման ամենաարագ դէպք ունեցել են ռուսները, իբրև եկւոր տարրեր։ Նրանց աճումը անցնում է հարիւրի սահմաններից, հասնելով 400 տոկոսի (Շուշւայ գաւառում 1886—1897 թ.)։ Այլապէս են դասաւորւած հայերի և մուսուլմանների աճման յարաբերութիւնները։ Առաջին տարեշրջանում մուսուլմանների աճումը անպայման գերազանցում է հայերի աճման բոլոր գաւառներում։ Մենք գիտենք արդէն, որ ընդհանրապէս նահանգում մուսուլմանները աւելի արագ են աճել, քան հայերը. այժմ տեսնում ենք, որ նոյն յարաբերութիւնը արտայայտւում է գաւառներում առանձին առանձին։ Շարունակական եւ մասսայական արտագաղթի ենթակայ մի ազգաբնակութիւն, ինչպէս հայերն են Գանձակի նահանգում և մանաւանդ նրա որոշ մասերում, յատկապէս Ղարաբաղում կամ Շուշւայ գաւառում, աճման աւելի նպաստաւոր ընթացք ունենալ չէր կարող։ Երկրորդ տարեշրջանում (1897—1914 թ.) պատկերը զգալապէս փոխւում է յօգուտ հայերի. այդ շրջանում հայերի տոկոսական աճումը գերազանցում է մուսուլմանների աճման մի քանի գաւառներում։ Իսկ ամբողջ երեսնամեայ շրջանում, ինչպէս երեւում է մեր աղիւսակի վերջին կօլօնից, մուսուլմանների աճումը պահպանում է իր ընդհանուր գերազանցումը. ութ գաւառներից հինգի մէջ մուսուլմանները աւելի արագ են աճել, իսկ երեքի մէջ գերազանցումը պատկանում է հայերին։ Եթէ մենք այդ տոկոսական տարբերութիւնները վերլուծենք այստեղ առանձնապէս, կստանանք հետեւեալը։

Հայերի եւ մուսուլմանների տոկոսական աճումը 1886—1914 թ.

| | Հայերի աճումը | Մուսուլմ. աճումը | Տարբերութիւնը |
|---|---|---|---|
| 1. Գանձակի գաւառ | 65,13% | 75,76% | 10,63% |
| 2. Արեշի » | 36,83 » | 71,50 » | 34,67 » |
| 3. Ջիբրայիլի » | 110,80 » | 103,13 » | 7,67 » |
| 4. Ջեվանշիրի » | 24 90 » | 0,68 » | 24,22 » |
| 5. Զանգեզուրի » | 56,56 » | 79,45 » | 23,89 » |
| 6. Ղազախի » | 81,58 » | 33,80 » | 47,78 » |
| 7. Նուխւայ » | 22,52 » [1] | 44,33 » | 21,81 » |
| 8. Շուշւայ » | 30,34 » | 46,28 » | 15,94 » |

Մուսուլմանների տոկոսական աճումը գերազանցում է հայկականին ամենամեծ ու բազմաբնակ գաւառներում (Գանձակի, Նուխւայ, Զանգեզուրի և Շուշւայ)․ դրանից հասկանալի է, թէ ինչու ընդհանուր առմամբ, ողջ նահանգում, մուսուլմանները գերազանցում են հայերին իրանց տոկոսական աճումով։ Միւս կողմից աչքի է ընկնում այն հանգամանքը, որ գաւառներում աճման ամենաբարձր տոկոս տւել են հայերը (110,80 տոկոս Ջեբրայիլի գաւառում), իսկ ամենանւազագոյն տոկոսը տւել են մուսուլմանները (0,68 տոկ. Ջեվանշիրի գաւառում)։

---

[1]) Մեր ստուգած թւերով Նուխւայ գաւառի հայերի աճումը տւեալ շրջանում եղել է ոչ թէ 63,90 տոկոս, այլ 22,52 տոկոս։

Այժմ տեսնենք, թէ ինչ տոկոսական թւերով են ներկայանում մեզ ժողովուրդները Գանձակի նահանգի գաւառներում.

Ժողովուրդների տոկոսները առանձին-առանձին գաւառների ազգաբնակութեան ամբողջից.

| Գաւառներ (քաղաքներով միասին) | 1886 թուականին | | | | 1897 թուականին | | | | 1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Գանձակի գաւ. | 4,38% | 29,06% | — | 64,91% | 6,41% | 26,44„ | 0,46% | 64,20% | 7,55% | 24,00% | 0,36% | 60,00% |
| 2. Արեշի » | — | 23,68„ | — | 76,27„ | 0,24„ | 20,54„ | — | 79,21„ | 1,22„ | 19,56„ | — | 79,00„ |
| 3. Ջեբրայիլի » | 0,45„ | 24,85„ | — | 68,65„ | 1,34„ | 23,72„ | — | 74,74„ | 1,85„ | 26,78„ | — | 71,25„ |
| 4. Ջեվանշիրի » | — | 29,24„ | — | 70,75„ | 0,28„ | 26,90„ | — | 72,68„ | 1,20„ | 33,35„ | 0,33„ | 65,00„ |
| 5. Զանգեզուրի » | 0,38„ | 46,31„ | — | 53,08„ | 0,73„ | 46,14„ | — | 53,00„ | 0,79„ | 42,82„ | — | 56,31„ |
| 6. Ղազախի » | 1,98„ | 39,00„ | — | 58,73„ | 0,07„ | 39,00„ | 0,38„ | 57,10„ | 4,55„ | 44,69„ | 0,48„ | 49,70„ |
| 7. Նուխւայ » | — | 16,20„ | — | 76,55„ | 0,20„ | 15,67[1] | — | 76,10„ | 0,90„ | 12,60„ | — | 77,30„ |
| 8. Շուշւայ » | 0,23„ | 57,87„ | — | 41,87„ | 1,08„ | 53,30 | — | 45,40„ | 2,91„ | 53,50„ | — | 43,44„ |

Բոլոր գաւառներում, բացառութեամբ Շուշւայ գաւառի, հայ բնակչութիւնը գտնւում է փոքրամասնութեան մէջ. Չհաշւելով Զանգեզուրի և Ղազախի գաւառները, ուր հայկական փոքրամասնութիւնը բաւական պատկառելի տեղ է բռնում, մնացած հինգ գաւառների մէջ հայերի % թւերը խուսափում են իրանց համեստութեամբ Երևանի նահ. այն

*գաւառների տոկոսական տուեալներից, որ հայերը փոքրամասնութիւն են կազմում։ Աւելին ասենք. Երևանի նահանգի գաւառներում հայկական տարրի տոկոսները տարեցտարի աճելու բացայայտ տենդենցներ ունեն, ինչպէս մենք տեսանք, իսկ Գանձակի նահանգի գաւառներում՝ շատ սակաւ բացառութեամբ, գտնում ենք հակառակ երևոյթը։ Ինչ վերաբերում է մուսուլմաններին, ապա նրանք, ինչպէս երևում է վերևի աղիւսակից, կազմում են շատ ապահով մեծամասնութիւն բոլոր գաւառներում, բացի Շուշւայ գաւառից, ուր, սակայն, նրանց փոքրամասնութիւնը նոյնքան պատկառելի է, որքան հայկականը Զանգեզուրի գաւառում, ունենալով միաժամանակ այն առաւելութիւնը, որ քանի գնում այնքան աւելի է աճում նրանց փոքրամասնութեան տոկոսը, մինչդեռ հայկականը հետզհետէ նւազում է։ Եթէ մենք պատկերացնենք երկու ժողովուրդների համեմատական տոկոսների աճման (կամ նւազման) տենդենցները առանձնապէս, կստանանք հետևեալը։*

*Հայերի և մուսուլմանների տոկոսական բաժինների աճումը (կամ նւազումը) Գանձակի նահանգի գաւառներում 1886—1914 թթ.*

Հայերի տոկոսական փոփոխութիւնները՝

| | 1886 թ. | 1914 թ. | + կամ — |
|---|---|---|---|
| 1. Գանձակի գաւառ | 29,06 % | 24,00 % | —5,06 % |
| 2. Արեշի » | 23,68 „ | 19,56 » | —4,12 » |
| 3. Ջեբրայիլի » | 24,85 » | 26,78 » | +1,93 » |
| 4. Ջևանշիրի » | 29,24 » | 33,35 » | +4,11 » |
| 5. Զանգեզուրի » | 46,31 » | 42,82 » | —3,49 » |
| 6. Ղազախի » | 39,00 » | 44,69 » | +5,69 » |
| 7. Նուխւայ » | 16,20 » | 12,60 „ | —3,60 » |
| 8. Շուշւայ » | 57,87 » | 53,50 » | —4,37 » |

Մուսուլմանների տոկոսական փոփոխութիւնները.

| | 1886 թ. | 1914 թ. | + կամ — |
|---|---|---|---|
| 1. Գանձակի գաւառ | 64,91 % | 60,00 % | —4,91 % |
| 2. Արեշի „ | 76,27 „ | 79,00 » | +2,73 „ |
| 3. Ջեբրայիլի „ | 68,65 » | 71,25 » | +2,60 » |
| 4. Ջևանշիրի » | 70,75 » | 65,00 » | —5,75 „ |
| 5. Զանգեզուրի „ | 53,08 » | 56,31 » | +3,23 » |
| 6. Ղազախի „ | 58,73 „ | 49,70 » | —9,03 „ |
| 7. Նուխւայ „ | 76,55 „ | 77,30 „ | +0,75 » |
| 8. Շուշւայ » | 41,87 „ | 43,44 „ | +1,57 „ |

*Տոկոսական փոփոխութիւնները կրել են երկու ժողովուրդները բոլոր գաւառներում, բայց տարբեր ուղղութեամբ և տարբեր չափերով։ Հինգ*

գաւառներում նւազել են հայերի տոկոսական բաժինները, իսկ երեք գաւառներում աճել են նրանք։ Մուսուլմանների տոկոսները, հակառակ յառաջերութեամբ, աճել են հինգ գաւառներում և նւազել երեքի մէջ։ Եւ հէնց այն գաւառներում, ուր նւազել են հայերի տոկոսները, ընդհակառակը աճել են մուսուլմանների տոկոսները։ Բացառութիւն կազմում է միայն Գանձակի գաւառը, որտեղ երկու ժողովուրդների տոկոսն էլ՝ հայերինը աւելի քան մուսուլմաններինը, նւազել են։ Աչքի է ընկնում նաև այն հանգամանքը, որ հայերի տոկոսները զգալի չափերով նւազել են մեծ ու բազմաբնակ գաւառներում (Գանձակի, Զանգեզուրի, Նուխուայ և Շուշւայ), ամենամեծ չափերով Գանձակի և Շուշւայ գաւառներում, մինչդեռ մուսուլմանների տոկոսները աճել են այդ կարևոր գաւառներից չորսի մէջ (Զանգեզուրի, Նուխուայ և Շուշւայ գաւառ.)։ Հայերի տոկոսի աճումը աչքի է ընկնում Ղազախի գաւառում, ուր մուսուլմանների տոկոսը, ընդհակառակը, նւազել է աւելի մեծ չափերով։ Հայկական տարրի բացարձակ մեծամասնութիւնը Շուշւայ գաւառում կանգնած է ճիշտ այն բարձրութեան վրայ, որի վրայ կանգնած է հայ ազգաբնակութեան բացարձակ մեծամասնութիւնը Երևանի նահանգում. միայն տոկոսական փոփոխութիւնները կատարել են հակառակ յառաջերութեամբ. մինչդեռ Երևանի նահանգում հայերի տոկոսը (բացարձակ մեծամասնութիւնը) 53 տոկոսից բարձրացել է մինչև 57 տոկոսը, Շուշւայ գաւառում, ճիշտ հակառակը, 57 տոկոսից իջել է մինչև 53 տոկոսը։ Դրանով կրկին անգամ պարզ երևում է հայ բնակչութեան մասսայական արտագաղթի հետևանքը Շուշւայ գաւառում։ Միւս ժողովուրդներից աչքի է ընկնում ռուսների տոկոսների արագ աճումը Գանձակի, Ղազախի և մասամբ Շուշւայ գաւառներում։ Վրացիների թւական քանակը տակաւին շատ թոյլ է բոլոր գաւառներում։ Նրանք ամենից շատ տեղաւորւած են Գանձակի գաւառում, ուր, սակայն, կէս տոկոսն անգամ չեն կազմում տեղական ողջ ազգաբնակութեան։

## Ե. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԲԱԳՈՒԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ.

Վերջապէս մենք անցնում ենք խոշոր նահանգներից մէկի գաւառների ազգաբնակութեան կազմին. ինչպէս են պատկերանում այնտեղ մեզ յայտնի ժողովուրդների թւական բացարձակ և տոկոսական յարաբերութիւնները։ Դա երևում է հետևեալ աղիւսակից։

Ժողովուրդների թւական տւեալները Բագւի նահ. գաւառներում.

| Գաւառներ (քաղաքներով միասին) | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս.[1]) | Ռուս. | Հայեր[2]) | Վրաց. | Մուս.[3]) | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Բագուի գաւ. | 21390 | 24490 | — | 92331 | 45510 | 22583 | 1127 | 105603 | 100425 | 69984 | 2834 | 209046 |
| 2. Գէօկչայի » | 1239 | 12979 | 11 | 61714 | 2475 | 12994 | 235 | 101149 | 2531 | 17365 | 23 | 111470 |
| 3. Ջեւադի » | 264 | — | — | 94423 | 4635 | 699 | 112 | 84401 | 22824 | 990 | 789 | 106270 |
| 4. Ղուբայի » | 1937 | 1853 | — | 163750 | 3971 | 1191 | 66 | 170361 | 5419 | 1673 | 21 | 162279 |
| 5. Լենքորանի » | 7634 | 273 | — | 101397 | 9728 | 483 | 17 | 119965 | 20568 | 1507 | 370 | 143960 |
| 6. Շամախու » | 9968 | 15863 | — | 89729 | 11362 | 14283 | 49 | 94764 | 18675 | 21996 | 242 | 116346[4]) |

[1]) Պէտք է ասել, որ Բագուի նահանգը միակն է մինչ այժմ մեզ յայտնիների շարքում, որի գաւառներում բացի զուտ թաթարներից կան ահագին քանակով և թւական ուժեղ ներկայացուցչութեամբ նաև այլ մուսուլման ժողովուրդներ, ինչպէս են թաթեր, թալըշներ, կիւրիններ և

Նահանգական ազգաբնակութեան կազմի մասին խօսելու ժամանակ տեսանք մենք, որ Բագւայ Նահանգը ներկայացնում է մուսուլմանութեան ճարտար ոստանը։ Այժմ տեսնում ենք, որ առանձին գաւառները նոյն յարաբերութիւնները արտայայտում են դեռ աւելի խտացած գոյներով։ Ճիշտ այնպէս, ինչպէս միապետ-ազգայնական ամփոփումների տեսակէտից Hochburg անուանեցինք Քութայիսի Նահանգը (իր եօթ գաւառներով) վրացիութեան համար և Ալէքսանդրապոլի գաւառը հայութեան համար, ճիշտ նոյն տեսակէտից իրաւունք ունենք Բագւայ Նահանգը, մանաւանդ նրա որոշ գաւառները, անուանելու Թուրք-Թաթարական էանիապէս այլատարր էլեմենտների կամ առհասարակ մուսուլմանութեան Hochburg ը։ Եթէ մի կողմ թողնենք Բագւի և Շամախու գաւառները, ուր հայերն ու ռուսները թւական բաւական պատկառելի տեղ են բռնում, մուսուլմանների խտացման աստիճանը էլ աւելի կը բարձրանայ միացած գաւառներում։ Երեսուն տարի առաջ Բագւի Նահանգի ամենաբազմամարդ գաւառը եղել է Ղուբայի գաւառը. Բագուի գաւառը բռնել էր այն ժամանակ երկրորդ տեղը։ Ցետոյ միայն, շնորհիւ իր արդիւնաբերական մասնա-

ուրիշ չափերը։ 1886 թ. Բագուի գաւառի մուսուլմանութեան 51,27 տոկոս (կամ 47342 հոգին) եղել են Թաթարներ, իսկ Մնացածները՝ 44989 հոգ. կամ 48,73 տոկոսը եղել են Թաթեր։ Գեօկչայի գաւ. արդէն Թաթարները կազմել են տեղական մաժեղ. բացարձակ մեծամասնութիւնը՝ 46082 հոգի կամ ամբողջի 74,70 տոկոսը, Մնացածները կազմում են Թաթեր։ Ջեվադի գաւ. բոլոր մուսուլմ.՝ 94423 հոգի, եղել են Թաթարներ։ Ղուբայի գաւ. Թաթարները փոքրամասնութիւն են կազմում (48058 հոգի կամ ամբողջի 29,40 տոկոս), Մնացածները կազմում են Թաթեր (58621 հոգի կամ 35,80 տոկոս), կիւրիներ (41849 հ. կամ 25,56 տ.) և այլ մանրաթիւ մուսուլմ. ժողովուրդներ։ Լենքորանի գաւ. Թաթարները կազմում են մուսուլմանների կէսը (50887 հ. կամ 50,18 տոկոս), Մնացածները կազմում են Թալիշներ (50510 հ. կամ 49,82 տ.)։ Վերջապէս Շամախու գաւ. բոլոր մուսուլմանները Թաթարներ են բացառապէս (89729 հոգի)։

[2]) Նահանգների մասին խօսելու ժամանակ մենք բացատրեցինք, թէ 1897 թւին հայերի թիւը ինչու է նուազ ցոյց տւած (աւելի քան երեք հազար հոգով) Բագուի Նահանգում։ Այժմ այդ նուազումը արտայայտւում է գլխաւորապէս երկու գաւառների՝ Բագուի և Շամախու, թւական տւեալների մէջ, որոնց վերաբերեալ մեր իր տեղում տւած բացատրութիւնը պահպանում է իր ուժը։ Միւս գաւառների տւեալների մէջ մեր ստուգութեամբ նկատւել են չնչին տարբերութիւններ, այսպէս օրինակ Գեօկչայի գաւ. հայերի թիւը (նոյն 1897 թ.) պէտք է լինէր 13016 հոգի (և ոչ 12924 հ. ըստ ժողովրդագրութեան), Ջեվադի գաւ. 703 հոգի (և ոչ 699 հոգի), Ղուբայի գաւ. աւելի մեծ տարբերութիւն՝ 1761 հ. հայեր (և ոչ 1191 հ.), Լենքորանի գաւ. 490 հ. (և ոչ 483 հ.)։

[3]) 1897 թ. Թաթարները կազմել են Բագուի գաւառում 63415 հ. կամ 60,05 տոկոս բոլոր մուսուլմանների։
Գեօկչայի գաւ. 92962 հ. կամ 91,90 տոկոս, Ջեվադի գաւ. բոլոր մուսուլմանները (չնչին բացառութեամբ) Թաթարներ են, Ղուբայի գաւ. կազմել են նրանք 70150 հ. կամ մօտ 42,00 տոկոս, Մնացածները Թաթեր և կիւրիներ են։ Լենքորանի գաւ. Թաթարները եղել են 84725 հ. կամ 70,62 տոկոս, Շամախու գաւ. կազմել են նրանք 89840 հոգի կամ 94,81 տոկոս տեղական բոլոր մուսուլմանների։

[4]) Երեք տարեթւերի բացարձակ տւեալները տես մեզ յայտնի աղբիւրների համապատասխան մասերը։

յակուլ կենտրոնի, Բագւի գաւառը գրաւում է առաջին տեղը։ Միւս կողմից հետաքրքրական է այն հանգամանքը, որ երեսուն տարի առաջ մուսուլմանների ամենամեծ թիւ ներկայացնող գաւառների շարքում Բագուի գաւառը գրաւել է միայն չորրորդ տեղը, 1897 թ., անել է 11 տարի անցած, բռնում է երրորդ տեղը, իսկ այժմ արդէն առաջին տեղը։ Դա ցոյց է տալիս, թէ ինչպիսի արագութեամբ և մեծ թւով են մուսուլմանները կենտրոնացել Բագուի գաւառում։

Ինչ վերաբերում է հայերին և ռուսներին, ապա նրանք գտնւել են մի տեսակ թւական մրցակցութեան մէջ յատկապէս երկու գաւառներում՝ Բագւի և Շամախու. 80-ական թւականներին հայերը անպայման գերազանցել են այնտեղ ռուսներին իրանց թւով. 90-ական թւականից սկսած նրանք տեղի են տալիս ռուսներին Բագւի գաւառում և միայն փոքր չափերով են գերազանցում ռուս. Շամախու գաւառում։ Խիստ մեծ արագութեամբ աճել են ռուսները Լենքորանի և մանաւանդ Ջեվադի գաւառներում, իսկ հայերը Գեոկչայի գաւառում։ Վրացիները այստեղ եւ չնչին թիւ են ներկայացնում, միայն Բագւի գաւառումն է, որ նրանց թիւը հասնում է ներկայումս մօտ երեք հազարի։ Եթէ ժողովուրդների աճումը ներկայացնենք տոկոսներով կստանանք հետեւեալը։

Ժողովուրդների տոկոսական աճումը Բագուի նահ. գաւառներում.

(Տես աղիւսակ երես 124)

| Գաւառներ (քաղաք-ներով միասին) | 1886—1897 թուականին | | | | 1897—1914 թուականին | | | | 1886—1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Բագուի գաւառ | 112,76% | −8,50% | -- | 14,37% | 120,66% | 209,90% | 151,37 | 98,90% | 369,50% | 185,75% | — | 126,40% |
| 2. Գեօկչայի » | 100,10,, | 0,12,, | +[2]) | 63,90,, | 2,26,, | 33,64,, | —[3]) | 10,20,, | 104,28,, | 33,79,, | +[4]) | 80,62,, |
| 3. Ջեվադի » | 1655,00,, | — | — | −11,87,, | 400,00,, | 41,63,, | +[3]) | 27,08,, | 8500,00,, | — | — | 12,55,, |
| 4. Ղուբայի » | 105,00,, | −55,58[1]) | — | 4,03,, | 36,50,, | 40,47,, | —[3]) | −5,00,, | 179,76,, | −10,76,, | — | −0,90,, |
| 5. Լենքորանի » | 27,43 | 90,90,, | — | 18,31,, | 111,43,, | 212,00,, | +[3]) | 20,00,, | 170,00,, | 495,65,, | — | 42,00,, |
| 6. Շամախու » | 14,00,, | −11,06,, | — | 6,80,, | 64,36,, | 54,00,, | +[3]) | 22,77,, | 87,35,, | 40,00,, | — | 30,00,, |

Ռուսների և հայերի տոկոսական աճումը առաջին տարեշրջանում (1886–1897 թ.) ընդհանուր առմամբ հակադիր ծայրեր են ներկայացնում. առաջինների աճման տեմպը եղել է թռիչքային, մինչ հազարից աւելի չա-

[1]) Մեր ստուգած թւերով հայերի թիւը Ղուբայի գաւառում նւազել է ոչ թէ 55,58 տոկ., այլ 5,14 տոկոս։

[2]) Վրացիները Գեօկչայի գաւառում աւելացել են 224 հոգով։

[3]) Վրացիները նւազել են Գեօկչայի գաւառում 212 հոգ., Ղուբայի գաւ., 55 հոգ., իսկ աճել են Ջեվադի գաւ. 667 հոգ., Լենքորանի գաւառ 353 հոգ., Շամախու գաւ. 193 հոգով։

[4]) Վրացիները աճել են Գեօկչայի գաւ. 12 հոգով։

*փերով, մինչդեռ երկրորդները առաւելապէս նուազման տոկոսներ են տուել, չհաշւելով Գեոկչայի և Լենքորանի գաւառները։ Երկրորդ տարեշրջանում (1897—1914 թ.) յարաբերութիւնները փոխւում են արդէն ի նպաստ հայերի. վեց գաւառներից չորսի մէջ (Բագւի, Գեոկչայի, Ղուբայի և Լենքորանի) հայերի տոկոսական աճումը գերազանցում է ռուսականից։ Բագւի նման գաւառում հայերի աճումը հասնում է 209,90 տոկոսի, վրացիներինը 151,37 տոկոսի, ռուսներինը 120,66 տոկոսի և մուսուլմաններինը՝ 98,00 տոկոսի։ Երկու տարեշրջաններում էլ մուսուլմանների աճումը եղել է չափաւոր. աճման տեմպը չի հասել ոչ մի տեղ մինչև հարիւր տոկոս, իսկ երկու գաւառներում (Ջեվադի և Ղուբայի) ունեցել են նուազման դէպքեր։ Երկրորդ տարեշրջանում հայերի աճման տոկոսները գերազանցում են մուսուլմանների աճման տոկոսներին անխտիր բոլոր գաւառներում։ Իսկ երեսնամեայ շրջանում հայերի տոկոսները պահպանում են իրանց գերազանցումը մուսուլմանների հանդէպ երեք գաւառներում (Բագւի, Լենքորանի, և Շամախու)։ Երեք ժողովուրդների տարեկան աճումը Բագւի գաւառում (1886—1914 թ. ընթացքում) եղել է այսպէս. ռուսներինը՝ 13,20 տ., հայերինը 6,63 տ., մուսուլմաններինը՝ 4,51 տոկոս։ Դա նշանակում է, որ բացի բնական աճման տեմպից, երեք ժողովուրդներն էլ ընդունել են Բագւի գաւառում եկւոր տարրեր լայնանի չափերով, և իրաւ, ռուսներն աւելի քան հայերը, վերջիններս աւելի, քան մուսուլմանները։ Այդ տարբերութիւններին կդառնանք մենք աւելի շօշափելի փաստերով, երբ յետագային կխօսենք գաւառի արդիւնաբերական կենտրոնի մասին։ Տեսնենք այժմ, թէ ինչ տոկոսական բաժիններ ունեն ժողովուրդները գաւառների ազգաբնակութեան մէջ։*

Ժողովուրդների տոկոսը Բագւի նահանգի գաւառների ազգաբնակութեան ամբողջից.

*(Տես աղիւսակ երես 126)*

| Գաւառներ (քաղաքներով միասին) | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Բաքուի գաւառ | 15,12% | 17,32% | — | 65,29% | 25,00% | 12,34% | 0,61% | 57,20% | 24,62% | 17,16% | 0,70% | 51,27% |
| 2. Գէօկչայի » | 1,62,, | 17,00,, | — | 80,52,, | 2,13,, | 11,03,, | 0,20,, | 85,93,, | 1,91,, | 13,15,, | — | 84,44,, |
| 3. Ջէվադի » | 0,27,, | — | — | 99,73,, | 5,15,, | 0,77,, | 0,13,, | 93,73,, | 17,30,, | 0,75,, | 0,60,, | 80,50,, |
| 4. Ղուբայի » | 1,12,, | 1,06,, | — | 94,05,, | 2,16,, | 0,65,, | — | 93,00,, | 3,00,, | 0,90,, | — | 88,12,, |
| 5. Լէնքորանի » | 7,00 | 0,23,, | — | 92,73,, | 7,42,, | 0,37,, | — | 91,60,, | 12,30,, | 0,90,, | 0,22,, | 86,13,, |
| 6. Շամախու | 8,55 | 13,61,, | — | 77,05,, | 9,32 | 11,72,, | — | 77,77,, | 11,80,, | 13,86,, | 0,15,, | 73,35,, |

Այս աղիւսակը ուշագրաւ է մի քանի կողմերից։ Ամենից առաջ աչքի է ընկնում ռուսների տոկոսական բաժինների արագ բարձրացումը անխտիր բոլոր գաւառներում, մանաւանդ Բաքւի և Ջէվադի գաւառներում. 1886 թ. ռուսները կազմել են Բաքւի գաւառի ողջ ազգաբնակութեան 15,12 տոկոս, հայերը աւելի շատ՝ 17,32 տ. 1897 թ. ռուսների տոկոսը հասնում է 25,00 տոկոսի, իսկ հայերինը իջնում է 12,34 տոկոսի։ 1914 թ. ռուսների տոկոսական բաժինը մօտաւորապէս մնում է միևնոյն բարձրութեան վրայ (24,62), նւազելով միայն 0,38 տոկոսով, իսկ հայերի տոկոսը նորից բարձրանում է մինչև 17,16 տ., աճելով 4,82 տոկոսով։ Ջէվադի գաւառում ռուսների աճը՝ շնորհիւ նրանց մեծ ներգաղթի, 0,27 տոկոսից (1886

թ.) հասել է 17,30 տոկոսի (1914 թ.), ունենալով աճման անսովոր թռիչք։ Ռուսականի հակառակ յարաբերութիւն ենք գտնում հայերի մօտ, որոնց տոկոսական բաժինները 1897 թ. նուազում են բոլոր գաւառներում, բացի Լենքորանից։ 1914 թ. հայերի տոկոսները հասնում են կրկին նախկին (1886 թւականի) բարձրութեան, բացի Գեօկչայի գաւառից։ Առանձնապէս յիշատակելի են մուսուլմանների յարաբերական տոկոսների կրած փոփոխութիւնները։ 1886 թ. Ջեվադի, Ղուբայի և Լենքորանի գաւառները մուսուլմանների համար միատարր բնակչութեան նոյնպիսի խտացած կենտրոններ էին, ինչպէս Զուգդիդի, Սենակի և Ռաչինի գաւառներն էին վրացիութեան համար, ինչպէս Ալէքսանդրոպօլի գաւառն էր հայերի համար։ Սակայն յետագայ տարեշրջանների ընթացքում մուսուլմանների թւական տիրապետութեան այդ բարձր աստիճանը շատ զգալի չափերով իջնում է, աւելի մեծ չափերով, քան տեսանք մենք վրացիների և հայերի որրաններում։ Աւելի շօշափելիօրէն պատկերացնելու համար տոկոսական այդ փոփոխութիւնները, վերլուծենք երկու տարեթւերի տոկոսները իրանց տարբերութիւններով։ Մուսուլմանների տոկոսական բաժինները 1886 և 1914 թւականներին։

| | 1886 թ. | 1914 թ. | Տարբ. + կամ — |
|---|---|---|---|
| 1. Բագուի գաւառ | 65,29 % | 51,27 % | —14,02 % |
| 2. Գեօկչայի » | 80,52 » | 84,44 » | + 3,92 » |
| 3. Ջեվադի » | 99,73 » | 80,50 » | —19,23 » |
| 4. Ղուբայի » | 94,05 » | 88,12 » | — 5,93 » |
| 5. Լենքորանի » | 92,73 » | 86,13 » | — 6,60 » |
| 6. Շամախու » | 77,05 » | 73,35 » | — 4,70 » |

Բացի Գեօկչայի գաւառից մնացած բոլորի մէջ նուազել են մուսուլմանների յարաբերական տոկոսները. ամենամեծ չափով եղել է այդ նուազումը Բագուի և մանաւանդ Ջեվադի գաւառներում. վերջինիս մէջ շնորհիւ ռուսական էլէմենտի թւական ուժեղացման, առաջինի մէջ՝ շնորհիւ արդիւնաբերական կենտրոնի ընդունած մեծաթիւ օտար տարրերի։ Կասկածից դուրս է, որ թուրք-թաթարական էլէմենտը ունի բոլոր տենդենցները աւելի ու աւելի նուազեցնելու իր յարաբերական տոկոսը [1]) Բագուի գաւառի ընդհանուր ազգաբնակութեան մէջ հէնց շնորհիւ իր եկւոր մասսաներ կլանող կենտրոնի։ Այդ կենտրոնի ազգաբնակութեան բաղկացուցիչ տարրերի մասին մենք կը խօսենք ընդարձակ իր տեղում. առայժմ անցնենք յաջորդ տերրիտորիական մասերին։

---

[1]) Ըստ բոլորովին վերջին տւեալների՝ 1916 թւականի վերաբերեալ, մուսուլմանների տոկոսական բաժինը Բագուի գաւառի ազգաբնակութեան մէջ կազմել է ոչ աւելի քան 45,70 տոկոս, ասել է երկու տարւայ ընթացքում նրանց տոկոսը նուազել է 5,57 տոկոսով։ 1886 թ. մուսուլմանների տոկոսը գաւառի ազգաբնակութեան մէջ եղել է 65,29 տոկոս, 1897 թ. 57,20 տոկոս, 1914 թ. 51,27 տոկոս, 1916 թ. 45,70 տոկոս։ Ուրեմն երեսուն տարւայ ընթացքում նուազել է նրանց տոկոսը մօտ քսան տոկոսով՝ բացարձակ մեծամասնութիւնից դառնալով յարաբերական մեծամասնութիւն։

## Է. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ՍԵՒ-ԾՈՎԵԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ.

*Ի՞նչ թւական և տոկոսական յարաբերութիւններ են ներկայացնում ժողովուրդները Սև-ծովեան նահանգի առանձին մասերում. դա ցոյց է տալիս մեզ հետևեալ աղիւսակը.*

| Շրջանամասեր | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| (քաղաք. միասին) | Ռուս. | Հայեր[1]) | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր[1]) | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. |
| 1. Նովոռոսիյսկի շր. | 7898 | — | — | 3 | 25718 | 739 | 215 | 650 | 71131 | 1937 | — | 1164 |
| 2. Տուապսէի ,, | 2385 | — | 2 | 952 | 4974 | 1689 | 17 | 1314 | 21729 | 3222 | — | 4638 |
| 3. Սոչիի ,, | 371 | — | 358 | 429 | 3854 | 3857 | 672 | 1139 | 39537 | 11599 | 6875 | 2655[2]) |

*Միակ նահանգն է սա Անդրկովկասում, ուր ռուսական տարրը ապահով մեծամասնութեան մէջ է գտնւում, իսկ միւս ժողովուրդները նոյնքան ճնշւած փոքրամասնութիւն են կազմում, մանաւանդ Նովոռոսիյսկի շրջանում, ինչպէս ռուսներն էին մինչ այստեղ մեզ յայտնի նահանգների գաւառներում։ Անցուցա առաջին երկու տարեթւերին (1886 և 1897թ.թ.)*

[1]) *Առանձին տւեալներ հայերի մասին չկան այդ թւականին. յայտնի է միայն ամբողջ նահանգում եղած հայերի թիւը՝ 967 հոգի, որոնցից 3 հոգի քաղաքում։*

[2]) *Երեք տարեթւերի վերաբերեալ թւական տւեալները տես յիշած աղբիւրների համապատասխան մասերը։*

ռուսները դեռ փոքրամասնութեան մէջ էին տեղական ընդհանուր ազգաբնակութեան մէջ. միայն 1914 թ. նրանք անսովոր արագութեամբ թւապէս գերազանցում են բոլորին։ Շատ արագ է եղել նաև հայերի թւական աճումը Սոչիի շրջանում, ուր նրանք թւով գերազանցել են ռուսներին, այնքան մեծ է եղել նրանց մասսայական ներգաղթը։ Աճման տեմպի արագութեամբ առանձին տեղ է բռնում Սև-ծովեան նահանգը միւս տերրիտորիաների շարքում. այդ արտակարգ արագութիւնը արտայայտւում է նրա առանձին շրջանների և ժողովուրդների թւական աճման մէջ։

Ժողովուրդների աճման տոկոսները Սև-ծովեան նահանգի շրջաններում.

| Շրջանամաս. (քաղաքներով միասին) | 1886—1897 թւականին | | | | 1897—1914 թւականին | | | | 1886—1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուսն. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Նովորոսիյսկի շր. | 227,00% | — | — | — | 176,50% | 162,11% | — | 79,07% | 800,00% | — | — | — |
| 2. Տուապսէի ,, | 108,55,, | — | +[1]) | 38,00% | 336,85,, | 90,76,, | — | 253,00,, | 810,06,, | — | — | 387,20% |
| 3. Սոչիի ,, | 940,00,, | — | 8,71% | 165,50,, | 926,00,, | 200,72,, | 923,00,, | 133,10,, | 10556,87,, | — | 1820,00% | 569,00,, |

[1]) Վրացիները աճել են Տուապսէի շրջանում (1886—1897 թ.) 15 հոգով։

Աճման ամենաբարձր աստիճանը հասնում է հազարի և անգամ տասը հազարի։ Նոր գաղթավայր ծառայող երկրի սովորական վիճակն է այդ, երբ նրա բնակիչների աւելացման ամենամեծ աղբիւրը եկւոր տարրերի ուժեղ հոսանքն է համարւում։ Աճման ամենամեծ տոկոս (10556,87 տոկոս 28 տարւայ ընթացքում կամ տարեկան 377,03 տոկոս) ունեցել է Սոչիի շրջանը, որը աւելի, քան Նահանգի որևէ այլ մաս, ընդունել է դրսից եկւոր տարբեր զանազան ժողովուրդներից։ Ինչ յարաբերական բաժիններ են կազմել այդ ժողովուրդները Սև-ծովեան Նահանգի շրջաններում, դա ցոյց է տալիս հետևեալ աղիւսակը։

Ժողովուրդների տոկոսները Սև-ծովեան նահանգի շրջանների ազգաբնակութեան ամբողջից

| Շրջանամասեր (քաղաքներով միասին) | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Նովորոսիյսկի շր. | 80,64% | — | — | — | 73,70% | 2,12% | 0,61% | 1,90% | 76,95% | 2,09% | — | 1,26% |
| 2. Տուապսէի ,, | 47,60,, | — | — | 19,00% | 55,00,, | 18,66,, | — | 14,52,, | 56,45,, | 8,37,, | — | 12,05,, |
| 3. Սոչիի ,, | 11,17,, | — | 10,78% | 12,91,, | 28,51,, | 28,53 | 5,00,, | 8,43,, | 62,21,, | 18,25,, | 10,82% | 4,18,, |

Ամենից առաջ աչքի է ընկնում այն հանգամանքը, որ 1886 թ. ռուսները միայն Նովորոսիյսկի շրջանում են բացարձակ մեծամասնութիւն կազմել, Տուապսէի շրջ. նրանք կէսից պակաս են եղել, աճել է մե-

*ծամասնութիւնը յարաբերական է եղել, իսկ Սոչիի շրջանում ռուսները չնչին փոքրամասնութիւն են կազմել, որոնցից նոյն իսկ մուսուլմանները առանձին վերցրած գերազանցել են։ Սոչիի շրջանում բոլոր ժողովուրդների տոկոսները միասին վերցրած փոքրամասնութիւն են կազմում (ընդամենը 33,86 տ.) շրջանի ողջ ազգաբնակութեան մէջ¹)։ Երկրորդ տարեթւին փոխւում են յարաբերութիւնները. ռուսների բացարձակ մեծամասնութիւնը նւազում է (մօտ 7 տոկ.) Նովոռոսիյսկի շրջանում, ընդհակառակը նրանց թիւը աճում և բացարձակ մեծամասնութիւն են կազմում Տուապսէի շրջանում. (55,00 տ.,) իսկ Սոչիի շրջանում, թէև ռուսների թիւը աւելի արագ է աճում, այնուամենայնիւ դեռ փոքրամասնութեան մէջ են մնում նրանք (28,51 տոկ.), բռնելով համարեա նոյն տեղը, ինչ հայերն ունէին (28,53 տոկ.)։ 1914 թ. թ. արդէն ռուսները մի թռիչքով հասնում են Սոչիի շր-ջանում 62,21 տոկոսի. գերազանցելով բոլորին, գերազանցելով նաև Տուապսէի շրջանում եղած ռուսների թւական քանակից և տոկոսական բաժնից (56,45 տոկ.)։*

Ռուսների տոկոսական փոփոխութեան հսկայական տարբերութիւնը երեւում է հետեւեալ համեմատութիւնից

| | 1886 թ. | 1914 թ. | Տարբ. +կամ— |
|---|---|---|---|
| 1. Նովոռոսիյսկի շրջ. | 80,64% | 76,95% | —5,69 % |
| 2. Տուապսէի » | 47,60 » | 56,45 » | +8,85 » |
| 3. Սոչիի » | 11,17 » | 62,21 » | +51,04 » |

*Տոկոսական բաժնի մի այնպիսի հսկայական յաւելում, ինչպիսին ռուսներն են ունեցել Սոչիի շրջանում, անօրինակ է միանգամայն Անդրկովկասում՝ որևէ այլ ժողովրդի ազգաբնակչական շարժման ու կենտրոնացման տարեգրութեան մէջ։ Ռուսներից յետոյ երկրորդ տեղը Սոչիի շրջանում բռնում են հայերը, որոնց յարաբերական բաժինը, սակայն, աւելի քան տասը տոկոսով նւազել է 1897—1914 թւականի ընթացքում։ Այնուհետև յաջորդում են վրացիները և ապա մուսուլմանները։*

---

*¹) Սև-ծովեան նահանգի շրջաններում կան ուրիշ բազմաթիւ ժողովուրդներ, որոնցից յիշելու է առաջին տարեթւի (1886 թ.) վերաբերեալ՝ Նովոռոսիյսկի շրջանում, յոյներ՝ 1162 հոգի կամ 12,00 տ., Տուապսէի շրջ. չերքեզներ՝ 952 հոգի կամ 19,00 տ. և Սոչիի շրջ. յոյներ՝ 969 հոգի կամ 29,20 տոկոս։*

## Ը. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԴԱՂՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՇՐՋԱՆԱՄԱՍԵՐՈՒՄ

*Դառնանք այժմ Դաղստանի շրջանի զանազան մասերին և ցոյց տանք թւական ու տոկոսական ձեւով ցեղերի յարաբերութիւնները նրանց մէջ.*

### Ժողովուրդների թւական տւեալները Դաղստանի շրջանի շրջա-նամասերում.

| Շրջանամասեր (քաղաք. միասին) | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Թեմիր-Խ.-Շուր շրջ. | 1734 | 130 | 30 | 75629 | 11392 | 916 | 261 | 80257 | 24846 | 1777 | 872 | 97590 |
| 2. Ավարսկի » | — | — | — | 34151 | 511 | 6 | 11 | 37035 | 254 | 4 | — | 34529 |
| 3. Անդիյսկի » | — | — | — | 47198 | 148 | 12 | 12 | 49444 | 73 | — | — | 56756 |
| 4. Գունիբի » | — | — | 2 | 58898 | 536 | 10 | 7 | 55197 | 255 | 2 | — | 75201 |
| 5. Դարգինի » | — | — | — | 80279 | 72 | 1 | 20 | 80802 | 43 | 5 | — | 82115 |
| 6. Կազիկումուխի » | — | — | — | 51453 | 28 | 7 | 24 | 45309 | 27 | 2 | — | 50796 |
| 7. Կայտակօ-Տաբասա. | 194 | — | — | 74508 | 3063 | 665 | 41 | 82004 | 9936 | 2941 | — | 92093 |
| 8. Կիւրինի » | — | — | — | 47164 | 191 | 16 | 12 | 74792 | 583 | 26 | — | 80054 |
| 9. Սամուրի » | — | — | — | 67277 | 103 | 3 | 7 | 35450 | 463 | — | — | 70013 |

Բագուի նահանգի նման Դաղստանի շրջանը եւ՝ աւելի մեծ խառնուրդներով, հանդիսանում է մուսուլմանութեան Hochburg-ը, այնպէս որ այդ տեսակէտից առանձին բացատրութիւնների կարիք չունի այս աղիւսակը. այնքան անյայտանալու չափ չնչին թիւ են կազմում միւս ժողովուրդները՝ յատկապէս առաջին տարիներին. Սակայն իրենց ազգագրական կազմով էական տարբերութիւն ունեն մուսուլմանութեան այդ երկու որրանները. Բագուի նահանգի գաւառներում մուսուլմանների մէջ թուապէս բացարձակ տիրապետող տարրը կազմում են թաթարները, մինչդեռ Դաղստանի շրջանի տերիտորիական մասերում նոյնպիսի տիրապետող տարր կազմում են լեզգինները՝ իրանց առանձին կաթեգորիաներով (Աւարօնդիյցիններ, դարգիններ, կիւրիններ, կազիկումուկներ և այլն). Թաթարները, ինչպէս և ոչ լեզգի մուսուլմանները չնչին մասն են կազմում Դաղստանի շրջանի մուսուլմանների մէջ[1].

Բնակչութեան թւով ամենամեծ մասը Դաղստանի մէջ կազմում է Թեմիրխան-Շուրայի շրջանամասը, որին անմիջապէս հետեւում է Կայտագօ-Տաբասարանը. այսինքն այն շրջանամասերը, ուր գտնւում են Դաղստանի երեք քաղաքները. Երեսուն տարի առաջ Դարգինի շրջանը եղել է ամենից բազմաբնակը. Ընդհակառակը ամենից սակաւաբնակ շրջանամասը՝ առաջ թէ յետոյ, կազմում է Աւարսկի շրջ., որը մօտ երեք անգամ աւելի նւազ բնակչութիւն ունի, քան Թեմիր-խան-Շուրայի շրջանամասը.

Տեսնենք այժմ, թէ ինչ աճման ընթացք են ունեցել ժողովուրդները Դաղստանի շրջանում.

---

[1]) Թաթարների թիւը ամբողջ Դաղստանի շրջանում եղել է 1897 թ. 32143 հոգի կամ ամբողջ ազգաբնակութեան 5,63 տ., իսկ բոլոր մուսուլմանների մէջ մօտ 6,00 տ.. Թաթարների մեծագոյն մասը՝ 28975 հոգին, գտնւում են Կայտագօ-Տաբասարանի շրջանամ., ուր կազմում են նրանք մուսուլմանութեան աւելի քան 1/3 մասը (35,33 տ.), իսկ տեղական ազգաբնակութեան 31,83 տոկոսը.

Ժողովուրդների տոկոսական աճումը Դաղստանի շրջանի զանազան մասերում

| Շրջանամասեր (քաղաք. միասին) | 1886—1897 թ ւ ա կ ա ն ի ն | | | | 1897—1914 թ ւ ա կ ա ն ի ն | | | | 1886—1914 թ ւ ա կ ա ն ի ն | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Թեմիր-Խ.-Շուր. շրջ. | 556,97% | +[2]) | +[3]) | 6,12% | 118,10% | +[5]) | +[6]) | 21,59% | 1332,90% | +[8]) | +[9]) | 29,05% |
| 2. Ավարսկի » | — | — | — | 8,44„ | —[4]) | —[5]) | — | —7,22„ | — | — | — | 1,10„ |
| 3. Անդիյսկի » | — | — | — | 4,75„ | —[4]) | — | — | 14,80„ | — | — | — | 20,30„ |
| 4. Գունիբի » | — | — | — | —6,70„ | —[4]) | —[5]) | — | 36,22„ | — | — | — | 27,70„ |
| 5. Դարգինի » | — | — | — | 0,65„ | —[4]) | +[5]) | — | 1,62„ | — | — | — | 2,30„ |
| 6. Կազի-Կումուկի » | — | — | — | —13,56„ | —[4]) | —[5]) | — | 12,12„ | — | — | — | —1,29„ |
| 7. Կայտագո-Տաբաս » | +[1]) | — | — | 10,05„ | 224,40 | 342,26% | — | 12,30„ | +[7]) | — | — | 23,60„ |
| 8. Կյուրինի » | — | — | — | —3,20„ | +[4]) | +[5]) | — | 7,00„ | — | — | — | 3,74„ |
| 9. Սամուրի » | — | — | — | —90,00„ | +[4]) | — | — | 97,53„ | — | — | — | 4,07„ |

[1]) Ռուսները աճել են Կայտագո-Տաբասարանի շրջ. 2869 հոգով։
[2]) Հայերը ավելացել են Թեմիր-խան-Շուրայի շրջ. 786 հոգով։
[3]) Վրացիները ավելացել են Թեմ.-խ.-Շուր. շրջ. 230 հոգով։
[4]) Ռուսները նվազել են՝ Ավարսկի շրջ. 257 հոգ., Անդիյսկի շրջանում 75 հ., Գունիբի շրջ. 281 հ., Դարգինի շրջ. 29 հ., Կազի-կումուկի շրջ. 1

(Մնացած ծանոթությունները տես երես 135)

*Աճման ամենարագ ընթացք ունեցել են ռուսները Թեմիր-խան-Շուրայի և Կայտագօ Տաբասարանի շրջանամասերում, ուր նրանք՝ համեմատած միւս տեղերի հետ, բաւական ուժեղ են ներկայացրւած։ Թւապէս Մուսուլմանները ունեցել են աճման շատ դանդաղ ընթացք բոլոր տարեշրջաններում, նոյն իսկ մի քանի տեղ նրանք զգալի չափերով նւազել են 1886—1897 թ., մանաւանդ Սամուրի շրջանամասում։ 28 տարւայ (1886—1914թ.) ընթացքում աճման մաքսիմումը չի հասնում նոյն իսկ 30 տոկոսի (կազմում է ընդամէնը 29,05 տ. Թեմիր-խան-Շուրայի շրջ.), իսկ մինիմումը հասնում է 1,10 տոկոսի (Աւարսկի շրջ.)։ Այդքան դանդաղ աճման առաջին օրինակն է Դաղստանը, որի նմանը չտեսանք մենք Անդրկովկասի միւս տերիտորիական մասերում։ Տեսնենք այժմ, թէ ինչ տոկոսական բաժիններ են ունեցել ժողովուրդները տեղական ազգաբնակութեան մէջ։*

Ժողովուրդների տոկոսը Դաղստանի շրջանի բոլոր մասերի ազգաբնակութեան ամբողջից

*(Տես աղիւսակ երես 136)*

---

*հ., իսկ աճել են՝ Կիւրինի շրջ. 392 հոգ., Սամուրի շրջ. 360 հոգ.։*

*[5]) Հայերը աճել են Թեմ.-խ.-Շուր. շրջ. 861 հոգ., իսկ նւազել են Աւարսկի շրջ. 2 հ., Գունիբի շրջ. 8 հ., Կազիկումուխի շրջ. 5 հոգ., աճել են Դարգինի շրջ. 4 հոգ., Կիւրինի շրջ. 10 հոգով։*

*[6]) Վրացիները աւելացել են Թեմ.-խան-Շուրայի շրջ. 611 հոգով։*

*[7]) Ռուսները աւելացել են Կայտագօ-Տաբասարանի շրջ. 9742հոգով։*

*[8]) Հայերը աւելացել են Թեմիր-խան-Շուրայի շրջ. 1647 հոգով։*

*[9]) Վրացիները աւելացել են Թեմիր-խան-Շուրայի շրջ. 842 հոգով.*

| Շրջանամասեր (քաղաք. միասին) | 1886 Թւականին | | | | 1897 Թւականին | | | | 1914 Թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Թեմիր-Խ.-Շուր. շրջ. | 2,18% | — | — | 95,11% | 11,62% | 0,94% | — | 82,44% | 19,00% | 1,34% | 0,65% | 73,56% |
| 2. Աւարսկի » | — | — | — | 100,00,, | 1,36,, | — | — | 98,40,, | 0,76, | — | — | 99,00,, |
| 3. Անդիյսկի » | — | — | — | 100,00,, | — | — | — | 99,63,, | — | — | — | 99,50,, |
| 4. Գունիբի » | — | — | — | 99,99,, | — | — | — | 98,65,, | — | — | — | 99,48,, |
| 5. Դարգինի » | — | — | — | 100,00,, | — | — | — | 99,83,, | — | — | — | 99,95,, |
| 6. Կազիկումուկի » | — | — | — | 100,00,, | — | — | — | 97,70,, | — | — | — | 99,95,, |
| 7. Կայտագօ-Տաբաս. » | — | — | — | 97,20,, | 3,35,, | 0,73,, | — | 90,09,, | 8,72,, | 2,60,, | — | 80,84,, |
| 8. Կիւրինի » | — | — | — | 96,74,, | — | — | — | 96,30,, | 0,70,, | — | — | 94,46,, |
| 9. Սամուրի » | — | — | — | 100,00,, | — | — | — | 99,50,, | · | — | — | 99,20,, |

Լեզգիների ազգաբնակչական այս խիտ միապաղաղութեան անսովոր փաստի հանդէպ նսեմանում են մինչև այստեղ մեզ յայտնի միապաղաղութեան բոլոր օրինակները՝ վրացականը Քութայիսի նահանգի գաւառներում, թուրք-թաթարականը Բագւի նահանգի գաւառներում և հայկականը Ալէքսանդրապօլի գաւառում։ Առաջին տարեթւին Դաղստանի մի շարք շրջանամասերում ազգաբնակութիւնը ամբողջապէս՝ 100 տոկոսով, եղել են մուսուլմաններ։ Միւս տարեթւերին բազմաթիւ շրջանամասերում մուսուլմանների տոկոսը չի իջել 99 տոկոսից։ Կրկնում ենք, և ազգաբնակչական միապաղաղութեան անօրինակ մի փաստ է։ Լեզգիների հայրենիքը չունի ոչինչ առանձին գրաւիչ բան, որ ձգողական ույժ ունենայ դրսեցիների

համար։ Դաղստանի շրջանի միակ ձկողական կենտրոնները նրա երեք քաղաքներն են (Թեմիր-խան Շուրա Պետրովսկ, Դերբենդ) տեղաւորուած Թեմիր-խան-Շուրայի և Կայտագօ-Տաբասարանի շրջանամասերում, ուր ժողովուրդների տոկոսը զգալապէս իջնում է (1914 թւականին) իր սովորական բարձրութիւնից (առաջին շրջ. 73,56 տ., երկրորդ շրջ. 80,84 տ.) և ուր ռուսները կազմում են 19,00 տ. և 8,72 տ., իսկ հայերը 1,34 տ. և 2,60 տ.։ Մնացած ժանրաթիւ ժողովուրդներից յիշելու է հրէաներին, որոնք վերջին տարեթւին կազմում էին Թեմիր-խան-Շուրայի շրջ. ողջ ազգաբնակութեան 2,52 տ. (կամ 3344 հոգի), իսկ Կայտագօ-Տաբասարանի շրջ. 3,20 տ. (կամ 3638 հոգի)։

## Ը. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԿԱՐՍԻ ՇՐՋԱՆԻ ՇՐՋԱՆԱՄԱՍԵՐՈՒՄ

Մեզ մնում է այժմ Անդրկովկասի վարչական մեծ բաժանումներից վերջինը՝ Կարսի շրջանը, թւական ու տոկոսական նոյն յարաբերութիւնների տեսակէտից քննութեան առարկայ դարձնելու համար։

Ժողովուրդների թւական տւեալները Կարսի շրջանի զանազան մասերում.

| Շրջանամասեր (քաղաք. միասին) | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Թուր. | Հայեր | Վրաց. | Ռուս. | Թուր. | Հայեր | Վրաց. | Ռուս. | Թուր. | Հայեր | Վրաց. | Ռուս. |
| 1. Կարսի շրջան. | 9657 | 22544 | — | 30547 | 20376 | 46715 | 312 | 46870 | 15863 | 73235 | 2 | 60956 |
| 2. Արդահանի » | 1036 | 262 | 30 | 33590 | 2357 | 1918 | 137 | 53093 | 3021 | 3173 | 41 | 73574 |
| 3. Կաղզւանի » | — | 12554 | — | 13255 | 4085 | 21648 | 69 | 21388 | 686 | 32577 | 15 | 26146 |
| 4. Օլթիի » | 2 | 1734 | -- | 13983 | 1038 | 3125 | 25 | 24501 | 201 | 4953 | 4095 | 27170[1]) |

[1]) Երեք տարեթւերի վերաբերեալ բացարձակ տւեալները տես յի-

Ըստ իր ազգաբնակչական կազմի Ղարսի շրջանը շատ է հեռու միապաղաղ լինելուց և նա պատկանում է մինչև այսօր մեզ յայտնի այն տերրիտորիաների շարքին, ուր չկայ որոշ ժողովրդի թւական բացարձակ տիրապետութիւն և ուր ժողովուրդները իրանց յետ ու առաջ խաղացումներով թւական մրցակցութեան մէջ են գտնւում. այդպէս են յարաբերութիւնները, ինչպէս մենք տեսանք, Թիֆլիսի, Երևանի և Գանձակի նահանգների որոշ գաւառներում, ուր հայերն ու վրացիները կամ հայերն ու մուսուլմանները, իրաւ, թւապէս մրցում են իրար հետ։ Այստեղ եւ տեղի է ունենում մի այդպիսի մրցակցութիւն հայերի և մուսուլմանների միջև յատկապէս Ղարսի և Կաղզւանի շրջանամասերում[1])։ Երեսուն տարի առաջ այդ երկու մասերում թւական առաջնութիւն ունեցել են մուսուլմանները։ Ցաջորդ տարեթւին (1897 թ.) հայերը գրեթէ հաւասարւում են թւով մուսուլմաններին, շատ չնչին քանակով միայն (155 հոգով) տեղի տալով նրանց, իսկ Կաղզւանի շրջ. հայերը արդէն գերազանցում են մուսուլմաններին (260 հոգով): 17 տարուց յետոյ (1914 թ.) հայերի գերազանցումը վճռական է դառնում արդէն. Ղարսի շրջանամասում գերազանցում են նրանք մուսուլմաններին 12279 հոգով, իսկ Կաղզւանի շրջանում՝ 6431 հոգով։ Ռուսները, որոնց պատկառելի տոկոսը բաղկացած է զօրքից, թւապէս համեմատաբար ուժեղ են միայն Ղարսի շրջանամասում։ Վրացիները շատ չնչին թիւ են ներկայացնում շրջանի բոլոր մասերում, բացառութեամբ Օլթիից, ուր նրանց թիւը 1914 թ. հասնում էր 4095 հոգու. միայն ներքին գաղթով կարելի է բացատրել այդ յանկարծակի յաւելումը։

---

շած աղբիւրների համապատասխան մասերը։

[1]) Ինչպէս նկատել ենք իր տեղում, Ղարսի շրջանում թաթարական տարրը կազմում է մուսուլմանների մէջ շատ չնչին մասը։ Ինչպէս ամբողջ շրջանում, այնպէս էլ նրա առանձին մասերում, թւապէս առաջին տեղն են բռնում մուսուլման ժողովուրդներից՝ թիւրքերը, քրդերը, ղարափափախցիները և մասամբ թիւրքմենները։ Այսպէս օրինակ 1886 թ. Ղարսի շրջ. եղել են 7280 հ. թիւրքեր, 5124 հոգի քրդեր, 17308 հ. ղարափափախցիներ։ Արդահանի շրջ. եղել են 20351 հ. թիւրքեր, 6974 հ. քրդեր, 6229 հ. ղարափափախցիներ։ Կաղզւանի շրջ. եղել են 2652 հ. թիւրքեր, 12003 հ. քրդեր, (որանցից 2043 հ. եզիդներ), 1426 հ. թիւրքմեններ։ Օլթիի շրջ. եղել են. 11540 հ. թիւրքեր, 2333 հ. քրդեր։ 1897 թ. Ղարսի շրջ. եղել են՝ 10609 հ. թիւրքեր, 9165 հ. քրդեր, 22002 ղարափափախցիներ, 2093 հ. թիւրքմեններ։ Արդահանի շրջ. եղել են՝ 28047 հ. թիւրքեր, 12565 հ. քրդեր, 7874 հ. ղարափափախցիներ։ Կաղզւանի շրջ. եղել են 5172 հ. թիւրքեր, 17733 հ. քրդեր, 659 հ. թիւրքմեններ։ Օլթիի շրջ. եղել են՝ 19719 հ. թիւրքեր, 3505 հ. քրդեր և այլն։ Ինչպէս տեսնում ենք, մուսուլման երեք գլխաւոր տարրերը կենտրոնացած են տարբեր վայրերում. Թիւրքերը գլխաւորապէս Արդահանի և Օլթիի շրջանամասերում, քրդերը՝ մեծագոյն մասով Կաղզւանի և մասամբ Արդահանի շրջ., իսկ ղարափափախցիները կենտրոնացած են գլխաւորապէս Ղարսի շրջանամասում։

Տեսնենք թէ ինչպէս է եղել ժողովրդների տոկոսական աճումը
Ղարսի շրջանի զանազան մասերում

| Շրջանամասեր (քաղաք. միասին) | 1886—1897 Թւականին | | | | 1897—1914 Թւականին | | | | 1886—1914 Թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Ղարսի շրջան. | 110,00% | 107,22% | — | 53,43% | -28,45% | 56,76% | —[4] | 30,00% | 64,26% | 225,00% | — | 99,54% |
| 2. Արդահանի » | 127,50,, | 632,60,, | +[2] | 58,06,, | 28,17,, | 65,43,, | —[4] | 38,57,, | 191,60,, | 1111,08,, | +[6] | 119,00,, |
| 3. Կաղզւանի » | — | 73,23,, | — | 58,05,, | -500,00,, | 50,48,, | —[4] | 22,24,, | — | 160,00,, | — | 97,25,, |
| 4. Օլթիի » | +[1] | 80,22,, | — | 75,22,, | —[3] | 36,00,, | +[4] | 10,90,, | +[5] | 185,64,, | — | 94,30,, |

[1]) Ռուսները աւելացել են Օլթիի շրջ. 1036 հոգով։
[2]) Վրացիները աւելացել են Արդահանի շրջ. 107 հոգով։
[3]) Ռուսները նւազել են Օլթիի շրջ. 837 հոգով։
[4]) Վրացիները նւազել են՝ Ղարսի շրջ. 310 հոգ., Արդահանի շրջ. 96 հոգ. և Կաղզւանի շրջ. 54 հոգ., իսկ աճել են Օլթիի շրջ. 4070 հոգով։
[5]) Ռուսները աւելացել են Օլթիի շրջ. 199 հոգով։
[6]) Վրացիները աւելացել են Արդահանի շրջ. 10 հոգով։

*Ղարսի շրջանի ընդհանուր ազգաբնակութեան աճման ընթացքի մասին խօսելու ժամանակ մենք մատնանշեցինք այն արտակարգ պատճառների վրայ, որոնց ուժով յետամնաց մի երկրամասի բնակչութիւն այդպիսի արագութեամբ աճել է. միաժամանակ նկատել ենք, որ այդ արագ աճումը գլխաւորապէս հայերին է վերագրելու։ Այս աղիւսակը գալիս է հաստատելու մեր վերջին նկատողութիւնը։ Հայերի աճումը անցնում է հարիւրի և անգամ հազարի սահմաններից երեսնամեայ տևողութեան ընթացքում(1886—1914 թ.)։ Ամենաարագ աճումը հայերի եղել է առաջին տարեշրջանում (1886—1897 թ.), հէնց այն ժամանակ, երբ տեղի են ունեցել մեզ յայտնի պատճառները՝ մասսայական ներգաղթը Թիւրքահայ գաւառներից։ Ռուսների և մուսուլմանների աճումը ևս եղել է արագ. մանաւանդ առաջին տարեշրջանում. երկրորդում (1897—1914 թ.) նուազել են ռուսները (Ղարսի, Կաղզուանի և Օլթիի շրջ.)։ Վրացիների աճման ընթացքը եղել է տատանումներով։ Եթէ մենք հակադնենք հայերի և մուսուլմանների աճման տեմպը, երեսնամեայ շրջանում, կստանանք հետևեալը։*

### Հայերի տոկոսական աճումը

| | 1886—1914 թ. | Տարեկան աճումը |
|---|---|---|
| 1. Ղարսի շրջան. | 225,00 % | 8,03 % |
| 2. Արդահանի » | 1111,08 „ | 39,70 „ |
| 3. Կաղզւանի » | 160,00 „ | 5,71 „ |
| 4. Օլթիի » | 185,64 „ | 6,63 „ |

### Մուսուլմանների տոկոսական աճումը

| | 1886—1914 թ. | Տարեկան աճումը |
|---|---|---|
| 1. Ղարսի շրջան | 99,54 % | 3,55 % |
| 2. Արդահանի » | 119,00 „ | 4,25 „ |
| 3. Կաղզւանի » | 97,25 „ | 3,47 „ |
| 4. Օլթիի » | 94,30 „ | 3,37 „ |

*Երկու ժողովուրդների աճման տեմպի տարբերութիւնը չափազանց աչքառու է, մանաւանդ Արդահանի շրջ.։ Աճման այդ օրինակ արագութիւնը, անշուշտ, չի կարող բնակչութեան նորմալ շարժման հետևանք լինել, այլ միայն մասսայական ներգաղթի։*

*Ինչպէս են դասաւորւած ժողովուրդները Ղարսի շրջանի զանազան մասերում իրանց տոկոսական յարաբերութիւններով։*

Ժողովուրդների տոկոսը Ղարսի շրջանի զանազան մասերի ազգաբնակութեան ամբողջից[1]).

| Շրջանամասեր (քաղաքներով միասին) | 1886 թուականին | | | | 1897 թուականին | | | | 1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Ղարսի շրջան. | 12,55°/₀ | 29,31°/₀ | — | 33,71₀/⁰ | 15,20₀/⁰ | 34,82°/₀ | 0,22°/₀ | 34,94₀/⁰ | 9,00₀/⁰ | 41,54₀/⁰ | — | 34,60₀/⁰ |
| 2. Արդահանի » | 2,37„ | 0,60„ | — | 77,00„ | 3,73„ | 3,00„ | — | 80,73„ | 3,21„ | 3,37„ | — | 78,26„ |
| 3. Կաղզւանի » | — | 36,75„ | — | 38,80„ | 6,89„ | 36,55„ | — | 36,11„ | 0,85„ | 40,31„ | — | 32,32„ |
| 4. Օլթիի » | — | 9,00„ | — | 73,00„ | 3,30„ | 10,00„ | — | 77,73„ | 0,50„ | 12,35„ | 10,20 | 67,77„ |

[1]) Բացի ուրիշ մանրաթիւ ժողովուրդներից Ղարսի շրջանի զանազան մասերում իրանց քանակով աչքի են ընկնում յոյները։ Նրանց թիւը եղել է Ղարսի շրջանամասում (1886 թ.) 11002 հոգի (աւելի քան ռուսները) կամ 14,30 տոկոս, Արդահանի շրջ. 5617 հոգի (աւելի, քան ռուսները, հայերը և վրացիները միասին) կամ 12,87 տ., Կաղզւանի շրջ. 4880 հ. կամ 14,28 տ., Օլթիի շրջ. 2026 հ. կամ 10.50 տ., Իսկ 1897 թ. յոյների թւական յարաբերութիւնները կրել են հետեւեալ փոփոխութիւնները. Նրանք եղել են՝ Ղարսի շրջանամասում 14805 հ. կամ 11,03 տ., Արդահանի շրջ. 7839 հոգ. կամ 12,00 տ., Կաղզւանի շրջ. 7245 հ. կամ 12,23 տ., Օլթիի շրջ. 2704 հոգի բամ 9,00 տոկոսով։

*Արդահանի և Օլթիի շրջ. մուսուլմանները կազմում են ապահով, բացարձակ մեծամասնութիւն և թւական այդ գերակշռութիւնը պահպանել են նրանք՝ որոշ տատանումներով, սկզբից մինչև վերջ. Իսկ մնացած երկու տեղերում՝ Ղարսի և Կաղզւանի շրջ., նրանք կազմել են յարաբերական մեծամասնութիւն միայն ութսունական թւականներին (1886 թ.). Իննսունականի վերջերին (1897թ.) նրանց տոկոսները վերջին երկու շրջանամասերում հաւասարւում են հայկականի հետ. Բայց այնուհետև հայերի տոկոսը արագ բարձրանում է և վերջին տարեթւին (1914 թ.) նրանք գերազանցելով մուսուլմաններին, կազմում են յարաբերական մեծամասնո թիւն՝ Ղարսի շրջ. 44,54 տոկոսով. Կաղզւանի շրջ. 40,31 տոկոսով. Համեմատելով միմիանց երկու ժողովրդների տոկոսական բաժինները առաջին և վերջին տարեթւերին, կստանանք հետևեալը.*

Հայերի տոկոսները

| | 1886 թ. | 1914 թ. | Տարբ. +կամ.— |
|---|---|---|---|
| 1. Ղարսի շրջան. | 29,31% | 41,54% | +12,23% |
| 2. Արդահանի » | 0,60 „ | 3,37 „ | +2,77 „ |
| 3. Կաղզւանի » | 36,75 „ | 40,31 „ | +3,56 „ |
| 4. Օլթիի » | 9,00 „ | 12,35 „ | +3,35 „ |

Մուսուլմանների տոկոսները

| | 1886 թ. | 1914 թ. | Տարբ. +կամ — |
|---|---|---|---|
| 1. Ղարսի շրջան. | 33,71% | 34,60% | +0,89% |
| 2. Արդահանի » | 77,00 „ | 78,26 „ | +1,26 „ |
| 3. Կաղզւանի » | 38,80 „ | 32,32 „ | —6,48 „ |
| 4. Օլթիի » | 73,00 „ | 67,77 „ | —5,23 „ |

*Այստեղ ևս տարբերութիւնները աչքի են զարնում շօշափելի մեծութիւններով. Ղարսի շրջանի բոլոր մասերում աւելացել են հայերի տոկոսները մեծ չափերով, մանաւանդ բուն Ղարսի շրջանամասում. իսկ մուսուլմանների տոկոսները աւելացել են նւազ չափերով միայն Ղարսի և Արդահանի շրջ., իսկ Կաղզւանի և Օլթիի շրջ., ընդհակառակը, նւազել են նրանց տոկոսները աւելի մեծ չափերով. Ռուսների տոկոսը աչքի է ընկնում միայն Ղարսի շրջանամասում, ուր նրանք աճելով հասնում են 15,20 տոկոսի 1897 թ., բայց այնուհետև նորից նւազում է նրանց թիւը և տոկոսը իջնում է մինչև 9,00 տոկոսի. Վրացիները աչքի են ընկնում միայն Օլթիի շրջանում, ուր նրանք կազմում են 10,20 տ. (1914 թ.) տեղական ողջ ազգաբնակութեան.*

5.

## ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

*Մինչև այստեղ մենք վիճակագրական մանրամասն գործողությունների և դիտողությունների առարկայ դարձրինք գլխավոր ժողովուրդների բացարձակ թվական և տոկոսական յարաբերությունները, այնուհետև աճման ընթացքը մեր ծայրերկրում ընդհանրապէս և նրա տերիտորիական վարչական մեծ ու մանր միավորների՝ նահանգների, շրջանների, գավառների և շրջանամասերի մէջ մասնավորապէս. Այժմ յաջորդական կարգով մնում է մեզ պարզել նոյն յարաբերությունների պատկերը Անդրկովկասի բոլոր քաղաքներում.*

### Ժողովուրդների քաղաքային ազգաբնակությունը առանձին-առանձին նահանգերում.

#### ա. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ.

*(Տես աղիւսակ երես 144)*

Թիֆլիսի՝ Կովկասի այդ մայրաքաղաքի բնակչութեան բազմախառն քանակի հանդէպ՝ ուր բոլոր ժողովուրդներն էլ ունեն իրանց թւական պատկառելի ներկայացուցչութիւնը[1], միանգամայն նսեմանում են նահանգի միւս քաղաքները իրանց փոքրաթիւ բնակչութեամբ. Քիչ թէ շատ աչքի են ընկնում Գորին, Սիգնախն ու Ախալցխան, ուր բնակչութեան թիւը անցնում է քսանական հազարի սահմաններից.

Վերոյիշեալ աղիւսակի տւեալներով հայերը երեք տարեթւերին կազմում են յարաբերական մեծամասնութիւն (1897 թ. ընդունելով ըստ մեր ստուգումների 50801 հ. հայեր և ոչ 47133, ինչպէս հաղորդւած է աղիւսակում). Կասկածից դուրս է, ի հարկէ, որ նոյն իսկ ստուգւած թւերով հայերը ունեցել են առաջին տարեշրջանում (1886—1897 թ.) թւական ամենանւազ յաւելումը համեմատած վրացիների և մանաւանդ ռուսների յաւելումների հետ. Այսպէս օրինակ մինչդեռ հայերի թիւը յիշեալ տարեշրջանում աւելացել է 13381 հոգով, վրացիներինը, ընդհակառակը, աւելացել է 19894 հոգով, իսկ ռուսների թիւը՝ 33359 հոգով. Երկրորդ տարեշրջանում արդէն (1897—1914 թ.) գտնում ենք միանգամայն հակառակ յարաբերութիւնը. Թիֆլիսի հայերը աւելացել են 17 տարւայ ընթացքում 78772 հոգով, ասել է աւելի քան երկու անգամ կամ տարեկան մօտ 4634 հոգով. վրացիների թիւը աւելացել է 28412 հոգով կամ տարեկան 1671 հ., ռուսների թիւը աւելացել է 30757 հոգով կամ տարեկան 1809 հոգով, ոչ շատ աւելի վրացիներից. վերջապէս մուսուլմանների թիւը աւելացել է աւելի քան երկու անգամ՝ 11027 հոգով կամ տարեկան մօտ 649 հոգով.

---

1897 թ. հայերի թիւը եղել է՝ Թիֆլիսում 50801 հոգի, ուրեմն 3668 հոգով աւելի՝ հաղորդւած թւից (47133 հ.), Ախալցխայում 9768 հոգ., 733 հոգով աւելի հաղորդ. թւից (9035 հ.), Գորիում 2813 հ., 729 հ. աւելի հաղորդ. թւից (2084 հ.), Դուշէթում 584 հ., 115 հոգ. աւելի հաղորդ. թւից (469 հ.), Սիգնախում 3816 հ., 1280 հոգ. աւելի հաղորդ. թւից (2536 հ.), Թելաւում 6258 հոգ., 2793 հ. աւելի հաղորդւած թւից (3465 հ.). Նշանակում է 1897 թ. հայ քաղաքային բնակչութեան թիւը նահանգի բոլոր քաղաքներում եղել է 79576 հոգի և ոչ թէ 70258 հ., ինչպէս հաղորդւած է. տարբերութիւնը հաւասար է 9318 հոգու, աւել է մի փոքրիկ քաղաքի բնակչութեան թւի.

[1]) Հարց է ծագում. ինչ թւական ոյժ են ունեցել մնացած ժողովուրդները մեր ծայրերկրի կենտրոնական քաղաքում և ինչ փոփոխութիւնների է ենթարկւել նրանց թիւը յայտնի տարեթւերին. Չորս գլխաւոր ժողովուրդները միասին վերցրած կազմել են 1886 թ. 74247 հոգի կամ Թիֆլիսի ողջ բնակչութեան 94,65 տ.. Նշանակում է մնացածը (4198 հ. կամ 5,35 տ.) բաղկացած են եղել բազմազան մանրաթիւ ժողովրդական տարրերից, որոնցից յիշատակութեան արժանի են մնացած սլաւոնական տարրերը՝ զանազան եւրոպացիների հետ միասին վերցրած և հրէաները առանձնապէս. առաջինները եղել են նոյն թւականին 2254 հոգի կամ 2,87 տ. իսկ վերջինները եղել են 1573 հոգի կամ 2,00 տ.. 1897 թ. թւական յարաբերութիւնները դասաւորւել են այսպէս. չորս գլխ. ժողովուրդները կազմել են միասին 143231 հոգի կամ ընդհանուր թւի մօտ 90 տոկոս. իսկ միւս տարրերը եղել են՝ սլաւոններ և եւրոպացիներ (միայն լեհեր և գերմանացիք) 7035 հոգի կամ 4,41 տ., հրէաները՝ 2935 հոգի կամ 1,83 տ., Նորագոյն տւեալներով (1914 թ.) նոյն տարրերը եղել են. չորս գլխ. ժողովուրդները՝ 295867 հոգի կամ ընդհանուրի 85,85 տ., սլաւոններ և եւրո-

Թիֆլիսի՝ Կովկասի այդ մայրաքաղաքի բնակչութեան բազմախառն քանակի հանդէպ՝ ուր բոլոր ժողովուրդներն էլ ունեն իրանց թւական պատկառելի ներկայացուցչութիւնը[1]), միանգամայն նսեմանում են նահանգի միւս քաղաքները իրանց փոքրաթիւ բնակչութեամբ։ Քիչ թէ շատ աչքի են ընկնում Գորին, Սիգնախն ու Ախալցխան, ուր բնակչութեան թիւը անցնում է քսանական հազարի սահմաններից։

Վերոյիշեալ աղիւսակի տւեալներով հայերը երեք տարեթւերին կազմում են յարաբերական մեծամասնութիւն (1897 թ. ընդունելով ըստ մեր ստուգումների 50801 հ. հայեր և ոչ 47133, ինչպէս հաղորդւած է աղիւսակում)։ Կասկածից դուրս է, ի հարկէ, որ նոյն իսկ ստուգւած թւերով հայերը ունեցել են առաջին տարեշրջանում (1886—1897 թ.) թւական ամենանւազ յաւելումը համեմատած վրացինների և մանաւանդ ռուսների յաւելումների հետ։ Այսպէս օրինակ մինչդեռ հայերի թիւը յիշեալ տարեշրջանում աւելացել է 13381 հոգով, վրացիններինը, ընդհակառակը, աւելացել է 19894 հոգով, իսկ ռուսների թիւը՝ 33359 հոգով։ Երկրորդ տարեշրջանում արդէն (1897—1914 թ.) գտնում ենք միանգամայն հակառակ յարաբերութիւնը. Թիֆլիսի հայերը աւելացել են 17 տարւայ ընթացքում 78772 հոգով, ասել է աւելի քան երկու անգամ կամ տարեկան մօտ 4634 հոգով. վրացինների թիւը աւելացել է 28412 հոգով կամ տարեկան 1671 հ., ռուսների թիւը աւելացել է 30757 հոգով կամ տարեկան 1809 հոգով, ոչ շատ աւելի վրացիններից. վերջապէս մուսուլմանների թիւը աւելացել է աւելի քան երկու անգամ՝ 11027 հոգով կամ տարեկան մօտ 649 հոգով։

---

1897 թ. հայերի թիւը եղել է՝ Թիֆլիսում 50801 հոգի, ուրեմն 3668 հոգով աւելի՝ հաղորդւած թւից (47133 հ.), Ախալցխայում 9768 հոգ., 733 հոգով աւելի հաղորդ. թւից (9035 հ.), Գորիում 2813 հ., 729 հ. աւելի հաղորդ. թւից (2084 հ.), Դուշէթում 584 հ., 115 հոգ. աւելի հաղորդ. թւից (469 հ.), Սիգնախում 3816 հ., 1280 հոգ. աւելի հաղորդ. թւից (2536 հ.), Թելաւում 6258 հոգ., 2793 հ. աւելի հաղորդւած թւից (3465 հ.)։ Նշանակում է 1897 թ. հայ քաղաքային բնակչութեան թիւը նահանգի բոլոր քաղաքներում եղել է 79576 հոգի և ոչ թէ 70258 հ., ինչպէս հաղորդւած է. տարբերութիւնը հաւասար է 9318 հոգու, ասել է մի փոքրիկ քաղաքի բնակչութեան թւի։

[1]) Հարց է ծագում. ինչ թւական ոյժ են ունեցել մնացած ժողովուրդները մեր ծայրերկրի կենտրոնական քաղաքում և ինչ փոփոխութիւնների է ենթարկւել նրանց թիւը յայտնի տարեթւերին։ Չորս գլխաւոր ժողովուրդները միասին վերցրած կազմել են 1886 թ. 74247 հոգի կամ Թիֆլիսի ողջ բնակչութեան 94,65 ա.։ Նշանակում է մնացածը (4198 հ. կամ 5,35 ա.) բաղկացած են եղել բազմազան մանրաթիւ ժողովրդական տարրերից, որոնցից յիշատակութեան արժանի են մնացած սլաւօնական տարրերը՝ զանազան եւրոպացինների հետ միասին վերցրած և հրէաները առանձնապէս. առաջինները եղել են նոյն թւականին 2254 հոգի կամ 2,87 ա. իսկ վերջինները եղել են 1573 հոգի կամ 2,00 ա.։ 1897 թ. թւական յարաբերութիւնները դասաւորւել են այսպէս. չորս գլխ. ժողովուրդները կազմել են միասին 143231 հոգի կամ ընդհանուր թւի մօտ 90 տոկոս. իսկ միւս տարրերը եղել են՝ սլաւոններ և եւրոպացիններ (միայն լեհեր և գերմանացիք) 7035 հոգի կամ 4,41 ա., հրէաները՝ 2935 հոգի կամ 1,83 ա., Նորագոյն տւեալներով (1914 թ.) նոյն տարրերը եղել են. չորս գլխ. ժողովուրդները՝ 295867 հոգի կամ ընդհանուրի 85,85 ա., սլաւոններ և եւրո-

Ըստ ազգային կազմի Թիֆլիսի բնակչական հիմնական տարրերը կազմել են միշտ վրացիները և հայերը. Հայկական տարրը թէպէտ գերակշռող եղել է դեռ աւելի վաղ ժամանակներից սկսած. վրացիները եղել են հայերի հանդէպ փոքրամասնութեան մէջ. Հետաքրքրական է պատմական մի փոքրիկ էքսկուրսիա կատարել անցեալի նկատմամբ և գոյութիւն ունեցող տւեալներով ցոյց տալ երկու դարաւոր հարեւանների թւական փոխ-յարաբերութիւնների պատկերը. Կրկնակի անհրաժեշտ է այդ էքսկուրսիան, որովհետև առօրեայ բանակռւի մէջ նացիոնալիստ հրապարակախօսների միտումնաւոր դատողութիւններից շարունակ մոլորւում են հասարակութեան խաւերը անգէտ և թշնամաբար զինւում մէկը միւսի դէմ. [1])

Կան պատմական վկայութիւններ, որոնք յայտնում են տեղեկութիւններ Թիֆլիսաբնակ հայերի մասին դեռ 6-րդ դարու վերջերից. այդ ժամանակ քաղաքի բնակչութեան մի մասը կազմել են հայերը. Յետագայում, վրաց արքաների (Դաւիթ III վերանորոգչի, Թամարա թագուհու) ներգաղ-

---

պայցիք՝ 15299 հոգի կամ 4,43 տ., իսկ հրէաները՝ 9167 հոգի կամ 2,66 տոկոսի. Ինչպէս տեսնում ենք, տիրող կամ հիմնական ժողովրդ. տարրերի յարաբերական տոկոսները քանի գնում այնքան աւելի ու աւելի են նւազում (1886—1914 թ. ընթացքում նւազել են 8,80 տոկոսով) շնորհիւ եկւոր տարրերի թւի արագ աճման. Այսպէս օրինակ ռուսների և եւրոպացիների թիւը Թիֆլիսում աճել է երեսնամեայ շրջանում 578,70 տոկոսով, իսկ հրէաների թիւը 482,80 տոկ.. Անման այսպիսի արագ տեմպ չի ունեցել Թիֆլիսում մեզ յայտնի ժողովուրդներից ոչ մէկը (բացի մուսուլմաններից). Հետաքրքիր է, ի միջի այլոց, իմանալ, թէ ինչպիսի թւական փոփոխութիւններ են ունեցել գլխաւոր ժողովուրդները Թիֆլիսում յաջորդ երկու տարւայ ընթացքում (1914—1916 թ.), ասել է պատերազմի առաջին շըրջանում (մինչև 1916 թ. յունւարի 1-ը). Ռուսների թիւը եղել է 91997 հոգի, երկու տարու տարում աւելացել են 13641 հոգով կամ աճել են 17,53 տոկոսով. հայերի թիւը եղել է 149294 հոգի, աւելացել են 19721 հոգով կամ աճել են 15,22 տոկոսով, վրացիների թիւը եղել է 69563 հ., նւազել են 31979 հ. կամ 85,08 տոկոսով, մուսուլմանների թիւը եղել է 19405 հ., աւելացել են 1030 հ. կամ 5,60 տոկ., հրէաների թիւը եղել է 1545 հ. կամ 16,86 տոկոսով. Աչքի է զարնում հայերի մեծաթիւ յաւելումը. մի փաստ, որ կարելի է հայ գաղթական տարրի և թիւրքահայ փախստականների մուտքով բացատրել. Բայց խիստ տարօրինակ է վրացիների այդքան մեծաթիւ նւազումը երկու տարւայ ընթացքում. վրաց զինւորների մոբիլիզացիան և տեղափոխութիւնը չի կարող այդ չափով նւազեցրած լինի վրաց բնակիչների թիւը, և ոչ էլ արտագաղթ կարող է եղած լինել այդ չափով. Հաւանական է միայն այն, որ անճիշտ թիւ է հաղորդւած.

[1]) Շատ ջուր է ծեծւել և դարման քամւել այդ հարցի շուրջը երկու հարևան ժողովուրդների նացիոնալիստ իդէօլօգների կողմից. Վրաց նացիոնալիստները բռնանալով պատմական ճշմարտութեան դէմ և կուրանալով վիճակագրական շօշափելի փաստերի հանդէպ, թեթևամտօրէն պնդել են, որ հայկական տարրը Վրաստանում և յատկապէս նրա մայրաքաղաքում նոր եկւոր էլեմենտ է, խորթ ու օտար վրացիութեան համար, և նա չունի ազգաբնակչօրէն ամրանալու և իրաւազօրելու պատմական տրադիցիաներ ու իրաւունքներ. Հայ նացիոնալիստները՝ ունենալով իրանց կողմը պատմա-վիճակագրական ճշմարտութիւնը, նոյնքան թեթևամտօրէն պարծեցել են հայ տարրի նիւթական-շինարար զօրութեամբ, համարելով նրան

թի քաղաքականութեամբ բազմանում են Թիֆլիսաբնակ հայերը 12-րդ դարուց 'ի վեր։ Ֆրանսիական ճանապարհորդ Շարդենի վկայութեամբ 1671 թ. Թիֆլիսի 14 եկեղեցիներից 8-ը եղել են հայկական. մի փաստ, որ ցոյց է տալիս, թէ ո՛րքան պատկառելի թիւ են ունեցել հայերը Վրաստանի մայրաքաղաքում դեռ 17-րդ դարում։ Առաջին թւական տեղեկութիւնները վերաբերւում են 1701 թ.։ Ֆրանսիական մի այլ ճանապարհորդի՝ Տուրնեֆորի, տւեալներով այդ ժամանակ Թիֆլիսի բնակիչների մօտաւոր թիւը կազմում էր 20000 հոգի, որոնցից 14000 հոգի եղել են հայեր (լուսաւորչական), 3000 հ. մահմեդ., 2000 հ. վրացիներ և 500 հ. հայ-կաթոլիկներ։ Նշանակում է հայերը եղել են բացարձակ մեծամասնութեան մէջ, ունենալով 14500 հոգի կամ կազմելով բնակիչների ընդհանուր թւի 72,50% անել է քիչ նւազ $^{3}/_{4}$-ից։ Հայերի մեծամասնութիւն կազմելու փաստը հաստատում է մի երրորդ ճանապարհորդ՝ Դիլապորտ կրօնաւորը, թւելով բոլոր ժողովուրդների անունները և աւելացնելով, որ հայերը թւով աւելի են բոլորից։ [1])

Աւելի վստահելի տւեալներ պաշտօնական բնաւորութեամբ վերաբերում են 19 րդ դարու երեսնական թւականներին։ Ըստ 1834 թւի վիճակագրական տեղեկութիւնների («по камеральному описанію») Թիֆլիսի հայ բնակիչների թիւը հասել է 16807 հոգու (դրանցից 9447 հոգի արական սեռից), իսկ վրացիները 3582 հոգու (որոնցից 1947 հ. արակ. սեռից)։ Կաթոլիկների թիւը՝ բաղկացած գրեթէ բացառապէս հայերից, եղել է 3415 հոգի։ Թիֆլիսի ողջ բնակչութեան միայն տղամարդ սեռի թիւը եղել է նոյն տւեալներով 25682 հոգի։ [2]) Դժբաղդաբար պակասում են կին սեռի վերաբերեալ թւական տւեալներ, որպէսզի կարողանայինք ճիշտ գաղափար կազմել Թիֆլիսի ընդհանուր բնակչութեան մասին։ Պարզ է, յամենայն դէպս, վերոյիշեալ տւեալներից, որ հայերի թիւը մօտ հինգ անգամ գերազանցել է վրացիների թւից։

Յետագայում չի պահպանւում հայերի թւական գերազանցութեան այդ բարձրութիւնը։ Ուղիղ երեսուն տարի անցած, 1864—65 թ. վիճակագրութիւնը հաղորդում է մեզ հետևեալ տւեալները. Թիֆլիսի բնակիչների ընդհանուր թիւը եղել է 71051 հոգի (որոնցից արական սեռը՝ 44071 հոգի). դրանց մէջ հայերի թիւը կազմել է 31914 հոգի կամ ընդհանուրի 44,92 տոկ. վրացիներին՝ 14787 հոգի (հայերի թւից „աւելի քան երկու անգամ նւազ) կամ 20,81 տ., ռուսներինը՝ 12142 հոգի կամ 17,10 տոկ.։ [3]) Հայեր,

«Երկրի ազը»։ Մենք գալիս ենք երկու նացիոնալիստական բանակներին յայտարարելու, որ վրացի և հայ ժողովուրդները, նրանց դեմոկրատական մասսաները յոգնել են ձեր թունաւոր գրգռումներից և հասել է ժամը, որ նրանք՝ ազդուած միջազգային համերաշխութեան եղբայրական զգացմունքներով, վերջնականապէս ազատագրւեն բռնազաղ նացիոնալիստների անկոչ խնամակալութիւնից։

[1]) Պատմական տւեալները տես «Сборник свѣдѣній о Кавказѣ» հրատ. Կովկ. Ստատ. Կոմիտէի հատ. VI-րդ, Թիֆլիս, 13-րդ գլ. «Краткій историческій очеркъ Тифлиса», եր. 26

[2]) Տես „Обозрѣніе Россійскихъ владѣній за Кавказомъ“ քառահատոր պաշտօնական հրատ. Պետերբուրգ, 1836 թ., I հատ. 1. Грузія, եր. 187—188 և յաջ.

[3]) Թւական բացարձակ տւեալները տես „Сборникъ свѣдѣній о

վրացիներ և ռուսներ միասին վերցրած կազմում էին 58843 հոգի կամ բնակիչների ընդհանուր թվի 82,83 տոկոսը։ Ուղիղ 12 տարի անցած, 1876 թ. վիճակագրությունը տվյալներով, Թիֆլիսի ազգաբնակության թիվը հասնում է 104024 հոգու, հայերինը՝ 37610 հոգու կամ ընդհանուրի 3616 տոկ., ռուսներինը՝ 30813 հոգու կամ 29,62 տոկ.-ի, իսկ վրացիները՝ 22156 հոգու կամ 21,30 տոկոսի։ ¹) Ընդամէնը երեք ժողովուրդները միասին վերցրած կազմում էին՝ 90579 հոգի կամ 87,08 տոկ.։ Այսպէս, եթէ Թիֆլիսաբնակ երեք գլխաւոր ժողովրդների վերաբերեալ մեզ յայտնի թւերը համադրենք իրար մի աղիւսակի մէջ, կստանանք հետևեալը։

| | 1701 թ. | 1834 թ. | 1864 թ. | 1876 թ. | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | 1916 թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ռուսներ | — | — | 12142 | 30813 | 14240 | 47133 | 78356 | 91997 |
| Հայեր | 14500 | 17148 | 31914 | 37610 | 37420 | 50801 | 129573 | 149294 |
| Վրացիներ | 2000 | 3582 | 14787 | 22156 | 21257 | 41151 | 69563 | 37584 |

Երեք ժողովուրդների թուական յաւելումները առաջ են ընթացել՝ առաւել կամ պակաս տարբերութեամբ, վեր ու վար տատանումներով։ Աչքի զարնող ցատկումներ նկատւում են ռուսների թուական յաւելումների մէջ. մեծ յաւելումով դէպի վեր՝ 1864—1876 թ., և նոյնքան մեծաթիւ նուազումով դէպի վար՝ 1876—1886 թ.։ Հայերի թիւը աճել է շարունակաբար. միայն 1876—1886 թ. ընթացքում նկատւում է չնչին (190 հոգով) նուազում։ Հայերի թուական յաւելումները եղել են համեմատաբար դանդաղ մինչև 1897 թւակ.։ Այդ ժամանակից 'ի վեր արդէն յախուռն չափերով է աւելանում հայկական տարրը Թիֆլիսում։ Ինչական անման հետ միասին ամենագլխաւոր պատճառը յետ միասին ամենագլխաւոր պատճառը այդ արտակարգ յաւելման (1897-1914 թ.) պէտք որոնել, անշուշտ, ներգաղթի այն անընդհատ և ուժեղ հոսանքի մէջ, որ ունեցել են հայկական գաւառական տարրերը դէպի Թիֆլիս։ Ամենամեծ մասսայական հոսանքը եղել է 1905—1606 թւականին. հայ-թրքական ընդհարումների տխուր շրջանում, երբ անարեկւած հայ գաւառացիութիւնը փրկութեան միակ ապահով ապաստարանը որոնեց Թիֆլիսում և մասսաներով հաստատուեց այնտեղ։ Վրացական տարրը

Кавказъ", IV հատ. Թիֆլիս, հրատ. ատտարս կովկասէ, էջ 60—61.

3) Ibit, էջ 94.

ևս աճել է շատ արագ, չհաշւելով նոյն 1876—1886 թւակ. տասնամեայ շրջանը, երբ նա մի փոքր (899 հոգով) նւազում է ունեցել։ Բայց այնուհետև խոշորաթիւ նւազում է ունեցել Թիֆլիսաբնակ վրացիութիւնը պատերազմի շրջանում (1914-1916 թ.), եթէ միայն ճիշտ է հաղորդւած 1916 թիւը, ինչպէս նկատեցինք մենք իր տեղում։ Թիֆլիսաբնակ յիշեալ երեք ժողովուրդները ունեցել են 215 տարւայ (1701-1916 թ.) ընթացքում հետևեալ տոկոսական աճումը. հայերը՝ մօտ 930,00 տոկոսով, վրացիները՝ 1779,20 տոկոսով, ռուսները (սկսած 1864 թ., ասել է 52 տարւայ ընթացքում՝ 657,51 տոկոսով։ Ամենաարագ աճում ունեցել են Թիֆլիսում վրացիները, որովհետև նրանց թւական ներկայացուցչութիւնը անցեալում չափազանց նւազ է եղել։ Վրացիները, ինչպէս վերոյիշեալ ութ տարեթւերի տւեալները ցոյց են տալիս, եղել ու մնացել են փոքրամասնութեան մէջ։ Մինչև 1864 թ. այդ փոքրամասնութիւնը արտայայտւել-է միայն հայերի թւական մեծութեան հանդէպ։ Յաջորդ տարեթւին՝ 1876 թ., Թիֆլիզի ռուսները ևս թւով գերազանցում են վրացիներին, որպէսզի տասը տարի յետոյ՝ 1886 թ., նորից իջնեն իրանց թւական բարձրութիւնից և նւազեն վրացիների հանդէպ։ Ընդհակառակը 1897 թւականից սկսած և այնուհետև շարունակ ռուսների թիւը արդէն վճռականապէս գերակշռում է վրացիների թւից։ Այդ թւականից 'ի վեր վրացիները թւապէս երրորդ տեղն են բռնում Թիֆլիսի ազգաբնակութեան մէջ՝ հայերից և ռուսներից յետոյ։

Թիֆլիսից յետոյ նահանգի միւս քաղաքների մասին առանձնապէս շատ բան չունենք ասելու։ Ռուսական տարրը հասկանալի պատճառներով շատ թոյլ ներկայացուցչութիւն ունի բոլոր գաւառական քաղաքներում. համեմատաբար աչքի է ընկնում և արագ աճել է նրանց թիւը Գորի քաղաքում, ուր վերջին տարեթւին (1914 թ.) հասել է նրանց թիւը 1723 հոգու։ Մնացած քաղաքներում հարիւրից վեր չեն բարձրանում։ Էլ աւելի է մուսուլմանների քաղաքային բնակչութիւնը։ Ուրեմն խօսք կարող է լինել միայն հայերի և վրացիների մասին։ Առաջին իսկ հայեացքից աչքի է զարնում հայ քաղաքային տարրի գերազանցումը վրացականի հանդէպ նոյնիսկ այնպիսի քաղաքներում (օր. Դուշէթի, Սիղնախի և Թելաւի), ուր վրացիութիւնը բացարձակ մեծամասնութիւն է կազմում գաւառական ազգաբնակութեան մէջ և այնպիսի քաղաքներում (օր. Ախալցխայի գաւ. և Ջաքաթալայի շրջ.), ուր վրացիներն ու մուսուլմանները առանձին-առանձին վերցրած իրանց գաւառական բնակչութեան թւով գերազանցում են հայերին։ Միայն Գորի քաղաքումն է, ուր վրացիները երեք տարեթւերին էլ պահպանում են թւական բացարձակ մեծամասնութիւն։ Մնացածների մէջ, մանաւանդ Ախալքալաքում և Ախալցխայում, հայերը թւապէս անպայման գերազանցում են ոչ միայն վրացիներին, այլև սրանց հետ միասին առած ռուսներին և մուսուլմաններին։ Ի հարկէ յաջորդ տարեթւին (1897 թ.)՝ շնորհիւ մասամբ հայերի թւի նւազման և մասամբ, որ գլխաւորն է, ժողովրդագրութեան գործած սխալ թւահաւաքի հայերի նկատմամբ, փոխւում են թւական յարաբերութիւնները. վրացական գաւառական քաղաքներում (Դուշէթում, Սիղնախում և Թելաւում) վրացիների թւական տւեալները գերազանցում են հայերի տւեալներից։ Իսկ 17 տարի անցած, 1914 թ. նորից հայերը հասնում են գերակշռող բարձրութեան Սիղնախում և Թելաւում։ Միայն երկու քաղաքում՝ Գորիում և Դուշէթում, վրացիները գերազանցում են հայերին։

Այժմ տեսնենք, թէ տոկոսական աճման ինչ ընթացք են ունեցել ժողովուրդները Թիֆլիսի նահանգի քաղաքներում։

Ժողովուրդների տոկոսական աճումը Թիֆլիսի նահանգի քաղաքներում.

| Քաղաքներ | 1886—1897 թուականին | | | | 1897—1914 թուականին | | | | 1886—1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Թիֆլիս | 234,30% | 26,00% [3] | 93,60% | 452,00% | 64,83% | 175,00% | 69,04% | 150,00% | 450,00% | 246,27% | 227,25% | 1300,00% |
| 2. Ախալքալաք | + [1] | 1,30,, | + [3] | + [4] | — [5] | 61,92,, | + [6] | — | + [8] | 64,02,, | + [9] | — |
| 3. Ախալցխա | + [1] | -15,29,, | 45,50,, | + [4] | — [5] | 100,70,, | -143,27,, | — [7] | + [8] | 74,20,, | -90,00% | + [10] |
| 4. Գորի | 254,42% | -40,00,, | 60,24,, | + [4] | 30,33,, | 230,50,, | 170,57,, | — [7] | 362,00 | 140,00,, | 333,60,, | + [10] |
| 5. Դուշեթ | + [1] | -147,00,, | 166,72,, | — [4] | — [5] | 101,70,, | -40,00,, | — [7] | + [8] | -22,41,, | 91,07,, | — [10] |
| 6. Սիղնախ | + [1] | -130,50,, | 33,12,, | + [4] | — [5] | 373,26,, | 37,40,, | — | + [8] | 105,00,, | 82,90,, | — |
| 7. Թելաւ | + [1] | -165,00,, | 405,60 | — | — [5] | 104,00,, | -255,40 | + [7] | + [8] | -30,00,, | 42,26,, | — |
| 8. Զաքաթալա | + [1] | — | + [3] | 78,57% | — [5] | 54,70,, | + | 46,60% | + [8] | — | + [9] | 161,77 |
| Ընդհանուրը՝ | 246,00% | 0,37% | 95,50% | 285,00% | 54,92% | 156,56 | 46,41% | 126,00% | 436,00 | 157,50% | 186,27% | 773,00% |

[1]) 1886—1897 թ. ընթացքում ռուսների թիւը աւելացել է Ախալքալաքում 646 հոգով, Ախալցխայում 1434 հոգ., Դուշեթում 316 հոգ., Սիղ-

*Առաջին տարեշրջանում (1886—1897 թ.) աճման ամենադանդաղ տոկոս Թիֆլիս քաղաքում ունեցել են հայերը, ամենից դանդաղ նոյնիսկ ստուգւած թւերով (35,76 տոկոս փոխանակ 26,00 տոկոսի)։ Աճման նոյն դանդաղ ընթացք ունեցել է հայ բնակչութիւնը նաև միւս քաղաքներում։ Ընդհակառակը, ամենաարագ աճում ունեցել են Թիֆլիսում մուսուլմանները՝ թւապէս ամենից նւազ ժողովրդական տարրը։ Երկրորդ տեղը աճման արագութեամբ բռնում են ռուսները, այնուհետև վրացիները։ Բնորոշ է այն հանգամանքը, որ հէնց այն քաղաքներում, ուր հայ բնակչութիւնը ամենամեծ նւազում է ցոյց տալիս, ինչպէս օրինակ Դուշէթում (—147,00 տոկոս) և Թելաւում (—865,00 տոկոսով), վրացի բնակչութ․նը ընդհակառակը, ցոյց է տալիս աճման ամենամեծ տոկոսները՝ Դուշէթում 166,72 տոկոսով, Թելաւում 405,60տոկոսով։ Գաւառական յետընկած և անհրապոյր քաղաքներում անկարող էր մի ժողովուրդ այդպիսի մեծ թռիչքով աճել ընդամենը 11 տարուայ ընթացքում։ Կասկածից դուրս է, որ վիճակագրական մեզ յայտնի սխալի շնորհիւ հայերի թիւը հաշւել են վրացիների վրայ։*

*Երկրորդ տարեշրջանում (1897—1914 թ.) պատկերը հիմնապէս փոխւում է։ Աճման արագութեան տեմպով առաջին տեղը բռնում են հայերը և իրաւ ոչ միայն Թիֆլիսում, այլև անխտիր բոլոր գաւառական քաղաքներում, ինչպէս պարզ երևում է վերոյիշեալ աղիւսակից։ Վերջին տեղը բռնում են ռուսները, որոնց թիւը աճել է միայն Թիֆլիս և Գորի քա-*

---

*նախում 85 հ., Թելաւում 433 հոգ., Զաքաթալայում 210 հոգով։*

[2]) *Մենք ցոյց տւինք բացարձակ թւերի աղիւսակում որ 1897 թւի հայերի վերաբերեալ տւեալները գրեթէ բոլոր քաղաքներում սխալ են հաղորդւած և բերինք ստուգւած թւեր։ Ըստ այդ ստուգւած թըւերի հայերի տոկոսական աճումը ևս (1886—1914 թ.) պէտք է այլ պատկեր ունենայ, ինչպէս երևում է հետևեալ տոկոսներից. Թիֆլիսում՝ 35,76 տոկոս, Ախալցխայում՝ 6,64 տոկոս, Գորիում՝ 2,88 տոկոս, Դուշէթում՝ 98,34 տոկոս, Սիղնախում՝ 53,41 տոկոս, Թելաւում՝ 46,12 տոկոս, իսկ ընդհանուր աճումը եղել է 13,67 (0,37 տոկոսի փոխարէն)։*

[3]) *Վրացիները աւելացել են՝ Ախալքալաքում 78 հոգով, Զաքաթալայում 170 հոգով։*

[4]) *Մուսուլմանները աւելացել են՝ Ախալքալաքում 13 հոգի, Ախալցխայում 149 հոգ., Գորիում 101 հոգի, Սիղնախում 38 հոգով. և ընդհակառակը նւազել են Դուշէթում 327 հոգով։*

[5]) *1897—1914 թւականը ռուսները նւազել են մի շարք քաղաքներում՝ Ախալքալաքում 419 հոգ., Ախալցխայում 954 հոգ., Դուշէթում 240 հոգով, Սիղնախում 20 հոգ., Թելաւում 365 հոգ., և Զաքաթալայում 111 հ.,*

[6]) *Նոյն տարեշրջանում վրացիները աւելացել են՝ Ախալքալաքում 168 հոգով։*

[7]) *Մուսուլմանները աւելացել են՝ Ախալցխայում 111 հոգով, Գորիում 30 հոգ., Դուշէթում 19 հոգ., Թելաւում 76 հոգով։*

[8]) *1886—1914 թ. ռուսները աւելացել են՝ Ախալքալ. 227 հ., Ախալցխայում 954 հոգ., Դուշէթ. 76 հոգ., Սիղնախում 65 հոգ., Թելաւում 68 հոգ., Զաքաթալայում 93 հոգով։*

[9]) *Նոյն տարեշրջանում վրացիները աւելացել են՝ Ախալքալաքում 246 հոգով, Զաքաթալայում 184 հոգով։*

[10]) *Մուսուլմանները աւելացել են՝ Ախալցխայում 38 հոգով, Գորիում 71 հոգ. իսկ նւազել են Դուշէթում 346 հոգով։*

ղաքներում, Մնացած քաղաքներում նուազել են նրանք։ Աճման արագութեամբ երկրորդ տեղը բռնում են մուսուլմանները, որոնց թիւը եւ աճել է միայն երկու քաղաքներում՝ Թիֆլիսում և Ջաքաթալայում. Մնացած տեղերում նուազել են նրանք։ Այստեղ եւ վրացիները բռնում են երրորդ տեղը, որոնց թիւը սակայն, նուազման մեծ տոկոսներ են տալիս երեք քաղաքներում՝ Ախալցխայում, Դուշէթում և Թելաւում։

Երեսնամեայ աճման (1886—1914 թ.) ընթացքը դասաւորւում է այսպէս. առաջին տեղը բռնում են Թիֆլիսում մուսուլմանները, որոնց աճման տոկոսը հասնում է 1300 տոկոսի (կամ տարեկան 46,43 տոկոս), երկրորդ ռուսները 450 տոկոս (կամ տար. 16,07 տոկոս), երրորդը հայերը (246,27 տոկոս կամ տարեկան 8,80 տոկոս), չորրորդը կամ վերջինը վրացիները (227,25 տոկոս կամ 8,11 տոկոս)։ Հայերի և վրացիների աճման տեմպի տարբերութիւնը Թիֆլիսում չնչին է [1]։ Դրանք են տեղացի հնագարեան բնակիչները, որոնց աճման ընթացքը եղել է նորմալ, իսկ ռուսներն ու մուսուլմանները, իբրև նոր եկւորներ, որոնք անցեալում չնչին թիւ են ունեցել, ցոյց են տալիս աճման արագութեան անսովոր տոկոսներ։ Մնացած քաղաքներում նուազման տոկոսներ ունեցել են հայերը (Դուշէթում և Թելաւում), վրացիները (Ախալցխայում) և մուսուլմանները (Դուշէթում)։ Իսկ ռուսները աճել են անխտիր բոլոր քաղաքներում։

Այժմ տեսնենք, թէ ինչ յարաբերական տոկոսներ են կազմում ժողովուրդները Թիֆլիսի նահանգի քաղաքներում։ Դա ցոյց է տալիս հետեւեալ աղիւսակը։

---

[1]) Առաջին թւական տեղեկութիւնները Թիֆլիսաբնակ հայերի և վրացիների մասին ծագում են ինչպէս մենք գիտենք 1701 թըւականից (Հայերի եղել է թիւը 14500 հոգի, վրացիները 2000 հոգ.)։ Մինչև 1864 թ., ասել է 163 տարուայ ընթացքում, հայերի թիւը հասել է 31914 հոգ., կամ աճել է 120,10 տոկոսով, իսկ վրացիներինը հասել է 14787 հոգու կամ աճել է 634, 35 տոկոսով։ Յաջորդ յիսնամեակի (1864—1914 թ.) ընթացքում հայերի թիւր հասել է 129573 հոգու կամ աճել է 306,00 տոկոսով, իսկ վրացիների թիւը հասել է 69563 հոգու կամ աճել է 370,43 տոկոսով։ Ռուսների վերաբերեալ թւական տւեալներ ունենք 1864 թւականից ի վեր, երբ նրաց թիւը եղել է 12142 հոգի, նշանակում է նոյն յիսնամեայ շրջանում ռուսների թիւը հասել է 78356 հոգու կամ աճել է 545,33 տոկոսով։

Ժողովուրդների տոկոսները Թիֆլիսի նահանգի առանձին-առանձին քաղաքների ընդհանուր ազգաբնակութիւնից.

| Քաղաքներ | 1886 թուականին | | | | 1897 թուականին | | | | 1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուսներ | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուսներ | Հայեր[1] | Վրաց. | Մուս. | Ռուսներ | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Թիֆլիս | 18,15% | 47,70% | 27,10% | 1,70% | 30,00% | 29,54% | 25,78% | 4,61% | 22,73% | 37,60% | 20,18% | 5,33% |
| 2. Ախալքալաք | 1,32,, | 95,00,, | 1,18,, | — | 12,92,, | 76,03,, | 2,37,, | 0,51,, | 3,80,, | 89,48,, | 4,00,, | — |
| 3. Ախալցխա | 0,90,, | 64,63 | 17,00,, | 0,36 | 10,28,, | 60,00,, | 23,30,, | 1,27,, | 2,61,, | 75,82,, | 6,15,, | 0,40,, |
| 4. Գորի | 5,15,, | 40,00,, | 53,50,, | — | 12,87,, | 20,30,, | 60,44,, | 1,44,, | 6,71,, | 26,85,, | 65,43,, | 0,30,, |
| 5. Դուշէթ | 3,05,, | 57,12,, | 28,17,, | 11,90,, | 14,73,, | 18,30,, | 39,35,, | 1,01,, | 6,23,, | 42,75,, | 49,30,, | — |
| 6. Սիղնախ | — | 55,21,, | 43,80,, | — | 2,12,, | 28,20,, | 68,74,, | — | 0,91,, | 50,88,, | 48,00,, | — |
| 7. Թելաւ | — | 81,88,, | 17,28,, | — | 3,60,, | 24,90,, | 70,34,, | — | 1,34,, | 70,49,, | 27,49,, | — |
| 8. Զաքաթալա | 13,56,, | — | 1,62,, | 42,08,, | 12,53,, | 46,53,, | 6,31,, | 30,74,, | 6,50,, | 54,12,, | 5,10,, | 33,90,, |
| Ընդամենը՝ | 11,63% | 53,31% | 26,81% | 1,74% | 24,02% | 32,06% | 31,40% | 4,00% | 18,51% | 40,21% | 22,84% | 4,52% |

[1]) Եթէ 1897 թուականի վերաբերեալ հայերի տոկոսները պատկերացնենք առուցւած թւերի հիման վրայ, կստանանք հետեւալը. Հայերի տոկո-

Ուշագրաւ է այս աղիւսակը։ Առաջին տարեթւին (1886 թ.) Թիֆլիսի նահանգի բոլոր քաղաքների ընդհանուր բնակչութեան մէջ հայերը եղել են բացարձակ մեծամասնութեան մէջ, կազմելով ընդհանուրի 53,31 տոկ.։ Իսկ առանձին-առանձին քաղաքներում նրանք ամենուրեք (բացի Զաքաթալայից) կազմել են մեծամասնութիւն տեղական ազգաբնակութեան մէջ. Միայն Թիֆլիսում և Գորիում եղել է այդ մեծամասնութիւնը յարաբերական, իսկ մնացած քաղաքներում բացարձակ։ Ամենամեծ տոկոս ունեցել են հայերը Ախալքալաքում (95 տոկոս)՝ այդ համարեա զուտ հայկական քաղաքում՝ և ապա Թելաւում (81,88 տոկոս)։ Հայերի յարաբերական մեծամասնութիւնը Թիֆլիսում խիստ պատկառելի է՝ 47,70 տոկոս, փոքր միայն պակաս կէսից, որ աւելի է քան ռուսների, վրացիների և մուսուլմանների տոկոսները միասին վերցրած (18,15+27,10 տ. + 1,70 տոկոս)։ Հայերից յետոյ երկրորդ տեղը բռնում են վրացիները, որոնց տոկոսական մասնակցութիւնը բոլոր քաղաքների բնակչութեան ընդհանուր թւի մէջ եղել է նոյն թւականին 26,81 տոկոս։ Մնացած քաղաքներից միայն Գորիում կազմել են վրացիները բացարձակ մեծամասնութիւն (53,50 տոկոս). պատկառելի է նրանց տոկոսը Սիղնախում (43,80 տ.)։ Վրացիների քաղաքային բնակչութեան ամենանւազ տոկոսը կազմել է 1,18 տոկ. (Ախալքալաքում), իսկ հայերինը՝ 40,00 տոկոս (Գորիում)։ Շատ համեստ տեղ են բռնում ռուսները առաջին տարեթւին. նրանց ընդհանուր տոկոսական բաժինը հաւասար է 11,63 տոկոսի. փոքր ինչ աչքի է ընկնում նրանց տոկոսը (18,15 տոկ.) Զաքաթալայում և մասամբ Գորիում (5,15 տոկոս)։ Մուսուլմանների ընդհանուր տոկոսը նահանգի բոլոր քաղաքների ողջ ազգաբնակչութեան մէջ միանգամայն աննշան է՝ ընդամենը 1,74 տոկոս, իսկ առանձին վերցրած Զաքաթալայում կազմում են նրանք յարաբերական մեծամասնութիւն, ունենալով 42,08 տոկոս տեղական ազգաբնակութեան։

Երկրորդ տարեթւին 1897 թ. զգալիօրէն փոխւում են ժողովուրդների տոկոսական յարաբերութիւնները։ Աչքի է ընկնում ամենից առաջ ռուսների պատկառելի մասնակցութիւնը Թիֆլիսի բնակչութեան մէջ, ուր նրանք կազմում էին 30,00 տոկոս գերազանցելով վրացիներից (25,78 տոկոս) և բռնելով երկրորդ տեղը հայերից (31,83 տոկոս ստուգւած թւերով) յետոյ։ Մնացած բոլոր գաւառական քաղաքներում ռուսների տոկոսը աճել է զգալի չափերով, բացի Զաքաթալայից, ուր մօտ մի տոկոսով նւազել է նրանց մասնակցութիւնը։ Ընդհակառակը հայերի յարաբերական տոկոսները անխտիր նւազել են բոլոր քաղաքներում, չհաշւելով Զաքաթալան, ուր հայերի վերաբերեալ չկան թւական տւեալներ նախորդ տարեթւին, իսկ 1897 թւին նրանք յարաբերական մեծամասնութիւն են կազմում (42,53 տոկոս) այնտեղ։ Ինչ վերաբերում է մնացած քաղաքներին, ապա հայերը պահպա-

---

ռը եղել է՝ Թիֆլիսում 31,83 տոկոս (և ոչ 29,54 տոկոս), Ախալցխայում 63,61 տոկոս (և ոչ 60,00 տոկոս), Գորիում 27,30 տոկոս (և ոչ 20,30 տ.), Դուշէթում 23,00 (և ոչ 18,30 տոկոս) Սիղնախում 42,43 տոկոս (և ոչ 28,20 տոկոս), վերջապէս Թելաւում 45,00 տոկոս (և ոչ 24,90 տոկ.)։ Ստուգւած թւերով տոկոսական զգալի տարբերութիւններ են նկատւում առանձնապէս Սիղնախում և Թելաւում։ Հայերի ընդհանուր տոկոսը քաղաքային ազգաբնակութեան ամբողջից կազմել է նոյն թւականին 36,31 տոկ. (և ոչ 32,06 տոկոս)։

նել են այդ թւականին իրանց բացարձակ մեծամասնութիւնը միայն Ախալքալաք և Ախալցխա քաղաքներում։ Մնացած քաղաքներում հաշւելով նոյնիսկ ստուգւած թւերով, նրանք իջել են իրանց մասնակցութեան բարձր աստիճանից։ Ինչ վերաբերում է վրացիներին, նրանց տոկոսը նւազել է միայն Թիֆլիսում, իսկ մնացած քաղաքներում աճել է, ի հարկէ ոչ այն տւեալներով, որոնք զետեղւած են աղիւսակում, այլ ստուգւած տւեալներով։ Օրինակ Դուշէթում նրանց տոկոսը պիտի լինէր 54,65 տոկոս (և ոչ 59,35 տոկոս, Սիղնախում՝ 54,51 տոկ. (և ոչ 68,64 տոկ.), Թելաւում՝ 50,24 տոկ. (և ոչ 70,34 տոկ)։ Տոկոսական ընդհանուր մասնակցութեամբ՝ քաղաքային ամբողջ ազգաբնակութեան մէջ, առաջին տեղը բռնում են հայերը, երկրորդը վրացիները և երրորդը ռուսները։ Մուսուլմանների տոկոսը, թէև աճել է՝ թէ մասնաւորապէս Թիֆլիսում և թէ ընդհանուր առմամբ, այնուամենայնիւ աննշան մեծութիւն է կազմում։

Վերջապէս երրորդ տարեթւին (1914 թ.) դարձեալ փոխւում են ժողովուրդների տոկոսական յարաբերութիւնները, միայն հակառակ ուղղութեամբ։ Ռուսների տոկոսները նւազել են անխտիր բոլոր քաղաքներում առանձ.-առանձին և, հետեւապէս, ընդհանուր առմամբ (ընդհ. նւազումը հաւասար է ութ տոկոսի)։ Նւազել են նաև վրացիների տոկոսները,, բացառութեամբ Ախալքալաքի և Գորու, ուր աճել են նրանց տոկոսները։ Վրացիների ընդհանուր բաժնի նւազումը հաւասար է 8,56 տոկոսի։ Միայն Գորիում պահպանել են վրացիները իրանց բացարձակ մեծամասնութիւնը (65,43 տոկոս), իսկ Դուշէթում՝ յարաբերական մեծամասնութիւնը (49,30 տոկ.)։ Միանգամայն հակառակ ուղղութեամբ են զարգացել հայերի տոկոսական յարաբերութիւնները։ Նրանց տոկոսները աճել են անխտիր բոլոր քաղաքներում, մի քանի տեղ բաւական զգալի չափերով։ Հայերը կազմում են բացարձակ մեծամասնութիւն ոչ պակաս քան հինգ քաղաքներում. Ախալքալաքում (89,48 տոկոս), Ախալցխայում (75,82 տոկ.), Սիղնախում (50,88 տոկ.), Թելաւում (70,49 տոկ.), Զաքաթալայում (54,12 տոկոս). իսկ Թիֆլիսում հայերը կազմում են յարաբերական մեծամասնութիւն (37,60) տոկ.)։ Հայերի տոկոսական ընդհանուր մասնակցութիւնը քաղաքային ազգաբնակութեան մէջ հաւասար է 46,21 տոկոսի, նախորդ տարեթւի նկատմամբ աճել է վերջինս մօտ չորս տոկոսով։ Մահմեդականների տոկոսը եւ աճել է թէ ընդհանուր առմամբ և թէ Թիֆլիսում ու Զաքաթալայում մասնաւորապէս։

Եթէ առանձնապէս ուշադրութեան առնենք երեք գլխաւոր ժողովուրդների տոկոսական յարաբերութիւնների դասաւորութիւնը Թիֆլիսի ընդհանուր ազգաբնակութեան մէջ աւելի վաղ տարիներից սկսած, կստանանք հետեւեալ պատկերը։ (տես աղիւս. եր. 156)

Երեք ժողովուրդներն էլ ունեցել են տոկոսական բաժինների վեր ու վար տատանումներ՝ նայած նրանց աճման ընթացքին և եկւոր տարրի քանակին։ Ամենամեծ տատանումներ ունեցել են ռուսները, որոնց տոկոսական բաժնի մինիմումը հասնում է 17,10 տոկոս (1864 թ.), իսկ մաքսիմումը 30,00 տոկոսի (1897 թ.), և հայերը, որոնց տոկոսական մինիմումը հաւասար է 31,83-ի (1897 թ.), իսկ մաքսիմումը 47,70 տոկոսի (1886 թ.)։ Մինչդեռ վրացիների մօտ աւելի փոքր են տատանումները, ինչպէս

և մինիմումի և մաքսիմումի տարբերութիւնները՝ 20,18 տոկոս (1914 թ.) և 27,10 տոկոս (1886 թ.)։ Այդ է պատճառը, որ ժողովուրդների յիսնամեայ շրջանի ընթացքում եղած տոկոսական տարբերութիւնները եւ գանազան են. ռուսների տոկոսը վերջին հաշւով աւելացել է 5,63 տոկոսով, հայերինը նւազել է 7,31 տոկոսով, իսկ վրացիներինը համարեա նոյնն է մնացել, ինչ յիսուն տարի առաջ էր եղել, նւազելով միայն 0,62 տոկոսով։ Այնուհետև վերոյիշեալ տոկոսները ցոյց են տալիս, որ հայկական տարրը միշտ էլ կազմել է յարաբերական մեծամասնութիւն Թիֆլիսի ողջ ազգաբնակութեան մէջ։ Հայերից յետոյ երկրորդ տեղը բռնել են . վրացինները մինչև 1886 թւականը. այնուհետև նրանք զիջում են իրանց տեղը ռուսներին և իրանք կանգնում երրորդ գծի վրայ։

Այժմ տեսնենք, թէ ինչպէս են դասաւորւած ժողովուրդների երկու սեռերի թւական յարաբերութիւնները քաղաքներում։

| | 1864 թ. | 1876 թ. | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | Տարբերութիւն 1864—1914 թ. + կամ — |
|---|---|---|---|---|---|---|
| Ռուսներ | 17,10% | 29,62% | 18,15% | 30,00% | 22,73% | + 5,63% |
| Հայեր | 44,91 » | 36,15 » | 47,70 » | 31,83 » | 37,60 » | — 7,31 » |
| Վրացիներ | 20,80 » | 21,30 » | 27,10 » | 25,78 » | 20,18 » | — 0,62 » |

100 տղամարդուն գալիս են

կանայք՝

(Տես աղիւսակ երես 157)

| Քաղաքներ | 1886 թուականին | | | | 1897 թուականին | | | | 1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Թիֆլիս | 93,2 | 82,4 | 78,0 | 61,4 | 81,0 | 73,8 | 67,5 | 40,0 | 89,2 | 90,3 | 77,1 | 74,1 |
| 2. Ախալքալաք | 60,5 | 90,0 | 105,0 | 66,6 | 10,5 | 96,6 | — | — | 68,0 | 83,1 | 70,0 | — |
| 3. Ախալցխա | 135,5 | 91,4 | 85,0 | 50,0 | 17,0 | 97,4 | 105,7 | 32,0 | 80,9 | 90,9 | 80,0 | 83,3 |
| 4. Գորի | 52,3 | 68,2 | 63,8 | — | 34,0 | 83,3 | 90,7 | — | 70,0 | 53,3 | 51,1 | 26,6 |
| 5. Դուշէթ | 72,2 | 70,0 | 60,4 | — | 25,2 | 94,0 | 50,0 | — | 66,2 | 94,3 | 88,1 | 40,0 |
| 6. Սիղնախ | 45,2 | 71,6 | 99,5 | — | 78,5 | 117,0 | 96,9 | — | 92,1 | 78,2 | 68,9 | — |
| 7. Թելաւ | 148,1 | 105,3 | 77,6 | — | 30,5 | 66,3 | 86,2 | — | 55,0 | 84,0 | 82,0 | — |
| 8. Զաքաթալա | 32,5 | — | 81,8 | 95,0 | 28,8 | 77,3 | 71,1 | 28,0 | 76,5 | 77,7 | 48,0 | 94,5 |
| Միջին թիվ | 79,9 | 82,7 | 81,4 | 68,2 | 38,2 | 88,2 | 81,2 | 33,3 | 74,7 | 81,4 | 70,6 | 64,1 |

Մենք գիտենք, որ Անդրկովկասում կին սեռը թուական ամենաուժեղ մասնակցութիւն ունի վրաց ժողովրդի մէջ (100 տղամարդուն 89,4 կին), այնուհետև հետևում է հայ իգական սեռը (100 տղամ. 86,4 կ.), ապա մուսուլմանները (100 տղամ. 85,6 կ.) և վերջում ռուսները (100 տղամ. 74.4 կ.)։ Գաւառական ազգաբնակութեան մէջ երկու սեռերի թուական յարաբերու-

*թիւնները պահպանում են նոյն յաջորդականութիւնը՝ վրացիներ (100-ին 91,6), հայեր (100-ին 88,6), մուսուլմաններ (100-ին 86,8) և ռուսներ 100-ին 79,1)։ Ընդհակառակը զուտ քաղաքային ազգաբնակութեան մէջ փոխւում է այդ յարաբերութիւնների դասաւորութիւնը. այստեղ իր թւական ուժեղութեամբ առաջին տեղը բռնում է հայ իգական սեռը (100-ին 77,6), երկրորդ տեղը՝ մահմեդական կին սեռը (100 ին 73,2), երրորդ տեղը ռուս իգակ. սեռը (100-ին 69,3) և միայն չորրորդ տեղը՝ վրաց իգակ. սեռը (100-ին 68,2)։*

*Ինչ վերաբերում է մասնաւորապէս Թիֆլիսի նահանգի քաղաքային ազգաբնակութեան մէջ դասաւորուած սեռերի թւական յարաբերութիւններին, ապա վերևի աղիւսակը տալիս է դրանց պարզ պատկերը։ Երեք տարեթւերին էլ առաջին տեղը բռնում է հայ իգական սեռը իր թւական ուժեղութեամբ. երկրորդը տեղը (միայն 1886 և 1897 թ.թ.) գրաւում է վրաց իգակ. սեռը, իսկ երրորդ նոյն երկու տարեթւերին բռնում է ռուս իգակ. սեռը, որը վերջին տարեթւին (1914 թ.) արդէն երկրորդ տեղն է բռնում։ Մուսուլման կին սեռը, ընդհակառակը, բոլոր տարեթւերին բռնում է վերջին տեղը։ Առանձին-առանձին քաղաքներում դասաւորուած սեռերի թւական յարաբերութիւնները ցոյց են տալիս, որ ծայրահեղ հակադիրներից խուսափող համաչափութիւն ամենամեծ չափով նկատւում է հայերի և ապա վրացիների մօտ. դա հետևանք է այդ երկու ժողովրդների վաղեմի բնակութեան և մշտակայունութեան. դա հետևանք է՝ մասնաւորապէս հայերի նկատմամբ՝ նրանց քաղաքացիական և քաղքենական (մեշչանական) տարրերի թւական ուժեղ ներկայացուցչութեան։ Մինչդեռ ռուսների և մասամբ մուսուլմանների մէջ, իբրև եկւորներ, խիստ անհամաչափ են դասաւորուած սեռերի քանակական յարաբերութիւնները։ Խօսքը մասնաւորելով Թիֆլիսի մասին, մենք նկատում ենք վերոյիշեալ աղիւսակից, որ առաջին երկու տարեթւերին ռուս իգակ. սեռը գերազանցել է յիշուած ժողովրդների իգակ. սեռին, մինչդեռ վերջին տարեթւին (1914 թ.) այդ առաջնութիւնը անցնում է հայ իգակ. սեռին։*

*Անցնենք այժմ յաջորդական կարգով միւս նահանգների քաղաքային ազգաբնակութիւններին։*

*(Տես աղիւսակ երես 159)*

Է. ՔՈՂԱՔՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ ՔՈՒԹԱՅԻՍԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ.

| Քաղաքներ | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Քութայիս | 1526 | 2320 | 15200 | 205 | 4304 | 1264 | 22017 | 302 | 11188 | 1801 | 31987 | 415 |
| 2. Օզուրգէթ | 62 | — | 1391 | — | 355 | 14 | 4298 | 14 | 165 | 22 | 8393 | — |
| 3. Բաթում | 1660 | 3458 | 2072 | 2824 | 7144 | 6839 | 6087 | 3014 | 10220 | 9828 | 9919 | 3862 |
| 4. Սուխում | 119 | 53 | 115 | — | 1936 | 1083 | 2473 | 606 | 15305 | 4731 | 18025 | 1017 |
| 5. Փոթի | 214 | 502 | 2939 | 382 | 1108 | 416 | 4583 | 238 | 2990 | 1681 | 12563 | 100 |
| 6. Ռեդուտ-Կալէ | 9 | — | 31 | — | 20 | — | 741 | 2 | — | — | 802 | — |
| Ընդամենը՝ | 3590 | 6333 | 22028 | 3593 | 14867 | 9616 | 40199 | 4176 | 39868 | 18063 | 80889 | 5394 |

Քութայիսի նահանգի քաղաքային ազգաբնակութեան մէջ վրացիները, բնականօրէն, կազմում են բացարձակ մեծամասնութիւն. և այդ դիրքը պահպանում են նրանք բոլոր տարեթւերին։ Ինչ վերաբերում է առանձին-առանձին քաղաքներին, ապա նրանք տեղի են տալիս ռուսներին և հայերին (վերջիններիս միայն առաջին երկու տարեթւերին) միայն

*Բաթումում, իսկ մնացած քաղաքներում վրացիները անպայման գերազանցում են միւս ժողովրդներին միասին վերցրած՝ Սուխումում յարաբերական մեծամասնութեամբ (1897 և 1914 թ.թ.), իսկ միւս քաղաքներում բացարձակ մեծամասնութեամբ։ Զուտ վրացական քաղաքներում (Քութայիս, Օզուրգէթ, Փոթի և Ռեդուտ-Կալէ) վրացիները անպայման գերակշռում են միւս ժողովրդական տարրերին։ Ինչ վերաբերում է ռուսներին, հայերին և մուսուլմաններին, ապա նրանցից իւրաքանչիւրը, մանաւանդ վերջին երկուսը, առանձին թւակ. մեծութիւն չեն ներկայացնում ոչ ընդհանրապէս և ոչ առանձին առանձին քաղաքներում։ 1886 թ. ռուսներն ու մուսուլմանները ունեցել են բնակչութեան միևնոյն քանակը նահանգի բոլոր քաղաքներում միասին վերցրած։ Հայերի թիւը, ընդհակառակը, 1½—2 անգամ գերազանցել է ռուսների և մուսուլմանների քանակին։ Յաջորդ տարեթւին (1897 թ.) ռուսները աճելով 4—5 անգամ անպայման գերազանցում են հայերին և մուսուլմաններին միասին վերցրած։ Իսկ 1914 թւին ռուսների այդ թւական գերազանցումը էլ աւելի է ուժեղանում՝ անցնելով մէկ ու կէս անգամից։ Եթէ մենք համադրենք առաջին և վերջին տարեթւերի տւեալները (բոլոր քաղաքների վերաբերեալ) կստանանք հետևեալ տարբերութիւնները։*

| | 1886 թ. | 1914 թ. | Տարբեր. |
|---|---|---|---|
| Վրացիներ | 22028 | 80889 | 58861 |
| Ռուսներ | 3590 | 39868 | 36278 |
| Հայեր | 6333 | 18063 | 11730 |
| Մուսուլմ. | 3593 | 5394 | 1801 |

*Թւական ամենամեծ աճեցում՝ աւելի քան 10 անգամ, ունեցել են ռուսները. այնուհետև հետևում են վրացիները, որոնց թւական տարբերութիւնը աւելի խոշոր է, բայց աճեցումը՝ մօտ 3—4 անգամ աւելի նւազ է ռուսների աճեցումից։ Երրորդ տեղը բռնում են հայերը՝ մօտ 3 անգամ աճեցումով և ապա մուսուլմանները, որոնց թիւը նոյնիսկ չի կրկնապատկւել։*

*Եթէ մենք ժողովուրդների աճման ընթացքը պատկերացնենք տոկոսներով կստանանք հետևեալ աղիւսակը։*

*(Տես աղիւսակ երես 161)*

| Քաղաքներ | 1886—1897 թ ւ ա կ ա ն ի ն | | | | 1897—1914 թ ւ ա կ ա ն ի ն | | | | 1886—1914 թ ւ ա կ ա ն ի ն | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. |
| 1. Քութայիս | 182,00% | -83,54% | 44,85% | +[2]) | 160,00% | 42,50% | 45,30% | +[5]) | 633,15% | -28,76% | 106,50% | +[7]) |
| 2. Օզուրգէթ | +[1]) | — | 209,00„ | —[2]) | —[3]) | +[4]) | 95,27„ | — | +[6]) | — | 503,40„ | — |
| 3. Բաթում | 330,36„ | 97,77„ | 193,77„ | 7,00% | 43,05„ | 43,70„ | 62,95„ | 28,13% | 515,6[illegible]„ | 184,21„ | 378,71 | 37,00% |
| 4. Սուխում | 1527,00„ | 1943,40„ | 2050,40„ | — | 690,54 | 337,00„ | 630,00„ | 67,82„ | 12845,38„ | 8826,41„ | 15573,91 | — |
| 5. Փոթի | 417,82„ | -20,70„ | 55,93„ | -60,50„ | 170,00 | 304,11 | 174,12„ | -138,00„ | 1300,00„ | 234,84„ | 327,50 | -282,00 |
| 6. Րեդուտ-Կալէ | +[1]) | — | 138,30„ | — | — | — | 8,23„ | — | — | — | 160,00„ | — |
| Ընդհանուրը՝ | 314,12% | 51,84% | 82,49% | 16,22 | 168,16% | 88,00% | 101,22% | 29,17% | 1010,53% | 185,22% | 267,22% | 5012% |

[1]) 1886 թ. Ռուսները աճեցել են՝ Օզուրգէթում 293 հոգով, Րեդ. Կալ. 11 հ.։

[2]) Մուսուլմանները Քութայիսում աճեց. 97 հոգ., Օզուրգ. նուազել են են 168 հ.։

[3]) 1897 թ. ռուսները նուազել են Օզուրգ. 190 հոգ.։

[4]) Հայերը աճեցել են Օզուրգ. 8 հոգ.։

[5]) Մուսուլմանները աճեցել են Քութայիսում 113 հոգով։

[6]) 1914 թ. ռուսները աճեցել են Օզուրգէթում 103 հոգով։

[7]) Մուսուլմանները աճեցել են Քութայիսում 210 հոգով։

Այն, ինչ յայտնի էր մեզ բացարձակ թւերից, այստեղ արտայայտուած են աւելի շօշափելիօրէն. ընդհանուր առմամբ տոկոսական ամենամեծ աճեցում ունեցել են ռուսները բոլոր տարեշրջաններում։ Նրանց հետեւում են վրացիները, ապա հայերը և վերջում՝ անման շատ համեստ չափերով, մուսուլմանները։ Առաջին տարեշրջանում (1886-1897 թ.) ռուսների աճեցումը (314,12 տոկոս) գերազանցում է ամենամեծ չափերով և իրաւ, վրացիների աճեցումից (82,49 տոկ.)՝ մօտ 4 անգամ, հայերի աճեցումից (51,84 տոկ.) 6 անգամ, իսկ մուսուլմանների աճեցումից (16,22 տոկ.)՝ 19 անգամ։ Երկրորդ տարեշրջանում (1897-1914 թ.) արդէն ռուսների աճման գերազանցումը անհամեմատ թոյլ է. մի կողմից իջնում է նրանց աճման տոկոսը աւելի քան կիսով չափ նախկին բարձրութիւնից, իսկ միւս կողմից զգալի չափերով բարձրանում են միւս ժողովուրդների, մանաւանդ հայերի և վրացիների աճման տոկոսները։ Ինչ վերաբերում է առանձին-առանձին քաղաքներին, ապա այստեղ ևս ռուսները ունեցել են աճման ամենաարագ տեմպը երկու գլխաւոր քաղաքներում՝ Կութայիսում, Բաթումում և նոյն իսկ Փոթիում։ Երկրորդ տեղը բռնում են վրացիները, որոնց աճման ընթացքը Սուխումում եղել է ամենից արագ։ Ռուսները և հայերը ևս շատ արագ աճել են այդ քաղաքում։ Հայերը ամենից արագ աճել են միայն Փոթիում՝ երկրորդ տարեշրջանում (1897-1914 թ.), ընդհակառակը մեծ չափով նուազել են նրանք Կութայիսում առաջին տարեշրջանում (1886-1897 թ.), և մինչև 1914 թ., ասել է մօտ երեսուն տարւայ ընթացքում, հայ քաղաքային բնակիչների թիւը չի հասել Կութայիսում այն քանակին, ինչ ունեցել են նրանք 1886 թ.։ Եղել է արտագաղթ, թէ թւական տուեալներն են սխալ— դժուար է ասել, չունենք դրա համար աւելի հաւաստի աղբիւրներ։ [1] Նուազման ոչ մի դէպք չեն ունեցել վրացիները ոչ մի քաղաքում, իսկ ռուսները նուազել են միայն Օզուրգէթում 1897-1914 թ., ընդհակառակը մուսուլմանները նուազել են Փոթիում մեծ չափով և բոլոր տարեշրջաններում։

Տեսնենք այժմ, թէ ինչպէս են դասաւորուած ժողովրդների տոկոսական յարաբերութիւնները։

( Տես աղիւս. երես 163 )

[1] Ինչպէս մենք տեսանք բացարձակ թւերի աղիւսակում, հայերի թիւը Կութայիսում եղել է 1886 թ. 2320 հոգի, հետզհետէ նուազելով հասել է այդ թիւը 1897 թ. 1264 հոգու, իսկ 17 տարուց յետոյ՝ 1914 թ., նորից աւելանալով հասել է նա 1801 հոգու։ Մի այլ աղբիւր («Города Россіи въ 1910 году» изд. Центр. стат. ком., Петербургъ, 1914 г., стр. 912) հաղորդում է, որ 1910 թ. (ուրեմն միայն չորս տարի առաջ մեր վերջին տարեթւից) հայերի թիւը Կութայիսում եղել է 4032 հոգի. բայց նոյն այդ աղբիւրը հաղորդում է տարօրինակ կերպով, որ հայ լուսաւորչականների թիւը նոյն թւականին եղել է Կութայիսում 1780 հոգի։ Դրանից դուրս է գալիս, որ ոչ լուսաւորչական հայերի թիւը գերազանցել է լուսաւորչականների թւից $1\frac{1}{2}$ անգամ (կամ 2252 հոգով)։ Ի հարկէ սխալ է միանգամայն այդ տուեալը. ոչ հին և ոչ նոր վիճակագր. աղբիւրները այդքան մեծ թիւ չեն հաղորդում ոչ լուսաւորչ. հայերի մասին։ Ըստ 1914 թ. տուեալների Կութայիսի 1801 հայերից եղել են ոչ լուսաւորչականներ 830 հոգի կամ 46,08 տոկոսը. 1897 թ. տուեալների այդ տոկոսը շատ աւելի փոքր է։

Ժողովուրդների տոկոսները Քութայիսի նահանգի քաղաքների ազգաբնակութեան ամբողջից.

| Քաղաքներ | 1886 թուականին | | | | 1897 թուականին | | | | 1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Քութայիս | 6,74% | 10,24% | 67,13% | — | 13,25% | 3,90% | 68,10% | — | 19,32% | 3,11% | 55,21% | 0,72% |
| 2. Օզուրգէթ | 4,21,, | — | 95,60,, | — | 7,53,, | — | 91,25,, | — | 1,92,, | — | 97,82,, | — |
| 3. Բաթում | 11,21,, | 23,36,, | 14,00,, | 19,00 | 25,06,, | 24,00,, | 21,35,, | 10,06,, | 26,47,, | 25,45,, | 25,68,, | 10,00,, |
| 4. Սուխում | 28,88,, | 12,86,, | 28,00,, | — | 24,20,, | 13,54,, | 30,95,, | 7,57,, | 33,00 , | 10,17,, | 38,73,, | 2,18,, |
| 5. Փոթի | 4,54 , | 1,13,, | 62,41,, | 8,11 | 15,08,, | 5,66,, | 62,38,, | 3,24,, | 15,20,, | 8,56,, | 64,00,, | 0,51,, |
| 6. Ռէդուտ-Կալէ | 2,36,, | — | 80,40,, | — | 2,56,, | — | 95,00,, | — | — | — | 100,00,, | — |
| Ընդհանուրը՝ | 8,08% | 14,25% | 49,56% | 8,09% | 18,17% | 11,75% | 50,00,, | 8,09% | 23,16% | 10,49% | 47,00% | 3,13% |

*Միայն վրացիներն են, որ մեծամասնութիւն են կազմում Քութայիսի նահանգի մի քանի քաղաքներում. այդ մեծամասնութիւնը ապահով ու բացարձակ է Քութայիսում, Օզուրգէթում, Փոթիում և փոքրիկ Ռէդուտ-Կալէում, այսինքն նահանգի բոլոր քաղաքներում՝ ըստ արդի վարչական բաժանումների (չհաշուելով Բաթումի և Սուխումի շրջանները)։ Բացի դրա-*

նից վրացիները յարաբերական մեծամասնութիւն են կազմում նաև Սուխում քաղաքում (սկսած 1897 թւականից)։ Վրացական մեծամասնութիւնը յիշած քաղաքներում ենթակայ է եղել տատանումների։ Բացի Քութայիսի դրանից յիշած քաղաքներում ուժեղացել է վրացական մեծամասնութիւնը, մինչդեռ բուն Քութայիսում զգալի չափերով թուլացել է այդ մեծամասնութիւնը՝ 28 տարուայ ընթացքում (1886—1914 թ.) նւազելով մօտ 12 տոկոսով։ Միւս ժողովրդներից յիշելու է ռուսներին և մասամբ հայերին։ Վերջիններիս ընդհանուր տոկոսը նահանգի քաղաքային ազգաբնակութեան մէջ իջել է իր նախկին բարձրութիւնից 3,76 տոկոսով (14,25 տոկոսից իջնելով 10,49 տոկոսի 28 տարուայ ընթացքում), մինչդեռ ռուսների տոկոսը աճել է մօտ երկու անգամ կամ 15,06 տոկոսով (8,08 տոկոսից բարձրանալով 23,16 տոկոսի)։ Վրացիների ընդհանուր տոկոսը նւազել է նոյն ժամանակամիջոցում 2,56 տոկոսով, իսկ մուսուլմաններինը նւազել է ամենից աւելի՝ 4,96 տոկոսով։ Նշանակում է ընդհանուր առմամբ նահանգի քաղաքային ազգաբնակութեան մէջ աճման ուժեղ տենդենցներ ունեցել են միայն ռուսները։ Զատ-զատ քաղաքներում վերցրած, ի հարկէ, թոյլ է նրանց տոկոսական բաժինը վրացական մեծամասնութեան հանդէպ։ Միայն Բաթումում, 1897 թ. սկսած, ռուսները եղել են յարաբերական մեծամասնութեան մէջ շատ նւազ առաւելութեամբ։ Իսկ 1886 թ. հայերն են կազմել յարաբ. մեծամասնութիւն նոյն քաղաքում։ Սուխումում ռուսների տոկոսական մասնակցութիւնը աւելի ուժեղ է (1886 և 1914 թ.թ.), քան Բաթումում։ Քութայիսում եւ մեծ տարբերութեամբ (12,58 տոկոսով) աճել է ռուսների տոկոսը՝ 6,74 տոկոսից հասնելով 19,32 տոկոսի (1886—1914 թ.)։ Ինչ վերաբերում է հայերին, նրանց մասնակցութիւնը աչքի է ընկնում միայն Բաթումում, ուր նրանք վերջին տարեթւի տւեալով գրեթէ միևնոյն թւական մեծութիւնն են կազմում, ինչ որ վրացիները. այն է տեղական ազգաբնակութեան աւելի քան 1/4 մասը։

Տեսնենք այժմ, թէ սեռերի ինչ թւական յարաբերութիւն են ունեցել ժողովուրդները Քութայիսի նահանգի քաղաքներում։

(Տես աղիւսակ երես 165)

100 տղամարդուն գալիս էին կանայք՝

| Քաղաքներ | 1886 թուականին | | | | 1897 թուականին | | | | 1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Քութայիս | 80,6 | 89,3 | 64,2 | 10,8 | 50,7 | 82,4 | 72,1 | 6,0 | 61,2 | 47,5 | 67,8 | 31,8 |
| 2. Օզուրգէթ | 77,1 | — | 82,8 | 124,7 | 20,0 | — | 66,6 | — | 65,0 | 120,0 | 73,6 | — |
| 3. Բաթում | 66,3 | 32,0 | 30,3 | 25,5 | 60,0 | 40,0 | 33,2 | 13,2 | 77,0 | 93,9 | 60,0 | 57,0 |
| 4. Սուխում | 80,3 | 80,0 | 80,0 | — | 66,0 | 73,3 | 27,0 | 2,2 | 21,6 | 50,0 | 56,0 | 71,0 |
| 5. Փոթի | 72,5 | 22,4 | 72,8 | 34,2 | 64,0 | 36,8 | 65,0 | — | 62,0 | 47,4 | 59,4 | — |
| 6. Ռեդուտ-Կալէ | 80,0 | — | 90,0 | — | 62,5 | — | 87,6 | — | — | — | — | — |
| Միջին թ.-ը | 76,1 | 56,0 | 70,0 | 46,3 | 54,0 | 58,1 | 58,2 | 7,4 | 57,3 | 71,7 | 63,4 | 53,2 |

Իգական սեռի ամենամեծ թիւ՝ միջին առումով, տալիս են ռուսները՝ 1886 թ., այնուհետև վրացիները և ապա հայերը։ 1897 թ., ընդհակառակը, հայերը և վրացիները բռնում են առաջին տեղը գրեթէ միևնոյն թուական մեծութեամբ (58,1 և 58,2), այնուհետև յաջորդում են ռուսները, իսկ մահմեդականները շատ չնչին թիւ են ներկայացնում։ 1914 թ. արդէն առաջին տեղը բռնում է հայ իգական սեռը՝ իր թուական մեծութեամբ, երկրորդը վրացիները և ապա միայն ռուսները. Նոյնքան զանազան է ժողովուրդների իգական սեռի ներկայացուցչութիւնը առանձին-առանձին քաղաքներում։ Այսպէս օրինակ 1886 թ. և 1897 թ. Քութայիսում հայ իգական սեռը ունեցել է ամենաբարձր թուական ներկայացուցչութիւնը, մինչդեռ

1914 թ. նա միայն երրորդ տեղն է բռնում։ Վրացի կին սեռը, ընդհակառակը, առաջին տարեթւին երրորդ տեղն է բռնում, երկրորդում՝ երկրորդ տեղը, իսկ երրորդում՝ առաջին տեղը։ Ընդհանրապէս նկատելի է, որ Քութայիսի նահանգի քաղաքներում կին սեռը շատ աւելի թոյլ ներկայացուցչութիւն ունի, քան Թիֆլիսի նահանգի քաղաքներում։

C. ԺՈՂՈՎՐԴՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ.

Դառնանք այժմ Երևանի նահանգի քաղաքներին և ցոյց տանք նոյն յարաբերութիւնները այնտեղ։

Ժողովուրդների բնական բացարձակ թւերը Երևանի նահանգի քաղաքներում.

| Քաղաքներ. | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Երևան [1]) | 313 | 7142 | 18 | 7228 | 3171 | 12523 | 142 | 12516 | 1059 | 37213 | 203 | 12605 |
| 2. Ալէքսանդրապոլ | 65 | 22921 | 16 | 881 | 5157 | 21771 | 129 | 1263 | 4013 | 45120 | — | 1123 |
| 3. Նախիջևան | 24 | 2041 | -- | 4874 | 232 | 2263 | 24 | 6170 | 192 | 2638 | 86 | 5986 |
| 4. Օրդուբադ | 1 | 411 | — | 3787 | 179 | 284 | 8 | 4091 | 112 | 173 | — | 5367 |
| 5. Նոր-Բայազէտ | — | 7426 | — | 38 | 57 | 8094 | 15 | 283 | 240 | 12666 | — | 240[2]) |
| Ընդամենը՝ | 403 | 39941 | 34 | 16808 | 8796 | 44935 | 318 | 24323 | 5616 | 97810 | 289 | 25321 |

1) Երևան քաղաքի բնակչութեան տւեալները՝ վերջին տարեթւին վերաբերում են 1916 թւականին.

Ընդհանուր առմամբ Երևանի նահանգի քաղաքներում տիրապետող տարրը հանդիսանում են հայերը, և իրաւ շատ աւելի մեծ առաւելութեամբ՝ միւս ժողովուրդների հանդէպ, քան վրացիներն ունէին Թիֆլիսի նահանգի քաղաքներում։ Երևանի նահանգի քաղաքներում վրացիական տարրը աննշանութեան չափ չնչին թիւ է կազմում, մի քանի անգամ աւելի նուազ թիւ, քան օրինակ մահմեդականներն են կամ միայն թաթարներն են Թիֆլիսի նահանգի քաղաքներում։ Ռուսները ևս խիստ համեստ քանակ ունեին (մանաւանդ առաջին տարեթւին) և այդ քանակը, որի պատկառելի մասը Ալէքսանդրապոլում բանակած զօրքն է կազմել միշտ, ենթակայ է շարունակ տատանումների։ Այն արագ և անընդհատ աճումը, որ ունեցել է եկւոր ռուսութիւնը վրացական գաւառներում և քաղաքներում, հաւասար չափերով չենք գտնում հայկականում, Այդ երևոյթը, անշուշտ, ունի իր ներքին պատճառական հիմքերը որոնց վրայ, սակայն, մենք կանգ առնել չենք կարող ներկայ կապակցութեան մէջ։

Մնում է միայն երկու ժողովրդական տարրերը—հայերն ու մուսուլմանները առհասարակ,[2]) որոնք կազմում են քաղաքներում հիմնական ազգաբնակութիւնը։ Սակայն այն թւական ու տոկոսական պատկառելի տեղը, որ բռնում են մուսուլմանները առհասարակ Երևանի նահանգական և գաւառական ազգաբնակութեան մէջ, յատկապէս հայերի հանդէպ, չունեն նրանք քաղաքային ազգաբնակութեան մէջ. այստեղ մուսուլմանների թւական մեծութիւնը անհամեմատ համեստ է։ Միայն Երևանումն է, որ նրանք թւական մրցակցութեան մէջ են գտնւում հայերի հետ, բայց վերջիններս հետզհետէ գերազանցել են մուսուլմաններին։ Մնացած չորս քաղաքների մէջ հայերը և մուսուլմանները գտնւում են թւական հակառակ յարաբերութեան մէջ. Ալէքսանդրապոլում և Նոր-Բայազէթում հայերի բացարձակ մեծամասնութեան հանդէպ չքանում է մուսուլմանների աննշան թիւը, իսկ Նախիջևան և Օրդուբադ համեմատաբար աւելի փոքր քաղաքներում մուսուլմաններն են գտնւում բացարձակ մեծամասնութեան մէջ, որոնց հանդէպ, սակայն, հայկական փոքրամասնութիւնը աւելի է, քան մուսուլմանական փոքրամասնութիւնը Ալէքսանդրապ. և Նոր-Բայազէտում։ Երկու ժողովրդների

---

[1]) Ժողովրդների թւական բացարձակ տւեալները՝ երեք տարեթւի վերաբերեալ, տես մեզ յայտնի աղբիւրների մէջ համապատասխան մասերը։

[2]) Երևանի ինչպէս նահանգի, այնպէս էլ մանաւանդ քաղաքների մուսուլմանների ազգաբնակութեան բացարձակ մեծամասնութիւնը բաղկացած է թաթարներից։ Այսպէս օրինակ 1886 թ. Երևան քաղաքի բոլոր մուսուլմանները եղել են թաթարներ, նոյնը և Նախիջևանում (բացառութեամբ 38 հոգու), Օրդուբաթում. Ալէքսանդրապոլում 1897 թ. Երևանի մուսուլմանները՝ բացառութեամբ 157 հոգու, բոլորը թաթարներ են։ Նոյնը Ալէքսանդրապոլ., բացառութեամբ 173 հոգու, որոնցից 101 հոգի՝ քրդեր։ Նոյնը Նախիջևանում՝ բացառութեամբ 9 հոգու և Օրդուբադում՝ բացառութեամբ 3 հոգու։ Իսկ Նոր Բայազէտում 283 մուսուլմաններից միայն 40 հոգի են թաթարներ, մնացածները՝ քրդեր են։ 1914 թ., ինչպէս գիտենք, տւեալները առհասարակ մուսուլմաններին է վերաբերում չկան յատուկ տւեալներ թաթարների մասին։ Իսկ քրդեր եղել են այդ նոյն թւականին. Երևանում՝ 35 հոգի, Նոր-Բայազէտում՝ 210 հ., Ալէքսանդրապոլում՝ 288 հոգի, որոնցից եզիդ քրդեր 222 հոգի։

աճման թւական տարբերութիւնները՝ առաջին և երկրորդ տարեթւերին, երևում են հետևեալ համեմատութիւններից։

| Քաղաքներ | ՀԱՅԵՐ | | | ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1886թ. | 1914թ. | տարբ. + կմ. — | 1886թ. | 1914թ. | տարբ. + կմ — |
| 1. Երևան | 7142 | 37213 | +30061 | 7228 | 12605 | +5377 |
| 2. Ալէքսանդր. | 22921 | 45120 | +22199 | 881 | 1123 | + 242 |
| 3. Նախիջևան | 2041 | 2638 | +597 | 4874 | 5986 | +1112 |
| 4. Օրդուբադ | 411 | 173 | —238 | 3787 | 5367 | +1580 |
| 5. Ն.-Բայազէտ | 7426 | 12666 | +5240 | 38 | 240 | + 202 |
| Ընդամենը՝ | 39941 | 97810 | +57869 | 16808 | 25321 | +8513 |

Բացի աննշան նւազումից Օրդուբատ քաղաքում, հայերը աճել են յիշւած քաղաքներում, ամենամեծ չափով Ալէքսանդրոպոլում՝ գրեթէ երկու անգամ, և մանաւանդ Երևանում՝ աւելի քան հինգ անգամ [1]։ Մուսուլմանների՝ կամ պարզապէս ասենք՝ թաթարների աճումը եղել է անհամեմատ աւելի նւազ, բայց համաչափ։ Հայերի քաղաքային բնակչութեան ընդհանուր աճումը եղել է մօտ 2½ անգամ, իսկ թաթարներինը՝ ½ անգամ։ Հայերի քաղաքային տարրի ամենամեծ ոյժը ներկայացնում է Ալէքսանդրոպոլը, որ թէ ինքը քաղաքը և թէ գաւառը, ինչպէս տեսանք, հայկական էլեմենտի Hochburg-ն է կազմում։

Աւելի շօշափելիօրէն կպարզւէ մեզ ժողովրդների աճման ընթացքը, եթէ մենք պատկերացնենք այն տոկոսների ձևով, ինչպէս ցոյց է տալիս հետևեալ աղիւսակը։

(Տես աղիւսակ երես 169)

1) Յիշեցնում ենք, որ Երևանի բնակչութեան վերաբերեալ տւեալները վերաբերում են 1916 թ., երբ տեղական հայ բնակչութիւնը միանգամից աճել է մեծ չափերով թիւրքահայ փախստականների մուտքով։ Բայց առանց այդ փախստականների էլ, 1914 թ. տւեալներով, տեղական հայերը զգալի չափերով թւով գերազանցել են մուսուլմաններից. Նրանց թիւը եղել է 15531 հոգի կամ տեղական ազգաբնակութեան 52,90 տոկոսը, իսկ մուսուլմաններինը՝ 11500 հոգի կամ 39,16 տոկոսը։

| Քաղաքներ | 1886—1897 թւականին | | | | 1897—1914 թւականին | | | | 1886—1916 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Թուրքեր | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Թուրքեր | Հայեր[2]) | Վրաց. | Մուս. | Թուրքեր | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Երևան | 913,00% | 75,34% | +[2]) | 73,16% | −200,00% | 197,16% | +[4]) | 0,71% | 227,00% | 421,04% | +[3]) | 74,40% |
| 2. Ալէքսանդրապոլ | +[1]) | −5,28 ,, | +[3]) | 41,10 ,, | −28,51,, | 107,25,, | — | −12,46,, | +[4]) | 97,00,, | — | 27,47,, |
| 3. Նախիջևան | +[6]) | 10,87 ,, | — | 26,60 ,, | —[7]) | 16,57,, | +[5]) | 3,07,, | +[11]) | 30,00,, | — | 22,82,, |
| 4. Օրդուբադ | +[6]) | −45,00 ,, | — | 8,03 ,, | —[7]) | —[8]) | — | 31,20,, | +[11]) | —[11]) | — | 41,80,, |
| 5. Նոր-Բայազէտ | — | 9,00 ,, | | | +[9]) | 56,50,, | — | +[10]) | — | 70,56,, | — | +[13]) |
| Ընդամէնը՝ | 2082,83% | 12,50% | 835,30% | 44,71% | 56,62% | 117,70% | −10,35% | 4,10% | 1293,54% | 145,00% | 750,00% | 50,65% |

[1]) Թուրքերը աւելացել են Ալէքսանդրոպ. 1886—1897 թ. 5092 հոգ.։
[2]) Վրացիները աւելացել են Երևանում՝ 124 հ., Ալէքսանդրոպ. 113հ.։
[3]) Վրացիները աւելացել են Երևանում (1897—1914 թ.) 61 հոգով։
[4]) Թուրքերը աւելացել են Ալէքսանդրոպ. (1886—1914 թ.) 3948հոգ.։
[5]) Վրացիները աւելացել են Երևանում 185 հոգով։
[6]) Թուրքերը աճել են (1886—1897 թ.) Նախիջևանում 208 հոգ., Օրդուբադում՝ 178 հոգով։
[7]) Թուրքերը նւազել են (1897—1914) Նախիջևանում 10 հ., Օրդուբադում՝ 67 հ., իսկ աճել են Նոր-Բայազ. 183 հոգով։

(Մնացած ծանօթութիւնները տես երես 170)

Ընդհանուր առմամբ քաղաքային ազգաբնակութեան աճման մէջ ամենաարագ տեմպ ունեցել են ռուսներն ու վրացիները, թէև երկրորդ տարեշրջանում (1897—1914 թ.) նրանք նուազման տոկոսներ են տալիս։ Բայց ինչպէս նկատեցինք իր տեղում, այդ երկու ժողովուրդները թւապէս այնքան չնչին տեղ են բռնում Երևանի նահանգում և մանաւորապէս նահանգի քաղաքներում, և իբրև եկւոր տարրեր, այնքան տատանումների և պատահականութեան ենթակայ է նրանց թիւը, որ առանձին բացատրութիւնների կարիք չունեն նրանց աճման տոկոսները։ Ուշագրաւը վերև բերած աղիւսակի մէջ հայերի և թաթարների (կամ առհասարկ մուսուլմանների) աճման տոկոսներն է։ Առաջին տարեշրջանում (1886—1897 թ.) նահանգի հայ քաղաքային ազգաբնակութեան ընդհանուր աճման ընթացքը (12,50 տոկոս) եղել է գրեթէ $3^1/_2$ անգամ աւելի դանդաղ, քան թաթարներինը (44,71 տ.)։ Դա պիտի բացատրել այն թւական նւազումով, որ ունեցել են հայերը յիշեալ տարեշրջանում իրանց գլխաւոր հայաշատ կենտրոնում՝ Ալեքսանդրոպոլում (5,28 տոկոսով կամ 1150 հոգով)։ Ընդհակառակը, երկրորդ տարեշրջանում (1897—1914 թ.) գտնում ենք տրամագծօրէն հակառակ յարաբերութիւնները. հայերի աճման տոկոսը (117,70 տոկոս) գերազանցում է թաթարների աճումից (4,10 տ.) աւելի քան 29 անգամ։ Ըստ այդ երկու տարեշրջանների աճման ընթացքի, դասաւորւել են երկու ժողովուրդների աճման տոկոսները երեսնամեայ տարեշրջանում (1886—1914 թ.). հայերի տոկոսը հաւասար է 145,00 տոկ., իսկ մուսուլմաններինը մօտ 3 անգամ աւելի նւազ՝ 50,65 տ.։ Ինչ վերաբերում է այդ ժողովրդների աճման ընթացքին առանձին քաղաքներում, ապա հայերի աճման տոկոսը դարձեալ երկրորդ տարեշրջանում անպայման գերազանցում է մուսուլմանների աճման բոլոր քաղաքներում, բացի Օրդուբադից, մանաւանդ Երևանում և Ալեքսանդրապօլում։ Իսկ առաջին տարեշրջանում հայերի տոկոսը աւելի է մուսուլմանների տոկոսից միայն Երևանում 2,18 տոկոսով։ Մնացած քաղաքներում գերազանցում են մուսուլմանների տոկոսները։ Երեսնամեայ տարեշրջանում (1886—1916 թ.) արդէն հայերի աճման տոկոսը Երևանում (421,04 տ.) գերազանցում է նոյն իսկ ռուսների տոկոսից (227,00) ուր մնաց մուսուլմանների (74,70տ.)։ Իսկ եթէ հաշւենք տոկոսները մինչև 1914 թ. տւեալները, հայերի աճումը կարող ենք արտայայտել 117,45 տոկոսով, իսկ մուսուլմանները՝ 59,10 տոկոսով, ասել է գրեթէ երկու անգամ աւելի նւազ, քան հայերի տոկոսը։ Այդպիսով մուսուլմանները 1886—1897 թ. աւելի արագ են աճել (73,16 տ.), քան 1886—1914 թ. (59,10 տ.), որովհետև երկրորդ տարեշրջանում (1897—1914 թ.) նրանց թիւը նւազել է 1016 հոգով կամ 8,83 տոկոսով։ Պատկառելի է եղել հայերի երեսնամեայ աճման տոկոսը նաև Ալեքսանդրոպոլում՝ 97,00 տ. և Նոր-Բայազէտում՝ 70,56, իսկ մուսուլմանների աճումը թաթարաշատ Նախիջևանում և Օրդուբադում եղել է նոյն շրջանում շատ աւելի համեստ՝ 22,82 և 41,80 տոկոսներով։

[8]) Հայերը նւազել են Օրդուբ. 111 հոգով։

[9]) Վրացիները աճել են Նախիջևանում 62 հոգով։

[10]) Մուսուլմանները աճել են Նոր-Բայազ. 43 հոգով։

[11]) Ռուսները աճել են (1886—1914 թ.) Նախիջ. 162 հոգ., Օրդուբադում 111 հոգով։

[13]) Հայերը նւազել են Օրդուբադում 238 հոգով։

[12]) Մուսուլմանները աճել են Նոր-Բայազ. 202 հոգով։

Տեսնենք այժմ, թե ինչ տոկոսական բաժին են կազմում ժողովրդները Երևանի նահանգի քաղաքներում՝ տեղական ազգաբնակության ամբողջության մէջ։ Դա ցոյց է տալիս հետևեալ աղիւսակը։

| Քաղաքներ | 1886 թուականին | | | | 1897 թուականին | | | | 1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուսն. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Երևան | 2,12°/₀ | 48,45°/₀ | — | 49,04°/₀ | 10,93°/₀ | 43,17°/₀ | 0,50°/₀ | 43,15°/₀ | 2,06°/₀ | 72,56°/₀ | 0,40°/₀ | 24,57°/₀ |
| 2. Ալէքսանդրոպօլ | 0,27„ | 94,18„ | — | 3,63„ | 16,84„ | 71,14„ | 0,42°/₀ | 4,12„ | 7,86„ | 88,00„ | — | 2,18„ |
| 3. Նախիջևան | 0,34„ | 28,12„ | — | 70,23„ | 2,64„ | 25,74„ | — | 70,20„ | 2,14„ | 29,50„ | 0,95°/₀ | 67,00„ |
| 4. Օրդուբադ | — | 9,80„ | — | 90,19„ | 3,88„ | 6,16„ | — | 88,70„ | 1,98„ | 3,06„ | — | 94,91„ |
| 5. Նոր-Բայազէտ | — | 99,17„ | — | 0,50„ | 0,67„ | 95,40„ | — | 3,33„ | 1,81„ | 95,30„ | — | 1,81„ |
| Ընդհանուրը՝ | 0,75°/₀ | 69,35°/₀ | — | 29,16°/₀ | 10,80°/₀ | 55,00°/₀ | 0,39°/₀ | 29,84°/₀ | 4,30°/₀ | 74,20°/₀ | 0,22°/₀ | 19,40°/₀ |

Մինչև այստեղ մեզ յայտնի նահանգների քաղաքային ազգաբնակութիւնների մէջ ոչ մի ժողովուրդ չի ունեցել այնպիսի խոշոր տոկոս, ինչպէս ունին հայերը Երևանի նահանգի քաղաքային ընդհանուր ազգաբնակութեան մէջ։ Երեք տարեթիւերին էլ հայերը կազմել են բացարձակ առաւելով մեծամասնութիւն, և իրա՝ շատ աւելի խոշոր մեծամասնութիւն, քան

նահանգական ընդհանուր ազգաբնակութեան մէջ։ Այդ տարբերութիւնը երևում է հետևեալ տոկոսներից։

Հայկական մեծամասնութիւնը Երևանի նահանգական և քաղաքային ազգաբնակութեան մէջ.

| Հայերի մեծամասնութիւնը նահանգ. | | | Հայերի մեծամասնութիւնը քաղաք. | | |
|---|---|---|---|---|---|
| 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. |
| 54,70% | 53,16% | 57,30% | 69,35% | 55,00% | 74,20% |

Տարբերութիւնը հաւասար է՝ 14,65% (1886 թ.), 1,84% (1897 թ.) և 16,90 տոկ. (1914 թ.)։

Պարզ է, որ հայ քաղաքային ազգաբնակութեան այդ գերաճող մեծամասնութեան հանդէպ պիտի նւազէր մուսուլման կամ թուրք - թաթարական փոքրամասնութիւնը։ Այդ փոքրամասնութիւնը՝ Երևանի նահանգական և քաղաքային ազգաբնակութեան մէջ, արտայայտւել է հետևեալ տոկոսներով։

| Թաթարական փոքրամասն. նահանգ. | | | Թաթարական փոքրամասն. քաղաքն. | | |
|---|---|---|---|---|---|
| 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. |
| 41,20% | 42,20% | 38,94% | 29,16% | 29,84% | 19,40% |

Տարբերութիւնը հաւասար է՝ 12,14 տ. (1886 թ.), 12,36 տ. (1897 թ.) և 19,54 տ. (1914 թ.)։

Թաթարական փոքրամասնութիւնը՝ քաղաքային ազգաբնակութեան մէջ, աւելի մեծ չափերով է նւազել (մանաւանդ 1897 և 1914 թ.), քան հայկական մեծամասնութիւնն է աճել քաղաքներում։

Էլ աւելի խոշոր է հայերի տոկոսները հայաշատ քաղաքներում առանձին վերցրած։ Այնպիսի ճնշող մեծամասնութիւն, ինչպէս հայերն են կազմում Ալէքսանդրոպոլում (յատկապէս 1886 և 1914 թ.) և մանաւանդ Նոր-Բայազէտում, խիստ հազւագիւտ է միւս ժողովրդների քաղաքային բնակչութեան տոկոսների մէջ։ Հայկական յիշեալ մեծամասնութեան հետ կարելի է համեմատել վրացականը՝ Բեդուտ Կալէ աննշան քաղաքում և թաթարականը՝ Օրդուբադում։ Երևան քաղաքում ևս հայերը կազմում են մեծամասնութիւն. առաջին երկու տարեթւերին այդ մեծամասնութիւնը եղել է յարաբերական (48,45 տ. և 43,17 տ.) իսկ վերջին տարեթւին՝ 1914 թ. բացարձակ մեծամասնութիւն (52,90 տ.) իսկ 1916 թ. 72,56 տ.)։ Մուսուլմանները բացարձակ մեծամասնութիւն կազմել են երկու քաղաքում՝ Նախիջևանում և Օրդուբադում. առաջնի մէջ հետզհետէ նւազել է նրանց մեծամասնութիւնը, իսկ երկրորդի մէջ, ընդհակառակը, աճել է։ Զափազանց նւազ են ռուսների և մանաւանդ վրացիների տոկոսները։ Միայն 1897 թ. ռուս տարրը կազմել է Նահանգի ողջ քաղաքային ազգաբնակութեան աւելի քան $^{1}/_{10}$-րդ մասը (10,80 տ.). Ալէքսանդրոպոլում նրանց տոկոսը հասել է նոյն իսկ 16,84 տոկոսի, իսկ Երևանում՝ 10,93 տոկոսի։ Ցաջորդ տարեչըր-

ջանում արդէն նւազում են այդ տոկոսները կէսից աւելի։

Եթէ մենք համդրենք առանձին հայերի և մուսուլմանների տոկոսները առաջին և վերջին տարեթւերին, կստանանք հետեւեալ աղիւսակը։

| Քաղաքներ | Հ ա յ ե ր ի տոկոսներ | | |
|---|---|---|---|
| | 1886 թ. | 1914 թ. | Աճ.(+)կմ. նւազ.— |
| 1. Երևան | 48,45 % | 72,56 % | + 24,11 |
| 2. Ալէքսանդր. | 94,18 ,, | 88,00 ,, | — 6,18 |
| 3. Նախիջևան | 28,12 ,, | 29,50 ,, | + 1,38 |
| 4. Օրդուբադ | 9,80 ,, | 3,06 ,, | — 6,74 |
| 5. Ն.-Բայազէտ | 99,17 ,, | 95,30 ,, | — 3,87 |

| | Մուսուլմանների տոկոսներ | | |
|---|---|---|---|
| | 1886 թ. | 1914 թ. | Աճ.(+)կմ. նւազ.— |
| 1. Երևան | 49,04 % | 24,57 % | —24,47 |
| 2. Ալէքս.-պօլ | 3,63 ,, | 2,18 ,, | — 1,45 |
| 3. Նախիջևան | 70,23 ,, | 67,00 ,, | — 3,23 |
| 4. Օրդուբադ | 90,19 ,, | 94,91 ,, | + 4,72 |
| 5. Ն.-Բայազէդ | 0,50 ,, | 1,81 ,, | + 1,31 |

Երեք քաղաքում (Ալէքս., Օրդուբ. և Նոր Բայազ.) նւազել են հայերի տոկոսները, իսկ երեքի մէջ (Երևանում, Ալէքս. և Նախիջ.)՝ մուսուլմաններինը։ Ընդհակառակը, երկու քաղաքում (Եր. և Նախիջ.) աճել են հայերի տոկոսները, իսկ երկուսի մէջ (Օրդուբ. և Ն.-Բայազ.)՝ մուսուլմաններինը։ Երևանում հայերի տոկոսը աճել է գրեթէ այնքան (24,11 տ.), որքան մուսուլմանների տոկոսը նւազել է (24,47 տ.)։ Մնացած քաղաքներում մուսուլմանների նւազման տոկոսները աւելի փոքր են քան հայերինը։

Տեսնենք այժմ, թէ ինչպէս են դասաւորւած երկու սեռերի թւական յարաբերութիւնները Երևանի նահանգի քաղաքներում։

(Տես աղիւս. երես 174)

| Քաղաքներ | 1886 թվականին | | | | 1897 թվականին | | | | 1914 թվականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Երևան | 83,0 | 86,6 | — | 90,3 | 35,5 | 70,8 | 64,0 | 77,6 | 103,7 | 105,6 | 82,9 | 87,6 |
| 2. Ալեքսանդրոպոլ | 91,1 | 95,2 | — | 103,4 | 13,9 | 87,0 | 48,0 | 71,8 | 95,6 | 81,0 | — | 92,5 |
| 3. Նախիջևան | 50,0 | 72,2 | — | 91,0 | 44,1 | 95,2 | 20,0 | 90,6 | 73,2 | 90,5 | 47,0 | 101,1 |
| 4. Օրդուբադ | — | 80,0 | — | 80,3 | 12,0 | 114,2 | 14,3 | 93,4 | 70,0 | 118,3 | — | 65,7 |
| 5. Ն.-Բայազետ | — | 89,8 | — | 46,1 | 90,0 | 95,8 | 87,5 | 63,6 | 30,0 | 97,7 | — | 90,4 |
| Միջին թիվ | 74,7 | 84,7 | — | 81,4 | 39,0 | 92,6 | 46,7 | 79,5 | 74,5 | 98,6 | 64,9 | 87,4 |

*Միջին թիվ վերցրած երեք տարեթվերին էլ հայ իգական սեռը ունի ամենաուժեղ թվական ներկայացուցչությունը (84,7 92,6 և 98,6) և իրա հետզհետե ավելի է ուժեղանում այդ ներկայացուցչությունը. 1914 թ. 100 տղամարդուն գալիս էին 98,6 կին։ Երկրորդ տեղը՝ թվական ուժեղության տեսակետից, բռնում է մուսուլման կին սեռը (81,4 79,5 և 87,4), որը, սակայն, չի պահպանում թվական ուժեղացման նույն յաջորդականությունը, այլ ենթակայ է տատանումների։ Այնուհետև յաջորդում են միւս ժողովուրդների իգական սեռերի թվերը։ Հայ և մուսուլման կին սեռի թվական համաչափությունը հետևանք է այդ երկու ժողովուրդների տեղացիության և մշտաբնակության։ Մինչդեռ ռուս և վրացի կին սեռերը ունեն թվական*

այնպիսի նուազագոյն տուեալներ (օր. 100 տղամ. 13,9 կամ 14,3 կամ 20,0) որոնց ցոյց են տալիս նրանց օտար ու եկւոր լինելը, պատահական տեղահանութեան ենթակայ լինելը։ Իբրև նոր եկւորներ, անկասկած, մեծ չափերով գերազանցում է նրանց մէջ արական սեռը իգականից։ Հայերի և մուսուլմանների մօտ կին սեռը որոշ քաղաքներում անցնում է նոյնիսկ հարիւրի սահմաններից։ Հայերի իգական սեռը թւապէս աւելի ուժեղ է Երևանի նահանգի քաղաքներում, քան Թիֆլիսի և Քութայիսի նահանգների քաղաքներում. Նոյնը և մուսուլմաններինը։ Մինչդեռ վրացիների մօտ յարաբերութիւնները ճիշտ հակառակ դասաւորութիւնն ունեն. իրենց հայրենի քաղաքներում բնականօրէն ունեն վրացիները սեռերի թւական աւելի մեծ համաչափութիւն, քան Վրաստանի սահմաններից դուրս։ Մենք յետոյ թւական ընդհանուր համեմատութիւններով աւելի կը պարզենք այդ երևոյթը։

### D. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԳԱՆՁԱԿԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Հետևեալ աղիւսակը տալիս է մեզ ժողովուրդների թւական յարաբերութիւնների պատկերը Գանձակի նահանգի քաղաքներում։

| Քաղաքներ. | 1886 թուականին | | | | 1897 թուականին | | | | 1914 թուականին[1]) | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Գանձակ | 131 | 8914 | 103 | 11139 | 2735 | 12055 | 522 | 17714 | 5693 | 11257 | 285 | 38459 |
| 2. Նուխի | 26 | 4666 | 50 | 21144 | 213 | 4202 | 57 | 20132 | 726 | 8189 | — | 45517 |
| 3. Շուշի | 21 | 15188 | — | 11595 | 396 | 14420 | 39 | 10809 | 1188 | 21959 | 37 | 18890 |
| Ընդամենը՝ | 178 | 28768 | 153 | 43878 | 3344 | 31673 | 618 | 48655 | 1607 | 41405 | 322 | 102866[2]) |

[1]) Թւական բացարձակ տուեալները տես մեր յայտնի աղբիւրների մէջ մատնացուցած մասերը։
[2]) Գանձակի նահանգի քաղաքային մուսուլման ազգաբնակութիւնը բաղկացած է բացառապէս թաթարներից։

Այստեղ մենք գտնում ենք հայ-թաթարական թւական յարաբերութիւնների ճիշտ հակառակ պատկերը, քան տեսանք Երևանի նահանգի քաղաքներում։ Գանձակի նահանգի քաղաքային ազգաբնակութեան ամբողջութեան մէջ առհասարակ մուսուլման էլեմենտը կազմել է բացարձակ մեծամասնութիւն բոլոր տարեթւերին։ Սակայն մուսուլմանութիւնը քաղաքներում աւելի նւազ է (բացի վերջին տարեթւից), քան ողջ նահանգի ազգաբնակութեան մէջ։ Եւ ընդհակառակը, հայկական փոքրամասնութիւնը քաղաքներում աւելի ուժեղ է (բացառութեամբ վերջին տարեթւի), քան ընդհանրապէս նահանգում։ Մինչդեռ Երևանի նահանգի քաղաքներում և առհասարակ նահանգում, ինչպէս մենք գիտենք, բոլորովին հակառակ թւական յարաբերութիւններն ունեն հայկական մեծամասնութիւնը և մուսուլման փոքրամասնութիւնը։

Ինչպէս վերոյիշեալ աղիւսակից երևում է, հայերը ապահով մեծամասնութիւն կազմում են միայն Շուշի քաղաքում։ Բայց հայկական այդ մեծամասնութիւնը համեմատաբար աւելի համեստ է, քան թաթարականը Նուխի քաղաքում և Գանձակում՝ յատկապէս վերջին տարեթւին։ Այնուհետև աչքի է ընկնում այն հանգամանքը, որ հայերը երեք քաղաքներումն էլ ունեցել են թւական տատանումներ, մինչդեռ թաթարների թւական տատանումը եղել է միայն Շուշում և Նուխում (1897թ.)։ Եթէ մենք հայերի և թաթարների աճման թւական տարբերութիւնները՝ երեսնամեայ տարեշրջանում, առանձին պատկերացնենք,՝ կստանանք հետևեալը.

| Քաղաքներ | ՀԱՅԵՐ | | | ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1886թ. | 1914թ. | Տարբերութ. | 1886 թ. | 1914 թ. | Տարբեր. |
| 1. Գանձակ | 8914 | 11257 | 2343 | 11139 | 38459 | 27320 |
| 2. Նուխի | 4666 | 8189 | 3523 | 21144 | 45517 | 24373 |
| 3. Շուշի | 15188 | 21959 | 6771 | 11595 | 18890 | 7295 |

Խիստ աչքի է զարնում թաթարների աճման թւական ահագին տարբերութիւնները հայերի հանդէպ ոչ միայն Գանձակում ու Նուխում, ուր նրանք ճնշող մեծամասնութեան մէջ են գտնւում, այլև որոշ չափով Շուշում, ուր հայերն են մեծամասնութիւն կազմում։ Առանձնապէս յիշելու է հայերի նւազ աճումը Գանձակում, ուր հայերի թիւը 1897 թ. տւեալների (12055 հոգի) հանդէպ նոյն իսկ նւազել է։ Գանձակի նահանգը և մանաւանդ նրա երկու գաւառները՝ Գանձակի և Շուշւայ՝ իրանց քաղաքային կենտրոններով, տալիս է հայկական տարրի արտագաղթ ամենամեծ չափե-

րով։ Անդրկովկասի երկու խոշոր կենտրոնների՝ Թիֆլիսի և Բաքվի, կլանած գաւառական հայերի ամենամեծ մասը Գանձակի Նահանգի յիշեալ գաւառներից, մանաւանդ Ղարաբաղից։ Այդ մասսայական արտագաղթով է բացատրւում հայերի դանդաղ աճումը՝ թէ Նահանգում ընդհանրապէս և թէ նրա քաղաքներում մասնաւորապէս։

Ինչ վերաբերում է ռուսներին և վրացիներին, նրանք Գանձակի նահանգի քաղաքներում ևս աննշան թիւ են կազմում, մանաւանդ վրացիները. ռուսների աճումը եղել է խիստ արագ և առանց տատանումների՝ մանաւանդ Գանձակում։

Տոկոսների հետևեալ աղիւսակը ցոյց է տալիս ժողովրդների աճման ընթացքը աւելի շօշափելի փաստերով։

| քաղաքներ | 1886—1897 թ ւ ա կ ա ն ի ն | | | | 1897—1914 թ ւ ա կ ա ն ի ն | | | | 1886—1914 թ ւ ա կ ա ն ի ն | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Գանձակ | +[1]) | 35,23% | +[2]) | 59,02% | 108,15% | –7,10% | –[4]) | 117,05% | +[5]) | 26,30% | +[6]) | 245,25% |
| 2. Նուխի | +[1]) | –11,04,, | +[2]) | –5,26,, | +[3]) | 95,00,, | — | 126,08,, | +[5]) | 75,50,, | — | 115,00,, |
| 3. Շուշի | +[1]) | –5,33,, | — | –7,27,, | 200,00,, | 52,30,, | +[4]) | 74,76,, | +[5]) | 74,76,, | — | 62,91,, |
| Ընդհանուրը | +[1]) | 10,10% | +[2]) | 10,84% | 127,20 | 30,72% | –[4]) | 111,42% | +[5]) | 44,00% | +[6]) | 134,43% |

[1]) Ռուսները աւելացել են (1886—1897 թ.) Գանձակում 2604 հոգ., Նուխում 187 հ., Շուշում 375 հ. իսկ ընդամենը՝ 3166 հոգով։

[2]) Վրացիները աւելացել են՝ Գանձակում 419 հոգ., Նուխում 7 հոգ.։

(Մնացած ծանօթութիւնները տես երես 178)

*Առաջին տարեշրջանում (1886-1897թ.) հայերի և թաթարների աճման ընթացքը՝ ընդհանուր առմամբ, գրեթէ միևնոյն արագութեամբ է արտայայտւել (10,10 տոկոս և 10,84 տոկոս)։ Ընդհակառակը, երկրորդ տարեշըրջանում (1897—1914 թ.) թաթարների աճման տոկոսը (111,42 տոկոս) մօտ 3½ անգամ գերազանցում է հայերի աճման տոկոսից (30,72 տոկոս)։ Թաթարները ամենից արագ աճել են Գանձակում (245,36 տոկոս, երեսնամեայ շրջանում), ուր հայերը, ընդհակառակը, աճել են ամենից դանդաղ (26,30 տոկ.)։ Մուսուլմանների աճումը գերազանցում է հայկականից աւելի քան 9 անգամ. Նուխում և Շուշում նրանց աճման տարբերութիւնները աւելի նւազ են։ Մուսուլմանների աճման տոկոսը 117,05) Գանձակում գերազանցում է նոյն իսկ ռուսների տոկոսից (108,15 տոկոս) երկրորդ տարեթւին։ Նւազման դէպքեր ունեցել են թաթարները և հայերը միևնոյն տարեշրջանում (1886—1897 թ.) և միևնոյն քաղաքներում (Նուխի և Շուշի)։ Իսկ յաջորդ տարեշրջանում նւազում ունեցել են միայն հայերը Գանձակում (7,10 տոկոս)։ Ինչ վերաբերում է ռուսներին, նրանք չունեին ոչ մի նւազում որևէ քաղաքում կամ տարեշրջանում և ամենուրեք աճել են խոշոր տոկոսներով։ Դա մի բացառիկ դէպք պիտի համարել ռուսների համար, որովհետև նրանց թիւը՝ իբրև եկւոր տարր, չարունական փոփոխութիւնների է ենթակայ մեզ յայտնի ուրիշ բնակավայրերում, մինչդեռ Գանձակի նահանգի քաղաքներում չի նկատւում այդ փաստը.*

*Տեսնենք այժմ, թէ ժողովուրդները տոկոսական ինչ բաժիններ ունեն Գանձակի նահանգի քաքաքների ազգաբնակութեան ամբողջութեան մէջ։*

*( Տես աղիւսակ երես 179 )*

---

*Երեք քաղաքներում 465 հոգով։*

[3]) *Ռուսները աւելացել են (1897—1914 թ.) Նուխում 513 հոգով։*

[4]) *Վրացիները նւազել են Գանձակում 237 հոգով, իսկ աճել են Շուշում 2 հոգով։*

[5]) *Ռուսները աւելացել են (1886—1914 թ.) Գանձակում 5562 հ., Նուխում 700 հոգ., Շուշում 1167 հ., ընդամէնը՝ 7429 հոգով։*

[6]) *Վրացիները նւազել են Գանձակում 182 հոգով։ Ընդամէնը՝ 169 հոգով։*

| Քաղաքներ | 1886 թուականին | | | | 1897 թուականին | | | | 1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. |
| 1. Գանձակ | 0,65°/₀ | 43,92°/₀ | — | 54,96°/₀ | 8,13°/₀ | 36,00°/₀ | 1,55°/₀ | 52,68°/₀ | 10,11°/₀ | 20,00°/₀ | 0,51°/₀ | 68,21°/₀ |
| 2. Նուխի | — | 18,01,, | — | 81,65,, | 0,86,, | 16,98,, | — | 81,40,, | 1,33,, | 15,00,, | — | 73,26,, |
| 3. Շուշի | — | 56,65,, | — | 43,25,, | 1,53,, | 55,72,, | — | 41,34,, | 2,78,, | 51,60,, | — | 44,37,, |
| Ընդհանուրը՝ | 0,24°/₀ | 39,41°/₀ | — | 60,00°/₀ | 3,97°/₀ | 37,60°/₀ | 0,20°/₀ | 57,75°/₀ | 5,00°/₀ | 26,96°/₀ | 0,21°/₀ | 66,91°/₀ |

Տարեթւից տարեթիւ նւազել է հայերի տոկոսը նահանգի ողջ քաղաքային ազգաբնակութեան մէջ։ Հայերի տոկոսի աստիճանական նւազում եղել է անխտիր բոլոր քաղաքներում, ամենամեծ չափով Գանձակում։ Թաթարներին մօտ, ընդհակառակը, նկատւում է հակառակ երևոյթը. ոչ միայն ընդհանուր առմամբ, այլև առանձին-առանձին քաղաքներում ուժեղացել է նրանց տոկոսական ներկայացուցչութիւնը, չհաշւելով 1897 թ., երբ նրանք 2—3 տոկոս նւազում են։ ցոյց տալիս, նթէ մենք առանձին ներկայացնենք երկու գլխաւոր հարևանների տոկոսական բաժինները՝ առաջին և վերջին տարեթւերին, կստանանք հետևալը.

| Քաղաքներ | ՀԱՅԵՐ | | | ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1886թ. | 1914թ. | աճ+կմ. նւ— | 1886թ. | 1914թ. | աճ+կմ. նւ— |
| 1. Գանձակ | 43,92% | 20,00% | —23,92% | 54,90% | 68,31% | +13,41% |
| 2. Նուխի | 18,01„ | 15,00„ | — 3,01„ | 81,65„ | 83,24„ | + 1,59„ |
| 3. Շուշի | 56,65„ | 51,60„ | — 5,05„ | 43,25„ | 44,37„ | + 1,12„ |
| Ընդամենը՝ | 39,41% | 26,96% | —12,45% | 60,00% | 66,91% | +6,91% |

*Մինչև այժմ մեզ յայտնի քաղաքներից ոչ մէկի մէջ հայերը չեն ունեցել ազգաբնակչական տոկոսի այնպիսի խոշոր—աւելի քան կէսը—նւազում, ինչպէս նկատում ենք Գանձակում։ Հայ-Թրքական ընդհարումներից յետոյ այդ քաղաքում ոչ միայն չի աւելացել հայերի թիւը, այլև եղածն էլ նւազել է չարունակական գաղթի պատճառով. (1886—1914 թ.)* 13,41 *տոկոսով։ Նուխում և Շուշում հայերի տոկոսի նւազումը և մուսուլմանների տոկոսի աճումը եղել են համեմատաբար փոքր չափերով։ Հայերի տոկոսի ընդհանուր նւազումը* 12,45 *տոկոսով, իսկ մուսուլմանների տոկոսը ընդհանուր առումով աւելացել է* 6,91 *տոկոսով։ Ռուսների տոկոսը ինքնին վերցրած շատ համեստ է. բայց նա բարձրացել է՝ անընդհատ աճելով, խիստ մեծ արագութեամբ։ 1886 թ. ռուսների տոկոսը նահանգի քաղաքային ազգաբնակութեան մէջ եղել է 0,24 տոկոս, իսկ 1914 թ. 5,00 տոկոս։ Իսկ աւելի մեծ չափով բարձրացել է նրանց տոկոսը Գանձակում 0,65 տոկոսից մինչև 10,11 տոկոս։*

*Սեռերի թւական յարաբերութիւնները Գանձակի նահանգի քաղաքներում ունեցել են հետևեալ դասաւորութիւնը. 100 տղամարդուն գալիս են կանայք՝*

*(Տես աղիւսակ երես 181)*

100 տղամարդու գալիս էին կանայք՝

| Քաղաքներ | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Գանձակ | 31,1 | 84,3 | — | 70,7 | 80,0 | 89,4 | 52,4 | 78,0 | 88,7 | 127,4 | 67,6 | 98,2 |
| 2. Նուխի | — | 78,0 | — | 80,0 | 43,0 | 98,1 | 50,0 | 86,5 | 78,0 | 82,2 | — | 72,3 |
| 3. Շուշի | 110,0 | 73,9 | — | 64,5 | 47,2 | 99,0 | 54,2 | 94,5 | 40,0 | 69,3 | 32,1 | 82,4 |
| Միջին թիւը՝ | 75,0 | 78,7 | — | 71,7 | 56,7 | 95,5 | 52,8 | 86,3 | 68,9 | 92,9 | 49,8 | 84,3 |

Ինչպէս Երեւանի նահանգի քաղաքներում էր, նոյնը և այստեղ հայ իգական սեռը իր թւական ուժեղութեամբ գերազանցում է միւս ժողովուրդների իգական սեռերից բոլոր տարեթւերին։ Ամենամեծ չափով այդ գերազանցումը արտայայտւում է 1897թ. (100 արամ. 95,5 կին)։ Երկրորդ տեղը այստեղ ևս բռնում է մուսուլման կին սեռը, թէև վերջինս տեղի է տալիս իր դիրքը ռուսներին 1886 թ.։ Այնուհետև յաջորդում են ռուս և ապա վրացի իգական սեռերը։Առանձին քաղաքների նկատմամբ հայ իգական սեռը սակաւ բացառութեամբ դարձեալ գերազանցում է բոլորին ամենուրեք։ Վերջին տարեթւին (1914 թ.) հայ իգական սեռը հասնում է Գանձակում

թւական ուժեղ մաքսիմալ բարձրութեան (100 տղամարդուն 127,4 կին)։ Բնորոշ է այդ հանգամանքը։ Հէնց այն քաղաքը, ուր հայկական տարրը այնքան զանգւած է աճել և հէնց այն տարեթւին, երբ հայերի թիւը համեմատաբար նւազել էր, հայ իգական սեռը թւական այդքան մեծ տարբերութեամբ գերազանցել է արական սեռից։ Դա հետևանք է այն երևոյթի, որ Գանձակից արտագաղթող հայ բնակչութեան մեծագոյն մասը եղել է արական սեռից։ Գուցէ սխալւած չէինք լինի, եթէ հայ տղամարդ սեռի այդ աչքի ընկնող նւազումը բացատրենք մասամբ նաև իբրև հետևանք հայ-թրքական ընդհարումների, երբ առաւելապէս տուժել են տղամարդիկ։ Այդ ենթադրութիւնը աւելի է հաւանական դառնում մուսուլմանների օրինակով. նրանց մօտ ևս իգական սեռը Գանձակում սովորականից աւելի ուժեղ է ներկայանում թւալէս 1914 թ. (100 տղամ. 98,2 կին, մինչդեռ 1886 թ.՝ 70,7 կ. և 1897 թ.՝ 78,0 կ.)։ Նշանակում է նրանց մօտ ևս կոտորածների ժամանակ առանձնապէս տուժել է տղամարդ սեռը և իջել թւական ուժեղութեան իր նախկին բարձրութիւնից։

## Ե. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԲԱԳՈՒԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

*Բագուի նահանգի քաղաքներում ժողովուրդները ունեցել են հետևեալ թւական տւեալները*

(Տես աղիւսակ երես 183)

| Քաղաքներ | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Բագու[1]) | 21390 | 24490 | — | 37530 | 38965 | 19099 | 108 | 46255 | 67730 | 57040 | 1990 | 101803 |
| 2. Ղուբա | 301 | 833 | — | 6486 | 635 | 807 | 26 | 7160 | 166 | 780 | 20 | 12458 |
| 3. Լենքորան | 723 | 273 | -- | 3214 | 1369 | 299 | 12 | 6648 | 3428 | 1106 | 243 | 8471 |
| 4. Շամախի | 668 | 3962 | — | 17509 | 807 | 2515 | 26 | 16309 | 1561 | 4460 | 52 | 21317 |
| Ընդամենը՝ | 23082 | 29558 | — | 64739 | 41776 | 22720 | 172 | 76352[2]) | 72885 | 63386 | 2315 | 144049[3] |

---

[1]) Հետաքրքրական է իմանալ, թէ Բագու քաղաքը (առանց քաղաքապետութեան միւս մասերը հաշւելու), իբրև բազմատարր բնակչութեան մի կենտրոն, ուրիշ ինչ աչքի ընկնող ժողովրդական հատւածներ է ունեցել իր մէջ, բացի մեզ յայտնի գլխաւոր ժողովրդներից: 1886 թ. Բագւում եղել են 1093 հոգի լեհեր (կամ ամբողջի 1,26 տոկոս), 1717 հոգի կամ 2,00 տոկոս եւրոպացիներ (գերմաններ, անգլիացիներ և այլ) և 391 հոգի հրէաներ (կամ 0,45 տոկոս): 1897 թ. լեհերը Բագւում կազմել են 835 հոգի (կամ 0,74 տոկոս) նւազելով նախկին թւից 258 հոգով կամ 30,90 տոկոս), եւրոպացիներ 2898 հոգի կամ 2,60 տոկ., աճելով 1181 հոգով կամ 69,00 տոկոսով և հրէաներ 1905 հ. կամ 1,70, աճելով՝ 1514 հոգ. կամ 387,47 տոկոսով: Իսկ 1914 թ. լեհեր, գերմանացիք և ուրիշ եւրոպացիներ միասին առած հաւա-

Բագւի թէ նահանգում ընդհանրապէս և թէ նահանգի գաւառներում առանձին-առանձին, մուսուլմանական տարրը անպայման թւապէս գերիշխող տեղ է բռնում, ինչպէս ձենք տեսանք իր տեղում։ Նահանգի քաղաքային ընդհանուր ազգաբնակութեան մէջ, ընդհակառակը, մուսուլմանները թւական խոշոր տարբերութեամբ չեն գերազանցում ազգաբնակչական ամբողջութեան։ Քաղաքային ազգաբնակութեան այն բացարձակ մեծամասնութիւնը, որ ունին հայերը Երևանի նահանգում և մուսուլմանները Գանձակի նահանգում, չունին վերջինները Բագւի նահանգում։ Միայն առաջին տարեթւին է, որ մուսուլմանները փոքր առաւելութեամբ բացարձակ մեծամասնութիւն են կազմում, մինչդեռ յաջորդ երկու տարեթւերին նրանց մեծամասնութիւնը միայն յարաբերական է։ Ի հարկէ, բոլոր տարեթւերին էլ մուսուլմանները բաձարձակ մեծամասնութեամբ գերազանցում են միւս երեք ժողովրդների թւական ընդհանուր համախմբման հանդէպ, իսկ նահանգի կենտրոնում՝ քաղաքային ամենամեծ ազգաբնակութիւն ունեցող Բագւում, մուսուլմանները միայն յարաբերական մեծամասնութիւն են կազմում (բոլոր տարեթւերին) նոյն իսկ լոկ ռուսների և հայերի հանդէպ։ Միւս քաղաքներում արդէն մուսուլմանների մեծամասնութիւնը ճնշող ու բացարձակ է տեղական ողջ ազգաբնակութեան մէջ։

Ռուսները և հայերը եղել են 1886—1897 թւականների ընթացքում Բագւի նահանգի քաղաքներում թւական մրցակցութեան մէջ։ 1886 թ. հայերը թւապէս գերազանցել են ռուսներին թէ Բագւում (3100 հոգով), թէ Ղուբայում (532 հոգով) և թէ մանաւանդ Շամախում (3294 հոգով կամ

սար էին Բագւում 11666 հոգու կամ 4,70 տոկոսի, աճելով 315,20 տոկոս (1886-ից ի վեր) կամ 212,51 տոկոսով (1897-ից ի վեր)։ Իսկ հրէաներ նոյն 1914 թ. եղել են 4818 հ. կամ մօտ 2,00տ. աճ. 1130,00% (1886թ. սկսած) և 153,00 տոկոսով (1897 թ. սկսած)։ Այդպիսով յիշած եկւոր տարրերից ամենաարագ աճեցում Բագւում ունեցել են հրէաները՝ 1130,00 տոկոսով երեսնամեայ տարեշրջանում։—Վերոյիշեալ աղիւսակի թւական պատկերը լրացնելու համար, բերենք այստեղ մեզ յայտնի ժողովրդների թւական տւեալները Բագւի ամբողջ քաղաքապետութեան (մէջ առած նաև քաղաքը) վերաբերեալ։ 1914 քաղաքապետութեան ողջ ազգաբնակութիւնը եղել է 379886 հոգի, որոնցից եղել են՝ ռուսներ 99264 հ. կամ 26,13 տոկ., հայեր 69834 հ. կամ 18,40 տոկ., վրացիներ 2746 հ. կամ 0,72 տոկ., մուսուլմաններ 172616 հ. կամ 45,43 տոկ., եւրոպացիներ 13968 հոգ. կամ 3,67 տոկ., հրէաներ 5289 հ. կամ 1,40 տոկ.։ Թւած վեց ժողովրդական հատւածները (ռուսներ, հայեր, վրացիներ, մուսուլմաններ, եւրոպացիներ և հրէաներ) միասին վերցրած կազմել են Բագւի քաղաքապետութեան մէջ 363717 հոգի կամ ամբողջի 95,75 տոկ.։ Մնացած չնչին մասը (16169 հոգի կամ 4,25 տոկ.) բաղկացած է ժողովրդական դանազան մանրաթիւ գրուպաներից։ Իսկ միայն Բագու քաղաքի մէջ, ուր 1914 թ. ընդհանուր ազգաբնակութիւնը եղել է 248812 հոգի, յիշեալ վեց ժողովրդները միասին վերցրած կազմել են 245047 հոգի կամ մօտ 98,50 տոկ. աւելի մեծ տոկոս, քան քաղաքապետութեան մէջ։

[1]) Բագւի նահանգի մուսուլմանական քաղաքային ազգաբնակութեան մեծագոյն մասը, որոշ տեղերում գրեթէ բացառապէս, բաղկացած է թաթարներից։ Մնացած մուսուլմաններից յիշելու է՝ թաթեր, թիւրքեր, լեզգիներ՝ շատ չնչին քանակով, և թալիշներ՝ միայն Լենքորանում։

[2]) Թւական բացարձակ տւեալները տես մեզ յայտնի աղբիւրների մէջ մատնացուցած տեղերը։

*մօտ վեց անգամ)։ Ռուսները գերազանցել են հայերին միայն Լենքորանում (450 հոգով)։ Ընդհանուր առմամբ, հայ քաղաքային ազգաբնակութիւնը նահանգում գերազանցել է ռուսներից 6476 հոգով։ Միանգամայն հակառակ յարաբերութիւններն ենք գտնում յաջորդ տարեթւին (1897 թ.)։ Հայերը նւազ աւելցներ են ցոյց տալիս հէնց այն քաղաքներում, ուր նրանք գերազանցել էին ռուսներին նախորդ տարեթւին։ Ամենամեծ և անհասկանալի նւազում ունենում են հայերը Բագւում [1]), ուր նրանց թիւը իջնում է մինչև 19099-ի (նւազելով 5391 հոգով) և ուր ռուսների թիւը բարձրանում է մինչև 38965-ի (աւելանալով 17575 հոգով) և գերազանցում հայերից աւելի քան երկու անգամ (19866 հոգով)։ Ղուբայում նւազում է հայերի թիւը 26 հոգով, իսկ Շամախում 1447 հոգով։ Ընդհանուր առմամբ հայ քաղաքային բնակչութիւնը նահանգում նւազում է 6838 հոգով։ Ընդհակառակը ռուս քաղաքային բնակչութիւնը աւելանում է 18694 հոգով և գերազանցում հայերից 19056 հոգով։ Ռուսները նւազել են միայն մի տեղ՝ Ղուբայում 1914 թ.։ Նոյնը և մուսուլմանները՝ Շամախում 1897 թ. (1200 հոգով)։ Ինչ վերաբերում է վրացիներին, նրանք Բագւի նահանգի քաղաքներում եւ շատ աննշան, հազիւ նշմարելի տեղ են բռնում։ 1886 թ. վրացի տարրը չի եղել բոլորովին նոյն իսկ Բագւի նման քաղաքում։ Յաջորդ տարեթւին եղել են այնտեղ 108 հոգի, իսկ 1914 թ. նրանց թիւը արագ աճումով հասնում է 1990-ի։*

*Եթէ ժողովրդների աճման տեմպը Բագւի նահանգի քաղաքներում պատկերացնենք տոկոսներով, կստանանք հետևեալ աղիւսակը.*

( *Տես աղիւսակ երես 186* )

---

*[1]) Հայերի թւական նւազման մասին Բագւի նահանգում (և քաղաքում) առհասարակ՝ տես նահանգների բաժնում տուած մեր բացատրութիւնները։*

| Քաղաքներ | 1886—1897 թվականին | | | | 1897—1914 թվականին | | | | 1886—1914 թվականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուսներ | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուսներ | Հայեր[2]) | Վրաց. | Մուս. | Ռուսներ | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Բաքու | 82,16% | —28,22% | — | 23,20% | 73,80% | 200,00% | +[3]) | 120,19% | 221,31% | 133,00% | — | 171,26% |
| 2. Ղուբա | 110,96,, | —3,22,, | — | 10,40,, | —[1]) | —[2]) | —[3]) | 74,00,, | —[4]) | —[5]) | — | 92,07,, |
| 3. Լենքորան | 90,00,, | 9,52,, | — | 16,84,, | 150,40,, | 270,00,, | +[3]) | 27,42,, | 374,00,, | 305,00,, | — | 163,56,, |
| 4. Շամախի | 18,71,, | —57,52,, | — | —8,00,, | 93,43,, | 77,34,, | +[3]) | 30,70,, | 133,70,, | 12,57,, | — | 21,75,, |
| Ընդհանուրը՝ | 80,98% | —30,00% | — | 18,00% | 74,46% | 180,00% | +[3]) | 88,66% | 216,00% | 114,11% | — | 122,52% |

[1]) Ռուսները նուազել են Ղուբայում 1897—1914 թ. 469 հոգով։
[2]) Հայերը նուազել են Ղուբայում 27 հոգով։
[3]) Վրացիները աճել են՝ Բաքւում 1882 հոգ., Լենքորանում 231 հոգ., Շամախում 26 հոգ., իսկ Ղուբայում նուազել են 6 հոգով։
[4]) Ռուսները նուազել են (1886-1914 թ.) Ղուբայում 135 հոգով։
[5]) Հայերը նուազել են նոյն քաղաքում 53 հոգով։

*Աճման և նուազման դէպքերը այս աղիւսակում արտայայտւում են աւելի շօշափելիօրէն։ Ամենից առաջ աչքի է զարնում հայերի նուազման պատկառելի տոկոսը (30 տոկ.) 1886—1897 թ. տարեշրջանում. դա առաջին փաստն է մինչև այժմ մեզ յայտնի նահանգների քաղաքային ազգաբնակութիւնների մէջ։ Աճման ամենամեծ տոկոս տուել են առաջին շրջանում ռուսները (ընդհանուր առմամբ 80,98 տոկ.). առանձին քաղաքներում աւելի արագ աճում են ունեցել նրանք (օր. Ղուբայում 110,96 տոկ., Լենքորանում 90,00 տոկ.)։ Մուսուլմանների աճման ընդհանուր տոկոսը եղել է անհամեմատ համեստ (18,00 տոկ.)։ Նրանց աճման ամենաբարձր տոկոսը եղել է Բագւում (23,20 տոկ.)։ Մինչդեռ հայերը յիշեալ տարեշրջանում նուազել են նահանգի բոլոր քաղաքներում, բացի Լենքորանից (ուր աճել են նրանք 9,52 տոկոսով), մուսուլմանները, ընդհակառակը, աճել են բոլոր քաղաքներում, բացի Շամախուց (ուր նուազել են նրանք 8 տոկոսով)։ Երկրորդ տարեշրջանում արդէն (1897—1914 թ.) պատկերը հիմնապէս փոխւում է։ Ընդհանուր աճման ամենաբարձր տոկոս տալիս են հայերը (180 տոկոս), այնուհետև միայն մուսուլմանները (88,66), իսկ ռուսները բռնում են իրանց աճումով վերջին տեղը (74,46 տոկ.)։ Առանձին քաղաքներում էլ, բացի Ղուբայից, հայերի աճման տեմպը ամենուրեք գերազանցում է՝ մուսուլմանների աճման տեմպից, իսկ Բագւում և Լենքորանում նաև ռուսների աճման տեմպից։ Դա* հայկական ներգաղթի ամենաեռուն հոսանքի շրջանն է, *ուր Բագւի հայ բնակչութիւնը 17 տարուայ ընթացքում աճել է 200 տոկոսով կամ տարեկան 11,76 տոկոսով։ Մուսուլմանները նոյն ժամանակամիջոցում աճել են 120,19 տոկոսով (կամ տարեկան 7,07 տոկոսով)։ Համեմատաբար ամենից նուազ, գրեթէ երեք անգամ հայերից նուազ աճել են ռուսները՝ 73,80 տոկոսով (կամ տարեկան 4,22 տոկոսով)։ Աճման ամենաբարձր տոկոս յիշեալ տարեշրջանում ունեցել են հայերը Լենքորանում (270 տոկոսով)։*

*Համապատասխան այդ երկու տարեշրջանների տոկոսների, դասաւորւել են ժողովուրդների աճման յարաբերութիւնները երեսնամեայ շրջանում (1886—1914 թ.)։ Ընդհանուր աճման ամենաբարձր տոկոս տալիս են ռուսները (216 տոկ. կամ տարեկան 7,71 տոկ.), այնուհետև մուսուլմանները (122,52 տոկ. կամ տարեկան 4,37 տոկ) և վերջում միայն հայերը (114,11 տոկ. կամ տարեկան 4,07)։ Հայերի աճման տոկոսը շատ քիչ է նահանջում մուսուլմանների տոկոսից (միայն 0,30 տոկոսով)։ Աճման տեմպի ճիշտ նոյն յարաբերութիւնները գտնում ենք առանձնապէս Բագւում. առաջին տեղը դարձեալ պատկանում է ռուսներին (221,31 տոկ. կամ տարեկան մօտ 8 տոկոս) երկրորդ տեղը մուսուլմաններին՝ (171,26 տոկ. կամ տարեկան 6,12 տոկ.) և վերջինը հայերին (133,00 տոկ. կամ տարեկան 4,75 տոկ)։*

*Տեսնենք այժմ, թէ ինչ տոկոսական բաժիններ ունեն ժողովրդները Բագւի նահանգի քաղաքների ընդհանուր ազգաբնակութեան մէջ։*

*(Տես աղիւսակ երես 188)*

| Քաղաքներ. | 1886 Թուականին | | | | 1897 Թուականին | | | | 1914 Թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Բագու | 24,70% | 28,26% | — | 43,33% | 34,82% | 17,0 % | 0,09% | 41,31% | 27,22% | 23,00% | 0,80% | 40,91% |
| 2. Ղուբա | 2,16,, | 6,00,, | — | 46,60,, | 4,13,, | 5,25,, | — | 46,61,, | 1,23,, | 5,79,, | — | 92,56[1] |
| 3. Լենքորան | 17,12,, | 6,46,, | — | 76,12,, | 15,12,, | 3,42,, | — | 76,13,, | 23,82,, | 8,00,, | 1,73,, | 60,65,, |
| 4. Շամախի | 3,00,, | 18,00,, | — | 79,10,, | 4,03,, | 12,57,, | — | 81,51,, | 5,67,, | 16,20,, | — | 77,44% |
| Ընդամենը՝ | 18,20% | 23,30% | — | 51,02% | 26,77% | 14,56,, | 0,11% | 48,94% | 24,00% | 20,86,, | 0,76% | 47,42,, |

[1]) Վիճակագրութիւնը սխալ տուեալներ է հաղորդել Ղուբայի ազգաբնակութեան վերաբերեալ 1914 Թ.: Բացի մեզ յայտնի գլխաւոր ժողովրդներից Ղուբայում կան անհագին Թւով հրէաներ. 1886 Թ. նրանց Թիւը եղել է 6287 հոգի կամ ընդհ. ողջ ազգաբն. 45,17 տոկ., իսկ 1897 Թ. 6662 հոգի կամ 43,35 տոկ. հրէաների տոկոսը քիչ միայն պակաս է մուսուլմանների տոկոսից: Բայց 1914 Թ. վիճակագրութիւնը հազարների հասնող հրէաների Թիւը հաշւում է առանց այլ և այլի մուսուլմանների վրայ (միայն 29 հրէայ է հաշւում Ղուբայում), անշուշտ հիմք ծառայեցնելով իր ցուցակագրութեան լեզուական բաժանը (Թուրքերէնը): Այսպիսով մուսուլմանների տոկոսը հասնում է այդ Թւականին 92,56 տոկոսի, մինչդեռ փաստօրէն մօտաւորապէս դրա կէսը պիտի լինի. մուսուլմ. չեն կազմում Ղուբայում բացարձակ մեծամասնութիւն, այլ միայն յարաբերական մեծամասնութիւն:

*Բնորոշը այս աղիւսակի մէջ ամենից առաջ մուսուլմանների տոկոսի կրած փոփոխութիւններն է՝ թէ առհասարակ Նահանգի քաղաքային ազգաբնակութեան մէջ և թէ յատկապէս Բագւում։ Անցեալ դարի 80-ական թւականներին՝ մեր հաշւով երեսուն տարի առաջ, մուսուլման ժողովրդական տարրերը կազմել են Նահանգի չորս քաղաքների ընդհանուր ազգաբնակութեան 51,02 տոկ, ասել է բացարձակ մեծամասնութիւն շատ համեստ չափերով։ Մինչդեռ Բագու քաղաքում մուսուլմանների տոկոսը եղել է 43,33-տոկ. այսինքն յարաբերական մեծամասնութիւն պատկառելի չափերով։ Բայց այնուհետև, յաջորդ տարեթւերին, շարունակ իջնում է մուսուլմանների տոկոսը թէ ընդանուր առմամբ և թէ մասնաւորապէս Բագւում։ Բոլոր քաղաքների ազգաբնակութեան մէջ նրանց յարաբերական տոկոսը արտայայտւում է (1914 թ.) 47,42 տոկոսով, իսկ միայն Բագւում՝ 40,91 տոկոսով։ Եթէ մենք թուրք-թաթարական բոլոր ժողովրդների՝ որպէս Բագուի նահանգում անպայման տիրապետող տարրի՝ թւական յարաբերութիւնները արտայայտենք տոկոսներով Բագուի Նահանգում, Բագուի գաւառում, Բագուի քաղաքապետութիւն մէջ և Բագու քաղաքում կստանենք հետևեալ ուշագրաւ պատկերը. մուսուլմանների տոկոսը՝*

| Բագուի նահանգում | | | Բագուի գաւառում | | |
|---|---|---|---|---|---|
| *1886 թ.* | *1897 թ.* | *1914 թ.* | *1886 թ.* | *1897 թ.* | *1914 թ.* |
| *84,65%* | *81,80%* | *71,86%* | *65,29%* | *57,20%* | *51,27%* |

| Բագուի քաղաքապետութ. | | | Բագու քաղաքում | | |
|---|---|---|---|---|---|
| *1886 թ.* | *1897 թ.* | *1914 թ.* | *1886 թ.* | *1897 թ.* | *1914 թ.* |
| — | — | *45,43%* | *43,33%* | *41,31%* | *40,91%* |

*Թէ ժամանակի ընթացքում և թէ ըստ տերրիտորիական մեծութեան հետզհետէ նւազել է մուսուլմանների տոկոսական բաժինը տեղական ազգաբնակութեան ընդհանուր կազմի մէջ։ Նահանգի և գաւառի ազգաբնակութեան մէջ մուսուլման տարրը եղել է բացարձակ մեծամասնութեան մէջ։ Բայց երեսուն տարւայ ընթացքում իջել է մեծամասնութեան այդ տոկոսը իր նախկին բարձրութիւնից՝ Նահանգում 12,79 տոկոսով, իսկ գաւառում 14,02 տոկոսով։ Իսկ Բագւի քաղաքապետութեան մէջ և Բագու քաղաքում մուսուլմանները միայն յարաբերական մեծամասնութիւն են կազմում. այդտեղ ևս իջել է նրանց տոկոսը իր նախկին բարձրութիւնից։ 1886 թ. մուսուլմանների տոկոսը Բագւում եղել է 43,33 տոկոս, իսկ 1914 թ. 40,91 տոկոս, նշանակում է նրանց տոկոսական բաժինը իջել է նաև քաղաքում և իբրև՝ 2,42 տոկոսով։ Մնացած քաղաքներից Լենքորանում և Շամախում մուսուլ-*

մանները պահպանել են իրանց բացարձակ մեծամասնութիւնը սկզբից մինչև վերջ, թէև վար ու վեր տատանումներով և՝ վերջին հաշւով՝ նւազումներով։ Իսկ Ղուբայում մուսուլմանները կազմել են յարաբերական մեծամասնութիւն։

Մուսուլմանների հանդէպ արդէն համեստ են ռուսների և հայերի տոկոսական բաժինները առանձին-առանձին վերցրած։ Թէ ընդհանուր առմամբ և թէ յատկապէս Բագւում առաջին տարեթւին անպայման գերազանցել է հայերի տոկոսը ռուսների տոկոսից, և իրաւ ընդհանուր առմամբ՝ 5,10 տոկոսով, իսկ Բագւում՝ 3,56 տոկոսով։ Յաջորդ տարեթւին (1897 թ.) հիմնապէս փոխւում են յարաբերութիւնները, այս անգամ արդէն ռուսների տոկոսն է գերազանցում հայերի տոկոսից, և իրաւ՝ աւելի մեծ չափերով. ընդհանուր առմամբ 12,21 տոկոսով, իսկ Բագւում՝ 17,76 տոկոսով, կամ աւելի քան երկու անգամ։ Վերջին տարեթւին (1914 թ.) կրկին փոխւում են յարաբերութիւնները. թէև ռուսների տոկոսը դարձեալ գերազանցում է հայերի տոկոսից, բայց աւելի նւազ չափերով, որովհետև մի կողմից իջել է ռուսների տոկոսը (ընդհանուր առմամբ՝ 2,17 տոկոսով, իսկ Բագւում՝ 7,60 տոկոսով), իսկ միւս կողմից բարձրացել է հայերինը (ընդհանուր առմամբ՝ 6,30 տոկոսով, իսկ Բագւում՝ 5,94 տոկոսով։ Այնպէս որ վերջին տարեթւին ռուսների տոկոսը գերազանցել է հայերի տոկոսից՝ ընդհանուր առմամբ 3,14 տոկոսով, իսկ միայն Բագւում 4,22 տոկոսով։ Հայերի և ռուսների տոկոսները միասին առած գերազանցել են մուսուլմանների տոկոսից Բագւում. 1886 թ. հայերի և ռուսների տոկոսները միասին առած եղել են 52,93 տոկոս, իսկ մուսուլմաններինը, 43,33 տոկոս. 1897 թ. հայերինը և ռուսներինը կազմում էր 51,92 տոկոս, իսկ մուսուլմաններինը՝ 41,31 տոկոս. 1914 թ. հայերի և ռուսների տոկոսը հաւասար էր 50,22 տոկոսի, իսկ մուսուլմաններինը՝ 40,91 տոկոսի։ Նշանակում է հայերը և ռուսները միասին եղել են բացարձակ մեծամասնութեան մէջ. ի հարկէ նւազել է թէ նրանց տոկոսը (երեսուն տարւայ ընթացքում 2,74 տոկոսով) և թէ մուսուլմաններինը (2,42 տոկոսով նոյն ժամանակամիջոցում) համարեա հաւասար աստիճանով՝ նորեկ տարրերի մեծաթիւ ներգաղթի հետևանքով։ Միւս քաղաքներից յիշելու է Լենքորանն ու Շամախին. առաջինի մէջ աչքի են ընկնում ռուսները, որոնց տոկոսը եղել է 17,12 տոկոս (1886 թ.) և հասել է 23,82 տոկոսի (1914 թ.). իսկ երկրորդի մէջ աչքի են ընկնում հայերը, որոնց տոկոսը, սակայն, 18-ից իջել է 16,20 տոկոսի նոյն ժամանակամիջոցում։

Այժմ, տեսնենք, թէ երկու սեռերի թւական յարաբերութիւնները ինչպէս են դասաւորւած Բագւի նահանգի քաղաքներում։ 100 տղամարդուն գալիս էին կանայք՝

(Տես աղիւսակ երես 191

100 ցղամարդուն գալիս էին կանայք՝

| Քաղաքներ | 1886 թվականին | | | | 1897 թվականին | | | | 1914 թվականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Բաքու | 73,0 | 40,1 | — | 62,3 | 85,3 | 52,0 | 37,3 | 64,0 | 77,3 | 73,1 | 60,0 | 83,0 |
| 2. Դուբա | 77,9 | 56,8 | — | 70,0 | 52,0 | 81,0 | 73,3 | 80,0 | 114,7 | 104,2 | 66,6 | 125,8 |
| 3. Լենքորան | 83,0 | 81,0 | — | 88,3 | 82,0 | 115,1 | 10,0 | 81,0 | 76,6 | 58,5 | 63,0 | 63,0 |
| 4. Շամախի | 30,5 | 47,3 | — | 73,6 | 61,4 | 98,9 | 71,5 | 95,0 | 90,5 | 95,0 | 57,5 | 87,7 |
| Ընդամենը՝ | 66,1 | 56,3 | — | 73,5 | 70,2 | 86,7 | 45,5 | 80,0 | 88,1 | 82,7 | 61,8 | 89,9 |

Միջին թվով վերցրած առաջին տեղը (1886 և 1914 թ.թ.) բռնում է մուսուլմանական իգական սեռը իր թվական ուժեղությամբ. իսկ երկրորդ տարեթվին (1897 թ.) այդ առաջնությունը պատկանում է հայ իգական սեռին։ Այնուհետև յաջորդում է ռուս իգական սեռը, որը, սակայն, գերազանցում է իր թվական ներկայացուցչությամբ հայ կին սեռին թէ առաջին և թէ երրորդ տարեթվերին։ Վրացական տարրն արդէն, իբրև չափազանց նորեկ ու սակաւաթիւ բնակչութիւն, ունի, բնականօրէն, կին սեռի ամենաթոյլ մասնակցութիւնը։ Առանձին-առանձին քաղաքների վերաբեր-

մամբ նկատելու է, որ սեռերի թւական յարաբերութիւնների ընդհանուր համաչափութիւն երևում է միայն մուսուլմանների մօտ, իբրև տեղական վաղեմի բնակիչներ՝ աւելի քիչ ենթակայ ներգաղթի և արտագաղթի մասսայական հոսանքների։ Միայն մի տեղ նկատւում է մուսուլմանական իգական սեռի թւական անսովոր բարձր մասնակցութիւն՝ Ղուբայում, 1914 թ., ուր 100 տղամարդուն գալիս է 125,8 կին։ Բայց թւական այնպիսի մինիմալ մասնակցութիւն, ինչպիսին ունի հայ իգական սեռը (100 տղամ. 40,1 կին, Բագւում, 1886 թ.), ռուսականը (100 տղամ. 30,5 կին, Շամախում, 1886 թ.) և մանաւանդ վրացականը (100 տղամ. 10,0 կին, Լենքորանում, 1897 թ.), երբեք չի նկատւում մուսուլմանների մօտ։ Նրանց իգական սեռի թւական մինիմումը հաւասար է 62,3 ի (100 տղամարդուն, Բագւում, 1886 թ.)։ Բնորոշ է այն հանգամանքը, որ կին սեռի ամենամեծ թիւը Բագւում տալիս են ռուսները (100 տղամ. 85,3 կին, 1897 թ.)։ Դա բացատրւում է նրանով, որ հիւսիսից ու կենտրոնից եկած ռուսական տարրի մէջ լինում են նաև ահագին քանակով աշխատանք որոնող կանայք։ Բաւական է յիշել տնային ծառայող պերսոնալը, որ գրեթէ բացառապէս ռուսներից է բաղկացած։

## F, ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՍԵՒ-ԾՈՎԵԱՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ.

Տեսնենք այժմ, թէ ինչպէս են դասաւորւած ժողովուրդների թւական յարաբերութիւնները Սև-ծովեան նահանգի մի հատիկ քաղաքում։

| | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Նովորոսիյսկ | 6316 | — | — | 3 | 13120 | 391 | 96 | 234 | 52693 | 1420 | — | 205 |

¹) Թւական բացարձակ տւեալները տես մեր յայտնի աղբիւրների համապատասխան մասերը։

Թւական տւեալները պարզ ցոյց են տալիս, որ Նովոռոսիյսկը զուտ ռուսական մի քաղաք է, միակ քաղաքը ամբողջ Անդրկովկասում, ուր ռուսական տարրը ճնշող ու բացարձակ մեծամասնութիւն է կազմում։ Նովոռոսիյսկը նոյնքան ռուսական է՝ իր գերազանց ռուսական ազգաբնակչութեան պատճառով, որքան վրացական է Քութայիսը, որքան հայկական է Ալէքսանդրոպօլը և որքան մուսուլմանական են Օրդուբադը, Լենքորանն ու Շամախին։ Բացի յիշածս ժողովուրդներից վերջին շրջանում բաւական աչքի ընկնող տեղ են բռնել Նովոռոսիյսկում եւրոպական տարրերը (լեհեր, գերմանացիք և այլն), որոնց թիւը հասնում էր 1914 թ. 7445 հոգու, և հրէաներ, որոնք կազմում էին ոչ պակաս քան 3538 հոգի, կամ մօտ 14 անգամ պակաս տեղական ռուսների թւից։

Ի՞նչ տոկոսական աճում են ունեցել ժողովուրդները Նովոռոսիյսկում, դա տեսնում ենք հետևեալ տոկոսներից։

Բոլոր տարեշրջաններումն էլ ռուսները խիստ արագ աճման տեմպ են ունեցել։ Նրանց տարեկան աճումը եղել է 1886—1897 թ. 9,79 տոկոս, 1897—1914 թ. 17,74 տոկոս, իսկ 1886—1914 թ. 26,48 տոկոս։ Աճման այդ արտակարգ արագութիւնը հետևանք է անշուշտ ռուսների մասսայական ներգաղթին՝ եկած երկրի զանազան կողմերից։ Հայերը ևս աճել են արագ՝ 263,17 տոկոսով (1897—1914 թ.) կամ տարեկան 15,50 տոկոսով։ Մինչդեռ մուսուլմանները աճել են նոյն ժամանակամիջոցում համեմատաբար շատ դանդաղ 41,46 տոկոս կամ տարեկան՝ 2,44 տոկոս, սա է 6—7 անգամ աւելի դանդաղ հայերի աճման ընթացքից։

Ժողովուրդների աճումը Նովոռոսիյսկում.

| | 1886—1897 թւականին | | | | 1897—1914 թւականին | | | | 1886—1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուսներ | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուսներ | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուսներ | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Նովոռոսիյսկ | 107,72% | — | — | — | 301,62% | 263,17% | — | 41,46 | 741,46% | — | — | — |

ժողովրդները ունեն հետեւեալ տոկոսական բաժինները Նովոռոսիյսկի ընդհանուր ազգաբնակութեան մէջ.

Առաջին տարեթւին Նովոռոսիյսկի գրեթէ ամբողջ ազգաբնակութիւնը բաղկացած է եղել ռուսներից. միայն մի խիստ աննշան մասը՝ 1,25 տոկոսը, եղել են ոչ ռուսներ։ 1897 թւականից ի վեր այնքան է ուժեղանում ոչ ռուս տարրերի հոսանքը, որ ռուսների տոկոսը իր բարձրութիւնից իջնում է մինչև 77,64 տոկոսի. Մնացածները՝ հայեր, վրացիներ և մուսուլմաններ միասին վերցրած կազմել են 4,14 տոկոս. ռուսների հետ միասին ընդամենը՝ 81,78 տոկ.։ Նշանակում է ազգաբնակութեան մնացած մասը՝ 18,22 տոկոսը, բաղկացած է եղել բազմաթիւ տարբեր ժողովրդներից՝ ուրիշ սլաւոն տարրերից, եւրոպացիներից և հրէաներից։ Յաջորդ տարեթւին (1914թ.) մեզ յայտնի ժողովրդների ընդհանուր տոկոսը կազմում է 82,16 տոկոս (դրանից միայն ռուսները 79,70 տոկ.)։ Մնացած մասը (17,84 տոկ.) բաղկացած է եղել զանազան սլաւոնական և եւրոպական տարրերից (ընդամէնը 11,30 տոկ.) և հրէաներից (5,40 տոկ.)։

Ինչպէս են դասաւորւած սեռերի յարաբերութիւնները Նովոռոսիյսկում. 100 տղամարդուն գալիս էին կանայք.

Ժողովուրդների տոկոսական բաժինները Նովոռոսիյսկի ընդհանուր ազգաբնակութեան մէջ.

| | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Նովոռոսիյսկ | 98,75% | — | — | — | 77,64% | 2,31% | 0,51% | 1,32% | 79,70% | 2,15% | — | 0,31% |

100 տղամարդուն գալիս են կանայք՝

| | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Նովոռոսիյսկ | 7,71 | — | — | — | 70,0 | 44,0 | 31,5 | 10,4 | 80,0 | 18,0 | — | 10,5 |

Սեռերի թւական քիչ թէ շատ համաչափ յարաբերութիւններ նկատւում են միայն ռուսների մօտ։ Հայերի և մանաւանդ վրացիների ու մուսուլմանների մօտ, իբրև աւելի նորեկ տարրեր, իգական սեռի թւական մասնակցութիւնը հասնում է մինիմումի։

C. ԺՈՂՈՎՐԴՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԴԱՂՍՏԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ.

Տեսնենք այժմ թէ ինչպէս են դասաւորւած ժողովրդների թւական ու տոկոսական յարաբերութիւնները Դաղստանի շրջանի քաղաքներում։ Թւական բացարձակ տւեալները եղել են՝

| Քաղաքներ | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին [1] | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Թեմ.-Խ.-Շուրա | 1426 | 106 | 13 | 68 | 3845 | 420 | 87 | 2948 | 6219 | 782 | — | 5412 |
| 2. Դերբենդ | 1561 | 875 | 56 | 10740 | 1092 | 621 | 6 | 10383 | 8540 | 2915 | — | 15094 |
| 3. Պետրովսկ | 1932 | 49 | 6 | 70 | 5525 | 463 | 151 | 2395 | 12822 | 980 | 872 | 5462 |
| Ընդամենը՝ | 4919 | 1030 | 75 | 10878 | 10462 | 1504 | 244 | 15726 | 27581 | 4674 | 872 | 25968 |

[1]) Բացարձակ տւեալները տես յիշած աղբիւրների մէջ համապատասխան մասերը։

Դաղստանի շրջանի քաղաքները իրանց սակաւաթիւ բնակչութեամբ և յետամնացութեամբ հասարակ գաւառական քաղաքներ են։ Բայց խիստ արագ բազմացել են այնտեղ օտար տարրերը մանաւանդ ռուսները ծովափնյայ, նաւահանգիստ Պետրովսկում։ Ընդհանուր առմամբ վերցրած ռուսները և մուսուլմանները եղել են շրջանի քաղաքային ազգաբնակութեան մէջ թւական մրցակցութեան պրոցեսում։ Երկու տարեթւերին մուսուլմանները ոչ միայն գերազանցել են ռուսներին, այլև եղել են բացարձակ մեծամասնութեան մէջ երեք ժողովրդների թըւական ամբողջութեան հանդէպ։ Երրորդ տարեթւին արդէն մուսուլմանների քանակը երեք քաղաքներում յետ է նահանջում ոչ միայն երեք ժողովրդների, այլև նոյնիսկ միայն ռուսների թւից. ռուսները գտնւում են այդտեղ յարաբերական մեծամասնութեան մէջ։ Առանձին-առանձին քաղաքներում ռուսները թւապէս ամենից ուժեղ են եղել բոլոր տարեթւերին Պետրովսկում, մուսուլմանները՝ Դերբենդում, հայերը՝ նմանապէս Դերբենդում։ Ռուսները Պետրովսկում, մուսուլմանները Դերբենդում կազմել են բացարձակ մեծամասնութիւն, մինչդեռ Թեմիր-Խան-Շուրայում ռուսները միայն յարաբերաբար գերազանցում են միւսներին։ Վրացիները շատ չնչին թիւ են ներկայացնում շրջանի քաղաքներում. վերջին տարեթւին ըստ երևոյթին վրացիներ բոլորովին չեն եղել ոչ Թեմիր-Խան-Շուրայում և ոչ Դերբենդում, ընդհակառակը Պետրովսկում շատ արագ աճել է նրանց թիւը, թէև քանակով բոլորից նուազ են նրանք։

Տեսնենք, թէ ինչպէս է եղել ժողովրդների տոկոսական աճման ընթացքը Դաղստանի քաղաքներում։

ժողովուրդների տոկոսական աճման ընթացքը Դաղստանի քաղաքներում.

| Քաղաքներ | 1886—1897 թւականին | | | | 1897—1914 թւականին | | | | 1886—1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. |
| 1. Թեմիր-Խ.-Շուրա | 170,00% | 202,00% | +²) | +²) | 61,74% | 76,43% | — | 83,60% | 336,11% | 376,73% | — | +⁶) |
| 2. Դերբենդ | —43,00,, | —41,00,, | —²) | —3,44% | 682,05,, | 370,00,, | — | 45,37,, | 447,14,, | 233,00,, | — | 40.54% |
| 3. Պետրովսկ | 186,00,, | +¹) | +²) | +²) | 132,07,, | 111,66,, | 477,41,, | 128,06,, | 564,00,, | +⁴) | +⁵) | +⁶) |
| Ընդամենը՝ | 112,68% | 45,63% | 225,33% | 4457% | 163,63% | 210,77% | 257,34% | 65,13% | 461,00% | 353.76% | 1062,65% | 138,72 |

¹) Հայերը աճել են Պետրովսկում 414 հոգով։ ²) Վրացիները աւելա-

Ընդհանուր առմամբ վերցրած աճման ամենաարագ տեմպ ունեցել են փոքրաթիւ վրացիները բոլորը տարեշրջաններում, շնորհիւ բացառապէս Գեորգիևսկում ունեցած նրանց արագ բազմացման։ Այնուհետև աչքի է ընկնում ռուսների արագ աճման տոկոսը՝ առաջին և մանաւանդ երրորդ տարեշրջանում, իսկ երկրորդ տարեշրջ. հայերի աճման տոկոսը (210,77 տոկ) գերազանցում է ռուսների աճման տոկոսից (163,63 տոկոս)։ Մուսուլմանների աճման ընթացքը բռնում է վերջին տեղը երեք տարեշրջաններում էլ։ Առանձին-առանձին քաղաքներում ըստ վերև բերած տոկոսների առաջին տեղը բռնում է ռուսների աճման տոկոսը (682,05 տոկ.) Դերբէնդում 1897—1914 թւականին, այնուհետև հայերի աճման տոկոսը (637,73 տոկ.) Թեմիր-խան-Շուրայում, 1886 1914 թ., դրան յաջորդում է դարձեալ ռուսների աճման. տոկոսը (564,00 տոկ) Գեորգիևսկում նոյն տարեշրջանում, այնուհետև վրացիների աճ. տոկոսը (477,41 տոկ.) նոյն քաղաքում 1897—1914 թ.։ Աճման մինիմալ տոկոս (40,54 տոկոս) տալիս են մուսուլմանները Դերբենդում վերջին տարեշրջանում։ Նուազման տոկոս տալիս են բոլոր ժողովուրդները, ամենամեծ տոկոս ռուսները՝ 43,00 տոկ. Դերբենդում, առաջին տարեշրջանում. այնուհետև հայերը (41,00 տոկ) նոյն քաղաքում։

Ինչ տոկոսական բաժիններ ունեն ժողովրդները Դաղստանի շրջանի քաղաքներում՝ տեղական ազգաբնակչութեան ամբողջից. դա տեսնում ենք հետևեալ աղիւսակից.

( Տես աղիւսակ երես 198 )

ցել են Թեմիր-Խ.-Շուրայում 74 հոգ., Գեորգիևսկում 145 հոգ., իսկ Դերբենդում նւազել են 145 հոգով։ 3) Մուսուլմանները աճել են Թեմիր-Խ.-Շուրայում 2880 հոգ., Գեորգիևսկում 2325 հոգով։ 4) Հայերը աւելացել են Գեորգիևսկում 931 հոգով։ 5) Վրացիները աւելացել են Գեորգիևսկում 866 հոգով։ 6) Մուսուլմանները աւելացել են նոյն տեղում 5392 հոգով։—Այսպէս ուրեմն թւապէս վերցրած ամենամեծ չափով աւելացել է Մուսուլմանների թիւը։

| Քաղաքներ | 1886 Թ ո ւ ա կ ա ն ի ն | | | | 1897 Թ ո ւ ա կ ա ն ի ն | | | | 1914 Թ ո ւ ա կ ա ն ի ն | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Թեմիր-Խ.-Շուրա | 55,30% | 4,11% | — | 2,60 | 41,73% | 4,55% | 0,94% | 32,00% | 36,75% | 4,62% | — | 32,00% |
| 2. Դերբենդ | 10,22„ | 5,73„ | 0,30% | 70,00% | 7,45„ | 4,23„ | — | 70,88„ | 25,46„ | 8,70„ | — | 45,00„ |
| 3. Պետրովսկ | 84,55„ | 2,18„ | 0,26„ | 3,06 | 56,65„ | 4,74„ | 1,55„ | 24,55„ | 57,00„ | 4,34„ | 3,86% | 24,21„ |
| Ընդհանուրը՝ | 24,41% | 5,11% | 0,37% | 54,00% | 31,12% | 4,50% | 0,72% | 46,78% | 37,77% | 6,46% | 1,20% | 35,56% |

Մեծ փոփոխությունների են ենթարկել մուսուլմանների տոկոսները թէ ընդհանուր առմամբ և թէ առանձին քաղաքներում։ Միայն 80-ական թւականներին (առաջին տարեթւին) է մուսուլմանական տարրը բացարձակ մեծամասնութիւն կազմել Դաղստանի շրջանի քաղաքային ընդհանուր ազգաբնակութեան մէջ, եւ այդ մեծամասնութիւնը՝ ինքն իրեն վերցրած, բաւական համեստ է եղել, ընդամենը 54 տոկ., մինչդեռ շրջանի ամբողջ ազգաբնակութեան մէջ մուսուլմանների մեծամասնութիւնը հասնում է 97,40 տոկոսի։ Պարզ է, որ մուսուլմանութիւնը Դաղստանի շրջանում եւ քաղաքային բնակչութիւն քիչ է տալիս։ Յետագայ տարեթւերին արագութեամբ իջնում է մուսուլմանական մեծամասնութիւնը քաղաքներում և 1897 թւականին հասնում է 46,78 տոկոսի (նւազելով 7,22 տոկոս), բացարձակ մեծամասնութիւնից դառնալով յարաբերական մեծամասնութիւն։ Իսկ վերջին տարեթւին (1914 թւականին) այդ բարձրութիւնից եւ իջնում է մուսուլմանների տոկոսը և հասնում 35,56 տոկոսի, նւազելով 11,22 տոկոս և կազմելով համարեա 1/3 մասը շրջանի քաղաքային ողջ ազգաբնակութեան (մինչդեռ նոյնը

*տարեթվին մուսուլմանների տոկոսը Դաղստանի ընդհանուր ազգաբը-
նակության մեջ կազմում էր 91 տոկոս)։ 1914 թ. ռուսների տոկոսը (37,77
տոկ.)՝ քաղաքային ազգաբնակության մեջ, գերազանցում է մուսուլմաննե-
րի տոկոսից 2,21 տոկոսով, մինչդեռ մոտ երեսուն տարի առաջ (1886 թ.),
երբ մուսուլմանները մեծամասնության մեջ էին (54 տ-ով), ռուսները կազ-
մում էին նույն իսկ ոչ մի ամբողջ 1/4 մասը (24,41 տոկ.) Դաղստանի քա-
ղաքային ազգաբնակության։ Նույն 1886 թ. հայերը կազմում էին շրջանի
քաղաքային ազգաբնակության 1/20 մասը (5,11), իսկ 1914 թ.՝ մոտ 1/16
մասը (6,40 տոկոս)։*

*Ինչ վերաբերում է առանձին քաղաքներին, այնտեղ ևս մուսուլման-
ների տոկոսները ենթարկվել են խոշոր փոփոխությունների։ Այսպէս օրի-
նակ, Դաղստանի ամենամեծ քաղաքում՝ Դերբենտում, մուսուլմանները ե-
ղել են բացարձակ մեծամասնության մեջ երկու տարեթվերին՝ 1886 թ.
(70 տոկ.) և 1897 (70,88), իսկ 1914 թ. իջել է նրանց տոկոսը մինչև 45
տոկոսի, նվազելով միանգամից 25,88 տոկ. և կազմելով միայն յարաբերա-
կան մեծամասնություն։ Դրա փոխարէն ռուսների տոկոսական բաժինը, որ
1886 թ. եղել է Դերբենտում միայն 10,22 տոկ., 1914 թ. բարձրանում և
հասնում է 25,46 տոկոսի, իսկ հայերինը 5,73 տոկոսից բարձրանում է
8,70 տոկոսի։ Ռուսները բացարձակ մեծամասնություն կազմում են Պետ-
րովսկում՝ բոլոր տարեթվերին, և Թեմիր-Խան-Շուրայում՝ միայն 1886 թ.,
այնուհետև՝ մուսուլմանների թվի արագ աճման շնորհիւ, արագ իջնում է
ռուսների տոկոսական բաժինը յաջորդ տարեթվերին և նրանք կազմում են
միայն յարաբերական մեծամասնություն համեստ չափերով։*

*Այժմ տեսնենք, թէ ինչպէս են դասաւորւած սեռերի թվական յարա-
բերությունները Դաղստանի քաղաքներում։ 100 տղամարդուն գալիս էին
կանայք՝*

*(Տես աղիւսակ երես 200)*

100 տղամարդուն գալիս են կանայք՝

| Քաղաքներ | 1886 Թւականին | | | | 1897 Թւականին | | | | 1914 Թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուսն. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Թեմ.-Խ.-Շուրա | 77,0 | 65.6 | 62,5 | 84,0 | 57.0 | 90,9 | 80,0 | 57,1 | 105,0 | 96,0 | — | 103,0 |
| 2. Դերբենդ | 30,4 | 80,0 | 40,0 | 77,6 | 56.4 | 87,0 | — | 84,0 | 34,0 | 60,0 | — | 23,2 |
| 3. Պետրովսկ | 92,2 | 70,0 | — | 90,0 | 60,0 | 44,6 | 50,5 | 33,7 | 89,8 | 70,0 | 34,8 | 35,0 |
| Միջին թւով՝ | 66,5 | 71,9 | 51,2 | 83,9 | 57,8 | 74,2 | 65,3 | 58,3 | 76,2 | 75,3 | 34,8 | 53,7 |

*Սեռերի թւական յարաբերութիւնները զանազան դասաւորութիւն ունին ժողովրդների մօտ զանազան տարեթւերին։ Իգական սեռի թւական ուժեղութեան տեսակէտից, միջին թւով վերցրած, 1886 թ. առաջին տեղը բռնում է մուսուլման կին սեռը, 1897 թ.՝ հայ իգական սեռը, իսկ 1914 թ., ռուս իգական սեռը։ Որոշ համաչափութիւն նկատւում է միայն հայ իգական սեռի թւական մասնակցութեան մէջ՝ երեք տարեթւերին էլ. 100 տղամ. գալիս էին 71,9, 74,2 և 75,3 կանայք. և իրաւ, քանի գնում, այնքան հայ իգական սեռը թւապէս աւելի ուժեղանալու տենդենցներ է ցոյց տալիս Դաղստանի շրջ. քաղաքներում։ Միւս ժողովրդների մօտ, նոյն իսկ*

*տեղացի մուսուլմանների մոտ, չենք գտնում ոչ այդ համաչափությունը և ոչ թվական ուժեղացման տենդենցները։ Ռուսների մոտ, միջին թվով վերցրած, 100 տղամ. գալիս էին երեք տարեթվերին՝ 66,5, 57,8 և 76,2 կանայք. մուսուլմանների մոտ՝ 83,9, 58,3 և 53,7 կ., իսկ վրացիների մոտ 51,2, 65,3 և 34,8 կ.։ Այդպես, երբ ժողովրդների մոտ էլ իգակ. սեռը ունեցել է թվական վեր ու վար տատանումներ, չի ունեցել համաչափություն։ Մոտավորապես նույն պատկերն ենք գտնում նաև առանձին-առանձին քաղաքներում. ռուսների մոտ իգակ. սեռի թվական մինիմումը հասնում է 30,4-ի (Դերբենդում, 1886 թ.), իսկ մաքսիմումը 105-ի (Թեմիր-Խ.-Շուր. 1914 թ.), մուսուլմանների մոտ մինիմումը հասնում է 23,2-ի (Դերբենտում, 1914 թ.), իսկ մաքսիմումը 103-ի (Թեմիր-Խ. Շ., նույն թվականին)։ Հայ իգակ. սեռը չունի թվական նման սուր հակասություններ։*

## H. ԺՈՂՈՎՐԴՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ

*Մեզ մնում է, վերջապես, նույն յարաբերությունները պարզել նաև Կարսի շրջանի քաղաքային ազգաբնակության մէջ։ Ժողովրդների թվական տվյալները եղել են Կարսում*

*Կարսի քաղաքային բնակչության* մեծագույն մասը, *ինչպես տեսնում ենք այդ աղյուսակից, կազմել են միշտ և կազմում են այժմ հայերը։ Երեք տարեշրջաններում էլ կազմել են նրանք բացարձակ մեծամասնություն տեղական ողջ ազգաբնակության մէջ։ Կարսը պատկանում է այն հայաշատ*

ժողովուրդների բնակած տեղերը եղել են Կարսում՝

| Քաղաքներ | 1886 թվականին | | | | 1897 թվականին | | | | 1914 թվականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Կարս | 247 | 2483 | — | 871 | 5478 | 10332 | 107 | 1729 | 1469 | 25252 | — | 1508 |

քաղաքների թւին (ինչպէս օրինակ Թիֆլիսը, Երեւանն է), որոնց գաւառական ազգաբնակութեան մէջ հայկական տարրը թւական աւելի նւազ ներկայացուցչութիւն ունի, քան քաղաքային ազգաբնակութեան մէջ։ Բայց Ղարսը մի բանով էլ աւելի է. մինչդեռ Թիֆլիսում և Երեւանում հայերը միայն յարաբերական մեծամասնութիւն են կազմում, Ղարսում, ընդհակառակը, նրանք բացարձակ մեծամասնութեան մէջ են։ Այդ տեսակէտից Ղարսը աւելի շատ նման է Ալէքսանդրոպօլին և Շուշի քաղաքին։ Մուսուլմանական կամ քիւրդ-թիւրքական տարրը, որ բացարձակ մեծամասնութիւն է կազմում Ղարսի շրջանում, քաղաքում շատ թոյլ է ներկայացրւած, թոյլ նոյն իսկ ռուսներից (1897 թ.) և համարեա նոյնքան, որքան ռուսները կամ վրացիները (1914 թ.)։ Ռուսները, որոնց մեծագոյն մասը Ղարսում զօրքից է եղել բաղկացած, պատկառելի թիւ ունեցել են միայն 1897 թ. (5478 հոգի), այնուհետև տրոգութեամբ իջնում է նրանց թիւը և հասնում 1469 հոգու 1914 թ.։

Ի՞նչպէս է եղել ժողովրդների տոկոսական աճումը Ղարսում. Այդ երեւում է հետեւեալ տոկոսներից.

ժողովուրդների տոկոսական աճումը Ղարսում.

| | 1886—1897 թ ւ ա կ ա ն ի ն | | | | 1897—1914 թ ւ ա կ ա ն ի ն | | | | 1886—1914 թ ւ ա կ ա ն ի ն | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Ղարս | 2118,00% | 316,11% | — | 98,51% | —272,90% | 144,30% | — | —14,65% | 500,00% | 917,00% | — | 73,13 |

¹) Թւական բացարձակ տւեալները տես մեր յայտնի աղբիւրների մէջ համապատասխան մասերը։

Ամենաարագ աճում առաջին տարեթւին ունեցել են ռուսները, երբ նրանց թիւը 247 հոգուց հասել է 5478 հոգու, բայց յետագայ տարեշրջանում տեղահանւել է մեծագոյն մասը այդ անմշտարնակ տարրից և ռուսների թիւը իջել է մինչև 1469 հոգու կամ նւազել է 272,90 տոկոսով։ Հայեր երկու տարեշրջանում էլ, մանաւանդ առաջնի մէջ, աճել են խոշոր տոկոսներով՝ 316,11 տոկ. և 144,30 տոկոսով։ Իսկ 1886—1914 թ., երբ հայերի թիւը 2483 հոգուց բարձրանում է մինչև 25252 հոգու, նրանց աճման տոկոսը կազմում է 917,00 տոկ. կամ քանակը աւելանում է 22769 հոգով կամ թէ տարեկան՝ 32,80 տոկոսով աճում։ Դա աճման մի այնպիսի արտասովոր արագութիւն է, ինչպիսին ունեցել են ռուսները Նովոռոսիյսկում. երկու դէպքումն էլ մասսայական ներգաղթով պայմանաւորւած փաստեր են դրանք, ինչպէս բացատրել ենք մենք իր տեղում։ Մուսուլմանների աճումը եւս եղել է պատկառելի (98,51 տոկ., 1886—1897 թ.), բայց յաջորդ տարեշրջանում նւազում է նրանց թիւը 14,65 տոկոսով, այնպէս որ նրանց մօտաւորապէս երեսնամեայ աճման ընթացքը արտայայտւում է 73,13 տոկոսով կամ տարեկան 2,61 տոկոսով։

Տեսնենք այժմ, թէ ինչ տոկոսական բաժիններ ունին ժողովրդները Ղարսի տեղական ազգաբնակութեան ամբողջութեան մէջ։ Դա երևում է հետևեալ տոկոսներից.

Ժողովուրդների տոկոսական բաժինները Ղարսի տեղական ազգաբնակութեան ամբողջից·

| | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Ղարս | 6,27% | 63,04% | — | 22,11% | 26,33% | 50,00% | 0,51% | 8.50% | 4,88% | 83,93% | — | 5,01% |

Երեք տարեթւերին էլ հայերը եղել են ապահով, բացարձակ մեծամասնութեան մէջ. 1897 թ. այդ մեծամասնութիւնը իջնում է մինչև վերջին սահմանը. հայերը կազմում են ճիշտ կէսը (50 տոկոս) տեղական ազգաբնակութեան. Իսկ 1914թ. հայերի թիւը այնքան է աճում և միւս կողմից եկւոր տարրերի (ռուսների) թիւը այնքան է նւազում, որ հայկական մեծամասնութիւնը արտայայտւում է 83,93 տոկոսով, որի հանդէպ համահաւասար աննշան տոկոսներ են կազմում միւս ժողովուրդները. Որքան տարբեր են, օրինակ, հայերի և մուսուլմանների տոկոսները Ղարսի շրջանում (область), շրջանամասում (округъ)և քաղաքում, ինչպէս տեսնում ենք հետևեալ տոկոսներից.

| | Հայերի տոկոսներ | | |
|---|---|---|---|
| | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. |
| Ղարսի շրջան | 21,31 % | 25,26 % | 29,40 % |
| Ղար. շրջանամ. | 29,31 ,, | 34,82 ,, | 41,54 ,, |
| Ղարս քաղաք | 63,04 ,, | 50,00 ,, | 83,93 ,, |

| | Մուսուլմանների տոկոսներ | | |
|---|---|---|---|
| | 1886 թ. | 1897 թ. | 1914 թ. |
| Ղարսի շրջան | 52,38 % | 50,18 % | 42,45 % |
| Ղարսի շրջանամ. | 39,71 ,, | 34,94 ,, | 34,60 ,, |
| Ղարս քաղաք | 22,11 ,, | 8,50 ,, | 5,10 ,, |

Մի երևոյթ ընդհանուր է բոլոր տերրիտորիական բաժանումներին. դա մուսուլմանների տոկոսների նւազման տենդենցն է անխտիր բոլոր մասերում և բոլոր տարեթւերին. Ղարսի շրջանում (область), նրանց բացարձակ մեծամասնութիւնը (1886 և 1897 թ.թ.) տեղի է տւել յարաբերական մեծամասնութեան (1914 թ.). Ղարսի շրջանամասում (округъ)նրանց յարաբերական մեծամասնութիւնը (1886 և 1897 թ.) դարձել է փոքրամասնութիւն (1914 թ.). Իսկ Ղարս քաղաքում նրանց փոքրամասնութիւնը (22,11 տոկ., 1886 թ.) արագութեամբ իջել և աննշան տոկոսի է հասել (5,01 տոկ., 1914 թ.), կազմելով միայն $^1/_{20}$-րդ մասը քաղաքի բնակչութեան. Հայերի մօտ կատարւել է ճիշտ հակառակ տենդենցը. Նրանց տոկոսները աճել են բոլոր տերրիտ. բաժանումների մէջ և բոլոր տարեթւերին, բացառութ. 1897 թ. Ղարս քաղաքում ունեցած տոկոսական նւազման.

Ժողովրդների երկու սեռերի թւական յարաբերութիւնները Ղարսում եղել են այսպէս. 100 տղամարդկանց գալիս էին կանայք՝

**100** տղամարդուն գալիս են կանայք՝

| | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| 1. Ղարս | 75,1 | 92,0 | — | 84,3 | 16,0 | 82,4 | 62,0 | 46,2 | 84,0 | 88,7 | — | 91,1 |

Թւական ամենաուժեղ մասնակցութիւն ունեցել է հայ իգական սեռը 1886 թ. և 1897 թ., իսկ 1914 թ. այդ առաջնութիւնը անցնում է մուսուլման կին սեռին, որից հայ իգական սեռը թւական շատ քիչ տարբերութիւն է ունենում։ Ռուս իգական սեռը, որի թւական մասնակցութիւնը համաչափ է եղել 1886 և 1914 թ.թ., թւապէս իջնում է մինչև մինիմում 1897 թ. (100 տղամ. 16 կին)։ Այդ փաստը բացատրւում է նրանով, որ հէնց այդ թւին ռուսական բնակչութիւնը աւելանալով մի քանի հազար զօրքով, խախտել է մեծ չափերով սեռերի թւական յարաբերութեան համաչափութիւնը։

Այստեղ վերջացրինք մեր թւական գործողութիւններն ու դիտողութիւնները մեզ յայտնի չորս գլխաւոր ժողովրդների մասին Անդրկովկասի բոլոր քաղաքներում։ Մենք ծանօթացանք նրանց թւական բացարձակ տւեալների, տոկոսական աճման, տոկոսական բաժինների կամ մասնակցութեան և սեռերի թւական յարաբերութիւնների դասաւորութեան հետ։ Մենք տեսանք, որ ընդհանրապէս Անդրկովկասում և մասնաւորապէս Անդրկովկասի գաւառային ազգաբնակութեան մէջ իր թւով միայն երրորդ տեղը բռնող հայ ժողովուրդը տալիս է քաղաքային ազգաբնակութեան համեմատաբար ամենամեծ բաժինը, աւել է՝ գրաւում է առաջին տեղը։ Ողջ մուսուլման տարրը, որ իր թւով առաջին տեղն է բռնում առհասարակ Անդրկովկա-

սում, քաղաքային ազգաբնակութեան մէջ արդէն երկրորդ շարքն է գրաւում։ Իսկ երրորդ տեղը պատկանում է ռուսներին, որոնք գլխաւոր ժողովրդների մէջ Անդրկովկասում ամենից թոյլ են ներկայացրած իրանց թւով։ Վրացիները բռնում են վերջին տեղը իրանց քաղաքային ազգաբնակութեամբ, թէև ընդհանուր առմամբ վերցրած, ինչպէս գիտենք, վրաց ժողովուրդը իր թւով երկրորդ տեղն է բռնում Անդրկովկասում։

Պատկերը լրացնելու համար համադրենք իրար ժողովրդների աճման տոկոսները և ընդհանուր ազգաբնակութեան մէջ ունեցած նրանց տոկոսական բաժինները նահանգական և շրջանային գլխաւոր քաղաքներում։

### Ժողովուրդների աճման տոկոսները նահանգական և շրջանային գլխաւոր քաղաքներում

| Քաղաքներ | 1886—1897 թւականին | | | | 1897—1914 թւականին | | | | 1886—1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. |
| 1. Թիֆլիս | 234,30% | 26,00% | 93,60% | 452,00% | 64,83% | 175,00% | 69,04% | 150,00% | 450,00% | 246,27% | 227,25% | 1300,00 |
| 2. Բաքու | 82,16,, | −28,22,, | — | 23,20,, | 73,80,, | 200,00 | — | 120,19 | 221,31,, | 133,00,, | — | 171,26 |
| 3. Քութայիս | 182% | −83,54,, | 44,85,, | — | 160,00,, | 42,50,, | 45,30,, | — | 633,15,, | −28,76,, | 106,50,, | — |
| 4. Գանձակ | — | 35,23% | — | 59,02% | 108,15% | −7,10% | — | 117,05% | — | 26,30% | — | 245,26% |
| 5. Երևան | 913,00,, | 75,34,, | — | 73,16,, | 200,00,, | 197,16,, | — | 0,71,, | 227,00 | 421,04,, | — | 74,40,, |
| 6. Բաթում | 330,36,, | 97,77,, | 193,77,, | 7,00,, | 43,05,, | 43,70,, | 62,95,, | 28,13 | 515,66,, | 184,21,, | 378,71,, | 37,00,, |
| 7. Նովորոսիյսկ | 107,72,, | — | — | — | 301,62,, | 263,17,, | — | 41,46,, | 741,46,, | — | — | — |
| 8. Ղարս | 2118,00,, | 316,11,, | — | 98,51,, | 272,90,, | 144,30,, | — | −14,65,, | 500,00,, | 917,00 | — | 73,13,, |
| 9. Թեմ.-Խան-Շուրա | 170,00,, | 202,00 | — | — | 61,74,, | 86,43,, | — | 83,60,, | 336,61,, | 637,73,, | — | — |
| Ընդամենը՝ | 167,43% | 27,48% | 81,87% | 50,40% | 86,00% | 149,11% | 61,60% | 98,44% | 396,36 | 217,57 | 194,00 | 200,00% |

Ժողովրդների աճման տոկոսները առանձին-առանձին քաղաքներում մեզ արդէն յայտնի են նախորդ մեր գործողութիւններից և դիտողութիւններից։ Այստեղ ուշադրաւ են աճման այն միջին տոկոսները, որ ունեցել են ժողովրդները մեր ծայր երկրի 9 գլխաւոր քաղաքներում ընդհանուր առմամբ։ Աճման այն սովորական դանդաղ ընթացքը որ առաջին տարեշրջանում (1886—1897 թ.) ունեցել են առհասարակ հայերը տերրիտորիական գրեթէ բոլոր բաժանմունքներում, անդրադառնում է նաև վերոյիշեալ աղիւսակի մէջ. հայերը իրանց 27,48 տոկ. աճումով յետ են կանգնած Ռուսաց ժողովրդների աճման ընթացքից։ Իսկ երկրորդ տարեշրջանում (1897—1914 թ.), ընդհակառակը. հայերը իրանց աճման արագ տեմպով (149,11 տոկոսով) անպայման գերազանցում են Ռուսաց ժողովրդների աճման տեմպից։ Երեսնամեայ ընթացքում (1886—1914 թ.) արդէն ռուսները բռնում են առաջին տեղը իրանց աճման արագութեամբ (396,36 տ.)։ Նրանց հետեւում են հայերը (217,57 տոկ.), այնուհետև մուսուլմանները (200,00 տոկոսով) և ապա միայն վրացիները (194,00 տոկ.)։

Ինչպէս գիտենք, ժողովրդների առհասարակ քաղաքային ազգաբնակութեան աճումը իր արագութեան տեմպով այլապէս է դասաւորուած, քան գլխաւոր քաղաքներում, ինչպէս երեւում է հետեւեալ համադրութիւնից

### Ժողովուրդների աճումը քաղաքներում

| | 1886—1897 թւականին | | | | 1897—1914 թւականին | | | | 1886—1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուսներ | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուսներ | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուսներ | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| Աճումը բոլոր (31) քաղ. | 200,60% | 5,65% | 94,23% | 25,86% | 91,96 | 116,00 | 65,20 | 78,82 | 472,31 | 128,21% | 220,90% | 125,03% |
| Աճումը գլխաւոր(9)քաղ. | 167,43,, | 27,48,, | 81,87,, | 50,40,, | 86,00 | 149,11 | 61,60 | 98,44 | 396,31 | 217,57,, | 194,00,, | 200,00,, |

Ուշադրութիւն դարձրէք տոկոսների այդ երկշար դասաւորութեան վրայ: Նախ աչքի է ընկնում այն փաստը, որ չորս ժողովրդներից երկուսը —ռուսներն ու վրացիները—աճել են առհասարակ բոլոր քաղաքներում (վերին շարք) աւելի արագ տեմպով, քան միայն գլխաւոր քաղաքներում (ստորին շարք): Եւ այդ փաստը նկատւում է բոլոր տարեշրջաններում: Բոլորովին հակառակն ենք գտնում միւս երկու ժողովրդների—հայերի և մուսուլմանների—մօտ: Նրանց աճման տեմպը կենտրոնական կամ գլխաւոր քաղաքներում եղել է անհամեմատ աւելի արագ, քան առհասարակ բոլոր քաղաքներում (որանց մէջ մտնում են անշուշտ նաև գլխաւոր քաղաքները): Եւ այդ փաստը ևս պահպանւում է բոլոր տարեշրջաններում: Հայերի աճման տոկոսը գլխաւոր քաղաքներում մօտ հինգ անգամ գերազանցում է նրանց առհասարակ քաղաքներում ունեցած աճման տոկոսից (առաջին տարեշրջանում): Մուսուլմանների մօտ այդ գերազանցումը արտայայտւում է երկու անգամ: Մինչդեռ ռուսների և վրացիների հակառակ յարաբերութեամբ ունեցած տոկոսական գերազանցումը (վերին շարքը ստորինի հանդէպ) այնքան մեծ չափերով չի արտայայտւում: Այնուհետև նկատելու է այն փաստը, որ մինչդեռ բոլոր քաղաքներում հայերի աճման տոկոսը երեսնամեայ շրջանում (1886—1914 թ.) բռնում է իր մեծութեամբ միայն երրորդ տեղը (ռուսներից և վրացիներից յետոյ), ընդհակառակը, 9 գլխաւոր քաղաքներում միջին թւով գրաւում են նրանք իրանց աճման տոկոսով երկրորդ տեղը (ռուսներից յետոյ): Բոլոր ժողովրդների տարեկան աճումը երեսնամեայ շրջանում արտայայտւել է քաղաքներում հետեւեալ տոկոսներով.

| Ժողովուրդ. տարեկան աճ. տոկոսներով | 1886——1914 թ ւ ա կ ա ն ի ն | | | |
|---|---|---|---|---|
| | Ռուսներ | Հայեր | Վրացիներ | Մուսուլ. |
| Տարեկ.ան աճ. բոլոր 31 քաղաքներ. | 16,87% | 4,60% | 7,89% | 4,46% |
| Տարեկան աճ. գլխ. 9 քաղաքներում | 14,15 ,, | 7,77 ,, | 6,93 ,, | 7,14 ,, |

Տարեկան աճման այս տոկոսների մէջ փոքր չափերով անդրադառնում է երեսնամեայ շրջանի աճման տեմպը, որի մասին խօսեցինք վերև:

Անցնենք այժմ միւս հարցին. ինչ բաժինն են կազմում նահանգական և գաւառական 9 գլխաւոր քաղաքներում գտնւող մեզ յայտնի ժողովրդները առհասարակ քաղաքային (31 քաղաքների) ազգաբնակութեան ամբողջից:

Ժողովրդների բացարձակ թւերը քաղաքներում եղել են.

( Տես աղիւսակ երես 209 )

ժողովուրդների բացարձակ սւեալները խաղաքներում.

| | 1886 Թ ւ ա կ ա ն ի ն | | | | 1897 Թ ւ ա կ ա ն ի ն | | | | 1914 Թ ւ ա կ ա ն ի ն | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուսն. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. |
| Բոլ.(31)քաղաքներում | 53864 | 180321 | 58218 | 143326 | 160602 | 190519 | 113080 | 180384 | 308294 | 411518 | 186824 | 322529 |
| Գլխաւոր (9) քաղաք. | 47249 | 86333 | 38663 | 61198 | 126361 | 110056 | 70317 | 92040 | 234527 | 274166 | 113747 | 182644 |
| Տարբերութիւնը | 6615 | 93988 | 19555 | 82128 | 34241 | 80463 | 42763 | 88344 | 73767 | 137352 | 73077 | 139885 |

Բաւական ուշագրաւ են այս թւերը։ Առաջին տարեթւին ռուս և վրացի քաղաքային բնակչութեան ամենամեծ մասը կենտրոնացած են եղել նահանգական և շրջանային 9 գլխաւոր քաղաքներում։ Առանձնապէս աչքի է ընկնում ռուսների կենտրոնացումը, որոնցից նոյն տարեթւին միայն 6615 հոգի են եղել ցրուած (22) գաւառական քաղաքներում։ Հակառակ երևոյթն է նկատւում հայերի և մուսուլմանների մօտ. նրանց քաղաքային ազգաբնակութեան մեծ մասը ամփոփւած են եղել գաւառական քաղաքներում, իսկ փոքրամասնութիւնը՝ գլխաւոր քաղաքներում։ Յաջորդ տարեթւերին փոխւում են այդ յարաբերութիւնները. գլխաւոր քաղաքների բնակչութիւնը արագ բազմանալով ի հաշիւ գաւառների, բոլոր ժողովուրդներն էլ իրանց կենտրոնացման ծանրակէտը գտնում են գլխաւոր քաղաքներում։ Ցարաբերաբար վերցրած, կենտրոնացման ամենամեծ տոկոսը տալիս են, բնականաբար, ռուսները, որոնք իբրև եկւորներ առաջին հերթին և մեծապոյնիմասով տեղաւորւում են վարչական, կուլտուրական և առևտրա-արդիւնա-

բերական կենտրոններում, 1897 Թ. ռուսների Թիվը 9 գլխավոր քաղաքներում այնքան էր բազմացել, որ նույնիսկ 16305 հոգով գերազանցել էին հայերի Թվից նույն գլխավոր քաղաքներում։ Այդ յարաբերութիւնները աւելի շօշափելիօրէն կպարզւին մեզ, եԹէ արտայայտենք նրանց տոկոսներով։

Ժողովրդների գլխավոր (9) քաղաքներում եղած բնակչութեան տոկոսը նրանց քաղաքային բնակչութեան ընդհանուր՝ (31 քաղաքներում եղած) Թւից։

| Գլխավոր (9) քաղաքների բնակչութեան տոկոսը | 1886 Թւականին | | | | 1897 Թւականին | | | | 1914 Թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| | 87,70% | 47,80% | 66,24% | 42,70% | 78,68% | 57,77% | 62,18% | 51,02% | 76,70% | 66,62% | 60,90% | 56,62% |

Ռուսների և վրացիների առաջին տարեԹւերին ունեցած բարձր տոկոսները քանի գնում, այնքան նւազում էին, և ընդհակառակը հայերի և մուսուլմանների տոկոսները աճում էին աւելի մեծ չափերով։ Այսպէս, երեսնամեայ շրջանում ռուսների տոկոսը նւազել է ուղիղ 11 տոկ. (87,70 տոկոսից իջնելով մինչև 76,70 տոկ.) հայերի տոկոսը, ընդհակառակը, աճել է 18,82 տոկոսով (47,80 տոկոսից բարձրանալով 66,62 տոկոսի), վրացիների տոկոսը նւազել է 5,34 տոկոսով (66,24 տոկոսից իջնելով մինչև 60,90 տոկ.) և վերջապէս մուսուլմանների տոկոսը աճել է 13,92 տոկոսով (42,70 տոկոսից բարձրանալով 56,62 տոկոսի)։ Այդ հակառակ տենդենցները ցոյց են տալիս, որ մի կողմից ռուսների և մասամբ վրացիների Թիւը հետզհետ է ուժեղանում էր գաւառներում, իսկ միւս կողմից հայերի և մուսուլմանների, մանաւանդ առաջինների Թիւը աւելի ու աւելի բազմանում ու կենտրոնանում էր գլխավոր քաղաքներում։

Այժմ մեզ հետաքրքրում է մի ուրիշ հարց։ Մենք գիտենք արդէն, Թէ չորս ժողովրդների ընդհանուր

քաղաքային բնակչութիւնը ինչ տոկոսական բաժինն է կազմում առհասարակ Անդրկովկասի ամբողջ քաղաքային ազգաբնակութեան. այժմ կը կամենայինք իմանալ, թէ ինչպէս են դասաւորւած նոյն յարաբերութիւնները մեզ յայտնի 9 գլխաւոր քաղաքներում.

### Ժողովուրդների քաղաքային բնակչութեան տոկոսը Անդրկովկասեան քաղաքային ազգաբնակութեան ամբողջից.

| Ժողովուրդների տոկոսը | 1886 թւականին | | | | 1897 թւականին | | | | 1914 թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. |
| Գլխաւոր (9) քաղաք. | 18,86% | 34,47% | 15,39% | 24,43% | 28,58% | 24,94% | 15,00% | 20,80% | 25,75% | 30,00% | 12,50% | 20,05% |
| Բոլոր (31) քաղաքներ. | 11,62,, | 38,90,, | 12,56,, | 30,92,, | 23,12,, | 27,43,, | 16,42,, | 25,97,, | 22,93,, | 31,37,, | 13,90,, | 24,00,, |

Հայ ժողովուրդը, իբրև համեմատաբար ամենից շատ քաղաքային բնակչութիւն ունեցող տարրը Անդրկովկասում, բռնում է այստեղ առաջին տեղը իր տոկոսական բաժնով. Միայն մի դէպքում, 1897 թ., 9 գլխաւոր քաղաքներում (վերին շարքում) հայերը զիջում իրանց տեղը ռուսներին. Ամենահամեստ տեղը՝ թէ բոլոր քաղաքներում ընդհանրապէս և թէ գլխաւոր քաղաքներում մասնաւորապէս, բռնում են վրացիները. Բայց այստեղ ևս արտայայտւում է վերև շեշտած տենդենցը. թէ ռուսների և մասամբ վրացիների տոկոսական բաժինները քաղաքային բնակչութեան մէջ աճել են զգալիօրէն, մանաւանդ 1897 թ.: Մի կողմից ուժեղանում էր քաղաքներում կենտրոնացող հէւոր ռուսների թիւը, միւս կողմից վրացիութեան

մէջ զարգանում է հետզհետէ քաղաքային տարրը. յետընկած գաւառները և պրօլետարականացող գիւղացիութիւնը տւել են շարունակ իրանց առատ բաժինները՝ կենտրոնական վայրերում աշխատանք որոնող ու հաստատւող մասսաներին։ Հայերի և մուսուլմանների տոկոսները, ընդհակառակը, նւազել են նոյն 1897 թ., բայց յաջորդ տարեթւին (1914 թ.) հայերի տոկոսը կրկին բարձրանում է (24,94 տոկոսից հասնում է 30,00 տոկոսի 9 քաղաքներում, իսկ 27,43 տոկոսից հասնում է 31,37 տոկոսի բոլոր քաղաքներում), իսկ մուսուլմանների տոկոսը աւելի է նւազում, թէև շատ չնչին չափերով (20,80 տոկոսից իջնում է 20,05 տոկոսի վերին շարքում, իսկ 25,97 տոկոսից իջնում է մինչև 24,00 տոկոս ներքին շարքում)։

6.

## ԳԻՒՂԱՔԱՂԱՔՆԵՐ, ԱՒԱՆՆԵՐ ԵՒ ԳԻՒՂԵՐ

Վիճակագրական գործողութիւնների և գիտողութիւնների առարկայ դարձնելով մեզ յայտնի չորս գլխաւոր ժողովրդները՝ իրանց ընդհանուր քանակով, աճման տեմպով, յարաբերական տոկոսներով և սեռերի թւական յարաբերութիւններով, տերրիտորիական բոլոր բաժանումների մէջ (նահանգներում ու շրջաններում, գաւառներում ու շրջանամասերում, քաղաքներում), ցանկալի էր նոյն յարաբերութիւնները որոնել և պարզաբանել վարչական-տերրիտորիական էլ աւելի մանր միաւորների մէջ, օրինակ գաւառամասերի (участокъ) և գիւղական հասարակութիւնների (сельское общество) մէջ։ Դժբախտաբար վերջին կէտի նկատմամբ գոյութիւն ունեցող աղբիւրները թերանում են, չեն տալիս բաւարար նիւթեր։ [1])

Սակայն որպէսզի հնարաւորութիւն ունենանք գէթ մօտաւոր գաղափար կազմելու, թէ ինչպէս են դասաւորւած ժողովրդների ազգաբնակչական թւական յարաբերութիւնները գաւառական շատ աւելի խոշոր անկիւններում, մենք նպատակայարմար գտանք վիճակագրական պատկերը տալու նաև իրանց բնակչութեան թւով բիչ թէ շատ աչքի ընկնող գիւղաքաղաքների, աւանների և անգամ գիւղերի։ Թէև վիճակագրական աղբիւրները այդ կէ-

---

1) Եղած աղբիւրների մէջ համեմատաբար ամենից մանրամասը և գոհացուցիչը համարւում են 1886 թ. վերաբերեալ տւեալները, թէև սրանք նոյն իսկ ազատ չեն մասնաւոր բացերից և թւական սխալներից։ Յամենայն դէպս գաւառամասերի և գիւղական հասարակութիւնների թւական ամենալրիւ պատկերը տալիս է 1886 թ. աղբիւրը։ 1897 թ. ժողովրդագրութիւնը չի տալիս հրատ. հատորների մէջ թւական տւեալներ այդ տերրիտորիական միաւորների մասին։ Իսկ վերջին աղբիւրը՝ 1914 թւականի վերաբերեալ, տալիս է միայն ոչ լրիւ տւեալներ. նախ 1886 և 1914 թւականների գաւառամասային և մանաւանդ գիւղակ. հասարակ. բաժանումները ոչ ամեն տեղ են իրար համապատասխանում՝ թէ թւով և թէ դասաւորութեամբ, երկրորդ՝ 1914 թ. աղբիւրը չի տալիս խառը բնակչութիւն ունեցող գիւղերի բոլոր տարրերի վերաբերեալ տւեալներ, այլ միայն տալիս է քանակով գերազանցող ժողովրդի վերաբերեալ թւեր ամեն մի գիւղի մասին։

*տում են չեն տալիս լրիւ տւեալներ, այնուամենայնիւ մի կարեւոր հարցի բաւարարութիւն կարող ենք ստանալ. հետաքրքրականէ իմանալ, թէ ինչ ազգաբնակչական շարժում—աճման կամ նւազման ինչ պրոցես—է կատարւել գաւառական խուլ անկիւններում. Այդ հարցի թւական պարզաբանութիւնը ունի իր առանձին հետաքրքրութիւնը, որովհետև գիւղերը այն վերջին վարչական—մանր բաժանումներն են, ուր ազգաբնակութեան բազմացումը տեղի է ունենում գրեթէ բացառապէս բնական աճման հաշւին և որոնք կազմում են մարդկային պաշար արտադրող այն մշտաբուղխ օրրանները, որոնց հաշւին արտակարգ արագութեամբ աճում ու բազմանում են նահանգական և գաւառական կենտրոնների բնակիչները.*

*Ստորև մենք դասաւորում ենք յաջորդաբար մի շարք գիւղաքաղաքներ, աւաններ և գիւղեր, ընտրութեան հիմք ծառայեցնելով գլխաւորապէս երկու յատկանիշներ. բնակչութեան թիւը և ադմինիստրացիայի գաւառական ներկայացուցիչների կենտրոնավայր լինելու յատկութիւնը.*

*Ժողովրդների բացարձակ տւեալները գիւղաքաղաքներում, աւաններում և գիւղերում.*

## Ժողովուրդների բացարձակ տւեալները գիւղաքաղաքներում աւաններում եւ գիւղերում

*(Տես աղիւսակ երես 214 և 215)*

| Գիւղաքաղաքներ, աւաններ և գիւղեր [1] | 1886 թուականին [2] | | | | 1897 թուականին [3] | | | | 1914 թուականին [4] | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Թուրք. | Հայեր | Վրաց. | Ռուս. | Թուրք. | Հայեր | Վրաց. | Ռուս. | Թուրք. | Հայեր | Վրաց. | Ռուս. |
| Շուլավեր, Թիֆ. Բորչ. գ. | 61 | 3297 | — | — | 155 | 4095 | 94 | 134 | — | 7683 | — | — |
| Ջալալ-Օղլի, » » (հայկական) | 23 | 1558 | — | — | — | 1798 | — | — | — | 2597 | — | — |
| Ջալալ-Օղլի, » » (ռուսական) | 879 | 44 | — | — | 815 | — | — | — | — | — | — | — |
| Սուրամ » Գոր. գ. | — | 924 | 963 | — | — | 982 | 1551 | — | — | — | 1145 | — |
| Թիոնէտ » Թիոն. գ. | — | — | 1331 | — | 44 | 55 | 978 | 4 | — | — | 1030 | — |
| Ցխինվալ » Գոր. գ. | — | 675 | 1135 | — | — | 785 | 1354 | — | — | — | 4618 | — |
| Արտուին, Բաթ. Արդ. գ. | — | 4922 | 12 | 1508 | — | 4643 | 889 | 1525 | — | 7680 | — | — |
| Զուգդիդ, » Զուգ. գ. | — | — | 1078 | — | — | — | 3355 | — | — | — | 3047 | — |
| Սիմոնէտի, » Քութ. գ. | — | — | 54 | — | — | — | 4315 | — | — | | 5109 | — |
| Ցագերի, » Լեչխ. գ. | — | — | 659 | — | — | — | 669 | — | — | — | 849 | — |
| Խեթա, » » » | — | — | 6247 | — | — | — | 4743 | — | — | — | 3468 | — |
| Օնի, » Ռաչ. գ. | — | 116 | 128 | — | — | — | 410 | — | — | — | 1858 | — |
| Խոնի, » Քութ. գ. | — | — | 225 | — | — | — | 5694 | — | — | — | 6690 | — |
| Նովո-Սենակի, » Սեն. գ. | — | — | 101 | — | — | — | 1077 | — | — | — | 1214 | — |
| Խորգա, Քութ. » | — | — | 4322 | — | — | — | 4949 | — | — | — | 5574 | — |
| Կվիրիլի, » Շորապ. գ. | — | — | 139 | — | — | — | 1708 | — | — | — | 3247 | — |
| Դավալու, Եր. Եր. գ. | — | 1975 | — | 263 | — | 2559 | — | 686 | — | 2712 | — | — |
| Իգդիր, » Սուրմ. գ. | — | 2912 | — | — | — | 3934 | — | — | — | 2249 | — | — |
| Եղվարդ, » Էջմ. գ. | — | 1350 | — | — | 565 | 2108 | — | — | — | 2728 | — | — |
| Բաշ-Նորաշ., » Շ-Դար. » | — | — | — | 386 | — | — | — | 687 | — | — | — | 734 |
| Մեծ-Ղարաքիլ. » Ալ. » | — | 2686 | — | — | — | 3545 | — | — | — | 6671 | — | — |
| Փոքր » » » » | — | 3019 | — | — | — | 2575 | — | — | — | 4722 | — | — |
| Աշտարակ, Եր. Էջմ. գ. | — | 3210 | — | — | — | 3515 | — | — | — | 4867 | — | — |
| Վաղարշապատ » » գ. | — | 3422 | — | — | — | 4991 | — | — | — | 5755 | — | — |
| Օշական, Եր. » » | — | 1916 | — | — | — | 2243 | — | — | — | 3029 | — | — |
| Սարդարապատ. » » » | — | 1688 | — | — | — | 2340 | — | — | — | 2974 | — | — |
| Ուլուխանլու, » Եր. » | — | — | — | 3062 | — | — | — | 2757 | — | — | — | 3200 |
| Զագրի, » Նախ. » | — | 1101 | — | 2018 | — | 996 | — | 2352 | — | — | — | 4765 |
| Սատարակ, » Եր. » | — | — | — | 3515 | — | — | — | 4826 | — | — | — | 4130 |
| Աղդաշ, Գանձ. Ար. գ. | — | — | — | — | — | — | — | 267 | — | — | — | 1990 |
| Ջեբրայիլ, » Ջեբր. գ. | — | — | — | — | 94 | 228 | — | 186 | — | — | — | — |
| Տէրտէր, » Ջիվան. » | — | — | — | — | 65 | 120 | — | 508 | — | — | — | 468 |
| Գորիս, » Զանգ. » | 4 | 3142 | — | — | — | 2336 | — | — | — | 7297 | — | — |
| Քարվանս., » Ղազ. » | — | 1276 | — | — | — | 1624 | — | — | — | 4135 | — | — |
| Ղազախ, » » » | — | — | — | — | 245 | 805 | — | 610 | — | — | — | 1050 |
| Լեքի, » Արէշ. » | — | — | — | 1688 | — | — | — | 2010 | — | — | — | 2601 |
| Վարդաշէն, » Նուխ. » | — | 1687 | 2 | 258 | 642 | 1477 | — | — | — | 1129 | — | — |
| Հադրութ, » Ջեբր. » | — | 1870 | — | — | — | 2133 | — | — | — | 1982 | — | — |
| Դիլիջան, » » » | 45 | 990 | 6 | 4 | 583 | 1323 | — | — | — | 3136 | — | — |
| Թաղլար, » Շուշ. » | — | 2996 | — | — | — | 2849 | — | — | — | 3500 | — | — |
| Տաթև, » Զանգ. » | — | 1865 | — | 8 | — | 1963 | — | — | — | 2414 | — | — |
| Խաչմազ, » Նուխ. » | — | 1 | — | 4754 | | — | — | 4688 | — | — | — | 3887 |
| Խնձորեսկ, » Զանգ. » | — | 4219 | — | — | — | 4516 | — | — | — | 8335 | — | — |

1) Գիւղերի անուններից առաջ կրճատուած խօսքերով յիշուած են յաջորդաբար նահանգների և գաւառների անունները։

2) 1886 թ. վերաբերեալ տեղեկները տես մեզ արդէն ծանօթ աղբիւրը („Сводъ стат. данныхъ о нас. Закавк. края") համապատասխան մասերը։

3) 1897 թ. վերաբերեալ տեղեկները տես՝ „Населенныя мѣста Россійской имперіи въ 500 и болѣе жителей", Պետերբուրգ. 1905 թ., Կովկասի բաժինը և Անդրկովկ. վերաբերող մեզ յայտնի հատորները։

4) «Кавказскій календарь», հրատ. 1915 թ., ստատիստիկակ. բաժինը („Списокъ населенныхъ мѣстъ Кавказа").

| Գիւղաքաղաքներ, աւաններ և գիւղեր ¹) | 1886 թուականին | | | | 1897 թուականին | | | | 1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. |
| Նիժ, » Նուխ. գ. | 7 | 4779 ¹) | — | 503 | — | 4863 | — | 717 | — | 10655 | — | — |
| Բաշ-Գիւյնուկ, Գնձ. Ն. » | — | — | — | 5084 | — | — | — | 4846 | — | — | — | 4990 |
| Գեօկչայ, Բաք. Գեօկ. » | — | — | — | 409 | — | 294 | — | 1736 | — | — | — | 4034 |
| Մայիսան, » Ջեվ. » | — | — | — | 1217 | — | — | — | 11520 | — | — | — | 17465 |
| Բիւրզամէր, » Գեօկ. » | — | — | — | 4902 | — | — | — | 5595 | — | — | — | 6974 |
| Մադրասա, » Շամ. » | — | 2774 | — | — | — | 2876 | — | — | — | 4611 | — | — |
| Մաշտագա, » Բաք. » | — | — | — | 6179 | — | — | — | 6376 | — | — | — | — |
| Խունզախ, Դաղ. Ավա. շրջ. | — | — | — | 1741 | — | — | — | 1581 | — | — | — | 1616 |
| Բոթլիխ, » Անդ. » | — | — | — | 1105 | — | — | — | 1177 | — | — | — | 1060 |
| Գունիբ, » Գունբ. » | — | — | — | — | — | — | — | 120 | — | — | — | 351 |
| Լեվաշի, » Դարգ. » | — | — | — | 1368 | — | — | — | 1336 | — | — | — | 1062 |
| Կումուխ, » Կազ.-կում. » | — | — | — | 2900 | — | — | — | 587 | — | — | — | 2585 |
| Մաջալիս, » Կ.-Տաբ. » | — | — | — | 1481 | — | — | — | 784 | — | — | — | — |
| Ախտա, » Սամ. » | — | — | — | 5935 | — | — | — | 3189 | — | — | — | 6646 |
| Տուապսէ, Սծ. Տպս. » | — | — | — | — | 957 | — | — | — | 16158 | — | — | — |
| Սոչի, » Սոչ. » | — | — | — | — | 803 | — | — | — | 17611 | — | — | — |
| Արդահան, Կրս. Արդ. շ. | 172 | 141 | — | 416 | 1334 | 1317 | — | 879 | — | 2042 | — | — |
| Կաղզուան, » Կղզ. » | — | 1709 | — | 1764 | 2605 | 3904 | — | 2372 | — | 11145 | — | — |
| Օլթի, » Օլթ. » | 2 | 456 | — | 206 | 841 | 1056 | — | 405 | — | 3233 | | — |
| Բաշ-Շորագ., » Կրս. » | — | 1038 | — | — | — | 1417 | — | — | — | 1682 | — | — |
| Ընդամէնը ²) . . | 1193 | 63760 | 16402 | 50944 | 9748 | 76282 | 31788 | 63460 | 34581 | 118914 | 35849 | 69608 |

¹) Նուխուայ գաւառի Վարդաշէն և Նիժ գիւղերի հայ բնակիչների թիւը սխալ են հաղորդուած 1886 թ. ացրերի մէջ։ Ըստ քարտարի ցուցակագրութեան հայերի թիւը հաշուած է Վարդաշէնում 80 հոգի, իսկ ըստ գաւառական պատկանելիութեան հայ լուսաւորչականների թիւը հասնում է այնտեղ 1687 հոգու. Նոյնը և Նիժ գիւղում. առաջին դէպքում հայերի թիւը հաշուած է 28 հոգի, երկրորդ դէպքում 4779 հոգի. մի սխալ ուրիշ մեծ չափերով։ Բայց այդ սխալը անխուսափելի է եղել շնորհիւ վիճակագրական աշխատութիւնների ժամանակ կիրառուած սկզբունքի. գաւառապետերը՝ Նուխուայ դէպքում ուտիներին՝ հիմք է ծառայեցրել էթնիկական-թուական հաշուումների, ուստի Վարդաշէնի և Նիժի ուտիները հայերը չեն հաշուել հայերի թուի վրայ։

²) 1886 թ. ժողովրդների ընդհանուր թիւը եղել են ըստ բնակութեան վայրի. 1193 ռուսները եղել են 8 գիւղաքաղ. կամ գիւղերից, միջին թուով իւրաքանչ. գալիս է 149 հոգի։ Հայերը՝ 63760 հ. 32 վայրերից. իւրաքանչիւրին՝ 1992,5 հոգի։ Վրացիները՝ 16402 հ. 15 վայրերից իւրաք. 1093,5 հոգի։ Մահմեդականները՝ 50944 հ. 24 վայրերից, իւրաքանչ 2122,5 հոգի։ 1897 թ. յարաբերութիւնները դասաւորել են այսպէս 9748 հ. ռուսները եղել են 9 վայրերից կամ իւրաքանչ, մօտ 1083 հոգի։ 76282 հ. հայերը եղել են 34 վայրերից, իւրաքանչ. գալիս է 2243,6 հոգի։ 31788 վրացիները եղել են 14 վայրերից կամ իւրաքանչ. 2270,6 հոգի։ 63460 հ. մուսուլմանները եղել են 30 վայրերից, իւրաքանչ. 2115,3 հոգի։ Վերջապէս 1914 թ. թուական յարաբերութիւնները եղել են այսպէս. 34581 հ. ռուսները 3 վայրերից, իւրաք. 11527 հոգի։ 117027 հոգի հայերը եղել են 26 վայրերից, իւրաքանչ. մօտ 4501 հոգի։ 35849 հ. վրացիները 12 վայրերից, իւրաքանչ. 2987,4 հոգի։ 69608 հ. մուսուլմանները եղել են 19 վայրերից, իւրաքանչ. գալիս է 3663,6 հոգի։ Բանի գնում, այնքան, բնականօրէն, խոշորանում է գաւառական միաւորը, որովհետև աճում և բազմանում է գիւղակ. բնակչութեան թիւը։ 1886 թ. միջին թուով վերցրած մուսուլման. գիւղը եղել է ամենից խոշորը, հայերը բռնել են երկրորդ տեղը, ռուսները՝ վերջինը։ 1897 թ. առաջին տեղը գրաւել են վրացիները, երկրորդը՝ հայերը և վերջինը՝ դարձեալ ռուսները։ 1914 թ., ընդհակառակը, ռուսները բռնել են առաջին տեղը՝ շնորհիւ բացառապէս Տուապսէի և Սոչիի բնակչութեան արտակարգ աճման։ Երկրորդ տեղը բռնել են հայերը և վերջինը՝ վրացիները։ Այդպիսով երեք տարեթուերին էլ հայերը բռնել են միշտ երկրորդ կամ միջին տեղը՝ իրանց գիւղական բնակչութեան թուով։

Այս ձիգ աղիւսակը, որ ամփոփում է իր մէջ 63 գաւառական մանր միաւորների՝ գիւղաքաղաքների, աւանների և գիւղերի թւական պատկերը, տալիս է մեզ մի փոքրիկ նմուշ ժողովրդների թւական յարաբերութիւնների մասին գաւառական խուլ մասերում։ Այս աղիւսակի ամենամեծ թերութիւնը կայանում է նրանում, որ գոյութիւն ունեցող աղբիւրները չեն տալիս տւեալներ ամեն տեղ միևնոյն ժողովրդների մասին միևնոյն գիւղերում՝ երեք տարեթւերի վերաբերեալ անխտիր, որպէսզի հնարաւոր լինէր դիտել ազգաբնակչական շարժման ընթացքը—աճման կամ նւազման պրոցեսը—երեսնամեայ ժամանակամիջոցում։ Այդպիսի յաջորդականութիւն նկատւում է միայն այն տեղերում, ուր կամ ամբողջ ազգաբնակութիւնը և կամ վերջինիս մեծամասնութիւնը միատարր է՝ բաղկացած է միևնոյն ժողովրդից։ Երրորդ տարեթւի (1914) աղբիւրը ոչ մի տեղ չի յիշատակում տւեալ գիւղաքաղաքի կամ գիւղի այս կամ այն ժողովրդի փոքրամասնութիւնը, այլ տալիս է միայն ամբողջապէս միատարր կամ բացարձակ մեծամասնութիւն կազմող ժողովրդի թւական քանակը։ Շնորհիւ այդ հանգամանքի հընարաւորութիւն չկայ հետևելու միևնոյն վայրերում և պայմաններում ապրող և փոքրամասնութեան մէջ գտնւող ժողովրդների աճման ընթացքին։

Ռուսները բռնում են այդ աղիւսակի մէջ բնականօրէն շատ համեստ տեղ՝ թէ իրանց բնակութեան վայրերի և թէ բնակիչների թւով։ Անդրկովկասի խուլ անկիւնները միայնգամայն խորթ են նրանց համար։ Միակ բացառութիւնը կազմում են Տուապսէն և Սոչին, որ մեծամասնութիւն կազմող ռուսները տենդային արագութեամբ են աճել։

Մնացած ժողովրդներից ամենից շատ յիշւած են հայկական և մահմեդական, մանաւանդ հայկական բնակավայրեր, իրանց բնակչութիւններով։ Տերրիտորիական ամփոփումների և հարևանութեան ու համակեցութեան ամենամեծ չափով չփման կէտեր ունին հայերն ու մահմեդականները, ուստի ցանկալի էր իմանալ, թէ ինչ տեմպ են ունեցել նրանց աճման տենդենցները գաւառական անկիւններում։

Եթէ մենք տոկոսներով պատկերացնենք ժողովրդների աճման (ինչպէս և նւազման) տենդենցները մեզ յայտնի տարեթւերին, կստանանք հետևեալը։

(Տես աղիւսակ երես 217)

| Գիւղաքաղաքներ, աւաններ և գիւղեր | 1886—1897 թուականին | | | | 1897—1914 թականին | | | | 1886—1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուսն. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուսն. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուսն. | Հայեր | Վրաց. | Մուս. |
| Շուլավեր, Թիֆ. ն., Բորչ. գ. | 154,10% | 27,23% | — | — | — | 87,62% | — | — | — | 112,90% | — | — |
| Ջալալ-Օղլի » » » (հայկական) | — | 15,40 ,, | — | — | — | 44,43,, | — | — | — | 66,68,, | — | — |
| Ջալալ-Օղլի » » » (ռուսական) | —7,85,, | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Սուրամ » Գոր. գաւ. | — | 6,26,, | 61,06% | — | — | — | -35,45% | — | — | — | 18,90% | — |
| Թիոնէթ » Թիոն. » | — | — | -36,10,, | — | — | — | 5,32,, | — | — | — | -30,00,, | — |
| Ցխինվալ » Գոր. » | — | 16,30,, | 19,21,, | 1,13% | — | — | 241,10,, | — | — | — | 306,87,, | — |
| Արդւին, Բաթ. ն, Արդվ. գ. | — | —6,00,, | +[1]) | — | — | — | — | — | — | 56,03,, | — | — |
| Զուգդիդ, Զուգդ. » | — | — | 20,93,, | — | — | 65,41,, | 10,11,, | — | — | — | 182,70,, | — |
| Սիմոնետի, » Քութ. » | — | — | +[1]) | — | — | — | 18,40,, | — | — | — | +[3]) | — |
| Ցագերի, » Լեչխ. » | — | — | 15,17% | — | — | — | 27,00,, | — | — | — | 30,00,, | — |
| Խեթա » » » | — | — | -31,71% | — | — | — | -37,00,, | — | — | — | -89,00,, | — |
| Օնի, » Ռաչ. » | — | — | 220,31,, | — | — | — | 35,31,, | — | — | — | 135,16,, | — |
| Խոնի, » Քութ. » | — | — | 2431,00,, | — | — | — | 17,50,, | — | — | — | 2873,30,, | — |
| Նովո-Սեն. » Սեն. գ. | — | — | 966,33,, | — | — | — | 12,72,, | — | — | — | 1102,00,, | — |
| Խորգա. » » » | — | — | 14,51,, | — | — | — | 33,00,, | — | — | — | 30,00,, | — |
| Կվիրիլի, » Շոր. » | — | — | 1128,80 ,, | 160,84,, | — | — | 90,00,, | — | — | — | 2236,00,, | — |
| Դաւալու, Երև. ն., Երև. գ. | — | 30,00% | — | — | — | — | — | — | — | 37,32,, | — | — |
| Իգդիր, » Սուրմ. » | — | 35,00,, | — | — | — | 5,98,, | — | — | — | -26,50,, | — | — |
| Եղվարդ » Էջմ. » | — | 56,15,, | — | 77,97,, | — | -75,00,, | — | — | — | 102,07,, | — | — |

[1]) 1886—1897 թ. վրացիների թիւը Արդւինում աւելացել է 877 հոգով, Սիմոնետում՝ 4261 հոգով։ [2]) 1897—1914 թ. ռուսների թիւը Ջալալ-Օղլիում (ռուսական) նւազել է 3 հոգով։ [3]) 1886—1914 թ. վրացիների թիւը Սիմոնէտում աւելացել է 5055 հոգով։

| Գիւղաքաղաքներ, աւաններ և գիւղեր | 1886—1897 թուականին | | | | 1897—1914 թուականին | | | | 1886—1914 թուականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. |
| Բաշ-Նոր.Երև.Ն. Շ.-Դար. գ. | — | — | — | 77,97 % | — | — | — | 7,00% | — | — | — | — |
| Մեծ-Ղար. » Ալեքս. » | — | 32,00,, | — | — | — | 90,00,, | — | — | — | 148,40,, | — | 90,16% |
| Փ.-Ղար. » » » | — | -17,24,, | — | — | — | 83,42,, | — | — | — | 56,41,, | — | — |
| Աշտարակ » Էջմ. » | — | 10,00,, | — | — | — | 40,00,, | — | — | — | 51,62,, | — | — |
| Վաղարշ. » » » | — | 45,90,, | — | — | — | 37,35,, | — | — | — | 68,20,, | — | — |
| Օշական » » » | — | 17,06,, | — | — | — | 35,00,, | — | — | — | 58,10,, | — | — |
| Սարդար. » » » | — | 38,62,, | — | — | — | 27,10,, | — | — | — | 76,20,, | — | — |
| Ուլուխանլու » Եր. » | — | — | — | -11,06,, | — | — | — | 16,10,, | — | — | — | — |
| Ջագրի » Նախջ. » | — | -10,54,, | — | 16,55,, | — | — | — | 102,59,, | — | — | — | 4,51,, |
| Սադարակ » Եր. » | — | — | — | 37,30,, | — | — | — | -16,85,, | — | — | — | 136,12,, |
| Աղդաշ, Գանձ. Ն., Արէշ. գ. | — | — | — | — | — | — | — | 645,32,, | — | — | — | 17,50,, |
| Ջիբրայիլ » » » | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Տէրտէր » Զեվան. » | — | — | — | — | — | — | — | —8,55,, | — | — | — | — |
| Գորիս, » Զանգ. » | — | -35,00,, | — | — | — | 212,37% | — | — | — | 132,24% | — | — |
| Քարվանս. » Ղազ. » | — | 27,27,, | — | — | — | 154,62,, | — | — | — | 224,06,, | — | — |
| Ղազախ, » » » | — | — | — | — | — | — | — | 72,13,, | — | — | — | — |
| Լենքի » Արէշ. » | — | — | — | 20,00,, | — | — | — | 29,40,, | — | — | — | — |
| Վարդաշէն » Նուխ. » | — | -14,22,, | — | — | — | -48,53,, | — | — | — | -50,00,, | — | 54,09,, |
| Հադրութ, » Ջիբր. » | — | 15,13,, | — | — | — | —7,62,, | — | — | — | 6,00,, | — | — |
| Դիլիժան » » » | 1120,00% | 33.63,, | — | = | — | 130.00,, | — | — | — | 217,00,, | — | — |
| Թադլար, » Շուշ. » | — | -5,20,, | — | — | — | 23,00,, | — | — | — | 20,70,, | — | — |
| Տաթեվ, » Զանգ. » | — | 5,25,, | — | — | — | 23,02,, | — | — | — | 29,40,, | — | — |
| Խաչմազ, » Նուխ. » | — | — | — | — | — | — | — | -20,60,, | — | — | — | — |
| Խնձիրակ » Նուխ. » | — | 7.40,, | — | — | — | 84.56,, | — | — | — | 97.58,, | — | -22.31,, |

| Գիւղաքաղաքներ, աւան-ներ և գիւղեր | 1886—1897 Թւականին | | | | 1897—1914 Թւականին | | | | 1886—1914 Թւականին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուսն. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուսն. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. |
| Նիժ, Գանձ. ն., Նուխ. գ. | — | 1,80,, | — | 42,54,, | — | 117,00,, | — | — | — | 125.04,, | — | — |
| Բաշ-Գիւնուկ, » » » | — | — | — | 4,91,, | — | — | — | 3,00,, | — | — | — | —2,00,, |
| Գեօկչայ, Բագ. ն., Գեօկչ. | — | — | — | 324,45,, | — | — | — | 132,37,, | — | — | — | 886,31,, |
| Սալիան, » Ջեւդ. | — | — | — | -5,20,, | — | — | — | 60,30,, | — | — | — | 45,80,, |
| Քիւրդամիր, » Գեօկչ. | — | — | — | 14,13,, | — | — | — | 25,00,, | — | — | — | 42,30,, |
| Մատրասա, » Շեմ. | — | 3,68,, | — | — | — | 60,33,, | — | — | — | 66,30,, | — | — |
| Մաշտաղա, » Բագ. | — | — | — | 3,20,, | — | — | — | — | — | — | — | — |
| Խունզախ, Դաղ. Ավար. շր. | — | — | — | -10,12,, | — | — | — | 2,21,, | — | — | — | -7,11,, |
| Բոթլիխ, » Անդ. » | — | — | — | 6,51,, | — | — | — | -11,04,, | — | — | — | -4,24,, |
| Գունիբ, » Գունբ. » | — | — | — | — | — | — | — | 200,00,, | — | — | — | — |
| Լեվաշի » Դարգ. » | — | — | — | -2,43,, | — | — | — | -25,80,, | — | — | — | -28,80,, |
| Կումուխ » Կազ. Կում. | — | — | — | -394,03,, | — | — | — | 340,37,, | — | — | — | 12·20,, |
| Մաջալիս, » Կ.-Տաբ. | — | — | — | -88,56,, | — | — | — | — | — | — | — | — |
| Ախտա . Սամ. » | — | — | — | -85,21,, | — | — | — | 108,40,, | — | — | — | 12,00,, |
| Տուապսէ Սև.ծ. Տուապս | — | — | — | — | 1600,00% | — | — | — | — | — | — | — |
| Սոչի » Սոչ շրջ. | — | — | — | — | 2093,15% | — | — | — | — | — | — | — |
| Արդահան, Ղարս. Արդ. շրջ. | 675,50,, | 834,04,, | — | 111,30,, | — | 55,00,, | — | — | — | 1400,00,, | — | — |
| Կաղզւան » Կաղզ. » | | 128,44,, | — | 34,46,, | — | 185,50,, | — | — | — | 552,13,, | — | — |
| Օլթի, Ղարս. Օլթ. շրջ. | — | 131,58% | — | 96,60,, | — | 206,15,, | — | — | — | 609,00,, | — | — |
| Բաշ-Շորագեալ. Ղարս. » | — | 36,51,, | — | — | — | 18,70,, | — | — | — | 62,04,, | — | — |
| Ընդհանուրը՝ | 717,10% | 19,64% | 93,80% | 24,56,, | 255,00,, | 55,88,, | 11,33% | 9,70% | 2800,00% | 86,52% | 111,85% | 36,63% |

*Ընդհանուր առմամբ ժողովրդների աճման տենդենցների յարաբերութիւնները դասաւորւած են այստեղ այնպէս, ինչպէս յայտնի են մեզ տերրիտորիական աւելի մեծ միաւորներից։ Աճման տեմպի արագութեան տեսակէտից առաջին տեղը դարձեալ պատկանում է ռուսներին, և իրաւ բոլոր տարեշրջաններում՝ առաջին տարեշրջանում աւելի արագ, քան երկրորդում։ Մնացած ժողովրդների աճման ընթացքը ենթակայ է տատանումների։ Հայերը, ինչպէս մինչև այժմ մեզ յայտնի բոլոր դէպքերում, այնպէս էլ այստեղ, առաջին տարեշրջանում (1886—1897 թ.) ունեցել են ամենից նւազ աճումը (19,64 տոկ)․ վրացիների աճումը (93,80 տոկ.) գերազանցում է ոչ միայն հայերի, այլև մուսուլմանների (24,56 տոկ.) աճումից։ Երկրորդ տարեշրջանում (1897—1914 թ.), ընդհակառակը, հայերի աճման տոկոսը (55,88 տոկ.) գերազանցում է միւսներից (չհաշւելով ռուսներին)՝ վրացիների (11,33 տոկ.) և մուսուլման. (9,70 տոկ.) տոկոսներից։ Երեսնամեայ տարեշրջանում (1886—1914 թ.) արդէն աճման յարաբերութիւնները դասաւորւում են համապատասխան յիշեալ երկու շրջանների․ առաջին տեղը բռնում են անպայման ռուսները իրանց ահագին տոկոսով (2800,00 տոկոսով), երկրորդը վրացիները (111,85տոկ.), երրորդը հայերը (86,52 տոկոսով) և միայն վերջին տեղը մուսուլմանները շատ համեստ տոկոսով (36,63տոկոսով)։*

*Ինչ վերաբերում է աճման ընթացքին առանձին-առանձին գիւղաքաղաքներում, աւաններում և գիւղերում, ապա այնտեղ պատկերը խիստ զանազանակերպ է․ կան տենդային արագութեամբ աճման դէպքեր, կան չափաւոր, դանդաղ աճման դէպքեր, կան նաև ոչ սակաւ նւազման դէպքեր։ Աճման ամենամեծ տոկոսներ գտնում ենք վրացական մի քանի գիւղերում Քութայիսի նահանգից․ գիւղեր, որոնց բնակիչների թիւը 100—200 հոգի է եղել 80-ական թւականներին, հասել է մի քանի հազարի վերջին տարիներս։ Այսպէս օրինակ Նովո-Սենակին ունեցել է 1886 թ. ընդամենը 101 հոգի, իսկ 1914 թ. հասել է այդ թիւը 1214 հոգու, կամ աճել է 1102 տոկոսով։ Կվիրիլի գիւղը (Շորապ. գաւ.) ունեցել է առաջին տարեթւին 139 հոգի, իսկ վերջին տարեթւին 3247 հոգի, աճելով 2236 տոկոսով։ Էլ աւելի արագ է աճել Խոնի գիւղի բնակչութիւնը՝ 225 հոգուց հասնելով 6690 հոգու կամ աճելով 2873, 30 տոկ։ Այսպիսի հսկայական աճում, որ չեն ունեցել անգամ ռուսները Տուապսէում կամ Սոչիում, հետևանք է անշուշտ, ներքին կոլօնիզացիայի։ Նւազման դէպքեր ունեցել են վրացիները միայն երկու տեղ՝ Թիօնեթում (—30 տոկոսով) և Խեթայում (—89 տոկոսով)։ Մնացած գիւղերից աչքի են ընկնում իրանց արագ աճման տոկոսներով Ցխինվալը (306,87 տոկ.), Զուգդիդը (182,70 տոկ.) և Օնին (135,16 տոկ.)։ Այն գիւղերում, ուր հայ-վրացական խառը բնակչութիւն կայ, աճումը տալիս է տարբեր տոկոսներ․ այսպէս օրինակ Սուրամում հայերը աճել են (1886—1897 թ.) 6,26 տոկոսով, իսկ վրացիները 61,06 տոկոսով։ Իսկ Ցխինվալում նոյն տարեշրջանում հայերը աճել են 16,50 տոկոսով, վրացիները՝ 19,21 տոկոսով։*

*Աճման տոկոսների խոշորութեամբ երրորդ տեղը բռնում են հայերը։ Յիշելու են յատկապէս երեք գիւղաքաղաքներ և գիւղեր, ուր հայերը ունեցել են աճման խոշոր տոկոսներ. Արդահան (1400 տոկոս), Օլթի (609 տոկոս) և Կաղզուան (552,13)․ այսինքն այն տերրիտորիայի շրջանամասերում, ուր հայերը աւելի, քան, մի այլ տեղ, ունեցել են ազգաբնակութեան*

*արագ աճում, շնորհիւ Թիւրքահայ տարրի յայտնի ներգաղթի, որի մասին մենք խօսել ենք իր տեղում։ Այնուհետև յաջորդում են մի շարք հայկական աւաններ ու գիւղեր, ուր բնակչութիւնը երեսնամեայ շրջանում ունեցել է հարիւրից աւելի աճման տոկոսներ, այդպէս են, օրինակ, Շուլավերը (112,60 տոկ. ), Ալավերդը 102,07 տոկ.), Մեծ Ղարաքիլիսան (148,40 տոկ.) Գորիսը (132,24 տոկ.), Ղարվանսարան (224,06 տոկ.) Դիլիժանը (217 տոկ.), և Նիժը (125,04 տոկ.)։ Հայերը ևս ունեցել են նուազման միայն երկու դէպք. Վարդաշէնում (—50 տ ) և Իգդիրում (—29,50)։ Մնացած տեղերում աճումը եղել է չափաւոր։ Աճման մինիմում տոկոսը եղել է հայերի մօտ 6 տոկ. (Հադրութ գիւղում) իսկ վրացիների մօտ 30 տոկ. (Խորգա գիւղում)։*

*Մուսուլմանները իրանց աճման տոկոսով բռնում են վերջին տեղը։ Միայն մի տեղ ունեն նրանք խոշոր տոկոս՝ Գեօկչայում (886,31 տոկոս.) միւս տեղերից աչքի են ընկնում Զագրի (136,12 տոկ.) և Բաշ-Նորաշէն (90,16 տոկ.)։ Բազմաթիւ են մուսուլմանների մօտ նուազման դէպքերը. մանաւանդ Դաղստանի շրջանում, ուր յիշատակուած հինգ տոկոսներից չորսը մինուսներ են։ Հէնց մեծ մասամբ այդ մինուսների շնորհիւ է (Դաղըստանի շրջանում), որ մուսուլմանների աճման տոկոսը. ընդհանուր առմամբ, այնքան նուազ է, թէև մինուսներ կան նաև ուրիշ գիւղերում Դաղըստանից դուրս, ինչպէս օրինակ Խաչմազում և Բաշ-Գիւլնուզում։*

*Բերած գիւղաքաղաքները և գիւղերը հատընտիր օրինակներ են, որոնք միայն մօտաւոր գաղափար են տալիս գաւառական փոքրիկ միաւորների ազգաբնակչական յարաբերութիւնների մասին։ Այդ նմուշները չեն արտայայտում ճշգրիտ տենդենցը գաւառական ընդհանուր ազգաբնակութեան այն աճման տեմպի, որի հետ մենք ծանօթացանք իր տեղում։ Բերած օրինակների մեծ մասը ներկայացնում են վարչական մանր կենտրոններ գաւառական խուլ անկիւններում. դրանց մէջ առանձնապէս աչքի են ընկնում վրացական կենտրոնները (օրինակ Կվիրիլլի. Նովո-Սենակի, Օնի և այլն), որոնց բնակչութիւնը աւելի արագ և մեծ չափերով, քան միւս ժողովրդների վարչական գաւառական կենտրոններում, աճել ու բազմացել է, թէև ընդհանուր առմամբ այդ կենտրոնների բնակչութիւնը թւով շատ համեստ տեղ է բռնում, շատ աւելի փոքրաթիւ է, քան հայկական Շուլաւէրը Վաղարշապատը կամ Իգդիրը։*

## 7.

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՂԻՒՍԱԿՆԵՐ

*Մենք աւարտեցինք մեր աշխատութեան առաջին բաժնի II գլուխը և դրանով նաև ամբողջ առաջին բաժինը։ Սակայն որպէսզի դիւրութիւն տանք մեր ընթերցողներին վիճակագրական գործողութիւնների ցրուած արդիւնքներից մի ընդհանուր գաղափար կազմելու, մենք նպատակայարմար ենք գտնում այդ արդիւնքները, որոնց մասին հարկաւոր բացատրութիւնները տուել ենք իր տեղում առանձին-առանձին, համախմբել ընդհանուր աղիւսակների մէջ։ Երեսնամեայ ձիգ շրջանն է միայն (1886—1914 թ.)՝ առանց ստորաբաժան տարեշրջանների, որ ի նկատի կառնենք այստեղ։ Կյիշատակենք ժողովրդների ազգաբնակչական յարաբերութիւնների միայն երկու մոմենտները՝ աճման տոկոսները և տոկոսական բաժինները ազգաբնակութեան ընդհանուր թւի մէջ։ Բերենք առանձին-առանձին աղիւսակներ նահանգների և շրջանների, գաւառների [illegible] անամասերի, ապա քաղաքների վերաբերեալ և այնուհետև այդ բ[illegible]փոփուած մի առանձին մեծ աղիւսակի մէջ։*

*Ահա այդ աղիւսակները [illegible] միւս եր.)*

# Ա. ԱՂԻՒՍԱԿ

Ժողովրդների երեսնամեայ աճման (կամ նւազման) տոկոսները նահանգներում և շրջաններում

| | 1886—1914 տարիներին | | | | | Տարեկան աճումը | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուսներ | Հայեր | Վրացիներ | Մուսուլմաններ | Ընդհանուր ազգաբնակ. միջ. աճումը | Ռուսներ | Հայեր | Վրացիներ | Մուսուլմաններ | Ընդհան. ազգաբն. միջ. աճ. |
| 1. Թիֆլիսի նահանգ | 245,15% | 104,56 » | 43,13 » | 46,41% | 69,35% | 8,75% | 3,73% | 1,54% | 1,66% | 2 |
| 2. Քութայիսի » | 950,00 » | 178,50 » | 41,20 » | 64,40 » | 54,00 » | 34,00 | 6,37 | 1,47 | 2,30 | |
| 3. Երևանի » | 295,00 » | 62,90 » | — | 47,22 » | 55,74 » | 10,58 | 2,24 | — | 1,70 | |
| 4. Գանձակի » | 353,00 » | 53,61 » | — | 60,00 » | 59,93 » | 12,60 | 1 56 | — | 2,15 | 2, |
| 5. Բագւի » | 304,03 » | 104,70 » | — | 40,77 » | 65,86 » | 10,86 | 3,74 | — | 1,45 | 2,3 |
| 6. Սև-Ծովեան » | 1142,73 » | 1627,63 » | — | 512,00 » | 973,00 » | 40,81 | 58,3 | — | 18,30 | 34,75 |
| 7. Դաղստանի շրջան | 572,93 » | 359,00 » | — | 10,70 » | 18,47 » | 20,46 | 12,82 | — | 0 38 | 0,66 » |
| 8. Ղարսի » | 84,85 » | 209 83 » | — | 82,17 » | 124,78 » | 3,03 | 7 49 | — | 2 93 | 4,45 » |

## ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ A. ԵՒ B. ԱՂԻՒՍԱԿՆԵՆԻ.

*Այս աղիւսակների մէջ բերուած տոկոսները ծանօթ են արդէն մեր ընթերցողներին՝ մինչև այստեղ ցոյց տուած վիճակագրական գործողութիւններից։ Այս աղիւսակների մէջ աւելացրած են մի կողմից՝ ժողովրդների տարեկան աճման տոկոսները (A աղիւսակ), իսկ միւս կողմից՝ մնացած ժողովրդների (բացի ռուսներից, հայերից, վրացիներից և մուսուլմաններից) տոկոսական բաժինը ընդհանուր ազգաբնակութիւնից (B աղիւսակ)։ Այդ լրացումները աւելի են շօշափելի դարձնում մեզ յայտնի ժողովրդների աճման և թւական-տոկոսական յարաբերութիւնները։*

*Ըստ ժողովրդների երեսնամեայ աճման տեմպի ընականօրէն դասաւորւել են նաև նրանց տարեկան աճման յարաբերութիւնները։ Ռուսների աճման տեմպը իր արագութեամբ գերազանցում է միւս ժողովրդների աճման տեմպից, ինչպէս և ընդհանուր ազգաբնակութեան միջին աճումից. այդ գերազանցումը պահպանում է ռուս տարրը Անդրկովկասի բոլոր տերրիտորիական մասերում, բացի Ղարսի շրջանից։ Միւս կողմից նոյն ռուս տարրը կազմում է, ինչպէս մեզ յայտնի է, յիշեալ տերրիտորիական մասերում ընդհանուր ազգաբնակութեան չնչին մասը, բացի Սև-Ծովեան նահանգից, ուր ռուսները բացարձակ մեծամասնութիւն են կազմում (1886 թ., (58,80 տոկ., իսկ 1914 թ. 68,10 տոկ.)։*

*Ինչ վերաբերում է հայերին, ապա նրանց աճումը եւս (երեսնամեայ և տարեկան) գերազանցում է ընդհանուր ազգաբնակութեան միջին աճումից բոլոր տերրիտորիական մասերում, բացի Գանձակի նահանգից։ Ընդհանուր առմամբ հայերի աճման տեմպի արագութիւնը բռնում է երկրորդ տեղը (ռուսների աճման տեմպից յետոյ), իսկ Սև-Ծովեան նահանգում և Ղարսի շրջանում՝ անգամ առաջին տեղը։ Բնորոշ է այն հանգամանքը, որ Անդրկովկասի երկու խոշոր կենտրոններ ունեցող մասերում՝ Թիֆլիսի և Բագւի նահանգներում, հայերի աճման տեմպը գրեթէ հաւասար արագութեամբ է եղել՝ Թիֆլիսի նահանգում 104,56 տոկ. (տարեկան 3,73 տոկոս), իսկ Բագւի նահանգում 104,70 տոկ. (տարեկան 3,74 տոկ.)։ Ինչ վերաբերում է հայերի տոկոսական բաժնին, ապա նրանք բացարձակ մեծամասնութիւն կազմում են միայն, ինչպէս մենք գիտենք, Երևանի նահանգում (1886 թ. 54,70 տոկոս, 1914 թ. 57,30)։ Հայերի տոկոսական բաժինը աճել է 2,60 տոկոսով։*

*Վրացիների աճման տեմպը իրանց բուն հայրենիքում եղել է համեմատաբար դանդաղ՝ ընդհանուր ազգաբնակութեան միջին աճումից աւելի թոյլ. Թիֆլիսի նահանգում 43,13 տոկ. (տարեկան 1,54 տոկ.,) իսկ Քութայիսի նահանգում 41,20 տոկ. (տարեկան 1,47 տոկ.)։ Վրացիները եւս միայն մի տեղ են բացարձակ մեծամասնութիւն կազմում՝ Քութայիսի նահանգում (1886 թ. 85,71 տոկ., 1914 թ. 78,75 տոկ.)։ Վրացիների տոկոսը նւազել է մօտ 7 տոկոսով։*

*Մուսուլմանների աճումը եղել է աւելի արագ, քան վրացիներինը, և գերազանցել է ընդհանուր ազգաբնակութեան միջին աճումից երկու մասերում՝ Քութայիսի նահանգում (64,40 տոկ., տարեկան 2,30 տոկ.) և Գան-*

*ձակի նահանգում (60,00 տոկ., տարեկան 2,15 տոկ.)։ Երեք տերրիտ. մասերում մուսուլմանները կազմում են ապահով մեծամասնութիւն՝ Գանձակի նահ. (1886 թ. 61,48 տոկ., 1914 թ. 61,44 տոկ.), Բագուի նահ. (1886 թ. 84,65 տոկ., 1914 թ. 71.86 տոկ.) և Դաղստանի շրջանում (1886 թ. 97,40 տոկ., 1914 թ. 91,00 տոկ.)։ Երեք մասերում էլ, յատկապէս Բագուի նահ. և Դաղստ. շրջանում, նւազել է մուսուլմանների մեծամասնութիւն կազմող տոկոսը։*

*Ինչ վերաբերում է չորս գլխաւոր ժողովրդների տոկոսական բաժինների ընդհանուր թւին, ապա վերջինս բացարձակ մեծամասնութիւն կազմում է անխտիր բոլոր նահանգներում և շրջաններում, անշուշտ տարբեր չափերով ու մեծութիւններով։ Ամենաբարձր աստիճանին հասնում է այդ թիւը Քութայիսի նահանգում (1886 թ.), ուր չորս ժողովրդների տոկոսները միասին վերցրած հասնում է 98,66 տոկոսի, իսկ մնացած ժողովրդները կազմում են մի չնչին մասը՝ 1,34 տոկոսը, ընդհանուր ազգաբնակութեան։ Ընդհակառակը, Սև-Ծովեան նահանգում մնացած ժողովրդների տոկոսը հասնում է ամենաբարձր կէտին, այն է 28,22 տոկոսի (նոյն թւականին), իսկ գլխաւոր ժողովրդների տոկոսները իջնում են ամենացածր աստիճանը՝ 71,78 տոկոսի։ 1914 թւականին չորս գլխաւոր ժողովրդների տոկոսական բաժինների մաքսիմումը հասնում է 98,80 տոկոսի Գանձակի նահանգում, իսկ մինիմումը՝ 77,97 տոկոսի, Ղարսի շրջանում։ Ճիշտ հակառակ դասաւորութիւնն են ունենում մնացած մանր ժողովրդական գրուպպաները. Գանձակի նահանգում՝ 1,20 տոկ. (մինիմում), իսկ Ղարսի շրջանում 22,03 տոկ. (մաքսիմում)։ Տերրիտորիական միւս մասերում մնացած մանր ժողովրդական գրուպպաները շատ չնչին տոկոս են կազմում, համեմատաբար աչքի են ընկնում նրանց տոկոսը Թիֆլիսի (10,54 տ.) և Սև-Ծովեան (15,40 տոկոս) նահանգներում։*

*(Տես աղիւսակ երես 226—227)*

# Ը. ԱՂԻՒՍԱԿ

## Ժողովրդների երեսնամեայ աճման (կամ նուազման) տոկոսները գաւառներում և շրջաններում

| | Գաւառներ և շրջաններ | 1886—1914 Թուականին: Ռուս. | Հայեր | Վրացիներ | Մուսուլ. | Ընդ. ազգ. միջ. աճումը | Տարեկան աճումը (կամ նուազումը): Ռ. | Հ. | Վ. | Մ. | Ընդ. ազգեր. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Թիֆլիսի նահանգ | Թիֆլիս. գաւ. | 367,00% | 206,18% | 125,30% | 241,50% | 215,14% | 13,11 | 7,36 | 4,47 | 8,62 | 7,68% |
| | Ախալքալ. | 7,65 ,, | 74,63 ,, | 84,33 ,, | 40,00 ,, | 64,50 ,, | 0,27 | 2,66 | 3,12 | 1,40 | 2,30 ,, |
| | Ախալցխ. | — | 80,50 ,, | —200,00 ,, | 66,00 ,, | 63,25 ,, | — | 2,87 | —7,14 | 2,36 | 2,26 ,, |
| | Բորչալ. | 88,00 ,, | 98,80 ,, | — 36,80 ,, | 216,32 ,, | 71,22 ,, | 3,14 | 3,53 | —1,31 | 7,72 | 2,54 ,, |
| | Գորու | 200,00 ,, | 38,14 ,, | 50,66 ,, | — | 30,75 ,, | 7,14 | 1,36 | 1,81 | — | 1,07 ,, |
| | Դուշեթի | — | 139,38 ,, | 35,50 ,, | 19,31 ,, | 16,74 ,, | — | 5,00 | 1,26 | 0,70 | 0,60 ,, |
| | Սիգնախի | 329,00 ,, | 44,29 ,, | 49,22 ,, | 105,05 ,, | 60,00 ,, | 11,75 | 1,60 | 1,76 | 3,75 | 2,14 ,, |
| | Թելաւի | — | —34,06 ,, | 20,41 ,, | 2,69 ,, | 14,91 ,, | — | —1,21 | 0,74 | 0,09 | 0,53 ,, |
| | Թիօնեթի | — | 424,00 ,, | 25,07 ,, | 44,00 ,, | 29,07 ,, | — | 15,14 | 0,90 | 1,70 | 1,53 ,, |
| | Զաքաթալ. շրջ. | — | 476,20 ,, | —156,30 ,, | 8,53 ,, | 13,35 ,, | — | 17,10 | —5,70 | 0,34 | 0,47 ,, |
| Քութայիսի նահանգ | Քութայիսի գաւ. | 643,00 ,, | —28,62 ,, | 38,35 ,, | 100,00 ,, | 47,90 ,, | 23,00 | —1,22 | 1,37 | 3,60 | 1,71 ,, |
| | Շորապ. | — | 550,37 ,, | 50,00 ,, | — | 40,00 ,, | — | 20,00 | 1,78 | — | 1,43 ,, |
| | Ռաչինսկ. | — | 114,65 ,, | 45,22 ,, | — | 25,70 ,, | — | 4,09 | 1,61 | — | 1,02 ,, |
| | Լեչխ. | — | 153,57 ,, | 30,00 ,, | — | 31,30 ,, | — | 5,48 | 1,07 | — | 0,90 ,, |
| | Սենակի | — | — | 40,78 ,, | — | 50,00 ,, | — | — | 1,46 | — | 1,80 ,, |
| | Զուգդիդ | — | — | 25,00 ,, | — | 25,18 ,, | — | — | 0,90 | — | 0,90 ,, |
| | Օզուրգ. | — | — | 49,14 ,, | — | 46,63 ,, | — | — | 1,76 | — | 1,66 ,, |
| | Բաթումի շրջ. | 588,34 ,, | 134,00 ,, | 86,05 ,, | — 51,32 ,, | 93,84 ,, | 21,12 | 4,80 | 3,07 | —1,83 | 3,35 ,, |
| | Արդուինի | — | 42,76 ,, | — | 25,50 ,, | 34,00 ,, | — | 1,53 | — | 0,91 | 1,21 ,, |
| | Սուխումի | 2141,40 | 1623,72 ,, | 550,40 ,, | 375,00 ,, | 180,00 ,, | 76,48 | 58,00 | 19,66 | 13,40 | 6,43 ,, |
| Երևանի նահանգ | Երևանի | 538,18 ,, | 69,24 ,, | — | 41,68 ,, | 55,43 ,, | 19,21 | 2,47 | — | 1,49 | 1,98 ,, |
| | Ալէքսանդր. | 628,18 ,, | 60,79 ,, | — | 64,49 ,, | 64,54 ,, | 22,43 | 2,17 | — | 2,30 | 2,31 ,, |
| | Նախիջ. | — | 51,35 ,, | — | 68,13 ,, | 62,07 ,, | — | 1,83 | — | 2,43 | 2,21 ,, |
| | Նոր-Բայազ. | 93,10 ,, | 70,00 ,, | — | 66,64 ,, | 68,73 ,, | 3,32 | 2,50 | — | 2,38 | 2,45 ,, |
| | Սուրմալ. | — | 41,36 ,, | — | 35,64 ,, | 40,00 ,, | — | 1,48 | — | 1,27 | 1,40 ,, |
| | Շար.-Դար. | — | 51,65 ,, | — | 31,71 ,, | 37,73 ,, | — | 1,84 | — | 1,13 | 1,34 ,, |
| | Էջմիածին | — | 50,30 ,, | — | 42,61 ,, | 48,19 ,, | — | 1,80 | — | 1,52 | 1,72 ,, |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գանձակի » | Գանձակի նահ. | 247,74,, | 65,13,, | — | 75,76,, | 101,80,, | 8,84,, | 2,33 | — | 2,71 | 3,63,, |
| Արեշի » | | — | 36,83,, | — | 71,50,, | 65,60,, | — | 1,31 | — | 2,55 | 2,34,, |
| Ջիբրայելի » | | — | 110,80,, | — | 103,13,, | 96,00,, | — | 4,00 | — | 3,70 | 3,43,, |
| Ջևանշիրի » | | — | 24,90,, | — | 0,68 , | 36,00,, | — | 0,90 | — | 0,02 | 1,30,, |
| Զանգեզուրի » | | 257,35,, | 56,56,, | — | 79,45,, | 69,32,, | 9,19,, | 2,02 | — | 2,84 | 2,47,, |
| Ղազախի » | | 262,71,, | 81,58,, | — | 33 80,, | 58,20,, | 9,38,, | 2,91 | — | 1,21 | 2,08,, |
| Նուխու » | | — | 63,90,, | — | 44,33,, | 43,02,, | — | 2,28 | — | 1,70 | 1,53,, |
| Շուշու » | | 1640,00,, | 30,34,, | — | 46,28,, | 41,03,, | 58.57,, | 1,08 | — | 1,65 | 1,46,, |
| Բաքուի » | Բաք. նահ. | 369,50,, | 185,75,, | — | 126,40,, | 188,34,, | 13,20,, | 6,63 | — | 4,51 | 6,73,, |
| Գեօկչայի » | | 104,28,, | 33,79,, | — | 80,62,, | 73,82,, | 3.72,, | 1,21 | — | 2,88 | 2,63,, |
| Ջավադի » | | 8500,00,, | — | — | 12,55,, | 39,41,, | 303,60,, | — | — | 0,44 | 1,40,, |
| Ղուբայի » | | 179,76,, | —10,76,, | — | 0.91,, | 5,80,, | 6,42,, | —0,38 | — | —0,03 | 0,21,, |
| Լենքորանի » | | 170,00,, | 495 65,, | — | 42,00,, | 52,85,, | 6,07,, | 17,70 | — | 1,50 | 1,88,, |
| Շամախու » | | 87,35,, | 40,00,, | — | 30,00,, | 36,13,, | 3,12,, | 1,43 | — | 1,07 | 1,29,, |
| Նովոռոս. շրջ. | Սև-ծով. նահ. | 800,00,, | — | — | — | 843,57,, | 28,57,, | — | — | — | 30,13,, |
| Տուապսեի » | | 811,06,, | — | — | 387,20,, | 670,00,, | 29,00,, | — | — | 13,83 | 24,00,, |
| Սոչիի » | | 10556,87,, | — | 1820,00,, | 519.00,, | 1813,70,, | 377,03,, | — | 65,00 | 18,53 | 64,77,, |
| Թ.-Խ.-Շուր. շ. | | 1332,90,, | — | — | 29,05,, | 62,30,, | 47,60,, | — | — | 1,03 | 2,23,, |
| Ավարսկի » | Դաղստանի շրջ. | — | — | — | 1,10,, | 2,18,, | — | — | — | 0,04 | 0,07,, |
| Անդիյսկի » | | — | — | — | 20,30,, | 20,52,, | — | — | — | 0,72 | 0,73,, |
| Գունիբի » | | — | — | — | 27,70,, | 28,34,, | — | — | — | 1,00 | 1,01,, |
| Դարգինի » | | — | — | — | 2,30,, | 2,34,, | — | — | — | 0,08 | 0,08,, |
| Կազի-Կումի » | | — | — | — | —1,29,, | —1,22,, | — | — | — | 0,05 | 0,04,, |
| Կայտ.-Տաբ. » | | — | — | — | 23,60,, | 24,00,, | — | — | — | 0,84 | 0,86,, |
| Կյուրինի » | | — | — | — | 3,74,, | 6,21,, | — | — | — | 0,13 | 0,22,, |
| Սամուրի » | | — | — | — | 4,07,, | 5,00,, | — | — | — | 0,14 | 1,18,, |
| Ղարսի » | Ղարսի մարզ շրջան | 64,26,, | 225,00,, | — | 99,54,, | 129,20,, | 2,28,, | 8,00 | — | 3,55 | 4,61,, |
| Արդահանի » | | 191,60,, | 1111.08,, | — | 119,00,, | 115,42,, | 6,84,, | 39,68 | — | 4,25 | 4,12,, |
| Կաղզվանի » | | — | 160,00,, | — | 97,25,, | 136,60,, | — | 5,07 | — | 3,47 | 4,88,, |
| Օլթիի » | | — | 185,64 , | — | 94,30,, | 107,40,, | — | 6,63 | — | 3,37 | 3,83,, |

## ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ Ը· ԱՂԻՒՍԱԿԻ·

Այս մեծ աղիւսակի մէջ համախմբուած են աւելի մանր տերրիտորիական միաւորների— գաւառների և շրջանամասերի—ազգաբնակչական հատուածների աճման (կամ նուազման) տոկոսները։ Այդ տերրիտորիական միաւորները՝ թւով 57, առանձին-առանձին աղիւսակներով, ըստ նահանգների և շրջանների դասաւորուած, յայտնի են արդէն մեր ընթերցողներին այս գլխի նախկին մասերից։ Այստեղ ևս երեսնամեայ աճման տոկոսներին կցուած են ժողովրդների տարեկան աճման տոկոսները։

Ինչպէս նահանգներում և շրջաններում, նոյնը և, բնականօրէն, գաւառներում ու շրջանամասերում աճման ամենաարագ տեմպ ունեցել են ռուսները։ Սրանց աճման տոկոսները՝ մեծագոյն մասերով, հասնում են հարիւրների, մի քանի տեղերում՝ հազարների (օր. Սուխումի շրջ. Շուշւայ և Ջաւաղի գաւառներում, ինչպէս և Թեմիր-Խան-Շուրայի շրջ.) և նոյն իսկ անցնում է տասը հազարից (օր. Սոչիի շրջ. 10556,87 տոկոսով տարեկան 377,03 տոկոսով)։ 57 վայրերից միայն չորս տեղ (օր. Ախալքալաքի, Նոր-Բայազէտի, Շամախու գաւառներում և Ղարսի շրջանամասում) ռուսների աճման տոկոսները պակաս են հարիւրից։ Ամենաթոյլ աճում ունեցել են նրանք Ախալքալաքի գաւառում (7,65 տոկոսով տարեկան 0,27 տոկոսով)։

Այդպիսի ծայրահեղ բևեռներ աճման տոկոսների չենք գտնում միւս ժողովրդների մօտ։

Հայերի մօտ աճման տոկոսների մաքսիմումը անցնում է հազարի սահմաններից (օր. Սուխումի շրջ.՝ 1623,72 տոկոսով, տարեկան 58,00 տոկոսով և Արդահանի շրջ.՝ 1111,08 տոկոսով, տարեկան 39,68 տոկոսով)։ Հայերի աճման տոկոսների մինիմումը հասնում է 36,83 տոկոսի (տարեկան 1,31 տոկոսի) Արէշի գաւառում և 38,14 տոկոսի (տարեկան 1,36 տոկոսի) Գօրու գաւառում։ Բայց հայերը ունեցել են նաև նուազման տոկոսներ, ինչպէս են Թելաւի (—34,06 տոկոսով, տարեկան—1,21 տոկոսով), Քութայիսի (—28,62 տոկ., տարեկան—1,22 տոկոսով) և Ղուբայի (—10,76 տոկոսով, տարեկան—0,38 տոկոսով) գաւառներում, ասել է ընդամէնը երեք վայրերում։ Շատ տեղերում (13 վայրերում) հայերի աճման տոկոսները անցել են հարիւրի սահմաններից։ Մնացած մասերում աճումը եղել է աւելի քան բաւարար։ Աճման տոկոսների բերած օրինակներից տեսանք, որ ոչ մի տեղ հայերի աճման տեմպը չի իջնում 1 տոկոսից (մինիմումը հաւասար է 1,31 տոկոսի), չհաշուելով ի հարկէ նուազման երեք դէպքերը։

Վրացիների մօտ ևս աճման տոկոսների մաքսիմումը անցնում է 1000-ից (օր. Սոչիի շրջ.՝ 1820,00 տ.-ով տարեկան 65 տ.) և իրաւ աւելի բարձր մաքսիմում, քան հայերի մօտ։ Բայց միւս կողմից վրացիների աճման տոկոսների մինիմումը (օր. Թելաւի գաւ. 20,41 տոկոսով կամ տարեկան 0,74 տոկոսով) աւելի ցածր է, քան հայերինը։ Երեք վայրերում (Թելաւի, Թիօնէտի և Զուգդիտի գաւառներում) վրացիների տարեկան աճումը իջնում է 1 տոկոսից (0,74 տոկ., 0,90 տոկ. և 0,90 տոկ.)։ Վրացիների մօտ ևս եղել են նուազման դէպքեր դարձեալ երեք վայրերում, բայց աւելի մեծ տոկոսներով, քան հայերի մօտ։ Այսպէս, օրինակ, նրանք նուազել են Ախալցխայի

(—200,00 տոկոսով, տարեկան—7,14 տոկոսով), Բորչալուի (—36,80 տոկոսով, տարեկան—1,31 տոկոսով) գավ. և Զաքաթալայի շրջ.(—156,30 տոկոսով, տարեկան—5,70 տոկոսով)։ Միայն երկու տեղ (Թիֆլիսի գավ. և Սուխումի շրջ.) վրացիների աճման տոկոսները անցնում են հարյուրի սահմաններից։

Մուսուլմանների մոտ աճման թռիչքը ավելի չափավոր է, մաքսիմումը հասնում է 519,00 տոկոսի (տարեկան 18,53 տոկոսի) Սոչիի շրջ., իսկ մինիմումը իջնում է շատ ավելի վար, քան որև է այլ ժողովրդի մոտ, օր. 0,68 տոկոսի (տարեկան 0,02 տոկոսի) Ջիվանշիրի գավ., կամ 1,10 տոկոսի (տարեկան 0,04 տոկոսի) Ավարսկիի շրջ.։ Մուսուլմանները ևս ունեն երեք տեղերում (Բաթումի, Կազի-Կումուխի շրջ. և Ղուբայի գավ.) նվազման դեպքեր, բայց շատ ավելի նվազ տոկոսներով, քան վրացիների մոտ։ Տասը վայրերում մուսուլմանների աճման տոկոսները անցնում են հարյուրի սահմաններից։ Մնացած տեղերում, բացի Դաղստանի շրջանի շրջանամասերից, բավարար են նրանց աճման տոկոսները։

Ընդհանուր ազգերն. միջին աճման համեմատության նկատմամբ կարելի է ասել հետևյալը. ռուսները գերազանցում են միջին աճման տոկոսներին ամենուրեք, բացի երեք վայրերից (Ախալքալ. գավառից, Նովոռոսիյսկի և Ղարսի շրջանամասերից)։ Հայերի աճման տոկոսները գերազանցում են միջին աճման տոկոսներին 26 վայրերում, վրացիներինը՝ 9 վայրերում, իսկ մուսուլմաններինը 16 վայրերում։

(Տես աղյուսակ երես 230—231)

## Դ. ԱՂԻՒՍԱԿ

Ժողովրդների տոկոսական բաժինը գաւառական եւ շրջանամասային ընդհանուր ազգաբնակութիւնից.

| | | 1886 Թուականին | | | | | 1914 Թուականին | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ռուսներ | Հայեր | Վրացիներ | Մուսուլմաններ | Մնացած ժողովրդ. | Ռուսներ | Հայեր | Վրացիներ | Մուսուլմաններ | Մնացած ժողովրդ. |
| Թիֆլիսի նահանգ | 1. Թիֆլիսի գաւառ | 13,68% | 34,08% | 40,08% | 5,78% | 6,38% | 20,26% | 33,12% | 28,54% | 6,25% | 11,83% |
| | 2. Ախալքալ. » | 10,46 | 72,70 | 5,86 | 10,70 | 0,28 | 6,84 | 77,18 | 6,57 | 9,17 | 0,24 |
| | 3. Ախալցխ. » | 0,31 | 25,58 | 39,44 | 27,42 | 17,25 | 0,83 | 28,29 | 8,22 | 55,00 | 7,66 |
| | 4. Բորչալ. » | 5,91 | 37,14 | 4,08 | 32,43 | 20,44 | 6,28 | 43,03 | 1,74 | 30,03 | 18,92 |
| | 5. Գորու » | 0,54 | 10,12 | 56,62 | — | 32,72 | 1,23 | 10,58 | 65,21 | — | 22,98 |
| | 6. Դուշէթի » | — | 5,76 | 69,71 | 0,50 | 25,03 | 0,83 | 11,81 | 80,79 | 0,50 | 6,07 |
| | 7. Սիգնախի » | 2,12 | 11,33 | 82,54 | 4,00 | 0,01 | 5,71 | 10,27 | 77,40 | 5,11 | 1,37 |
| | 8. Թելաւի » | — | 19,21 | 77,67 | 2,83 | 0,29 | 0,49 | 12,57 | 84,00 | 2,58 | 0,36 |
| | 9. Թիօնեթի » | — | 0,70 | 92,90 | 4,89 | 1,51 | 0,22 | 2,77 | 90,24 | 5,45 | 1,32 |
| | 10. Զաքաթալ. շրջ. | — | 0.70 | 14,23 | 82,35 | 2,72 | 0,46 | 3,54 | 6,20 | 89,64 | 0,16 |
| Քութայիսի նահանգ | 11. Քութայիսի գաւ. | 0,82 | 1,23 | 95,60 | — | 2,35 | 4,12 | 0,64 | 89,89 | — | 5,35 |
| | 12. Շորապ. » | — | 0,36 | 90,26 | — | 9,38 | 0,39 | 1,70 | 96,57 | 0,43 | 0,91 |
| | 13. Րաչինսկ. » | — | — | 93,67 | — | 6,33 | — | 0,30 | 98,47 | — | 1,23 |
| | 14. Լեչխ. » | — | — | 98,64 | — | 1,36 | — | 0,58 | 97,71 | — | 1,71 |
| | 15. Սենակի » | — | — | 99,53 | — | 0,47 | 3,10 | 1,09 | 94,00 | — | 1,81 |
| | 16. Զուգդիդի » | — | — | 99,99 | — | 0,01 | — | — | 99,50 | — | 0,50 |
| | 17. Օզուրգ. » | — | — | 98,00 | — | 2,00 | 0,70 | — | 99,27 | — | 0,03 |
| | 18. Բաթումի » | 2,87 | 6,30 | 73,32 | 4,86 | 12,65 | 10,56 | 7,46 | 69.22 | 6.07 | 6,69 |
| | 19. Արդւինի » | — | 14,83 | 33,95 | 50,34 | 0,88 | 1,23 | 15,80 | 25,35 | 57.30 | 0,32 |
| | 20. Սուխումի » | 1,43 | 1,53 | 6,14 | 6.14 | 84,76 | 11,41 | 9,42 | 14,30 | 10,45 | 54,42 |
| Երեւանի նահ. | 21. Երեւանի » | 0,33 | 38,35 | — | 60,05 | 1,27 | 1,34 | 41,72 | 1.24 | 54,73 | 0,97 |
| | 22. Ալէքսանդր. » | 0,75 | 91,76 | — | 4,13 | 3,36 | 3,33 | 90,00 | — | 4,02 | 2,65 |
| | 23. Նախիջ. » | 0,22 | 42,10 | — | 57,67 | 0,01 | 0,62 | 39,35 | — | 59,70 | 1,83 |
| | 24. Նոր-Բայազ. » | 2,47 | 66,40 | — | 30,60 | 1.53 | 2,83 | 66.33 | — | 30,21 | 1,33 |
| | 25. Սուրմ. » | — | 31,09 | — | 59,40 | 9,61 | 0,40 | 31,54 | — | 57,82 | 11,24 |
| | 26. Շարուր-Դար. » | — | 27,70 | — | 72,00 | 0,30 | 0,14 | 30,47 | — | 68,80 | 0,43 |
| | 27. Էջմիածնի » | — | 63,74 | — | 35,55 | 0,71 | 0,21 | 64,70 | — | 34,88 | 0,21 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 28. Գանձակի ,, | Գանձակի նահ. | 4,38 ,, | 29,06 ,, | — | 64,91,, | 1,65 ,, | 7,55 „ | 24,00 „ | 0,36 „ | 60,00 „ | 8,09 . |
| 29. Արէշի ,, | | — | 23,68 ,, | — | 76,27,, | 0,05 ,, | 1,22 . | 19,56 „ | — | 79,00 „ | 0,22 . |
| 30. Ջիբրայիլի ,, | | 0.45 ,, | 24,85 ,, | — | 68,65,, | 6.05 ,, | 1,85 „ | 26,78 „ | — | 71,25 „ | 0,12 . |
| 31. Ջեւանշ. գաւ. | | — | 29,24 ,, | — | 70.75,, | 0,01 ,, | 1,20 . | 33,35 . | 0,33 „ | 65,00 „ | 0 12 . |
| 32. Զանգեզ. ,, | | 0.38 ,, | 46.31 ,, | — | 53,08,, | 0,23 ,, | 0,79 „ | 42,82 „ | — | 56,31 „ | 0,08 . |
| 33. Ղազախի ,, | | 1,98 ,, | 39,00 ,, | — | 58,73,, | 0,29 ,, | 4,55 „ | 44,69 „ | 0.48 . | 49,70 „ | 0,52 . |
| 34. Նուխու ,, | | — | 16,20 ,, | — | 76,55,, | 7,25 ,, | 0,90 . | 12,60 „ | — | 77,30 „ | 9,20 . |
| 35. Շուշու ,, | | 0.23 ,, | 57,87 ,, | — | 41,87,, | 0,03 ,, | 1,91 „ | 53,50 „ | — | 43,77 „ | 0,82 . |
| 36. Բագուի ,, | Բագուի նահ. | 15,12 ,, | 17,32 ,, | — | 65,29,, | 2,27 ,, | 24,62 . | 17,16 „ | 0,70 „ | 51,27 „ | 6,25 . |
| 37. Գեօկչայի ,, | | 1,62 ,, | 17,00 ,, | — | 80,52,, | 0.86 ,, | 1,91 „ | 13,15 . | — | 84,44 „ | 0,50 . |
| 38. Ջաւադի ,, | | 0,27 ,, | — | — | 99.73 ,, | 0.00 ,, | 17,30 „ | 0,75 „ | 0,60 „ | 80,50 „ | 0.85 . |
| 39. Ղուբայի ,, | | 1,12 ,, | 1,06 ,, | — | 94,05,, | 3.77 ,, | 3.00 „ | 0,90 „ | — | 88,12 „ | 7,98 . |
| 40. Լենքորանի ,, | | 7,00 ,, | 0,23 ,, | — | 92.73,, | 0,04 ,, | 12,30 . | 0,90 „ | 0,22 „ | 86,13 „ | 0,45 . |
| 41. Շամախու ,, | | 8.55 ,, | 13.61 ,, | — | 77.05,, | 0,79 ,, | 11,80 „ | 13,86 „ | 0,15 „ | 73.35 „ | 0,74 . |
| 42. Նովոռոսիյսկ. շրջ. | Ս.-ծով. նահ. | 80 64 ,, | —. | — | — | 19,36 ,, | 76,95 „ | 2,09 „ | — | 1,26 „ | 19,70 . |
| 43. Տուապսէի ,, | | 47.60 ,, | — | — | 19.00,, | 33,40 ,, | 56,45 „ | 8,37 . | — | 12,05 „ | 23,13 . |
| 44. Սոչիի ,, | | 11.17 ,, | — | 10,78 ,, | 12,91,, | 65,14 ,, | 62,21 . | 18.25 . | 10,82 „ | 4,18 „ | 4,54 . |
| 45. Թեմ-խ-Շուր. շրջ. | Դաղստանի շրջան | 2.18 ,, | — | — | 95,11,, | 2,71 ,, | 19,00 „ | 1,34 „ | 0,65 „ | 73,56 „ | 5,45 . |
| 46. Ավարսկի ,, | | — | — | — | 100.00,, | 0,00 ,, | 0,76 „ | — | — | 99,00 „ | 0,24 . |
| 47. Անդիյսկի ,, | | — | — | — | 100,00,, | 0,00 ,, | — | — | — | 99,50 „ | 0,50 . |
| 48. Գունիբի ,, | | — | — | — | 99,99,, | 0,01 ,, | — | — | — | 99,48 „ | 0,52 . |
| 49. Դարգինի ,, | | — | — | — | 100,00,, | 0 00 ,, | — | — | — | 99,95 „ | 0,05 . |
| 50. Կազի-կում. ,, | | — | — | — | 100,00,, | 0,00 „ | — | — | — | 99,95 „ | 0,05 . |
| 51. Կայթ-Տաբ. ,, | | — | — | — | 97.20,, | 2,80 „ | 8,72 „ | 2,60 . | — | 80,84 „ | 7,88 . |
| 52. Կիւրինի ,, | | — | — | — | 96,74,, | 3,26 „ | 0,70 „ | — | — | 94,46 . | 4,84 . |
| 53. Սամուրի ,, | | — | — | — | 100.00,, | 0,00 . | — | — | — | 99,20 „ | 0,80 „ |
| 54. Ղարսի ,, | Կարսի շրջան | 12,55 ,, | 29,31 ,, | — | 39,71,, | 18,43 „ | 9,00 „ | 41,54 „ | — | 34,60 . | 14,86 . |
| 55. Արդահանի ,, | | 2,37 ,, | 0,60 ,, | — | 77,00,, | 20,03 „ | 3,21 „ | 3,37 „ | — | 78,26 „ | 15,16 . |
| 56. Կաղզուանի ,, | | — | 36,75 ,, | — | 38,80,, | 24,45 „ | 0,85 „ | 40,31 . | — | 32.32 „ | 26,52 . |
| 57. Օլթիի ,, | | — | 9,00 ,, | — | 73,00,, | 18,00 „ | 0,50 . | 12,35 „ | 10,21 „ | 67,77 „ | 9,12 . |

## ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ Դ· ԱՂԻՒՍԱԿԻ

*Այս տոկոսները ևս ծանօթ են ընթերցողներին առանձին առանձին աղիւսակներով՝ ըստ նահանգների և շրջանների։ Այստեղ համախմբւած են բոլորը մի ընդհանուր աղիւսակի մէջ և կցւած են նրանց «*մնացած ժողովրդների*» տոկոսական բաժինները։*

*Այս աղիւսակի մէջ նկատւում են երկու հակադիր տենդենցներ մեզ յայտնի ժողովրդների տոկոսական յարաբերութիւնների նկատմամբ՝ երեսնամեայ շրջանի սկզբում և վերջում։ Կան գաւառներ և շրջանամասեր, ուր չորս գլխաւոր ժողովուրդները միասին ունեցել են տոկոսական ամենաբարձր թիւը 1886 թ., իսկ 1914 թ. նւազել է նրանց տոկոսական բաժինը՝ «Ցացած ժողովրդներին» տոկոսական թւի աճման գնով։ Մի քանի նմուշներ կարող են աւելի պարզել ասածներս։ Այսպէս օրինակ Թիֆլիսի գաւառում չորս ժողովրդների (ռուսների, հայերի, վրացիների և մուսուլման.) ընդհանուր տոկոսը 1886 թ. եղել է 93,62 տոկ, իսկ »Ցացած ժողովուրդները» միասին վերցրած կազմել են 6,38 տոկ։ Յաջորդ տարեթւին՝ 1914 թ. նւազել է չորս ժողովրդների տոկոսական բաժինը և իջել 88,17 տոկոսի, իսկ «Ցացած ժողովրդների» տոկոսը աճել և հասել է 11,83 տոկոսի։ Բաքւի գաւառում առաջ չորս ժողովրդները միասին կազմել են 97,73 տոկ. (իսկ Ցացած ժող. 2,27 տոկ.), իսկ յետոյ՝ 93,75 տոկ. (Ցացած ժող. 6,25)։ Գանձակի գաւառում 1886 թ. չորս ժողովրդ. կազմել են միասին 98,35 (իսկ Ցացած ժող. 1,65 տոկ.), 1914 թ.՝ 91,91 տոկ. (Ցացած ժող. 8,09 տոկոս)։*

*Բազմաթիւ են նման օրինակները բերած աղիւսակի մէջ, ինչպէս կը նկատեն իրանք ընթերցողները։*

*Բայց կան և ճիշտ հակառակ օրինակները, ուր չորս ժողովուրդների տոկոսական բաժինը՝ ընդհանուր ազգաբնակութիւնից, առաջ աւելի փոքր է եղել, քան յետոյ. երեսուն տարւայ ընթացքում աճել է նրանց տոկոսը՝ «Մնացած ժողովուրդների» տոկոսական թւի նւազման գնով։ Այդ օրինակների շարքին են պատկանում Բաթումի, Սուխումի, Տուապսէի, Սոչիի, Ղարսի, Արդահանի շրջանամասերը և ուրիշ շատ գաւառներ։*

*Այդ հակադիր տենդենցները ունեն, մեր կարծիքով, հետեւեալ բացատրութիւնները։ Սովորաբար այն վայրերը, ուր վաղուց 'ի վեր հաստատւած բնիկները (միատարր թէ այլատարր) բացարձակ մեծամասնութիւն են կազմում տեղական ազգաբնակութեան մէջ, այդ վայրերում նորահաստատ օտարների ուժեղ հոսանքի հետեւանքով հետզհետէ նւազում է բնիկների կամ տեղացիների մեծամասնութեան տոկոսը և աճում եկւորների տոկոսական բաժինը։ Եւ ընդհակառակը, այն վայրերում, ուր մեզ յայտնի չորս ժողովուրդները սկզբնական տարեշրջաններում ունեցել են թւական թոյլ մասնակցութիւն, յետագայում, հետզհետէ ներգաղթելով այնտեղ, զգալի արագութեամբ աճել է նրանց քանակը, հետեւապէս նաև տոկոսը՝ ընդհանուր ազգաբնակութեան մէջ, նւազեցնելով «Ցացած ժողովրդների» տոկոսական բաժինը։*

*Չորս գլխաւոր ժողովրդները կազմում են ամենուրեք բացարձակ մեծամասնութիւն (միասին վերցրած), բացի երկու վայրերից՝ Սուխումի և Սոչիի շրջանամասերից։ Առաջին շրջ. գլխաւոր ժողովրդները 1886 թ. կազ-*

*մել են միասին միայն 15,26 տոկ. ընդհանուր ազգաբնակութեան, «Ցացած ժողովրդները», ընդհակառակը, կազմել են 84,76 տոկ., բացարձակ մեծամասնութիւն։ 1914 թ. վերջինս նւազել է աւելի քան երեսուն տոկոսով և իջել մինչև 54,42 տոկոսի, իսկ գլխ. ժողովրդների տոկոսը աճել է և հասել 45,58 տոկոսի։ Իսկ Սոչիում գլխ. ժողովրդները կազմել են փոքրամասնութիւն (34 86 տոկ.) միայն 1886 թ., իսկ 1914 թ. նրանց տոկոսական թիւը հասել է բացարձակ մեծամասնութեան (95,46), իսկ «Ցացած ժողովրդներինը», միայն 4,54 տոկոսի։*

*Ինչ վերաբերում է առանձին ժողովրդների մեծամասնութեան հարցին՝ այս կամ այն գաւառում և շրջանամասում, ապա այդ խնդրում թւով առաջնութիւնը պատկանում է նախ մուսուլմաններին և ապա վրացիներին. մի երևոյթ, որ ապացուցում է նրանց ազգաբնակչական խտութեան փաստը։ Ռուսները բացարձակ մեծամասնութիւն կազմել են առաջ (1886 թ.) միայն մի տեղ (Նովորոս. շր.), իսկ յետոյ (1914 թ.) երեք տեղ (նաև Սոչիի և Տուապսէի շրջ.)։ Հայերը բացարձակ մեծամասնութիւն կազմում են (երկու տարեթւերին էլ) միայն հինգ գաւառներում (Ախալք., Ալէքսանդրապ., Նոր-Բայազ., Էջմիածնի և Շուշւայ գաւ.)։ Վրացիները բացարձակ մեծամասնութիւն կազմում են 13 գաւ. և շրջանամաս. (Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում)։ Իսկ մուսուլմանները բացարձակ մեծամասնութիւն կազմում են ոչ պակաս քան 30 գաւ. և շրջ. (գլխաւորապէս Բագւի, Գանձակի և մասամբ Երևանի նահանգներում, ապա Դաղստանի շրջանի բոլոր շրջանամասերում)։*

*(Տես աղիւսակ երես 234)*

# Ե. ԱՂԻՒՍԱԿ

Ժողովրդների երեսնամեայ աճման (կամ նւազման) տոկոսներր քաղաքներում.

| Քաղաքներ | | 1886—1914 թուականին | | | | | Տարեկան աճումը (կամ նուազումը) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ռուսներ | Հայեր | Վրացիներ | Մուսուլմաններ | Ընդհանուր ազգաբնակ. միջ. աճումը | Ռուսներ | Հայեր | Վրացիներ | Մուսուլմաններ | Ընդհան. ազգաբն. միջ. աճ. |
| 1. Թիֆլիս | Թիֆլիսի նահ. | 450,00% | 246,27% | 227,25% | 1300,00% | 339,32% | 16,10 | 8,80 | 8,11 | 46,42 | 12,12% |
| 2. Ախալքալաք | | — | 64,02,, | — | — | 73,92 . | — | 2,30 | — | — | 2,64 . |
| 3. Ախալցխա | | — | 74,20,, | -90,00 . | — | 50,84 . | — | 2,65 | —3,21 | — | 1,81 . |
| 4. Գորի | | 362,00,, | 140,00,, | 336,60 . | — | 254,20 „ | 13,00 | 5,00 | 11,91 | — | 9,08 . |
| 5. Դուշէթ | | — | -22,41,, | 91,07 . | — | 9,17 . | — | 0,80 | 3,25 | — | 0,33 . |
| 6. Սղնախ | | — | 105,00,, | 82,90 „ | — | 66,80 . | — | 3,75 | 2,96 | — | 2,40 . |
| 7. Թելաւ | | — | - 30,00. | 42,26 . | — | 35,82 . | — | —1,07 | 1,51 | — | 1,28 . |
| 8. Զաքաթալա | | — | — | — | 161,77 . | 224,18 . | — | — | — | 5,78 | 8,04 „ |
| 9. Քութայիս | Քութայիսի նահանգ | 633,15,, | - 28,76„ | 106,50 . | — | 156,00 . | 21,90 | —1,03 | 3,80 | — | 5,57 |
| 10. Օզուրգէթ | | — | — | 503,40 . | — | 482,88 . | — | — | 18,00 | — | 17,24 . |
| 11. Բաթում | | 515,66,, | 184,21,, | 378,71 . | 37,00 . | 160,86 . | 18,40 | 6,60 | 13,58 | 1,32 | 5,74 . |
| 12. Սուխում | | 12845,38 „ | 8826,41 „ | 15573,91 „ | — | 11193,68 „ | 458,76 | 315,23 | 556,21 | — | 339,77 . |
| 13. Փոթի | | 1300,00 „ | 234,84,, | 327,50 . | -282,00, | 317,64 . | 46,43 | 8,38 | 11,70 | —10,70 | 11,34 . |
| 14. Ռեդուտ-կալէ | | — | — | 160,00 . | — | 109,98 . | — | — | 5,71 | — | 3,93 . |
| 15 Երեւան | Երեւանի նահանգ | 227,00,, | 421,04,, | — | 74,40 . | 248,00 . | 8,11 | 15,03 | — | 2,56 | 8,86 . |
| 16. Ալէքսանդրապօլ | | — | 97,00,, | — | 27,47 . | 116,80 . | — | 3,46 | — | 0,98 | 4,17 . |
| 17. Նախիջեւան | | — | 30,00,, | — | 2?,82 . | 29,00 . | — | 1,07 | — | 0,81 | 1,03 . |
| 18. Օրդուբադ | | — | — | — | 41,80 . | 34,67 . | — | — | — | 1,49 | 1,31 . |
| 19. Նոր-Բայազէտ | | — | 70,56,, | — | — | 77,50 . | — | 2,52 | — | — | 2,77 . |
| 20. Գանձակ | Գանձ. նահանգ | — | 26 30,, | — | 245,26 „ | 177,44 . | — | 0,94 | — | 8,76 | 6,34 . |
| 21. Նուխի | | — | 75,50,, | — | 115,00 . | 111,12 . | — | 2,70 | — | 4,11 | 4,00 „ |
| 22. Շուշի | | — | 44,58,, | — | 62,91 . | 60,00 . | — | 1,60 | — | 2,24 | 2,14 . |
| 23. Բագու | Բագուի նահանգ | 221,31,, | 133,00,, | — | 171,26 . | 187,27 . | 7,90 | 4,75 | — | 6,11 | 6,70 . |
| 24. Ղուբա | | — | — | — | 92,07 . | —3,40 . | — | — | — | 3,00 | —0,12 . |
| 25. Լենքորան | | 374,00,, | 305,00,, | — | 163,56 . | 223,70 . | 13,36 | 10,90 | — | 6,00 | 8,00 . |
| 26. Շամախի | | 133,70,, | 12,57,, | — | 21,75 . | 24,07 . | 4,77 | 0,45 | — | 0,77 | 0,86 . |
| 27. Նովորոսիյսկի | Ս.-ծ. ն. | 741,46,, | — | — | — | 934,41 . | 26,48 | — | — | — | 33,37 „ |
| 28. Թեմիր Խ.-Շուրա | Դաղստանի | 336,11,, | 637,73,, | — | — | 551,50 . | 12,04 | 22,77 | — | — | 20,00 . |
| 29. Դերբենդ | | 447,14,, | 233,00,, | — | 40,54 . | 119,69 . | 18,00 | 8,32 | — | 1,45 | 4,27 . |
| 30. Պետրովսկ. | | 564,00,, | — | — | — | 887,48 . | 20,14 | — | — | — | 31,70 . |
| 31. Ղարս | Ղարսի շր. | 500,00,, | 917,00,, | — | 73,13 . | 661,26 . | 17,86 | 32,75 | — | 2,61 | 23,62 . |

## ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ Է. ԱՂԻՒՍԱԿԻ.

*Այստեղ ՚ի մի են խմբւած մեր ծայր երկրի բոլոր քաղաքները—թւով 31— և նրանց մէջ եղած գլխաւոր ժողովրդների (ինչպէս և ընդհանուր ազգաբնակութեան) երեսնամեայ և տարեկան աճման տոկոսները։*

*Ընդհանուր առմամբ աճման ամենաարագ տեմպ ունեցել են ռուսները բոլոր քաղաքներում. ոչ մի տեղ նրանց աճման տոկոսը չի իջնում 100 ից։ Ռուսների ամենաթոյլ աճումը (մինիմում տոկոսը) արտայայտւում է 133,70 տոկոսով (Շամախում) երեսնամեայ շրջանում, իսկ տարեկան աճումը՝ 4,77 տոկոսով։ Մնացած քաղաքներում ռուսների աճման տոկոսը անցնում է երկու հարիւրի սահմաններից և հասնում հազարի (Փոթիում) և անգամ տասը հազարի (Սուխումում) և աւելին. Նրանց աճման մաքսիմում տոկոսը արտայայտւում է 12845,38 տոկոսով (տարեկան 458,76 տոկոսով)։ Նւազման տոկոս չունեն ռուսները և ոչ մի քաղաքում։*

*Հայերի մօտ քաղաքային ազգաբնակութեան աճումը իր արագութեամբ անհամեմատ յետ է մնում ռուսականից։ Թէև հայերի աճման մաքսիմում տոկոսը ևս բարձր թւի է հասնում՝ 8826,41 տոկոսի, տարեկան՝ 315,23 տոկոսի (դարձեալ Սո խում քաղաքում), բայց այլ վայրերում աճման նւազ տոկոսներ շատ ունին նրանք։ Հայերի աճման մինիմում տոկոսը եղել է Շամախի՝ 12,57 տոկոսով (տարեկան 0,45 տոկ.)։ Մի շարք քաղաքներում հայերը աճման արագ տեմպ և խոշոր տոկոսներ են ունեցել, ինչպէս օրինակ Ղարսում (917,00 տոկ., տարեկան 32,75 տոկ.), Երևանում (421,04 տոկ. տարեկան 15,03 տոկ.), Թիֆլիսում (246,27 տոկ., տարեկան 8,80 տոկ.), Բաքւում (133,00 տոկ., տարեկան 4,75 տոկ.) և մի շարք ուրիշ քաղաքներում։ Նւազման տոկոսներ ունեցել են հայերը երեք քաղաքներում՝ Դուշէթում (—22,41 տոկ., տարեկան—0,80 տոկ.), Թելաւում (—30,00 տոկ., տարեկան—1.07 տոկ.) և Քութայիսում (—28,76 տոկ., տարեկան—1,03 տոկ.)։*

*Վրացիների աճման տոկոսը քաղաքներում ընդհանրապէս աւելի արագ է եղել, քան հայերինը։ Նրանց աճման մաքսիմում տոկոսը՝ դարձեալ նոյն Սուխում քաղ., գերազանցում է նոյն իսկ ռուսների մաքսիմում տոկոսից. վրացիներինը հաւասար է 15573,91 տ. (տարեկան 556,21 տոկ.), իսկ մինիմում տոկոսը Թելաւում հասնում է 42,26 տոկոսի (տարեկան 1,51 տոկոսի)։ Թիֆլիսում նրանց աճումը (227,25 տոկ., տարեկան 8,11 տոկ.) եղել է աւելի թոյլ, քան հայերինը։ Նւազման դէպք վրացիները ունեցել են միայն մի քաղաքում՝ Ախալցխայում (—90,00 տոկ., տարեկան—3,21 տոկ )։*

*Մուսուլմանների աճման տեմպը քաղաքներում, ընդհակառակը, եղել է աւելի դանդաղ, քան հայերինը։ Նրանց աճման մաքսիմում տոկոսը եղել է Թիֆլիսում (1300,00 տոկ., տարեկան 46,42 տոկ.), իսկ մինիմում տոկոսը դարձեալ Շամախի քաղ. (21,75 տոկ., տարեկան 0,77 տոկ.)։ Մուսուլմանների մօտ ևս եղել է միայն մի նւազման դէպք, այն է Փոթիում՝—282,00 տոկոսով (տարեկան—10,70 տոկոսով)։*

*Ինչ վերաբերում է ընդհանուր ազգաբնակութեան միջին աճման տեմպին, պէտք է ասել, որ ռուսների աճման արագութիւնը գերազանցում է միջին աճման տեմպին բոլոր քաղաքներում, բացի 5 տեղերից (Երևան, Նովոբայ., Թեմիր Խ. Շուրա, Պետրովսկ և Ղարս)։ Հայերի աճման ընթացքը գերազանցում է ընդհ. ազգաբն. միջին աճման տեմպին միայն 8 քաղաքներում (Ախալցխայում, Երևանում, Աղնախում, Նախիջևանում, Լենքորանում, Թեմիր-Խան-Շուրայում, Դերբենդում և Ղարսում)։ Վրացիների աճման ընթացքը գերազանցում է միջին աճմ. տեմպին 9 քաղաքներում (Գորի, Դուշէթ, Աղնախ, Թելաւ, Օզուրգ., Բաթում, Սո խում, Փոթի, Րեդուտկալէ)։ Մուսուլմանների աճման ընթացքը գերազանցում է միջին աճման տեմպին ընդամէնը 6 քաղ. (Թիֆլիս, Օրդուբաթ, Գանձակ, Նուխի, Շուշի, Ղուբա)։*

## Ե. ԱՂԻՒՍԱԿ

Ժողովրդների տոկոսական բաժինը առանձին-առանձին քաղաքների ընդհանուր ազգաբնակութիւնից·

| Քաղաքներ | | 1886 Թւականին | | | | | 1914 Թւականին | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ռուսներ | Հայեր | Վրացիներ | Մուսուլմաններ | Մնացած ժողովրդ. | Ռուսներ | Հայեր | Վրացիներ | Մուսուլմաններ | Մնացած ժողովրդ. |
| 1. Թիֆլիս | Թիֆլիսի նահանգ | 18,15% | 47,70% | 27,10% | 1,70% | 5,35% | 22,73% | 37,60% | 20,18% | 5,33% | 14,16% |
| 2. Ախալքալաք | | 1,32 | 95,00 | 1,18 | — | 2,50 | 3,80 | 89,48 | 4,00 | — | 2,72 |
| 3. Ախալցխա | | 0,90 | 64,63 | 17,00 | 0,36 | 17,11 | 2,61 | 75,82 | 6,15 | 0,40 | 15,02 |
| 4. Գորի | | 5,15 | 40,00 | 53,50 | — | 1,35 | 6,71 | 26,85 | 65,43 | 0,30 | 0,71 |
| 5. Դուշէթ | | 3,05 | 57,12 | 28,17 | 11,90 | — | 6,23 | 42,75 | 49,30 | — | 1,72 |
| 6. Սիղնախ | | — | 55,21 | 43,80 | — | 0,99 | 0,91 | 50,88 | 48,00 | — | 0,21 |
| 7. Թելաւ | | — | 81,88 | 17,28 | — | 0,84 | 1,34 | 70,49 | 27,49 | — | 0,68 |
| 8. Զաքաթալա | Քութայիսի նահանգ | 13,56 | — | 1,62 | 42,08 | 32,74 | 6,50 | 54,12 | 5,10 | 33,90 | 0,38 |
| 9. Քութայիս | | 6,74 | 10,24 | 67,13 | — | 15,89 | 19,32 | 3,11 | 55,21 | 0,72 | 21,64 |
| 10. Օզուրգէթ | | 4,21 | — | 95,60 | — | 0,19 | 1,92 | — | 97,82 | — | 0,26 |
| 11. Բաթում | | 11,21 | 23,36 | 14,00 | 19,00 | 32,43 | 26,47 | 25,45 | 25,68 | 10,00 | 12,40 |
| 12. Սուխում | | 28,88 | 12,86 | 28,00 | — | 30,26 | 33,00 | 10,17 | 38,73 | 2,18 | 15,92 |
| 13. Փոթի | | 4,54 | 1,13 | 62,41 | 8,11 | 23,81 | 15,20 | 8,56 | 64,00 | 0,51 | 11,73 |
| 14. Ռեդուտ-Կալէ | | 2,36 | — | 80,40 | — | 17,24 | — | — | 100,00 | — | — |
| 15. Երևան | Երևանի նահ. | 2,12 | 48,45 | — | 49,04 | 0,39 | 2,66 | 72,56 | 0,40 | 24,57 | 0,41 |
| 16. Ալէքսանդրոպօլ | | 0,27 | 94,18 | — | 3,63 | 1,92 | 7,86 | 88,00 | — | 2,18 | 1,96 |
| 17. Նախիջևան | | 0,34 | 28,12 | — | 70,63 | 0,91 | 2,14 | 29,50 | 0,95 | 67,00 | 0,41 |
| 18. Օրդուբադ | | — | 9,80 | — | 90,19 | 0,01 | 1,98 | 3,06 | — | 94,91 | 0,05 |
| 19. Նոր-Բայազէտ | | — | 99,17 | — | 0,50 | 0,33 | 1,81 | 95,30 | — | 1,81 | 1,08 |
| 20. Գանձակ | Գանձ. նահ. | 0,65 | 43,92 | — | 54,90 | 0,53 | 10,11 | 20,00 | 0,51 | 68,31 | 1,07 |
| 21. Նուխի | | — | 18,01 | — | 81,65 | 0,34 | 1,33 | 15,00 | — | 83,24 | 0,43 |
| 22. Շուշի | | — | 56,65 | — | 43,25 | 0,10 | 2,78 | 51,60 | — | 44,37 | 1,25 |
| 23. Բագու | Բագուի նահ. | 24,70 | 28,26 | — | 43,33 | 3,71 | 27,22 | 23,00 | 0,80 | 40,91 | 8,07 |
| 24. Ղուբա | | 2,16 | 6,00 | — | 46,60 | 45,24 | 1,23 | 5,79 | — | 92,56 | 0,42 |
| 25. Լէնքորան | | 17,12 | 6,46 | — | 76,12 | 0,30 | 23,82 | 8,00 | 1,73 | 60,65 | 5,82 |
| 26. Շամախի | | 3,00 | 18,00 | — | 79,10 | — | 5,67 | 16,20 | — | 77,44 | 0,69 |
| 27. Նովոռոսիյսկ | Ս.-Ծ. Ն. | 98,75 | — | — | — | 1,25 | 79,70 | 2,15 | — | 0,31 | 17,84 |
| 28. Թեմիր-Խ.-Շուրա | Դաղ. Շր. | 55,30 | 4,11 | — | 2,60 | 38,99 | 36,75 | 4,62 | — | 32,00 | 26,63 |
| 29. Դերբենդ | | 10,22 | 5,73 | 0,30 | 70,00 | 13,75 | 25,24 | 8,70 | — | 45,00 | 21,06 |
| 30. Վլադիկավկ | | 84,55 | 2,18 | 0,26 | 3,26 | 9,75 | 57,00 | 4,34 | 3,86 | 24,21 | 10,59 |
| 31. Ղարս | Ղար. Շրջ. | 6,27 | 63,04 | — | 22,11 | 8,58 | 4,88 | 83,93 | — | 5,01 | 6,18 |

## ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ F. ԱՂԻՒՍԱԿԻ

Չորս գլխաւոր ժողովրդները միասին վերցրած իրանց տոկոսական բաժիններով կազմում են բացարձակ մեծամասնութիւն անխտիր բոլոր քաղաքներում՝ թէ 1886 և թէ 1914 թ.թ.։ Բայց այդ մեծամասնութիւնը ենթարկւել է փոփոխութեան՝ մի տարեթւից մինչև միւսը։ Այդ տեսակէտից քաղաքներում նկատւում է ճիշտ այն երևոյթը, ինչ վերլուծեցինք գաւառների և շրջանամասերի նկատմամբ։ Այն քաղաքներում, ուր վաղուց հաստատւած տեղացիները բացարձակ մեծամասնութիւն են կազմում, յետագայ տարեթւերին նւազել է տեղացիների մեծամասնութեան տոկոսը՝ օտար տարրերի ուժեղ ներգաղթի շնորհիւ, և հետևապէս աճել է „Մնացած ժողովրդների» տոկոսը։ Միւս կողմից կան քաղաքներ, ուր գլխաւոր ժողովուրդները միայն յետագայում են պատկառելի չափերով կենտրոնացել, հետևապէս նրանց տոկոսական բաժինը ոչ թէ նւազել, այլ աճել է երեսնամեայ շրջանում։

Առաջին կաթեգորիային պատկանում են, օրինակ, Թիֆլիսը, ուր չորս ժողովրդների տոկոսական բաժինը եղել է 1886 թ. 94,65 տոկ., իսկ «Մնացած ժողովրդներինը» 5,35 տոկ.. յաջորդ տարեթւին, 1914 թ., շնորհիւ հայերի և վրացիների, որպէս բնիկների, յարաբերական տոկոսի նւազման՝ օտար տարրերի ուժեղ հոսանքի հետևանքով, չորս ժողովրդների տոկոսական բաժինը իջնում է 85,84 տոկոսի, իսկ «Մնացած ժողովրդների» տոկոսը աճում և հասնում է 14,16 տոկոսի։ Նոյն երևոյթն ենք գտնում Քութայիսում, Բագւում, Նովոռոսիյսկում և փոքրիկ տարբերութիւններով ուրիշ քաղաքներում։ Երկրորդ կաթեգորիային պատկանում են, իբրև տիպիքական օրինակներ, Բաթումը, Սուխումը, Փոթին և ուրիշները։ Այսպէս օրինակ 1886 թ. Բաթումում գլխաւոր ժողովրդների տոկոսական բաժինը կազմել է 67,57 տոկ. („Մնացած ժողովրդները" 32,43 տոկ.), իսկ 1914 թ., շնորհիւ գլխաւոր ժողովրդների ուժեղ ներգաղթի, նրանց տոկոսական բաժինը աճում և հասնում է 87,60 տոկոսի (Մնացած ժողովրդները 12,40 տ.)։

Ինչ վերաբերում է առանձին-առանձին ժողովրդներին, ապա սրանցից ռուսները բացարձակ մեծամասնութիւն կազմել են 1886 թ. միայն երեք քաղաքում (Նովոռոսիյսկ՝ 98,75 տոկ., Թեմիր խ. Շուրա 55,30 տոկ., Պետրովսկ 84,55 տոկ.,), իսկ 1914 թ. միայն երկու քաղաքում (Նովոռոսիյսկ 79,70 տոկ. և Պետրովսկ 57,00 տոկ.)։

Հայերը, ինչպէս տեսնում ենք աղիւսակից, բացարձակ մեծամասնութիւն կազմել են 1886 թ. 9 քաղաքում (Ախալքալաք 95.00 տոկ., Ախալցխա 64,63 տոկ., Դուշէթ 57,12 տոկ., Սղնախ 55,21 տ., Թելաւ 81,88 տ., Ալէքսանդրապոլ 94,18 տոկոս, Նոր-Բայազետ 99,17 տոկոս, Շուշի 56,65 տոկոս, Ղարս 63,04 տոկոս)։ Իսկ յարաբերական մեծամասնութիւն նոյն թւականին կազմել են նրանք միայն Թիֆլիսում՝ 47,70 տոկոսով։ 1914 թ. հայերը բացարձակ մեծամասնութիւն կազմել են 10 քաղաքում, կրելով, անշուշտ, որոշ փոփոխութիւններ իրանց յարաբերական տոկոսների մէջ, (Ախալքալաք 89,48 տոկոս, Ախալցխա 75,82 տոկոս, Սղնախ 50,88 տոկոս, Թելաւ 70,49, Զաքաթալա 54,12 տոկոս, Երևան 72,56 տոկոս, Ալէքսանդրապոլ 88,00 տոկոս, Նոր-Բայազէտ 95,30 տոկոս, Շուշի 51,60 տոկոս,

Ղարս 83,93 տոկոս)։ Իսկ յարաբերական մեծամասնութիւն կազմել են հայերը դարձեալ միայն Թիֆլիսում՝ 37,60 տոկոսով։

Վրացիները բացարձակ մեծամասնութիւն կազմել են 1886 թ. միայն 5 քաղաքում (Գորի 53,50 տոկոս, Քութայիս 67,13 տոկոս, Օզուրգէթ 95,60 տոկոս, Փոթի 62,41 տոկոս, Ըեդուտ-Կալե 80,40 տոկոս)։ Իսկ յարաբերական մեծամասնութիւն չեն կազմել նրանք ոչ մի քաղաքում։ 1914 թւին վրացիները բացարձակ մեծամասնութիւն են կազմել դարձեալ 5 քաղաքում (Գորի 65,43 տոկոս, Քութայիս 55,21 տոկոս, Օզուրգէթ 97,82 տոկոս, Փոթի 64,00 տոկոս, Ըեդուտ-Կալէ 100,00 տոկոս)։ Իսկ յարաբերական մեծամասնութիւն կազմել են նրանք Դուշէթում (49,30 տոկոս) և Սուխումում (38,73 տոկոս)։

Մուսուլմանները բացարձակ մեծամասնութիւն կազմել են ընդամէնը 7 քաղաքում (Նախիջևան 70,63 տոկոս, Օրդուբադ 90,19 տոկոս, Գանձակ 54,90 տոկոս, Նուխի 81,65 տոկոս, Լենքորան 76,12 տոկոս, Շամախի 79,10 տոկոս, Դերբենդ 70,00 տոկոս)։ Իսկ յարաբերական մեծամասնութիւն կազմել են նրանք չորս քաղաքում (Զաքաթալա 42,08 տոկոս, Երևան 49,04 տոկոս, Բագու 43,33 տոկոս, Ղուբա 46,60 տոկոս)։ 1914 թւին մուսուլմանները բացարձակ մեծամասնութիւն կազմել են դարձեալ 7 քաղաքում՝ հարկաւ տոկոսական որոշ փոփոխութիւն կրելով, այն է՝ Նախիջևան 67,00 տոկոս, Օրդուբադ 94,91 տոկոս, Գանձակ 68,31 տոկոս, Նուխի 83,24 տոկոս, Ղուբա 92,56 տոկոս, Լենքորան 60,65 տոկոս, Շամախի 77,44 տոկ.։ Իսկ յարաբերական մեծամասնութիւն կազմել են միայն երկու քաղաքում՝ Բագւում 40,91 տոկոս և Դերբենդում 45,00 տոկոս։

(Տես աղիւսակ երես 239)

# Զ. ԱՂԻՒՍԱԿ

Ժողովրդ. երեսնամեայ աճմ. (կամ նւազ.) տոկոսն. տերիտորիական միաւորների եւ ազգաբ. հասւած. մէջ.

| Գաւառներ և շրջանամասեր | 1886—1914 Թւականին | | | | | Տարեկան աճումը (կամ նւազումը) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ընդ. ազգ. մէջ. աճումը | Ռ. | Հ. | Վ. | Մ. | Ընդ. ազգաբ. մէջ. աճ. |
| A. Ընդհանրապէս Անդրկովկաս. | 380,66% | 79,52% | 45,00% | 40.42% | 61,46% | 13,60 | 2,84 | 1,61 | 1,44 | 2,19% |
| B. Անդրկ. ողջ գաւ. ազգաբ. մէջ | 308,64,, | 67,95,, | 36,03,, | 31,06,, | 47,49,, | 11,02 | 2,43 | 1,30 | 1,11 | 1,70,, |
| C. Անդրկ. ողջ քաղ. ազգաբ. մէջ | 472,36,, | 128,21,, | 220,90,, | 125,03,, | 189,97,, | 16,87 | 4,60 | 8,00 | 4,40 | 6,78,, |
| I. Թիֆլիսի նահ. առհասարակ | 245,15,, | 104,56,, | 43,13,, | 46,41,, | 69,35,, | 8,75 | 3,73 | 1,54 | 1,66 | 2,47,, |
| 1. Թիֆ. նահ. գաւ. ազգ. մէջ | 104,80,, | 80,00,, | 30,00,, | 36,15,, | 40,25,, | 3,74 | 2,86 | 1,07 | 1,22 | 1,43,, |
| 2. Թիֆ. նահ. քաղ. ազգ. մէջ | 436,00,, | 157,50,, | 186,27,, | 773.00,, | 236,04,, | 15,60 | 5,62 | 6,65 | 27,61 | 8,43,, |
| 3. Թիֆ. նահ. գլխ. քաղաքում | 450,00,, | 246,27,, | 227,25,, | 1300,00, | 339,32,, | 16,10 | 8,81 | 8,12 | 46,43 | 12,12,, |
| II. Քութայիսի նահ. առհասարակ | 950,00,, | 178,50,, | 41,20,, | 64,40,, | 54,00,, | 34,00 | 6,36 | 1.47 | 2,30 | 1,93,, |
| 1. Քութ. նահ. գաւ. ազգ. մէջ | 800,00,, | 164,34,, | 34,73,, | 67,00,, | 42 00,, | 28,60 | 5,87 | 1,24 | 2,40 | 1,50,, |
| 2. Քութ. նահ. քաղ. ազգ. մէջ | 1010,53,, | 185,22,, | 267,22,, | 50,12,, | 287,70,, | 36,09 | 6,61 | 9,54 | 1,79 | 10,27,, |
| 3. Քութ. նահ. գլխաւոր քաղ. | 683,15,, | -28,76,, | 106,50,, | — | 156,00,, | 24,40 | —1,03 | 3,80 | — | 5,57,, |
| III Երեւանի նահ. առհասարակ | 295,00,, | 62,90,, | — | 47,22,, | 55,74,, | 10,53 | 2,24 | — | 1,68 | 2,00,, |
| 1. Երև. նահ. գաւ. ազգ. մէջ | 188,00,, | 53,00,, | — | 50,00,, | 49,08,, | 6,71 | 1,90 | — | 1,78 | 1,75,, |
| 2. Երև. նահ. քաղ. ազգ. մէջ | 1293,54,, | 145,00,, | — | 50,65,, | 174,15,, | 46,20 | 5,18 | — | 1,81 | 6,22,, |
| 3. Երև. նահ. գլխ. քաղաքում | 227.00,, | 421,04,, | — | 74,40,, | 248,00,, | 8,11 | 15,03 | — | 2,66 | 8,86,, |
| IV. Գանձակի նահ. առհասարակ | 353.00,, | 53,61,, | — | 60,00,, | 59.93,, | 12,61 | 1,91 | — | 2,14 | 2,14,, |
| 1. Գանձ. նահ. գաւ. ազգ. մէջ | 267,08,, | 55,00,, | — | 51,76,, | 54,32,, | 9,53 | 1,97 | — | 1,85 | 1,94,, |
| 2. Գանձ. նահ. քաղ. ազգ. մէջ | — | 44,00,, | — | 134,43,, | 112,00,, | — | 1,57 | — | 4,87 | 4,00,, |

(Շարունակութիւնը տես երես 240)

| Գաւառներ և շրջաններ | 1886—1914 Թւականին | | | | | Տարեկան աճումը (կամ նուազումը) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուսներ | Հայեր | Վրաց. | Մուսուլ. | Ընդ. ազգ. միջ. աճումը | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուս. | Ընդ. ազգաբ. |
| 3. Գանձ. նահ. գլխ. քաղաք. | — | 26,30,, | — | 245,26,, | 177,44,, | — | 0,94 | — | 8,78 | 6,34,, |
| V. Բագվի նահանգ. առհասարակ | 304.03,, | 104.70,, | — | 40,77,, | 65,86,, | 10,86 | 3,74 | — | 1,46 | 2,35,, |
| 1. Բագ. նահ. գաւ. ազգաբ. մէջ | 410,00,, | 93.60,. | — | 30,95,, | 50.00., | 14,64 | 3,34 | — | 1,11 | 1,80,, |
| 2 Բագ. նահ. քաղ. ազգաբ. մէջ | 216,00., | 114,11,, | — | 122,52,, | 147,28,, | 7,71 | 4,07 | — | 4,37 | 5,26,, |
| 3. Բագ. նահ. գլխ. քաղաքում | 221,31.. | 133.00,, | — | 171,26,, | 187,27,, | 7,90 | 4,75 | — | 6,12 | 6,69,, |
| VI. Սև-ծովեան նահ. առհասարակ | 1142.73,, | 1627,63, | — | 512,00,, | 973,00., | 40,81 | 58,18 | — | 18,32 | 34,75,, |
| 1. Սև-ծով. նահ. գաւ. ազգ. մէջ | 1740,00,, | — | — | — | 994,00,, | 62,14 | — | — | — | 35 40,, |
| 2. Սև-ծով. նահ. քաղ. ազգ. մէջ | 741,46,, | — | -- | — | 934,41,, | 26,48 | — | — | — | 33,37,, |
| 3. Սև-ծով. նահ. գլխ. քաղաքում | 741,46,, | — | — | — | 934,41,, | 26,48 | — | — | — | 33,37,, |
| VII. Դաղստանի շրջ. առհասարակ | 572,93,, | 359,00,, | — | 10,70,, | 18,47,, | 24,64 | 12,82 | — | 0,38 | 0,66,, |
| 1. Դաղստ. շրջ. գաւ. ազգ. մէջ | 1672,70,, | 583,30,, | — | 8,24,, | 9,88,, | 59,74 | 20,83 | — | 0,29 | 0,35,, |
| 2. Դաղստ. շրջ. քաղ. ազգ. մէջ | 461,00,, | 353.76., | 1062,66, | 138,72,, | 262,41,, | 16,46 | 12,63 | 34,00 | 5,00 | 9,34,, |
| 3. Դաղստ. շրջ. գլխ. քաղաքում | 336,11,, | 637,73,, | — | — | 551,50,, | 12,04 | 22,77 | — | — | 19,70,, |
| VIII. Ղարսի շրջ. առհասարակ | 84 85,. | 209,83,, | — | 82,17,, | 124,78,, | 3,03 | 7,49 | — | 2,93 | 4,45,, |
| 1. Ղարսի շրջ. գաւ. ազգ. մէջ | 75,16,, | 151,85,, | — | 82,26,, | 112,30,, | 2,68 | 5,41 | — | 2,94 | 4,01,, |
| 2. Ղարսի շրջ. քաղ. ազգ. մէջ | 500,00,. | 917,00,, | — | 73,13,, | 661,26,, | 17,86 | 32,75 | — | 2,61 | 23,62,, |
| 3. Ղարսի շրջ. գլխ. քաղաքում | 500,00,, | 917,00,, | — | 73,13,, | 661,26,, | 17,86 | 32,75 | — | 2,61 | 23,62,, |

## ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ Զ. ԱՂԻՒՍԱԿԻ

*Այս աղիւսակը չենք ունեցել մինչև այստեղ՝ թէ իր ամբողջութեամբ և թէ իր առանձին մասերով։ Այստեղ ի մի են դասաւորուած ժողովրդների երեսնամեայ շրջանի և տարեկան աճման տոկոսները՝ սկսած ամենամեծ տերրիտորիական միաւորից և ազգաբնակչական հատուածից մինչև քաղաքն ու քաղաքային բնակչութիւնը։ Ի՞նչ տեմպով են աճել ժողովրդները ընդհանրապէս Անդրկովկասում, առհասարակ Նահանգում կամ շրջանում և մասնաւորապէս Նահանգի (կամ շրջանի) գլխաւոր քաղաքում։ Այդ մի կողմից։ Ի՞նչ տեմպով են աճել ժողովրդների առհասարակ գաւառական և քաղաքային ազգաբնակութիւնները ընդհանրապէս Անդրկովկասում, և ի՞նչ տեմպով են աճել նոյն ազգաբնակչական հատուածները մասնաւորապէս Նահանգներում (կամ շրջաններում)։ Այդ էլ միւս կողմից։*

*Ահա այդ հարցերի լրիւ բաւարարութիւնն է տալիս Զ. աղիւսակը թէ առանձին ժողովրդների և թէ ընդհանուր ազգաբնակութեան վերաբերեալ։ Տախտակը բաւական պարզ է և մատչելի իր բոլոր մասերով, որպէսզի հարկ լինի երկար բացատրութիւնների։*

*Աճման ամենաարագ տեմպ, ինչպէս յայտնի է, ունեցել են ռուսները բոլոր մասերում (չնչին բացառութեամբ) և բոլոր հատուածների մէջ։ Ընդհանրապէս Անդրկովկասում ռուսների (380,66 տոկ., տարեկան 13,60 տոկոս) ինչպէս և հայերի (79,52 տոկ., տարեկան 2,84 տոկ.) աճման տեմպը գերազանցում է ընդհանուր ազգաբնակութեան միջին աճման տեմպից (61,46 տոկ., տարեկան 2,19 տոկ.), որից, ընդհակառակը, աւելի նուազ են վրացիների (45,00 տոկ. տարեկան 1,61 տոկ.) և մուսուլմանների (40,42 տոկ. տարեկան 1,44 տոկ.) աճման տոկոսները։ Գաւառական ազգաբնակութեան մէջ (երկրորդ տող) ժողովրդների աճման տոկոսական յարաբերութիւնները ունեն ճիշտ միևնոյն դասաւորութիւնը։ Ընդհակառակը քաղաքային ազգաբնակութեան մէջ (երրորդ տող) աճման տեմպի արագութեան տեսակէտից վրացիները բռնում են երկրորդ տեղը ռուսներից յետոյ. հայերը գրաւում են երրորդ տեղը, իսկ մուսուլմանները՝ չորրորդ տեղը։*

*Տոկոսական ճիշտ նոյն յարաբերութիւններն են գտնում մեր ծայրերկրի ամենամեծ Նահանգում՝ Թիֆլիսի Նահանգում (I)։ Առհասարակ Նահանգում և Նահանգի գաւառական ազգաբնակչութեան մէջ ռուսները և հայերը ունեցել են աճման ամենաարագ տեմպը՝ գերազանցելով միջին աճման տեմպից։ Այնուհետև յաջորդում են մուսուլմանները և վերջում միայն վրացիները։ Թիֆլիսի քաղաքային ազգաբնակ. մէջ, ընդհակառակը, առաջին տեղը բռնում է մուսուլմանների աճման տոկոսը, երկրորդը ռուսներինը, երրորդը վրացիներինը և չորրորդը հայերինը։ Նոյն յարաբերութիւնն ենք գտնում Նահանգի գլխաւոր քաղաքում, Թիֆլիսում, միայն երրորդ տեղը բռնում են հայերը, իսկ չորրորդը՝ վրացիները։*

*Քութայիսի Նահանգում առհասարակ (II) և գաւառական ազգաբն. մէջ գտնում ենք դարձեալ նոյն յարաբերութիւնները՝ նախ ռուսները, ապա հայերը, մուսուլմանները և վերջում վրացիները։ Իսկ Նահանգի քաղաքային ազգաբնակ. մէջ և գլխաւոր քաղաքում (Քութայիսում) հետեւում են. ռուս-*

նեբ, վրացիներ, հայեր և մուսուլմաններ։ Հայերը նոյն իսկ նուազել են Բուլթայխում։

Երևանի նահանգում (III) առհասարակ, ինչպէս և գաւառ. ու քաղաք. ազգաբնակութեան մէջ սկզբից հետևում են ռուսները, ապա հայերը և մուսուլմանները (վրացիներ չկան) ըստ իրանց աճման տոկոսների։ Նահանգի գլխաւոր քաղաքում (Երևանում) արդէն հայերի աճման տոկոսը գերազանցում է բոլորից, անգամ ռուսների տոկոսից. վերջինս նուազում է նոյն իսկ միջին աճման տոկոսից։

Իսկ Գանձակի նահանգում (IV) յարաբերութիւնները փոքր ինչ այլ կերպ են դասաւորւած. այնտեղ բոլոր մասերում (բացի գաւառակ. ազգաբնակութիւնից) ռուսների աճման տոկոսին անմիջապէս հետևում է մուսուլմանների տոկոսը. հայերի աճման տոկոսը երրորդ տեղն է բռնում. միայն գաւառակ. ազգաբնակ. մէջ նրանց տոկոսը գերազանցում է մուսուլմանների տոկոսից։

Բագուի նահանգում (V) արդէն ժողովրդների աճման տոկոսների յարաբերութիւնները դասաւորւած են ճիշտ նոյն կերպ, ինչպէս տեսանք Թիֆլիսի նահանգում։ Բագուի նահանգում առհասարակ և նահանգի գաւառական ազգաբնակութեան մէջ ռուսների աճման տոկոսին անմիջապէս հետևում է հայերի տոկոսը. երկուսն էլ գերազանցում են ազգաբնակութեան միջին աճման տոկոսից։ Ընդհակառակը, նահանգի քաղաքային ազգաբնակութեան մէջ և գլխաւոր քաղաքում (Բագւում) մուսուլմանների աճման տոկոսը բռնում է երկրորդ տեղը ռուսներից յետոյ, իսկ հայերինը միայն երրորդ կամ վերջին տեղը։

Սև-ծովեան նահանգում (VI) խօսք կարող է լինել միայն ռուսների երեսնամեայ շրջանի աճման տոկոսների մասին։ Առհասարակ նահանգում և գաւառական ազգաբնակութեան մէջ ռուսների աճման տոկոսը գերազանցում է ընդհանուր ազգաբնակ. միջին աճման տոկոսից, իսկ քաղաքային ազգաբնակութեան մէջ գտնում ենք հակառակ յարաբերութիւնը։

Դաղստանի շրջանում (VII) յարաբերութիւնները սովորական են. ռուսների տոկոսին անմիջապէս հետևում է հայերի տոկոսը, բացի շրջանի գլխաւոր քաղաքից (Թեմիր-Խան-Շուրայից), որ հայերի աճման տոկոսը գերազանցում է ռուսների տոկոսից։ Մուսուլմանները շատ դանդաղ են աճել առհասարակ Դաղստանի շրջանում, բացի գլխաւոր քաղաքից, ուր նրանց աճման տոկոսը գերազանցում է նոյն իսկ ռուսների աճման տոկոսից։

Վերջապէս Ղարսի շրջանում (VIII) գտնում ենք միանգամայն տարբեր յարաբերութիւններ։ Նրա բոլոր մասերում անխտիր գերազանցում են հայերի աճման տոկոսները և իրաւ ոչ միայն ընդհան. ազգաբն. միջին աճման տոկոսից, այլև ռուսների աճման տոկոսից։ Մուսուլմանները բոլոր մասերում գրաւում են միայն վերջին տեղը իրանց աճման տոկոսներով։

(Տես աղիւսակ երես 243)

# H. ԱՂԻՒՍԱԿ

Ժողովրդ. տոկոսական բաժինը Անդրկովկ. տէրիտոր. միաւորների եւ ազգաբ. հաւաք. ամբողջութ. մէջ.

| Գաւառներ և շրջանամասեր | 1886 թւականին | | | | | 1914 թւականին | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուս. | Հայեր | Վրաց. | Մուսուլ | Մնացած ժողովրդ. | Ռ. | Հ. | Վ. | Մ. | Մնացած ժողով. |
| A. Ընդհանրապէս Անդրկովկաս. | 2,60% | 20,00% | 25,54% | 46,78% | 5,08 | 7,75% | 22,20% | 22,81% | 40,78% | 6,46% |
| B. Անդրկ. ողջ գաւ. ազգաբ. մէջ | 1,61,, | 17,90,, | 26,96,, | 48,50,, | 5,03 | 4,48,, | 20,39,, | 24,88 . | 44,25 . | 6,00 . |
| C. Անդրկ. ողջ քաղ. ազգաբ. մէջ | 11,62,, | 38,90,, | 12,56,, | 30,92,, | 6,00 | 22,93 . | 31,37,, | 13,90 „ | 24,00 . | 7,80 . |
| I Թիֆլիսի նահ. առհասարակ | 4,07,, | 22,00,, | 46,36,, | 17,85,, | 9,72 | 8,29,, | 26,57,, | 39,12 . | 15,48 „ | 10,54 . |
| 1. Թիֆ. նահ. գաւ. ազգ. մէջ | 2,75,, | 16,52,, | 50,00,, | 20,66,, | 10,07 | 4,02,, | 20,26,, | 46,02 . | 20,06 . | 9,64 . |
| 2. Թիֆ. նահ. քաղ. ազգ. մէջ | 11,63,, | 53,30,, | 26,81,, | 1,74,, | 6,47 | 18,51,, | 40,21,, | 22,84 . | 4,25 . | 13,92 „ |
| 3. Թիֆ. նահ. գլխ. քաղաքում | 18,15,, | 47,70,, | 27,10,, | 1,70,, | 5,35 | 22,73,, | 37,60,, | 20,18 . | 5,33 . | 14,16 . |
| II. Քութայիսի նահ. առհասարակ | 0,54,, | 1,77,, | 85,71,, | 10,64,, | 1,34 | 3,63 . | 3,22,, | 78,75 . | 11,38 . | 4,02 . |
| 1. Քութ. նահ. գաւ. ազգ. մէջ | 0,15,, | 1,14,, | 87,52,, | 4,61,, | 6,58 | 0,93,, | 2,23,, | 83,13 „ | 5,11 „ | 8,60 . |
| 2. Քութ. նահ. քաղ. ազգ. մէջ | 8,08,, | 14,25,, | 49,56,, | 8,09,, | 20,02 | 23,16,, | 10,49,, | 47,00 . | 3,13 . | 16,22 „ |
| 3. Քութ. նահ. գլխաւոր քաղ. | 6,74,, | 10,24,, | 67,13,, | — | 15,89 | 19,32,, | 3,11,, | 55,21 „ | 0,72 „ | 21,64 . |
| III Երեւանի նահ. առհասարակ | 0,62,, | 54,70,, | — | 41,20,, | 4,48 | 1,57,, | 57,30,, | 0,44 . | 38,94 . | 2,15 . |
| 1. Երև. նահ. գաւ. ազգ. մէջ | 0,61,, | 53,32,, | — | 42,00,, | 4,07 | 1,18,, | 54,67,, | — | 41,73 „ | 2,24 . |
| 2. Երև. նահ. քաղ. ազգ. մէջ | 0,75,, | 69,35,, | — | 29,16,, | 0,74 | 4,30,, | 74,20,, | 0,22 „ | 19,40 . | 1,88 . |
| 3. Երև. նահ. գլխ. քաղաքում | 2,12,, | 48,45,, | — | 49,04,, | 0,39 | 2,30,, | 72,56,, | 0,40 . | 24,57 „ | 0,17 . |
| IV. Գանձակի նահ. առհասարակ | 1,11,, | 35,44,, | — | 61,48,, | 1,97 | 3,14 , | 34,04,, | 0,17 . | 61,45 . | 1,20 . |
| 1. Գանձ. նահ. գաւ. ազգ. մէջ | 1,21,, | 35,00,, | — | 61,64,, | 2,15 | 2,87,, | 35,11,, | 0,16 „ | 60,61 . | 1,25 . |
| 2. Գանձ. նահ. քաղ. ազգ. մէջ | 0,24,, | 39,41,, | — | 60,00,, | 0,35 | 5,00,, | 26,96,, | 0,21 . | 66,91 „ | 0,92 „ |

(Շարունակութիւնը տես երես 244)

| Գաւառներ և շրջաններ | 1886 թւականին | | | | | 1914 թւականին | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Թուրքեր | Հայեր | Վրաց. | Մուսուլ | Մնացած ժողով. | Թուր. | Հայեր | Վրաց. | Մուս. | Մնաց. ժող. |
| 3. Գանձ. նահ. գլխ. քաղաք. | 0,65% | 43,92% | — | 54,90% | 1,53 | 10,11% | 20,00% | 0,51% | 68,31% | 1,07% |
| V. Բագւի նահանգ. առհասարակ | 5,95 ,, | 7,78,, | — | 84,65,, | 1,62 | 14,50,, | 9,60,, | 0,36,, | 71,86,, | 3,68,, |
| 1. Բագ. նահ. գաւ. ազգաբ. մէջ | 3,30 ,, | 4,42,, | — | 92,00,, | 0,28 | 11,23,, | 5,71,, | 0,22,, | 80,32,, | 2,52,, |
| 2 Բագ. նահ. քաղ. ազգաբ. մէջ | 18,20,, | 23,30,, | — | 51,02,, | 7,48 | 24,00,, | 20,86,, | 0,76,, | 47,42,, | 7,96,, |
| 3. Բագ. նահ. գլխ. քաղաքում | 24,70,, | 28,26,, | — | 43,33,, | 3,71 | 27,22,, | 23,00,, | 0,80,, | 40,91,, | 8,07,, |
| VI. Սև-ծովեան նահ. առհասարակ | 58,80,, | 5,35,, | — | 7,63,, | 28,82 | 68,10,, | 8,62,, | 3,53,, | 4,35,, | 13,40,, |
| 1. Սև-ծով. նահ. գաւ. ազգ. մէջ | 36,97,, | — | — | — | 63,03 | 62,91,, | 12,00 ,, | — | 6,43,, | 18,66,, |
| 2. Սև-ծով. նահ. քաղ. ազգ. մէջ | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 3. Սև ծով. նահ. գլխ. քաղաքում | 98,75,, | — | — | — | 1,25 | 79,70,, | 2 15,, | — | 0,31,, | 17,84,, |
| VII. Դաղստանի շրջ. առհասարակ | 0,90,, | 0,18,, | — | 97,40,, | 1,52 | 5,19,, | 0,69,, | 0,12,, | 91,00,, | 3,10,, |
| 1. Դաղստ. շրջ. գաւ. ազգ. մէջ | 0,08,, | — | — | 98,40,, | 1,52 | 1,41,, | — | — | 97,45,, | 1,04,, |
| 2. Դաղստ. շրջ. քաղ. ազգ. մէջ | 24,41,, | 5,11,, | 0,37,, | 54,00,, | 16,11 | 37,77,, | 6,40,, | 1,20,, | 35,56,, | 19,07,, |
| 3. Դաղստ. շրջ. գլխ. քաղաքում | 55,30,, | 4,11,, | — | 2,60,, | 37,99 | 36,75,, | 4,62,, | — | 32,00,, | 26,63,, |
| VIII. Ղարսի շրջ. առհասարակ | 6,14,, | 21,31,, | — | 52,38,, | 20,17 | 5,05,, | 29,40,, | 1,07,, | 42 45,, | 22,03,, |
| 1. Ղարսի շրջ. գաւ. ազգ. մէջ | 6,14,, | 20,36,, | — | 53,11,, | 20,39 | 5,07,, | 24,83,, | — | 45,57,, | 24,53,, |
| 2. Ղարսի շրջ. քաղ. ազգ. մէջ | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 3. Ղարսի շրջ. գլխ. քաղաքում | 6,27,, | 63,04,, | — | 22,11,, | 26,33 | 4,88,, | 73,93,, | — | 16,18,, | 5,01,, |

## ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ H. ԱՂԻՒՍԱԿԻ.

Այս աղիւսակը ևս չենք ունեցել մինչև այստեղ՝ թէ իր ամբողջութեամբ և թէ առանձին մասերով։ Այստեղ վերցրուած են երկու տարեթւեր՝ երեսնամեայ շրջանի սկիզբն ու վախճանը՝ 1886 թ. և 1914 թ., և ցոյց են տրուած չորս գլխաւոր ժողովրդների տոկոսական մասերը գլխաւոր տերրիտորիական միաւորների և ազգաբնակչական հաւաքածուների մէջ՝ սկսած տերրիտորիական ամենամեծ ամբողջութիւնից մինչև իւրաքանչիւր նահանգի (կամ շրջանի) քաղաքն ու քաղաքային բնակչութիւնը։ Ի՞նչ տոկոս են կազմում ռուսները, հայերը, վրացիները և մուսուլմանները ընդհանրապէս Անդրկովկասում, անդրկովկասեան գաւառական և քաղաքային ազգաբնակչութեան մէջ, ապա ամեն մի նահանգում (կամ շրջանում) առհասարակ, նահանգական (կամ շրջանային) գաւառական և քաղաքային ազգաբնակչութեան մէջ և վերջապէս ամեն մի նահանգի (կամ շրջանի) գլխաւոր քաղաքում, և իրաւ վերև յիշուած երկու տարեթւերին՝ երեսուն տարի առաջ և յետոյ։

Ահա այդ կէտերի լրիւ պարզաբանութիւնն է տալիս H. աղիւսակը թէ զատ-զատ ժողովրդների և թէ ընդհանուր ազգաբնակչութեան վերաբերեալ։ Այստեղ ի մի են խմբուած աշխատութեանս նախկին գլուխներում եղած զանազան աղիւսակների մէջ ցրուած տոկոսները մի յստակ ու շօշափելի ամբողջութեան մէջ։

Ուշադրութիւն դարձրէք չորս ժողովրդների տոկոսներին առաջին երեք A, B և C) շարքերում և այդ տոկոսների կրած փոփոխութիւններին երեսնամեայ շրջանում։

Թէ Անդրկովկասում ընդհանրապէս և թէ Անդրկովկասեան գաւառական ազգաբնակչութեան մէջ առաջին տեղը՝ տոկոսի մեծութեամբ, բնականաբար բռնում են մուսուլմանները, իսկ երկրորդ տեղը՝ վրացիները։ Թէև մօտ երեսուն տարի անցնելուց յետոյ (1914 թ.) այդ ժողովրդները պահպանում են իրանց տոկոսական առաջնութիւնը, բայց բաւական փոփոխուած յարաբերութեամբ։ 1886 թ. մուսուլմանների տոկոսը Անդրկովկասի ամբողջ ազգաբնակչութեան մէջ եղել է 46,78 տոկ., միայն գաւառական ազգաբն. մէջ եղել է 48,50 տոկ., իսկ 1914 թ. առաջին տոկ. թիւը իջել է 40,78 տոկ.-ի՝ նուազ. ամբողջ 6-ով, երկրորդ տոկ. թիւը իջել է 44,25 տոկոսի, նուազ. 4,25 ով։ Նոյն ուղղութեամբ, թէև ոչ նոյն չափերով փոփոխուել են նաև վրացիների տոկոսները, ինչպէս տեսնում ենք աղիւսակից. առաջ նրանց տոկոսական թւերը եղել են 25,54 տոկ., (ամբողջ Անդրկովկ.) և 26,96 տոկ. (միայն գաւառ. ազգաբն. մէջ), իսկ յետոյ իջել են նրանք 22,81 տոկ-ի և 24,88 տոկ-ի, առաջին դէպքում նուազելով 2,73 տոկ.ով, երկրորդ դէպքում 2,08 տոկ-ով։ Մուսուլմաններից և վրացիներից յետոյ, երրորդ տեղը բռնում հայերը, իսկ չորրորդ՝ բնականաբար շատ աննշան տեղը, բռնում են ռուսների տոկոսները։ Նրանց տոկոսական թւերը ևս փոփոխութիւն են կրել վերոյիշեալ տարեթւերի ընթացքում, բայց միայն հակառակ ուղղութեամբ. հայերի տոկ. թւերը եղել են առաջ 20,00 տոկ. (Անդրկովկ.) և 17,90 տոկ. (գաւառ. ազգաբ. մէջ), իսկ յետոյ 22,20 տոկ., և 20,39 տոկ., աճելով առաջին դէպքում 2,20 տոկ.-ով, իսկ երկրորդ դէպքում 2,49 տոկ. ով, ասել է երկու դէպքումն էլ աճել են հայերի տոկոսները գրեթէ հաւասար տեմպով։ Ռուսների տոկոսները աճել են աւելի մեծ չափերով. առաջ ունեցել են նրանք 2,60 տոկ., և 1,61 տոկ., իսկ յետոյ 7,65 տոկ., և 4,48 տոկ., առաջին դէպքում աճումը եղել է 5,15 տոկ-ով, երկրորդ դէպքում 2,87 տոկ-ով։

Ինչպէս տարբեր է տոկոսական յարաբերութիւնների դասաւորութիւնը քաղաքային ազգաբնակութեան մէջ (C շարքում)։ Անդրկովկասի քաղաքային ազգաբնակութեան մէջ առաջին տեղը, ինչպէս մենք գիտենք, բռնում է հայ քաղաքային ազգաբնակութիւնը։ Դա պարզ երեւում է նաև մեր վերոյիշեալ աղիւսակի տոկոսներից։ Երկու տարեթւերին էլ հայերը պահպանել են իրանց յարաբերական գերազանցութիւնը։ Երկրորդ տեղը բռնում է մուսուլման քաղաքային ազգաբնակութիւնը իր տոկոսներով։ Բայց երկու տարբերի մօտ էլ տոկոսները նւազում են մի տարեթւից մինչև միւսը։ 1886 Թ. հայ քաղաքային ազգաբնակութեան տոկոսը եղել է (ողջ անդրկովկասեան քաղաքային ազգաբն. մէջ) 38,90 տոկ., իսկ մուսուլմաններինը՝ 30,92 տոկ. 1914 Թ. հայ քաղ. ազգաբն. տոկոսը իջնում է՝ 31,37 տոկ., նւազելով 7,53 տոկ-ով, իսկ մուսուլմաններինը իջնում է 24,00 տոկ.-ով նւազելով 6,92 տոկոսով։ Բոլորովին հակառակ յարաբերութիւններով են դասաւորւել ռուսների և վրացիների, մանաւանդ առաջինների, քաղ. ազգ. տոկոսները, 1886 Թ. ռուս քաղաքային բնակչութիւնը Անդրկովկասում բռնում է ամենահամեստ տոկոսը՝ ընդամենը 11,62 տոկ, յաջորդ տարեթւին՝ 1914 Թ. աճում է այդ տոկոսը գրեթէ երկու անգամ և հասնում 22,93 տոկ-ի (աճելով 11,31 տոկ-ով)։ Վրացի քաղ. ազգաբն. տոկոսը ևս աճում է, բայց շատ չնչին փոփոխութեամբ. նրանց տոկոսը աճում է ընդամենը 1,34 տոկ ով, 12,56 տոկ-ից հանելով 13,90 տոկ-ի։

Աղիւսակի մնացած մասը, ինչպէս երեւում է ընթերցողին յաջորդ համմէմական և ջարաբական թւանշաններից, վերաբերում է նահանգներին և շրջաններին, ուշադրութեան առնելով իւրաքանչիւր նահանգի (կամ շրջանի) ընդհանուր ազգաբնակութեան, գաւառակ. ազգաբն., քաղաքային ազգաբն. և գլխաւոր կամ կենտրոնական քաղաքի ազգաբնակութեան տոկոսները առանձին առանձին, և իրաւ ոչ միայն մեզ յայտնի չորս հիմնական ժողովրդների վերաբերեալ, այլև մնացած բոլոր ժողովրդական գրուպպաները միասին վերցրած։

Տոկոսների փոփոխութեան—աճման կամ նւազման--տարբեր տենդենցներ ենք գտնում զանազան ժողովրդների մօտ վերոյիշեալ աղիւսակի մէջ։ Մեզ հարկաւոր է այստեղ միայն մատնանշել այդ տենդենցների վրայ։

Ռուսների տոկոսը՝ Թիֆլիսի նահանգի (I) բոլոր վերոյիշեալ ստորաբաժանումների մէջ՝ թէ նահանգում առհասարակ, թէ գաւ. ազգ., թէ քաղաք. ազգ. և թէ բուն Թիֆլիսում կամ նահ. գլխաւոր քաղաքում,անխտիր աւելացել է (տես տոկոսները աղիւսակի մէջ)։ Հայերի տոկոսը աւելացել է միայն Թիֆլիսի նահանգում և նահանգի գաւառ. ազգաբն. մէջ, ընդհակառակը նրանց տոկոսը պակասել է նահ. քաղաքային ազգաբն. մէջ և Թիֆլիսում, թէև վերջինում նրանք շարունակում են ունենալ ամենամեծ յարաբերական տոկոսը։ Վրացիների տոկոսը ունեցել է փոփոխութեան տրամագծօրէն հակառակ ընթացքը ռուսների տոկոսի. նահանգի բոլոր մասերում պակասել է վրացիների տոկոսը, և իրաւ գրեթէ այն չափերով, որով աւելացել է ռուսների տոկոսը։ Մուսուլմանների տոկոսը ևս ունեցել է հակառակ ընթացքը հայերի տոկոսի. նահանգում և գաւառ. ազգաբն. մէջ պակասել է մուսուլմանների տոկոսը, իսկ քաղ. ազգաբն. մէջ և Թիֆլիսում, ընդհակառակը, աւելացել է նրանց տոկոսը։ Մնացած ժողովրդների տոկոսը պակասել է միայն գաւ. ազգ. մէջ. մնացած մասերում աւելացել է նրանց տոկոսը։

Քութայիսի նահանգի (II) բոլոր մասերում ևս ռուսների տոկոսը ունեցել է փոփոխութեան ճիշտ միևնոյն տենդենցը. ամենուրեք աւելացել է նրանց տոկոսը։ Ճշտութեամբ պահպանուել է նաև հայերի տոկոսի փոփոխութեան տենդենցը. Քութ. նահանգում և գաւառ. ազգաբ. մէջ աճել է հայերի տոկոսը, իսկ քաղ. ազգաբ. մէջ և Քութայիսում՝ նա պակասել է։ Ճշտութեամբ պահպանուել է նաև վրացիների տոկոսի փոփոխութեան տենդենցը. Քութայիսի նահանգի բոլոր վերոյիշեալ ստորաբաժանումների մէջ պակասել է նրանց տոկոսը։ Մուսուլմանների մօտ արդէն տարբեր է եղել տոկոսական փոփոխութիւնը. նրանց տոկոսը պակասել է միայն քաղաքային ազգաբն. մէջ, իսկ միւս մասերում նա աւելացել է։ Ճիշտ նոյն կերպ փոփոխուել է և „Մնացած ժողովրդների" տոկոսը։

Երևանի նահանգի (III) բոլոր ստորաբաժանումների մէջ ևս ճշտութեամբ, թէև ի հարկէ տարբեր չափերով, կրկնւում է ռուսական տոկոսի փոփոխութեան միևնոյն տենդենցը. ամենուրեք նա աւելանում է։ Նոյն տենդենցը գտնում ենք նաև հայերի մօտ. ամենուրեք, առանձնապէս նահանգի քաղաքային ազգաբն. մէջ և Երևան քաղաքում, աւելանում է հայերի տոկոսը։ Վրացիների մասին խօսք լինել չի կարող, այնքան չնչին է նրանց թւական ներկայութիւնը առհասարակ իրանց բնակավայրից (Քութայիսի և Թիֆլիսի նահանգներից) դուրս։ Մուսուլմանների տոկոսը պակասել է անխտիր նահանգի բոլոր ստորաբաժանումների մէջ, մանաւանդ Երևան քաղաքում։ „Մնացած ժողովրդների" տոկոսը պակասել է ամեն տեղ, բացի նահանգի քաղաքային ազգաբնակութիւնից։

Նոյն երևոյթը ռուսների տոկոսի նկատմամբ գտնում ենք Գանձակի նահանգի (IV) բոլոր յիշեալ մասում. ամենուրեք աւելացել է նրանց տոկոսը։ Հայերի տոկոսը, ընդհակառակը, պակասել է ամենուրեք, բացի նահանգի գաւառ. ազգաբնակութիւնից, ուր շատ չնչին տարբերութեամբ գրեթէ նոյնն է մնացել հայերի տոկոսը երկու տարեթւերին։ Մուսուլմանների մօտ չնչին չափերով պակասել է տոկոսը նահանգում և գաւ. ազգաբնակ. մէջ. ընդհակառակը, քաղաք. ազգաբնակ. մէջ և մանաւանդ գլխ. քաղաքում կամ Գանձակում աւելացել է նրաց տոկոսը։ Մնացած ժողովըրդների տոկոսը պակասել է ամենուրեք, բացի նահանգի քաղաքային ազգաբնակութեան տոկոսից։

Բագուի նահանգի (V) բոլոր բաժանումների մէջ ևս ռուսների տոկոսը անխտիր աւելացել է։ Հայերի մօտ, ընդհակառակը, տոկոսական փոփոխութիւնը ունենում է նոյն տենդենցը, ինչ տեսանք Թիֆլիսի նահանգում. Բագուի նահանգում և գաւառ. ազգաբն. մէջ աւելացել է հայերի տոկոսը, իսկ քաղաք. ազգաբն. մէջ և Բագու քաղաքում պակասել է նրանց տոկոսը։ Մուսուլմանների տոկոսը պակասել է անխտիր ամենուրեք, առանձնապէս մեծ չափերով Բագուի նահանգում և նահ. գաւառական ազգաբնակութեան մէջ։ Ինչ վերաբերում է «Մնացած ժողովրդներին», նրանց տոկոսները աւելացել են նահանգի բոլոր բաժիններում։

Վերջին նահանգում՝ Սև-ծովեան նահ. (VI), ուր ռուսները թւով գերազանցում են միւս տարրերին, աւելացել է նրանց տոկոսը միայն նահանգում և գաւառ. ազգաբնակութեան մէջ, իսկ գլխաւոր քաղաքում կամ Նովոռոսիյսկում պակասել է նրանց տոկոսը։ Մնացած ժողովրդների տոկոսը աւելացել է միայն գլխ. քաղաքում, իսկ միւս տեղերում պակասել է։

Դաղստանի շրջանում (VII) ռուսների տոկոսը աւելացել է ամեն տեղ,

*բացի գլխաւոր քաղաքից կամ Թեմիր-խան-Շուրայից։ Հայերի տոկոսը, ընդհակառակը, աւելացել է շրջանի բոլոր բաժանումների մէջ։ Մուսուլման-ների տոկոսը պակասել է բոլոր տեղերում, բացի գլխաւոր քաղաքից, ուր մեծ չափերով աւելացել է նրանց տոկոսը։ «Մնացած ժողովրդների» տոկոսը պակասել է միայն գլխաւոր քաղաքում, իսկ միւս մասերում աւելացել է։*

*Վերջապէս Կարսի շրջանում (VIII) ռուսների տոկոսը պակասել է ամենուրեք, հայերինը, ընդհակառակը, աւելացել է, իսկ մուսուլմաններինը դարձեալ պակասել է ամենուրեք։*

*Սրանով աւարտում ենք աշխատութեանս առաջին մասի երկրորդ կամ վերջին գլուխը և դրանով ամբողջ առաջին մասը։ Թւում է, որ առաջադրած ծրագրի բոլոր կէտերին և հարցերին տւել ենք հարկաւոր լուսաւորութիւնը, որքան այդ, ի հարկէ, հնարաւոր է եղել անել գոյութիւն ունեցող թւական-փաստական տւեալների հիման վրայ։ Նկատւող թերութիւնները պէտք է, գլխաւորապէս, վերագրել նիւթերի և աղբիւրների ցաւալի պակասութեան մեր ծայրերկրի վերաբերեալ։*

# ՆԿԱՏՈՒԱԾ ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐԸ

| Երես | տպուած է | պէտք է լինի |
|---|---|---|
| 15 1897 թ. տակ. միջին սիւնակում, երրորդ թիւը սկզբից | 487667 | 387667 |
| 17 Վերջին շարքում սկզբից | 1914-1914 | 1886-1914 |
| 49 Երկրորդ սիւնակ 2-րդ տող սկզբից | 550 | 520 |
| 54 Մուսուլմ. տակ վերջին շարք 3-րդ տող ներքեւից | 3,089,237 | 3088237 |
| 58 Ռուս. տակ առաջ. տող ներքեւից | 380,380 | 380,66 |
| 61 Հայերի տակ վերջին սիւնակ | 411518 | 41158 |
| 63 Ռուսների տակ վերջ. սիւնակ առաջին տող վերեւից | 43,00 | 44,00 |
| 64 Ռուս. տակ, վերջ. սիւնակ առ. տող | 11,42 | 11,62 |
| 69 Վրաց. տակ, երրորդ սիւն. առաջ տող | 91,7 | · 91,6 |

74—75 երեսներում ցաւալի շփոթութիւն է ընկել շարուածքի մէջ, 74 եր. վերջին տողից (ընագրի չհաշուած ծանօթ.) պիտի կարդալ հետեւեալ կտորը, որը տպուածում ցրուած է զանազան մասերում. «1914 թ. Թիֆլիսի նահանգի հայերը կազմել են նահանգի ողջ ազգաբնակութեան 26,57% ասել է նախկին տարեթուի (1897) նկատմամբ հայերի տոկոսական բաժինը աւելացել է մօտ 8%-ով Իսկ Անդրկովկասի ողջ հայութեան մէջ նրանք կազմել են 23,55%, ասել է 5,50%-ով աւելի նախկին տարեթուերի տոկոսից» Այնուհետեւ պիտի կարդալ 75 եր. 2-րդ տողից (վերեւից)՝ «վերջապէս չորրորդ նահանգը, ուր այժմ....» մինչեւ 13-րդ տողը (վերեւից), որ վերջանում է՝ «հայերի թուի նուազման պատճառով, իջնում է»—եւ անմիջապէս կարդալ՝ «մինչեւ 6,31%-ի, իսկ 1914 թ. նորից բարձրանում է այդ տոկոսը եւ հասնում 9,60%-ի»։ Այնուհետեւ անմիջական շարունակութիւնը ճիշտ յաջորդականութեամբ սկսւում է 76 երեսից. «Անդրկովկասի Թացած մասերից յիշատակութեան արժանի է.... եւ այլն»

| Երես | Տպուած է | Պէտք է լինի |
|---|---|---|
| 83 Ներքեւից 5-րդ տողում | 9,33 | 9,93 |
| 87 Ներքեւից 6-րդ տողում | 56,00 | 56,60 |
| 93 Աղիւսակի միջին շարքում | 38 | 538 |
| 99 Աղիւսակի վերջին կոլոնում | 1981 | 1681 |
| 101 Աղիւսակի վերջին կոլոնի առաջին շարք, մուսուլմ. տակ | — | 100,00 |
| 124 Աղիւսակի առաջ կոլ. երկր. շարք | 100,10 | 100,00 |
| " " միջին կոլ. առաջ. շարք | 98,90 | 98,00 |
| 139 Աղ. առաջ. կոլ. երկրորդ շարք | 632,60 | 632,06 |
| 142 Վերեւից 10-րդ տողում | 44,54 | 41,54 |
| 144 Աղ. վերջ. կոլ. երրորդ շարք. | 1440 | 1470 |
| 151 Ծանօթ. վերեւից 8-րդ տող | 46,12 | 46,72 |
| 155 Վերեւից, 8-րդ տող | 68,64 | 68,74 |

| Երես | | տպուած է | պէտք լինի |
|---|---|---|---|
| 161 | Աղ. միջ. կոլ. վերջ. շարքում | 8,09 | 5,10 |
| 174 | Աղ. միջ. կոլ. առաջին շարք | 35,5 | 35,0 |
| 175 | Աղ. վերջին կոլ. վերջ. շարք | 1607 | 7607 |
| 177 | Աղ. վերջին կոլ. 4-րդ շարք | 74,76 | 44,58 |
| 179 | Աջ. վերջին կոլ. 2-րդ շարք | 73,24 | 83,24 |
| 196 | Աղ. վերջին կոլ. 1-ին շարք | 76,43 | 86,43 |
| ,, | Աղ. վերջին կոլ. 1-ին շարք | 376,73 | 637,73 |
| 207 | Աղ. վերջին կոլ. 1-ին շարք | 472,31 | 472,36 |
| ,, | Աղ. վերջվն կոլ. 2 րդ շարք | 396 31 | 396,36 |
| 215 | Աղ. առաջ կոլ. 4-րդ շարք | 1217 | 12117 |
| 217 | Աղ. վերջ. կոլ. 3 րդ շարք | — | —8,25 |
| ,, | ,, ,, ,, 2-րդ շարք | —26,50 | —29,50 |
| 218 | Աղ. առ. կոլ. վերևից 2-րդ շարք | — | —1,41 |
| 204 | Մուսուլմ. աղյուս. վերջ. շարք | 5,10 | 5,01 |
| 226 | Առաջ. կոլ 7-րդ տող ներքևից | 538,18 | 538,00 |
| ,, | Վերջ. կոլ վերջ. շարք 9 րդ տող վերևից | 1,53 | 1,03 |
| ,, | Վերջ. կոլ. վերջ. շարք, 13-րդ տող վերևից | 1,02 | 0,90 |
| ,, | Վերջ. կոլ. վերջ. շարք 14 րդ տող վերևից | 0,90 | 1,02 |
| 231 | Վերջ. կոլ. վերջ. շարք, 1-ին տող ներքևից | 9,12 | 9,17 |
| 234 | Առաջ. կոլ. 3-րդ շարք 4-րդ տող | 336,60 | 333,60 |

## I. ԳԼՈՒԽ

## ԸՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՆՐԱ ՏԱՐԵՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

*Ազգաբնակութեան ընդհանուր թիւը և նրա երեսնամեայ աճման ընթացքը Անդրկովկասում.—Ազգաբնակութեան խտութիւնը և սեռերի թւական յարաբերութիւնը.—Քաղաքային և գաւառական բնակչութիւնը՝ ընդհանուր թւերով և աճման տոկոսներով.—Նահանգներ և շրջաններ (*область*)· տարածութիւնը, ազգաբնակութիւնը, խտութեան ու աճման աստիճանները, սեռերի թւական յարաբերութիւնները նահանգներում և շրջաններում.—Աճման ընթացքի նմանութիւնները և առանձնայատկութիւնները.—Արտագաղթ և ներգաղթ. կենտրոնացման տենդենցներ.—Գաւառներ և շրջանամասեր (*округи*)· տարածութիւնը, ազգաբնակութիւնը, խտութեան և աճման աստիճանները, սեռերի թւական յարաբերութիւնները ամեն մի նահանգի և շրջանի գաւառներում և շրջանամասերում առանձին-առանձին.—Նմանութիւններ և առանձնայատկութիւններ.—Նւազման երևոյթը գաւառներում.—Քաղաքներ և գիւղաքաղաքներ· ազգաբնակութիւնը, աճման ընթացքը և սեռերի թւական յարաբերութիւնների դասաւորութիւնը Անդրկովկասի բոլոր քաղաքներում և գիւղաքաղաքներում առանձին-առանձին.—Ազգաբնակչական պրոբլեմի հիմնական մոմենտները Անդրկովկասում. տարբեր կաթեգորիաներ ըստ նահանգական ազգաբնակութեան աճման տենդենցների.—Խոշոր քաղաքների բնակչութեան արագընթաց աճման պատճառները.—Եզրակացութիւններ.*

## II. ԳԼՈՒԽ

## ԸՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԳԼԽԱՒՈՐ ԺՈՂՈՎՐԴՆԵՐԸ ՆՐԱ ՏԱՐԵՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

*Անդրկովկասի գլխաւոր ժողովուրդները՝ ռուսներ, հայեր, վրացիներ և մուսուլմաններ.—Նրանց թիւը, տոկոսական յարաբերութիւնները և աճումը առհասարակ Անդրկովկասում.—Հայերի և վրացիների թւական մրցակցութիւնը.—Աճման տեմպի տարբերութիւնները.—Ռուսների գերազանց արագ աճումը.—Սեռերի թւական յարաբերութիւնները չորս ժողովուրդների մօտ.—Ժողովուրդների քաղաքային և գաւառական ազգաբնակութիւնը.—Հայերի քաղաքային ազգաբնակութեան գերազանցումը—Քաղաքային և գաւառական ազգաբնակութեան տոկոսական բաժինը և աճումը՝—Սեռերի թւական յարաբերութիւնները քաղաքային և գաւառական ազգաբնակութեան մէջ.—Գլխաւոր ժողովուրդները նահանգներում և շրջաններում.—Նրանց թւական խտացումների կենտրոնները.—Համեմատութիւններ աւելի վաղ տարեթւերի տւեալների հետ.—Ժողովուրդների տոկոսական մասնակցութիւնը նահանգական-շրջանային ընդհանուր ազգաբնակութեան մէջ.—Նրանց տոկոսական աճումը բոլոր տարեշրջաններում.—Տարեկան աճումը երեսնամեայ շրջանում.—Սեռերի թւական յարաբերութիւնները նահանգ-*

ներում և շրջաններում։—Ժողովուրդները գաւառներում և շրջաններում առանձին առանձին։—Թիֆլիսի նահանգի գաւառներում։—Թիւը, տոկոսական մասնակցութիւնը և աճումը։—Վիճակագրութեան սխալ տուեալները հայերի վերաբերեալ Թիֆլիսի նահանգի գաւառներում։—Բացատրութիւններ և ուղղումներ։—Քութայիսի նահանգի գաւառներում. Թուական մեծութիւնը, տոկոսական մասնակցութիւնը և աճումը։—Երևանի նահանգի գաւառներում. Թուական մեծութիւնը, տոկոսական մասնակցութիւնը և աճումը։—Գանձակի նահանգի գաւառներում. Թիւը, տոկոսական մասնակցութիւնը և աճումը։ Բագւի նահանգի գաւառներում. Թիւը, տոկոսական մասնակցութիւնը և աճումը։—Սև ծովեան նահանգի շրջանամասերում (округи). Թիւը, տոկոսակ մասնակցութիւնը և աճումը։—Դաղստանի շրջանի շրջանամասերում. Թիւը, տոկոսական մասնակցութիւնը, և աճումը։—Ղարսի շրջանին շրջանամասնեում. Թուական մեծութիւնը, տոկոսական մասնակցութիւնը և աճումը։—Ժողովուրդները Անդրկովկասի քաղաքներում։

—Թիֆլիսի նահանգի քաղաքներում. Թիւը, տոկոսական մասնակցութիւնը աճումը և սեռերի թուական յարաբերութիւնները։—Հայերի և վրացիների թուական յարաբերութիւնները Թիֆլիսում ամենավաղ ժամանակներից։—Քութայիսի նահանգի քաղաքներում. Թիւը տոկոսական մասնակցութիւնը, աճումը և սեռերի թուական յարաբերութիւնը։—Երևանի նահանգի քաղաքներում. Թիւը, տոկոսական մասնակցութիւնը, աճումը և սեռերի թուական յարաբերութիւնները։—Գանձակի նահանգի քաղաքներում. Թիւը, տոկոսական մասնակցութիւնը, սեռերի թուական յարաբերութիւնները։—Բագւի նահանգի քաղաքներում, Թիւը, տոկոսական մասնակցութիւնը, աճումը և սեռերի թուական յարաբերութիւնները։—Սև-ծովեան նահանգի քաղաքներում. Թիւը, տոկոսական մասնակցութիւնը սեռերի թուական յարաբերութիւնը։—Դաղստանի շրջանի քաղաքներում, Թիւը, տոկոսական մասնակցութիւնը, աճումը և սեռերի թուական յարաբերութիւնները։—Ղարսի շրջանի քաղաքներում. Թիւը, տոկոսական մասնակցութիւնը, աճումը և սեռերի թուական յարաբերութիւնները։—Ժողովուրդների համար տոկոսները նահանգական և շրջանային գլխաւոր քաղաքներում։—Ժողովուրդների համար տոկոսները գիւղաքաղաքներում, աւաններում և գիւղերում։ -Տոկոսական համամփոփումների ընդհանուր աղիւսակներ։

# Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ

## առանձին լոյս տեսած աշխատութիւնները

1) „Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան", Թիֆլիս 1907 թ. եր. 140 (սպառ.) . . . . . . . . . . . . . . . . . — ր. 40 կ.

2) „Թիւրքիայի ապագան", Թիֆլիս, 1908 թ. եր 58. (սպառ.) . — ր. 20 կ.

3) „Տնտեսական զարգացման փազերը", Թիֆլիս, 1906 թ. եր. 64, (սպառուած) . . . . . . . . . . . . . . . . . . . . . . — ր. 20 կ.

4) „Ազգային պրոգրեսը և դասակարգային շահերը", Թիֆլիս, 1908 թ. եր. 310, (սպառուած) . . . . . . . . . . . . . . — ր. 60 կ.

5) „Աշխատանքի և աշխատաւորի գաղափարը Աղա-Նեգրիի, Յ. Յակոբեանի և Շ. Կուրղինեանի բանաստեղծութիւնների մէջ," Նոր-Նախիջևան, 1909 թ. եր. 49, (սպառուած) . . . — ր. 20 կ.

6) „Հասարակական գաղափարները Ռ. Պատկանեանի և Մ. Շահազիզի բանաստեղծութիւնների մէջ," (սոց. վերլ.) Թիֆլիս, հրատ. Գուտտեմբերգի, 1910 թ. եր. 447 . . . . . . . . . 1 ր. — կ.

7) „Wesen und Geschichte des Ausländertums in Russland," Բեռլին, 1912 թ., եր. 64 . . . . . . . . . . . . . . . . . 1 մարկ

8) Die ausländischen Elemente in der russischen Yolkswirtschaft" (historisch-ökonomische Untersuchungen), Yerl. Fr. Siemenroth Բեռլին, 1913 թ. եր. XII+300 . . . . . . . . . . . 7 մարկ

9) Nationaler Bestand, verufsmässige Gruppierung und soziale Gliederung der kaukasischen Völker," (statistich-ökonomische Untersuchungen), Բեռլին, 1914 թ., երես 81, (Göschensche Verlaßsbuchhandlung) . . . . . . . . . . . . . 2 մարկ

10) Экономическія и общественныя основы армяно-грузинскаго антагонизма," (Критическій анализъ), հրատ. Գուտտեմբերգի Թիֆլիս, 1914 թ. եր. 96 . . . . . . . . . . — ր. 40 կ.

11) „Կովկաս. ժողովրդ. ազգաբնակչ. կազմը, պրոֆ. խմբաւորումը և սոց. շերտաւորումը" հրատ. Գուտտեմբերգի Թիֆլիս. 1914 թ. եր. 208 . . . . . . . . . . . . . . . . . — ր. 75 կ.

12) „Հայ-վրացական յարաբերութիւնների պրոբլեմը" Թիֆլիս, 1914 թ. եր. 97 . . . . . . . . . . . . . . . . . — ր. 20 կ.

13) „Нѣмецкій профессоръ о германскомъ шовинизмѣ. (факты и разоблаченія) Պետրոգրադ, 1915 թ. եր. 27 (սպառուած) — ր. 15 կ.

14) „Գերմանիայի և Թիւրքիայի տնտեսա-քաղաքական փոխյարաբերութիւնները" (քննական տես.) Թիֆլիս, 1915, եր. 64 — ր. 25 կ.

15) „Աղէտի և տառապանքի աշխարհից", (Այց Թիւրքահայ փախստականներին), Թիֆլիս, 1915 թ. եր. 78. (նկար.) . . — ր. 40 կ.

16) „Народности Кавказа" (статистико-экономическое изслѣдованіе) съ предисловіемъ С. Патканова, изд. М. В. Попова Պետրոգրադ, 1917 թ. եր. 116 (սպառած) . . . . . . . 1 ր. 50 կ.

17) „Развитіе милитаризма и имперіализма въ Германіи" (историко-экономич. изслѣд.) съ предисловіемъ проф. М. Туганъ-Барановскаго, изд. „Книга," Պետրոգրադ, 1917 թ. էջ. XI + 352, (սպառ) . . . . . . . . . . . . . . . . . . 3 ր. — կ.

18) „Դիմակները պատռուած" (ովքե՞ր են Բոլշեւիկները) Բագու, 1918 թ. էջ. 76 . . . . . . . . . . . . . . . . . . . . . 2 ր. — կ.

19) Հակայեղափոխական շարժումը Անդրկովկասում," (Մարտի արիւնահեղ անցքերի առիթով) Բագու, 1918, էջ. 240 2 ր. — կ.

20) „Метаморфоза грузинской соціалъ-демократіи", (причины и критика явленія), стр. 34, Баку, 1919 г. . . . . . . . . 2 ր. — կ.

**ԳԻՆՆ Է 25 ՌՈՒԲԼԻ**